

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉՆՈՒԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# Բ Ա Ն Բ Ե Ր

## Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

15



Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտական խորհրդի քննմամբ

Խ մ ր ա գ ր ա կ ա ն մ ա ռ մ ի ն

Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (գլխավոր խմբագիր), Բ. ՉՈՒԳԱՍՋՅԱՆ, Հ. ՓԱՓԱՋՅԱՆ,  
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ (պատասխանատու ֆարատպար)

0500000000  
Բ  $\frac{793}{(02)-86}$  105—85

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986.

# Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

(Մատենադարանի վերակազմության 25-ամյակի առթիվ)

Մատենադարանը 1500-ամյա իր գոյության ընթացքում միշտ եղել է Հայաստանի և ողջ Անդրկովկասի ձեռագրական մշակույթի առավել խոշոր կենտրոններից մեկը: Քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով էջմիածնի Մատենադարանի ձեռագրական հավաքածոները երբեմն նվազել են, հյուսվել և նորից համալրվել այն սնող հայ գրչության մյուս օջախների հաշվին: Կոբուստներ շատ են եղել, բայց Մատենադարանը կանգուն է մնացել: 1920 թ. վերջերին, երբ Հայաստանում հաղթանակեց սովետական իշխանությունը, նրա ֆոնդերում պահվում էր 4600 ձեռագիր:

Սովետական Հայաստանի կառավարության առաջին դեկրետներից մեկով էջմիածնի վանքի ձեռագրական հավաքածոն ազգայնացվեց և դրվեց Պետական Մատենադարանի՝ ՀԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին արքնթեր Զեռագրատան հիմքում: Նոր էջ սկսվեց Մատենադարանի կյանքում: Հայ ժողովրդի ձեռագրական ժառանգությունը դարձավ համընդհանուր ուշադրության առարկա: Հանրապետության կոմունիստական կուսակցության և կառավարության հողատարության շնորհիվ ձեռագրական հավաքածոն սկսեց անընդհատ աճել, հարստանալ նորանոր արժեքավոր մատյաններով, ավելի լայնորեն մշտնեկ գիտական շրջանառության մեջ, առատ աղբյուր ծառայել սովետական հայագետների և արևելագետների հետազոտությունների համար: 1939 թ. Մատենադարանը էջմիածնից տեղափոխվեց Երևան և տեղավորվեց Պետական հանրային գրադարանի երկու հարկերում: Մատենադարանի՝ միայն ձեռագրատանապահոցի կարգավիճակ ունեցող հին շրջանակները նեղ դարձան: Հասունացել էր գիտակազմակերպչական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Մատենադարանը հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի վերափոխելու գաղափարը պատկանում է Հովսեփ Արզարի Օրբելուն՝ 1943 թ. տեղեկված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտին: Այդ գաղափարը չիրմորեն պաշտպանվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, մասնավորապես, նրա առաջին քարտուղար Գ. Ա. Հարությունյանի կողմից: Ընթանում էր Հայրենական մեծ պատերազմը, բայց կուսակցությունն ու կառավարությունը արդեն նախանշում էին խաղաղ շինարարության հեռանկարային պլանը: Հին հայկական ձեռագրերի հազվագյուտ իր հավաքածոյով Մատենադարանը պետք է դուրս գար դեպի նոր բնագծեր:

Գեո 1944 թ. ակննավոր շինարար, Երևանի գլխավոր ճարտարապետ Մարկ Վլադիմիրի Զրիգորյանին և նրա ղեկավարած արվեստանոցին առաջադրանք արվեց նախապատրաստել հատուկ շենքի նախագիծ, որտեղ հաշվի առնված լինեն ձեռագրերի և պահպանության, և՛ ուսումնասիրության համար անհրա-

ձեռն ընդունող պայմանները: Մատենադարանի շենքի համար տեղն ընտրեցին ակադ. Հ. Ա. Օրբելին և Գ. Ա. Հարությունյանը՝ Լենինի պողոտայի առանցքին, Քանաքեռյան բարձրավանդակի ստորոտում, քաղաքի տարբեր մասերից երեւակացող բարձունքի վրա:

1945 թվականին նախագիծը պատրաստ էր, և շուտով էլ սկսվեց շինարարությունը: Միջնադարյան հայ ճարտարապետության ոճով կառուցված վեհակերտ շենքի շինարարությունն ավարտվեց 1957 թվականին: Մատենադարանի տնօրինությունն այդ տարիներին ծրագրված աշխատանք էր տանում ձեռագրերի հավաքման և վերականգնման ուղղությամբ:

1959 թ. մարտի 3-ի ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Պետական ձեռագրատունը վերակառուցվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ «Մատենադարանի» Ինստիտուտը տեղափոխվեց նոր շենք և 1959 թ. ապրիլի 16-ից սկսեց գործել որպես հանրապետության գիտական մտքի խոշոր օջախներից մեկը: Մատենադարանի կյանքում ևս նոր էջ բացվեց: Կառավարության որոշմամբ ակադեմիայի համակարգի տարբեր ինստիտուտներից այստեղ տեղափոխվեցին միջնադարագիտության ասպարեզում աշխատող մի շարք աղբյուրագետներ, բնագրագետներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, արվեստագետներ: Մատենադարանի հին աշխատակիցների հետ միասին նրանք աշխատանք ծավալեցին ինստիտուտի առջև դրված նոր խնդիրները կատարելու համար: Բացի ձեռագրերի հավաքման, պահպանման և վերականգնման պարտականություններից, Մատենադարանին վերապահվեց նաև հայ բնագրագիտության, ձեռագրագիտության, գիտական մատենագիտության և աղբյուրագիտության գծով առաջատար հիմնարկի դերը:

Ձեռագրերի հավաքման ծրագրված աշխատանքը, որ սկսվել էր Հայաստանում սովետական իշխանության առաջին օրերից, նոր խթան ստացավ: Ինստիտուտի վերածվելու և նոր շենք տեղափոխվելու հետ կապված, ձեռագիր հուշարձանների, դիվանական վավերագրերի և հնատիպ գրքերի հավաքման գործը լայն թափ ստացավ և նպաստեց բոլոր ֆոնդերի հարստացմանը: Ներկայումս, 1984 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Մատենադարանի ձեռագիր ֆոնդերը պարունակում են պահպանության 16175 միավոր, որից 13623-ը հայերեն գրչագրեր են (այդ թվում՝ 10927-ը ամբողջական ձեռագիր մատյաններ), ավելի քան 2500 այլալեզու գրչագրեր (պարսկերեն, արաբերեն, ասորերեն, հունարեն, լատիներեն, հին սլավոներեն, վրացերեն և այլ լեզուներով), ինչպես նաև՝ 150000 հին դիվանական վավերագրեր:

Ձեռագիր ֆոնդերի հարստացմանը նպաստում է Մատենադարանի ակտիվ հավաքչական գործունեությունը: Մշտապես գործող հնագրագիտական արշավախումբը, որը հետախուզական և բացատրական աշխատանք է տանում հանրապետության քաղաքների և գյուղերի բնակչության շրջանում, անընդհատ համալրում է ֆոնդերը հայ գրչության արժեքավոր հուշարձաններով: Այդ աշխատանքի շնորհիվ ձեռագրերի շատ սեփականատերեր, իսկ այդպիսիք գյուղական բնակչության մեջ դեռևս քիչ չեն, իրենց ընտանեկան սրբությունները նվիրում են Մատենադարանին: Դրանց մեջ հանդիպում են այնպիսի հազվագյուտ միավորներ, ինչպես ՀՍՍՀ Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի IX դարի ավետարանը: Ձեռագրերի մի մասն էլ, ինստիտուտի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվելուց հետո, գնվում է: Մատենադարանը հաշվառում

և մանրաժապավինում է այն ձեռագրերը, որոնք դեռևս մնում են մասնավոր անձանց մոտ: Մյուս ուղին, որով ձեռագրերը Մատենադարան են հասնում, սփյուռքահայության նվիրատվություններն են: Հատուկ հիշատակության են արժանի նշու Յորբից Հարություն Հազարյանը, որը Մատենադարանին է նվիրել իր՝ տարբեր երկրներում գնած և հավաքած 397 ձեռագրերը, Փարիզից՝ Ռաֆայել Մարկոսյանը, որը հայրենիքին էր կտակել 37 գրչագիր, Նոս Անշելյոսից՝ Արշակ Տիգրանյանը, Լիոնից՝ Հովհաննես Պոստանյանը և շատ ուրիշներ, որոնք Մատենադարանի հավաքածուները հարստացրել են տասնյակ և հարյուրավոր հաշերեն և այլալեզու ձեռագրերով, դիվանական վավերագրերով և հնատիպ գրքերով: Մատենադարանի աշխատակիցները ձեռագրերի փնտրտուք են անում նաև արտասահմանյան գործուղումների ժամանակ, և, որպես կանոն, ոչ քիչ քանակությամբ հին ձեռագրեր բերում իրենց հետ, որ նվեր են ստանում արտասահմանում ապրող իրենց հայրենակիցներից: Պլանաշափոթեն իրականացվող հավաքչական աշխատանքի շնորհիվ ներկայումս արդեն Մատենադարանում է հավաքված հաշերեն հին ձեռագրերի համաշխարհային ֆոնդի կեսը: Կարված աշխատում է Մատենադարանի վերականգնման արհեստանոցը, որտեղ մշակված են մադողաթյա և թղթյա ձեռագրերի, ինչպես նաև կաշվե կազմերի վերականգնման եղանակներ:

Անցած 25 տարիների ընթացքում Մատենադարանում ձեռագրերի վերականգնման, սահպանման և հավաքման աշխատանքների հետ միասին, ծավալվել է բնագրագիտական, աղբյուրագիտական և հնագրագիտական հետազոտությունների լայն ծրագիր, մշակվել և իրականացվել է հոգևոր մշակույթի եղանակի հուշարձանները գիտական շրջանառության մեջ դնելու պլանը: Հատուկ ուշադրություն է դարձվել հայ հին մատենագրության այն շերտերին, որոնք դուրս էին մնացել նախահեղափոխական հետազոտողների տեսադաշտից՝ փյուստիաջությանը, բնագիտությանը, բերականությանը, երաժշտությանը և այլն: Սակայն առաջին տեղում շարունակել է մնալ պատմագրությունը՝ հայ մատենագրության առավել կարևոր բնագավառներից մեկը: Արևելքի և Արևմուտքի երկրների հետ սերտ շփման մեջ գտնվող Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքի շուրահատուկ պայմաններն իրենց արտահայտությունն են գտել նրա պատմիչների, տարեգիրների երկերում, հիշատակարանների և պատմական այլ գրվածքների հեղինակների մոտ՝ դառնալով միաժամանակ Իրանի, Բյուզանդիայի, Վրաստանի, Աղվանքի, Ասորիքի, Արաբական խալիֆայթի, Թուրքիայի, Առաջավոր Ասիայի և Մերձավոր ու Միջին արևելքի այլ երկրների պատմության ուսումնասիրման արժեքավոր աղբյուր: Հայ պատմագրական հուշարձանների հրատարակության գործում հատուկ ուշադրություն է դարձվել այն երկերին, որոնք ո՛չ նախահեղափոխական և ո՛չ սովետական ժամանակաշրջանում բնական հրատարակություն չէին ունեցել: Այդ հրատարակություններից առաջինը մոնղոլ-թաթարական ներխուժումներին ժամանակակից, XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի բնական բնագրի հրատարակումն էր 1961 թվականին: Այս գործն առաջնային նշանակություն ունի ամբողջ Անդրկովկասի պատմությունը լուսարանելու, ինչպես նաև իրենց՝ մոնղոլ-թաթարների պատմության համար, որոնց մոտ գերության մեջ լինելով, հեղինակն ուսումնասիրել, ապա նկարագրել է նրանց լեզուն, սովորություններն ու բարքերը: Բնագիրը կազմող Կ. Մելիք-Օհանջանյանը օգտագործել է Մատենադարանի բոլոր և արտասահմանյան հավաքածուներում պահվող

մատչելի ձևագրերի մեծ մասը: Հրատարակությունն օժտված է ընդարձակ պատմաբանասիրական ուսումնասիրությամբ, սպառիչ մատենագիտությամբ և տարբեր ցանկերով: Մատենագարանը Կիրակոս Գանձակեցու երկը հրատարակել է նաև ռուսերեն թարգմանությամբ 1976 թվականին, համամիութենական «Памятники письменности Востока» մատենաշարով (թարգմ. Լ. Խանչարյան):

Մյուս կարևոր հրատարակությունը Արիստակես Լաստիվերացու «Պատմութեան» հրապարակումն էր (հրատ. 1963 թ., կազմ. Կ. Յուզբաշյան), որն արժեքավոր սկզբնաղբյուր է Հայաստանի XI դարի պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների, թոնդրակյան աղանդավորական շարժման գաղափարախոսության ուսումնասիրման համար: Լաստիվերացին, որպես նկարագրվող դեպքերին ժամանակակից և ականատես, արժեքավոր վկայություններ է բերում թուրք-սելջուկների, Հայաստան և սահմանակից երկրներ նրանց կատարած արշավանքների մասին: Ապա Լաստիվերացու «Պատմութիւնը» հրատարակվել է ռուսերեն թարգմանությամբ նույն՝ «Памятники письменности Востока» մատենաշարով (հրատ. 1968 թ., թարգմ. Կ. Յուզբաշյան):

Թուրքական ազրեսիայի և Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականության դեմ պայքարի մի էջին է նվիրված XVII դարի հայ պատմիչ Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին իսթինու» (հրատ. 1964 թ.) երկը, որը հետաքրքիր տվյալներ է պարունակում ուկրաինացի և լեհ ժողովուրդների Օսմանյան կայսրության դեմ մղած պայքարի, և այդ պայքարին Գալիցիայի և Պոդոլիեի հայերի մասնակցության մասին: Ռուսերեն թարգմանությունը հրապարակվել էր ավելի վաղ՝ 1958 թ., ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 2, էջ 258—286):

Կարևոր հրապարակումների թվին են պատկանում վաղ միջնադարի հայ պատմագիրներ Սեբեոսի (VII դար) և Մովսես Կաղանկատվացու (VIII դար, շարունակույժը՝ 10-րդ դ.) երկերի բնական բնագրերի հրատարակությունները: Սեբեոսի «Պատմութիւնը» (հրատ. 1979 թ., կազմ. Գ. Աբգարյան) եզակի պատմական տեղեկություններ է պարունակում VII դարում Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև պատերազմների, արաբների առաջին արշավանքների ու Սասանյանների անկման և, իհարկե, Հայաստանում և Անդրկովկասում քաղաքական իրադարձությունների մասին: Ինչ վերաբերում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկին (հրատ. 1983 թ., կազմ. Վ. Առաքելյան), ապա այն Հայոց Արևելից կողմանց՝ Ուտիք և Արցախ նահանգների, պատմության ուսումնասիրման համար անփոխարինելի աղբյուր է, ինչպես նաև արժեքավոր տեղեկություններ է պարունակում Բուն Աղվանքի ցեղերի և ժողովուրդների մասին, որոնք ապրում էին Կովկասյան լեռնաշղթայի և Քուռի միջև ընկած տարածքում: Մովսես Կաղանկատվացու երկը Մատենագարանը հրատարակել է նաև ռուսերեն թարգմանությամբ (1984 թ., թարգմ. Շ. Սմբատյան):

Պետք է նշել, որ Մատենագարանում վերջին 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվել ռուսերեն թարգմանություններին: Քանի որ հայ պատմագրական, և ոչ միայն պատմագրական, հուշարձանների նկատմամբ անընդհատ աճում է արևելագետների և գիտության մյուս ճյուղերի ներկայացուցիչների հետաքրքրությունը, և նրանցից բչերն են տիրապետում գրաքարին, ապա ռուսերեն լեզվով թարգմանությունների երկարաժամկետ ծրագրի-

բը և այն իրականացնելու պլանաչափ աշխատանքն արդեն տվել է շոշափելի արդյունքներ: Բացի վերոհիշյալներից, ուսերեն թարգմանությամբ հրատարակվել են V դարի պատմիչ Կորյունի «Վարք Մաշտոցի» (հրատ. 1962 թ., թարգմ. Շ. Սմբատյան և Կ. Մելիք-Օհանջանյան), XVII դարի ճանապարհորդ Սիմեոն Լեհացու «Ուղեգրութիւնք» (հրատ. 1965 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան), XVII դարի տարեգիր Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւնք» (հրատ. 1969 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան), XII—XIII դարերի «Պատմութիւն անանուն զրուցագրի (կարծեսյալ Շապուհ Բագրատունի)» (հրատ. 1971 թ., թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան): 1971 թ. լույս տեսավ V դարի պատմիչ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի՝ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու կատարած նոր թարգմանությունը (հետմահու հրատարակություն, լրացված Կ. Յուզբաշյանի կողմից): Ավելի վաղ՝ 1957 թ. Մատենադարանը հրատարակել էր Եղիշեի ստեղծագործության քննական բնագիրը (կազմ. Ե. Տեր-Մինասյան), որից և կատարված է ուսերեն թարգմանությունը: 1973 թ. հրատարակվեցին հայ պատմագրության նաև այլ նշանավոր հուշարձանների թարգմանություններ. XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը (թարգմ. Լ. Խանլարյան) և Արրահամ Կրետացու «Պատմութիւնք», որը նկարագրում է 1735—1736 թթ. իրադարձությունները և կաթողիկոս-հեղինակի՝ նազիր-շահի հետ հանդիպումը (թարգմ. Ն. Ղորղանյան): Ավարտված և հրատարակության է հանձնված IX—X դարերի նշանավոր պատմագիր Հովհաննես Գրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ի ուսերեն թարգմանությունը (թարգմ. Մ. Գարրինյան-Մելիքյան): Ավարտին է մոտենում «XIII—XVIII դարերի մանր ժամանակագրություններ» հետաքրքիր ժողովածուի թարգմանության աշխատանքը (թարգմ. Լ. Խանլարյան): «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Անանուն Եղեսացու «Ժամանակագրությունը»՝ գրված XIII դարում (1982 թ., թարգմ. ասորերենից Լ. Տեր-Պետրոսյանի): Հրատարակվել է նաև «Վրաց ժամանակագրությունը (1207—1318 թթ.)», թարգմ. վրացերենից Պ. Մուրադյանի:

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-քաղաքական և հոգևոր կյանքի տարբեր կողմերի լուսարանման համար կարևոր նշանակություն ունեն նաև հայ վարքագրական գրականության հուշարձանները, բազմաթիվ վարքերն ու վկայարանությունները, որոնք գեղարվեստական գրականության հիանալի նմուշներ լինելով, միաժամանակ արժեքավոր պատմական աղբյուրներ են: 1973 թ. Մատենադարանը ուսերեն թարգմանությամբ հրատարակել է «Հայ վարքագրական հուշարձաններ» ժողովածուի առաջին հատորը (կազմ. և թարգմ. Ք. Տեշ-Դավթյան), որն ընդգրկում է V—XV դարերի վարքագրական գրականության լավագույն նմուշները: Պատրաստ է տպագրության այս ժողովածուի երկրորդ հատորը, որի մեջ մտել են XV—XVIII դդ. վարքեր և վկայարանություններ:

Պատմագրության և վարքագրական գրականության հուշարձանների կողքին, Հայաստանի, Վրաստանի, Աղբրեջանի և Մերձավոր արևելքի երկրների պատմության լուսարանման համար ոչ նվազ կարևոր նշանակություն ունեն հայկական ձեռագրերի հարյուրավոր և հազարավոր հիշատակարանները, որոնք գրված լինելով մեծ մասամբ գրչի շարքային մշակների կողմից, խոշոր քաղաքական իրադարձությունների հետ միասին ավելի մանրամասն են ար-

տացելում ամենօրյա կենցաղը, հասարակության տարբեր խավերի դժվարություններն ու ակնկալիքները: Հիշատակարանների հեղինակներն, ի տարբերություն իշխող դասակարգի պատմիչ-ներկայացուցիչների, հիմնական ուշադրությունը նվիրում են ստորին դասերի՝ քաղաքային բնակիչների, գյուղացիների, արհեստավորների կյանքին: Հիշատակարանները, որ երկար ժամանակ չէին գրավում հետադոտողների ուշադրությունը, ըստ արժանվույն գնահատվեցին միայն վերջին 20—30 տարիների ընթացքում: Այդ գործում մեծ վաստակ ունի Մատենադարանի նախկին տնօրեն, ականավոր պատմաբան-աղբյուրագետ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանը, որը հիշատակարանների հավաքման և հրատարակման գործը սկսել էր դեռևս Մատենադարանի վերակազմությունից շատ առաջ: 1950 թ. նա հրատարակեց XIV դարի հիշատակարանների մեծածավալ հատորը: Ապա, 1955 և 1958 թթ. լույս տեսան XV դարի հիշատակարանների 1-ին և 2-րդ հատորները, իսկ գիտահետադոտական ինստիտուտ դառնալուց հետո, արդեն 1967 թ. նրա կողմից հրատարակվեց վերջին, եզրափակիչ հատորը, որն ընդգրկում է հայերեն ձեռագրերի XV դարի վերջին երկու տասնամյակների հիշատակարանները: Նրա հանձնարարությամբ սկսվեց մինչև XIV դարը գրված հիշատակարանների հավաքման աշխատանքը: Մատենադարանի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մաթևոսյանը հաջողությամբ կատարեց այդ պատասխանատու և աշխատատար գործը: 1984 թ. լույս տեսավ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար» սովորաբար սովալ հատորը: Լույս կտեսնի արտադրություն իջեցված «Ե—ԺԲ դարերի հիշատակարանների» հատորը: Նրա խմբագրությամբ, համարյա միաժամանակ, լույս տեսավ XVII դարի հիշատակարանների 3-րդ հատորը, որը կաղմել էր հայտնի բնագրագետ և աղբյուրագետ, հանգուցյալ Վ. Հակոբյանը: Մատենադարանի տնօրինությունը պլանավորում է առանձին գրքով ուսերեն թարգմանությամբ հրատարակել V—XVII դարերի հիշատակարանների հատընտիր ժողովածու:

Անցած ժամանակամիջոցում մեծ աշխատանք է կատարվել նաև դիվանական վավերագրերի ուսումնասիրության բնագավառում, որոնք լույս են սփռում սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր կողմերի վրա: Հիշատակության են արժանի «Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ» երկու պրակները (1-ին պրակ, 1956, 2-րդ պրակ, 1959., հրատ. Լ. Փափազյան), որոնք պարսկերեն բնագրի հետ միասին պարունակում են փաստաթղթերի հայերեն և ուսերեն թարգմանությունները: Լույս է տեսել «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը (ԺԵ—ԺԶ դդ.)» առաջին հատորը (1968 թ., հրատ. Լ. Փափազյան), որն ընդգրկում է ավատատիրական հողատիրության և ազրարային հարաբերությունների պատմությանը վերաբերող կարևոր փաստաթղթեր: Հրատարակվել է «Հայկական գորքը XVIII դարում» փաստաթղթերի ժողովածուն (1968 թ., հրատ. Ա. Խաչատրյան), որը հետաքրքիր տվյալներ է պարունակում հայ ազատագրական շարժման պատմության, ուս և հայ ժողովուրդների մարտական համագործակցության մասին:

Ուշագրավ հրապարակումներից է «Գիվան Հայոց պատմության» նոր շարքի առաջին հատորի հրատարակությունը (1984 թ., հրատ. Վ. Գրիգորյան), որտեղ կարևոր փաստաթղթեր են հավաքված Մատենադարանում պահվող կաթողիկոսական գիվանից: Բաղմահատոր այս հրատարակությունը սկսվել էր դեռ նախահեղափոխական շրջանում և ընդհատվել 1916 թվականին: Նոր շար-



քի առաջին հատորն ընդգրկում է XVIII դարի 80-ական թվականների փաստաթղթերը: Պատրաստ են տպագրության նաև հաջորդ հատորները: Սույն հրատարակությունն, անշուշտ, կգրավի Հայաստանի և Անդրկովկասի XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սկզբների սոցիալ-քաղաքական կյանքի տարբեր կողմերի ուսումնասիրությամբ զբաղվող պատմաբանների ուշադրությունը:

Տնտեսական կյանքի պատմության, միջազգային առևտրի և Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև տնտեսական կապերի հաստատման գործում հայ վաճառականության դերի հարցերով զբաղվող մասնագետների ուշադրությունը կհրավի Մատենադարանի հիմնած «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարը: Այդ մատենաշարով 1984 թ. հրատարակվել է «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը» (հրատ. Լ. Խաչիկյան և Հ. Փափազյան), հայ մի վաճառական, որը 1680-ական թվականներին առևտրական նպատակներով եղել է Հնդկաստանում, Նեպոլում և Տիրեթում ու տվել այդ երկրների ապրանքների, նրանց գների, կշռի չափերի, առևտրական ճանապարհների, արհեստագործական արտադրության կենտրոնների և այլնի մասին մանրամասն տեղեկություններ: Հատկապես Նեպոլի և Տիրեթի, այդ ժամանակ եվրոպացիներին դեռևս անմատչելի երկրների, մասին նրա հաղորդած տեղեկությունները եզակի են:

Միջնադարյան Հայաստանի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքին վերաբերող եզակի տեղեկություններ են սփռված հայ հեղինակների բաղմաթիվ քարտեզներում, ճառերում, խրատներում և տարբեր բնույթի մեկնություններում: Դրանց վրա հատուկ ուշադրություն էր դարձրել ակադ. Լ. Խաչիկյանը, այդ հարցին նվիրելով մի շարք արժեքավոր հոդվածներ: Նրա հանձնարարությամբ պատրաստվեց «Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը» (1977 թ., աշխատասիրությամբ է. Բաղդասարյանի) ուսումնասիրությունը և բնագրերի հրատարակությունը, որը նշված ուղղությամբ կատարված առաջին հրատարակումներից է:

Հիմնադրվեց նաև «Հայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարը, որն ընդգրկելու է թարգմանական գրականության լավագույն նմուշները՝ իրենց բնական բնագրերով: 1984 թ. լույս տեսավ V դարի ամենաուշագրավ թարգմանություններից մեկը՝ Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» երկի բնական բնագիրը (աշխատությամբ Կ. Մուրադյանի): 1984 թ. լույս տեսավ «Ծննդոց գրքի» բնական բնագիրը (աշխատ. Ա. Զեյթունյանի): Պատրաստ են տպագրության «Մակաբայեցոց գիրքը» և այլ բնագրեր:

Վերջին 25 տարիների նշանակալի ձեռքբերումներից մեկն էլ կապված է հայ փիլիսոփայական հուշարձանների աղբյուրագիտության, բնագրագիտության և ուսերեն թարգմանության բնագավառի լարված աշխատանքի հետ: Մատենադարանի հրատարակումները գիտական շրջանառության մեջ դրեցին հայ հին և միջնադարյան փիլիսոփաների ստեղծագործությունների ամբողջ մի շարք և հնարավորություն ընձեռեցին վերականգնել հոգևոր մշակույթի մինչ այդ շուտումնասիրված՝ հայ փիլիսոփայական մտքի պատմության բնագավառը: Նշված ժամանակամիջոցի ընթացքում ծրագրված հրատարակվել են V—VI դարերի ամենախոշոր փիլիսոփաներից մեկի՝ Դավիթ Անհաղթի ստեղծագործությունների բնագրերը և ուսերեն թարգմանությունները: 1960 թ. հրատարակվեց նրա «Սահմանք իմաստասիրութեան», 1967 թ.՝ «Մեկնութիւն ի վերլուծա-

կանն Արիստոտելի», 1976 թ.՝ «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիրի» (հրատ. և զուգահեռ ռուսերեն թարգմանությունները Ս. Արևշատյանի): 1980 թ., երբ նշվում էր Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը, առանձին գրքով, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք» ընդհանուր վերնագրով նորից հրատարակվեցին գրաբար բնագրերը (հրատ. Ս. Արևշատյան): Մոսկվայում, «Փիլիսոփայական ծառանգություն» մատենաշարով, հրատարակվեց «Դավիթ Անհաղթ. Ստեղծագործություններ» (թարգմ., ներած. և ծանոթագր. Ս. Արևշատյանի), իսկ Երևանում՝ «Հայ մատենագիրներ» մատենաշարով, աշխարհաբար թարգմանությամբ լույս տեսավ «Դավիթ Անհաղթ. Երկեր» (թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Արևշատյանի): Մեծ ուշադրություն է դարձվել նաև այլ մտածողների: Հրատարակվել է «Անանուն մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» (1961 թ., հրատ. Վ. Չալոյան և Ս. Լալաֆարյան, ռուս. թարգմ. Ս. Արևշատյանի), XIII դարի նշանավոր փիլիսոփա Վահրամ Բարունու «Լուծմունք Ստորոգութեանցն Արիստոտելի» (1967 թ., հրատ. և թարգմ. Գ. Գրիգորյան), V դարի ականավոր փիլիսոփա, գիտնական և թարգմանիչ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1968 թ., թարգմ. Վ. Չալոյան), V—XV դարերի հայ փիլիսոփաների բնագրերի ընտրանին՝ «Համաշխարհային փիլիսոփայության անթուղգիայում» (Մոսկվա, 1969 թ., կաղմ. և թարգմ. Ս. Արևշատյան): Վերջին 25 տարիների ընթացքում կատարված բոլոր այս հրատարակումներն ու թարգմանությունները հնարավոր դարձրեցին հետազոտական մեծ աշխատանք ծավալել հայ փիլիսոփայության պատմության վերաբերյալ, լուսարանել հոգևոր մշակույթի և գիտության ամբողջ մի բնագավառ, ստեղծել հայ փիլիսոփայական մտքի պատմությունն ընդհանրացնող աշխատություններ և նրա զարգացման առավել կարևոր փուլերին նվիրված մի շարք մենագրական հետազոտություններ:

Մատենադարանի աշխատակիցների տեսադաշտում են գտնվել նաև միջնադարյան քերականագիտական և բառարանագրական հուշարձանները: Հրատարակվել են XIII—XIV դդ. նշանավոր գիտնական Եսայի Նչեցու «Վերլուծութիւն քերականութեան» (հրատ. 1966 թ.) և XIII դարի հեղինակ Վարդան Արեւիկցու «Մեկնութիւն քերականի» (1972 թ.) ստեղծագործությունների քննական բնագրերը: Հրատարակվել է նաև Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» երկհատոր ուսումնասիրությունը (1-ին հ. 1966 թ., 2-րդ հատ. 1971 թ.): Հրատարակվել է Քոնայի դպրոցի հիմնադիր Հովհաննես Քոնեցու (XIV դ.) «Յաղագս քերականին» երկի բնագիրը (1977 թ., հրատ. Լ. Խաչիկյան և Ս. Ավագյան), որտեղ հայ քերականական գրականության մեջ առաջին անգամ հատուկ բաժին է նվիրված հայոց լեզվի շարահյուսությանը:

Մեծ աշխատանք է կատարված հայ միջնադարյան իրավունքի հուշարձանների ուսումնասիրման և հրատարակման բնագավառում: Այստեղ առաջին հերթին պետք է հիշատակել Մատենադարանի ձեռագրերի հիման վրա կատարված «Կանոնագիրք Հայոց»-ի երկու ստվար հատորների (1-ին հ. 1964 թ., 2-րդ հ. 1971 թ., կաղմ. Վ. Հակոբյան) և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկու խմբագրությունների քննական բնագրերի հրատարակությունը (1974 թ., հրատ. Խ. Թորոսյան): Հրատարակվել է նաև հայ իրավագիտական մտքի մի այլ հետաքրքիր հուշարձան՝ «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց» (1967 թ., հրատ. Զ. Պողոսյան), որը կարևոր սկզբնաղբյուր է հայկական գաղութների

XVIII դարի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Այս առումով ոչ սլակաս հետաքրքրություն են ներկայացնում նաև «Կամենեց—Պողոսկրադարի հայկական դատարանի արձանագրությունները», հրատարակված 1963 թ. Վ. Գրիգորյանի կողմից: Ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել են «Շահապիվանի կանոնները» (1959 թ., թարգմ. Ս. Ղ. Արևշատյան) և «Դվինի 2-րդ ժողովի կանոնները» (1962 թ., թարգմ. Ս. Ղ. Արևշատյան): Բոլոր այս հրատարակումները և թարգմանությունները հայ իրավաբանական մտքի պատմաբաններին և ընդհանրապես միջնադարագետ պատմաբաններին առատ նյութ տվեցին ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի հարավում, Անհաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում հայ վերաբնակիչների կողմից հիմնադրված գաղութների սոցիալ-տնտեսական կյանքի և իրավական հարաբերությունների ուսումնասիրման համար:

Վերջին 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բնագիտական մտքի հուշարձանների բնագրերի հրատարակությանը և ուսերեն թարգմանություններին: Հրատարակվել է XIII դարի խոշոր բժիշկ Գրիգորիսի, նախկինում չհրատարակված «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» աշխատության բնական բնագիրը (1962 թ., կազմ. Ա. Կժոյան), իսկ XII դարի ականավոր բժիշկ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության ուսերեն թարգմանությունը 1968 թ., նրա ծննդյան 850-ամյա տարելիցի առիթով, ունեցավ իր երկրորդ՝ լրացված հրատարակությունը:

Ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել Արուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» (1974 թ., թարգմ. Ս. Վարդանյան) և XIII դարի բժիշկ Իշոխի «Գիրք ի վերայ բնութեան» (1979 թ., թարգմ. Ս. Վարդանյան) բժշկական աշխատությունները: Հրատարակվել է նաև միջնադարյան անասնաբուժության վերաբերյալ հետաքրքիր մի երկի՝ «Բժշկարան ձիոյ»-ի հայերեն բնագիրը (1980 թ., հրատ. Բ. Չուգասոյան): Առավել խոշոր հրատարակում կլինի XV դարի ականավոր հայ բժիշկ Ամիրգովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» դեպագիտական աշխատության ուսերեն թարգմանության հրատարակությունը, որն արդեն արտադրություն է իջեցված: Բժշկության պատմաբանների և բուսաբուժության ժամանակակից մասնագետների մեծ հետաքրքրություն առաջացնող այս աշխատանքը Մատենադարանը հրատարակում է ՍՍՀՄ ԳԱ բնագիտության և տեխնիկայի պատմության ինստիտուտի հետ համատեղ:

Հին հայկական բնագիտական մտքի առավել խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Անանիա Շիրակացու (VII դար) ժառանգությունը արդեն հարյուր տարուց ավել զբաղեցնում է գիտության պատմաբանների ուշադրությունը: Նրա մաթեմատիկական, աշխարհագրական և տոմարագիտական աշխատությունների բնագրերը և դրանց նվիրված հետազոտություններ են հրատարակվել և՛ նախահեղափոխական շրջանում, և՛ սովետական՝ Մատենադարանի վերակազմությունից դեռ շատ առաջ: Անանիա Շիրակացու աշխատությունների բնական բնագրերը հրատարակվել են 1944 թ. (հրատ. Ա. Գ. Աբրահամյան): Նկատի ունենալով նրա նկատմամբ շփուլացող հետաքրքրությունը, և նրա ժառանգությունն ավելի լայն լուսարանելու նպատակով, Մատենադարանը ուսերեն թարգմանությամբ հրատարակել է նրա տիեզերագիտական ստեղծագործությունները՝ «Տիեզերագիտություն» ընդհանուր խորագրի տակ (1962 թ., թարգմ. Ք. Տեր-Դավթյան և Ս. Արևշատյան): Շիրակացու ձեռագրերի վրա աղբյուրա-

գիտական և բնագրագիտական աշխատանքը Մատենադարանում շարունակվում է:

Մատենադարանի հետազոտություններում և հրապարակումներում նշանակալի տեղ են զբաղեցնում գեղարվեստական գրականության հուշարձանները՝ միջնադարյան Հայաստանի շափածոն և արձակը: Այս բնագավառում մեծ ներդրում արեց ինստիտուտի առաջատար աշխատակիցներից մեկը՝ հայտնի բանասեր և պատմաբան, հանգուցյալ պրոֆ. Ասատուր Շմափոնի Մնացականյանը: Դեռ 1956 թ. նրա կողմից հրատարակվեց «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» բնագրերի արժեքավոր ժողովածուն: Նաև հետագա տարիներին նա շարունակեց բեղմնավոր աշխատել միջնադարի բնարեզուների բանաստեղծական ժողովածուների վրա, հրապարակեց Վարդան Անեցու (XI դ.), Գրիգոր Տղայի (XII դ.) ստեղծագործությունների քննական բնագրերը, հրատարակեց «Հայ միջնադարյան հանելուկներ» բնագրերի ժողովածուն (1980 թ.): Մինչև իր վախճանը՝ 1983 թ., նա հասցրեց ավարտել 60 հեղինակալին մամուլ ծավալով հիմնարար մի աշխատություն, որն առավել լրիվությամբ բնագրվում է հայրենները՝ միջնադարի ժողովրդական բանաստեղծական արվեստի մարգարիտները: Այս աշխատանքը արտադրություն է իջեցված և լույս կտեսնի 1987 թ.: Գեղարվեստական գրականության հուշարձաններով զբաղվել են Մատենադարանի նաև այլ աշխատակիցներ: Հրատարակվել է Մարտիրոս Ղրիմեցու (1959 թ., հրատ. Ա. Մարտիրոսյան), Հովասափ Սերաստացու (1962 թ., հրատ. Վ. Գևորգյան), Հովհաննես Կարնեցու (1962 թ., հրատ. Շ. Նազարյան), Սիմեոն Ապարանեցու (1976 թ., հրատ. Կ. Սուքիասյան) բանաստեղծությունների ժողովածուները, Գրիգոր Նարեկացու «Գանձերը և տաղերը» (1981 թ., հրատ. Ա. Քյուշկերյան), գեղարվեստական գրականության թարգմանական հուշարձաններից՝ «Պատմութիւն Փարէզի և Վեննայի, Պատմութիւն Վենետիկ քաղաքին» (1966 թ., հրատ. Կ. Մելիք-Օհանջանյան), «Խրատք նուշիրուանի» (1966 թ., հրատ. Բ. Զուգասզյան), «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» (1-ին հատ. 1969 թ., 2-րդ հատ. 1972 թ., հրատ. Ա. Մարտիրոսյան):

Բաղմամյա աշխատանքի պտուղ էր հայ միջնադարյան գրականության նըշանավոր ստեղծագործության՝ Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» պոեմի ուսերեն տողացի գիտական թարգմանությունը: Մատենադարանի աշխատակիցներ Մ. Գարբինյան-Մելիքյանի և Լ. Խանյարյանի կատարած այս թարգմանությունը արտադրության մեջ է և շուտով լույս կտեսնի: Այդ թարգմանության հիման վրա ուրիշ թարգմանիչներ աշխատում են դրա գեղարվեստական թարգմանության վրա՝ ուսերեն, ուկրաիներեն և այլ լեզուների:

Մատենադարանի հրատարակություններում աչքի ընկնող տեղ է զբաղեցնում մատենական գեղանկարչությունը՝ միջնադարյան հայկական մանրանկարչությունը նվիրված հրապարակումները: Միջնադարյան արվեստի այս ճյուղի նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը բավարարելու համար 1968 թ., երեք լեզուներով՝ հայերեն, ուսերեն, ֆրանսերեն, հրատարակվեց «Հայկական մանրանկարչություն» գունազարդ ալբոմը: Այս ուղղությամբ աշխատանքը պլանաշափորին շարունակվեց. 1973 թ. լույս տեսավ «Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում» (հրատ. Ա. Գևորգյան) թեմատիկ ալբոմը: Մատենանկարչության դպրոցներից երկուսին է նվիրված «Վասպուրականի մանրանկարչություն» ուսումնասիրությունը և ալբոմը (1978 թ., աշխատ. Լ. Հակոբյան) և «Ղրիմի հայ մանրանկարչությունը» (1978 թ., աշխատ.

է. Կորխմազյան): 1982 թ. հրատարակվեց «Գիմանկարը հայկական մանրանկարչության մեջ» թեմատիկ ալբոմը (Ա. Գևորգյան), որը հետաքրքրություն առաջ բերեց ոչ միայն արվեստաբանների, այլև ընթերցողների լայն շրջանում, քանի որ պարունակում է քաղաքական գործիչների, փիլիսոփաների, բանաստեղծների, հոգևոր գործիչների, գիտնականների, մատենագիրների, միջնադարյան ուսուցչապետների եզակի դիմանկարներ: 1984 թ. «Ավրորա» հրատարակչությունը (Լենինգրադ) երեք լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) լույս ընծայեց Մատենադարանի պատրաստած «13—14-րդ դարերի հայկական մանրանկարչությունը Մատենադարանի հավաքածոյում» գունազարդ նոր ալբոմը (կազմ. և հեղինակներ է. Կորխմազյան, Ի. Դրամբյան, Հ. Հակոբյան), որտեղ մեծ մասամբ ընդգրկված են հայկական մատենանկարչության նախկինում չհրատարակված հուշարձաններ: Ներկայումս ավարտվում է տարբեր գեղանկարչական դպրոցների և նշանավոր ծաղկող վարպետների ստեղծագործությունը նվիրված մի քանի ալբոմների և ուսումնասիրությունների նախապատրաստման աշխատանքը:

Մատենադարանի ձեռագրական հավաքածոյում կան բազմաթիվ (ավելի քան 700) երաժշտական ձեռագրեր հին հայկական խաղային նոտագրությամբ, որոնց վերձանման բանալին կորել է դեռևս ուշ միջնադարի շրջանում: Զայնազրային այս համակարգի վերձանման ուղղությամբ աշխատանքներ են տարվում արդեն շատ տարիներ: Հայկական նոտագրության գաղտնիքի բացահայտմանը աստիճանաբար մոտեցնում են անվանի երաժշտագետներ Ք. Քուշնարյանի, Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի հետազոտությունները:

Միջնադարյան խոշոր երաժիշտներից մեկին՝ Ներսես Շնորհալուն (XII դար) է նվիրված Ն. Թահմիզյանի ուսումնասիրությունը (1973 թ.), որտեղ հավելվածի ձևով, եվրոպական նոտաների համակարգով տրված է Շնորհալույց պահպանված երաժշտական ժառանգության ձայնագրությունը: 1985 թ. լույս տեսավ Ն. Թահմիզյանի նոր աշխատությունը՝ «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V—XV դդ.»։ Մատենադարանը ուսերին թարգմանությամբ լույս է ընծայել XVII դարի խոշոր երաժիշտ և տեսաբան Թամբուրի Հարությունի «Արևելյան երաժշտության ձեռնարկ»-ը (1968 թ., թարգմ. Ն. Թահմիզյան): «Արևելքի երկրների երաժշտական գեղագիտություն» գրքում (Մոսկվա, 1967) հրատարակվել է հայ միջնադարյան փիլիսոփաների և գիտնական երաժիշտների աշխատություններից բնագրերի ընտրանի, որտեղ տրված են ընդարձակ քաղվածքներ երաժշտության տեսության և կատարողական արվեստի մասին (կազմ. և թարգմ. Ս. Արևշատյան և Ն. Թահմիզյան):

Մատենադարանի գիտական անձնակազմն այժմ ունի 42 աշխատակից, այդ թվում գիտությունների 8 դոկտոր և 25 թեկնածու, որոնց ջանքերով ստեղծվել են տասնյակ գրքեր և հարյուրավոր հոդվածներ՝ նվիրված հայ միջնադարագիտության ամենատարբեր ճյուղերին: Այդ աշխատությունները հրատարակվել են ինչպես Հայաստանում, այնպես և Սովետական Միության տարբեր քաղաքներում և արտասահմանյան գիտական մամուլում: Բացի վերը հիշատակված հրատարակումներից, Մատենադարանի աշխատակիցներից շատերը հանդես են եկել ընդհանրացնող բնույթի մենագրություններով, որոնք մեծ մասամբ գրվել և պաշտպանվել են որպես դոկտորական դիսերտացիաներ, ինչպես, օրինակ, Գ. Արզարյանի «Սերեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը» (1965 թ.), Շ. Նաղարյանի «Պետրոս Ղափանցի» (1969 թ.), Ա. Մարտիրոսյա-

նի «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» (1972 թ.), 2. Փափազյանի «Հողային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI—XVII դարերում» (1972 թ.), Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ձևալորումը հին Հայաստանում» (1973 թ.), Ն. Թահմիզյանի «Երաժշտության տեսությունը հին Հայաստանում» (1977 թ.), Վ. Գրիգորյանի «Ուկրաինացի և Լեհաստանի հայկական գաղութների պատմությունը» (1980 թ.) և այլն:

Անցած 25 տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել Մատենադարանի ձեռագրական ֆոնդերի գիտական նկարագրությանը: Երկարամյա աշխատանքի արդյունք էր հին հայկական ձեռագրերի երկհատոր համառոտ ցուցակի հրատարակությունը (1-ին հատ. 1965 թ., 2-րդ հատ. 1970 թ.), որի մեջ արված է 1969 թ. հունվարի մեկի դրությամբ հավաքածոյում եղած 10408 հայերեն ամբողջական ձեռագրերի նկարագրություն (կազմ. Օ. Եզանյան, Փ. Անթարյան, Ա. Զեյթունյան): Գրանից հետո գիտական մատենագիտության բաժնի աշխատակիցները պրոֆ. Ա. Շ. Մնացականյանի ղեկավարությամբ ձեռնարկեցին «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ը կազմելուն, որն ընդգրկում է ձեռագիր հուշարձանների սպառիչ նկարագրությունը: 1984 թ. լույս տեսավ 1-ին հատորը (կազմ. Օ. Եզանյան, Փ. Անթարյան, Ա. Զեյթունյան), որն ամփոփում է հայերեն ձեռագրերի ֆոնդի № № 1—300 գրչագրերի նկարագրությունը: Հատորն սկսվում է պրոֆ. Ա. Մնացականյանի ընդարձակ ներածական հոդվածով՝ նվիրված Մատենադարանի ձեռագրական ֆոնդերի պատմությանը, ցուցակի կազմության և ձեռագրերի գիտական նկարագրության սկզբունքներին, ճոխանում է Օ. Եզանյանի կազմած ամենամանրամասն ցանկերով: «Մայր ցուցակի» 1-ին հատորի լույս տեսնելը խոշոր իրադարձություն էր ոչ միայն Մատենադարանի, այլև իրենց թեմատիկայով ձեռագիր հուշարձաններին առնչվող հանրապետության մյուս ինստիտուտների համար: Հաջողությամբ շարունակվում է աշխատանքը հաջորդ հատորների վրա: Տպագրության է ուղարկված 2-րդ հատորը, ավարտվում է աշխատանքը 3-րդ և 4-րդ հատորների վրա:

«Մայր ցուցակի» ստեղծման աշխատատար գործի հետ միասին, Մատենադարանի աշխատակիցների կողմից ներքին օգտագործման համար կազմվել են մի ամբողջ շարք թեմատիկ ցուցակներ և բարտարաններ, որոնք բնագրագետների, աղբյուրագետների, հնագրագետների և տարբեր մասնագիտության հայագետ-միջնադարագետների կողմից օգտագործվում են որպես յուրատեսակ մատենագիտական ձեռնարկներ: Այդ բարտարանները տրամադրվում են նաև Մատենադարան եկած սովետական և արտասահմանյան մասնագետներին և անհամեմատ հեշտացնում ու արագացնում են բազմահազարանոց ձեռագրական ֆոնդից իրենց հետաքրքրող նյութերի հավաքման նրանց աշխատանքը: Այս բարտարաններն ու գրացուցակները կազմված են ըստ միջնադարյան գիտությունների, գրականության և արվեստի ճյուղերի՝ պատմագրության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, իրավունքի, բժշկության, բնական գիտությունների, կրոնադավանաբանական գրականության, մանրանկարչության և այլն: Այդ թեմատիկ գրացուցակներից մեկը՝ փիլիսոփայական ձեռագրերի մատենագիտական ցանկը՝ ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է «Մատենադարանի բանբերում» և արդեն նշանակալի օգնություն է ցույց տվել միջնադարագետ-փիլիսոփաներին: Փորձը ցույց է տվել, որ նման գրացուցակ-ցանկերի հրատարակությունը ասիպողական անհրա-

ժեշտություն է, և՛ որ գրանք այսուհետև էլ, մինչև «Մայր ցուցակի» հրատարակության ավարտը (իսկ դա ամենախիստ հաշվումներով կտևի 20—25 տարի), անվոխարինելի նեցուկ կլինեն գիտության շատ ճյուղերի միջնադարագետ-հետադատողների համար:

Պետք է նշել, որ ձեռագրական ֆոնդի աճը իր արտահայտությունն է գրանում մասնույում: Յուրաքանչյուր 1—2 տարվա ընթացքում նոր ստացված ձեռագրերի համառոտ նկարագրությունը հրատարակվում է գիտական պարբերականներում, և մասնագետները նրանց բովանդակության մասին անհրաժեշտ տեղեկություններ են ստանում: Բանն այն է, որ նոր ձեռագրերը, համաձայն հնից ժառանգած կանոնի, հերթական համար են ստանում անկախ գրչագրի ստեղծման ժամանակից և, բնականաբար, նրանց նկարագրությունը կմանի «Մայր ցուցակի» վերջին հատորների մեջ, որոնց տպագրվելու հերթը կհասնի մոտ երկու տասնամյակ հետո: Այսպիսով, բնագրագետների, ձեռագրագետների, հնագրագետների, ինչպես նաև պատմաբանասիրական գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների այսօրվա սերունդը հնարավորություն է ստանում հետևել Մատենադարանի ձեռագրական ֆոնդի աճին և ակտիվորեն գիտական շրջանառության մեջ ներառնել գրչության և մանրանկարչության առավել արժեքավոր հուշարձանները:

Վերջին տարիների ձեռագրագիտական և հնագրագիտական ուսումնասիրությունների մեջ հատուկ հիշատակության է արժանի 981 թվականի հայերեն հնագույն թղթյա ձեռագրի վրա կատարված աշխատանքը: Գրչության այս եղանակի հուշարձանը գիտապատմական և մշակութային մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն որպես Սովետական Միության մեջ թղթի վրա գրված հնագույն գրչագիր, այլ նաև որպես հին հալ հեղինակների և հունարենից թարգմանված պատմական, փիլիսոփայական և մեկնողական ստեղծագործություններ պարունակող հազվագյուտ ժողովածուի ընդօրինակություն: Ձեռագրի 1000-ամյակի առթիվ Մատենադարանի գիտական խորհուրդը որոշում կայացրեց այն հրատարակելու մասին: Բնագիրը պատրաստված է տպագրության և մոտակա ժամանակներս լույս կտեսնի երկու գրքով: Առաջին գիրքն ընդգրկում է ձեռագրի նմանատիպ հրատարակությունը, երկրորդը՝ ամբողջ ժողովածուի վերծանված բնագիրը, որը ձեռագրի տարիքի և նախկինում պահպանության աննպաստ պայմանների պատճառով խիստ վնասվել է: Հրատարակությունը նախապատրաստել է ինստիտուտի փորձառու ձեռագրագետներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մաթևոսյանը:

Մատենադարանի, որպես գիտահետազոտական կենտրոնի, գործունեությունը իր արտացոլումն է գտնում նաև գիտական նստաշրջաններում և կոնֆերանսներում: Անցած 25 տարիների ընթացքում անց է կացվել 19 գիտական նստաշրջան, որոնցում Մատենադարանի աշխատակիցները ինստիտուտում մշակվող հնագրագիտության և գիտությունների պատմության բոլոր ճյուղերի վերաբերյալ կարդացել են ավելի քան երեք հարյուր գեկուցում: Հարկ է նշել, որ Մատենադարանը գործնական մասնակցություն է ունեցել ՍՍՀՄ ԳԱ հնագրագիտական հանձնաժողովի կազմակերպած երեք համամիութենական կոնֆերանսների՝ 1960, 1969 և 1977 թթ.: Առաջին և երրորդ կոնֆերանսներն անց են կացվել Երևանում, Մատենադարանի հարկի տակ, երկրորդը՝ Թբիլիսիում, Վրացական ՍՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտում: Այս կոնֆերանսները, որոնց սկիզբը դրեցին ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Լ. Ս.

Խաչիկյանը և Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ի. Վ. Արուլաձեն, ներկայացուցչական ֆորումներ դարձան, որոնցում միութենական հանրապետությունների և ՍՍՀՄ ԳԱ հնագրագիտական հանձնաժողովի գիտնականները ամբողջացնում են իրենց մի քանի տարիների աշխատանքների արդյունքները, ծանոթանում հնագրագիտության և պատմական օժանդակ գիտությունների մյուս բնագավառների նորագույն նվաճումներին: Մատենադարանի աշխատակիցները ղեկուցումներով հանդես են եկել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում կայացած միջազգային շատ կոնգրեսներում, կոնֆերանսներում և սիմպոզիումներում: Նշված գիտական նստաշրջաններից և կոնֆերանսներից բացի, Մատենադարանը ակտիվ մասնակցություն է ունեցել Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին, ականավոր գիտնական և բժիշկ Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակին, փիլիսոփա Գավիթ Անհաղթի 1500-ամյակին, Գլաձորի համալսարանի 700-ամյակին նվիրված և այլ հորելյանական նստաշրջանների: Այդ հորելյանների առթիվ Մատենադարանը հրատարակել է ուսումնասիրություններ և բնագրեր, աշխարհաբար և ուսերեն թարգմանություններ, գիտահանրամատչելի գրքեր, գրքույկներ, ալբոմներ, բուկլետներ և այլն:

Անցած ժամանակի ընթացքում հրատարակվել է «Բաներ Մատենադարանի» 14 հատոր, որոնցում հրատարակվել են միջնադարյան հայ մատենագրության բոլոր բնագավառներին վերաբերող հոդվածներ, բնագրեր և թարգմանություններ, հնագրագիտական ուսումնասիրություններ՝ նվիրված ինչպես տաանձին ձեռագիր հուշարձանների, այնպես էլ Հայաստանում և նրա սահմաններից դուրս պահվող ամբողջ հավաքածոների: Բոլոր հոդվածներն ու հրատարակումները օժտված են ուսերեն և ֆրանսերեն ամփոփումներով: «Մատենադարանի բաներում», բացի ինստիտուտի աշխատակիցներից, հայագիտական հոդվածներով և հրատարակումներով հանդես են գալիս նաև արտասահմանյան գիտնականներ և Սովետական Միության այլ հանրապետություններից մասնագետներ:

Իր հիմնական պարտականությունների հետ միասին, վերջին 25 տարիների ընթացքում Մատենադարանը կատարել և կատարում է նաև թանգարանի դեր: Հայ ժողովրդի ձեռագրական ժառանգության նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը, սովետական և արտասահմանյան հյուրերի և զբոսաշրջիկների անընդհատ հոսքը (տարեկան ավելի քան 50 հազար), որոնք ձգտում են լինել Մատենադարանի հարկի տակ և հաղորդակցվել Հայաստանի հոգևոր մրշակույթի հուշարձաններին, ասում են այն մասին, որ ձեռագրերի այժմյան ցուցադրությունը և դրա համար հատկացված ցուցասրահը ընդարձակման կարիք են դրում: Մատենադարանի տնօրենությունը նոր ցուցադրություն է պատրաստում՝ այդ նպատակի համար նկատի ունենալով ևս երկու ընդարձակ սրահներ: Այդ պլանի արագ իրագործմանը կնպաստի գիտական նոր մասնաշենքի և լրացուցիչ ստորերկրյա պահոցի շինարարության ավարտումը:

Ընթերցող լայն հասարակայնության հետաքրքրությունները բավարարելու համար սկսվել է հայերեն, ուսերեն և անգլերեն լեզուներով գիտահանրամատչելի գրքույկների մատենաշարի հրատարակությունը, որի մեջ լուսարանվում են հին և միջնադարյան հայկական գիտության, գրականության և արվեստի տարբեր բնագավառներ: Այս մատենաշարով Մատենադարանի կողմից արդեն հրատարակվել են «Թժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում» (1983 թ., հեղ. Ս. Վարդանյան), «Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում»



(1983 թ., հեղ. ն. Քահմիզյան), «Հին հայ թարգմանական գրականություն» (1984 թ., հեղ. Ն. Տեր-Պետրոսյան): Գլաձորի համալսարանի 700-ամյակի տոնակատարության առթիվ լայն շրջանի ընթերցողների և մասնագետների համար Մատենադարանի կողմից հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվեցին «Գլաձորի համալսարանը Միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (հեղինակներ Ս. Արևշատյան և Ա. Մաթևոսյան) և ռուսերեն թարգմանությամբ հետաքրքիր բնագրերի ընտրանի՝ «Աղբյուրներ Միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների սպառմության (12—15 դդ.)» խորագրով (կազմ., թարգմ. և ներած. Ք. Տեր-Դավթյանի) գրքույկները, Գլաձորի մանրանկարչական դպրոցի մանրանկարների գունավոր բուկլետը, այդ դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներ Թորոս Տարոնացուն և Ավագին նվիրված պատկերազարդ ալբոմները: Գիտահանրամատչելի մատենաշարի հրատարակությունը կրնա զլայնվի: Արդեն պատրաստ են մանրանկարչությանը, միջնադարյան շափածոյին և արձակին, բառարանագրություններ և փիլիսոփայություններ նվիրված գրքույկները: Մի բանի հրատարակություններ է ունեցել Մատենադարանի ուղեցույցը՝ ռուսերեն, հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով:

Մատենադարանի տնօրենության և գիտական խորհրդի կողմից մշակվել է առաջիկա տասնամյակների գիտահետազոտական աշխատանքների պլանը, որը նախատեսում է հայ բնագրագիտության, աղբյուրագիտության և մատենագրության բոլոր ճյուղերին նվիրված հետազոտական աշխատանքի զարգացում: 25 տարիների կատարած աշխատանքն ու կուտակած փորձը հիմք են տալիս հուսալ, որ Մատենադարանի աշխատակիցների կողեկաթիվը հաջողությամբ կըկատարի իր վրա դրված պատասխանատու և պատվաբեր նոր խնդիրները:

С. С. АРЕВШАТЯН

25-ЛЕТНИЕ ИТОГИ ДЕЯТЕЛЬНОСТИ ИНСТИТУТА  
ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА  
(К 25-летию реорганизации Матенадарана)

Резюме

3-го марта 1959 г. постановлением Совета Министров Армянской ССР Государственное хранилище рукописей было преобразовано в Научно-исследовательский институт древних рукописей «Матенадаран» при Совете Министров АрмССР. На институт были возложены функции ведущего научного учреждения по армянской текстологии, источниковедению и научной библиографии. В статье обобщаются итоги 25-летней деятельности Матенадарана по изучению и публикации памятников армянской историографии, философии, естествознания, книжной живописи, художественной литературы и других отраслей духовной культуры средневековой Армении. Освещена работа по сбору, хранению и реставрации рукописей, научному описанию рукописного фонда, а также другие стороны исследовательской, музейной и научно-просветительской деятельности института. Перспективный план научно-исследовательских работ Матенадарана предусматривает дальнейшее развитие всех отраслей армянской археографии, текстологии и источниковедения.

S. S. AREVCHATIAN

LES RESULTATS DES 25 ANNEES DE TRAVAIL DE L'INSTITUT  
MACHTOTZ DES MANUSCRITS ANCIENS*(A l'occasion du 25e anniversaire de la réorganisation du  
Maténadaran)*

## Résumé

Le 3 mars 1959, sur décision du Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie, le Dépôt d'Etat des manuscrits fut transformé en Institut de recherches scientifiques sur les manuscrits anciens "Maténadaran", près le Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie. L'Institut assumait les fonctions d'institution scientifique principale pour la textologie, l'étude des sources et la bibliographie scientifique arméniennes. L'article résume les résultats de 25 ans de travail du Maténadaran dans le domaine de l'étude et de la publication des oeuvres de l'historiographie, de la philosophie, des sciences naturelles, de l'enluminure, des lettres, ainsi que d'autres domaines de la culture spirituelle de l'Arménie médiévale. Il éclaire aussi les efforts fournis pour la collection, la conservation et la restauration des manuscrits, leur description scientifique, de même que les autres aspects des activités de l'Institut, en tant que musée, centre de recherches scientifiques et de vulgarisation. En perspective, les plans des recherches scientifiques du Maténadaran prévoient le développement ultérieur de tous les domaines de l'archéographie, de la textologie et de l'étude des sources arméniennes.

ԳԵՎՈՐԳ ԱՔԳԱՐՅԱՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԸ»  
ԿԱՄ «ՔՐՈՆԻԿՈՆՆԸ»

Հայկական հնագույն թղթյա ձեռագիրը, որը 1951-ին բուրբեց իր հաղա-  
րամյակը և այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում  
(ձ. 2679), նշանավոր է ոչ միայն որպես ամենահին թղթյա մատյաններից մեկն  
աշխարհում, այլև որպես գիտական մեծ կարևորություն ունեցող գիրք-գրադա-  
րան: Նրանում ընդգրկված են միջնադարյան գիտության զանազան բնագավառ-  
ների (պատմություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, մաթեմատի-  
կա, տիեզերագիտություն, օդերևութաբանություն, տոմարագիտություն և այլն)  
պատկանող երկեր: Համաաշխարհային ձեռագրական մշակույթի այս հազվա-  
գյուտ հուշարձանում ընդօրինակված նյութերի ուսումնասիրությամբ զբաղվել  
են հայ և օտար մի շարք գիտնականներ: Ձեռագրին դիմելու առիթներ ունեցել  
ենք նաև մենք<sup>1</sup>: Այսօր մեզ հետաքրքրողը ձեռագրում ընդօրինակված ժամա-  
նակագրությունն է, որը հրատարակվել է 1904 թ. Վենետիկում<sup>2</sup> և 1944 թ. Երե-  
վանում<sup>3</sup>:

Հայ և հույն հեղինակավոր մատենագիրների երկերի օգտագործմամբ  
կազմված այս ժամանակագրական հուշարձանը վաղուց արդեն գրավել է մաս-  
նագետների ուշադրությունը և դուրս է եկել միջազգային ասպարեզ: 1902 թ.  
Համբուրգում կայացած արևելագիտական կոնգրեսում նրան նվիրված գերմանե-

1 Թղթյա ձեռագրի և Շիրակացուն վերագրված ժամանակագրության ընդօրինակություն-  
ներից մեկը պարունակող № 5228 ձեռագրի համեմատությամբ պարզել ենք, որ ընդօրինակու-  
թյունը կատարվել է ոչ թե անմիջապես թղթյա ձեռագրից, ինչպես որ ենթադրվել է, այլ Վե-  
նետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող № 218 ձեռագրից (տե՛ս մեր «Սերեոսի Պատ-  
մությունը և Անանունի առնդծվածք», Երևան, 1965, էջ 112—113): Բացի այդ՝ առանձին հոդ-  
վածներ ենք նվիրել թղթյա ձեռագրում պահպանված «Յաղագս ամպոց և նշանաց» օդերևութա-  
բանական երկին (հոդվածների մատենագիտությունը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատե-  
նագիտություն, հ. 2, Երևան, 1976, էջ 727—729), ինչպես նաև Անանիա Շիրակացուն վերագր-  
ված ժամանակագրությանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 477, «Կրթերթ»  
ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1974, № 7, էջ 76 և 1975, № 10, էջ 86):

2 Անանուն ժամանակագրություն. խմբագիր յօրինեալ յ է դարու ի հնագույն ժամանա-  
կագրաց և հրատարակեալ ներածութեամբ և բաղդատութեամբ... Վենետիկ, 1904: Հրատա-  
րակիչ Բարսեղ Սարգսյանը ժամանակագրությունը համեմատել է լատիներեն հին թարգմա-  
նության հետ (հունարեն բնագիրը դեռևս կորած էր համարվում) և նշել լատիներենի կարևոր  
ընթերցվածքները:

3 Հրատարակել է Աշ. Աբրահամյանը «Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ համարողի»  
խորագրով (որը հրատարակչինն է): Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենա-  
գրությունը, Երևան, 1944, էջ 357—399: Այսուհետև՝ Շիրակացու մատենագրությունը:

րեն գեկուցմամբ հանդես եկավ Գր. Խալաթյանցը<sup>4</sup>, որը բացահայտեց կապը ժամանակագրության և հույն մատենագիր Հիպոդիտոսի (մ. թ. III դար) Քրոնիկոնի լատիներեն թարգմանության (Liber generationis) միջև: Հետագայում հայտնաբերվեց և տպագրվեց Հիպոդիտոսի երկի հունարեն բնագիրը, որի հրատարակիչները անհրաժեշտ գտան հարակից հրատարակել նաև Թղթյա ձեռագրում Հիպոդիտոսի երկին համապատասխանող հատվածի գերմաներեն թարգմանությունը, ընդգրկելով Շիրակացուն վերագրված ժամանակագրության սկզբից մինչև «Թագաւորք Պարսիկք Սասանականք» խորագրի տակ ընդօրինակված ցանկը ներառյալ<sup>5</sup>: Թեև մինչ այդ հայերեն հրատարակության հեղինակ Բարսեղ Սարգիսյանն արդեն մեծ և անգնահատելի աշխատանք էր կատարել ժամանակագրության ուսումնասիրման, լուսարանման և Liber generationis-ի լատիներեն տեքստի հետ համեմատելու ուղղությամբ, այդուհանդերձ հունարեն բնագրի հայտնաբերումը նպաստեց Թղթյա ձեռագրի միջոցով մեկ հասած ժամանակագրական երկը բազմակողմանի և ավելի մանրամասն ուսումնասիրելու գործին:

Այդ շնորհակալ գործը զլուխ բերեցին Ա. Բաուերը և Յ. Մարկվարտը<sup>6</sup>: Համառոտակի թվարկենք նրանց աշխատությամբ հայտնի դարձած այն նորությունները, որոնք այսօր հետաքրքրում են մեզ<sup>7</sup>:

Առաջին. Շիրակացուն վերագրված ժամանակագրությունը ոչ թե մեկ հեղինակի ձեռքով հավաքված, խմբագրված և միմյանց հարմարեցված ժամանակագրական աղբյուրների ժողովածու է, ինչպես ենթադրվում էր մինչ այդ, այլ բաղկացած է երեք տարբեր հատվածներից, որոնք անփոփոխ ի մի են բերված ձեռագրի պատվիրատուի և ստացողի նախաձեռնությամբ: Երկրորդ. ժամանակագրության հիպոդիտոսյան հատվածի հայերեն թարգմանությունը կատարվել է ոչ թե անմիջապես III դարում Հիպոդիտոսի գրած երկից, այլ V—VI դարերում վերամշակված ալեքսանդրյան խմբագրությունից<sup>8</sup>: Երրորդ. Անանիա Շիրակացին ծնվել է 620 թ. և վախճանվել է 705 թ.: Նա իր ուսուցիչ Տյուրիկոսի

<sup>4</sup> Chalantantz Gr., Die armenische Version der Weltchronik des Hippolytus:—Wiener Zeitschr. f. d. Kunde des Morgenlandes. Bd. 17, 1903. էջ 182—186: նաև «Հանդես Ամսօրյա», 1904, էջ 46—48:

<sup>5</sup> Hippolytus Werke, 4 Bd., Die Chronik; hergestellt von Adolf Bauer... Nebst ein Beitrag von J. Markwart, Leipzig, 1929. Մարկվարտի թարգմանությունը և ուսումնասիրությունը գրավում է այս նշանավոր հրատարակության 392—558 էջերը: Այսուհետև՝ Hippolytus Werke.

<sup>6</sup> Ա. Բաուերը մեռել էր նախքան հրատարակությունը, իսկ Մարկվարտի կյանքը ողբերգական վախճան ունեցավ հրատարակվելուց երկու-երեք ամիս անց, 1930-ի փետրվարին: Նրանց աշխատության վերահրատարակիչները, խախտելով հեղինակների կամքը, Հիպոդիտոսի հունարեն բնագիրը հետագայում հրատարակեցին առանց հայկական հուշարձանին վերաբերող բաժնի (Hippolytus Werke, 4 Bd., Die Chronik, Berlin, 1955): Ա. Բաուերի և Յ. Մարկվարտի հրատարակությունը լույս էր տեսել շատ սահմանափակ քանակով և հեղինակների բացակայության պայմաններում Գերմանիայի սահմաններից դրե՞ք դուրս չեկավ:

<sup>7</sup> Մարկվարտի և Բաուերի հայտնած որոշ նորություններ մենք բննել ենք 1969 թ. մայիսի 23-ին, Մաշտոցի անվան Մատենադարանի 11-րդ գիտական նստաշրջանում, «Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրության հարցի շուրջը» գեկուցման մեջ:

<sup>8</sup> Նախամեսոպոլյան գրականության ուսումնասիրման գործում ալեքսանդրյան խմբագրության նշանակության մասին մենք արդեն խոսել ենք Վիգեն Խելումյանի «Գիրք գրոցի» (Երևան, 1978) համար մեր գրած առաջարանում (էջ 20—21):

մոտ գնացել է 16 տարեկան հասակում: Տյուրիկոսն իր պատանեկությունն անցկացրել է զորավար Յոհաննես Միստիկոնի պալատում: Այս փաստերը բացահայտվում են հունական համապատասխան աղբյուրների քննությամբ, որը կատարվել է Անանիա Շիրակացու ինքնակենսագրության գերմաներեն թարգմանության և համեմատական ուսումնասիրության հիման վրա: Չորրորդ. Անանիա Շիրակացու «Քրոնիկոնք» եղել է հարուստ բովանդակություն ունեցող մի ժողովածու: Դա ապացուցվում է Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետապարձին հասցեագրած նամակով, որը Մարկվարտը վերծանել և թարգմանել է գերմաներեն:

Նորություններից առաջինը, ինչպես տեսանք, վերաբերում է Թղթյա ձեռագրում գտնվող ժամանակագրության հեղինակին: Վերջինիս Անանիա Շիրակացու հետ նույնացրել է առաջին անգամ Թղթյա ձեռագիրն ընդօրինակող գրիչը, որը Վենետիկի № 218 և Մաշտոցի անվան Մատենադարանի № 6228 ձեռագրերում (էջ 79 ա) թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Առաջիկայ ժամանակագրական ճառագ յօրինեալ զուգագրութեամբ այլևայլ մատենագրաց՝ Մովսիսի Խորենացոյ եւ Անդրէասի, Եպիփանու, Եւսերի, Թուի նոյնպէս Շիրակացոյն լինել, զի հասանէ ցաւորս իւր ի ՃԼ՛Ի Թուական»<sup>9</sup>: Հետագա գրեթե բոլոր ուսումնասիրողները ժամանակագրության հեղինակ են համարել Շիրակացուն: Մարկվարտը, սակայն, Շիրակացուն վերագրել է ժամանակագրության միայն երկրորդ կեսը՝ «Կայսերաց գիրքը», որը ձեռագրում սկսվում է այսպես, «Կայսերք Հոռովմոց, թէ որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործ գործեցան»<sup>10</sup>: Այս կեսը ձեռագրերում հանդիպում է նաև մյուս կեսից անշատ ընդօրինակված վիճակում<sup>11</sup>:

Հօգուտ իր տեսակետի Մարկվարտը վկայակոչել է այն փաստը, որ «Կայսերաց գրքի» հեղինակը, ինչպես և Շիրակացին, առանձնահատուկ ուշադրություն են ցուցաբերում տոմարագիտական հաշիվների նկատմամբ: Դա իսկապես այդպես է, սակայն «Կայսերաց գիրքը» օգտագործած պատմիչներից Ուլտանեսը, Հովհաննես Սարկավազը, Վարդան Բաղիշեցին<sup>12</sup> և այլք Շիրակացու անունը չեն տալիս և առհասարակ չեն ճանաչում այդ երկի հեղինակին: Ավելին. Սարկավազը և Բաղիշեցին «Կայսերաց գիրքը» որոշակիորեն տարբերում են Շիրակացու երկերից, թեև՝ ուրիշ հեղինակի չեն ճանաչում<sup>13</sup>: Հիշենք նաև, որ Բաղիշեցին «Կայսերաց գրքից» բացի իր ցուցակում դրանցել է ևս մի պատ-

<sup>9</sup> Այս տեղեկությանը վերաբերող ծանոթագրությունում (տե՛ս մեր «Անեբոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը», էջ 112, ծ. 187, տող 4) Բ. Սարգիսյանի անունը հիշատակված է սխալմամբ:

<sup>10</sup> «Կայսերաց գիրքը» գրավում է Շիրակացու երկերի 1944 թ. հրատարակության 378—399 էջերը:

<sup>11</sup> Բ. Սարգիսյանը ժամանակագրության 1904 թ. հրատարակությունում «Կայսերաց գիրքը» դիտում էր որպես անբաժան մաս, սակայն 1924-ին դատվ, որ ձեռագրերում այն ավելացվել է հետագայում: Տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ: Հորինեց Հ. Բ. Սարգիսյան, հ. 2, Վենետիկ, 1924, էջ 279:

<sup>12</sup> Տե՛ս մեր հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 440:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224 և Վարդան Բաղիշեցու կազմած Ձեռագրաց ցուցակը («Արարատ», 1903, էջ 184):

մագիրք<sup>14</sup>, որը «Կայսերաց գրքի» հետ նույնանալ չի կարող, որովհետև «Կայսերաց գիրքը» ցուցակում գրանցված է առանձին, որպես Շիրակացուն շախտկանող երկ, այնինչ հիշյալ պատմագիրքը գրանցված է հենց Շիրակացու անվամբ:

Տեսնենք՝ ինչ է ասում ինքը Շիրակացին իր գրած ժամանակագրական երկի մասին: «Ի Զատիկն Տեառն» երկում նա գրում է. «Եւ արար Յեսու ի ԻՅ արամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի շորեքտասան՝ ըստ աւուրցն լուսնի Եւ առնէ նորոգումն կարգացն եղծելոց անապատին. եւ առնէ իրրեւ ի նորոյ սկիզբն կարգաց եւ արինաց որպէս եւ Մովսէս յելանելն յԾգիպտոսէ. քանզի եւ զանցանելն զՅորդանան գետով՝ ելս կոչէ յԾգիպտոսէ: Որպէս եւ ի ժամանակալկա/ն կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք»<sup>15</sup>: Ինչպես տեսնում ենք, Շիրակացին հայտնում է, որ իր գրած «Ժամանակական կանոնում» արդեն նախօրոք խոսել է այն մասին, որ Հորդանան գետն անցնելը նույնպես համարվում է ելք Եգիպտոսից. «Եւ զանցանելն զՅորդանան գետով՝ ելս կոչէ յԾգիպտոսէ»: Ուրեմն բավական է, որ «Կայսերաց գրքում» կամ նրա հետ միասին ընդօրինակված ժամանակագրական հատվածներում գտնեինք Շիրակացու հայտնած միտքը, ինքնբնութիւնը կպարզվեր, որ «Ժամանակական կանոնը» դա է: Նման միտք չենք գտնում Շիրակացու մեզ հասած երկերից և ոչ մեկում: Կնշանակի՝ «Ժամանակական կանոնը» մեզ չի հասել:

Այդուհանդերձ բնասիրութեան մեջ հայտնվել է այն համոզմունքը, որ Շիրակացին նկատի է ունեցել «Կայսերաց գիրքը» սլաբոնակող ժամանակագրական ժողովածուն: Հ. Անասյանը գրում է. «Անանիա Շիրակացին իր Զատիկի ճառում գրում է... որ ինքը Հորդանանի անցման մասին արդեն գրել է իր «Ժամանակական կանոնում»: Իսկ ո՞րը նկատի ունի Անանիա Շիրակացին իր աշխատութեան մեջ «Ժամանակական կանոն» անունով. դա հենց այն հայտնի ժամանակագրութունն է, որ առաջին անգամ վենետիկյան Մխիթարյանները հրատարակեցին 1904 թվին... և որ վերջին տարիներս պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը կրկին հրատարակեց Անանիա Շիրակացու երկերի շարքում: Եվ իրոք այս ժամանակագրութեան մեջ խոսվում է Հորդանանի անցման մասին. «Յեսու որդի նաւայ իրրեւ անց ընդ Յորդանան գետ, եկաց յերկրին Քանանացոց ամսրան և եւթն... և այլն» ... Մեր բերած այս ուղղակի փաստով այլևս անփիճելիորեն հաստատվում է, որ ...Անանուն «Ժամանակագրութունը»... իրոք Անանիա Շիրակացու աշխատութեանն է»<sup>16</sup>:

Հ. Բարթիկյանը համեմատել է Հ. Անասյանի Զատիկի ճառից վկայակոչած հատվածը Շիրակացուն վերագրված ժամանակագրութեան հետ և գրել. «Ինչպես պարզ երևում է այս համեմատութեանից, Անանիա Շիրակացին իր Զատիկի ճառում ամենևին էլ չի ակնարկում «Ժամանակագրութեան» մեջ հիշատակված

<sup>14</sup> «Գ (=3) պատմագիրք այլ կայ. մինն է Դաթի վարդապետի պատմագիրք և միւսն Անանիայի Շիրակացոյն և միւսն Սոկրատ պատմագիրք» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 737, էջ 224բ): Ի դեպ՝ այս գրանցումը վկայակոչելիս մենք «Գ պատմագիրք»-ը անուշադրարար կարգացել ենք «Բ պատմագիրք» և հանգել գրանից բխող եզրակացութեան (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 451):

<sup>15</sup> Շիրակացու Մատենագրութունը, էջ 294:

<sup>16</sup> Հ. Ա. Անասյան, Բուզանդարանի ուսուրին թարգմանութունը, Երևան, 1954, էջ 8—9:

վերոհիշյալ փաստը»<sup>17</sup>: Սույն առարկությունն իրականությունը համապատասխանում է այնքանով, որ համադրված հատվածները տարրեր բովանդակություն ունեն: Բայց ընթերցողն Անասյանին դիմելիս նկատում է, որ նա ուշադրություն է հրավիրել հատկապես մասնակի այն փաստի վրա, որ երկու հատվածներում էլ խոսվում է Հորդանանի՝ անցման մասին: Եվ հատվածներում իրականում էլ դառնում ենք հենց այն, ինչ նշել է Անասյանը: Զատկի ճառում ասված է. «... դանցանելն զՅորդանան գետով...» իսկ ժամանակագրությունում՝ «... իբրև անց ընդ Յորդանան գետ»: Հետևաբար Անասյանին ժխտելու համար հարկավոր է ցույց տալ Զատկի ճառի և Շիրակացուն վերագրվող ժամանակագրության միջև առկա անհամապատասխանությունը ակնհայտ դարձնող ավելի որոշակի փաստ: Իսկ այդ փաստն այն է, որ Զատկի ճառում Շիրակացին ոչ թե խոսում է սուսկ Հորդանանն անցնելու մասին, այլ հայտնում է, որ Հորդանան գետից անցնելը համարվում է ելք Եգիպտոսից: Ահա այս միտքն է, որ չկա Շիրակացուն վերագրվող ժամանակագրությունում, որով և ապացուցվում է այդտեղ և Զատկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնի» տարրերությունը:

Բարեբախտաբար մեզ է հասել նաև մեկ այլ աղբյուր, որով ստուգվում և հաստատվում է Շիրակացու խոսքը «ժամանակական կանոնի» մասին: Այդ աղբյուրը Ասողիկի Տիեզերական պատմությունն է: Այստեղ կարդում ենք. «Իսկ Հրէիցն վարդապետք և Եվսեբի ժամանակագիր ՆՁ ամ ասեն յելիցն յԵգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին: Իսկ Որոգինէս և Անանիա ՆՂ ամ ասեն, համարելով և զԺ ամն Եղոնի դատաւորին: Եւ վասն ճառելոյ Գրոց Թագաւորութեանն նեւ ամին՝ այսպէս ասէ, եթէ Յորժամ զՅորդանանաւ անց ժողովուրդն... զայն ելս կոչէ, որպէս և պատգամաւորէին առ միմիանս Թագաւորքն՝ եթէ Ազգ ել յԵգիպտոսէ»<sup>18</sup>: Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ Ասողիկը կարգացել է Անանիա Շիրակացու «ժամանակական կանոնը» և գրեթե բառացի կրկնել է Զատկի ճառում հայտնվող տեղեկությունը Հորդանանից անցնելու և Եգիպտոսից դուրս գալու մասին:

Որ Ասողիկը Որոգինեսի հետ միասին Անանիայի անունը նշելով հասկացել է ոչ թե մեկ ուրիշ Անանիայի, այլ Անանիա Շիրակացուն, երևում է նաև հետևյալ հատվածից. «Իսկ յելիցն յԵգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ըստ Նրոգինեսայ և Անանիայի Շիրակացոյ ժողովին ամբ ՆՂ»<sup>19</sup>:

Ասողիկից քաղված հատվածների միջոցով միաժամանակ որոշ պատկերացում ենք կազմում Շիրակացու «ժամանակական կանոնում» եղած նաև այլ տվյալների մասին: Նույն կարգի ժամանակագրական տեղեկություններ են հայտնում նաև Հովհաննես Սարկավազը<sup>20</sup>, Գրիգոր Տղան<sup>21</sup>, Գրիգոր Տաթևացին<sup>22</sup> և ուրիշներ, որոնք տոմարական հաշիվներ կատարելիս Շիրակացու ա-

17 Ըրաչ Բարթիկյան, Անանիա Շիրակացուն վերագրվող «ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 68:

18 Մանգանոս Տառաեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1835, էջ 11—12: Այսուհետև՝ Ասողիկ:

19 Անդ, էջ 9:

20 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224: Այսուհետև՝ Հովհաննես Սարկավազ:

21 Մատենադարան, ձեռ. № 3062, էջ 61բ և «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1838, էջ 23:

22 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 451:

նունը տալով վկայակոչում են նրա՝ մեզ հասած աշխատություններում շհանդիպող հաշվարկումները Արդյոք դրանք նույնպե՞ս գտնվել են «Ժամանակական կանոնում», թե մեզ շհասած մեկ այլ երկում, շենք կարող ասել:

Շիրակացու և Ասողիկի վկայություններից արդեն գիտենք, որ «Ժամանակական կանոն» ընդգրկել է ժամանակագրական՝ տոմարական տեղեկություններ հատկապես զատկի օրը ճշգրտելու վերաբերյալ: Գիտենք նաև, որ «Ժամանակական կանոն» ընդարձակ պատմագիրք չի եղել: Դա երևում է նրանից, որ Ասողիկն իրենից առաջ գրված պատմագրքերը թվարկելիս Շիրակացու անունը չի տալիս<sup>23</sup>: Դարձյալ Ասողիկն է, որ գրում է. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ քստ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայի Շիրակացույ կարգել զՔննիկոնն հրաշազան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զՔննիկոնն և վախճանի, կացեալ լաթոն ամս Զ»<sup>24</sup>: Այստեղ երկու անգամ հիշատակված «Քննիկոն» բառն այլ բան չէ, բան «Քրոնիկոն» բառի աղճատումից ծագած նույնիմաստ տարբնթերցվածք, որը նույնանում է «Ժամանակական կանոնի» հետ:

Անաստաս կաթողիկոսի անվան հետ կապվող մի ժամանակագրական երկի մասին վկայում է նաև Մաշտոցի անվան մատենադարանի № 2220, 2271 ձեռագրերում պահված «Պատմագիրք հայոց» կոչվող մատենագիտական ցանկը<sup>25</sup>, որում կարդում ենք. «Անանիա Շիրակացին. սկիզբն առեալ յԱղամայ համառօտ գաւազանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսին»<sup>26</sup>: Հնարավոր է, որ այս տեղեկությունը կազմված լինի Ասողիկի վերոհիշյալ հաղորդման հիման վրա, ինչպես որ Կիրակոս Գանձակեցու հետևողությամբ կազմվել է Ղազար Ճահկեցու տեղեկությունը. «Անանիա ի Շիրակ գաւառէն... Զսա կոչեաց առ ինքն տէր Անաստաս կաթողիկոսն, զի արասցէ անշարժ տոմարս Հայոց որպէս այլոց ազգաց, զոր արար մեծաւ ջանի»<sup>27</sup>:

«Ժամանակական կանոնի» մասին վկայող աղբյուրների շարքը պետք է դասել նաև Վարդան Բաղիշեցու կազմած ձեռագրացուցակը, որից երևում է, որ

<sup>23</sup> Ասողիկ, էջ 6—7: Այստեղ թվարկված հայ պատմիչներն են՝ Ագաթանգեղոս, Մովսէս Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Փավստոս Բուզանդ, Աբրեռս, Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Հովհաննէս Գրասխանակերտցի:

<sup>24</sup> Ասողիկ, էջ 99:

Ասողիկի տեղեկությունը հաստատում է նաև Հովհաննէս Գրասխանակերտցին, առանց «Քննիկոն» խորագիրը նշելու: Տե՛ս նրա «Պատմութիւն Հայոց», ԲիՖլիս, 1912, էջ 92:

<sup>25</sup> Ցանկին նմիրված մեր ուսումնասիրությունը տե՛ս Գ. Վ. Արզարյան, Բանասիրական հետախուզումներ, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 61—68: Հմմտ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա. 1959, Առաջաբան, էջ 20—21, 53—55:

<sup>26</sup> Հ. Անասյան, նշվ. աշի., էջ 54:

Մաշտոցի անվան մատենադարանի № 5254 ձեռագրում, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան մատենադարանում և այլուր պահվող որոշ ձեռագրերում Անանիա Շիրակացուն վերագրվող ժամանակագրությունն սկսվում է Աղամից և ավարտվում Անաստաս կաթողիկոսի օրոք իշխած բյուզանդական կայսր Կոստանդինի ժամանակով: Այսպիսի մի ձեռագիր տեսնելով, մյուս կողմից էլ տեղյակ լինելով Ասողիկի և այլոց հայտնած տեղեկությունը Անաստաս կաթողիկոսի և Շիրակացու մասին, «Պատմագիրք հայոցի» հեղինակը կարող էր իր տեսած ձեռագրերում գտնված ժամանակագրությունը վերագրել Շիրակացուն, շնայած մեզ հասած ոչ մի ձեռագրում Շիրակացու անունը չկա:

<sup>27</sup> Անդ, էջ 45:



Ամբողջու վանքի մատենադարանում 1689—1704 թվականներին<sup>28</sup> պահվել է այդ երկի երկու օրինակ, որոնք ցուցակում գրանցված են «Քննիկոն» անվամբ. «Ա՛լ = 1՛ զիրք ոսկով. Բառգիրքն է սուրբ Յով[հաննէ]սին, որ է Անանիա Շիրակացույն, որ է Քննիկոն»<sup>29</sup> «Ա. գիրք Անանիայի Քննիկոն»<sup>30</sup>:

Քեև այս ցուցակում «Ժամանակական կանոնի» կամ «Քրոնիկոնի» փոխարեն գրված է «Քննիկոն» (ինչպես որ Ասողիկի ձեռագրերում), սակայն համապատասխան աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում «Ժամանակական կանոն», «քրոնիկոն», «քննիկոն», «գալազան» (կանոն), «տոմար» և նման այլ բառերը միևնույն նշանակությունն են ունեցել: Սույն փաստը վրիպել է Յ. Մարկվարտի ուշադրությունից: Նա 1929 թ. հրատարակված վերոհիշյալ աշխատության մեջ առանձին քննության է ենթարկել «քրոնիկոն» և «քննիկոն» բառերը և եզրակացրել, որ դրանք արտահայտում են տարբեր իմաստներ: Նրա կարծիքով Ստեփանոս Մալխասյանցը ձիշտ չի վարվել, երբ Ասողիկի Պատմության ձեռագրերում գտնվող «Քննիկոնն հրաշազան»-ը սրբագրել է «Քրոնիկոնն հրաշազան» ձևով: Նա գրում է. «Մալխասյանցը Քննիկոնը դարձնում է Քրոնիկոն, բայց Գրիգոր Մագիստրոսը... նույնպես ունի Քննիկոն: Պետրոս կաթողիկոսին ուղղած մի նամակում նա, ըստ նամակի խորագրի, խնդրում է Անանիա Շիրակացու մի գիրքը, որը կոչվում է մեծ Քննիկոն»<sup>31</sup>: Այնուհետև նա վերծանել և գերմաներեն է թարգմանել Շիրակացու ժողովածուի բովանդակությունը ներկայացնող նամակը և ավելացրել. «Սրանից երևում է, որ Անանիայի երկը բոլորովին էլ միայն ժամանակագրությանը չի վերաբերել: Ուստի «Քրոնիկոն» վերնագիրը քիչ կհամապատասխաներ այդ գրքին: Ես կարծում եմ պետք է ընդունել «Քննիկոն» ձեռագրական ընթերցվածքը: Անանիան ստեղծել է մի այլախառն (hybride) բառակազմություն «քննել» բայից և հունական վերջավորությունից: Սպասելի էր կամ՝ քննական կամ հուն. *κριντικον*»<sup>32</sup>:

Այս կարծիքի ելակետը, ինչպես տեսնում ենք, այն է, որ Շիրակացու գիրքն ընդգրկել է տարբեր բովանդակություն ունեցող շատ երկեր, որոնք, ըստ Մարկվարտի, չէին կարող կրել միայն ժամանակագրությանը վերաբերող «Քրոնիկոն» խորագիրը: Մեծանուն գիտնականի ուշադրությունից, սակայն, այս անգամ էլ վրիպել է այն փաստը, որ միջնադարում (ինչպես նաև այսօր) սովորություն է եղել ձեռագիր ժողովածուները կոչել նրանցում ընդգրկված երկերից ամենանշանավորի կամ ստաշինի անվամբ: Այսպես օրինակ, հենց Շիրա-

28 Ցուցակը կաղծվել է 1689—1704 թթ. ընթացքում (տե՛ս մեր հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 19, 1971, էջ 449):

29 Մաշտոցի անվան մատենադարան, ձև. № 373, էջ 227ա:

30 Անդ, էջ 231բ: Ամբողջու վանքի մատենադարանի «Քննիկոնի» երկու օրինակները Ա. Մալխասյանի ենթադրությամբ «հավանաբար Քննիկոնի տարբեր մասեր են, այլապես Վարդան վարդապետը սովորության համաձայն կգրեր «Բ Քննիկոն», ինչպես օրինակ «Բ Միխայիլ պատմագիրք» (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», հաս. գիտ., 1974, № 7, էջ 73): Սակայն Վարդանը ձեռագրաց ցուցակում ձեռագրերը խմբավորել է ըստ նրանց մատենագրական տեսակների, այդ իսկ պատճառով երկու Քննիկոնը միասին գրանցել չէր կարող: Քննիկոններից մեկն ընդօրինակված է եղել այլ քնույթի, մյուսն էլ մեկ այլ քնույթի պատկանող ձեռագրերի կազմում:

31 Hippolytus Werke, էջ 428:

32 Անդ, էջ 427—428:

կացու երկր պարունակած մի ձեռագիր Բաղեշի Ամրդուլու վանքի ձեռագրաց ցուցակում գրանցված է ոչ թե «Քննիկոն», այլ «Բառգիրք» խորագրով: Հիշենք մեզ արդեն ծանոթ այդ գրանցումը. «Ա. | = 1 | գիրք սսկով. Բառգիրքն է սուրբ Յովհաննեսի սին, որ է Անանիա Շիրակացուն, որ է Քննիկոն»: Այս «Քննիկոնի» մեկ այլ ընդօրինակություն Ամրդուլու վանքում հանդիսացել է ձեռագրի գլխավոր երկր և ամբողջ ձեռագրին տվել է իր անունը. «Ա գիրք Անանիայի Քննիկոն և բազում ասացուածք վարդապետաց և մեկնութիւնք անծանօթք»<sup>33</sup>: Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 2639 ձեռագիր ժողովածուն թեև իր մեջ կրում է յոթ պատմիչների երկեր, սակայն Բաղեշի Ամրդուլու վանքում գտնված ժամանակ կոչվել է միայն Մովսես Խորենացու անվամբ. «Մեկ Մովսէս պատմագիրի, որ կայ ի մէջ է | = 7 | պատմագիրք՝ Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»<sup>34</sup>:

Ոչ միայն տարրեր հեղինակների, այլև միևնույն հեղինակի երկերը պարունակող ժողովածուները նույնպես որոշակի դեպքերում կարող էին կրել այդ հեղինակի երկերից միայն մեկի անունը: Այդպես է կոչվում, օրինակ, Գրիգոր Նազիանզացու «Առ որս» ժողովածուն, որում զետեղված առաջին երկն սկսվում է «Առ որս» բառերով. «Առ որս բանիւ են պաճուճեալ բանքս» («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 9):

«Քննիկոն» բառով գրադված բոլոր բառարանագիրներն այդ բառը գրանցել են «քրոնիկոն» նշանակությամբ<sup>35</sup>: Սա այնքան հանրահայտ փաստ է, որ վկայակոչումների կարիք չունի: Այնպես, որ Մարկվարտը պետք է պարզապես հիշեր ժողովածուները միայն մեկ երկի խորագրով կոչելու սովորությունը և, հետևելով բառարանագիրներին, ընդունեի, որ Մագիստրոսի նամակի վերնագրի մեջ հանդիպող «քննիկոնը» նույն «քրոնիկոնն» է: Շիրակացին ինքը կամ ուրիշները ժողովածուն կոչել են այդ բառով, որի փոխարեն Զատիկի ճառում հանդիպում է հայկական տարրերակր՝ «ժամանակական կանոն»: Եվսերիոս Կեսարացու ժամանակագրությունը նույնպես կոչվել է մերթ «Քրոնիկոն», մերթ՝ «ժամանակական կանոն»: Հայերեն թարգմանությունում Կեսարացին երբեմն էլ «քրոնիկոն» և «ժամանակական կանոն» արտահայտությունները գործածում է միասին. «...ի քրոնիկոն ժամանակական կանոնսն փոխեցայց»<sup>36</sup>:

Մագիստրոսի հաղորդման համաձայն՝ Շիրակացու երկերի ժողովածուն բաղկացած է եղել ոչ թե բնական, հետազոտական բնույթի գրվածքներից, այլ տարրեր աղբյուրներից բանաբաղված նյութերից: Հետևաբար այն չէր կարող կոչվել «քննիկ» բառից բխող ինչ-որ անվամբ: Իսկ «Քրոնիկոն» անունը շատ

<sup>33</sup> Անդ, էջ 231 բ: «Մեկնութիւնք անծանօթք»-ի մասին տե՛ս մեր հոդվածը («Բաները Մատենադարանի», № 10, էջ 451):

<sup>34</sup> Այս գրանցման մասին տե՛ս «Բաները Մատենադարանի», № 10, էջ 450—455:

<sup>35</sup> Մագիստրոսի նամակում «Քննիկոնը» հիշատակված է այնպես, որ կարող է ընկալվել նաև որպես ոչ թե ժողովածուն, այլ Շիրակացուն ներկայացնող բառ. «...Շիրակայնոյն, զոր Մեծ Քննիկոնն անուանեն»: Վ. Լանգլուան, հավանաբար, միաժամանակ ծանոթ լինելով նաև Հովհաննես Սարկավագի, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու և այլոց աշխատություններին, որոնցում Շիրակացին մեծարվում է «Մեծ» տիտղոսով («մեծ վարդապետ»), Մագիստրոսի «մեծ քննիկոնը» հասկացել է «մեծ ժամանակագիր», ընդունելով որպես Շիրակացուն մեծաբող արտահայտություն: Տե՛ս V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros.— «Journal Asiatique», 1869, janvier, p. 37.

<sup>36</sup> Եվսերիոս Կեսարացի, ժամանակականը երկմասնեայ, մասն Ա, վեներիկ, 1818, էջ 9:

րնական պետք է լիներ, որովհետև Շիրակացու տոմարական աշխատությունը հանդիսացել է ժողովածուի գլխավոր երկը:

Մենք քիչ հետո ցույց կտանք, թե գրչական ինչ ճանապարհ է անցել «Քրոնիկոնը», մինչև որ աղճատվելով դարձել է «Քննիկոն», իսկ այժմ հիշենք, որ «Քննիկոնը» աղճատված բառ չի համարում նաև Ա. Մաթևոսյանը: Նա վկայակոչել է Ասողիկի ձեռագրերը, որոնցում ամենուրեք գրված է «Քննիկոն»<sup>37</sup>: Սակայն հայտնի է, որ ամենահին ձեռագիրը (2865), ընդօրինակված է Ասողիկից երեք դար հետո և գերծ չէ նաև այլ փոփոխություններից:

Մաթևոսյանը միաժամանակ գտնում է, որ հնարավոր չէ «Քրոնիկոնից» ստանալ «Քննիկոն»: Նա գրում է. «Որպեսզի Քրոնիկոնը Քննիկոն դառնա, «քրանիկոն» բառի «րաւ» տառակապակցությունը պետք է «փոխվի» ն-ի, որ հնարավոր չէ»<sup>38</sup>: Բայց ձեռագրական աշխարհին քաջ ծանոթ իմ գործընկերոջը հայտնի է, որ գրիչները բառերն արտագրում են երբեմն աներևակայելի աղճատումներով, որոնց կողքին «Քրոնիկոն»—«Քննիկոն» անցումը անսպասելի չէ: Բավական է, որ «Քրոնիկոնը»<sup>39</sup> գրված լիներ երկու տառի («րո») սղմամբ՝ կատացվեր «քնիկոն», որն էլ իր հերթին հեշտությամբ կդառնար «Քննիկոն»: Մաթևոսյանն ինքը չի բացառում տառերի սղմամբ նոր բառեր ստանալու հնարավորությունը: Նա գրում է. «Քննիկոնն առաջացել է Քաննիկոն բառի առաջին երկու ձայնավորների սղմամբ»<sup>40</sup>:

Ինչպես նոր Հայկազյան բառարանում, այնպես էլ Հ. Աճառյանի Արմատական բառարանում և առհասարակ հայերենում «քանոնական», «քանոնիկոն» բառերը նշանակությունն այնպիսին է («ըստ ուղղութեան քանոնի»<sup>41</sup>, «քանոնով քաշված ուղիղ»<sup>42</sup>), որ չի համապատասխանում Գրիգոր Մագիստրոսի նամակում Շիրակացու ժողովածուի մասին հայտնված տեղեկություններին և չի կարող ընդունվել որպես որևէ գրքի խորագիր<sup>43</sup> (Շիրակացին հագիվ թև իր գիրքը համեմատեի քանոնով քաշված գծի հետ):

Այժմ տեսնենք, թե ինչպես է «քրոնիկոն» բառը դարձել «քննիկոն»: Նախասենք, որ Հ. Աճառյանը բառի աղճատումը դիտել է որպես նշյունական փոփոխման արդյունք. «Քրոնիկոն... յետին հնչումով՝ Քննիկոն»<sup>44</sup>: Մեր կարծիքով, սակայն, փոփոխությունն ընթացել է գրավոր ճանապարհով: Չեռագիր

37 Ա. Ս. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 69—70: Հմմտ. նաև՝ Ա. Ս. Մաթևոսյան, նորից Շիրակացու Քննիկոնի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, 2, էջ 224—225:

38 Անդ, էջ 77:

39 Ա. Մաթևոսյանը նշել է «Քրանիկոն» ձևը, սակայն ձեռագրերում ավելի հաճախ հանդիպում է «Քրոնիկոն» (Քրոնիկոն), որն ավելի հեշտությամբ կվերածվեր «Քննիկոնի»:

40 Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 77:

41 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 2, էջ 980:

42 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 552:

43 Անանիա Շիրակացու երկերի ժողովածուի («Քրոնիկոնի» կամ «Քննիկոնի») բովանդակության մանրամասնությունների, նրա նպատակի, գործածության, ինչպես նաև Գրիգոր Մագիստրոսի նամակի վերծանության մասին մեր կարծիքը տարրերվում է Յ. Մաթևոսյանի, Ա. Մաթևոսյանի և Գ. Պետրոսյանի կարծիքներից, որոնց մենք չենք անդրադառնում: Այսօրվա մեր նպատակը Շիրակացու գլուխգործոցի խորագիրը և «քննիկոն»—«քրոնիկոն» բառերի հարաբերությունը որոշելն է:

44 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 601:

ընդօրինակող գրիչները ճիշտ չեն ընդօրինակել «քրոնիկոն» բառը, որի հետևիվանքով առաջացել է «քննիկոնը»:

Դիմենք բառը պարունակող ամենահին գրավոր հուշարձանին՝ Թղթյա հաղարամյա ձեռագրին: Ճիշտ է, «քրոնիկոն» բառը հայերենում գործածվել է դեռևս V—VI դարերում, նվազագույն Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանությունում, սակայն մեզ չի հասել նշված դարերից ոչ մի ձեռագիր: Հետևաբար պետք է դիմենք 981 թ. ընդօրինակված Թղթյա ձեռագրին:

Այստեղ «քրոնիկոն» բառը գործածված ենք գտնում Շիրակացուն վերագրված ժամանակագրության «Կայսերաց գրքի» բաժնում. «Ըստ Հրէից՝ մինչև ի ծնունդն՝ ամբ S/ = 4000/, ըստ Շամրտացոց՝ S, ըստ Յունաց Եպիփանու Կիպրացոյ Պատմութեանն PՇ/ = 5500/, ըստ Քրիկոնի (sic!) բազմավէպ<sup>45</sup> (sic!) պատմութեանն՝ PՃՂԸ/ = 5198/»<sup>46</sup>: Ինչպես տեսնում ենք, «Քրոնիկոն» բառի ամենահին գրանցումը մեզ է հասել երկու տառի սղմամբ, «Քրիկոն» ձևով: Սղված են «ոն» տառերը: Միևնույն սղմանն է ենթարկվել նաև Սամվել Անեցու ժամանակագրության ընդօրինակություններից մեկը, որում կարդում ենք, «Անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի և ապա ըստ «քրիկոնին» գաւազանօր պրաւեսցութ... ի ներկայս»<sup>47</sup>: Բավական է, որ «ոն»-ի փոխարեն սղվելին «րո» տառերը, կատարվել «քնիկոն», իսկ սա, ինչպես ասվեց, հեշտությամբ կրվերածվել «քննիկոնի»: Որ դա այդպես է եղել, այդ մասին վկայում է Ուխտանեսի «Հայոց պատմության» մեզ հասած միակ ձեռագիրը, որում նույնությամբ կարդում ենք այն, ինչ քիչ առաջ բաղեցինք Թղթյա հնագույն ձեռագրից: Այսպես. «Ըստ Հրէիցն մինչ ի ծնունդն Քրիստոսի՝ շորս հազար ամբ, և ըստ Շամրտացոյն՝ շորս հազար, իսկ ըստ Յունաց Եպիփանու Կիպրացոյ Պատմութեանն հինգ հազար հինգ հարիւր ամ, և ըստ Քննիկոնին բազմավէպ պատմութեան հինգ հազար հարիւր իննսուն և երկու»<sup>48</sup>: Բառացի արտագրված է Թղթյա ձեռագրում գրանցված տեղեկությունը: Միակ տարբերությունն այն է, որ այս անգամ «Քրոնիկոնին» փոխարինում է «Քննիկոնը»: Եթե մտածենք, որ Ուխտանեսի հեղինակային օրինակում նույնպես եղել է «Քննիկոն», պետք է ընդունենք, որ անցումը «քրոնիկոնից» «քննիկոնին» տեղի է ունեցել դեռևս X դարում:

Սույն բառերի փոխարինարար գործածությունը հետագա դարերում դառնում է ավելի հաճախակի: Այդ մասին վկայող օրինակները բերելուց առաջ, քանի դեռ Ուխտանեսից չենք հեռացել, փորձենք գտնել «Քրոնիկոն (կամ «Քննիկոն») բազմավէպ պատմութիւնը», որը վկայակոչված է Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի երկում: «Բազմավէպ» բառը հայ մատենագրության մեջ բազմիցս օգտագործված է որևէ երկի բազմակողմանիությունը ցույց տալու համար: Բառն օգտագործել է նաև ինքը՝ Շիրակացին. «... ի բազմավէպ

<sup>45</sup> «Բազմավէպ»-ի փոխարեն գրված «Բազմավրէպ»-ը մատնում է գրչի անուշագրությունը, որի արդյունք է նաև «Քրոնիկոնին» փոխարինող «Քրիկոնը»:

<sup>46</sup> Մատենագրան, ձև. № 2679, ք. 50ա, տ. 18—19. Հմմտ. Շիրակացու մատենագրությունը, էջ 379:

<sup>47</sup> Սամուել Անեցի, Հավարձութիւնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 4:

<sup>48</sup> Ուխտանես, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վաղարշապատ, 1871, էջ 44: Հմմտ. նաև էջ 33: Հայկական մշտա աղբյուրները (Թղթյա հնագույն ձեռագիր, Հովհաննես Սարկավազ, Սամվել Անեցի և այլք) բոլորը նշում են PՃՂԸ (5198), որից երևում է, որ Ուխտանեսի ձեռագրում «Բ»-ն սխալմամբ կարգացվել է «Ք»:

պատմութենէն Պատգայ Աղեքսանդրացոյ»<sup>49</sup>: Գրիգոր Մաքիստրոսը հայտնում է, որ Շիրակացին «Քննիկոն» ժողովածուում նյութեր էր հավաքել «ի բազմավէպ»<sup>50</sup> մատենագրից Քաղղեացոց»: Միևնույն Մաքիստրոսը «Քննիկոնը» կոչում է նաև «Մեծ Քննիկոն», որը հիշեցնում է Ասողիկի «Հրաշագան Քննիկոնը»: Տեղեկութիւնների այս միջավայրում հավանականութիւնից շատ հետո չէր լինի այն ենթադրութիւնը, որ Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի երկում նշված վերահիշյալ «Քրոնիկոն (Քննիկոն) բազմավէպ պատմութիւն» արտահայտութիւնը նկատի է առնված միևնույն «Մեծ Քննիկոնը» կամ «Հրաշագան Քննիկոնը», որում Աղամից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած տարիների գումարը նշված է եղել ԲՃՂԸ (5198) տարի:

Մեր ենթադրութիւնը ավելի հավանական է դարձնում (եթե ոչ՝ հաստատում) Հովհաննէս Սարկավազը, որը տարիների նույն գումարը նշում է որոշակիորեն Անանիա Շիրակացու անունը տալով. «ՅԱղամայ մինչև հայ թուականն... ըստ Անանիայ Շիրակունուոյ՝ ԲՃՂԸ»<sup>51</sup>: Ճիշտ է, Սարկավազն այդ գումարը նշում է ոչ թե Աղամից մինչև Քրիստոսը, այլ Աղամից մինչև հայ թվականն ընկած ժամանակաշրջանի համար, բայց, ինչպէս ցույց կտանք ստորև, դա պարզապէս անուշադրութիւն հետեանք է:

Սարկավազն իր մեկ այլ աշխատութիւնում միևնույն գումարը նշում է այն իմաստով, ինչ Թղթյա հին ձեռագիրը և Ուխտանեսը: Նկատի ունենք «Պատճեն տումարի» խորագրով հրատարակված աշխատութիւնը: Հայտնի է, որ Սարկավազի անվամբ հրատարակված որոշ երկեր մեծ մասամբ արտադրված են Շիրակացոց: Այսպէս օրինակ, «Պատմութիւն սրբոյ զատիկին» խորագրի տակ հրատարակված նյութը գրեթե ամբողջութիւնով արտադրված է Շիրակացու «Ի զատիկն Տեառն» ճառից<sup>52</sup>: Մեզ թվում է, Սարկավազի անվամբ տպագրված «Պատճեն տումարում» հայտնվող տեղեկութիւնները նույնպէս Շիրակացունն են. «ՅԱղամայ ի ծնունդն Քրիստոսի ԲՃՂԸ ամ է»<sup>53</sup>: Նույնն է Սարկավազի նաև մեկ այլ էջում (127). «Աղամայ մինչև ի... ծնունդն Քրիստոսի... միանգամայն ԲՃՂԸ»: Այս գումարը վկայակոչված է նաև Սամվել Անեցու ժամանակագրութիւնում<sup>54</sup>:

Ինչ վերաբերում է Սարկավազի այն տվյալին, որի համաձայն Շիրակացին ԲՃՂԸ-ն նշել է որպէս Աղամից մինչև հայոց թվականն ընկած տարիների

49 Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 356:

50 Մատենագարան, ձեռ. № 3062, էջ 247բ—248ա: Տպագիր հրատարակութիւնում «բազմավէպ»-ի փոխարեն տպագրված է «բազմավէպ»:

51 Հովհաննէս Իմաստասեր, էջ 224:

52 Հմմտ. Հովհաննէս Իմաստասեր, էջ 270—275 և Շիրակացու մատենագրութիւնը, էջ 292—299:

53 Հովհաննէս Իմաստասեր, էջ 205:

54 Սամվել Անեցի, էջ 51: Այստեղ կարգում ենք. «Սկսեալ ի նախաստեղծ մարդոյն (Աղամից մինչև Քրիստոս—Գ. Ա.) յորս ժողովին ամբ ԲՃՂԸ. ըստ Եօթանասնիցն բարգմանութեան...»: Ընդգծվածից երևում է, որ Սամվել Անեցու ազդուրում «ԲՃՂԸ»-ն ներկայացված է եղել որպէս Աստվածաշնչի վրա հիմնված ստույգ հաշվարկում: Նույնն է նաև Գրիգոր Տաթևացու Հարցմանց գրքում. «Ըստ Եօթանասնիցն՝ ԲՃՂԸ ամ» (Գիրք Հարցմանց, էջ 451): Սամվել Անեցին մեկ այլ էջում (14—15) գրում է. «Դարձեալ ի նոյն գրոց՝ յԱրարածոց», նկատի ունենալով Աստվածաշունչը, սակայն, իրականում նա օգտվում է Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրութիւնից (տե՛ս Շիրակացու Մատենագրութիւնը, էջ 360):

գումար, ապա այդ սխալը բացահայտվում է Գրիգոր Տաթևացու հետևյալ վերլուծությամբ. «Ի վեղամայ մինչ ի ծնունդն Քրիստոսի է ըստ... Եօթանասնից ՐՃՂԸ ամ: Եւ ըստ Անանիա Շիրակացոյ՝ վեղամայ ի թուականն Հայոց են ամք ՐՔՃՀԶ (5976)»<sup>55</sup>: Ինչպես տեսնում ենք, Տաթևացին ՐՃՂԸ գումարը որոշակիորեն զանազանում է Շիրակացու նշած՝ Աղամից մինչև Հայոց թվականն ընկած տարիների գումարից: Տաթևացու նշած թվերը գծրախտարար աղճատված են, սակայն ներկա դեպքում կարևորն այն է, որ Տաթևացին Շիրակացու նշած Աղամից մինչև Հայոց թվականը տարբերում է Աղամից մինչև Քրիստոսը թվականից:

Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի գրքում հիշատակվող «բաղմավէպ պատմությունը» Ասողիկի և Մագիստրոսի հիշատակած «հրաշաղան Քրոնիկոնի» և «Մեծ Քննիկոնի» հետ նույնացնելուն նպաստում է նաև Գրիգոր Տղան: Նա Գրիգոր Տուտեորդուն ուղղած նամակում Անանիա Շիրակացու գիրքը նշում է «բաղմավէպ» բառով. «Իսկ առ այս (տոմարի և ժամանակագրության մասին - Գ. Ա.) Անանիա և Անդրևաս բաղմավէպ գրութեամբ ճառեցին»<sup>56</sup>: Ինչպես երևում է, Գրիգոր Տղայի օգտագործած ձեռագրում առկա է եղել նաև Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը, որի մասին է վկայում Գրիգորի խոսքի շարունակությունը. «Որպէս և պատմէ նոյն ինքն Անանիա յաղագս անբարեսէր ազգիս արանջմամբ, առ որս ոչ պատուի գիտութիւն»<sup>57</sup>: Այս խոսքն արձագանքն է Շիրակացու ինքնակենսագրության «ոչ սիրաւոյ իսկ է սզգ մեր իմաստից և գիտութեանց» մտքի<sup>58</sup>:

Վերադառնանք «քրոնիկոն» և «քննիկոն» բառերի նույնությունը հաստատող սկզբնաղբյուրներին: XII դարում ապրած Սամվել Անեցին գրում է. «Ըստ քրոնիկոնին գաւազանաւք զբաւեսցուք»<sup>59</sup>, իսկ XVIII դարում կազմված «Պատմագիրք Հայոց» կոչվող ցանկի հեղինակը Սամվելի խոսքը փոխում է և «քրոնիկոնի» փոխարեն գրում է «քննիկոն». «Սամուէլ երեց, որ արար զՖենիկոնն գաւազանազիրքն»<sup>60</sup>: Նույն Անեցին Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» կոչում է, բնականաբար, «Քրոնիկոն» և, հասկանալի է, որ այդպես պետք է կոչել նաև XIII դարի մեծ գիտնական Վանական վարդապետը, սակայն Վանականի «Հարցմունք և պատասխանիք» գիրքն ընդօրինակող գրիչները գրում են. «Չնկեղեցական պատմութիւնն և զՔննիկոնն նա (Եվսեբիոս Կեսարացին— Գ. Ա.) արար»<sup>61</sup>: XIII դարի մատենագիր վարդան Արևելցին Սամվել Անեցու «Քրոնիկոնը» կոչում է այնպես, ինչպես կոչել է հեղինակը, բայց Վարդանի «Տիեզերական պատմության» գրիչներից մեկը նրա նշած «Քրոնիկոնը» դարձյալ փոխում է «Քննիկոնի». «զգաւազանսն յօրինեաց Քննիկոնին Անեցին»<sup>62</sup>: Նույն դարում Գլաձորի համալսարանի տնօրեն Եսայի Նչեցին Կյուրեղ Աղեք-

55 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 451:

56 «Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1838, էջ 23: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 3062, էջ 61ր:

57 Անգ:

58 Շիրակացու մատենագրությունը, էջ 208—209:

59 Սամվել Անեցի, էջ 4:

60 Մատենադարան, ձեռ. № 2220, էջ 292, № 2271, էջ 214: Հմմտ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 1, էջ 55 (առաջարան):

61 Մատենադարան, ձեռ. № 3074, էջ 98ա, ձ. № 1254, էջ 40ր և այլ ձեռագրեր:

62 Վարդան Արևելցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:

սանդրացուն վկայակոչելիս գրում է «Քրոնիկոն», նկատի ունենալով Կյուրեղի վկայակոչած Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի առաջին գիրքը («Կորովամիտն Կիւրեղ Աղեքսանդրացի գրէ այսպէս. եթէ՛ Բաղում անգամ յուզեցի ի Քրոնիկոնն»)՝<sup>63</sup>, իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5254 ձեռագրի գրիչը Կյուրեղ Աղեքսանդրացու վկայակոչած Եվսեբիոսի «Քրոնիկոնը» դարձնում է «Քննիկոն». «Իսկ ես յառաջին Քննիկոնէն խնդրել գտի ոչ 1/30/ամ յորելենին, այլ 6/5/ ամ գերութեանն Յովակիմայ»<sup>64</sup>: Բաղեշի սուրբ Հովհաննես վանքում ընդօրինակված Շիրակացու երկը կոչվել է «Քրոնիկոն» («Արգ գրեցաւ Քրոնիկոնս»<sup>65</sup>), իսկ նույն վանքի անունը կրող մեկ այլ ձեռագիր (կամ միևնույն ձեռագիրը) Վարդան Բաղիշեցու ցուցակում գրանցված է «Քննիկոն» անվամբ. «Ոսկով բառգիրքն է սուրբ Հովհաննէսին, որ է Անանիա Շիրակացույն, որ է Քննիկոն»<sup>66</sup>:

Այսպես կարելի է անընդհատ շարունակել թվարկումը «քրոնիկոն» և «քննիկոն» բառերի նույնությունը ցույց տվող հուշարձանների, որոնք մի ավելորդ անգամ գալիս են ապացուցելու, որ հայերենում «քննիկոն» բառը չունի ոչ մի այլ նշանակություն, բան այն, ինչ գրանցել են Մխիթարյան բաղամահմուտ գիտնականները նոր Հայկազյան բառարանում<sup>67</sup>: Այնպես որ պետք է առանց վարանելու ընդունել, որ «քննիկոնը» նույն «քրոնիկոնն» է և շարժանալ, որ այդպես են ընդունել ոչ միայն բառարանագիրները, այլև բոլոր այն գիտնականները, ովքեր երբևէ առիթ են ունեցել զբաղվելու այդ բառով և քաջ ծանոթ են եղել բառի ամենաբազմազան իմաստներին:

Վ. Լանգլուայի օգտագործած ձեռագրում Մազիստրոսի նամակի «Քննիկոնի» փոխարեն գրված է «Քննոկոն»<sup>68</sup>, որից երևում է, որ գրիչը մտովի հիշել է «Քրոնիկոն» բառը, կրկնելով նրա «ո» տառը: Հակառակ մտածողությամբ է առաջնորդվել մեր Մատենադարանի № 5566 ձեռագրի գրիչը, որը գրել է «Քրի-նիկոն» (էջ 66բ), որում կրկնված է «Քննիկոնի» «ի»-ն: Ձեռագրական աշխարհում այսպես աննկատ ձուլվել և միահյուսվել են «քրոնիկոնն» ու «քննիկոնը»:

Մեր հիշատակած մատենագիրների հաղորդած տեղեկություններից երեկում է, որ «քրոնիկոն» կամ «քննիկոն» ասելով նրանք հասկացել են մերթ

63 Մատենադարան, ձեռ. № 5566, էջ 8ա: Հմմտ. ձ. № 1241, էջ 7բ:

64 Մատենադարան, ձեռ. № 5254, էջ 59ա: Հմմտ. Եվսեբիոս Կեսարացի, Փամանակականը երկմասնեայ, մասն Ա, Վենետիկ, 1318, էջ 187. «Ոչ յաւերածոյ տաճարին համարեալ զգերութեանն ժամանակս (այսինքն՝ «ոչ 1=30 ամ յորելենին»—Գ. Ա), այլ ևս՝ ի վերուստ, յերկրորդ (Կյուրեղ Աղեքսանդրացու օգտագործած Քրոնիկոնի ձեռագրում եղել է «ի հինգերորդ»—Գ. Ա.) ամէն Յովակիմայ»:

65 Տե՛ս Ա. Մարտոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 7, էջ 74):

66 Տե՛ս վերը:

67 Հայկազյան բառարանի գիտնական հեղինակները, հենվելով հայ դարավոր մատենագրության փորձի վրա, «քննիկոն» բառը նույնացրել են «քրոնիկոնի» հետ և բառարանում գրանցել են այդ իմաստով. «Քննիկոն. փոխանակ գրելոյ «Քրոնիկոն» (էջ 1009):

68 Langlois V., նշվ. աշխ., էջ 37: Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող ձեռագրում՝ «Քննոկոն» (տե՛ս Տաշյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 153): Անտոնյան մատենադարանի ձեռագրում՝ «Քննոկոն» («Հանգիս ամսօրյա», 1909, էջ 110): Հայտնի են նույն ընթերցվածքն ունեցող նաև այլ ձեռագրեր:

Շիրակացու երկերի ժողովածուն, մերթ ժողովածուի զլիսավոր երկը, մերթ՝ առհասարակ այն, ինչ գրանցված է բառարաններում այդ բառերի դիմաց: Սակայն մատենագիրներից ոչ ոք իր աղբյուրը նշելիս չի բերում որևէ այնպիսի տեղեկություն, որը մենք այսօր գտնեինք Շիրակացու մեզ հասած երկերում: Այս փաստը միանալով Հորդանանն անցնելու և Եգիպտոսից դուրս գալու մասին Շիրակացու և Ասողիկի հաղորդած տեղեկություններին, ցույց է տալիս, որ մատենագիրների օգտագործած աղբյուրները մեզ չեն հասել: Մեր սույն հոդվածի զլիսավոր նպատակը հենց այդ փաստի բացահայտումն էր. մի փաստ, որով հերքվում են Թղթյա ձեռագրում բնօրինակված ժամանակագրությունը Շիրակացու Զատիկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնի» (Քրոնիկոնի) հետ նույնացնելու նպատակով գիտական շրջանառության մեջ դրված փաստարկներն ու տեսակետները:

\* \* \*

Նույնացման հերքումը, սակայն, դեռևս չի նշանակում, թե ժամանակագրության հեղինակը Շիրակացին չէ: Տեսականորեն հնարավոր է, որ հայ մեծ հանրագետը գրած լիներ և՛ Զատիկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնը», և՛ Թղթյա ձեռագրում պահպանված ժամանակագրությունը: Արդեն ասվեց, որ մասնագետների մեծ մասն այդ ժամանակագրությունը վերագրել է Շիրակացուն: Բացառություն են կազմում Գ. Խալաթյանցը, Բ. Սարգիսյանը, Յ. Մարկվարտը և Ն. Բարթիկյանը: Սրանցից առաջին երեքը ժամանակագրության երկրորդ կեսը՝ «Կայսերաց գիրքը» անչափել են նախորդ հատվածներից և վերագրել Թղթյա ձեռագրի պատվիրատու Դավիթ քահանային (Գ. Խալաթյանց)<sup>69</sup>, Փիլոսոֆներին կամ «մի այլ միաբանաց ասորու մը» (Բ. Սարգիսյան)<sup>70</sup>, Շիրակացուն (Յ. Մարկվարտ)<sup>71</sup>, իսկ Ն. Բարթիկյանն ամբողջ ժամանակագրության հեղինակ է համարել Փիլոն Տիրակացուն<sup>72</sup>:

Այս վերջին ենթադրության համար հիմք է ծառայել № 5254 ձեռագրում համառոտագրված միևնույն ժամանակագրության «Խօսք Փիլոնի» խորագիրը: Ն. Ակինյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Աբրահամյանը, Ն. Անասյանը և ուրիշներ № 5254 ձեռագիրն ուսումնասիրելիս Փիլոնի անունը նկատելով ու նշելով հանդերձ կարևորություն չեն տվել դրան և շարունակել են ժամանակագրությունը վերագրել Շիրակացուն: Իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի հեղինակները Փիլոնի անունն առհասարակ չեն նշել և ժամանակագրությունը գրանցել են որպես «Ան. Շիրակացու ժամանակական կանոնը»<sup>73</sup>: Նրանք ձեռագիրն ուսումնասիրելիս տեսել են, որ «Խալաթ Փիլոնի» ծանոթագրությունը ժամանակագրության վերնագիրը չէ, այլ այնպիսի մի ծանոթագրություն, ինչպիսին է «Մովսէսի Խորենացույ և Անդրէասի» ծանո-

<sup>69</sup> Гр. Халагянц, Армянский эпос в Истории Моисея Хоренского, ч. 1, М., 1903, с. 54.

<sup>70</sup> «Տուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ», հ. Բ, էջ 444:

<sup>71</sup> Hippolytus Werke, էջ 413—435.

<sup>72</sup> Հրաչ Բարթիկյան, Անանիա Շիրակացուն վերագրվող «ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը, «Բաներ Մատենադարանի», № 8, 1967, էջ 72—76:

<sup>73</sup> «Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Բ, կազմեցին Ծ. Եզանյան, Ա. Զելիսյան, Փ. Անթապյան: Խմբագրությունը Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, էջ 68:



Քաղաքացիները Քղթյա ձեռագրի ժամանակագրության սկզբում<sup>74</sup>: Դրանք վերաբերում են ժամանակագրության միայն մեկական փոքրիկ հատվածների և իրենց նման «վերնագրեր» ունեն ժամանակագրության նաև այլ հատվածներում: № 5254 ձեռագրում, օրինակ, կա «Խօսք Փիլոնի» նման մեկ այլ վերնագիր. «Արիղենոս պատմագրի» (էջ 196 ա):

Քղթյա ձեռագրի համար նախադադափար հանդիսացած օրինակում ժամանակագրության սկիզբը պակաս է եղել, և ժողովածուն կազմողն ինքն է լրացրել պակասը<sup>75</sup>, քաղելով Խորենացուց և Անդրեասից: Այս դեպքում հայոց Պատմահոր և Անդրեասի անունները պարունակող ծանոթագրության ներկայությունը Քղթյա ձեռագրում հասկանալի է: Այլ է վիճակը № 5254 ձեռագրում: Այստեղ Փիլոնի անվան փոխարեն պետք է լիներ Հիպոդիտոսի անունը, որովհետև ժամանակագրությունն սկսվում է Հիպոդիտոսի երկի թարգմանությամբ:

Եթե ժամանակագրությունը վերաբերի ավելի հին ժամանակների՝ կարելի է լինի որ առանց վարանելու ընդունել, որ «Խօսք Փիլոնի» վերնագրում ակնարկված է հանրահայտ Փիլոն Երրայեցին, մանավանդ, որ № 5254 ձեռագրում, ժամանակագրության մեկ այլ հատվածում Փիլոնը Հովսեպոս Փլավիոս պատմիչի հետ միասին հիշատակվում է հենց որպես ժամանակագիր. «Յովսէպոս պատմագիր, Փիլոն ժամանակագիր» (էջ 200 ա)<sup>76</sup>: Ձեռագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերնագրում, համեմատելիս, ակնարկված է Փիլոն Երրայեցին: Քիչ առաջ ասվեց, որ ժամանակագրության մեջ կա «Խօսք Փիլոնի» վերնագրի նման ևս մեկ վերնագիր. «Արիղենոս պատմագրի»: Այս վերնագիրը դեռը պարզապես սխալվել է, կարծելով, թե ժամանակագրության տվյալ հատվածը Արիղենոսինն է: Ծիշտ այդպես էլ նա սխալվել է «Խօսք Փիլոնի» վերնագիրը դնելիս: Այդ վերնագրի տակ գետեղված հատվածը, ինչպես ասվեց, Հիպոդիտոսի ժամանակագրության հատվածն է:

Իսկ որ «Խօսք Փիլոնի» խորագիրը վերաբերում է Փիլոն Երրայեցուն, այդ մասին է վկայում նաև այն, որ Փիլոնի անունը նշված է առանց մականվան: Այդպես են նշվում միայն նշանավոր մատենագիրները, և Փիլոնը մեր ձեռագրերում ամենուրեք նշվում է այդպես: Ինչ վերաբերում է Տիրակացուն, ապա նա մականվամբ պետք է հանդես գար ամենից առաջ հենց № 5254 ձեռագրում, տարբերվելու համար Հովսեպոսի հետ նշված հանրահայտ Փիլոնից:

Փիլոն Տիրակացու մասին հայտնող առաջին պատմիչը Ասողիկն է, որը Տիրակացուն հիշատակում է այնպիսի մի տեղում, որն ինքնըստինքյան պահանջում է հիշատակել ժամանակագրական աշխատությունների հեղինակների: Այսքան հարմար մի տեղում, սակայն, նա նշում է Անանիա Շիրակացու «Քննիկոնը», իսկ Տիրակացու անվամբ դրանցում է միայն այն, ինչ իսկապես նրա գրչին է պատկանում՝ Սոկրատ Սրուստիկոսի Եկեղեցական պատմության թարգմանությունը. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տամար անշարժ բոտ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացույ կար-

<sup>74</sup> Ձեռագրացուցակի հրատարակությունից հետո մեր օրերում լույս տեսնող որոշ աշխատություններում ժամանակագրությունը դեռևս վերագրվում է Փիլոնին:

<sup>75</sup> Շիրակացու մատենագրությունը, էջ 357:

<sup>76</sup> Hippolytus Werke, էջ 396-397:

<sup>77</sup> Հովանենի Սարկավազը (էջ 241) նույնպես Փիլոնին հիշում է Հովսեպոսի հետ միասին. «Փիլոն և Յովսէպոս և Մովսէս»:

գել զՔննիկոնն հրաշագան... ի սորա տուրս էր և Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ Պատմութիւնն թարգմանեաց ի հայ լեզու»<sup>77</sup>: Պարզ երևում է, որ Տիրակացին միայն Սոկրատի թարգմանիչն է, և՛ ուրիշ ոչինչ:

Միևնույն տեղեկությունը գտնում ենք նաև վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» աշխատությունում: Այստեղ հարց է տրվում. «Ո՞վ է Փոքր Սոկրատն»<sup>78</sup>: Պատասխանվում է. «Փիլոն ասեն Շիրակացի»<sup>79</sup>: Սույն տեղեկությունն ուշագրավ է ոչ միայն նրանով, որ Տիրակացին դարձյալ հանդես է գալիս միայն որպես Սոկրատի թարգմանիչ, այլև՝ առավել ևս նրանով, որ Փիլոնը կոչված է ոչ թե Տիրակացի, այլ Շիրակացի: Ըստ որում՝ վանական Վարդապետը բացահայտ հայտնում է, որ Տիրակացին՝ էր «ի Շիրակ գեղջէ»<sup>80</sup> և հենց դրա համար էլ կոչվում էր Շիրակացի. «վասն այն Շիրակացի են ասել»<sup>81</sup>: Նույնիսկ այն ձեռագրերում, որոնցում Փիլոնը կոչված է ոչ թե Շիրակացի, այլ Տիրակացի, դարձյալ ծննդավայրը ցույց է տրվում Շիրակը և կրկին հայտնվում է, որ Շիրակում ծնված լինելու պատճառով է նա կոչված Շիրակացի. «Հարցումն. Ով է Փոքր Սոկրատն: Պատասխանի. Փիլոն ասեն Տրակացի, ի Շիրակ գեղջէ. վասն այն Շիրակացի են յասել»<sup>82</sup>: Սույն հիշատակությունը պարունակող ձեռագիրն ընդօրինակված է XIII դարում, այսինքն ժամանակակից է վանական Վարդապետին<sup>83</sup>:

Վանականի հաղորդումը կարևորություն է ստանում նաև այն պատճառով, որ Հաչաստանում Տիրակ անունով վայր հայտնի չէ: Գ. Տեր-Մկրտչյանը մեր Մատենադարանի մի ձեռագրում նշել է այդպիսի մի անուն՝ Շիրակում<sup>84</sup>: Բայց մեզ հայտնի երկու այլ ձեռագրերում (№ 7050, էջ 174 և № 10236, էջ 131ա) Գ. Տեր-Մկրտչյանի նշած Տիրակը հանդիպում է «տիրակաց» և «տիրակացն» ձևերով. «զբաղաբն զԱնի հանդերձ նահանգաւ, որք Շիրակա և տիրակաց և պահակաց (կամ «պաղակայ», «պաղականացն»)»: Արիստակես Լաւարիվերցին, Մատթեոս Ուռհայեցին, Հովհաննես Կոզեռնը, Վարդան Արևելցին նույնպես խոսում են միևնույն նյութի մասին, բայց Տիրակ անուն չեն նշում: Այս պայմաններում՝ վանականի հաղորդումը Փիլոնի շիրակացի լինելու և Շիրակացի կոչվելու մասին կարող է նույնիսկ հուշել այն միտքը, որ Ասողիկի գրքում գործ ունենք երկաթագիր Ծ-ի և Տ-ի շփոթի հետևանքով առաջացած Տիրակացի անվան հետ, որի փոխարեն սկզբում եղել է Շիրակացի: Ասողիկի գրելաձևից էլ այնպես է երևում, որ նա Փիլոնին հիշել է միայն այն բանից հետո, երբ խոսել է մեկ ուրիշ շիրակացու՝ Անանիայի մասին: Այս Անանիային հիշատակելուց հետո նա մտաբերել է Շիրակ գյուղում ծնված

77 Ասողիկ, էջ 99:

78 Մատենադարան, ձեռ. № 1254, էջ 48բ:

79 Անդ:

80 Անդ:

81 Անդ:

82 Անդ, ձեռ. № 5611, էջ 96ա—96բ:

83 Անկախ ձեռագրերի ընդօրինակման ժամանակից՝ վանականի երկր պարունակող մեզ հայտնի բոլոր ձեռագրերում (տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1947, էջ 440) Տիրակացու մասին հայտնվում է «ի Շիրակ գեղջէ, վասն այն Շիրակացի են ասել»:

84 Տե՛ս «Սոկրատայ Աբրահամիկոսի Եկեղեցական պատմութիւն». Թարգմանեաց Փիլոն Տիրակացի, Վաղարշապատ, 1897, Առաջարան, էջ 82:

(«ի Շիրակի գեղջէ») Փիլոնին և գրել. «ի սորա աուրս էր և Փիլոն Շիրակացին»<sup>85</sup>:

Վերադառնանք N° 5254 ձեռագրին: 1280 թ. արտագրութիւնն հանդիսացող այս ժողովածուում պահպանված ժամանակագրութիւնը բանաբաղված է ոչ թե անմիջապէս Թղթյա ձեռագրից, այլ մեկ այլ գաղափար օրինակից: Դա երևում է երկու ձեռագրերի ընթերցվածքների տարբերութիւններից: Թղթյա ձեռագրի ժամանակագրութիւնն անհամեմատ ավելի արժեքավոր է իր լիակատար բնագրով, իսկ N° 5254 ձեռագրում գտնվում է խիստ համառոտագրված մի ժամանակագրութիւն, որի հեղինակը բնագիրը կրճատելուց բացի երբեմն իր բառերով է վերապատմում նյութը: Նրան ավելի շատ հետաքրքրել են Հիպոդիտոսի ժամանակագրութիւնի աստվածաշնչային անձնանունները, և նա կրճատել է աշխարհագրական տեղանունների մեծ մասը: Հիպոդիտոսի հատվածի սահմաններից դուրս նույնպէս նա կատարել է կրճատումներ և հավելումներ, որոնցում գտնում ենք բաղվածքներ նույնիսկ XIII դարի մատենագիր Վանական Վարդապետից<sup>86</sup>: Նրա օգտագործած օրինակը երբեմն ունեցել է Թղթյա ձեռագրում պակասող տեղեկութիւններ Քսերքսեսի, Դարեհի, Պտղոմեոս Հայրասերի, Արկադեոսի և այլ պատմական անձանց և անցքերի մասին: Սրանք պետք է օգտագործել Թղթյա ձեռագրի ժամանակագրութիւնի ասպագա հրատարակութիւնի ժամանակ<sup>87</sup>:

Տարբերութիւններով հանդերձ N° 5254 ձեռագրի համառոտ ժամանակագրութիւնն ունի հիմնականում նույն կառուցվածքը (չհաշված «Արիդենոսի պատմագրի» և «Թագաւորք Արշակունիք թագաւորեցին Հայաստան աշխարհի» վերնագրերը կրող հատվածները, որոնք Թղթյա ձեռագրում բացակայում են), ինչ որ Թղթյա ձեռագրերը: Սրանից երևում է, որ նման կառուցվածք ունեցող մի ժամանակագրական ժողովածու գոյութիւն է ունեցել արդէն մինչև Թղթյա ձեռագիրը (981 թ.): Այդ ժողովածուի մի օրինակ գտնվել է Թղթյա ձեռագրի, մեկ այլ օրինակ՝ N° 5254 ձեռագրի գրիչների ձեռքին: Ն. Ակիւնյանը կարծիք է հայտնել, թե ժողովածուն կազմողը Թղթյա ձեռագրի պատվիրատու և ստացող Գավիթ բահանան է<sup>88</sup>, սակայն արդէն ասվեց, որ նախքան Գավիթ բահանան գոյութիւն է ունեցել նման մի ժողովածու, որը N° 5254 ձեռագրի գրիչը համառոտագրել է, կրճատելով բազմաթիվ հատվածներ, որոնց շար-

<sup>85</sup> Հ. Աճառյանը, նկատի ունենալով Ալիշանին և Զարրհանայանին, գրում է. «Ոմանք անհանում են Շիրակացի, որ սխալ է» (Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 206): Մենք մեծանուն հայագետին չենք առարկում, այլ պարզապէս ուշագրութիւն ենք հրապարակում N° 1254 ձեռագրի վրա, որում Տիրակացու փոխարեն գրված է Շիրակացի Այս նորահայտ փաստը վերը մեր ներկայացրած միջավայրում ձեռք է բերում մասնագետներին ներկայանալու և բնարկման ենթարկվելու իրավունքը:

<sup>86</sup> «Իսկ որ ի սոցանէ զգոյրութիւն և գրով վարին, առաջին երբայնցիք: Իսկ Վիրք և Աղուանք ոչ կատարեալ գիր ունին, այլ խզեալ ի Հայոցն (խազել = գծել են ըստ հայոց այբուբենի — Գ. Ա.) սոսիւ: Ասորին և Իսմայիլացին յերբայնցոյն առին» (էջ 192ա): Այլ ձեռագրերում «խզեալի» փոխարեն՝ «խելալ», «առեալ»:

<sup>87</sup> Զեռագիրը կարող է օգտագործվել նաև նվազիտս Կեսարացու «Քրոնիկոնում» մի երկու բառ լրացնելու կամ ծանոթագրելու համար: Նկատի ունենք «Արիդենոսի պատմագրի» խորագրի տակ իրականում նվազիտսից (հ. 1, էջ 40 և 44) բաղված տեղեկութիւնները:

<sup>88</sup> Ն. Ակիւնյան, Գավիթ բահանայի խմբագրած ժամանակագրութիւնը, «Հանդես ամսօրյա», 1957, էջ 183:

քում են նաև Քղթյա ձեռագրում «Եւսերի ժամանակագրի», «Եպիփանոս» և «Պարսից թագաւորքն» խորագրերի տակ գետեղված հատվածները<sup>89</sup>:

Յ. Մարկվարտն արդեն հայտնել է<sup>90</sup>, որ Գավիթ քահանայի ներմուծում պետք է համարել միայն «Մովսէսի Խորենացույ և Անդրեասի» խորագրի տակ գետեղված հատվածը Քղթյա ձեռագրում<sup>91</sup>: Իսկ դրան հաջորդող մասը մինչև «Թագաւորք Պարսիկք Սասանականք» ցանկը նա դիտում է որպես Գավիթ քահանայի կողմից Անդրեասին վերագրված մաս<sup>92</sup> և հիշեցնում է, որ Բ. Մարգիսյանը ժամանակին նկատել է այդ մասի ազգակցութունը «Մովսէսի և Յրիքի հրատարակած Liber generationis 1-ինի հետ»<sup>93</sup>: Ն. Ակինյանը նույնպես գրում է. «Անգրէաս հոս կնույնանա Հիպոդիտոսի կամ «Ազգաց գրքի» Liber generationis (hominum) հեղինակին հետ»<sup>94</sup>: Ա. Մաթևոսյանը Քղթյա ձեռագրի ամբողջ ժամանակագրութունը (բացառած «Կայսերաց գիրքը») համարում է «Անդրեասի ժամանակագրութուն»<sup>95</sup>:

Ն. Ակինյանին հայտնի են եղել Հիպոդիտոսի ժամանակագրության հետ առնչվող երեք սկզբնաղբյուր՝ Քղթյա ձեռագիրը, № 5254 ձեռագիրը և Զմմառի մատենադարանի № 204 ձեռագիրը, որը Ակինյանի օրոք գրանցված էր 83-րդ համարի տակ: Դեռևս 1953-ին նա գրել է. «Հայերեն ձեռագիր մը (նկատի ունի № 5254-ը—Գ. Ա.), որ ասկէ (Հիպոդիտոսի ժամանակագրութունից—Գ. Ա.) քաղվածքներ կսլարունակե, խորագիր կկրե. «Բանք Փիլոնի» («Խօսք Փիլոնի»— Գ. Ա.)... Հայերեն թարգմանութունը կատարված է Ե դարու առաջին կեսին<sup>96</sup>, հույն բնագրեն: Պահված է մեզի միայն Ա մասը Զմմառի վանքին Բ. 83 ձեռագրին մեջ, օրինակած ժԲ դարուն... Հիպոդիտոսի գործին նոր հրատարակութուն մը պատրաստած եմ, հիմ առած Զմմառի Բ. 83 և էջմիածնի Բ. 2679»<sup>97</sup>:

Զմմառի ձեռագրից որոշ հատվածներ արդեն տպագրված են<sup>98</sup>: Ձեռագիրը գրանցված է որպես Շիրակացու Աշխարհացույց, բայց իրականում սկսվում է Հիպոդիտոսի ժամանակագրությամբ, որի միայն սկիզբն է պահպանվել: Ձեռագրից թղթեր ընկած լինելու պատճառով ժամանակագրութունը խառնվել

89 Տե՛ս Շիրակացու մատենագրութունը, էջ 376—378:

90 Hippolytus-Werke, էջ 396—397:

91 Ձեռ. № 2679, էջ 29ա-ր: Հմմտ. Շիրակացու մատենագրութունը, էջ 357—358: Մեր կարծիքով, ներմուծում պետք է համարել մինչև 359-րդ էջի 17-րդ տողը ներառյալ: Մարկվարտը ցույց է տվել Անդրեասի «բանաձևը» («եկաց ամս... մինչև...») այդ և նախորդ էջերում:

92 Hippolytus Werke, էջ 397:

93 Անդ:

94 Ն. Ակինյան, Գավիթ քահանայի խմբագրած ժամանակագրութունը, «Հ. ամս.», 1957, էջ 184:

95 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 9, էջ 79:

96 Ն. Ակինյանի ուշադրութունից վրիպել է Ա. Բաուերի և Յ. Մարկվարտի բացահայտած այն իրողութունը, որ հայերեն թարգմանութունը կատարված է VI դարում ստեղծված խմբագրութունից («հետևաբար՝ չէր կարող «Ե դարու առաջին կեսին» թարգմանված լինել):

97 «Հանդես ամսօրյա», 1953, էջ 163:

Ակինյանի անախյ գործերի մեջ հիշատակվում է «Ժամանակագրութիւնն Հիպոդիտեայ Ե դարու թարգմանութեամբ. ժԲ դարու ձեռագրէ մը» («Հանդես ամսօրյա», 1954, էջ 414): Ինչպես երևում է, սույն աշխատութունը հրատարակության պատրաստ չի եղել:

98 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեսրոպ Վարդապետ Քելեշեան, Վիեննա, 1964, էջ 487—488:

է Աշխարհացույցի (որի սկիզբը մնացել է կորած թղթի վրա) հետ, այսպես. «Յարեթ գեղովն արևմտից և զհիւսիսիոյ<sup>99</sup> յոլով յերկիրն ի հիւսիսային կողմանն ՇԹ Ե—երեակֆ Եւ անդեն զԹուլիմ կղզի»<sup>100</sup>: Մեր ընդգծածով սկսվում է Աշխարհացույցը, իսկ նրան նախորդող ընդգծվածը պատկանում է Շիրակացուն վերագրված ժամանակագրությանը:

Զմմառի ձեռագրում գտնում ենք Հիպոդիտոսի ժամանակագրության այն սկիզբը, որը Թղթյա ձեռագրում բացակայում է և փոխարինված է Խորենացուց և Անդրեասից բաղված հատվածով: Այս ձեռագրի միջոցով միաժամանակ պարզվում է, որ Հիպոդիտոսի ժամանակագրությունը Հայաստանում թարգմանված է եղել լրիվ, սկսած հեղինակի խոստաբանությունից: Սակայն համեմատությունը հունարեն բնագրի հետ ցույց է տալիս, որ Զմմառի օրինակն աղճատված է, նրանում կան հունարեն բնագրից շեղվող տեղեր:

Բայց որ նախնական թարգմանությունում այդ շեղումները չեն եղել՝ երևում է, օրինակ, մեր Մատենադարանի № 5443 ձեռագրից<sup>101</sup>: Այստեղ կարդում ենք. «Եւ յետ ժամի ծնրնդեան Սեմայ եկն ջրհեղեղն ի ԶԸ-երորդի կենաց Նոյի. և առնու յԱղամայ մինչ ջրհեղեղն ազգ ժամֆ ՍՄԽԹ... առնի ի ջրհեղեղէն ազգ Եւ ամֆ ՇԻԵ և յԱղամայ ազգ ՓԵ, ամֆ ՍՉԿԵ: Բաթինք Երկրի յԳ որդւոցն Նոյի յեր ջրհեղեղին»<sup>102</sup> և այլն: Մեր ընդգծած տողերին համապատասխանող տողեր հունարեն բնագրում կան, սակայն Զմմառի ձեռագիրը չունի: Կնշանակի № 5443 ձեռագրի գրիչն օգտվել է ավելի ընտիր մի օրինակից: Այսպիսի մի օրինակից է ժամանակին օգտված եղել նաև Թղթյա ձեռագրում բաղվածաբար օգտագործված Անդրեասը, որը նույնպես մեր ընդգծած տեղերն ունի<sup>103</sup>: Մովսես Կաղանկատվացին<sup>104</sup> և № 5254 ձեռագրի գրիչը<sup>105</sup> նույնպես ծանոթ են եղել Զմմառի ձեռագրից ավելի լավ մի ընդօրինակություն պարունակած ձեռագրի, որից բաղել են «Եւ լինին յԱղամայ մինչև ցջրհեղեղն ամֆ ՍՄԽԹ և ազգք ժ» տեղեկությունը:

Չորս տարրեր օրինակների<sup>106</sup> համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլորում օգտագործված է Հիպոդիտոսի ժամանակագրության միևնույն թարգմանությունը, որը ձեռագրերում կրել է փոփոխություններ: Սակայն Ա. Մաթևոսյանը ենթադրում է, որ Թղթյա ձեռագրում պահպանված Հիպոդիտոսյան ժամանակագրության հեղինակն Անդրեասն է («Շիրակացուն վերագրվող Պատմության հեղինակ Անդրեասը հույն է») <sup>107</sup>: Այս Անդրեասի երկում Հիպոդիտոսի ժամանակագրությանը համապատասխանող բնագիրը, Մաթևոսյանի կարծիքով, տարբերվում է Զմմառի № 204 ձեռագրում առկա

99 Զմմա. Շիրակացու մատենագրությունը, էջ 365, տ. 3:

100 Զմմա. անդ, էջ 337, տ. 4—5:

101 Սույն ձեռագրում «նւանրի ի ժամանական կանովնացն» խորագրի տակ Ա. Մաթևոսյանը հայանարեղել է Հիպոդիտոսի թարգմանության մի նոր ընդօրինակություն (տե՛ս 2002 ԳԱ «Լրաբեր», 1979, էջ 79):

102 ԶԵՈ. № 5443, էջ 395ա: Զմմա. Զմմառի ձեռագրաց ցուցակ, էջ 487:

103 Զմմա. Շիրակացու մատենագրությունը, էջ 359:

104 Մովսես Կաղանկատվացի, էջ 3:

105 ԶԵՈ. № 5254, էջ 190բ:

106 Թղթյա ձեռագիր, Զմմառի ձեռագիր № 204, Մաշտոցի անվ. Մատենադարանի № 5254 և 5443 ձեռագրերը:

107 2002 ԳԱ «Լրաբեր», 1979, № 9, էջ 79:

Հիպոդիտոսից, որի թարգմանիչն Անանիա Շիրակացին է: Ըստ որում՝ Շիրակացին, ըստ Մաթևոսյանի, Հիպոդիտոսի ժամանակագրությունը թարգմանել է այնքան, որքան անհրաժեշտ է եղել «Քննիկոնի տարբեր բաժիններին»<sup>108</sup>:

Մեր կատարած համեմատությունը, սակայն, ինչպես ասվեց, ցույց է տալիս, որ միջնադարյան հայ մատենագրության մեջ գոյություն է ունեցել Հիպոդիտոսի երկի միայն մեկ թարգմանություն, որից և սերում են բոլոր շորս օրինակները (նրանց թվում նաև՝ Զմմատի № 204 ձևագիրը): Այդ թարգմանության հեղինակը ամենայն հավանականությամբ Անանիա Շիրակացին է, որը Հիպոդիտոսին թարգմանել է լրիվ (և ոչ թե մասնակի՝ «Քննիկոնին» հարմարեցնելու համար): Ինչ վերաբերում է շորս օրինակներում հանդիպող տարբերություններին, ապա այդ տեսակետից ուշագրավ է № 5443 ձևագրում պահպանված մի հինգերորդ օրինակ: Այստեղ միմյանցից ընդամենը տաս թերթ հեռավորության վրա ընդօրինակված են Թղթյա ձևագրի ժամանակագրությունում հիշատակվող «գետք մեծամեծք և անուանիք են քառասուն» ցանկերը<sup>109</sup>: Այս երկու ցանկերի համեմատությունը նույնպես բացահայտում է զանազան տարբերություններ, բայց կասկած չի կարող լինել այն մասին, որ երկրորդ ցանկը ծագում է իրենից տաս էջ առաջ ընդօրինակված՝ Հիպոդիտոսի ժամանակագրությունից:

Այժմ համեմատենք Թղթյա ձևագրից և Զմմատի № 204 ձևագրից մեկական հատված, ցույց տալու համար, որ երկուսն էլ պատկանում են Հիպոդիտոսի միակ թարգմանությանը.

Թղթյա ձևագիր (981 թ.)

Որդիք Յարեթի, երրորդի որդայն  
նոյի՝ Գոմեր, և ի նմանէ  
Գամիրք... Ընդ ամենայն՝ ազգք  
հօգևտասան: Եւ ի սոցանէ ելին  
մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են  
Կիպրացիք՝ ի Կիտիացոց, որդիք  
Յարեթի: Բայց դարձեալ գտանեմք  
և յայնոցիկ, որ են ի կողմանս  
հիւսիսոյ, որ ազգակից են Կիտիաց-  
ոցն: Եւ ազգք են, որ են  
ի Հեղաս աշխարհի՝ յայնցանէն,  
որք յետոյ փոխեցան անդր...  
Բայց ուսանիմք զճշմարտու-  
թիւն սոցա յԱրիւնաց  
և ի Մարգարէից...<sup>110</sup>

Զմմատի ձևագիր (1178 թ.)

Որդիք Յաւեթի երրորդ որդայն  
նոյի՝ Գոմեր և ի նմանէ  
Գամիրք... Ընդ ամենայն՝ ազգ  
ժն: Եւ ի սոցանէ ելին և  
մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են  
Կիպրացիք՝ ի Կիտիացոց, որդիք  
Յարեթի: Բայց դարձեալ գտանեմք  
յայնոցիկ, որ են ի կողմանս  
հիւսիսոյ, որ են ազգակիցք Կիտիաց-  
ոց: Եւ ազգ, որ են  
ի Հեղաս աշխարհի՝ յայնցանէ են,  
որք յետոյ փոխեցան անդր...  
Բայց ցուցանեմք ընդ ճշմարտու-  
թիւն նոցա յԱրիւնաց  
և ի Մարգարէից<sup>111</sup>:

Այսպիսի նույնությունները համատարած են: Ինչ վերաբերում է տարբերություններին, դրանք նույն բնույթի են, ինչ որ Աշխարհացույցի ձևագրերում հանդիպող տարբերությունները, որոնք բոլորովին էլ վկա չեն այն բանի, թե գոյություն են ունեցել Աշխարհացույցի տարբեր թարգմանու-

<sup>108</sup> Անդ, էջ 180:

<sup>109</sup> Զմմատ. Շիրակացու մատենագրությունը, էջ 364, № 5443, էջ 398բ և 408ա:

<sup>110</sup> Անդ, էջ 359—360, ձ. № 2679, էջ 31ա:

<sup>111</sup> «Յուցակ ձևագրաց Զմմատի վանքին», էջ 437, ձ. № 204, էջ 7ա-բ:

ներ: Չմմառի ձեռագրում գտնվող Աշխարհացույցի համեմատությունը Շիրակացու մատենագրությունում (էջ 336—354) տպագրվածի հետ նույնպես բացահայտում է էական տարբերություններ:

Չորս ընդօրինակությունների համեմատությունը միաժամանակ ակրնհայտ է դարձնում այն իրողությունը, որ նրանց բոլորի հիմքում ընկած հեղինակային օրինակը խորագիր չի ունեցել և որևէ հեղինակի անունը չի կրել: Արտագրողներից յուրաքանչյուրը հետագայում ավելացրել է իր ենթադրած անունը: Չմմառի № 204 ձեռագիրը մինչև օրս էլ վերնագիր չունի և դա լավագույն ապացույցն է հեղինակային օրինակում բացակայած անվան: Այս ձեռագրում, ի տարբերություն մյուս բոլորի, պահպանվել է Հիպոդիտոսի առաջաբանը, որով ապացուցվում է, որ ժամանակագրությունն իսկապես պատկանում է Հիպոդիտոսին և ոչ թե Փիլոնին, Անդրեասին կամ ուրիշների: Հունարենի հետ համեմատությունը բացահայտում է որոշ կրճատումներ, սակայն դրանք հեղինակի անվանը վերաբերել չեն կարող, այսինքն՝ հնարավոր չէ, որ հաշվարկմանը կրճատած լինեն նաև հեղինակի անունը: Այն հանգամանքը, որ Չմմառի ձեռագրում, ինչպես նաև Թղթյա ձեռագրում ժամանակագրությունն ընդօրինակված է Շիրակացու երկերի շարքում, հիմք է տալիս ենթադրելու, որ այդ երկերն սկզբնապես գտնված են եղել մի ժողովածուում, որում Շիրակացու անունը նշված է եղել միայն երկերից մեկի վրա: Մյուս երկերն անանուն են եղել: Այդ վիճակում էլ ընդօրինակել են հետագա գրիչները: № 5443 ձեռագրի գաղափար օրինակում ժամանակագրությունը շփոթվել է Եվսեբիոս Կեսարացու երկի հետ և վերնագրում ավելացվել է Եվսեբիոսի անունը, № 5254 ձեռագրի հեղինակն ավելացրել է Փիլոն Երրայեցու անունը, իսկ Թղթյա ձեռագրում ներմուծվել են Խորենացու և Անդրեասի հատվածները (Անդրեասի անունը նշված լինելով Խորենացուց հետո, ցույց է տալիս, որ այդ ժամանակագիրն ապրել է ուշ դարերում)<sup>112</sup>: Բոլոր դեպքերում էլ ավելացված անունները վերաբերում են ոչ թե ամբողջ ժամանակագրությանը, այլ նրա միայն այն հատվածներին, որոնք գրիչների կարծիքով պատկանել են հիշյալ հեղինակներին:

№ 5254 ձեռագրի կապակցությամբ կարելի է նաև մտածել, որ Փիլոնի անունը սկզբնապես գրված է եղել գաղափար օրինակի լուսանցքում և հետո է թափանցել տեքստի մեջ: Այսօր էլ այդ ձեռագրի լուսանցքներում գտնում ենք տարբեր հեղինակների անուններ, ինչպես նաև տեքստի մեջ թափանցած լուսանցագրություններ: Հենց ժամանակագրության վերջում (էջ 202 բ) ներմուծված է հետևյալ լուսանցագրությունը. «Քսիսուսթրոս Նոի ասեն և Զրուանդ Սեմա և Տիտանն Քամա և Յասպետոսթե Յարեթի» (Խորենացի): Իսկ ժամանակագրության սկզբում «Խաւսք Փիլոնի» բառերից առաջ ընդօրինակված է «Բարոյախոս» կոչվող առակների ժողովածուի մեղվին վերաբերող առակը: Քանի որ մեղվին նվիրված մի խոսք էլ ունի Փիլոնը, մյուս կողմից էլ՝ հայտնի է, որ «Բարոյախոսի» հեղինակ է համարվել ի շարս մի շարք այլ հեղինակների նաև Փիլոնը, կարելի է ենթադրել, որ «Խաւսք Փիլոնի» ծանոթագրությունն սկզբնապես լուսանցքում գրված է եղել մեղվի առակը նկատի ունենալով և ապա լուսանցքից տեքստի մեջ տեղափոխող գրիչը լուսանցագրության իրա-

<sup>112</sup> Գրիգոր Տղան Անդրեասին նշում է Շիրակացուց հետո (տե՛ս վերը), որով նույնպես հուշում է այն միտքը, որ Անդրեասը ուշ ժամանակներում ապրած մատենագիր է:

կան տեղը շիմանալով՝ տեղափոխել է մեղվի առակի և նրան անմիջապես հաջորդող ժամանակագրության միջև, որի հետևանքով էլ այժմ Փիլոնի անունն ընկալվում է որպես ժամանակագրությանը վերաբերող անուն:

Ինչպես էլ ընթացած լինի գործողությունը՝ փաստն այն է, որ «Խօսք Փիլոնի» ծանոթագրությունը վերաբերում է հանրահայտ Փիլոն Եբրայեցուն, որը Հիպոդիտոսի ժամանակագրության հետ կապ չունի և սխալմամբ է հայտնվել այդ ժամանակագրությունն սկսող հատվածի դիմաց:

Հայտնի են «Բարոյախոսի» և Փիլոնի երկերի համատեղ ընդօրինակության դեպքեր: Այսպես, օրինակ, Ամրդոլու վանքի ձեռագրաց ցուցակում կարդում ենք այդպիսի երկու ձեռագրերի մասին. «Բ գիրք. Բովանդակ հարց և պատասխանիք Փիլոնի և այլոցն, և միոյն հետն «Բարեխօս»<sup>113</sup>: Թղթյա ձեռագրում (էջ 29ա) ժամանակագրությունից անմիջապես առաջ (տող 7—25) ընդօրինակված է Փիլոնից բաղված մի հատված, որի վրա, սակայն, գրված է «նորին Անանիայի»<sup>114</sup>: Այս կարգի ընդօրինակությունները նույնպես կարող էին նպաստել Փիլոն Եբրայեցու անվան հայտնվելուն ժամանակագրության սկզբում:

Г. В. АБГАРЯН

## ХРОНИКА, ПРИПИСЫВАЕМАЯ АНАНИИ ШИРАКАЦИ

### Резюме

Греческий текст «Хроники» Ипполита (Hippolytus, род прим. в 170 г., умер 253 г.) долгое время считался утерянным и был опубликован впервые в 1929 г. в Лейпциге (второе издание—Берлин, 1955 г.). До публикации оригинала в научной литературе пользовались латинским и армянским переводами.

Имя армянского переводчика в рукописях не сохранилось, однако по верному мнению большинства специалистов автором древнеармянского перевода является Анания Ширакаци, перу которого принадлежат также другие произведения аналогичного характера. Об одном из таких произведений свидетельствует сам Ширакаци. В Пасхальной речи он называет свое произведение «ժամանակական կանոն», что является дословным переводом греческого «*αἰρονικός κανὼν*» и известно также как заглавие «Хроники» Евсевия Кесарийского.

В настоящей статье анализируются данные Пасхальной речи, выявляются новые свидетельства у других средневековых писателей, пользовавшихся трудом Ширакаци, и на основании первоисточников доказывается, что упомянутое в Пасхальной речи сочинение не дошло до нас. Выявлением этого факта одновременно опровергается мнение ученых, отождествляющих утерянный труд Ширакаци с анонимной компиляцией, сохранившейся в рук. № 2679 и изданной в 1904 г. в Венеции (второе издание—Ереван, 1944).

Анонимная компиляция состоит в основном из двух частей: «Хро-

<sup>113</sup> Մատենադարան, ձեռ. № 737, էջ 230ր:

<sup>114</sup> Տե՛ս «Յուցակ ձեռագրաց մատենադարանին ի վենետիկ», հ. Բ, էջ 279:



ники» Ипполита и «Истории греческих императоров». В рук. № 5254 Матенадарана им. Маштоца компиляция начинается примечанием «Слова Филона». На основании этого предполагалось, что автором компиляции является армянский переводчик Филон Тиракаши. Однако в представляемой вниманию читателей настоящей статье показывается, что в примечании имеется в виду знаменитый Филон Александрийский (Еврей), имя которого оказалось в компиляции случайно. Действительным автором первой части компиляции является, как уже известно, Ипполит, а имя автора второй части пока остается неизвестным.

G. V. ABGARIAN

## LA CHRONIQUE ATTRIBUEE A ANANIA CHIRAKATSI

### Résumé

Le texte grec de la „Chronique“ d’Hippolyte (Hippolytus, né vers 170, mort en 253) était longtemps considéré comme perdu et il n’a été publié pour la première fois qu’en 1929 à Leipzig (seconde édition: Berlin, 1955). Avant la publication de l’original, c’étaient les traductions latine et arménienne qui avaient cours dans la littérature scientifique.

Le nom du traducteur arménien n’est pas mentionné dans les manuscrits, cependant de l’avis digne de foi de la plupart des spécialistes, l’auteur de la traduction arménienne ancienne est Anania Chirakatsi, à la plume duquel appartiennent aussi d’autres oeuvres de caractère analogue. Chirakatsi lui-même mentionne l’existence de l’un de ces ouvrages. Dans son Discours pascal, il nomme son oeuvre «Ժամանակակից կանոնք», ce qui est la traduction littérale du grec „Χρονικός κανόν“, connu aussi comme le titre de la „Chronique“, d’Eusèbe de Césarée.

Le présent article analyse les données du Discours pascal, révèle de nouveaux témoignages pris aux autres écrivains médiévaux, ayant utilisé l’ouvrage de Chirakatsi, et, se basant sur les sources, démontre que l’oeuvre mentionnée dans le Discours pascal ne nous est pas parvenue. Cette démonstration réfute en même temps l’opinion des chercheurs qui identifient l’oeuvre perdue de Chirakatsi à la compilation anonyme conservée dans le Ms. № 2679 du Maténadaran et publiée en 1904 à Venise (seconde édition: Erévan, 1944).

La compilation anonyme se compose essentiellement de deux parties: la „Chronique“ d’Hippolyte et l’„Histoire des empereurs grecs“. Dans le Ms. № 5254 du Maténadaran Machtotz, la compilation commence par la note: „Paroles de Philon“. Ceci avait permis de supposer que l’auteur de la compilation était le traducteur arménien Philon Tirakatsi. Cependant, cet article montre que la note mentionne le célèbre Philon d’Alexandrie (le Juif), dont le nom s’est trouvé par hasard dans la compilation. Comme on le sait déjà, l’auteur authentique de la première partie est Hippolyte, tandis que le nom de l’auteur de la seconde partie reste encore inconnu.

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՉՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԹ-ՉԱՅՆԻ ԳԱՆՉԱՐԱՆԱՅԻՆ  
ՀԱՏՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Ութ-ձայնը (Oktoechos, Восемьгласие) ավանդական ձայնեղանակների միջնադարյան բարդ համակարգ է, որն ազգային տարրեր մարմնավորումների իր ողջ բազմազանությամբ հանդիսացել է քրիստոնեական քաղաքակրթության մեջ կենցաղավարած համաձայնության (լադային) բնույթի ելևէջային բջիջների, մեղեդիական պտույտների (մոտիվների) և ամբողջական մեղեդիների հավաքման, տարանջատման, խմբավորման, այլև նորերի հորինման, կատարման և ուսուցման-տարածման կատարելագործված հիմքը:

Մագուժով այն կապված է հին աշխարհի քաղաքակրթ մի շարք ժողովուրդների, այդ թվում և հայերի կյանքում խոր անցյալում ձևավորված տիպական ձայնեղանակների՝ մասին ուսմունքին: Վերջինս մ. թ. առաջին դարերում, ավելի ճիշտ՝ մինչև IV դարի սկզբները, քրիստոնեական պաշտամունքային երաժշտության կենդանի փորձում վերաձևավորվում է որպես ութ-ձայն<sup>2</sup>: Այսպես է կոչվում, բայց երաժշտաժիսական տարրեր մատչաններում ունենալով դրսևորման զանազան ձևեր, և մանավանդ՝ պատմական դարգացման ընթացքում իրականում միավորել է ութից շատ ավելի մեծ թվով հիմնական և օժանդակ ձայնեղանակներ:

Ութ-ձայնը որպես կազմավորված համակարգ կենցաղավարում է IV դարից<sup>3</sup>: Այն արտացոլող և գիտությանը հայտնի հնագույն մատչանները երկուսն

1 Հատ պրոֆ. Քր. Քուչնարյանի, տիպական ձայնեղանակները ծագել ու ձևավորվել են ժողովուրդների երաժշտական դարավոր փորձի հիման վրա, որպես արդյունք՝ «երաժշտակերպարային բնութագրերը տիպականացնելու ձգտման»: X. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 39.

2 E. Werner, The Sacred Bridge, L.—N. Y., 1959. Տե՛ս նաև Ս. Անգեղյա, Հայ եկեղեցական երաժշտությունը և ձայնագրությունը, Մաղիկ, Կ. Պոլիս, 1903, № 6, էջ 66—68 («Երբայեցիք,—գրում է հեղինակն այստեղ,—ուրաղեա (ութը լարով) քնարին իւրաքանչիւր լարովը կըսկսէին սաղմոսի ութը կանոնները. ասոր հետևելով Յոյներն ալ իրենց ձայները ութի բաժանեցին» և այլն): Մի կողմ թողնելով սաղմոսը հատկապես ութ կանոնների բաժանելու սկզբունքի առաջացման խնդիրը (ինչպես կտեսնենք, Վ. Հացունու համոզմամբ դա «հայկական բնիկ դրուժին» էր), Կոմիտասը նույնպես հաստատում էր, թե «շարականի եղանակների ութն ձայնի բաժանմունքը ծագել է ութ կանոն սաղմոսներից»: Տե՛ս նրա՝ Հայոց եկեղեցական եղանակները (Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 106):

3 Հայտնի է, որ 374 թ.-ից Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոս Մեղիտյանեցին (333—397), արևմտյան քրիստոնեական պաշտամունքային երգեցողությունը կանոնացնելով ըստ ութ-ձայնի հին դրուժյան, օգտվել է Մերձավոր արևելքի և Փոքր Ասիայի (ուստի՝ նաև Հայաստանի)

են. V դարի սկզբում (Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից անմիջապես հետո) կազմված հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագիրքը՝ իր ութ կանոններով (այսինքն սաղմոսախմբերով), որոնցից յուրաքանչյուրին համապատասխանել է մի ձայնեղանակ<sup>4</sup>. և VI դարի սկզբներին Սեվերիոս Անտիոքացի պատրիարքի կազմած հոգևոր ինքնուրույն երգերի ժողովածուն, ութ ձայնեղանակներն ընդգրկող ներքին հատուկ բաժանումով<sup>5</sup>:

Սկզբնական շրջանում ութ-ձայնի տեսական նախնական հիմունքներն այս կամ այն չափով ընդհանուր են եղել քրիստոնյա ժողովուրդների համար: Ժամանակի ընթացքում, սակայն, նախ առանձնանում են՝ Արևմտյան և Արևելյան քրիստոնյա մշակույթներին հատուկ ութ-ձայները, թե՛ տեսականորեն, և թե՛, մանավանդ, գործնականում: VII դարի սկզբներում Գրիգորիս Ա. պապը վերակարգավորում է արևմտյան պաշտոնեղությունը և հաստատում «Գրիգորյան» երգեցողությունը, ըստ ութ-ձայնի նոր խմբագրության<sup>6</sup>: Հաջորդ երկու դարերում Արևմուտքում առաջին փորձերն են կատարվում տեսականորեն իմաստավորելու ութ-ձայնի համակարգը<sup>7</sup> և այլն:

Արևելքում, Սեվերիոս Անտիոքացու կարգավորած՝ հոգևոր ինքնուրույն երգերի հատվածին վերաբերող ութ-ձայնի համակարգը վերակարգավորում է Հովհան Դամասկացին (VII—VIII դդ.)<sup>8</sup>: Դամասկացու իրագործած այդ խմբագրությունը հատուկ ընդհանուր դրույթներ, ինչպես և XIII—XIV դարերում բյուզանդական ութ-ձայնի տեսական իմաստավորման հետ կապված գաղափարներ, առհասարակ տարածված են եղել քրիստոնյա Արևելքում: Եվ սակայն, առավել ուշագրավն այստեղ՝ ութ-ձայնի ազգային տարբեր համակարգերի կազմավորումն ու հաստատումն է, որ հանդիսացել է պաշտոնեղությունը ազգային լիզուններով ու երաժշտական ազգային ձևավորմամբ կատարելու անմիջական արդյունքը:

Եկեղեցիների երաժշտական փորձից: J. Otten, Ambrosian Chant. The Catholic Encyclopedia (an international work of reference on the constitution, doctrine, discipline and history of the catholic church), v. 1, L., 1907.

<sup>4</sup> Հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագիրքը իր ութամասն կազմությամբ ներկայացնում է ինքնատիպ հայկական ծիսական մատյան, ինչպես ցույց տվեց Վ. Հացունին: Տե՛ս նրա՝ Պատմության հայոց աղօթամատուցին, Վենետիկ, 1965:

<sup>5</sup> G. Reese, Musik in the Middle Ages, N. Y., 1940, p. 71.

<sup>6</sup> C. Vivell, Vom Musiktraktate Gregors des Grossen, Lpz., 1911. P. Wagner, Einführung in die gregorianische Melodien, 1 Teil, Lpz., 1910.

<sup>7</sup> H. Riemann, Geschichte der Musiktheorie, 2-te Aufl., Berlin, 1920, s. 12—21.

<sup>8</sup> E. Wellesz, Die byzantinische Musik, Breslau, 1927, s. 32—34. VII—VIII դարերում նաև: արևելյան, մասնավորապես, պարսկա-արաբական երաժշտության մեջ բյուրեղանում է ութ-ձայնի ուրույն մի համակարգ: նրա ձևավորման կարևորագույն փուլերից մեկը վերաբերում է Սասանյան վերջին խոշոր տիրակալ Խոսրով Ապրվեղի իշխանության ժամանակներին, երբ Տիգրանում՝ Պարսկաստանի, Միջին Ասիայի և Հայաստանի աշխարհիկ հեղինակավոր երաժիշտների մի խումբ (հայ նշանավոր դուսան, երգիչ-նվագածու Սարգսի մասնակցությամբ) դավերացնում է «խոսրովային» կոչված (արևելյան տիպական յոթ) եղանակների դրույթները: Տե՛ս մեր աշխատությունը՝ Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (Բ), ԳԱ «Լրարեր», 1971, № 1, էջ 43: Հմմտ. նաև՝ А. Раджабов, Из истории развития таджикской музыкальной культуры (V—XII вв.), Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Душанбе, 1982, с. 6.

Արևելյան քրիստոնեական երաժշտության պատմական զարգացման դասական շրջանում (մինչև XV դարի կեսերը), իր մեղեդիական մեծ հնարավորություններով և ազգային վառ ինքնատիպ գծերով՝ բյուզանդականի կողքին արժանի տեղն է գրավել հայկական ութ-ձայնը: Լինելով հիմնականում հայրենական գիտական մտքի նվաճումներից մեկը՝ ժողովրդաազգային երգ-երաժշտության հազարամյա փորձի խտացումը, այն՝ դարեր շարունակ գտնվել է հայ երաժիշտ-տեսաբանների ու երգիչ-երաժիշտների ուշադրության կենտրոնում: Տեսաբանները հետևելով նրա անընդմեջ հարստացմանը նորանոր ձայնեղանակներով, շին դադարել գործնականում ստեղծվող ավելի ու ավելի բարդ միակցության առավել կարճ ու մատչելի ընդհանրացման ուղիները որոնելուց: Իսկ երգիչ-երաժիշտները նրանում իրավացիորեն տեսել են՝ տարեկան բազմահարյուր երգեցողությունները հիշելու (մինչև խազանշանների կիրառումը), և կամ վերծանելու (խազագրերի համակարգի տարածումից հետո), այլև սերունդներին փոխանցելու ամենահուսալի միջոցը:

Տակավին հեթանոս Հայաստանում տեսական միտքը տարրերել է շորս հիմնական ձայնեղանակներ, տիպական մյուս մեղեդիները այս կամ այն կերպ խմբելով դրանց շուրջ<sup>9</sup>: IV հարյուրամյակի ընթացքում այստեղ հոգևոր պաշտամունքային երաժշտական փորձում լուրջ տեղաշարժեր են կատարվում, որոնց գիտությունը արձագանքում է գրերի գյուտից հետո: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը վերանայում են ձայնեղանակների մասին հայկական հին ուսմունքը և վերակարգավորում՝ գլխավորապես աստվածաշնչային երգերի (վերոհիշյալ Սաղմոսարան-ժամագրքում ամփոփված սաղմոսների, մարգարեական օրհնությունների և տիրամոր օրհնության) բնագրերի հետ զուգորդվող տիպական մեղեդիները<sup>10</sup>, խմբագրելով հայկական ութ-ձայնի առաջին խոշոր հատվածը (շորս բ ու լ ն, շորս կ ո ղ մ և երկու ս տ ե ղ ի եղանակներով, որն արդեն իսկ դուրս է գալիս ութի սահմաններից)<sup>11</sup>:

<sup>9</sup> Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 160 (Армянское восьмигласие).

<sup>10</sup> Հայկական հնագույն Սաղմոսարան-ժամագրքի նյութերից, եղանակներով հանդերձ, թիշ նմուշներ են հասել մեզ: Գրանցից են՝ ԱԶ, ԳԶ և ԳԿ մի խումբ սաղմոսներ, որոնց մասնագիտական վերլուծությունը տե՛ս մեր՝ *Monodische Denkmäler Alt-Armeniens (Die Tradition der armenischen Psalmodie), Beiträge zur Musikwissenschaft, Berlin, 1970, Heft 1.* և ութ-ձայն կանոնադրվածները, ըստ որում ինչպես հասարակ, նույնպես և տոնական օրերի համար նախատեսված տարբերակներով: Տե՛ս մեր հոդվածները՝ *Հասարակ օրերի կանոնադրվածները, «Էջմիածին», 1971, № 4.* և *Հանդիսավոր օրերի կանոնադրվածները, «Էջմիածին», 1971, № 9.*

<sup>11</sup> Ինչպես գիտենք, Հայաստավուրբներին անցած հնագույն մի դրվածքի ավյալներով, գրերի գյուտից հետո ճոխացած հայ հոգևոր երգեցողությունների եղանակները ... «Բաժանեաց ի միմեանց սուրբ հայրապետն, հոգևի տէրն՝ Բահակ Պարթևն՝ տասն ձայնս ըստ թուոյ ժ արարածոց», որով՝ ... «Ե՛ր Գ ձայնից Ժ բարդեցաւ: Տե՛ս մեր հոդվածը՝ Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը, «Էջմիածին», 1973, № 8, էջ 11: Սակայն, նույնքան վստահելի ձեռագրական այլ աղբյուրների համաձայն, ինչպիսիք են, օրինակ, շարականների հեղինակների միջնադարյան ցուցակները ... «Նախ՝ սուրբն Բահակ և սուրբն Մեսրոպ՝ ասացին զայն եղանակաւոր ձայնն, և զերկու ձայն ստեղիս», որ հաստատվում է նաև պատմական փաստերով: Տե՛ս մեր հոդվածը՝ *Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր մատենադարանի», Վ. 7, Երևան, 1964, էջ 174:* Այս և նման տիպի դրվածքներում հայոց հնագույն Սաղմոսարան-ժամագրքի և Շարակնոցի երգեցողություններին վերաբերող ութ-ձայնի համակարգերը:

Այս շրջանում արդեն սկսված լինելով նաև հայկական հոգևոր ինքնուրույն երգերի (հետագայում շարական անվանված) կցուրդների հորինումն ու եկեղեցում ազատ կատարումը (հրապարակումը), Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի նախաձեռնությամբ կազմվում է հայկական ութ-ձայնի երկրորդ (ավելի փոքրաչափ) հատվածը ևս՝ այսպես կոչված սկսվածքների համակարգը: Սկսվածքներին կարևոր դեր է հատկացված եղել պաշտոններգության մեջ: Իրանց օգնությամբ է, որ մենակատար-խմբավարը իրականացրել է անցումները սաղմոսներից դեպի կցուրդների խմբական երկգաս կատարումը: Բացի այդ՝ սկսվածքների դրուսթյան միջոցով զսիրները տիրապետել են գործնական երգեցողությանն ու նաև տեսության տարերքին<sup>12</sup>:

Ավելի ուշ, հայ հոգևոր ինքնուրույն երգի ծաղկմանը, ճյուղավորմանն ու միաձայնային բարդ կոթողներով հարստացմանը զուգընթաց ստեղծվում են հայկական միջնադարյան երաժշտածիսական գլխավորագույն մատյաններին (նրանցում ընդգրկված երգի տեսակներին) վերաբերող ութ-ձայնի նոր հատվածներ: Կցուրդարան-շարականոցի արդեն բազմացած նյութերի ընտրության, խմբագրման և համապատասխան ձայնեղանակների դասակարգման հարցերով VII դարում զբաղվում է Շիրակի դպրեվանքի առաջնորդ Բարսեղ Ծոնը<sup>13</sup> (ստեղծելով «Ծոնընտիր» կոչված ժողովածուն)<sup>14</sup>:

VIII դարի սկզբներում Ստեփանոս Սյունեցի երկրորդը կանոնացնում է ընտրված կցուրդ-շարականները և խմբագրում վերջիններիս կապված ութ-ձայնը, բաղկացած հիմնական ութ եղանակներից, նույնչափ «դարձվածքնե-

խստորեն շտարբերելու միտումը բացատրվում է նրանով, որ այդ համակարգերում ձայնեղանակների համաձայնություն (լադային) հիմքը նույնն է: Տարբեր են՝ սկսելու, շարունակելու և վերջավորելու մեղեդիական տիպական պատույթները:

12 Տե՛ս մեր հոդվածաշարը՝ Ութ-ձայնի սկսվածքները, «Էջմիածին», 1972, №№. 2, 3, 4, 5:

13 Տե՛ս մեր հոդվածը՝ Բարսեղ Ծոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկումը Հայաստանում 7-րդ դարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1:

Սաղմոսարան-ժամադրքին կապված և արդեն «դասական» նկատվող ութ-ձայնի համակարգը գործնականում արդեն այնպես էր յուրացվել, որ նույն VII դարում Մովսես Սյունեցին ոչնչում էր նրա գեղագիտությանը վերաբերող հարցերը, արժարժելով նաև Ethos-ի՝ այսինքն, ձայնեղանակներից յուրաքանչյուրի հետ առնչվող հոգեվիճակների և հուղականության որակի խնդիրը: Ըստ այդմ, Սյունեցին (արևմտյան թև արևելյան) քրիստոնեական վաղ միջնադարյան մտածելակերպի համաձայն, հայ հոգևոր երաժշտության մեջ տարբերում է, մի կողմից՝ զըղջական-աղաչական, ազիտղորմ-գթաշարժ, մյուս կողմից՝ ուրախալի, բերկրալի (հատկապես՝ անանձնական ուրախությամբ համակող) ձայնեղանակներ: Տե՛ս մեր հրապարակումը՝ Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գրվածքը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 11:

14 Վերոհիշյալ հոդվածում նշել էինք, որ «Ծոնընտիրը» որպես ձևագրական առանձին միավոր չի պահպանվել: Այն հիմք է հանդիսացել ավելի ուշ կանոնացված շարականոցների համար և միաձուլվել է նրանց հետ: Սակայն, հայկական հոգևոր ինքնուրույն հին երգերի այդ նախնական ժողովածուն չէր կարող որևէ հետք թողած չլինել: Եվ ահա, բոլորովին վերջերս, այլ բան որոնելիս, պատահաբար ընդհարվեցինք հետևյալ փաստին: Կ. Պոլսում 1831—1832 թթ. հավանաբար Գրիգոր Փեղտիմալճյանի գաղափարած ժողովածուում բերված է Ստեփանոս քահանայի կազմած՝ շարականների հեղինակների մի ցուցակ («Թէ ոյք են ոգոզը շարականաց») և ավելացված. «Օրինակեցար ծոնընտիր (sic!) հին հեղինակ շարականէ միոջէ, զոր գրեցնալ էր թվին հայոց ԶԻԶ» (926 + 551 = 1477): Պարզ է, որ XV դարի այդ շարականոցը ևս արտագրվել է էլ ավելի հին օրինակից և այլն: Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10097, էջ 57ա—58բ:

րից» և նրանց շուրջ խմբված մոտ 40 տիպական մեղեդիներից<sup>15</sup>: XII դարում Ներսես Շնորհալին տեսականորեն իմաստավորում է «ծանր» (նոր տիպի), «ստեղի», «զարտուղի» և «մանրուսման» կոչված ձայնեղանակները<sup>16</sup>: XIII դարում կիլիկյան մի շարք նշանավոր երաժշտապետների ջանքերով խազզըրքերում ութ հիմնական նորակերտ ձայնեղանակներից յուրաքանչյուրի շուրջ խմբվում են տասնյակներով հաշվվող «մանրուսման» երգեր<sup>17</sup>: XIV—XV դարերում Կիլիկիայում և Կենտրոնական Հայաստանում հատուկ դիտարկման արարկա են դառնում նաև Գանձարան ժողովածուի բաղադրիչները<sup>18</sup>: XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին Տաթևի համալսարանի երաժշտական մասնաճյուղում (Ֆակուլտետում) Գրիգոր Տաթևացու ղեկավարությամբ ընդհանուր հայտարարի են քերվում հայկական ութ-ձայնի տեսությանն ու դործնականին վերաբերող դրույթները<sup>19</sup>, որից մի հակիրճ ամփոփում է հասնում մինչև Գ. Գապասարալյանը<sup>20</sup>, Հ. Լիմոնճյանը<sup>21</sup>, Ն. Քաշճյանն<sup>22</sup> ու մեր օրերը:

Ինչպես կարելի է հասկանալ նախընթացից, այս կամ այն շափով ազատ, յուրովի և տարբեր ժամանակներում տարբեր մոտեցմամբ մեկնաբանելով ութ-ձայնի ընդհանուր դրույթները, նրա նշանարանի ներքո հայ եկեղեցին մի քանի անգամ կարգավորել է (կանոնական է հոչակել) հոգևոր շափանմուշ եղանակ-

15 Տե՛ս մեր հոդվածը՝ Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարություն ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, № 2: Հանդիսանալով կանոնի սեռի (ժանրի) հետ միասին տարածվող և ձևի ու արարողության մեջ ավելի ու ավելի արձաատվորվող հոգևոր ինքնուրույն ստեղծագործությունների նորոգածև (սկզբունքորեն երգային բնույթի) երաժշտության մեղեդիական տիպարները, այդ համակարգը պատմականորեն կարճ ժամանակամիջոցում բրունել է հայոց հնամենի Սաղմոսարան-ժամազրքի ութ-կանոն սաղմոսերգություններին կապված առաջատար տեղ:

16 Ն. Քահմիբյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 12—13:

17 Տե՛ս մեր ուսումնասիրությունը՝ Նյութեր հայկական և առասկան հոգևոր միջնադարյան երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Բանբեր Մատենադարանի», հ. 13, Երևան, 1980, էջ 115—121:

18 Գանձի, գանձարանների, այլև գանձ-տաղ-մեղեդի-հորդորակ տիպի տոնական շարքերի ու դրանց բաղադրիչներից յուրաքանչյուրի մասին տե՛ս մեր հոդվածները ՀՍՀ-ում. «Գանձ» (հ. 2, 1976, էջ 687), «Գանձարան» (նույն տեղում, էջ 687), «Հորդորակ» (հ. 6, 1980, էջ 589) և այլուր:

19 Դա երևում է Տաթևացու աշակերտների ստացած գիտելիքներից ու նրանց համապատասխան ստույթներից ևս: Առաքել Սյունեցին, օրինակ, Գրիգոր Տաթևացու քննորդին և աշակերտը, իր «Լուծմունք Յաղազրս Սահմանացս Գաթի Անյաղթ փիլիսոփայի» (Մաղրաս, 1797) և «Յաղագս Քերականութեան համառատ լուծմունք» (Լոս Անճելոս, 1982) աշխատություններում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական նվագարանների, դործիքային նվագի և ութ-ձայնի համակարգով ընդգրկված աշխարհիկ, հոգևոր և հին ու միջնադարյան եղանակների մասին: Հմմտ. մեր հոդվածները. Չայնի մասին ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», հ. 6, Երևան, 1962, էջ 162. Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում, «Բանբեր Մատենադարանի», հ. 8, Երևան, 1967, էջ 103—104, Կոմիտասը և հայկական խազերի վերծանության խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 4, էջ 42:

20 Տե՛ս մեր Գրիգոր Գապասարալյանի «Համառատութիւն Երաժշտականի գիտութեան» աշխատության մեր հրատարակումը՝ «Բանբեր Մատենադարանի», հ. 11, Երևան, 1973, էջ 299—303:

21 Հ. Լիմոնճյանը ծառանգելով Գր. Գապասարալյանի ողջ գիտանքը հայկական ութ-ձայնի համակարգի մասին, այն կապես լրացրեց միջնադարյան այլ աղբյուրներից, այլև իրեն ժամանակակից երաժշտական փորձից քաղված ավյալներով և փոխանցեց իր աշակերտներին:

22 Ն. Քաշճյան, Գասագիրք եկեղեցական ձայնադրութեան հայոց, Վաղարշապատ, 1874:

ների (կամ ձայնեղանակների) տարբեր միակցություններ, կապված երաժրշտածիսական որոշակի մատյանների: V դարում (սահակ-մեսրոպյան շրջանում)՝ ութ-կանոն սաղմոսերգությունները, VIII դարում (Ստեփանոս Սյունեցի Բ-ի ջանքերով)՝ ութ-ձայն կցուրդ-շարականները, XII դարում (Ներսես Շնորհալու օրոք, և, ամենայն հավանականությամբ, նրա ցուցմունքով, ղեկավարությամբ և մասնակցությամբ)՝ ի թիվս այլոց, նաև մանրուսման ութ-ձայն հիմնական երգերն ու սկզբնական շարքերը. յուրաքանչյուր ղեկքում կիրառելով մեղեդիական նյութի դասակարգման հետզհետե խորացվող մի սկզբունք, ձայնեղանակները հարաբերակցելով եկեղեցական օրվա ժամերի ու տարվա շրջանների հետ, այլև դանադանելով երաժշտական ձայն և օրվա ձայն հասկացությունները<sup>23</sup>:

Նախընթացից բավականաչափ հստակ երևում է նաև, որ վերը նշված երաժշտածիսական մատյաններից (Սաղմոսարան-ժամագիրք, Շարակնոց, Խազգիրք) լոկ Գանձարանին կապված ութ-ձայնի մասին մեր պատկերացումներն ազդոտ են տակավին: Դա պատահական չէ: Երաժշտածիսական մատյանների շարքում Գանձարանը առավել ուշ ձևավորվածն է: Եվ նրա կենցաղավարման հետ առնչվող երգչային ավանդույթների ու տեսական դրույթների մասին տվյալներ հայտնաբերված չեն առ այսօր: Մեր տրամադրության տակ գտնվող մի քանի նյութեր, որոնք ներկայացնում ենք ընթերցողին ներկա հոդվածով, թույլ են տալիս բարձրացնելու հույկական ութ-ձայնի գանձարանային հատվածի գոյության մասին հարցը:

Իմանալի է, ի վերջո, որ Գանձարան ժողովածուում ամփոփվելիք նյութերը՝ գանձեր, տաղեր և այլն, Գրիգոր Նարեկացու ժամանակներից ի վեր, նոր տիպի տոնական երգեր են եղել, որոնք մի քանի հարյուրամյակ ազատ են մնացել կանոնացումից<sup>24</sup> (հաճախ կատարվելով նույնիսկ որպես արտապաշտամունքային ստեղծագործություններ, մանավանդ վանական կյանքում): Եվ լոկ XIII—XIV դարերում գիտակ ու նախանձախնդիր ձեռքեր դրանք ևս

23 Եկեղեցական տարվա բոլոր օրերին մեկական ձայնեղանակ է համապատասխանում (Ձատիկի օրը միշտ համարելով ԱԶ, 9-րդ օրը դարձյալ սկսելով ԱԶ-ից, և այսպես շարունակաբար): Դա արված է՝ ութ հիմնական ձայնեղանակների կանոնավոր հաջորդականությունը ապահովելու համար: Եվ իրօք, այդպիսով, եկեղեցական տվյալ օրում զոնն մի երգ պետք է հնչի ըստ հիշյալ հաջորդականության: Բնականաբար, սակայն, մի ամբողջ օրվա ընթացքում լոկ մեկ ձայնեղանակ չէ, որ հնչում է: Բացի այդ, օրվա ձայնի նշումներն իսկ երբեմն լինում են պայմանական: Պարզապես պահանջվում է (և դարձյալ՝ ծիսական որոշ կարգ ու կանոն պահպանած լինելու մտահոգությամբ), որ, ասենք, տվյալ երգը, կամ ժամագրքային քարոզը կատարվի՝ օրվա ձայնը ԱԶ կամ ԲԶ եղած ժամանակ, անկախ այդ երգի բուն ձայնեղանակից: Ընդ վերջապես, նույնիսկ ավետարանական ընթերցվածների՝ թվերգով հնչելիք հատվածների կատարումը կարգավորելու նպատակով (որպեսզի չլինի, թե, օրինակ, մի ընթերցված 4—5 օրանընդհատ կրկնվի, իսկ մի ուրիշը շատ ավելի հազվադեպ լավի և այլն), դրանք նույնպես օժտվել են օրվա ձայնի նշումներով: Մի հանգամանք, որ շիտթության տեղիք է տվել անգամ բանասերների շրջանակներում, կարծել տալով, թե անցյալում ավետարանական ընթերցվածներն ևս երգվել են ըստ ձայնեղանակների: Մինչդեռ այդ ընթերցվածներում բնագրի վանկերի հետ զուգորդված առօգանական նշաններն են, որ անվրեպ ցույց են տալիս, թե դրանք թվերգով են կատարվել, թեկուզ մեղեդիականացված թվերգով (XIII—XV դարերում), բայց ոչ՝ ըստ ձայնեղանակների, վերջիններիս երգչային, երաժշտական իմաստով:

24 Ընդ աչնպես, ինչպես V—VIII դարերի ընթացքում էլ ազատ կենցաղավարել էին հայկական հոգևոր առաջին ինքնուրույն երգերը, նախքան Շարակնոց ժողովածուում մեկտեղվելը:

հավաքելով հոգևոր երգի յուրատիպ մատյաններում՝ Գանձարաններում, ստեղծել են եկեղեցական միևնույն տոնին նվիրված նոր շարքեր, դարձյալ՝ կանոնացնելու նպատակով<sup>25</sup>: Բայց Գանձարանը այնպես էլ չի հասցնում դառնալ պարտադիր, կանոնական ժողովածու, նրանում կատարման-մեկնարանման առումով լուրջ հատուկ պատրաստված երգիչ-երաժիշտներին մատչելի նյութերի մեկտեղման ժամանակներից քիչ անց՝ հայ իրականության մեջ սկսված մշակութային անկման սլաշմանների բերումով:

Գանձարանային միավորներից դարերի հոլովման մեջ իրենց երաժշտական նախնական կաղապարն ընդհանուր առմամբ պահպանած կտորներից են հորդորակները<sup>26</sup>: Տաղերն ու մեղեդիները սկզբնապես ավելի հստակ են տարբերվել, հատկապես ըստ նրանցում երաժշտական բաղադրիչին վերապահված դերի (որ դգալիորեն ավելի մեծ է եղել մեղեդիներում): Երաժշտական առումով պատմական զարգացման առավել հագեցած մի ճանապարհ են անցել գանձերը:

Գրիգոր Նարեկացու ժամանակներից, գանձերը, որպես պատմողական բնույթի գործեր, կատարվել են մեղեդիականացված պատմողական ասերգի կամ թվերգի արտահայտչական միջոցներով<sup>27</sup>: Դրա հիման վրա, մինչև XIII դարն արդեն արմատավորված է եղել խաղավորման մի ավանդույթ, որով գանձերի սկզբնատողերը օժտելով մի քանի պարզ նշանագրերով<sup>28</sup>, յուրաքանչյուր տան վերջում առաջ են բերել մեղեդիական ասերգի հանգանակը ցուցանող խաղային առավել տարածված մի երկու բանաձևեր<sup>29</sup>:

25 Առհասարակ, գրերի գյուտից հետո նաև հայ եկեղեցական երաժշտության մեջ մշտապես կենցաղավարել են կանոնական (կատարման համար պարտադիր) և ազատ երգեր: Վերջիններս պատմական հեղաշրջման որոշ փուլում նույնպես կանոնացվել են, բայց դրանց փոխարեն ստեղծվել են նորերը, որոնց կատարումը դարձյալ միառժամանակ ազատ է եղել: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ Հանդիսավոր օրերի կանոնադրությունները, «Էջմիածին», 1971, № 9:

26 Այստեղ և ստորև հաշվի ենք առնում թե՛ մինչև մեր օրերն իրենց եղանակներով հանդերձ հասած գանձարանային փոքրաթիվ ստեղծագործություններ մասնավորապես, և թե՛ մանավանդ, խաղադրության տվյալներն ընդհանրապես:

27 Հայ հոգևոր արվեստում ևս (ինչպես բյուզանդականում, ռուսականում և այլն), տարբերվում են՝ սաղմոսատիպ ասերգը կամ թվերգը, և դրան այս կամ այն շափով մոտիկ, բայց ըստ էության ավելի մեղեդիական՝ պատմողական ասերգը: Առաջինը բնութագրվում է Հին և նոր կտակարանների և առհասարակ բուն իսկ պաշտամունքային գրքերի առանձին հատվածների հեռորաշունչ վերարտադրությամբ: Երկրորդը՝ ավետարանական վերապատումների, հոգեշահ խրատների, քարոզների (հին գանձերի), սրբերի վարքերի և նման բնագրերի ավելի մեղմ, սահուն և մեղեդիատիպ ոլորուն երաժշտական կատարմամբ: Հայկական հոգևոր թվերգի սաղմոսատիպ տեսակին կապված հիմնական ձևերը վերլուծել է Կոմիտասը (տե՛ս նրա՝ Die armenische Kirchenmusik, Sammelbände der internationalen Musikgesellschaft, Lpz. Jahrgang 1, Heft 1, 1899): Կոմիտասը մտադրված էր շարունակել և լրացնել սկսված ուսումնասիրությունը, բայց դա նրան չվիճակվեց:

Պատմողական ասերգի մասին մեր պատկերացումները սլետք է կազմվեն՝ հարանց վարքերի, հայտնավորքների և, մասնավորապես, գանձարանների հետազոտության, ավելի ստույգ՝ գանձերի կատարողական հին, X—XIII դարերին վերաբերող ավանդույթների ուսումնասիրության հիման վրա:

28 Դրանցից են՝ «սուղն» ու «երկարը», «շեշտը», «բուֆը», «փուշն» ու «խունճը»:

29 Դրանք գոյացնող խաղադրերից զլխավորներն են՝ «փաթուփը», «բենկորճն» ու «վերնախաղը», «բենկորճն» ու «ներքնախաղը», «զարկը», «պարոյկը», «երկարը»: Գանձերի՝ պատմողական ասերգի միջոցներով կատարման կերպն այս կամ այն շափով կապվում է սաղմոսա-



Հետագայում, և հատկապես, XIII—XIV դարերի ընթացքում, գանձերի երաժշտական բաղադրիչը մեղեդիապես զգալի հարստացել է, առանձին դեպքերում (կամ տվյալ գանձի տարրեր հատվածներում) ձեռք բերելով անգամ տաղային արվեստին հատուկ հատկանիշներ<sup>30</sup>: Դրանց խազավորման հին ավանդույթները, սակայն, ինչ-ինչ պատճառներով, ընդհանուր առմամբ էական փոփոխություններ գրեթե չեն կրել: Նման իրավիճակում, տարրեր հեղինակներ, երաժիշտ գործիչներ, գրիչներ և ստացիչներ ձեռագրերում ուղղակի գրավոր ցուցմունքներ են թողել այն մասին, որ տվյալ գանձը, և կամ նույնիսկ գանձերն առհասարակ՝ անհրաժեշտ է երգելով («եղանակաւոր ձայնի») կատարել<sup>31</sup>:

Վերջինս, սակայն, տվյալ դեպքում շատ ընդհանուր կարգի մի ցուցմունք է: Որովհետև եթե գանձերի կատարման սճն էր փոխվել առհասարակ, թեկուզ մեղեդիապես զգալի աչքի ընկնող պատմողական ասերգից անցնելով ուղղակի վիպաբնարական լայնաշունչ երգային տիպի, այսինքն՝ նորակերտ առանձին ձայնեղանակների հիման վրա հնչող երգեցողության (իսկ դա այդպես էլ եղել է ճիշտ), ապա անհրաժեշտ էր տարբերել և դասակարգել, որևէ կերպ կարգավորել այդ ձայնեղանակները: Եվ իրոք, այդպիսի շարժում եղել է թե՛ Կիլիկիայում և թե՛ Կենտրոնական Հայաստանում, մասնավորապես, Գլաձորի, Տաթևի և Մեծոփի կրթական օջախներում: Դա ապացուցող նյութերից մի քանիսը մեզ հասել են թեև հետագա դարերում գաղափարված ձեռագրերի միջոցով, սակայն ամեն ինչից երևում է, որ դրանք ստեղծված պիտի լինեին ուշ միջնադարի պատմաշրջանից առաջ:

Նախ՝ անդրադառնանք 1673-ին Հովհաննավանքում գաղափարված ժողովածուում հանդիպող մի նյութի: Խորագիրն է՝ «Գանձերու գոյն այս է»: «Գոյն» այստեղ և նման կապակցություններում երաժշտական որակ, այսինքն՝

տիպ եղանակավորումների արվեստին, և, որպես այդպիսին, իսպառ շքացած երևույթ չէ: Ն. Տնտեսյանը՝ Շարական Չայնազրեալ ժողովածուի վերջում (Իսթանբուլ, 1934, էջ 770—776), և Ն. Քաշճյանը՝ Չայնազրեալ Պատարագի հավելվածում (Վաղարշապատ, 1878, էջ 206—223), ի լրացումն արդեն ընդգրկված ծավալուն նյութերի, ղետեղել են նաև Զրօր՝Նեազ և Ոսնվայի կարգերի իրենց հայտնի եղանակները (մի-երկու այլ տաղերի հետ միասին): Այդ կարգերը երկու երաժիշտների իրազործած բավական մտախի ձայնադրություններում բացվում են համապատասխան եղանակավոր քարտզներով: Դրանցից մեկն է՝ Հովհաննես Երզնկացու գրչին պատկանող Զրօր՝Նեազ ԳԿ միջակ «Յամենայն ժամ օր՛նեմք» կտորը (տների՝ «Յոհաննիսի երգ» ծայրակապով), մյուսը՝ Ոսնվայի ԳԿ (զարտուղի կիսահանգաձևով) միջակ «Աստուած մեծ և սքանչելագործ» ստեղծագործությունը, որի հեղինակային պատկանելությունը պարզելի է դեռևս: Արդ, իրենց ձայնեղանակներով հանկակից այս քարտզները, կշռույթով և հյուսվածքով էլ նմանատիպ են, ներկայացնում են սաղմոսատիպ կտորներ, որով անպայման մի մտավոր գաղափար են տալիս գանձերի պատմողական ասերգային կատարման հին ավանդույթների մասին:

30 Դա երևում է իրենց մեղեդիներով հանդերձ պահպանված մի քանի գանձերի (այդ թվում, օրինակ, Մխիթար Այրիվաննցու «Միրտ իմ սասանի» նշանավոր գանձի) երաժշտական բաղադրիչի կառուցվածքից, հյուսվածքից և առհասարակ ոճական առանձնահատկություններից:

31 Տե՛ս, օրինակ, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5521, էջ 6ա (ցանկից հետո ղետեղված՝ Մինասենց Թումայի հիշատակարանը), էջ 80ա և 365բ (լուսանցարությունները), նաև ձեռ. № 2736, էջ 11 (ցանկից հետո բերված ոտանավորը), էջ 20 (ոտանավոր-լուսանցարությունը), այլև նման լուսանցարություններ՝ ձեռագրի 36, 44, 48, 99, 108, 141, 158 և 168 էջերում:

ձայնեղանակ է նշանակում<sup>32</sup>: Չեռագրում մեզ հետաքրքրող այս նյութը, որ 10—11 էջ է զբաղեցնում<sup>33</sup>, բաժանված է երկու մասի. շորս «վանկ»-անի գանձերի «գոյն»-եր (1—8 գրական բնագրերի, որպես յուրակերտ ութ-ձայնի հենարանների օրինակներով) և երեք «վանկ»-անի գանձերի «գոյն»-եր (1—10 գրական բնագրերի, որպես, ասենք, մի նոր տեսակ ութ-ձայն և երկու ստեղի<sup>34</sup> ցուցանող հենարանների օրինակներով):

Պետք է ասել՝ «վանկ» խոսքը գրաբարում ևս մի քանի առումներ է ունեցել: Բացի սովորական (քերականական) իմաստից, տարբեր կապակցությունների մեջ այն ձևը է բերում ձայնի (հնչյունի), այլև եղանակի ու ձայնեղանակի նշանակություն<sup>35</sup>: «Վանկը» նաև բարդ խաղաղներից մեկի անվանումն է<sup>36</sup>, խաղաղի, որ ցույց է տալիս մեկից ավելի հնչյուններից կազմված մեղեդիական պտույտ:

Մեզ զբաղեցնող ձեռագրական նյութում «վանկ» խոսքն օգտագործված է տաղաչափական ոտքի իմաստով: Դա հստակ երևում է ձեռագրում բերված օրինակներից: Այսպես՝ շորս «վանկ»-անի գանձերի ութ օրինակներում էլ տողերն ունեն քառանդամանի կառուցվածք, երկրորդ անդամից հետո փոքր դադարով (որ ցույց է տրված միջակետով) և չորրորդ անդամի վերջին վանկի հետ զուգորդվող հանգաձևով (ցույց է տրվում «երկար» խաղաղով ու վերջակետով): Ահա (անդամներն ընդհանրապես բաղկացած են շորս կամ հինգ սովորական վանկերից) .

Խընդութեան ձայն բարբառ աւետեաց. այսօր ծագեաց աշխարհի հընչեա՛ց:

Համապատասխանաբար, երեք «վանկ»-անի տաս օրինակներն էլ եռանդամանի տողերով են.

Բարձրեալ անքննին բնաւից լըրութիւն բաւականութի՛ւն:  
Որ ևս պարզութիւն լուսափայլութիւն և անմահութի՛ւն:

Անշուշտ, դիտարկվող ձեռագրական հատվածն ավելի օգտակար կլիներ, եթե գրչի բերած գրական բնագրերը խաղաղովորված լինեին: Նման մի գրվածք,

<sup>32</sup> Վաղուց բերել էինք Շնորհալու «Յիսուս որդի» ողբերգության տարբեր հատվածների միջնադարյան եղանակավորումներին վերաբերող հետևյալ հին, բնորոշ տեղեկությունը. «Յիսուս որդի է. ժբ ձայն, գուն և մուգամ, էզկու և հաւայ ունի» և այլն, ուր բոլոր խոսքերը (բնիկ հայկական թե՛ ընդհանուր արևելյան) եղանակ և ձայնեղանակ են նշանակում: Տե՛ս մեր աշխատությունը՝ «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ», նշվ. հրատ. ը, էջ 32: Տե՛ս նաև՝ նոր Բաղիբը հայկազեան լեզուի (հ. Ա, էջ 571), ուր «զայս գոյն օրինակ» դարձվածքի համազորներն են՝ «նո՛ւ շր՛ստո՛ւ շո՛նտո՛ւ. այլև hoc modo...»:

<sup>33</sup> Մատենադարան, ձևո. № 541, էջ 164բ—167բ: Այստեղ անսպասելի ընդհատվում է ձեռագրական ինքնուրույն հատվածը և, եփրեմ Խորենի մի աղոթքից հետո, շարունակվում 201բ—203բ էջերում: Գրիչը բացատրել է (167բ). «Ով որ հանդիպիք այսմ գանձի գոյներոյս, մի մեղադրէք. զերայ այս իզթերս պարապ էր, գրեցի. կէսն այս աղօթքոյ յեան է»:

<sup>34</sup> Չեռագրում երեք «վանկ»-անի հինգերորդ «գոյն»-ը սխալմամբ «Չորրորդ գոյն» նշումն ունի, որով մինչև վերջ ինք «գոյն» է ստացվում: Առհասարակ ինն էլ կարող էր եղած լինել: Բայց, ամենայն հավանականությամբ, սխալմունքի արդյունք է, քանի որ «Չորրորդ գոյն» նշումը կրկնվում է անստեղի:

<sup>35</sup> «Նոր Բաղիբը», հ. Բ, էջ 782:

<sup>36</sup> Տե՛ս մեր հոդվածը՝ Հիմնական խաղերի միակցությունը, «Բանքեր Մատենադարանի», հ. 9, 1969, էջ 104, 114, 121:

և խաղերով, մեզ հանդիպել է ուշ միջնադարյան այլ ձեռագրում<sup>37</sup>, որից ավելի հստակ է երևում, թե ութ-ձայնի գանձարանային հատվածին վերաբերող շահեկան նյութը գալիս է XIV դարից, և կամ, առավելն՝ 15-րդ հարյուրամյակի առաջին տասնամյակներից: Այստեղ ևս փաստորեն տեսական կարևոր հարց շոշափող հատվածը բաղկացած է երկու մասից: Առաջինը վերնագրված է «Գանձի գուներ Գրիգորի» և ունի լոկ մեկ ենթախորագիր՝ «Գ. վանկէն»: Հետևում են եռանդամ գրական տողեր<sup>38</sup>, բավականին խիտ խաղավորված: Բայց այս դեպքում էլ բացակայում է բերված օրինակների անշատումն ու համարակալումն ըստ «գոյն»-երի: Այսուհանդերձ, դատելով խաղավորումներից, կարող ենք հաստատել, որ այստեղ ևս կամ տարբեր ձայնեղանակներ են, և կամ մեկ հիմնական ձայնեղանակի շուրջ խմբված և նրան ստորադաս ուրույն կազմավորումներ: Ի վերջո նշենք, որ ձեռագրական քննարկվող նյութի առաջին մասի վերնագրում հիշատակված Գրիգորն այլ ոք չի կարող լինել, քան Գրիգոր Մերենց Խլաթեցին: Նա, որ այնքան մեծ վաստակ ունի գանձարանային նյութերի (այդ թվում և Մխիթար Այրիվանեցու գանձերի) հավաքման, մեկտեղման և առհասարակ Գանձարան ժողովածուի նոր խմբագրութայան ստեղծման մեջ<sup>39</sup>: Միայն պետք է դիտակցել, որ այդ աշխատանքը ենթադրել է նաև մեկտեղված կոթողների երաժշտական բաղադրիչի խմբագրութայունն ու խաղագրութայունը, և՛ անհրաժեշտորեն՝ ձայնեղանակների կամ «գոյն»-երի (երաժշտական որակների) կարգավորութայունը<sup>40</sup>:

Երկրորդ մասը վերնագրված է՝ «Գանձ ի իտալատուր գունոյ»: Հետո գալիս է նորեն լոկ մեկ ենթավերնագիր՝ «Բ. վանկէն», որին հետևում են երկանդամ գրական տողեր<sup>41</sup>, դարձյալ խաղագրված: Եվ սակայն այստեղ էլ հստակ չէ,

37 Մատենադարան, ձեռ. № 2190, էջ 133ա—136ա («Գանձի գուներ...»):

38 Ինչպես՝

Երգս յաւթական երգեմք բանական երիցդ միական:

Այլ ձեռագրերից հայտնի է որպես Մխիթար Այրիվանեցու գանձը:

Հմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 424, էջ 66բ, 425, էջ 311, 474, էջ 103բ և այլն:

39 Գրիգոր Մերենց Խլաթեցու երաժշտական վաստակի մասին տե՛ս ՀՍՀ, հ. 3, 1977, էջ 216:

40 Ի դեպ, դա հետևում է XV դարի առաջին կեսի նշանավոր գրիչ և երաժիշտ-խաղագետ Մինասենց Քումայի թողած մի հիշատակարանի հետևյալ հատվածից, ուր նա թվելով Գանձարան ժողովածուի հարստացմանն ու ձևավորմանը նպաստած մի շարք հեղինակներ, ավելացնում է. «Իսկ զկնի սոցա եղեալ ամն վարդապետ Գրիգոր անուն Ղըլաթեցի, ըստ նախնեացն Մերենց կոչեցեալ, յոյժ հանձարեղ և բանիրուն և առատամիտ, ոչինչ նրազ զոլով քան զյառաջ լիչեցեալ վարդապետան, այլ գերազանց գտաւ քան զնսսին: Սորա առեալ զառաջնոց երգեալ գանձարանսն և յամենեցունցն զհամեղաբանսն և զքաղցրեղանական հաւաքեալ՝ սրբազրեաց մեծաւ աշխատութեամբ և ի յոսն ևհան: Թէ պակաս բան կայր ի վանկան՝ յունչոյց լինեինէ, և թե աւելի բան կայր, որ հատակատար բերէր զվանկան՝ քերեալ ի բաց ևհան: Եւ յաւել լինեինէ բազում գանձս և տաղս համեղաբանս և քաղցրեղանակս տէրունական տանից և ամենայն սրբոց, ի վերայ անուան իւրոյ զըծագրելով զտրեսառաջս գանձիցն» և այլն: Լ. Խաչիկյան, Փն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 583:

41 Թեև ավելի դեպքում հնարավոր է նաև, որ տողերի այդ «երկանդամութայունը» ավելի երաժշտական նկատառումներ ենթադրած լինի, քան գրական: Դրան ապացույց են նույնիսկ առաջին տողերը, ուր վերջակետը շորթորդ անդամից հետո է.

Խորթ անքրննին անճառ անհասին.

Հօր արարչին և մարդասիրին:

Ճիշտ է, հաջորդ օրինակներում վերջակետով ավարտվում են մի ամբողջ շարք երկանդամ տողեր: Բայց միշտ չէ, որ դա համոզում է զուտ գրական-տաղաչափական տեսակետով:

թե ինչպես են հարաբերում իրար խազազրված տողերի տարբեր խմբերի եղանակները<sup>42</sup>: Ինչ վերաբերում է վերնագրում հիշատակված խաչատուրին, ապա նա կամ Տարոնեցին է, և կամ Կեչառեցին<sup>43</sup>, որով՝ բոլոր գեպքերում՝ դարգացած ավատատիրության շրջանի հեղինակ:

Այս նյութերի նախնական բնութսյան ընթացքում ծագող կարևորագույն հարցերից մեկն էլ այն է, թե Գանձարան ժողովածուին կապված եղանակների կարգավորությունը տարածված պիտի չլինե՞ր նաև, ու առաջին հերթին, տաղերի, մեղեդիների, հորդորակների վրա: Եվ ահա, մեզ հանդիպեց մի նյութ ևս, որ վերաբերում է երաժշտականորեն ամենաբարդ միաձայնային կոթողներին՝ մեղեդիներին: Այն գրադեցնում է 1408 թ. Տիպնա վանքում (որին կապված է եղել Գրիգոր Խլաթեցին) գաղափարված գանձարանի 7—8 էջերը<sup>44</sup>: Ընդհանուր վերնագիր չունի, այլ՝ շորս առանձին խորագրեր, որոնց օգնությամբ ցույց են տրվում մեղեդիների շորս խմբեր, հետևյալ կերպ. «Մեղեթիքս մի գոյն են» (բերվում են 7—8 խազազրված օրինակներ), այնուհետև՝ «Մեղեթիներս մի գոյն են» (10 օրինակ), «Ուրիշ գոյն է» (7 օրինակ) և «այլ խմն գոյն է» (շուրջ 15 օրինակ):

Ավելի մանրամասն դատողություններ հնարավոր կլինի անել լրացուցիչ այլ տվյալների հայտնաբերումից հետո: Բայց և այն, ինչ ասվեց վերը, հիմք է տալիս հաստատելու, որ միջին դարերում հայկական ութ-ձայնի ժամագրքային, շարակնոցային ու խազազրված վերաբերող հատվածների շարքում, բնականաբար, ունեցել ենք նաև մի գանձարանային հատված, որը դեռևս անհրաժեշտ է մինչև վերջ երևակել և բնութագրել: Այդ հատվածը գործնականում կենցաղավարել է X—XII դարերից, իսկ միջնադարյան երաժշտատեսական կարգի դրույթներում, ասույթներում, պատառիկներում և այլն՝ XII—XIII դարերից, ձևավորման ընթացքը ավարտելով 15-րդ հարյուրամյակի առաջին կեսին: Դրան նպաստել են Կիլիկիայի և Կենտրոնական Հայաստանի ուսումնակրթական մի շարք կենտրոններ, այդ թվում՝ Գլաձորի, Տաթևի և Մեծոփա վանքերի բարձրագույն տիպի դպրոցները:

Հայկական ութ-ձայնի կապակցությամբ, հատկապես Գլաձորում խմբված մտքերի մասին մեր գիտանքը փոքր-ինչ լրացավ բոլորովին վերջերս: Ընդհատ է, դա հետո է մեզ գոհացնելուց, և սակայն, գոնև ընդհանուր առմամբ հաստատվում է այն փաստը, որ Տաթևում և Մեծոփում արվող երաժշտատեսական ընդհանրացումներն սկսվել էին դեռևս Գլաձորում: Մասնավորապես ձայնեղանակների վերաբերությամբ Գլաձորում մի անգամ ևս անդրադարձել են դրանց երկնային ու աստվածաշնչային ծագման Արեոպագիտյան գաղափարներին<sup>45</sup>, նախապատրաստելով հետագա զուտ տեսական դիտումներն ու նաև գործնական նպատակ հետապնդող դասակարգումները:


42 Արևելքում դեռևս միջին դարերում կենցաղավարել են երաժշտա-բանաստեղծական ձևվեր, որոնցում նույնիսկ միևնույն բառնավորի յուրաքանչյուր տունը զուգորդվել է տարբեր ձայնեղանակի հետ:

43 Հմմտ. մեր հոդվածը՝ Հաղարծնի վանքը և խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու (արվեստագիտություն), № 2, Երևան, 1976, էջ 192—193:

44 Մասենադարան, ձև. № 3540, էջ 5բ—8ա:

45 Հիշենք, որ դրանք մեր մեջ տարածվել էին VII դարից:

Ամփոփելով, վերը բնարկված № 2190 և 3540 ձևագրերից երկուական էջ հանձնում ենք ընթերցողների ուշադրությանը:



Ձև. 3540, էջ 5ր

Թարմիչարիէ Բարմիչարիէ Թարմիչարիէ  
 ընդ Երևանի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի

Երեւանի Կոմիտասի

Գրեցաւ Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի

Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի  
 Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի Կոմիտասի

Սառնի գրաներ. ֆ ր գրի. ֆ. վանկի.  
 Քոյի աների. ֆ ոյ ին անուցի.  
 ֆ ոյի ան հասի. Կից արարի.  
 հանուր ստեղծողի. երկնի և երկրի.  
 Երբ յայն ժամանակ. երգեցի ին  
 հանաձան երկրորդ միակա՛ն. Ինչպիսի  
 հասնի կիսան. ձևանց ձևանկան.  
 ևսն կերպարան. Չի զարարան.  
 կան զայն ըն պատմություն. պատկեր  
 ջի. բնա կան. անկան կեցող ևս զան  
 սոք և արարարացո. յայն սք կիրան  
 կի. անուրս տրոնի տրոնի անուրս.  
 Ինչպիսի ջան կան. զարարան  
 ոք յայնի. տրեցեցի նախկի.  
 և ձևանկից մահից տեղի. ուրեք  
 Իմանմի. գործով զ հանելի.  
 հանա կողի օծել. և որև ընկել զօծե  
 նիբանկան իւրոյն ի կանանց. և օծան  
 արեանք ի ինչի. և օծել զմեզ երե  
 ի գործի. այսքն յեղանկ օծել ստիպո  
 Ար յսքն զայն ստե ԳԳԻ.

Տարժիւն յարմարոյ որաւ թիւն է  
 զանապիւն հիւն նորոգմանք քոյիւն  
 հանէր թիւն կեանս =

Աջոյն անեղիք ազկիւն հրգօթի  
 հօրն երկնաւի շոյոյն յն յաւճիւն  
 մարտ Լեթադոն հիւն ճշնօղ տիրոհի =

Անքայտ երկնայիւն անեղանման  
 յն ուրիւ յաւճիւն Քանայ եղիւ  
 մարտիւ յարգանդ մօր քոյիւն մարտի  
 ամ կոտակիւն =

Որ եւոյ ահաւոր տն Լազորաւոր  
 Լեռնաւանտն Տորքոս յաւանտն թ  
 Ղեթ կամաւոր յերկեր առաւաւտն =

Քոյիւն անեղիւ քոյիւն անմահի  
 քոյիւն անհասի = Էրեց արարչե  
 հանտարց անեղօղի երկնի Լեռնայի =

Քանա ի իւն շաւտն քանայ Քանայի  
 Իտոյն անքոյիւն անմարտ ան  
 հասիւն հօր արարչիւն Լեմարտ ան  
 սիւնիւն = Երեկան տարեւոյ զգոյն



Н. К. ТАГМИЗЯН

## О ГАНДЗАРАННОМ РАЗДЕЛЕ АРМЯНСКОГО ВОСЬМИГЛАСИЯ

## Резюме

Армянское восьмигласие имеет несколько разделов, сформировавшихся в процессе длительного исторического развития и связанных с главными певческими книгами средневековья.

Нам приходилось, по разным поводам, охарактеризовать разделы армянского восьмигласия, относящиеся к пенню: а) погласиц, б) псалмов и других библейских песнопений, собранных в старинном Псалтыре—часослове, в) оригинальных духовных песен, заключенных в армянском Гимнарии (Шаракноце), и г) песен мелизматического стиля и песнопений литургии, представленных в певческой книге «Манрусум».

В настоящей статье мы публикуем средневековые рукописные материалы, показывающие, что армянское восьмигласие (в эпоху развитого феодализма понимавшееся в весьма широком смысле) обогатилось еще одним, пятым разделом, связанным с певческой книгой праздничных песнопений «Гандзаран».

N. K. TAHMIZIAN

## LA PARTIE CONCERNANT LE RECUEIL "GANDZARAN" DE L'OKTOECHOS ARMENIEN

## [Résumé]

Le système des huit modes arménien comporte plusieurs parties, fruits d'une longue évolution historique, liés aux principaux livres liturgiques du Moyen Age.

A diverses reprises, nous avons eu l'occasion de caractériser les parties se rapportant au chant de l'oktoéchos arménien. Ce sont les parties: a) des formules d'intonation, b) des psaumes et des autres chants de la Bible, réunis dans le vieux Psautier-Bréviaire, c) des chants spirituels originaux réunis dans l'Hymnaire arménien (Charaknotz) et d) des chants de style mélismatique et des chants de la Liturgie, présentés dans le livre Manroussoum.

Dans le présent article, nous publions des documents médiévaux manuscrits montrant que l'oktoéchos arménien (qui à l'époque du féodalisme avancé avait une signification assez vaste) s'est enrichi d'une cinquième partie liée au Gandzaran, livre des chants de fête.

ՓԱՅՈՒԱԿ ԱՆԹԱՊՅԱՆ

ՀԱՅ ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՋ

Հնդհանուր քրիստոնեական, այդ թվում և հայ հին մատենագրության մեջ առավել լայն ընդգրկում ու կշիռ ունեցող բնագավառներից մեկը մեկնարանական գրականությունն է:

Միջնադարյան հայ մեկնարանական գրականությունը ընդհանուր քրիստոնեական համարնույթ գրականության հետ սերտ առնչություններ ունի և մի շարք հիմնական հատկանիշներով նրա արժեքավոր բաղադրիչներից է: Հայ հին մատենագրության մեջ այն իր գիտական, բնափիլիսոփայական, պատմական, սոցիալական, իրավական, հասարակական-գաղափարական բովանդակությամբ միանգամայն հարուստ և լիարժեք բնագավառ է: Նվազ նշանակալից չեն այնտեղ ընդգրկված ազգագրական, բանահյուսական, բանասիրական, լեզվագիտական, գրական-գեղարվեստական, մատենագիտական, աղբյուրագիտական, բնագրագիտական և մշակութային նյութերը: Թերևս մեկնությունների մեջ են առավելագույն չափով նկատառելի դասնում հայ և այլալիզո քրիստոնեական գրական առնչությունները. կրթեմն միայն նրանցում են սյահսպանվել մանավանդ ասորական ու բյուզանդական գրական հուշարձաններից առանձին հատվածներ...:

Մեր օրերում գրականության, պատմության և փիլիսոփայության սովետահայ անվանի մասնագետներից ոմանք միանգամայն լուրջ կարևորություն և բարձր գնահատական են տվել հայ մեկնարանական գրականության փաստագրական-ճանաչողական և գիտական-գաղափարական արժանիքներին ու քանիցս ընդգծել նրանց ուսումնասիրման անհրաժեշտությունը: Այս առնչությամբ հարկ է նշել նախ՝ Ն. Տեր-Մինասյանի և Մ. Աբեղյանի անունները, որոնք թեև հակիրճ, բայց կարևոր ընդհանրացումներ են արել<sup>1</sup>: Գ. Հակոբյանը համեմատաբար քիչ ավելի է առնչվել հայ մեկնություններին և օգտակար նկատումներ արել նրանց վերաբերյալ<sup>2</sup>:

Մեկնությունների մասին գիտական գնահատանքի առավել հիմնավոր խոսք ասել է Լ. Խաչիկյանը մի շարք առիթներով: Նրա առաջին ուսումնասիրությունը նվիրված է եղել այս բնագավառին<sup>3</sup>: Նրա բազմաթիվ արժեքավոր գիտողություններից արժև ծանոթանալ գեթ մի-երկուսին: Այսպես. անդրադառ-

1 Ն. Տեր-Մինասյան, Հնդհանուր եկեղեցու պատմություն, էջմիածին, 1912, էջ 148—149; Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, Երևեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 110—111:

2 Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 267—269, 286:

3 Լ. Խաչիկյան, Եզիչի Աբարածոց Մեկնությունը, Երևան, 1945 (անտիպ):

նալով «Մատթեոսի մեկնութեան»-ը (Ներսես Շնորհալի—Հովհաննես Մործո-  
րեցի—Փ. Ա.), նա գրում է. «Կյանքի տարրեր բնագավառներից քաղված օրի-  
նակներ պարունակելով, օգտակար նյութ է ընձեռում պատմաբաններին՝  
ուսումնասիրելու ժամանակի սոցիալ-տնտեսական այլազան երևույթները»<sup>4</sup>։  
Մի այլ առիթով, Մատթեոս Զուղայեցու գրական վաստակը, այդ թվում՝ նրա  
«Քննութիւն Գործոց առաքելոց» մեկնությունը, գնահատելիս, նա ընդհանրաց-  
նում է. «Առանց վարանումի կարելի է ասել, որ մեր հեղինակի մեկնողական  
ուստվածաբանական բովանդակությամբ աշխատություններն ու քարոզ-  
ները շատ ավելի նյութեր են պարունակում աշխատավոր մասսաների կյան-  
քի ու կենցաղի պայմանները ուսումնասիրելու համար, քան մեր նշանավոր  
պատմիչներից շատերի աշխատությունները»<sup>5</sup>։ Վերջապես նա շատ տեղին եզ-  
րակացնում է, որ այդ բնույթի աշխատությունները հրատարակելու ժամա-  
նակը վաղուց հասունացել է և «այդ ճանապարհով միայն հնարավոր կլինի  
մասամբ լրացնել սկզբնաղբյուրների այն խորը պակասը, որ զգում է յուրա-  
քանչյուր պատմաբան իր աշխատանքի հենց առաջին քաջափոխին, երբ փոր-  
ձում է ձևնարկել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի և սոցիալ-  
տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման գործին»<sup>6</sup>։

Ս. Արևշատյանը ի մասնավորի Եղիշեի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տա-  
թևացու փիլիսոփայական հայացքները բացահայտելիս, հիմնվում է նաև  
նրանց մեկնությունների վրա և բարձր գնահատական տալիս դրանց<sup>7</sup>։ Գ. Խրո-  
լոպյանը և Գ. Գրիգորյանը ևս կարևոր դիտարկումներ են անում<sup>8</sup>։ Ուշադրու-  
թյան արժանի են և Սեր-Պետրոսյանի, Ե. Պետրոսյանի խոստումնալից աշ-  
խատանքներն այս առնչությամբ<sup>9</sup>։

Կարծում ենք, անտարակուսելի է հայ մեկնաբանական ժառանգության  
համակողմանի և խոր ուսումնասիրման անհրաժեշտությունը հատկապես գի-  
տական-տեսական և պատմամշակութային նեղ մասնագիտական տեսան-  
կյունից։

<sup>4</sup> Լ. Խաչիկյան, Արտաղի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը, «Բանբեր Մա-  
տենագարանի», 1973, № 11, էջ 179։

<sup>5</sup> Լ. Խաչիկյան, Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «Բանբեր Մատե-  
նագարանի», 1956, № 3, էջ 75։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 84։

<sup>7</sup> Տե՛ս մանրամասն՝ Ս. Արևշատյան, Формирование философской науки в древней  
Армении (V—VI вв.), Ереван, 1973. Его же, Философские взгляды Григора Татеваци,  
Ереван, 1957.

<sup>8</sup> Գ. Խրոլոպյան, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Երևան, 1978, էջ  
285—286։ Գ. Գրիգորյան, Փիլոն Աղեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները,  
«Բանբեր Մատենագարանի», 1960, № 5, էջ 95—115։

<sup>9</sup> Տե՛ս և Սեր-Պետրոսյան, Եվսեբիոս Եմեսացու «Ութամասյանի մեկնությունը» և քարոզ-  
մանության տեսության հարցերը Ե դարի հայ մատենագրության մեջ, «Պատմա-բանասիրական  
հանդես», 1982, № 4, էջ 56—68։ Նույնի՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն քարոզ-  
մանության նախօրինակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 2—3, էջ 264—268։  
Նույնի՝ Փիլոն Աղեքսանդրացի, Մեկնութիւն Մենզոց, Ներածութիւն, քարոզմանութիւն և ծա-  
նոթագրութիւններ Շարլ Մէրսիէի, Փարիզ, 1979։ Տե՛ս նաև՝ Ե. Պետրոսյանի մի քանի հոդ-  
վածներն ու հրատարակած մեկնաբանական բնագրերը՝ «էջմիածին», 1973, Թ, էջ 14—20,  
ԺԱ, էջ 43—48, 1979, Բ, էջ 21—24, 1982, Ա, էջ 35—41, Բ, էջ 37—44, Գ, էջ 23—32, Ը—Ք,  
էջ 45—52։

Այսուհանդերձ, հայ մեկնաբանական գրականությունը հայագիտության մեջ պատշաճ ուշադրության չի արժանացել, թեկուզ և եղել են փորձեր, և այն ըստ էության մնում է շուտամոռացիվ:

Մենք այժմ հնարավորություն ու նպատակ չունենք ստանձնելու այդ աշխատանքը: Մերը կլինի միայն մի մասնակի համեստ փորձ, պատմատեսական բնույթի մի նախադրյալ ակնարկ: Այս առումով հարկ ենք համարում մեզ ընձեռված հնարավորություններով այստեղ տալ պատմատեսական համառոտ, բայց փոքրիշատե ամբողջական մի համադրում՝ ասելու ամենաանհրաժեշտը բնդհանուր բրիտանական մեկնաբանական գրականության մի բանի խընդիրների մասին:

\* \* \*

Խոսքի, մտքի մեկնությունը կամ մեկնաբանությունը, բանավոր թե գրավոր, հայտնի է, որ միայն բրիտանական բնդհանուր գրականությանը հատուկ երևույթ չէ: Մեր թվարկությունից, հետևաբար և բրիտանությունից, դեռևս տարիներ ու դարեր առաջ մարդը ջանացել է հասկանալ ու բացատրել բնության և կյանքի երևույթները, ստեղծել ու մեկնել առասպելներ, զրույցներ, առակներ, խորհրդանշական պատկերներ և այլն: Ժողովուրդների բանահյուսական վաղագույն ստեղծագործությունները մեկնաբանական ելակետով ու տարրերով հազեցած այդ կարգի ջանքեր են: Դրանք ըստ էության իմաստասիրական որոշակի բնույթ ու մակարդակ են ստացել հնագույն քաղաքակրթության տեղ ժողովուրդների՝ առավելապես եգիպտական, ասորա-բաբելական, հնդկական, չինական, հրեական, հունական դիցաբանության մեջ:

Մեկնաբանությունը դարերի ընթացքում աստիճանաբար ուրույնանում է, դառնում մտածողության որոշակի ձև ստացած բացահայտման միջոց ու մեթոդ և գրի առնվում: Այս իմաստով մեկնաբանության առաջին համեմատաբար գտված գրականություններից են հունական դիցաբանության, մանավանդ Հոմերոսի «Իլիականի», «Ոդիսականի» և Հեսիոդոսի, այլ հույն հեղինակների առանձին գործերն ու մեկնությունները: Այս առումով հատկանշական են մասնավորաբար Հեսիոդոսի, Թալեսի, Թևոգինեսի, Սոլոնի, Եվրիպիդեսի, Պլուտարքոսի, Պղատոնի, Արիստոտելի երկերը: Այս կարգի հետաքրքիր հուշարձան է «Թևոգոնիան» («Աստվածների ծագումը»), որի առաջին կազմողն ու համակարգողը համարվում է Հեսիոդոսը (VI—VII դդ., մ. թ. ա.)<sup>10</sup>: Այստեղ հանգամանորեն մեկնաբանվում են դիցաբանական կերպարների՝ հին հունական աստվածներ Գեյայի, Քաոսի, էրոսի, Ուռանի, Կրոնոսի, Զևսի և մյուսների ծագումնաբանությունը, կոչումը, պաշտոնը, մարդկանց հետ ունեցած փոխհարաբերության, իսպառազետ արարքների, ինչ-ինչ «աստվածային գաղտնիքների» տրամաբանական պարզաբանումն ու պատճառաբանությունը:

Հունական փիլիսոփայության ռահվիրաներից և տարերային մատերիալիզմի հիմնադիր Թալեսը ձեռնարկեց մեկնաբանական բնույթի աշխատանքանդրադարձավ ու շանաց բացատրել հունական դիցաբանության, Հոմերոսի հանրահայտ երկերի, Հեսիոդոսի «Թևոգոնիայի» առանձին դրվագները, սյուժետային բարդ տարրերը, աստվածների սխրանքները, այլևայլ առնչակից

<sup>10</sup> The Interpreter's Dictionary of the Bible, vol. I, Nashville-New York, 1962, p. 82.

հարցեր: Շատ դեպքերում նա թեև մերժել է բնության և բնական ուժերի դիցարանական անձնավորումները, հաճախ շատ անհարիր շափազանցումները, սակայն իր փիլիսոփայական զննությունների ու եզրակացությունների համար դիմել է նաև դիցարանությանը և վերոնշյալ երկերին:

Այս բնույթի աշխատանքներով հանդես են եկել Թեազենես Ռեզիացին (VI դ. մ. թ. ա.) և Կրատես Մալուսցին (II դ. մ. թ. ա.): Յինիկները և մանավանդ վաղ շրջանի (III—II դդ. մ. թ. ա.) ստոիկյան փիլիսոփաները ընդարձակ և կարևոր տեղ են հատկացրել դիցարանական թեմաների մեկնաբանությանը: Նոր պլուտարականներն ևս իրենց աշխատանքներում մերթ կարևոր տեղ են հատկացրել դրան<sup>11</sup>: Ահա թե ինչու հին հունական իրականության մեջ մեկնաբանական բնույթի աշխատանքները այնքան միաձուլվ են եղել փիլիսոփայական երկերին:

Մյուս ժողովուրդների մտավոր մշակույթի պատմության մեջ ևս նկատելի է նման երևույթ, ինչպես ակնարկել ենք քիչ վերը, թեկուզ և ոչ հավասար տարողությամբ: Խնդրո առարկա մեր նյութի համար առանձնապես կարևոր է հրեա ժողովրդի այս բնագավառում թողած ժառանգությունը, որը նախադրյալ հիմք է ծառայել ընդհանուր քրիստոնեական մեկնաբանական գրականության ձևավորման համար:

Մեր թվարկությունից հետո էլ, քրիստոնեության կազմավորման ու ծավալման արշալույսին, մեկնաբանական բնույթի աշխատանքները շարունակվում են նորպղատոնականների և գնոստիկյանների շրջանակներում, որոշակիորեն պատշաճեցվելով արդեն բավարար շափով քրիստոնեություն ներծծած հելլենիստական հասարակական ու գաղափարական միջավայրին: Դրանցից մի բանիսը թարգմանաբար պահպանվել են նաև հայերեն, այդ թվում՝ Պորփյուրի, Պրոկղի, Զենոնի, Սեկունդոսի, Օլիմպիոդորոսի երկերը: Այդպես նաև որոշ քրիստոնյա եկեղեցական հայրեր փորձել են մեկնաբանել առավելապես Պղատոնի, Արիստոտելի, Պորփյուրի փիլիսոփայական երկերը<sup>12</sup>:

Հայ հեղինակները նմանապես տարբեր ժամանակներում հանդես են եկել նաև զուտ իմաստասիրական բնույթի արժեքավոր մեկնություններով<sup>13</sup>:

Եղել են նաև այլ բովանդակությամբ մեկնաբանական աշխատություններ: Դրանցից են այնպիսիները, որոնք բանասիրական, բերականագիտական-գրականագիտական, օրենսգիտական, տոմարագիտական հենք ու բովանդակություն ունեն:

Հայ բանահյուսությունը ևս մի փորձ է բացատրելու բնությունն ու կյանքը՝ իրենց բազմազան խորհուրդներով ու առեղծվածներով: Բայց կա նաև հայ բանահյուսությունը բացատրելու հստակ փորձ, որը շափազանց պերճախոս ու բովանդակալից գրված է հայ մատենագրության մի շարք կարևոր երկերում, հատկապես Մովսես Խորենացու հանձարեղ «Հայոց Պատմութեան» մեջ: Պատմաբանի լիակատար խստապահանջությամբ օժտված լինելով հանդերձ, նա ուրույն և կարևոր տեղ է տալիս բանահյուսությանը, առասպելներին, զրույց-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>12</sup> С. Аревшатян, С. Лалафорян, Философские труды в армянских рукописях, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 394—400, 429, 432:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 402—450:

ներին, որոնք «այլաբանաբար» արտացոլում են տիեզերական երևույթները, կյանքը, պատմությունը, ժողովուրդների և նույնիսկ առանձին անհատների (Արտաշեսի, Արտավազդի, Երվանդի, Տիգրանի, Աթահակի, Սմբատի...) գործունեությունը: Նա չի խորշում հիմնվել դրանց վրա, քննադատաբար «մեկնաբանել» դրանց և ճշմարտությունը քաղել ու զետեղել իր երկի մեջ: Խնդիրն այն է, որ գիտակցել ու կիրառել է «մեկնությունը» բանահյուսության նկատմամբ: Բանահյուսական տարրեր ժանրային միավորներին, «որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թարուցեալ», նա մոտենում է քննադատաբար, որպեսզի ճշգրտի դրանց այլաբանությունը՝ «զայլաբանութիւնն ճշմարտեսցուք»<sup>14</sup>: Թեև նա միակը չէ, որ այդպես է մտածել ու վարվել, բայց մենակ ինքն էլ բավական է հաստատելու, որ հայերը ևս կիրառել են մեկնաբանություն ոչ միայն բնության ու իրենց անցյալի վերաբերյալ բանահյուսությունը իմաստավորելու, այլև խրախուսելու իրենց գաղափարական և ազգային-քաղաքական երազանքները և զարգացնելու իրենց աշխարհայեցողությունը:

Ինչպես հայտնի է, հայ մատենագրությունը հարուստ է մանավանդ քերականագիտական-գրականագիտական բնույթի թարգմանական և ուրույն, սեփական մեկնություններով: Վերջիններիս մեջ պայծառ շողացել է քերականագիտագրականազետ մեկնիչների տեսական ստեղծագործական միտքը<sup>15</sup>:

Այսպես, պարզորոշ է, որ մեկնաբանությունը մարդկանց կյանքի, հոգևոր ու մտավոր գործունեության կարևոր բնագավառներից ու արգասիքներից է: Այնտեղ ամփոփված ու բնություն են առնված մարդու մտածողության, պատկերացումների և աշխարհայեցողության, ինչպես նաև պատմության, արվեստի, գիտության ու մշակույթի վերաբերյալ ստեղծագործական տարրերը՝ սկսած իրենց նախնական, «մանկական» վիճակից մինչև բարձր ընդհանրացման և վերացարկման մակարդակը:

Բուն քրիստոնեական մեկնաբանական գրականությունը այդպիսի մի ծավալուն գրսեորում է: Այն ստեղծվել է Աստվածաշնչի՝ Հին և Նոր կտակարանների գրքերի մեկնության համար ի մասնավորի հրեական, մասամբ նաև՝ Անտիկ փիլիսոփայության և հելլենիստական ավանդույթների ստեղծագործական յուրացմամբ: Դրա նպատակն է եղել այդ գրքերում ամփոփված դրվագների, ծիսական ու կենցաղային պատկերների, նշանների, տարազների, կամ այդ գրքերի առանձին մասերի՝ տեսիլքների, երազների, առակների, աստվածային ու մարգարեական պատգամների, մտքերի, անունների, տերմինների, բառերի մեկնությունը, որն անպայման թելադրված պիտի լինի աստվածային հայտնությունամբ, որպեսզի այդ բոլորը մատչելի ու ըմբռնելի դառնան:

Մեկնություն ասելով ամենանախնական առումով հասկացվում է մեկնաբանվող նյութի կամ մտքի ուղիղ և ծածուկ իմաստի բացահայտում: Մեկնել նշանակել է «Մեկին առնել, ըստ որում պարզ և յայտնի կացուցանել, պարզել զմթութիւն բանից, յայտնաբանել, բացատրել, վերծանել, թարգմանել, խելամուտ առնել»<sup>16</sup>: Բայց դրան ընդունակ ու արժանի են ոչ բոլորը, այլ միայն

14 Սովետսկայա Խորհրդային Գիտությունների հայտնություն, Տիգրիս, 1913, էջ 90, 176, 161—198:

15 Տե՛ս մանրամասն՝ Ի. ԱժՈՒԿ, Двонисий Фракийский и армянские толкователи, Иж., 1915. 2. Քամբազյան, Հայ քննադատություն, Ա, Երևան, 1983:

16 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Կ. Բ., Վենետիկ, 1837, էջ 244:

շնորհալիները, որոնք օժտվում էին աստվածային հայտնությունը, որովհետև մեկնության հիմքում ի վերջո ընկած է Աստու խոսքը և նրանից բխող հոգեվոր-կրոնական անաղարտելի եզրակացությունը: Արմատական ելակետ է սաքրիստոնեական բոլոր հոգևոր և մտավոր ստեղծագործությունների համար: Ըստ այսմ, ամեն մի, կամ՝ ամեն մեկի, բացատրությունն ու բացահայտումը միջնադարյան քրիստոնեական ըմբռնմամբ դեռևս մեկնությունն է:

Քրիստոնյա, այդ թվում և հայ եկեղեցին ոչ բոլորին է վստահում մեկնարանելու իրավունքը:

Հիմնականում վարդապետական կոչման արժանացած բանի-սպասավորներին էր թույլատրվում մեկնելու Հին և Նոր կտակարանների գրքերը, բացահայտելու դրանց աստվածաբանական-կրոնագիտական հիմքը, սահմանելու դրանցից բխող վարդապետական-դավանաբանական բանաձևումները: Տեսական-աստվածաբանական հարցերի պարզաբանման մեջ վճռական կշիռ է ունեցել վարդապետի խոսքը:

Մեկնաբանող բարունի-վարդապետներին կոչում էին «մեկնիչ»: Դա սուկ բնորոշում չէր, այլև մի տեսակ գիտական պատվավոր տիտղոս, ընդգծելով նրա ոչ միայն մեկնիչ լինելու հանգամանքը, այլ նաև բարձր հեղինակությունն ու իմացությունը: Նրանց էր առավելապես վստահվում «նուրբ գրեանց» (հիմնականում՝ կրոնաստվածաբանական գրականություն) մեկնությունը քրիստոնեական, այդ թվում նաև հայ միջնադարյան համալսարաններում: Վերջիններիս մեջ նախապատվությունը ըստ այսմ տրվում էր մեկնիչ-վարդապետներին և նրանց ուսուցումներին: Դրանց ղեկավարները անխտիր մեկնաբանական-վարդապետական երկերի մեկնիչներ են եղել<sup>17</sup>:

Նրանց կոչել են նաև «թարգմանիչ», որովհետև «թարգմանելը» միաժամանակ «մեկնել» է նշանակել<sup>18</sup>: Մինչև որ թարգմանիչը թարգմանվող բառի կամ քառակապակցության իմաստը շճշտի, չբացահայտի, չի կարող այն արտահայտել իր թարգմանած լեզվով. չէ՞ որ նա նախ պարտ է «զմիտսն թարգմանել»<sup>19</sup>:

Ս. Գրոց մեկնաբանությունը պայմանավորված է մի շարք սկզբունքային հարցերով: Անկախ կիրառվելիք մեկնաբանական հղանակից, մեկնիչը իր աշխատանքը պիտի իրագործի ըստ որոշ օղակների: Պետք է նախ ապահով լինել, որ ձեռքի տակ եղած բնագիրը ճշտված է: Դրա համար պիտի օգտվի արդեն իրագործված համեմատական բնագրից, եթե, իհարկե, այդպիսին կա, կամ պիտի ձեռագրերի հիման վրա հաստատի ամենաստույգ ընթերցումը և միայն հետո է, որ պիտի բացահայտի բնագրի իմաստը\*: Այս դեպքում պիտի

<sup>17</sup> A. Vööbus, History of the School of Nisibis. Louvain, 1915, p. 100.

<sup>18</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, 5. Ա, Վենետիկ, 1836, էջ 798: Տե՛ս նաև՝ The Interpreter's Dictionary of the Bible, vol. II, Nashville—New York, 1962, p. 724.

<sup>19</sup> Եվսեբիոս Եմեսացի, Մեկնութիւնք Ութամատեան գրոց Աստուածաշնչին, աշխատասիրութեամբ Է. Վահան վրդ-ի Յովհաննիսեան յնւթտէն Մխիթարայ, Վենետիկ, 1980, էջ 3:

\* Չորհոր նիկեոնոս (XIV դ.) այս տանջությունը շատ հետաքրքիր վկայություն է թողել, ըստ որի հարկավոր է շնախապես ստուգել բնագրի ճշտությունը, ապա՝ համեմատել քաղվածքների մեկնությունը. բնագիրը պետք է ներկայացվի ամբողջությամբ և մեկնաբանելիս չընդհատվի այնպիսի տեղերում, որոնք կարող են փոխել շարադրանքի միտքը. միշտ հարկավոր է նկատի ունենալ կոնտեքստը, որն իր մեջ ամփոփում է հեղինակի կողմից առաջ քաղված այս կամ այն գրույթը: Н. П. Медведев, Византийский гуманизм (XIV—XV вв.), Л., 1976, с. 25.

նաև հաշվի առնել նախընթաց, հատկապես հեղինակավոր, մեկնությունները, հնարավոր սայթաքումներից հեռու մնալու և ընդունելի մեկնություն արարելու համար: Պետք է նկատի ունենալ բնագրի ստեղծման պատմական ժամանակաշրջանն ու միջավայրը, հեղինակը, նպատակը: Ըստ այս բոլորի պետք է բնագրից քաղել ու բացահայտել ոչ սոսկ անմիջական իմաստը, այլև հոգեվոր-բարոյական, կրոնական-աստվածաբանական նշանակությունը, դրա մեջ ամփոփված աստվածային պատգամը: Պետք է անպայման հավատքով ու հավատքի դիրքերից մոտենալ ամեն մի մեկնաբանվող բնագրի, որովհետև այն, ինչ բացատրելի և ընդունելի չէ գիտականորեն կամ, թեկուզ, տրամաբանությունամբ, հավատքով է ընկալվում: Այս դեպքում եկեղեցու պաշտոնական դիրքի ու դավանանքի հաշվառումը շատ կարևոր նշանակություն է ստանում:

Մեկնիչին ըստ այս բոլորի օժանդակում են ոչ միայն կրոնաաստվածաբանական գրականությունը, այլև պատմությունը, բանասիրությունը, լեզվագիտությունը, հնագրությունը, հնագիտությունը, կրոնների պատմությունը, փիլիսոփայությունը, գրականությունը, ազգագրությունը, աշխարհագրական-տեղագրական տվյալները: Ահա թե ինչու մեկնությունների մեջ երբեմն նշված բնագավառներից շատ կարևոր ներդրումներ են մնացել: Գիտական գրականության մեջ գծվել են երկու մեթոդաբանական մայրուղիներ՝ տառացի (կամ՝ բառացի) և այլաբանական, կազմվել երկու հիմնական համակարգ, որոնք տրոհվել են ենթաճյուղերի, պահպանելով իրենց ուրույն կենցաղավարման կերպն ու տարածքը:

Հրեական ավանդները կերպավորվել են հիմնականում տառացի եղանակով, բայց զերծ չեն եղել այլաբանական տարրերից, որոնք բուն քրիստոնեական մեկնությունների մեջ համեմատաբար ավելի պիտի արգասավորվեին:

Հրեաները մեկնաբանում էին բանավոր, ավանդաբար և գրավոր: Բանավորը ավելի պարզ, առտնին, ժողովրդական ավանդությամբ ու մոտիվներով, ժողովրդական ընկալումներին համերաշխ և հիմնականում սինագոգների մեջ քարոզների ու խրատների միջոցով զանազան կրոնաբարոյական հետևությունների հանդեցնող մեկնաբանական եղանակն է, որը «Հագգադա» (բանավոր գրույց, պատում, ավանդություն, սովորույթ, օրենք) հորջորջումն է ստացել<sup>20</sup>: Այս եղանակը, սակայն, համեմատաբար նվազ հարգանք ու պաշտոնականություն է վայելել, կանոնական հանգամանք չի կրել: Այդուամենայնիվ, այն կիրառվել, գոյատևել է և ավանդաբար օրինականացված ճշմարտության ուժ ստացել: Մյուս հիմնական եղանակը գրավորն է, որը ներկայացնում է հրեական մեկնությունների պաշտոնական տեսակետը, բանի որ այն հմուտ ու ամենից առավել վստահելի մեկնիչների գրավոր խոսքն է հանդիսանում և ըստ այդմ ավելի «վավերական» ու «հանձնարարելի» է համարվում և, ամենակարևորը, կանոնականացված է: Այդ եղանակով կատարված մեկնությունները ուղղակի հրեական օրենսգրքի՝ «Թալմուդի» մաս են կազմում: Այն «հալլաբահ» բնորոշումն է ստացել, բառացի՝ այն, ինչով կարելի է քայլել<sup>21</sup>, այսինքն՝ ուղենիշ, որով պետք է առաջնորդվել: Դա ընկած է եղել բարբիական մեկնությունների հիմքում: Քումրանի ձեռագրերի ուսումնասիրությունից ևս պարզվել է, որ կատարվել են գրավոր մեկնություններ, որոնցում շեշտը դրված է եղել

<sup>20</sup> The Interpreter's Dictionary, vol. II, p. 509.

<sup>21</sup> նույն տեղում, էջ 512:



մեկնվող նյութի, առավելապես մարդարևությունների, ավելի ուշ իրական, պատմական փաստ դառնալու հնարավորության վրա<sup>22</sup>: Մարդարևները ոչ թե իրենց, այլ գալիք ժամանակների ճշմարիտ «պատմաբաններն» են, և այս կերպ պետք է նրանց երկերը ընկալվեն ու բացատրվեն:

Ս. Գրոց նկատմամբ տարակույսներ չպետք է լինեն: Բոլոր մեկնությունների հիմնական նպատակներից մեկն էլ հենց այդ է: Աստվածաշնչի ու թալմուդի մեկնաբանական հրեական ավանդույթները ստորաբաժանումներ ունեն, որոնք կիրառվում են նույնպես ճշտված սկզբունքներով ու կանոններով<sup>23</sup>: Այս բոլորը կազմում են մի ընդհանուր համակարգ, որը կարելի է պայմանականորեն կոչել հրեական, քանի որ այն երբեմն սերտորեն առնչվում է նաև անտիկ աշխարհի ու հելլենիստական միջավայրի գրավոր ժառանգության հետ:

Քրիստոնեությունը հրեաներից ժառանգելով Աստվածաշնչի մեկնության հարուստ փորձն ու ժառանգությունը, խորհում էր, որ շատ բան հարկավոր է հասկանալ, բացատրել, ճշտել, հարթել, հաշտեցնել, շաղկապել... որպեսզի աստծո շնչով գրված խոսքերին մարդկությունը հասու լինի ու ճիշտ տնօրինի իր հոգևոր-կրոնական և կենցաղային վարքագիծը: Հին և նոր կտակարանների միջև օրգանական և օրինական կապ չի կարելի հաստատել առանց օժանդակ մեկնությունների, իսկ առանց այդ կենսական կապի քրիստոնեությունը իր կարևորագույն մեկ հիմքից՝ աստվածային կանխորոշ հայտնությունից և փրկչական (մեսիական) աստվածահիմն առաքելությունից կզրկվեր: Նոր կտակարանը Հնի շարունակությունն ու լրումն է, դրանց անշատումը քրիստոնեության համար անհարիր ու անհնարին է<sup>24</sup>:

Քրիստոնեական մեկնաբանությունը ապրել է պատմական դարգացման երեք հիմնական շրջան՝ վաղ միջնադարյան (Հայրաբանական՝ I—V դդ.), միջնադարյան (VI—XV դդ.) և նոր ժամանակներ (XVI—XX դդ.):

Քրիստոնեական նախնական մեկնությունները, որոնք սկզբում կրել են տարերային բնույթ, կրկնում ենք, առավելապես հրեական մեկնաբանական ավանդույթների վրա են ձևավորվել: Հատկապես արմատական խնդիրներում, որոնք սկզբունք, մեթոդ, նպատակ էին դառնալու, այդ հիման վրա էին ուրվագծվել և, հետագայում, աստիճանաբար ընդլայնելով իրենց գործադաշտը, ներընդունելով անտիկ աշխարհի և տվյալ դարաշրջանների համաշխարհային կրոնագիտական և փիլիսոփայական տեսական նվաճումները, միջին-արևելյան ժողովուրդների դիցաբանական, կրոնական պատկերացումները, ավելի հարստացել, մշակվել և ուրույնացել:

Քրիստոնեական մեկնաբանական գրականությունը ծնունդ է առել հենց ավետարաններում և առաքյալների թղթերում: Դրա հիմնադիրը ավանդաբար համարվում է ինքը Քրիստոսը, քրիստոնեության առաջին մեծ տեսաբանը՝ Պողոս Առաքյալը, որը մանավանդ հոռմայեցիներին և կորնթացիներին ուղղած իր թղթերում, հաճախ է մեկնաբանել Հին կտակարանից, ավետարաննե-

<sup>22</sup> The Cambridge History of the Bible, vol. I, Edited by P. R. Ackroyd and C. F. Evans, Cambridge, 1970, p. 386—389.

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 383—385, 388:

<sup>24</sup> J. Guillet, Les exégèses d'Alexandrie et d'Antioche. Conflit ou malentendu, „Recherches de science religieuse“. Tome XXXIV, 1947, (p. 257—302), p. 286.

րից քաղված խոսքեր և ինչ-ինչ իրողություններ<sup>25</sup>: Ավետարաններում Քրիստոսին են վերագրվում մեկնարանական շատ դրվագներ, հատկապես, երբ խոսքը գնում է Հին կտակարանի նկատմամբ նրա վերաբերմունքի, իր «Աստվածորդի» լինելու հանգամանքի, խոսած և մեկնարանած առակների և այս կարգի այլ նյութերի մասին<sup>26</sup>: Ավետարաններում ավետարանիչների խոսքերը երբեմն պարզապես միջանկյալ մեկնություններ են: Հովհաննու «Յայտնութիւնը» այս առումով իր հորինման ժամանակաշրջանի հոգևոր-կրոնական մտահայեցողությունն ու հոգեբանությունը բացահայտող մի ամբողջական մեկնություն է, թեկուզև ինքը առավելագույնս կարոտ է մեկնության: Այստեղ հարկ է կրկին հիշատակել Փիլոն Ալեքսանդրացուն, որը թեև հանդես է եկել իբրև հրեա և հրեական դիրքերից, այդուհանդերձ, իրավամբ հորջորջվել է «Քրիստոնեության իսկական հայրը»<sup>27</sup>, որովհետև Հին կտակարանի իր ծավալուն արդեն մասնագիտական իմաստով մեկնությունների հիման վրա է նոր կտակարանի քրիստոնեական մեկնությունների համակարգը ձևավորվել և հետագա դարգացման ուղին բռնել: Նրա մեկնությունները իրենց հերթին մեկնարանվել են եկեղեցական հայրերի կողմից: Նաև հայ մեկնիչները դրանց նվիրել են համապատասխան երկեր, որոնք հայ մեկնարանական ժառանգության ամենաընտիր էջերից են<sup>28</sup>:

Չուտ քրիստոնեական նախնական մեկնությունները սկզբում իրագործվել են բանավոր, քարոզչարար, հավատացյալների զանազան ժողովատեղիներում, ապա՝ եկեղեցիների մեջ: Դրանք իրենց սկզբնաքայլերի ընթացքում շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, ավելի էին մեկը մյուսին պատճենում, քանի դեռ քրիստոնեությունը ինքը բնույթով այդպիսին էր, ներքին միասնությունը չէր խաթարված և տարբեր աթոռ-կենտրոնների միջև գերիշխանական պայքարը եկեղեցադավանանքային վեճերի ու տրոհումների շերտ հասելու Բանավոր այս եղանակը շարունակվում է մինչև իսկ մեր օրերում, դարձյալ քարոզների միջոցով, բնական է, անցյալ դարերի համապատասխան ժառանգությունը և մեկնիչի ըստ դավանանքային ու եկեղեցական պատկանելության հանդես գալու պարտավորությունը իրենց կնիքը ամուրթողնում են նրա վրա, և գրավոր մեկնություններից ըստ բովանդակության և ըստ միտումի այն չի առանձնանում:

Շատ շանցած հասունանում է պահանջը գրավոր խոսքի նկատմամբ, և ծայր են առնում գրավոր մեկնությունները, հետզհետե ծավալվում և տիրում են միջնորդարար եկեղեցական, կրթական, մատենագրական ու մշակութային բոլոր ոլորտներում: Դրանք շարունակաբար հորինվել են, այսօր էլ համապա-

25 Առ Կորնթացիս, Առաջին, Թ. 8—10, ԺԳ, 26—29, ԺԵ. 3—5, Էփեսոզ, Գ. 7—13, Առ Հռովմայեցիս, Ա. 1—4, Գ. 1—17, Թ. 6—33, ԺԴ. 11—13, Առ Եփրայեցիս, Ը. 5—10, Առ Գաղատացիս, Գ. 6—10:

26 Մատթևոս, ԺԳ. 33—44, ԺԹ. 3—8, 16—22: Մարկոս, է. 14—23, Թ. 9—12, Ժ. 3—7, ԺԲ. 35—40, Լուկաս, Զ. 20—44, Ը. 1—16, Ժ. 24—27, ԺԸ. 1—14, ԺԹ. 11—28, ԻԳ. 25—27, 44—47...:

27 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, с. 307.

28 Տե՛ս Գ. Գրիգորյան, Եջ. աշխ., էջ 95—115: Փ. Անթառյան, Հովհաննես Սարկավադին վերագրված «Լուծումը եօթանց զրոցն Փիլոնի» բնագրի առնչությամբ, «Պատմա-քանասիրական հանդես», 1983, № 1, էջ 177—190:

տասխան շրջանակներում կիրառվում են լայնորեն: Գրավոր մեկնության պարագային մեկնիչների մեջ կատարվում է մի տեսակ բնական ընտրություն: Եկեղեցու պաշտպանությունը ապահովելու մտահոգությամբ ավելի հմտություն, զգուշություն և պատասխանատվություն ցուցաբերելու պահանջը աճում է: Բնագրական և կրոնաաստվածաբանական իմացությունն ու հեղինակությունը էական գործոններ էին: Այստեղից էլ գրավոր մեկնությունների հարուստ, բազմազան, հազեցած բովանդակությունն ու բարձր արժեքը: Դրանք ավելի մնայուն են, ծավալման լայն հնարավորություններ ունեն, հարկ եղած դեպքում ստուգելի և սրբագրելի են ու հարմար գիտաուսուցողական նպատակների համար, ինչ որ շատ կարևոր պարագա էր թե՛ տեսական և թե՛ գործնական նկատառումներով: Քչերն էին համարձակվում ձեռնամուխ լինել այդ գործին և բշերին էր այն հաջողվում:

Քրիստոնեական մեկնությունների արարման պատմության մեջ առաջնակարգ կարևորություն է ընծայվել մեկնաբանելու ելակետին, եղանակին ու նպատակին: Տեսական-մեթոդաբանական, ինչպես նաև սկզբունքային-գաղափարական հարց էր դարձել, թե ս. Գրային որևէ բնագիր մեկնելիս նախ և առաջ ի՞նչը նկատի պիտի ունենալ, ինչի՞ց պետք է մեկնել և ինչի՞ վրա շեշտը դնել. պա՞րզ, տառացի՞, անմիջակա՞ն իմաստը պարզաբանել, թե՛ թարուն, խորքում հասունացած, ծածկաբար արտահայտվող խորհուրդը բացահայտել. ո՞րն է ավելի էական ու աստվածահաճո...: Մենք առավելապես այս հարցի վրա ենք կենտրոնացնում մեր խոսքը, որովհետև, մեր կարծիքով, դա ամենաէականն է և բնականաբար իր մեջ ամփոփում է դրանց ելակետի, միտման ու նպատակի պատասխանները:

Քրիստոնեյա աշխարհում մեկնաբանական այս հիմնական զույգ եղանակները, իրենց ստորաբաժանումներով, որոնց մասին ևս համառոտակի խոսք կլինի ստորև, տևապես ուշադրության կենտրոնում են եղել: Այնքան նշանակալից ու արմատական են դրանք, որ գրեթե ողջ քրիստոնեական մտավորական շրջանակներին հարկադրել են բաժանվել երկուսի: Եվ դա մեկնվող նյութի ոչ միայն իմաստաբանական տարրեր ընկալման պատճառով ու հիման վրա: Պետք չէ աչքաթող անել, որ տարրեր եղանակով նույն նյութի մեկնաբանությունը սոսկ բնական տարակարծության արտահայտություն չի եղել, այլև՝ որոշակի շահագրգռության, հասարակական-քաղաքական կողմնորոշման և ազդեցությունների ոլորտը ընդլայնելու միտում միջևեկեղեցական հակամարտությունների բեմահարթակի վրա:

Այն, անշուշտ, ուներ շատ կալուն և ծանրակշիռ նշանակություն կրոնաաստվածաբանական, վարդապետական, դավանանքային, երբեմն նաև ծիսական հարցերի վերաբերյալ լայն ու ստույգ հմտություն ձեռք բերելու, դրանց շուրջ մղվող պայքարում ապահով կողմնորոշում գտնելու նպատակով: Սա շատ էական խնդիր էր քրիստոնեության համար բոլոր ժամանակներում և ամեն ոլորտում: Մեկնության այս կամ այն եղանակի ընտրության և կիրառության հիմքում ընկած է նաև աշխարհի, կյանքի, ճշմարտության ընկալման ու բացահայտման աշխարհայացքային կողմնորոշումը: Կրոնական, տվյալ դեպքում մասնավորաբար քրիստոնեական աշխարհատեսությունը, դուզակցվելով նորպղատոնականության փիլիսոփայական վերացարկումներին՝ բոտ օգտակար համերաշխման, իրապես երկատում էր աշխարհը և նրա նյութական

ու ոչ նյութական երևույթները նաև մեկնաբանական գրականության մեջ: Ամեն ինչի սիմվոլացման տիրական միտումը և ստեղծված սիմվոլների միջոցով մի տեսակ հետադարձ կամ շրջադարձ եղանակով այդ «ամեն ինչը» բացատրելը կարևոր երևույթ է և՛ բրիստոնեական, և՛ առհասարակ միջին դարերի աշխարհիմացությունն ու մտածողությունը ուսումնասիրելու համար: Այստեղ ուշագրավ է նաև անտիկ աշխարհի և հետագա դարերի (III—IV) փիլիսոփայության որոշ հոսանքների համակեցությունը բրիստոնեական աշխարհընկալման գրեթե բոլոր վերացարկված բացահայտումների մեջ: Պետք չէ մոռանալ, որ բրիստոնեական մեկնություններին նախորդել են արդեն փիլիսոփայության բնագավառն ընդգրկված մեկնաբանությունները դեռևս անտիկ աշխարհից, ապա՝ հելլենիստական դարաշրջանից, որոնք անհետ ու անհետևվանք չէին կարող լինել հետագա իմացական համարնույթ աշխատանքներում: Այդպես նաև բրիստոնեական մեկնաբանական տեսությունների բնագավառում: Բնական է, ոչ բրիստոնեական մեկնությունները նպատակով ու գաղափարական հիմքերով այլ էին, սակայն, մեթոդաբանական-տեսական ելակետով՝ գրեթե համանման, քանի որ փաստորեն նույնպես երկատում էին աշխարհն ու նրա այլազան երևույթները, հիմնականում վերածում իմաստավորված սիմվոլ-խորհուրդների, տալիս նրանց մեկնաբանումն ու արժեվորումը՝ իբրև իրական աշխարհի ճանաչման պրոցես: Այս առնչությամբ տեղին է վկայակոչել Գուրեվիչի հետևյալ ճշմարիտ ընդհանրացումը. «Աբստրակցիան, իբրև այդպիսին, իր տեսողական որոշակի ընդգրկումից դուրս չէր բմբռնվում, և հոգևոր էությունները, նրանց երկրային սիմվոլներն ու անդրադարձը՝ միանման առարկայանում և ընկալվում էին իբրև իբրև, որոնց ըստ այդմ լիովին կարելի էր համադրել, պատկերացնել հավասար նկատառմամբ և բնականությամբ (նատուրալիստականությամբ)»<sup>29</sup>:

Միջնադարը միշտ էլ բացահայտ հակում է ցուցաբերել ամեն կարգի ու ձևի երևույթ ընկալելու պատկերավոր, ավելի շուտ՝ խորհրդանշաբար: Այդ հողի վրա էլ ավելի լայն ծավալ ու կիրառություն է ձեռք բերել բրիստոնեական սիմվոլիզմը: Այդպես ավելի քիչ էին իրականն ու երկրայինը մերկապարանոց շրջում մեկնիչների մտածողության և ստեղծագործությունների մեջ և ավելի լավ ու ամբողջական էին վերացարկվում և ընդհանրացվում իմացաբար: Ինչպես նշել ենք, այս կարևոր իմացական-ճանաչողական իրողությունը սերտ առնչակցվում էին ոչ միայն պյութագորականները, նորպլատոնականները, ստոիկյանները, մասամբ՝ ցինիկները, այլև գնոստիկյանները, որոնք այնքան մերձավոր աղերսներ ունեին անտիկ փիլիսոփայության իդեալիստական ուղղության հետ: Սրա և Մերձավոր արևելքի ժողովուրդների կրոնական, դիցաբանական և փիլիսոփայական պատկերացումների, գաղափարների, սիմվոլ-խորհրդանշանների խաչաձևումների շնորհիվ նրանք համոզված էին, որ ավելի ճիշտ և ավելի համապարփակ էին ճանաչում աշխարհը, մանավանդ նրա տեսական-հոգևոր երևույթները: Այս կապակցությամբ Սոկոլովը իրավացի եզրակացնում է. «Կրոնական շրջանակներում, որոնց ազդեցությունը ավելի էր աճում, գիտելիք համարում էին իրական աշխարհի և մարդու ոչ թե գիտության վրա հենված ճանաչումը, այլ մերձավոր արևելյան կրոնների և անտիկ փի-

<sup>29</sup> А. Я. Гуревич, Категории средневековой культуры, М., 1972, с. 77.

լիստփայական պատկերացումների, բազմաթիվ դրությունների և կերպարների իմաստավորումը»<sup>30</sup>։

Այս զույգ եղանակներից որևէ մեկին նախապատվություն ու գերակշռություն տալը ուներ նաև մի այլ կարևոր ելակետ՝ այն բարձրացնում էր համապատասխան դպրոցի, այդ դպրոցը հովանավորող եկեղեցական աթոռի, ուրեմն և նրա հասարակական-քաղաքական կողմնորոշման, վարկն ու հեղինակությունը։ Մանավանդ արդեն եկեղեցական աթոռների տրոհման ճանապարհ բռնած քրիստոնեությունը ավելի էր կարևորություն տալիս այս իրողությանը։

Այսուամենայնիվ այս կամ այն եղանակի ընտրությունը շատ շեշտակի սահմանագծված բնույթ չկարողացավ կրել այն պարզ պատճառով, որ հնարավոր չէր կիրառել այս եղանակներից բացառապես միայն մեկը, ասենք՝ միայն տառացին, կամ՝ միայն այլաբանականը։ Այս ընտրության շափանիշը ըստ էության կայանում էր նրանում, որ հնարավոր էր դառնում դրանցից որևէ մեկը կիրառել գերազանցապես և ըստ այդմ պատկանել երկուսի տրոհված դպրոցներից նրան, որը առավել կամ առավելագույն շափով ներկայացնում է կիրառված եղանակը։

Մեկնարանական գրականության պատմության մեջ այդ եղանակները ներկայացնում են՝

- ա) Ալեքսանդրիայի դպրոցը,
- բ) Անտիոքի դպրոցը։

Ալեքսանդրիայի մեկնարանական դպրոցը, որդեգրելով շեշտված այլաբանական եղանակը, իր կողմնորոշումը հիմնավորում էր առավելապես այն պատճառարանությամբ, թե՛ մեկնվող բնագրերը թեև ունեն իմաստային զբր-սևորման երկու հիմնական եղանակ, մեկը՝ պարզ, ուղիղ, անմիջական, տառացի կամ բառացի, մյուսը՝ ծածուկ, փոխաբերական, պատկերավոր, ածանցվող, այլաբանական (երբայերեն՝ ուշատ), բայց շատ ավելի կարևոր ու ճիշտ է գտնել և մարմնավորել երկրորդը, որովհետև էական, նպատակային իմաստը միայն այդ կերպ կարելի է երևան բերել։ Աստվածաշնչի գրքերը պարզամիտ հորինվածքներ չեն, ինչպես թվում են առաջին հայացքից, այլ պարունակում են խորին խորհուրդներ։ Այն, ինչ ակներև է ու դյուրությամբ բացատրելի, դա միայն արտաքին շղարշն է, որով սքողված են բուն, հանձնարարելի, սրբազան մտքերն ու հոգևոր թելադրությունները։ Հարկավոր է ունենալ սրատես, խորաթափանց խելամտություն։ Դրա համար այնպիսի մեկնիչներ են պետք, որոնք օժտված լինեն ոչ միայն նման կարողությամբ, այլև աստվածային հայտնությամբ ու լույսի ներգործությամբ։ Նոր կտակարանում առաքյալների վրա Ս. Հոգու հրեղեն լեզվի կերպարանքով իջնելու հրաշապատումը դրա քրիստոնեական վավերացումն է<sup>31</sup>։ Պետք է միշտ հետամուտ լինել, որ այդպիսով նկատվի ու ներկայացվի աստվածային ճշմարտությունը, չլինեն թյուրմբռնումներ, թյուր բացատրություններ և, մանավանդ, խոտելի եզրակացություններ։

Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչների աշխատանքային բնույթը

<sup>30</sup> В. В. Соколов, Средневековая философия. М., 1979, с. 26.

<sup>31</sup> Գործք, Բ. 1-4.

միաժամանակ նուրբ էր, քանի որ խորամուխ և ոչ բացորոշ որոնումների ավելի ընդարձակ ասպարեզ ունենալով, կարող էին ստեղծագործական երևակայությամբ տարվել և պարականոն շեղումների ու այլ սխալանքների դուր քանալ: Եկեղեցական կյանքում դա շատ հաշվառելի խնդիր է: Ըստ այդմ, նրանք պետք է ցուցաբերեին խորը իմացություն և զգաստ պատասխանատվություն: Բայց կա նաև սրա մյուս երեսը. կառչած շինելով մեկնաբանվող նյութից անմիջականորեն բխող մտքերից, նրանք կարողանում էին անգամ անհաշտելի հակասություններն ու եղբերը բերել բաղձալի և նույնիսկ պահանջվող եզրակացության: Սա նույնպես շատ էական էր եկեղեցական պաշտոնական տեսակետից՝ հակառակորդների հնարավոր հարցապնդումներին ու մեղադրանքներին պատշաճեցված պատասխան տալու և սեփական դիրքերը ամրապնդելու համար: Ընդհանրապես մեկնաբանական գրականության առաջնային խնդիրներից մեկն էլ նման պատասխանների շարունակական պատշաճեցումն է՝ հարթելու համար այն ամենը, ինչը կարող է անհարիր թվալ կրոնական-եկեղեցական տեսանկյունից:

Այլաբանական եղանակը այնքան հին է, որքան ինքը՝ մեկնությունը, ավելի հին, քան գրավոր որևէ մշակույթ: Մենք արդեն որոշ շափով ակնարկեցինք այս մասին:

Ալեքսանդրյան դպրոցի համար թեև իբրև առաջնեկ մեկնիչի նշվում է հրեա Արիստոբուլոսի անունը, սակայն սկզբում առավել հիմնավոր ազդեցություն թողել է Փիլոն Ալեքսանդրացին: Այնուհետև նշելի են Պանտենի, ավելի շատ Կղեմես Ալեքսանդրացու անունները: Այս դպրոցի մեկնիչներից ամենակարկառունը և՛ իբրև հիմնական տեսաբան, և՛ իբրև իր տեսության կիրառող, անտարակույս, Որոգինեսն է, որը այս բոլոր նախադրյալներից բխեցրած իր եզրակացությունները բերեց մի ընդհանուր միասնական համակարգի, և դա, ի վերջո, դարձավ հիշյալ դպրոցի պաշտոնական հանգանակը: Իր հատկապես «Յաղագս առաջնոց սկզբանց» և մյուս մեկնությունների մեջ նա ներկայացնում է իր տեսական հիմնավորումները՝ թե ինչը պիտի հիմք ընդունել, ինչով պետք է առաջնորդվել, ինչն է ավելի ճիշտն ու գերադասելին: Նա երեք հիմնական սկզբունքային բաժանում է կատարում՝ մարմնական, մտավոր և հոգևոր<sup>32</sup>: Սրանք են այն էական տարրերը, որոնցից բաղկացած է Ս. Գրային ամեն մի բնագրի ու բնաբանի իմաստը:

«Մարմինը» կամ «մարմնականը», ըստ Որոգինեսի, մեկնաբանվող բնագրի նյութական, ակնհայտ, պատմական-քերականական մասն է: Այն համեմատաբար նվազ կարևորություն ունի, պարզապես, արտաքին կեղև է ու միջոց, որով պահպանվում ու հայտնվում է բուն իմաստը: «Միտքը» կամ «մտավորը» այդ բնագրերից հանված խրատական, բարոյական, ուսուցողական-դաստիարակչական իմաստի ածանցումն է: Այն, անշուշտ, շատ ավելի կարևոր է, քան մարմնականը, քանի որ վերաբերում է մարդու բարոյական աշխարհի բյուրեղացմանը: Թեկուզ այս երկուսի հետ էլ օրգանական կապի մեջ է, բայց երկուսից էլ առավել կարևորություն ու նշանակություն ունի «հոգին»

<sup>32</sup> Տե՛ս J. Quasten, *Initiation aux pères de l'église*, vol. II, Paris, MCMLVIII, p. 9—11. The Cambridge History of the Bible, vol. I, p. 466—467. The Interpreter's one volume Commentary Bible. Nashville—New York, 1952, p. 110. Ե. Տեր-Մինասյան, *Նշվ. աշխ.*, էջ 149:

կամ «հոգևորը», որ հիշյալ բնագրերի բուն խորհուրդն է, ձգտումն ու վերջնական նպատակը: Դրա շնորհիվ է, որ մարդը հաղորդակցվում է աստվածային շնորհների հետ: «Հոգևորը» հենց լիովին այլաբանական կատեգորիա է:

Առավել ստույգ ու կանոնական մեկնության համար նա զարգացնում է իր տեսական ընդհանրացումները և առաջ քաշում սկզբունքային մի նոր «եռյակ», որը նախորդի մանրատումն է, նկատառելիով իմաստային նոր նրբերանգներ: Դրանք են՝ այլաբանական կամ տեսական (allegory, theory), փոխաբերական (Tropology) և խորհրդապաշտական կամ խորհրդական (anagogy): Ըստ էության երեքն էլ առնչվում են նախորդ եռյակի՝ «մտավորի» և ավելի՝ «հոգևորի» հետ: Առաջին երկուսը վերաբերում են մեկնարանվող նյութի տեսական բնությանն ու հիմնավորմանը, նրանից հանված հետևություններին, այնպես որ՝ վերջինս դաս ու խրատ լինի հավատացյալին իր բարոյականը կերտելու և զտելու համար, իսկ երրորդը՝ ածանցված այն սրբազան խորհուրդն է, նպատակը, որին ձգտելու է հավատացյալը<sup>33</sup>: Հետագայում սույն եռյակի (ավելյացրած շորրորդը՝ գրականը կամ տառացին) «միտք բանին» լատիներենն ձևավակերպվել է այսպես.

Littera gesta docet, quid credas allegoria,  
Moralis quid agas, que tendas anagogia<sup>34</sup>.

(Գրական իմաստը ուսուցանում է եզրաժի մասին,  
Այլաբանականը՝ ինչին հավատում ես,  
Բարոյականը՝ ինչպես պետք է վարվես,  
Խորհրդականը՝ ինչին ևս ձգտում):

Որոգիներսի տեսական այս դրույթները, որոնք զուգակցվում էին իր մեկնություններին, մարմնավորվում նրանց մեջ, լայն ընդունելության արժանացան և կիրառվեցին հետագա մեկնիչների կողմից: Նույնիսկ հակառակորդները կիրառել են դրանք, բնական է, անհամեմատ ավելի քիչ: Դրանք զարգացնում էին այլաբանական եղանակի հնարավորությունները: Եվ դա օգտակար ու հարմար էր: Այդ միջոցով, ասենք, «Երգ-երգոցի» նույնիսկ խիստ ռեալիստական հարսը, փեսան և զուտերերը կարող են համապատասխանաբար բնկալվել իրրև եկեղեցի, Քրիստոս, մարգարեներ կամ առաքյալներ: Այսպիսով, կարելի է մեկնել որևէ բնագիր ոչ թե մեկ կամ երկու, այլ բազմակի իմաստներով: Կրոնի, աստվածաբանության ու եկեղեցու տեսանկյունից դա բարենպաստ միջոց էր իրենց ղոգմաները պաշտպանելու համար: Քիչ էր մտածվում այն մասին, թե դա ըստ էության տեղ չէր թողնում փաստացի, ռեալ, բնական մտածողության համար: Կարևորն այն էր, որ նույնիսկ խիստ կասկած հարուցող տարակարծություններն էլ կարելի էր այլաբանական շրջվածությամբ, երբեմն՝ բազմաձև, բերել ցանկալի համերաշխության:

Այլաբանական եղանակի տեսական մշակումը այնուհետև էլ է շարունակվել, բայց ըստ էության ակնառու փոփոխություններ, մեթոդաբանական լուրջ տարբերակներ չեն առաջարկվել: Նոր տերմիններ են հրապարակ բերվել (մենք դրանց էլ մասամբ կծանոթանանք): Այդպես նաև գործնական առումով. ավելի

<sup>33</sup> The Interpreter's Dictionary. Vol. II, p. 720—721. The Interpreter's one volume..., p. 974.

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 721:

ուշ ժամանակներում այլաբանական եղանակով մեկնաբանական գրականությունն արարվել է համեմատաբար նվազ աշխուժությամբ ու ծավալով, բայց անպայման բուլանդակությամբ հարմարվելով տվյալ ժամանակաշրջանի գիտական, մշակութային և հասարակական կյանքում տեղի ունեցած վերափոխություններին: Այս առնչությամբ հիշատակելի են առանձնապես Արևմուտքի եկեղեցական հայրերը՝ Հերոնիմոսը, Օգոստինոսը, Ալբերտ Մեծը, Քովմա Արվինացին..., որոնք, սակայն, սկսել էին հետզհետե ավելի շատ հրապուրվել տառացի մեկնաբանական եղանակով:

Հիշյալ մեկնիչների և նրանց հաջորդների, որոնք կաթոլիկ եկեղեցու ակնառու ներկայացուցիչներից են, երկերում բացահայտ նշմարելի է այդ եկեղեցու դիրքի, հեղինակության, վարդապետության ու դավանանքի շեշտված շատագուժությունը: Սա փաստորեն դառնում է որոշիչ, մայր սկզբունք նրանց թե՛ այլաբանական, թե՛ տառացի մեկնություններում: Ըստ այսմ, խորանում է կաթոլիկ եկեղեցու շահագրգռությունը մեկնաբանական գրականության նկատմամբ: Նա բավական երկար ժամանակ հավակնեց լինել Ալեքսանդրյան դպրոցի անմիջական ժառանգորդն ու շարունակողը: Այդ դեռ իրեն ձեռնառու էր և օգտակար, փուլից շէր, եթե իսկ իրականում ու բանականորեն դա ավելի ևս բաշալերում ու առիթ էր տալիս մեկնաբանական առավել բնագրոսիկ ծայրահեղությունների: Ավելի վաղ, եթե, ասենք, Արևը կամ Լուսինը Ս. Գրքում, ըստ այդ շրջանի մեկնիչների, խորհրդանշել են նախախնամության լույսը, աչքը, հսկողությունը, Քրիստոսին, վերջում արդեն՝ պարզապես Կաթոլիկ եկեղեցուն, պապականությունը կամ պապին<sup>35</sup>: Չէ՞ որ դա նշանակում էր, թե կաթոլիկ եկեղեցին և պապականությունը արդեն Ս. Գրական ավելի հին հիմք էին ստանում. պարզ ու մեկին է սույն քայլի եկեղեցավարչական և հասարակական-քաղաքական միտումը, եթե, մանավանդ, նկատի ունենանք գերակայության հասնելու նրանց շարունակական նկրտումները:

Ի դեպ, հետաքրքիր է հետևյալ մանրամասնը. Դանթե Ալիգիերին Կան Գրանդե Դելլա Սկալային նամակ է գրում, որտեղ ոչ միայն մեկնաբանական եղանակներին իր քաջածանոթ լինելն է երևում, այլև հայտնի է դառնում այն կարևոր իրողությունը, որ այլաբանական մեկնության նշված աստիճանավորումը կիրառվել է նաև աշխարհիկ բնագրերի նկատմամբ: Նա պահանջում է, որ իր «Մարդկային կատակերգությունը» ըմբռնվի ըստ այդ քառյակ աստիճանավորման՝ տառացի, այլաբանական, բարոյական և խորհրդական (Անագոսյա)<sup>36</sup>: Պարզ է, մեկնաբանությունը, հատկապես այլաբանական առածգական եղանակով, ուղղակի ծառայեցվում է կաթոլիկ եկեղեցու նաև եկեղեցավարչական միտումներին, նվիրապետական անգերազանցությունը, պապի գերակայության նվիրականացմանը: Այս հանգամանքը, ինչպես նշեցինք, կաթոլիկ եկեղեցու տեական ու հիմնական մտահոգություններից մեկն է եղել: Ասենք, բյուզանդական եկեղեցին ևս նման նկրտումներ ցուցաբերել է, բայց ավելի շափավոր ու նվազ հավակնոտությամբ:

ԺԴ—ԺՆ դարերում ողջ Եվրոպայի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մտավոր-մշակութային և եկեղեցական կյանքում մեծ տեղաշար-

<sup>35</sup> The Interpreter's Bible, vol. I, p. 121.

<sup>36</sup> H. J. Gypesuu, նշվ. աշխ., էջ 76—77:



ժեր եղան, որոնք հսկայական գաղափարական վերափոխություններ ստեղծեցին: Հակառակ կաթոլիկ եկեղեցու ծայրահեղ պահպանողականության և դրանց նկատմամբ ցուցաբերած անզիջում հակադարձության, տեղատվություններ եղան նաև իր ներսում, իր հոգևոր-գաղափարական կառույցում, նաև իր մեկնաբանական գրականության մեջ: Շատ մեծանուն մեկնիչներ, որոնց թվում և վերոհիշյալները, աստիճանաբար տեղի տալով սույն վերափոխությունների թելադրանքներին, իրենց մեկնություններում ընդլայնեցին մեկնաբանական տառացի, քննական եղանակի կիրառությունը: Նախկին դրույթները աստիճանաբար վերանայվեցին, ումանք դուրս մղվեցին, այլաբանական հանդուգն խիզախումները շափավորվեցին: Եկեղեցու նկատմամբ ուղիղ հակակշռումները օգտակար գործ էին տեսնում նաև այս ոլորտում: Քննական-վերլուծական կշռադատումներն ու մտահանգումները ավելի էին ծավալվում ու հաղթանակում և բոլոր դոգմաների համեմատությամբ դառնում ընդունելի շափանիշ: Ռեֆորմացիան արդեն գործում էր համարձակ ու արդյունավետ: Այն չէր կարող աչքաթող անել մեկնաբանական գրականությունը, հատկապես այլաբանական եղանակը՝ իր շեշտված վերացականության, միատիկայի, հաճախ կամայական դրսևորումների, հատկապես կաթոլիկ եկեղեցու և պապականության գերակայության և անխոտելիության պաշտպանության միտումով, և շունենալ իր քրննադատական վերաբերմունքը այդ բոլորի հանդեպ: Իրական, առարկայական բանիմացություն էր պետք: Ժամանակն ու միջավայրը այդ ընձեռում էին:

Այս ամենը տեղի էր ունենում եվրոպական Վերածննդի նախօրերին, ապա՝ նրա ընդերքում, նրա գոյատևման ընթացքում, և նախապատրաստում եվրոպական մեկ այլ պատմամշակութային բեկման խորը երևույթ՝ Ռեֆորմացիան, որը առավել անմիջականորեն առնչվում էր այն ամենին, ինչը կրոնական ու եկեղեցական էր: Դա հասարակական գիտակցական վիթխարի բարեփոխություն էր բառիս ամենալայն ընդհանրացմամբ:

Այս համատարած շրջափոխությունների հորձանուտի մեջ, առավելաբար եկեղեցական կյանքում, ոչինչ չէր կարող մեկուսի և անմասն մնալ ընդհանուր գործընթացից ու չկրել բարերար ներգործությունը համեմատական անկաշկանդ մտածողության: Այդպես նաև այլաբանական մեկնաբանական եղանակը այս ընթացքում ավելի ևս արագացրեց իր նահանջը, թեկուզև առանց բոլորովին հրաժարվելու իր դիրքերից: Այս գործում իր ծանրակշիռ ծառայություններն ունի մեծ վերափոխիչ Մարտին Լյութերը (1483—1546 թթ.): Նա իր իսկ խոստովանությամբ նախապես համակրել է այլաբանական եղանակին: Այն մինչև վերջ էլ հիմնովին չի մերժել: Դա, կրկնում ենք, անհնար է ընդհանրապես եկեղեցական առօրյայում, առավելապես մեկնությունների արարման ընթացքում: Մակայն նա այն կիրառում է արդեն միայն իբրև «զարդ, հարդարանք», իբրև ոճ ու համեմունք, և վերջնականապես որդեգրում «մերկ քնագրին» լրիվ հավատարիմ լինելու սկզբունքն ու ծրագիրը<sup>37</sup>: Նրա խտացած եզրակացությունը այս առնչությամբ սա է. «Եկեղեցին լողոսի դուստրն է, ոչ՝ մայրը»<sup>38</sup>:

<sup>37</sup> The Interpreter's Dictionary, vol. II, p. 723.

<sup>38</sup> The Interpreter's Bible, vol. I, p. 123.

Հետագայում, նրա տեսական դրույթները ևս հետզհետե վերամշակվեցին, հարստացան նոր տարրերով, ավելի արդիականացան, այսինքն՝ դարձան սակավ դոգմատիկ ու սխոլաստիկական և գտան ավելի ռացիոնալ ու իրական պատմական կիրառություն:

Անտիոքի դպրոցը որդեգրել է այլաբանականին հակադիր՝ մեկնաբանական տառացի կամ բառացի եղանակը, ըստ որի, ինչպես քիչ վերը նշել ենք արդեն, հիմնականն այն է, որ մեկնաբանվող նյութը իր ուղղակի, անմիջականորեն արտահայտված իմաստով մեկնաբանվի, որովհետև թե Հին և թե Նոր կտակարանի գրքերը գրված են «աստվածային հայտնություն», աստծո շունչն ու խոսքն են ներկայացնում, իսկ աստված հարկադրված չէր մարդու հետ գաղտնախոսելու, հակառակը, խոսել է պարզ ու իմանալի: Այդ խոսքը ծածուկ, ենթակայական, փոխաբերական մտքերով ողողելու ո՛չ անհրաժեշտություն, ո՛չ էլ նպատակ կարող է լինել: Մարդը ինչքան ուղիղ և ստույգ ըմբռնի այն, այնքան լավ: Ուստի, մտածում էին Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները, հարկավոր չեն ավելորդ որոնումներ անպայման թարուն, «գաղտնախորհուրդ» մտքեր արտածելու համար ամեն մի բնագրից: Գիրքը ամբողջությամբ, կամ պարբերությունը, բառը, թեկուզ և առանձին նշանը, սիմվոլը, պետք է ընկալվեն ու ներկայացվեն առանց կողմնակի վերագրումների և վերապահումների, այլապես կարող են անճշտությունների ու հավելագրումների, նույնիսկ սխալի և կեղծիքի հանգեցնել: Դրա համար պետք չէ տարվել այլաբանական մտորումներով և ամեն ինչ լուծել ըստ այդմ: Ավելի շուտ պետք է ջանալ լավ ըմբռնել անմիջական իմաստը՝ ճիշտ ընթերցելով բնագիրը: Այս տեսանկյունից էլ Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները մանրակրկիտ քննարկում էին բնագրերի բնագրական հատկանիշները, ճշտում իմաստային նրբերանգները, հաճախ լեզվաբանական ու քերականագիտական վերլուծումներ և ստուգաբանություններ կատարում: Նրանք տեսապես աչքի առաջ ունենում էին բնագրերի ոչ միայն «աստվածային ծագումը», այլև հավասարապես դրանց մարդու կողմից գրի առնված լինելը, պատմականությունը: Նրանց համար այդ բնագրերը միաժամանակ ներկայացնում են հրեա ժողովրդի, որ «աստուծո ընտրյալն» էր, պատմությունը, երկրային կյանքն ու կենցաղը, ծիսական ու ազգագրական ավանդույթները, փիլիսոփայական, իրավագիտական, բանաստեղծական ժառանգությունը, ազգային-քաղաքական երազանքներն ու տեսիլքները, որոնք ավանդաբար փոխանցվում էին քրիստոնյաներին: Անշուշտ, այլաբանական եղանակի հետևորդներն էլ չէին անտեսում այս բոլորը, սակայն, անհամեմատ քիչ տեղ ու նշանակություն էին տալիս դրանց: Ելնելով իրենց դավանած այս եղանակի օրջեկտիվ էությունից, նրանք ավելի հաճախ և ավելի շատ, քան այլաբանական եղանակի հետևորդները արժարժում ու քննում են այնպիսի իրական, կոնկրետ հարցեր, որոնք երբեմն պատմական ու գիտական առումով ավելի շահեկան են, եթե, մանավանդ, նկատի ունենանք նախ և առաջ դրանց փաստագրական պաշարը: Իրենց բազմազան դիտարկումների համար նրանք վկայակոչում են պատմական դուգահեռ ու հակադիր իրողություններ այլ հնագույն, այսօր արդեն անհայտացած, ժողո-

վուրդների անցյալից: Այսպիսով, աճում էր նրանց տեղեկատուական նպաստը: Պետք չէ, անշուշտ, ենթադրել, որ պատմությունը առհասարակ, իսկ Ս. Գրային պատմությունը՝ հատկապես, նրանց համար ունեին գիտական հիմնական նշանակություն: Եթե մի կողմից պետք չէ միամիտ լինել կարծելու, որ նրանք պատմագիտական աշխատանք էին կատարում լուսաբանելու համար հրեա և մյուս առնչակից ժողովուրդների անցյալը, սակայն, մյուս կողմից պարզապես պետք չէ անտեսել նաև այն ածանցյալ գիտական օգտակար արդյունքը, որ գոյանում էր նրանց երկասիրությունների մեջ:

Ճիշտ այս հիմքերով էլ զնահատելի է նրանց լուսման նաև բնագրագիտական, լեզվագիտական, քերականագիտական, բանասիրական, երբեմն տիեզերագիտական, բնափիլիսոփայական, իմացաբանական և մշակութային հարցերի արծարծման ու քննության մեջ:

Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները միաժամանակ առավել հետամուտ էին պարզելու բնագրերի զգացական ծալքերը, տրամադրությունը, հոգեբանական առնչությունները մարդկային ապրումների ինչ-ինչ վիճակների հետ: Դա նկատելի է հատկապես մարգարեություններին, Սաղմոսներին, Առակներին, Երգ-երգոցին, իրատներին նվիրված մեկնություններում, որոնցում, ինչպես հայտնի է, գեղարվեստական, քնարական, հուզական տարրերը բավականին շատ են: Այս դեպքում նրանց աշխատանքում նկատառելի են նաև գրականագիտական թեկուզ ոչ միշտ հստակ արտահայտված դիտարկումներ, որոնք միանգամայն արժանի են ուշադրության:

Այստեղ նշելի են նրանց թարգմանական բնույթի արժեքավոր քննություններն ու տեսական հարցադրումները: Նրանք երբեմն համեմատություններ են անում, զուգահեռներ են անցկացնում Աստվածաշնչային տարալեզու բնագրերի, առանձին բառակապակցությունների ու բառերի միջև և կարևոր հաստատումներ, ճշտումներ կատարում: Հիշենք թեկուզ միայն այն, որ նրանք միանգամայն որոշակիորեն պաշտպանում են թարգմանական ճշգրիտ, բայց ոչ ստրկական եղանակը: Առաջին ու հիմնական պայմանը իմաստի ստույգ արտահայտումն է: Այս սկզբունքի մեծ ջատագովներից է Եվսեբիոս Եմեսացին, Անտիոքի դպրոցի վառ անհատականություններից մեկը: Նա և դարում հայերեն թարգմանված իր «Արարածոց մեկնութեան» մեջ խիստ դատապարտել է Ակյուղասի «ստրկական» թարգմանությունը, ցույց տվել այն անպատեհությունները, որոնք ի հայտ են գալիս նման թարգմանությունների դեպքում, քանի որ մի լեզվի առանձնահատկությունները պարտադրվում են մի այլ լեզվի, որի համար դրանք միանգամայն անհարիր են: Տուժում է թե՛ թարգմանվող, թե՛ թարգմանված բնագիրը, անշուշտ նաև՝ ընթերցողը: Նա նույն տեղում միանգամայն իրավացիորեն առաջարկում ու պաշտպանում է բնագրի արտահայտած իմաստին անպայման հարադատ մնալու թարգմանության եղանակը<sup>39</sup>: Պարզվում է, որ Հայաստանում էլ արծարծվել է այս խնդիրը<sup>40</sup>: Այսօր էլ այժմեականություն պահպանած սույն հարցը դեռ այն ժամանակ ճիշտ եզրակացության է արժանացել. նախապատվությունը տրվել է մտքի, իմաստի ստույգ արտահայտմանը: Առանց երկմտության է ասված վերոհիշ-

39 Եվսեբիոս Եմեսացի, Եջվ. աշխ., Առաջաբան, էջ է-ԻԲ:

40 Լ. Տեր-Պետրոսյան, Եվսեբիոս Եմեսացու «Ռեթամատյանի մեկնությունը»..., էջ 63—68:

յալ թարգմանության մեջ հետևյալ եզրակացությունը. «...բարևը է զլեզուին՝ որ թարգմանիցի՝ թողուլ զառանձինն բանսն, և զմիտսն թարգմանել», «Քանզի բազում են ըստ իւրաքանչիւր լեզուաց առանձինն բանք, որք՝ թէ անդէն ի տեղւոջ մնայցեն՝ գեղեցիկք և լուսաւորք և յայտնիք և պատշաճողք թուին այնոցիկ, որք զնոսա ի կիր արկանիցեն, բայց նովին բանիք յայլ լեզու փոփոխեալք՝ շքնծայեցուցանեն զմտացն զարութին»: Այսպէս է վարվել Ակյուղասը Աստվածաշունչը երբայիբնից հունարեն թարգմանելիս... «որ զբանն ևեթ վիճեաց նոյնգունակ թարգմանել և հանել, և ըստ մտացն ընծայութեան՝ վրիպեալ գտաւ յայլոց...»: Ուստի, կրկին եզրակացնում է. «Քանզի այն իսկ պատշաճագոյն էր՝ թողուլ զբանիցն զառանձինն պայման ըստ իւրաքանչիւր լեզուացն, և զմիտս լեզուին թարգմանել և յանդիման կացուցանել, և ոչ առանձինն բանիցն պատշաճիք զզարութին մտացն խարխալել»<sup>41</sup>: Պարզ է. հարկավոր է հաշվի առնել յուրաքանչյուր լեզվի առանձնահատկությունները, յուրաքանչյուր բառի տվյալ կիրառության իմաստային նրբերանգը, թափանցել «մտքի գորութեան» խորքը և ապա թարգմանել: Այսպիսի աշխատանքը, անշուշտ, նաև մեկնություն է, նման աշխատանք կատարողն էլ՝ «մեկնիչ»: Այստեղից էլ՝ մեկնիչների և թարգմանիչների համապատասխանությունը միջնադարյան ընդհանուր քրիստոնեական և հայ գիտամշակութային ու ազգային հասարակական կյանքում:

Նրանք չեն խուսափել մատնանշելու իրենց նկատած Ս. Գրային տարբերությունները, ավելի զուսպ են եղել Հին կտակարանի մեջ տեսնելու նոր կտակարանի նախադրյալները և, մանավանդ, Քրիստոսի մեսիական առաքելության վերաբերյալ կանխագուշակումները: Դոգմատիկ անհանդուրժողականությունից համեմատաբար հեռու են եղել: Թերևս այս քննադատական մտածելակերպի և Ս. Գրային պատումների ու ասույթների նկատմամբ քիչ թե շատ լիբերալ վերաբերմունք ցուցաբերելու պատճառով նրանց մեջ ավելի մեծ թիվ են կազմում ընդհանուր քրիստոնեական աշխարհի և եկեղեցու կողմից դատապարտվածները իբրև այլախոհներ և, նույնիսկ, հերձվածողներ: Անտիոքի այս դպրոցի հիմնադիրը ազանդավոր Արիոսի ուսուցիչն է եղել, իսկ հետո, այդ դպրոցը իբրև ղեկավար ունեցել է Արիոսական աղանդի ներկայացուցիչներից մեկին<sup>42</sup>: Իհարկե, պետք չէ այս ասվածից այն ենթադրությունն անել, թե Անտիոքի դպրոցը ազանդավորներ է շարունակ անուցել, մանավանդ որ

<sup>41</sup> Եվսեբիոս Եմեսացի, նշվ. աշխ., էջ 3, 1—2: Այստեղ հարկ է նշել, որ Ի. Մեղվեղևի հաստատումը, որը հիմնված է Գ. Քամելլի, Կ. Սետտոնի և Ա. Վաքալոպոլոսի եզրակացությունների վրա, թե իբր ըստ իմաստի արդի թարգմանության մեթոդի հիմնադիրը, Մանվել Քրիստոսյան է (XIV—XV դդ.), ճիշտ համարել չի կարելի, քանի որ, ինչպես տեսանք, գեթ Եվսեբիոս Եմեսացին, որն ապրել է IV դարի առաջին կեսին, արդեն շատ որոշակի գրել ու պաշտպանել է «ըստ իմաստի» թարգմանության մեթոդի հարցը: Հայաստանում ևս այն արժարժվել ու կիրառվել է ղեկավարող Վ. Գաբուլում: (Cammelli G., I dottori bizantini e le origini dell'umanesimo. I. Manuele Crisolora. Firenze, 1941, p. 77—78. Setton K. M., The Byzantine Background to the Italian Renaissance in Europe and the Levant in the Middle Ages and the Renaissance. London, 1974, p. 50—51. Vacalopoulos A., The Exodus of Scholars from Byzantium in the Fifteenth Century (Journal of World History, 1967. 10), p. 469—470). Ի. Մ. Медведев, Византийский гуманизм (XIV—XV вв.). Л., 1976, с. 25.

<sup>42</sup> J. Quasten, Initiation, vol. II, p. 146—147, vol. III, Paris, MCMLXIII, p. 23—26, 429.

քիչ հետո այդպիսիներին պիտի դարձյալ հիշատակենք, որոնք նմանապես ղեկավար դեր են խաղացել թե՛ դպրոցում, թե՛ հիշյալ եղանակով մեկնարանական գրականություն ստեղծելու մեջ: Դա անհիմաստ կլիներ, որովհետև Անտիոքը մինչև վերջ էլ մնաց քրիստոնեական ամենահեղինակավոր աթոռներից մեկը: Խնդիրը պարզապես իր համեմատաբար ավելի քննական և ավելի ուսուցիչ մտածողության ու վարքագծի մեջ է:

Ալեքսանդրյան այլաբանությունից ու ընդգծված միաստիկայից զգուշանալով, Անտիոքը առանձնացնում էր իրեն, պահպանում իր դեմքն ու հեղինակությունը, նաև դրանով դիմում ինքնահաստատման ու ինքնապաշտպանության իրրև ուրույն եկեղեցական աթոռ: Այն այսպես էր վարվում նաև մեկ այլ պատճառով: Ինչպես ճիշտ է նկատվել՝ «Անտիոքը այլաբանության մեջ տեսնում էր վերադարձ դեպի հեթանոսություն» և «հելլենիզմի ներթափանցում քրիստոնեական ավանդույթների մեջ»<sup>43</sup>: Նրանք քաջ գիտեին, որ այլաբանությունը անտիկ հեթանոսական աշխարհում կիրառվել է բացատրելու և արդարացնելու համար դիցաբանության մեջ առկա անհնարին, անհարիր, նույնիսկ «անբարոյական» ինչ-ինչ իրողություններ: Նրանք նաև նկատի ունեին, որ Ալեքսանդրիան հելլենիստական միջավայրի ու մշակույթի հետ ուղիղ և շեշտված առնչություններ ունեցող հիմնական կենտրոններից է: Նրանք զգուշանում էին նաև գնոստիկյանների ուղղակի ազդեցությունից:

Վերջիններիս դեմ ևս պաշտոնական եկեղեցին սկսել էր ուժգին պայքար, քանի որ նրանք մեծ մասամբ մերժում էին Հին կտակարանն ու նրա դրույթները մանավանդ արարչագործության բնագավառում, իրենց ուսմունքում շատ ակնդ էին տալիս անտիկ փիլիսոփայության և տարբեր ժողովուրդների դիցաբանական պատկերացումներին: Սակայն Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները մտահոգված էին նաև նրանով, որ «Այն, ինչ Ս. Գրոց մեջ քրիստոնյային ներկայացվում էր իրրև իրողություն, որը հարկ էր հասկանալ տառացիորեն, «խորամանկաբար իմաստուն շձևանալով», գնոստիկները վերածեցին այլաբանության, սիմվոլի, դրանով էլ՝ ուղի հարթելով դեպի հերետիկոսություն»<sup>44</sup>: Այս ևս նրանց հետո էր պահում այլաբանությունից:

Անտիոքի դպրոցի կողմից այս տառացի, քննական եղանակի առավելագույն չուրացման և կիրառման համար նախատիպ օրինակ է հանդիսացել հրեական մեկնարանական «պեշատ» անվանված եղանակը, որը արդեն լայն փորձ կուտակել ու մշակման, զարգացման բավականին երկար ճանապարհ էր անցել:

Այս առնչությամբ հարկ է կրկին հիշեցնել, որ խնդրո առարկա հիշյալ դույզ եղանակների միջև անհաշտ հակասություններ չեն եղել, նույնիսկ բացառված է մեկի կիրառությունը առանց մյուսի: Դա պարտադրվում է կրոնական ընդհանուր հիմքից, բնագրերի իրենք իրենց մեջ կրած այդ եղանակների տարբերից, մեկնարանող հեղինակների դասային պատկանելությունից, բուն մեկնության, իրրև կրոնական-աստվածաբանական ուսուցման կարևոր միջոցի թելադրանքից ու նպատակից:

<sup>43</sup> J. Guillet, Les exégèses..., p. 298, 257. The Cambridge History of the Bible, p. 437.

<sup>44</sup> В. В. Солов, Средневековая философия, с. 30.

Ըստ այս բոլորի, սույն դպրոցի նման կողմնորոշումը մեկնաբանական գրականության մեջ որակել են «Արիստոտելյան տիպի», ի հակադրություն Ալեքսանդրիայի դպրոցի, որը կոչել են «Պլատոնական տիպի»<sup>45</sup>:

Անտիոքի դպրոցի հիմնադիր է համարվում Լուկիանոս Սամոսատցին կամ Անտիոքացին (մեռ. 312 թ.): Նա համառ սկզբունքայնությամբ պաշտպանել է իրենց որդեգրած եղանակը: Նրա մեթոդաբանական ավանդներին հետամուտ են եղել, ուղղակի կամ անուղղակի, իր աշակերտներից շատերը: Գալոցի առավել կարկառուն ներկայացուցիչներից է Դիոդորոս Տարսոնացին (Դ դարի կեսերին), եղել է դպրոցի ուսուցչապետը, ընդհանրապես եկեղեցական մատենագրության եռանդուն և արդյունավետ գործիչ, թեպետև դատապարտվել է իր վարդապետական ուսուցման մեջ շեղումներ թույլ տված լինելու համար, բայց հետագայում արդարացվել է: Սակայն, իր բազմաբնույթ երկասիրությունները պահպանվել են մասամբ միայն, երբեմն ուրիշների անունով, երբեմն էլ՝ ուրիշների «շղթայական», կամ «խմբագիր» մեկնությունների մեջ: Դիոդորոս Տարսոնացուն գերադանցել են իր աշակերտներից Թեոդորոս Մոպսուեստացին (մեռ. 428 թ.), Հովհան Ոսկեբերանը (347—407 թթ.): Թեոդորոս Մոպսուեստացին բոլորից շատ է մեկնություններ գրել: Հին և նոր կտակարանների գրեթե յուրաքանչյուր գրքի մասին հեղինակել է առանձին աշխատություն: Մեկնաբանության տեսական խնդիրներին նվիրել է հատուկ ուսումնասիրություն, որը, գծրախտաբար, հիմնականում չի պահպանվել: Այն կոչվել է «Ընդդէմ այլաբանութեան», որտեղ, ի հակադրություն Ալեքսանդրացիների, պաշտպանել է իրենց դպրոցի մեկնաբանության տեսության հիմունքները: Իր մյուս երկերում այս կապակցությամբ բավական նյութ կա, որը հստակ պատկերացում է տալիս թե՛ հեղինակի, թե՛ նրա դպրոցի այս մարդում ծավալած գործունեության մասին: Իսկ Հովհան Ոսկեբերանը, քրիստոնյա եկեղեցու այնքան շատ փառաբանված, բայց նույնչափ էլ ողբերգական գործիչը, մատենագիրն ու գաղափարախոսը, Անտիոքի ծնունդ, նույն տեղի դպրոցի (երբ Անտիոքի աթոռին նստել էր հայազգի Մաղաքիա Խոստովանողը) սանն ու շուայլ կարողություններով և հմտությամբ օժտված ներկայացուցիչը, ամենաարդյունավետ ու ամենաուղղափառ կերպով ծառայել է սույն դպրոցի որդեգրած մեկնաբանական եղանակին<sup>46</sup>: Նրա բազմաթիվ ու բազմաժանր գործերը, որոնք, բարեբախտաբար, հիմնականում պահպանվել են (մի մասը՝ միայն հայերեն թարգմանությամբ), այս առնչությամբ խիստ մեծ հետաքրքրություն ու արժեք են ներկայացնում: Նրա մեծածավալ ու փոքր մեկնությունները (Մենդոց, Եսայի մարգարեության, Մատթէոսի Աւետարանի, Գաղատացւոց թղթի և շատ այլ մեկնաբանական բնույթի ճառեր) խիստ նպատակամետ են, անմիջական, հստակ, քննական: Նրանք դրված են գրական թերևս լավագույն ձևի մեջ, ունեն հոետորակա՛ն խոսքի արտակարգ ճոխություն ու գեղեցկություն, հյուսված են կրոնաաստվածաբանական լայն հմտությամբ և նուրբ մտածողությամբ: «Ոսկեբերան» հորջորջումը նա կարողացել է դարերի ընթացքում պահպանել: Նա իրավամբ համարվում է ընդհանրապես քրիստոնեական մեկնաբանական գրականության անգերադանցելի տիտաններ-

<sup>45</sup> J. Quasten, *Initiation...*, vol. II, p. 146.

<sup>46</sup> Տե՛ս մանրամասն՝ նույն տեղում, հ. II, էջ 146, 169—170, հ. III, էջ 23—26, 558—573, 596, 608:

րից մեկը: Նրանցից է նաև Քեոզորես Կյուրացին (393—468 թթ.), նույնպես Անտիոքի ծնունդ ու տեղի դպրոցի սան: Նա իրապես իր ժամանակի ամենաբանիմաց անհատականություններից է, քաջ ծանոթ ոչ միայն կրոնական գիտելիքներին, աստվածաբանական ու վարդապետական այնքան նրբացված հարցերին, այլև անտիկ աշխարհի ու իր ժամանակի հունական-բյուզանդական փիլիսոփայությանն ու մշակույթին, նաև լավատեղյակ մի քանի լիզուների: Մավալուն մատենագրական ժառանգություն է թողել, այդ թվում՝ բազմաթիվ մեկնություններ՝ Ութնադրեանց, Սաղմոսաց\*, Երգոց-Երգոյն, Դանիէլի, Եզեկիէլի, Եսայիայ, Երեմիայի մարգարէութեանց...: Սրանք նմանապես իր ժամանակի գիտական, փիլիսոփայական մտքի ու գրական վարպետության ընտիր նմուշներ են, ունեն նաև՝ եկեղեցապատմական ավելի նկատառելի արժէք: Թեև դրանցում, համեմատաբար ավելի հաճախ, քան իր նախորդների երկերում, կիրառվել է այլաբանական եզանակ, սակայն և այդպես՝ միշտ զուսպ ու շափավոր:

Անտիոքի դպրոցը տվել է այլ անվանի ու վաստակաշատ մեկնիչներ, որոնց թողած գրական հարուստ ժառանգությունը ըստ ամենայնի արժեքավոր ներդրում է թե՛ իրենց դպրոցի և թե՛ ընդհանուր քրիստոնեական մեկնարանական գրականության մեջ: Կարելի է նրանցից հիշատակել Եվսերիոս Կեսարացուն (մեռ. 339—340 թթ.), Եվսերիոս Եմեսացուն (մեռ. 350-ական թվականներին), Կյուրեղ Երուսաղեմացուն (մեռ. 347 թ.), Եպիփան Սալամինցուն՝ Կիպրացուն (մեռ. 403 թ.)<sup>47</sup>:

Անտիոքի դպրոցի աշխարհագրական սահմանները, որոնք ավելի շուտ սլալամանականորեն ներկայացնում են նրա անմիջական ազդեցության ոլորտը, բավականին ընդարձակ են. դրանք ձգվել են Միջին Ասիայի արևմտյան ափերից մինչև Ասորիքի խորքերը, ընդգրկելով առանձնապես քաղաքական և մշակութային կարևոր կենտրոններ Եզեփան ու Մծրինը: Ինչպես կտեսնենք քիչ հետո, այդ ոլորտի մեջ է եղել մասամբ նաև Հայաստանը:

Անտիոքի դպրոցի, ինչպես նաև հայ մեկնարանական գրականության հետ իրենց ունեցած սերտ առնչակցության համար հարկ է գեթ մի քանի խոսք ասել հետևյալ զույգ օջախների մասին:

Գիտության ու մատենագրության արևելյան քրիստոնյա աշխարհի խոշորագույն կենտրոններից էին Եզեսիայի և Մծրինի դպրոցները:

Նրանց վերաբերյալ առաջին իսկ գրավոր վկայությունները հաստատում են, որ դրանցում ծավալվել է նաև մեկնարանական արդյունավետ գործունեություն՝ քրիստոնեական մյուս գլխավոր կրթական ու մատենագրական կենտ-

\* Ինչպես ցույց է տվել Ֆրանսիացի հայագետ Բ. Ութինն՝ Քեոզորեսի Սաղմոսաց մեկնությունը սահմանվել է նաև հայերենով, սակայն վերադրված Եպիփան Կիպրացուն (տե՛ս D. B. Outtier, La version arménienne du Commentaire des Psaumes de Théodore: Premier Bilan, „Revue des Etudes arméniennes“, Paris, 1977, tome XII, p. 109—180. նույնի՝ La version arménienne du Commentaire des Psaumes de Théodore: Nouveaux Témoins de la tradition directe, „Revue des Etudes arméniennes“, Paris, 1983, tome XVII, p. 241—248.

<sup>47</sup> Տե՛ս մանրամասն՝ J. Quasten, Initiation, vol. III, p. 439—487. 495—499, 510—530, 540—547, 750—758.

րոնների նմանողությամբ: Եփրեմ Ասորին, որը Եղեսիայի դպրոցի ամենասկզբնական կազմակերպիչներից է, ըստ ոմանց՝ հիմնադիրը<sup>48</sup>, թողել է մեծ ծավալով ու տարողությամբ մեկնաբանական ժառանգություն, որը ընդհանուր քրիստոնեական մատենագրության մեջ գրավում է առանձին ու պատվավոր տեղ: Այն առանձնակի դեր ու նշանակություն ունի հայ մատենագրության, թարգմանական և մեկնաբանական գրականության համար: Գրեթե լիովին հայերեն է թարգմանվել դեռևս Ե դարում և մի զգալի մասը պահպանվել է միայն հայերենով<sup>49</sup>:

Մենք արդեն նախապես նշել ենք, թե ինչքան մեծ նախապատվություն էր տրվում ժամանակին մեկնիչ-թարգմանիչներին քրիստոնեական բարձրագույն բնույթի դպրոցներում: Այդ թվում նաև Եղեսիայի ու Մծբինի դպրոցներում<sup>50</sup>: Հատկապես այստեղ էին հղացվում ու ծնվում ասորական գրականության բազմաթանր գործառնությունները, մատենագրական հիմնական երևույթներն ու երախայրիքները: Ինչպես հայտնի է, ասորական միջնադարյան գրականությունը գերազանցապես քրիստոնեական է, որի նշանակալից մասն ունի մեկնաբանական բնույթ ու բովանդակություն:

Ասենք, որ Անտիոքի դպրոցի ուղղակի ազդեցությունը խորապես զգալի է եղել այդ դպրոցների մեկնաբանական գրականության ձևավորման ու զարգացման վրա: Հետզհետե մինչև Ե դարի վերջերը հունարենից ասորերեն թարգմանվեցին Անտիոքի դպրոցի մեծերի, մանավանդ Քեոդորոս Մոպսուեստացու, Դիոդորոս Տարսոնացու մեկնաբանական երկերը: Բնական է, այս թարգմանությունների իրագործման շարժառիթներն ու նպատակը թելադրված կարող էին լինել որոշակի շահագրգռություններից, որոնք ինքնըստինքյան մատնացույց են անում Եղեսիայի ու Մծբինի կողմնորոշումը հիմնականում դեպի անտիոքյան մեկնաբանական ավանդները: Այստեղ չի կարելի չնշել, որ հիշյալ թարգմանություններին ղուզընթաց ասորերեն էին թարգմանվում հույն փիլիսոփաներից առավելաբար Արիստոտելի, Պորփյուրի երկերը և լայնորեն օգտագործվում կրոնական-աստվածաբանական գրականության մեջ հատկապես տեսական բարդ հարցեր քննարկելու և հիմնավորելու դեպքերում: Նշելի է, մանավանդ, որ թարգմանված փիլիսոփայական երկերի վերաբերյալ ուրույն մեկնություններով հանդես եկան հիշյալ ղույզ դպրոցների ներկայացուցիչները: Այս առնչությամբ ընդգծելի են ի մասնավորի Հիրայի, Մանա Շիրազցու, Կուսի, Մարինի և Պրոքայի անունները<sup>51</sup>:

Անտիոքից ուղղակի Եղեսիա ուսուցանելու էին գալիս նշանավոր ուսուցչապետներ, բնական է, իրենց հերթին ավելի արմատավորելով այստեղ Անտիոքի ավանդները<sup>52</sup>:

Սակայն, ինչպես արդեն դիտել ենք տվել, դպրոցների ձևավորումը և դպրոցներին հարելը կամ պատկանելը սոսկ կրոնաաստվածաբանական ազատ համոզմունքի արդյունք չէ, այլև հասարակական-քաղաքական ազդեցությունների նկատմամբ բռնած դիրքի արտահայտություն: Այդպես էր նաև տվյալ

48 A. Vööbus, History..., p. 7.

49 Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականությունը, էջ 40—41:

50 A. Vööbus, History..., p. 14, 100, 105:

51 Նույն տեղում, էջ 12—16, 20—24:

52 Նույն տեղում, էջ 24—30:



դեպքում: Անտիոքը միաժամանակ, թեև ոչ հավասարապես, ասորական քաղաքակրթության կենտրոն էր: Ըիշտ է, այնտեղ հիմնականում իշխում էր հունական խոսքն ու գիտական միտքը, սակայն, պետք չէ մոռանալ, որ այն Ասորիքում էր գտնվում և աշխույժ առևտրական-տնտեսական կապերի հետ միաժամանակ մշակութային սերտ աղերս էր ստեղծվել նրա և Ասորիքի այլ կարևոր կենտրոնների միջև: Ասորական քրիստոնեական մտավորականությունը այդ կապերը ավելի էր սերտացնում: Ահա, երբ 431 թվականին տեղի ունեցավ Նիսիոսի տիեզերական ժողովը և նշույթեց նեստորականությունը բոլորովին էլ ոչ առանց քաղաքական նկատառումների (հիմնականում բյուզանդական ազդեցությունները ակտիվացնելու և դրանց ոլորտները ընդլայնելու համար), Եղեսիան Բարուլայի առաջնորդությամբ նախապես մերձեցավ Անտիոքին: Ապա, շատ կարճ ժամանակ անց, խիստ կտրուկ փոխվեցին դրանց հարաբերությունները, և Բարուլան այս անգամ շեշտակի երևա դարձրեց Անտիոքից, նույնիսկ վառել տվեց Քեղզորոս Մոպսուեստացու երկերը<sup>53</sup>: Նա դարձավ Կյուրեղ Աղեքսանդրացու եռանդուն համակիրներից ու հետևորդներից մեկը:

Այս շրջագարձը չէր կարող իր հետևանքները շունենալ նաև Ալեքսանդրիայի մեկնաբանական ավանդները որդեգրելու խնդրում: Սույն ընթացքը հետզհետե ավելի առաջացավ և միաբնակիների հղորացման ու ծավալման հետ միասին դրություն տեղ դարձավ:

Այսպիսով, Եղեսիայի, ինչպես նաև Մծբինի, ասորական կրթական և մատենագրական կենտրոնները սերտորեն առնչվում են և՛ Անտիոքի, և՛ Ալեքսանդրիայի դպրոցների մեկնաբանական ավանդներին, բայց ոչ կանոնավոր ու հավասար հետևողականությամբ, ավելի շուտ և ավելի շատ հակված են եղել Անտիոքի կողմը. «Եղեսիայի դպրոցը Անտիոքյան մտայնության ու պրոպագանդայի իսկական սիրտն էր»<sup>54</sup>:

Նույնը կարելի է ասել նաև մյուս ասորական մեկնաբանական կարևորագույն կենտրոնի՝ Մծբինի մասին: Հիրայի մահվամբ (457 թ.) Եղեսիայի դրպոցը կորցնում է իր վերջին սյուներից մեկին, ու թեև նրանից հետո էլ այն շարունակում է գործել, բայց արդեն խամրած վիճակում, և շուտով իր տեղը զիջում է Մծբինին, երբ «Եղեսիան խավարեց, և պայծառացավ Մծբինը»: Վերջինս, երբ միասին գործում էր Եղեսիայի հետ և դարի 50-ական թվականներից, ու նրանից հետո էլ՝ առանձին, առաջնորդվել է առավելապես անտիոքյան մեկնաբանական ավանդներով<sup>55</sup>:

Այսպիսին էր ասորական մեկնաբանական գրականության դեպի Անտիոքի և Ալեքսանդրիայի դպրոցները ցուցաբերած կողմնորոշման պատկերը՝ ուրվագծված ամենասեղմ խոսքերով:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել կապաղովկիացիների մասին:

Բյուզանդական գրականության երեք «մեծ կապաղովկիացիներից» երկուսը՝ Բարսեղ Կեսարացին և Լորայրը՝ Գրիգոր Նյունացին հետաքրքիր երևույթ

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>55</sup> Տե՛ս մանրամասն՝ նույն տեղում, էջ 50, 77—81, 122—129, 134—141, 211—222,

են մեկնարանական գրականության անդատանում: Առաջինը իր հանրածանոթ «Յաղագս վեցօրէից» կամ՝ «Վեցօրեայր» երկով, որը ըստ էության մեկնությունն է Մենդոց գրքի և ներկայացնում է իր դարի գիտական միտքն ու մտածողությունը տիեզերքի, բնության, իրերի, երևույթների, կենդանական աշխարհի... մասին, կատարել է գիտական-մատենագրական լուրջ ներդրում: Այս առիթով բնության ու բնագիտական երևույթներին առնչվելով, նա ավելի շատ Անտիոքի դպրոցի ավանդներն է համակրում ու դնում կիրառության: «Ինչ վերաբերում է ինձ, երբ ես ուզում եմ խոսել խոտի մասին, ես խոտի մասին էլ խորհում եմ: Այդպես եմ վարվում բույսի, ձկան, վայրի գաղանի և ընտանի անասունի պարագային: Ես ամեն ինչ ընդունում եմ այնպես, ինչպես պարզ ասված է, որպեսզի չշիկնացնեմ (ամոթով չթողնեմ—Փ. Ա.) Ավետարանը»<sup>56</sup>:

Սակայն, նա կիրառում է նաև այլարանական եղանակը, թեկուզ և՛ սակավ:

Այս միջավայրի (Կապադովկեա) բյուզանդական մատենագրության մյուս մեծ ներկայացուցիչը՝ Գրիգոր Նյուսացին, որոշակիորեն հակված է դեպի այլարանություն: Նա չի ժխտում, որ ամեն մի բառի պարզ իմաստի հետ կան նաև երկրորդ կամ ավելի իմաստներ, և իր համար ավելի նախընտրելի ու էական են այս վերջինները: Նպատակադրված փնտրում ու գտնում է դրանք և այլարանական-խորհրդապաշտական մեկնություն տալիս բոլորին: Այս նկատառումներով Գ. Նյուսացին շատ բարձր է գնահատում Որոգինեսին: Նա նրա ուղղափառ հետևորդն է ըստ ամենայնի: Նա նաև Փիլոնի մեկնությունների ուժեղ ազդեցության տակ է: Այդ շատ ակներև է նրա «Ժողովողի», հատկապես «Երգ-երգոցի» մեկնություններում:

Այս երկուսի էլ ազդեցությունը հայ մեկնարանական գրականության վրա միանգամայն նշանակալից է:

Մեթոդարանական այս սկզբունքներն ու նրանց գործնական կիրառությունները թանկարժեք և օրինակելի ժառանգություն հանդիսացան հայ մեկնարանական գրականության համար՝ թարգմանաբար և անմիջականորեն: Նրանք ոչ միայն հարստացրին նրա հիմունքային գիտապաշարը բաղմամբիվ բնագավառներում, այլև լայն հնարավորություններ ընձեռեցին զբաղվելու տեսական ընդհանրացումներով, սեփական մտածողության զարգացմամբ, տրամաբանական խոսքի ձևուն, երբեմն խիստ նրբերանգված կիրառություններով, լեզվի և ոճի մասնագիտական մշակմամբ և այլն: Մեկնարանական գրականության մեթոդարանական-տեսական հետագա մանրախնդիր բնությունները հիշյալ նկատառումներով շատ լուրջ նպաստ կարող են բերել, քանի որ հայ համարնույթ ժառանգությունը, կարելի է որոշակի ասել, նրա օրդանական մասն է և՛ թեմատիկ ընդգրկումների, և՛ դրանց բացահայտման մեթոդարանական-տեսական սկզբունքների ընդհանրությամբ: Այս նկատառումը վերաբերում է հայ մեկնությունների ոչ միայն ամբողջությանը, այլև առանձին միավորներին և ըստ այսմ դառնում առավել կարևոր ու նշանակալից:

Հայ մեկնարանական գրականության մեջ ընդգրկված նյութը իր տարրեր

<sup>56</sup> J. Quasten, *Initiation*, vol. III, p. 313.

օղակներով՝ գիտություն, փիլիսոփայություն, բանահյուսություն, ավանդություն, պատմություն, կենցաղ, սովորույթ, ծես, լեզու, քերականություն, թարգմանություն, արվեստ և այլն, արժարժված է նույն ընդհանրական ելակետներով, միևնույն հիմնական տեսանկյունից:

Հայ մեկնաբանական գրականությունը ծնվել է թարգմանական գրականության օրորոցում և սնվել նրա ակունքներից: Հայերեն գրավոր մշակույթի արարման սկզբնական օրերից, «մեկնաբանելը» հաճախ նույնացվել է «թարգմանելու» հետ և՛ հակառակը: Տեսանք, որ թարգմանիչը ինքը նաև մեկնիչ էր: Այդպիսին էին Ն դարի հայ թարգմանիչները, որ այնքան ճշգրիտ կարողացել էին Ս. Գրոց, եկեղեցական հայրերի բազմաթիվ մեկնությունների, ջատագովական ու փիլիսոփայական երկերի թարգմանությունները կատարել: Թարգմանությունը նրանց համար պարզ, ստրկական փոխադրություն չի եղել: Այս կապակցությամբ տեսական և գործնական նկատառումներով բանավեճեր են տեղի ունեցել նաև Հայաստանում, ինչպես նշեցինք, և դրա վկայություններից մեկն էլ Եվսեբիոս Եմեսացու թեկուզ ոչ այնքան ուղղակի հաստատումն է<sup>57</sup>: Ավելի ուշ, Ղուկասու Ավետարանի Մեկնության հայ հեղինակը շարունակում է պաշտպանել այս սկզբունքը, դատապարտելով ստրկական թարգմանության եղանակը. «Զգրոյն զօրութիւն ոչ գիտէին, որ է մեկնութիւն, և միայն ի բառսն հայէին»<sup>58</sup>: Դրանից զերծ մնալու միակ ճիշտ և հանձնարարելի միջոցը նախ և առաջ բնագրի իմաստի ճշգրիտ ընկալումն ու բացահայտումն է և ապա թարգմանաբար այն ներկայացնելը ըստ պատշաճության: Առ այսօր մասնագետների ուշադրությունից շարտաքսված այս հարցը, կարծում ենք, ճիշտ են լուծել մեր բանիմաց նախնիները:

Մեկնաբանական եղանակի ընտրության հարցում հայ մեկնիչները համեմատաբար ավելի լիբերալ դիրք են բռնել, շարժվել են ավելի անկաշկանդ, նրանք պատկանում են քրիստոնյա մեկնիչների այն խմբին, որը գրեթե հավասար շափով կիրառել է նշված երկու հիմնական եղանակներն էլ: Այնուհանդերձ, մեր կարծիքով, դրանց երկերի մանրախնդիր քննությունը ցույց է տալիս, որ գերապատվությունը տրվել է բառացի-տառացի եղանակին, Անտիոքի դպրոցի մեկնաբանական մեթոդաբանական սկզբունքներին, համեմատաբար ավելի նվազեցնելով այլաբանական եղանակի կիրառությունը, ինչպես վարվել էին Եփրեմ Ասորին, Մեծ Կապադովկիացիները և ուրիշներ:

Մեկնաբանական եղանակի ընտրության հարցում կարևոր նշանակություն է ունեցել նաև մեկնաբանվող բնագրի բնույթը: Մենք այս մասին ակնարկել ենք արդեն: Վերհիշելով ասենք, օրինակ, էթե մարգարեությունները, Երգ-Երգոցը, Հովհաննու Հայտնությունը պահանջում էին առավելագույն շափով այլաբանական եղանակ, ապա Դատալորաց, Թագավորությանց, Մակաբայեցվոց և մյուս այս բնույթի գրքերը՝ ավելի շուտ բառացի-տառացի եղանակին էին պատշաճում: Առաջին խմբի բովանդակությունը հագեցած է առավելագույնս այնպիսի տարրերով, որոնք ինքնին այլաբանություն են, ունեն սիմվոլիկ, գուշակողական, խորհրդասքող, փոխաբերական նշանակություն: Ինչ վերաբերում է Երգ-Երգոցին, ապա այն միանգամայն հատուկ և զգույշ վերաբերմունք է

57 Եվսեբիոս Եմեսացի, *Եղվ. աշխ.*, էջ 1—4: Տե՛ս նաև՝ Լ. Տեր-Պետրոսյան, *Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնությունը»...*, էջ 63—68:

58 «Նոր բողոքից Հայկազեան լեզուի», *Տ. Բ.*, էջ 244:

պահանջել ի սկզբանե անտի, շատ նեղ կացության մատնելով բոլոր իր մեկնիչներին: Բուն բովանդակությունը կրոնական-եկեղեցական տեսանկյունից, միանգամայն հասկանալի պատճառներով սպասելի էր, որ համարվեր խիստ գայթակղիչ, բայց այն Ս. Գրոց՝ Աստվածաշնչի մաս է կազմում: Պետք է բացատրվի, պատճառաբանվի այս կատարված փաստը նաև այդ նույն տեսանկյունից: Նշված երկրորդ խմբի բնագրերը պատմում են հիմնականում իրական-պատմական իրողությունների ու երևույթների մասին, թեկուզև հրաշքներով համախառն: Այս պատճառով էլ տվյալ դեպքում բառացի-տառացի եղանակին նախապատվություն տալը անհրաժեշտորեն ավելի ճիշտ է: Հայ մեկնիչները այդպես էլ վարվել են:

Հայ մեկնիչների համեմատաբար ավելի շատ Անտիոքյան դպրոցի սկզբունքներով մեկնաբանելու կողմնորոշումը, մեր կարծիքով, բացատրելի է նաև հետևյալ հիմքերով. նախ՝ պատմաաշխարհագրական և քաղաքական ավելի մերձավոր առնչություններով Անտիոքի ազդեցության ոլորտի մեջ էին մտնում Ասորիքն ու Փոքր Ասիան, ներառյալ Մծբինը, Եդեսիան, Կապադովկիան, որոշ առումով՝ Բյուզանդիոնը: Հայաստանը սերտ առնչություններ է ունեցել դրանց հետ նույնիսկ այն դեպքերում, երբ դավանաբանական վեճերի պատճառով խանգարիչ հանգամանքներ շատ են եղել: Երկրորդ՝ եկեղեցական և մատենագրական-մշակութային բազմազան կապերով: Ուղղակի Անտիոքի և Անտիոքի դպրոցի ներկայացուցիչների հետ հայ եկեղեցին և հայ եկեղեցական գործիչները դեռ V դարից էլ առաջ, բայց հատկապես այդ և հետագա որոշ ժամանակներում (XII—XIII դդ.) շփումներ շատ են ունեցել: Այդ առիթով արժարժվել են միջ-եկեղեցական, վարդապետական, դավանանքային, կանոնական հարցեր, մշակութային ու մատենագրական բնույթի դանազան խնդիրներ: Բնական է, այս բոլորը պիտի տանեին փոխադարձ ազդեցությունների: Այդպես էլ եղել է: Շատ մեծ է հատկապես Հովհան Ռսկեբերանի մեկնաբանական ժառանգության նշանակությունը նաև այս առումով:

Ալեքսանդրյան դպրոցի հետ հայ եկեղեցու առնչությունները, ինչպես հայտնի է, դարձյալ սերտ են եղել, մանավանդ դավանաբանական հարցերում, սակայն մատենագրական-մեկնաբանական ժառանգության տեսանկյունից այդ առնչությունների անդրադարձը համեմատաբար ավելի նվազ է: Ըստ երևույթին դրան չի նպաստել նաև այն, որ Ալեքսանդրիան հետզհետե հեռու է մնացել հայ իրականության՝ աշխարհիկ և, մանավանդ, եկեղեցական շահագրգռությունից, ավելի նվազ դեր ունենալով հայ ժողովրդի քաղաքական ու եկեղեցական պատմության մեջ:

Նկատառման է արժանանում մի այլ կարևոր իրողություն: Հայ մեկնիչները ևս շատ դեպքերում, եթե ոչ միշտ, իրենց երկերը կառուցել են «շղթայաձև» (խմբագիր) այսինքն՝ տարբեր մեկնիչների երկերից համապատասխանաբար փոքր կամ մեծ քաղվածքներ անելով և օղակ-օղակ կցելով իրար՝ իրենց սեփական խոսքերից կազմված հատվածներով շղթա-մեկնություն ստեղծել: Շատ է պատահում, որ միևնույն շղթա-մեկնության մեջ օղակներ են լինում և՛ Անտիոքի, և՛ Ալեքսանդրիայի դպրոցի հետևորդ մեկնիչների երկերից: Սա ակընհայտ է և այնքան տարածված, որ ապացույցների չի կարոտում:

Հայ մեկնաբանական հարուստ ժառանգության հիմնական մասը կազմում են Աստվածաշնչի գրքերին նվիրված մեկնությունները:

Կրոնական բովանդակությամբ մեկնությունների շարքում ուրույն և հետաքրքիր են նաև նրանք, որոնք նվիրված են ժամագրքին, Պատարագամատույցին կամ Պատարագին, եկեղեցու ծիսական ու նվիրապետական կարգերին, առնելով: Կան նաև այնպիսիները, որոնք ավելի փոքր ծավալի են և հիմնականում կոչվել են «լուծմունք», «պատճառ»:

Միջնադարյան Հայ մեկնիչներից (մինչև XIII դ.) մասնավոր հիշատակության արժանի են Ստեփանոս Սյունեցին (Մեկնութիւն Դանիէլի, Յորայ, ժամակարգութեան...), Գրիգորիս Արշարունին (Մեկնութիւն քնթերցուածոց), Անահիա Սանահնեցին (Մեկնութիւն շորեքտասան թղթոցն Պողոսի), Խոսրով Անձեւացին (Մեկնութիւն ժամագրոց), Գրիգոր Նարեկացին (Մեկնութիւն Երգոց-Երգոյն), Պողոս Տարոնացին (Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ), Ներսես Շնորհալին (Մեկնութիւն Մատթէի), Ներսես Լամբրոնացին (Մեկնութիւն Սաղմոսաց, Առակաց, Բժ-ան մարգարէից, Յովհաննու Յայտնութեան, Պատարագին), Սարգիս Շնորհալին (Մեկնութիւն Թղթոցն կաթողիկեայց), Իգնատիոս Շնորհալին (Մեկնութիւն Ղուկասու), Գևորգ Սկևռացին (Մեկնութիւն Գործոց առաքելոց), Բարսեղ Ըոնը (Մեկնութիւն Մարկոսի), Մխիթար Գոշը (Մեկնութիւն Երեմիայի), Հովհաննես Վանականը (Մեկնութիւն Յորայ)<sup>59</sup>:

Վերոհիշյալներից այլաբանական եղանակը առավելագույնս կիրառել է Գրիգոր Նարեկացին. «Երգ-երգոցին» նվիրված նրա մեկնությունը այդ հենքով է հորինված և հանդիսանում է դրա ամենաբնորոշ նմուշներից մեկը հայ իրականության մեջ: Այստեղ սրտշիշ դեր է կատարել գուցե ոչ այնքան հեղինակի նախասիրությունը, որքան մեկնաբանվող բնագիրը մեզ ծանոթ պատճառով: Այս բնագրի հետ այդպես են վարվել Գրիգոր Նարեկացու նախորդ և հետնորդ բոլոր մեկնիչները (Որոզինես, Գրիգոր Նյուսացի, Հիպոլիտ Բոստրացի, Վարդան Արևելցի...): Սակայն, մեր հիմնական եզրակացությունն այն է, որ հայ մեկնիչները ավելի միշին գիծ են բռնել՝ քիչ հակված դեպի Անտիոքյան դրությունը: Այդպիսին է նաև Վարդան Արևելցին: Միայն իր Երգ-երգոցի և Եզեկիելի, մասամբ Դանիելի մեկնությունների մեջ ավելի լայն տեղ ու նշանակություն է տվել այլաբանականին: Իր մյուս շղթա-մեկնությունների մեջ, հատկապես Հնգամատյանի ու Սաղմոսաց, թեկուզև համեմատական բարեխառնություն է դույզ մեկնաբանական եղանակների, բայց բառացի եղանակը գերադասված է: Ընդհանուր դիրքն ու գիծն են բռնել իր անմիջական ուսուցիչը՝ Հովհաննես Վանականը և վերջինիս ուսուցիչ Մխիթար Գոշը, իրենց վերոհիշյալ երկերում: Ն. Ակինյանը գտնում է, որ Ներսես Լամբրոնացին «Կհետևի այլաբանական կամ խորհրդական դրության, առանց նկատի առնելու բառական կամ նյութական մեկնության սկզբունքը»<sup>60</sup>, և ի հաստատումն իր ասածի վկայակոչում է նրա իսկ խոստովանությունները, որոնք, սակայն, այնքան էլ չեն նպաստում խրնդրին: Գ. Հակոբյանը, ինչպես կտեսնենք քիչ հետո, նման կարծիք է պաշտպանում: Սակայն նրա մեկնությունների բնությունը, մեր կարծիքով, ցույց է տալիս, որ հակառակը, նա ավելի շուտ տառացի՝ «բառական կամ նյութական» եղանակն է կիրառել: Դրանում համոզվելու համար առանձին օրինակներ մեջ-

<sup>59</sup> Տե՛ս մտերամասն՝ Է. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա., Երևան, 1959, էջ LX—LXIV:

<sup>60</sup> Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 135:

րերելը քիչ է, որովհետև առանձին օրինակներով կարելի է և հակառակ տպա-  
վորությունն ստեղծել. Հարկ է նրա, և ոչ միայն նրա, այլ առհասարակ մեկնու-  
թյունները դիտել ու զննել իրենց ամբողջության մեջ, որպեսզի հստակ ու ճշգրիտ  
կզրակացություն գոյացվի: Ըստ այդմ, տվյալ գեպրում մենք զանց ենք առնում  
մեջբերել համապատասխան քաղվածք-օրինակներ, նաև տեղ ու ժամանակ  
խնայելու համար, քանի որ միշտ էլ կարելի է դիմել խնդրո առարկա բոլոր  
մեկնություններին նման օրինակներ բազմիցս ընթերցելու համար: Բնական է,  
այսու մենք շենք փորձում ժխտել այն ճշմարտությունը, որ նա նաև մեկնաբա-  
նել է «այլաբանորեն»:

Մեկնաբանական աշխատանքների առնչությամբ դուռ տեսական բնույթի  
գործեր, ամբողջական դիտողություններ, սահմանումներ կամ այլ ուղղակի-  
վկայություններ գոհացուցիչ շափով երևան չեն գալիս հայ մատենագրության  
մեջ, թեև ստույգ է, որ հայ մեկնիչները քաջ ծանոթ են այդ բնագավառի հար-  
ցերին: Նկատվում են միայն ամփոփ, միջանկյալ ակնարկներ և բնորոշումներ:  
Ծանոթանանք մի քանիսին, ընդհանուր գաղափար կազմելու համար:

Ներսես Ծնորհալին տեսականորեն դանաղանում է մեկնաբանական եղա-  
նակի «պարզ տեսությունն» ու «խորին տեսությունը»: Ըստ որում «պարզը» բա-  
ռացի-տառացի, իսկ «խորինը» փոխաբերական, այլաբանական ընկալումն է  
հստակ մատնանշում: Սա ներսես Ծնորհալու համար սկզբունքային նշանակու-  
թյուն ունի և սոսկ իմացության ցուցանիշ չէ: Նա ընդգծում է, որ այսինչ կամ  
այնինչ բնաբանը, բառակապակցությունը, ինքը թեև քննել է ըստ «պարզ տե-  
սության», սակայն հիշեցնում է, որ ինքը նկատել է նաև դրանց միտքը ըստ  
«խոր տեսության», «այս ըստ պարզ տեսութեան քննեցաւ, բայց ունի խոր ինչ  
տեսութիւն»<sup>61</sup>:

Ներսես Ծնորհալին ուղղակի վկայում է, որ ինքը ծանոթ է նաև այդ «տե-  
սությունների» տարբեր բաղադրիչներին ու տրոհվածության: Այսպես. նախ՝  
կա բնագրի տառացի նշանակությունը, ինքը՝ իբր կամ երևույթը, նրա երկ-  
րորդ՝ սիմվոլիկ-փոխաբերական իմաստը, և երրորդ՝ հոգևոր, սրբազան խոր-  
հուրդը, այն, ինչ որ վերջին հաշվով հետևում, կզրակացվում է այդ բոլորից:  
Ահա մի օրինակ իր իսկ երկերից. «Երկզիմի մեկնութեամբ լուծումն առնէ... զի  
տեսնալ մանուկ զբար հաց կարծէ, և զօձ՝ ձուկն իմանալ... բայց քար զար-  
տաքոյ բնութեան իրս ասէ և օձ՝ զմարմնական ցանկութեանցն լըրմունս...  
իսկ զհոգևորն՝ հաց և ձուկն, զոր չեա յարութեան ետ աշակերտացն, որ է ար-  
քայութիւն և արդարութիւն նորա...»<sup>62</sup>: Ուրեմն, ըստ առաջին աստիճանի՝  
քար, օձ, ըստ երկրորդի՝ արտաքին բնութեան, մարմնական ցանկության խոր-  
հրդանշում, ըստ երրորդի՝ աստվածային պարզի՝ արքայության, արդարու-  
թյան արժանացում: Հստակ է, որ նա լավատեղյակ է տեսական այս կարգի  
հարցերին ընդհանրապես, այդ իմացությամբ էլ դրանք կիրառել է իր համա-  
պատասխան երկերում:

61 Ն. Ծնորհալի (և Հ. Մորժորեցի). Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէի, Գ. Պոլիս, 1825, էջ 176: Ինչպես հայտնի է, Ն. Ծնորհալին անավարտ է թողել իր սույն Մեկ-  
նությունը: Այն շարունակել և ավարտին է հասցրել Հ. Մորժորեցին:

62 Նույն տեղում, էջ 174:

Ներսես Լամբրոնացին նմանապես քաջատեղյակ է մեկնաբանական հիշյալ երկու հիմնական եղանակների տեսական առանձնահատկություններին: Մենք արդեն նշել ենք, որ նա կիրառել է այդ երկուսն էլ և նախապատվություն է տվել տառացի եղանակին: Իր մեկնությունները հյուսելիս նա հիմնականում Անտիոքի դպրոցի հետևորդների երկերն է իրրե ազդելու օգտագործում: Միաժամանակ նկատառելի է, որ բազմաթիվ գլուխների վերջում առանձին հատված է ստեղծել, ուր այլաբանական, հոգևոր-բարոյական հիմքերով ամփոփել է նախապես մեկնաբանված նյութը «Այլաբանութիւն» ենթախորագրի տակ<sup>63</sup>: Նա տեսական ու գործնական ընտրությամբ հաստատում է իր իմացությունը այս հարցում: Այդ է հաստատում նաև իր մեկնաբանական ողջ ժառանգությունը, երբ ավելի հանգամանորեն ենք այն զննում:

Նշենք ևս մի հայ մեկնիչի՝ Կիրակոս Երզնկացուն. իր «Մեկնութիւն Եւագրի» աշխատության մեջ, ինչպես ժամանակին նկատել է Մ. Չամչյանը<sup>64</sup>, ունի արժեքավոր տեսական նկատողություններ մտքի, մտածողության, գիտության, ինչպես նաև մեկնության մասին: Ըստ այս հեղինակի, մեկնությունն ունի երկու երես՝ նյութական և աննյութական... «Որպէս զՔրիստոս վէժ ասէ գիրն, որ մեկնութիւն ունի՝ «վէժն նիւթ է, և մեկնութիւն՝ աննիւթ է»<sup>65</sup>: Առաջինը նրա ատաղձն է, երկրորդը՝ հետևությունը, արդյունքը: Էականը երկրորդն է: Սա նաև դրա նպատակն է, որ «...հրամայէ քննել և իմանալ զժածուկ միտս բանիցս, զի խորին և թաքուն է»<sup>66</sup>: Դրա համար էլ, եթե մեկնիչը շփափանցի այդ «խորին և թաքուն» գաղտնարանները, բավարարվի սոսկ նյութական ատաղձի ցուցադրությամբ ու դրա վրա միայն իր ուշադրությունն ու հմտությունը կենտրոնացնի, ավելորդ ջանքեր կատարած կլինի «...Որ ի գրոցն ի նկարագիրն և ի ճառն միայն հայի, ի դատարկ յիմաստութենէ խորհուրդս հայի»<sup>67</sup>: Անշուշտ, այս մի կտրուկ եզրակացություն է, որին ինքը անվերապահ հավատարիմ չէ, քանի որ գործնականում ավելի լայն տեղ է հատկացրել տառացի եղանակին, բայց և ընդգծում է, թե ինքը միաժամանակ շատ լավատեղյակ է զույգ եղանակների էությունը ու նվազ կարևորություն չի տալիս երկուսին էլ: Հարկավոր է լավ պատրաստվել իմացապես և հոգեպես այս դժվարին ու պատասխանատու աշխատանքին. «որպէս բերականն կամ դարբինն թէ զարուեստին հանճարն շինի ուսել, շկարէ առնել զգործն: Այսպէս և միտքն, որ բանին արուեստաւոր է, առանց հոգոյն (սրբոյ) շնորհաց ոչ կարէ ընտրել զգործ բանաւորութեան, զբանին մեկնութիւն...»<sup>68</sup>, այդպես նաև գործին ոչ տեղյակ մարդիկ չեն կարող Ս. Գրոց մեկնություն կատարել: Թեկուզև ինքը «աստուած ուսուցանէ զմեկնութիւն պատուիրանաց իւրոց և արդարոցն»<sup>69</sup>, այդուհանդերձ պետք է զինել նաև սեփական «հանճարը»:

Այս կարգի բնութագրական շատ դիտողություններ ու հաստատումներ

63 Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն Սրբոց երկատասան մարգարէից, Կ. Պոլիս, 1826, էջ 58, 84, 111, 114...:

64 Մ. Չամչյան, Մեկնութիւն Սաղմոսաց, Վենետիկ, 1823, էջ 10:

65 Մատենադարան, ձեռ. № 1980, Թ. 116ա:

66 Նույն տեղում, Թ. 147ա:

67 Նույն տեղում, Թ. 52բ:

68 Նույն տեղում, Թ. 53ա:

69 Նույն տեղում, Թ. 112բ:

անկասկած առկա են նաև մյուս հայ մեկնիչների երկերում, որոնց հարկ է առանձին հետամտել և ուսումնասիրել ըստ ամենայնի, որ մեր նպատակից առաջժմ դուրս է: Այդուհանդերձ, ծանոթանանք այս առնչությունը համեմատաբար շատ ավելի ուշ արտահայտված տեսական որոշ կարծիքների, որպեսզի սույն կարևոր խնդրի դարգացման ընթացքը ավելի պարզ լինի այսօրվա դրությունը, քանի որ ավելի ուշ ժամանակներում էլ այս հարցերը զբաղեցրել են հայ մեկնիչներին ու դրանցով հետաքրքրվող մասնագետներին:

Նրանցից է վաստակաշատ Մ. Չամչյանը: Նա տեսական-քննական կարևոր խոսք է ասել այս առնչությամբ: Իր «Սաղմոսաց մեկնութեան» արժեքավոր ներածականում ուշադրավ նկատառումներ շատ կան: Թեև դրանց հիմքում բնկած են կաթոլիկ եկեղեցու կողմնորոշումը և ելակետային դրույթները, սակայն, բնական է, հայ մատենագրության օրգանական մասն են կազմում և մեղ համար էլ խնդրո առարկա դառնում:

Մ. Չամչյանը նմանապես ճանաչում և ընդունում է մեկնաբանական երկու հիմնական եղանակ: Առաջինը տառացին է, որը նա բնութագրում է իրրե «նկարագրական մեկնություն»: Այստեղ նա նախ և առաջ նկատի ունի մեկնաբանվող նյութի արտաքին, պարզ, ակներև իմաստը, երբ այն բացահայտելու և արժևորելու համար մեկնիչից մեծ ջանքեր չեն պահանջվում: Այդպես նաև սրա մյուս մերձակա տարրերակը՝ «Մեկնություն ըստ ճառին», այսինքն բնագրին միանգամայն համերաշխ, նրա ուղղակի իմաստի արտաբերման հիման վրա: Սույնը համանման է «գրական-բնագրական» մեկնությանը, որի մասին քիչ վերը համառոտ ասել ենք: Երկրորդը այլաբանական եղանակն է, որը «Խորհրդական մեկնություն» է կոչում: Այն առաջինի պարզ հակադրությունը չէ, սակայն համադաս շարունակությունն էլ չէ, քանի որ կարող է կիրառվել լիովին ուրույնաբար: Տարբեր է հատկապես նրանով, որ այն, ինչի «նկարագրական մեկնությամբ» կամ «ըստ ճառին» լուծմունքով հնարավոր չէ հասնել բնագրի թաքնված, ամբողջական իմաստի ու նշանակության բացահայտման, «խորհրդական մեկնությամբ» հնարավոր է, բայց ըստ հեղինակի, նախընտրելի է, որ դրանք միասնաբար կիրառություն գտնեն, որպեսզի մեկնությունը ավելի ստույգ ու համակողմանի լինի: Ինքը այդպես էլ վարվել է իր այնքան ծաղալուն «Սաղմոսաց մեկնութեան» մեջ:

Մ. Չամչյանը այս երկու հիմնական եղանակներից յուրաքանչյուրը տրոհում է երեք ստորաբաժանումների: «նկարագրական մեկնությունը»՝ ա) «Ըստ պարզ տեսութեան», բ) «Ըստ փոխակերպութեան», գ) «Ըստ դիտեալ իրին», որոնք նա հասկանում է այսպես. «...ըստ պարզ տեսութեան, յորժամ միտ բանի ըստ առաջին (իմա՝ ուղղակի—Փ. Ա.) նշանակութեան ի մէջ բերի...», «ըստ փոխակերպութեան, յորժամ միտ բանի ի մէջ բերի ոչ ըստ առաջին նշանակութեան, այլ ըստ համեմատական կամ ըստ նմանաբանական նշանակութեան...», իսկ «ըստ դիտեալ իրին, յորժամ ի բանի՝ բառքն յայլ ինչ հային, և դիտումն խօսողին՝ յայլ ինչ...»: Վերջինում նա տեսնում է որոշակի ընդհանրություն «խորհրդական մեկնութեան» հետ, որովհետև նմանապես «հայի ի գաղտնի խորհուրդ»: «խորհրդական մեկնութիւնը»՝ ա) «Ըստ այլաբանականին», բ) «Ըստ բարոյականին», գ) «Ըստ վերածականին»: Ավելի վերջում սրանց թվին է ավելացնում «ըստ յարմարականին», ըստ երևույթին նկատի ունենալով վերջինիս ոչ մշտական միասնությունը նախորդի հետ, բա-



նի որ «հարմարեցումը» ամեն պարագայի անխուսափելի, անպայման չէ: Նա այս առնչությամբ պարզաբանում է. «Ի սոսա յաեղեալ լինի և յարմարեալանն (ընդգծումը մերն է—Փ. Ա.), որով մի ինչ Սուրբ Գրոց, որ յա՛յս ինչ հայի, յարմարի և յա՛յլ ինչ», տվյալ դեպքում մատնանշելով բնագրի այսպես կոչված լրացուցիչ, օժանդակ միտքը: Թե ինքը ինչ ըմբռնում ունի այս բնութագրումներից յուրաքանչյուրի մասին, նա հետևյալ օրինակով է ներկայացնում. այսպես՝ «Ով ելցէ ի լեառն տեառն...» սաղմոսի «ի լեառն տեառն» խոսքերը «ըստ նկարագրին (իմա՝ նկարագրականին—Փ. Ա.) նշանակէ զՍիոն լեառն, որ յԵրուսաղէմ, ըստ այլաբանականին՝ զեկեղեցի սուրբ, վերածականն հայի՝ յեկեղեցի յաղթանակող, այսինքն արքայութիւն երկնից և առհասարակ ի վիճակ հանդերձեալ կենաց, բարոյականն հայի՝ ի հանգամանս վայուց կամ բարձրութիւն իմաստութեան... իսկ ըստ յարմարականին՝ զայլ ինչ լեառն, զոր օրինակ՝ զլեառն Սեպուհույ...»<sup>70</sup>:

Բայց նա հիշեցնում է, որ, անշուշտ, կան դեպքեր, երբ այս եղանակներից ոչ բոլորը կարելի է նույն բնարանի նկատմամբ միասնաբար կիրառել: Էինում է և այնպես, որ այս կամ այն բնարանը թույլ է տալիս կիրառել միայն մեկ եղանակ. «Այլ ծանիր, զի ոչ ամենայն բանք ըստ ամենայն մեկնութեանց դնին առաջի, իբր թէ ամեններին ունիցին զմեկնութիւն ըստ ամենայն խորհրդոյ: Այլ ոմանք՝ ըստ այսմ և ոմանք՝ ըստ այնմ: Ոմանք միայն ըստ նկարագրին, և ոմանք ըստ նկարագրին և ըստ այլաբանականին: Ոմանք նոյնպէս ըստ նկարագրին և ըստ բարոյականին, և ոմանք դարձեալ ըստ նկարագրին և ըստ վերածականին, և այլք նմանապէս ըստ նկարագրին և ըստ յարմարականին միայն»<sup>71</sup>:

Մ. Չամչյանը այս բոլորի նկատմամբ անշափ հաշվենկատ ու խոհեմ լինելով հանդերձ, որոշակիորեն առավել գերադաս է համարում «նկարագրական մեկնությունը»: Չմոռանանք հիշել, որ Ռեֆորմացիայից հետո այդպես էին դիրքորոշված ողջ Եվրոպայում և կաթոլիկ մեկնիչները, այդ թվում նաև՝ Միքայել Չամչյանը, որա ազդեցությունից զերծ մնալ չէին կարող: Նա ինքն այդ բացատրում է մի քանի պատճառներով: Ըստ որում նա գտնում է, որ մարդկային միտքը և հոգին որչափ որ ճիշտ են ընկալում «նախատիպը», այսինքն բնագրային ուղիղ իմաստը, այնքան հստակ ու հաստատուն են տեսնում թարուն խորհուրդները, որովհետև «նախատիպի» մեջ է այն, ինչի վրա «խորհրդական մեկնությունը» հիմնվում է, ինչը բողազերծում և դուրս է բերում հրապարակ. «...Բայց զայս մի ինչ ևս պարտ է դնել ի մտի՝ թէ այնչափ պայծառ և հաստատահիմն նշմարէ հոգին զայդոսիկ, որչափ ճշմարիտ ըմբռնէ զնախատիպն, այսինքն՝ զնկարագրականն, զի ի սմա նկատի այն, որ ի խորհրդականն մտածի»<sup>72</sup>: Այլուր նույն միտքը ընդգծում է այսպես. «Իսկ պարզ խորհրդական մեկնութիւն ի ներքոյ նկարագրականին ծածկեալ կայ...»<sup>73</sup>: Այս հիմքի վրա էլ խոստովանում է, որ «Յայս գործ (իմա՝ «Սաղմոսաց մեկնութեան» մեջ—Փ. Ա.) առաջին փոյթ մեր եղև ի մէջ բերել զնկարագրական մեկնութիւն իւրաքանչիւր բանից, որ ասի՝ մեկնութիւն ըստ ճառին» և «փոյթ

70 Տե՛ս մտերամասն՝ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 10—12:

71 նույն տեղում, էջ 12:

72 նույն տեղում, էջ 12:

73 նույն տեղում, էջ 13:

կալար զայնց միայն ի մէջ բերել խորհրդական մեկնութիւնս, որք իրօք պատշաճին...», որպեսզի շնամանվի նրանց «որք ջանացան զամենայն ըստ ամենայն մտաց մեկնել և կամ՝ յամենայնի զխորհրդական ինչ մեկնութիւն գտանել, զարտուղեցան ի ճշմարտութենէ...»<sup>74</sup>: Ուրեմն, առանց «խորհրդական» մեկնութեան «նկարագրականը» ի զորու է գործելու, բայց հակառակը՝ ոչ Սյւպիսով, խորհրդական-այլաբանականը նկարագրական-տառացիի համեմատութեամբ, ըստ Միքայել Չամչյանի երկրորդական կարեւորություն ունի Հստակ է, որ սա արդեն ուղղակի արդյունք է մեկնաբանական տեսական մտածողության մեջ մեթոդաբանական կողմնորոշման այն վերափոխության, որ բերել էր Ռեֆորմացիան Եվրոպայում և կաթոլիկ եկեղեցու զազափարական ոլորտներում:

Տեսական այս կարգի արժարժումներ արված են ներսես կամբրոնացու 1825 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված «Մեկնութիւն երկոտասան մարգարէից» աշխատության ներածականում, որի հեղինակն է Անդրեաս Նարինյանը: Նա օգտագործում է Միքայել Չամչյանի տերմինաբանությունը և նրա հետևությամբ շարադրում իր տեսակետը: Նախ՝ մեկնության մասին առհասարակ: Այս առնչությամբ նա գրում է. «Նւ արդ՝ կրկին է թարգմանութիւն, մի՞ դարձուցանել զբանն ի լեզուէ յայլ լեզու ըստ յաջողելոյ հոգւոյն, և միտն՝ բացատրել զմիտս բանին ըստ վարդապետելոյ նմին հոգւոյ, որ հասարակորեն կոչի մեկնութիւնս... Բայց մասնաւորապէս առեալ՝ նշանակէ բացատրել զմիտս նմանութեանց. զոր օրինակ այս երգ եկեղեցւոյն՝ ծառ կենաց տնկեալ յադին (մեկնի) սուրբ կոյս, կամ թէ՛ նորոգեալ կղզիք առ Աստուած՝ եկեղեցիք հեթանոսաց... նաև՝ առակաց իսկ, որպէս Տէրն մեր խօսէր ի ժողովս հրէից և յետոյ առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն»<sup>75</sup>:

Այստեղ ևս ուշադրության արժանի է այն, որ «թարգմանությունը» որոշ առումով նույնացվում է «մեկնության» հետ, ինչպես արվում էր միջնադարում: Մենք այդ մասին արդեն նշել ենք: Այնուհետև նա դառնում է երկու հիմնական եզանակների մասին հետևյալ կերպ. «Այլ թէ բանի՞ պատիկ իցէ մեկնութիւն. զի բացի ի նկարագրական թարգմանութենէ տեսանեմք ի մատեանս Հին և նոր կտակարանաց այնպիսի մեկնութիւն, որ ի բացատրելն զմիտս բանին՝ ուսուցանէ մարդկան ուղղութիւն վարուց՝ առ ի զհաւատս կենդանացուցանել. և այն կոչի՞ մեկնութիւն բարոյական (ընդգծումը մերն է—Փ. Ա.)»<sup>76</sup>: Առնթևեր բերված օրինակներով նա հավաստում է իր կարծիքը: «խորհրդական մեկնության» վերաբերյալ հետևյալ պարզ բացատրությունն է տալիս. «է այլ ևս այնպիսի մեկնութիւն, որ ի բացատրելն զմիտս բանին՝ ցուցանէ զներքին խորհուրդ նորին, առ ի զհաւատս զօրացուցանել. և սա կոչի՞ մեկնութիւն խորհրդական (ընդգծումը մերն է—Փ. Ա.)»<sup>77</sup>:

Այս առնչությամբ որոշ տեսական դիտողությունների կարելի է հանդիպել Ե. Տեր-Մինասյանի, Մ. Աբելյանի, Թ. Թոռնյանի, Ն. Ակինյանի, Վ. Հովհան-

74 Նույն տեղում, էջ 10—12:

75 Ն. կամբրոնացի, Եզվ. աշխ., էջ 2:

76 Նույն տեղում, էջ 2:

77 Նույն տեղում, էջ 2:

նիսյանի, Գ. Հակոբյանի, Գ. Խոլոպյանի տարրեր ուսումնասիրությունների ու հրատարակումների մեջ, որոնք տվյալ դեպքում հատուկ նշանակություն չունեն, քստ ալդմ էլ՝ գանց ենք առնում դրանք:

Այսպիսին է ընդհանուր առմամբ հայ մեկնարանական գրականութեան մեջ տեսական այս բնագավառի հարցերի արժարժման համառոտ ուրվագատկերը: Գրանց ավելի հանգամանալից քննությունը, ինչպես և ողջ հայ մեկնարանական գրական ժառանգութեան՝ իրրև հայ մատենագրութեան արժեքավոր և հարուստ բաղադրամասերից մեկի բազմակողմանի ուսումնասիրումն ու արժեքավորումը, անկասկած, կարևոր, օգտակար ու անհրաժեշտ է: Սույն ընդհանուր ակնարկը պարզ մի նախադրյալ է, միայն մի համետ փորձ՝ այս բնագավառում հետագա ուսումնասիրություններին սատարելու նպատակով:

П. П. АНТАБЯН

## О ТЕОРЕТИЧЕСКИХ ОСНОВАХ АРМЯНСКОЙ ТОЛКОВАТЕЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

### Резюме

Статья посвящена постановке и освещению нескольких вопросов историко-теоретического и, в частности, методологического характера одной из важных областей армянской средневековой книжности—толковательной литературы. Внимание автора сосредоточено в основном на существенных особенностях и практическом осуществлении двух принципиальных методов толкования—аллегорического и буквального, характерных соответственно для Александрийской и Антиохийской школ, на их теоретических обобщениях и применении в армянской средневековой толковательной литературе.

Статья является, по существу, первым серьезным опытом, касающимся теоретических основ армянской толковательной литературы, и может быть полезна специалистам. В то же время она имеет цель повлечь за собой дальнейшее профессиональное исследование богатого и ценного наследия армянской толковательной литературы.

P. ANTABIAN

## LES PRINCIPES THEORIQUES DE LA LITTERATURE EXEGETIQUE ARMENIENNE

### Résumé

L'article pose et éclaircit certaines questions de caractère historico-théorique et, particulièrement, méthodologique de l'un des domaines importants de la littérature médiévale arménienne: la littérature exégétique.

L'attention de l'auteur s'est concentrée spécialement sur les particularités essentielles et la réalisation pratique des deux principales méthodes d'exégèse: allégorique et littérale, caractérisant respectivement les écoles d'Alexandrie et d'Antioche, ainsi que sur leurs généralisations théoriques et leur usage dans la littérature exégétique médiévale arménienne.

Cet article est en fait un premier essai sérieux de se pencher sur les principes théoriques de la littérature exégétique arménienne et pourrait être utile aux spécialistes. En même temps, il a pour but d'entraîner des recherches professionnelles ultérieures sur l'héritage riche et varié de la littérature exégétique arménienne.

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ»  
ԱՍՈՐԱԿԱՆ ԱԳՔՅՈՒՐՆԵՐԸ

Հայկական մատենագրության հնագույն և ամենաարժեքավոր հուշարձաններից է «Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը», որում հատակորեն արտացոլված է հայոց դավանաբանական գիրքորոշումը՝ խարսխված առաքելական ավանդության և ընդհանրական եկեղեցու գաղափարախոսության վրա: «Վարդապետությունը» կազմում է Ագաթանգեղոսի «Պատմության» երկրորդ գիրքը՝ գետնդրված առաջին («Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի») և երրորդ («Գարձ փրկութեան աշխարհիս Հայաստան») գրքերի միջև:

Ինչպես հայտնի է, Ագաթանգեղոսի «Պատմությունը» մեզ է հասել հայերեն, հունարեն և արաբերեն բնագրերով. հունարենը թարգմանված է հայերենից, իսկ արաբերենը՝ հունարենից: Բացի բուն «Պատմությունից» գոյություն ունեն նաև «Գրիգորի վարքի» միջնադարյան մի շարք խմբագրություններ՝ հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, եթովպերեն և սլավոներեն լեզուներով, որոնք նույնպես ծագում են մեզ անհայտ մի հայերեն բնագրից:

Հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ Ագաթանգեղոսի «Պատմության» մեզ հասած հայերեն խմբագրությունը կազմվել է V դարի երկրորդ կեսի սկզբներին, մի անհայտ եկեղեցական հեղինակի ձեռքով, որոշ հնագույն աղբյուրների հիման վրա, որոնցից գլխավորներն են Գրիգոր Լուսավորչի վարքը, Հոսիփսիմյանց կույսերի վկայաբանությունը և Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Ագաթանգեղոսի աղբյուրներից են համարվում նաև Աբերկիոսի, Կյուրեղ Երուսաղեմացու վարքերը, Գորիաչի, Շմոնայի, Սանդուխտ կույսի վկայաբանությունները, Բարսեղ Կեսարացու պատարագը և այլն: Ինչ վերաբերում է «Գրիգոր Լուսավորչի վարդապետությանը», որը նույնպես ընդգրկվել է Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ, ապա այն միանգամայն ինքնուրույն երկ է՝ նվիրված աստվածաբանության հիմնական խնդիրների քննությանը: Ի տարբերություն Ագաթանգեղոսի բուն պատմության՝ «Վարդապետությունը» մեզ է հասել միայն հայերեն բնագրով: Որպես բացառություն հայտնի է նրա մի համառոտ վրացերեն տարբերակը, վերագրված Հիպոդիտեսին<sup>2</sup>:

«Վարդապետությունը», որ կառուցված է հայ հասարակությանը, մասնավորապես Տրդատ թագավորին ու նրա արքունիքին ուղղված բանավոր քարոզի ձևով, ընդգրկում է Հին և նոր կտակարանների ողջ բովանդակությունը՝

1 Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ս. Կանայանց, Տիգրիս, 1909, § 259—715:

2 Տե՛ս Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 72—111:

սկսած արարչագործությունից մինչև առաքելական քարոզությունը: Սակայն այդ հսկայական նյութը ներկայացված է ոչ թե հանգամանալից փոխադրությամբ, այլ միայն հիմնական դրվագներով, որոնց ներհյուսված են հեղինակի գաղափարներն ու դատողությունները աստվածաբանական այս կամ այն հարցի վերաբերյալ: Համեմատաբար մանրամասնորեն են արծարծված Երրորդության, արարչագործության, մարդկության, առաքելական քարոզության և մեռյալների հարության թեմաները<sup>3</sup>: Թեև «Վարդապետություն» իրենից ներկայացնում է հիմնականում ուսուցողական, աստվածաբանական-փիլիսոփայական երկասիրություն, որին բնորոշ են ճշգրիտ ձևակերպումներն ու դատողությունները, բայց այն օժտված է նաև գեղարվեստական մտածողության աչքի ընկնող զբր-սևորումներով՝ պատկերավորությամբ, լեզվի հարստությամբ և ոճի վսեմությամբ, որ իր վառ արտահայտությունն է գտել հատկապես մեռյալների հարությանը նվիրված հատվածում<sup>4</sup>:

«Գրիգոր Լուսավորչի վարդապետության» հեղինակային պատկանելության և գրության ժամանակի հարցով հիմնավորապես զբաղվել են Բ. Սարգիսյանը և Ռ. Թոմսոնը<sup>5</sup>: Առաջին հետազոտողի կարծիքով՝ «Վարդապետությունը» գրվել է 425—431 թթ. առաջ Մեսրոպ Մաշտոցի կողմից<sup>6</sup>: Մոտավորապես նույն կարծիքին է նաև Ռ. Թոմսոնը, միայն այն տարբերությամբ, որ նա «Վարդապետության» հեղինակությունը կապում է ոչ թե Մաշտոցի, այլ նրա աշակերտներից մեկի անվան հետ: Երկասիրությունն, ըստ նրա, կազմվել է 440—450 թթ. միջև և իրենից ներկայացնում է աստվածաբանության զարգացման նախահիստոսյան մակարդակը, քանի որ նրանում ամենևին չի նկատվում Եփեսոսի (431 թ.) և Քաղկեդոնի (451 թ.) տիեզերածոցովներում Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների շուրջը ծավալված վեճերի արձագանքը<sup>7</sup>: Ինչպես տեսնում ենք, հետազոտողների կարծիքները համեմատաբար միասնական են «Վարդապետության» ստեղծման ժամանակի հարցում. հուշարձանի գոյությունը V դարի կեսերին, ոչ մի կասկած չի հարուցում<sup>8</sup>:

«Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ազդյուրների բացահայտման գործում ևս մեծ ավանդ են ներդրել վերը հիշված երկու հմուտ բանասերները՝ Բ. Սարգիսյանը և Ռ. Թոմսոնը: Աշխատության հիմնական աղբյուրը, բնակա-

<sup>3</sup> «Վարդապետության» բովանդակության հանգամանալից վերլուծությունը տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս և իր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 359—408. R. W. Thomson, The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary, Cambridge, Massachusetts, 1970, Introduction, p. 1—38.

<sup>4</sup> Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմություն..., § 641—658.

<sup>5</sup> Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 400—408. R. W. Thomson, The Teaching..., p. 36—38.

<sup>6</sup> Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 400—401: Բ. Սարգիսյանի տեսակետը «Վարդապետության» հեղինակային պատկանելության մասին անվերապահորեն ընդունում է նաև Ն. Ակինյանը, տե՛ս Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, կիսանքն և գործունեությունը հանդերձ կենսագրությամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 161—163: Ն. Պողարյանը վերջերս լույս ընծայած մի գրքույլում «Վարդապետությունը» վերագրում է Կորյունին, տե՛ս Նորայր աբգ. Մովսէսյան, Կորյուն Վարդապետի երկերը, Երուսաղեմ, 1984, էջ 13—23:

<sup>7</sup> Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 36, 38.

<sup>8</sup> Լ. Աճառյանը, շնորհակալով հանդերձ Մաշտոցի հեղինակությունը, այնուամենայնիվ «Վարդապետությունը» համարում է սոկեղարյան շրջանի հուշարձան, տե՛ս Լ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 329—332:

նաբար, Աստվածաշունչն է, որը բնագրում առկա է ընդարձակ փոխադրութիւններին, մեկնողական վերլուծութիւններին և ուղղակի մեջբերումներին ձևով: Հանվանի հիշատակված Լն Մոզսեսի, Յեսու որդի Նաւիի, Քաղաւորութեանց, Յորի, Սաղմոսաց, Իմաստութեան, Ժողովողի, Եսայու, Երեմիայի, Եղեկիելի, Դանիելի, Ամովսի, Միքիելի, Զաքարիայի գրքերը, Ավետարանները, Գործք առաքելոցը և Առաքելական թղթերը: Հաճախ հեղինակը Աստվածաշունչը վկայակոչել է հիշողութեամբ, որ տեղիք է տվել որոշ շփոթութիւններին<sup>9</sup>:

Մասնագետներին կարծիքով «Վարդապետութեան» գրված է հայրաբանական գրականութեանը հիմնովին յուրացրած մի անձնավորութեան կողմից, քանի որ նրա երկում լայն արձագանք են գտել եկեղեցու հայրերի կողմից մշակված բազմաթիւ տեսական դրույթներ: Ըստ Ռ. Քոմսոնի՝ հայ վարդապետը մեծապես օգտվել է Հովհան Ռսկերերանի աշխատութիւններից և մանավանդ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկից, որը նրա համար փաստորեն որպէս վարդապետութեան նմուշ է ծառայել<sup>10</sup>: Բ. Սարգիսյանն իր հերթին մատնանշում է բազմաթիւ ընդհանրութիւններ մի կողմից՝ «Վարդապետութեան», մյուս կողմից՝ Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Աղեքսանդրացու և հատկապէս Հովհան Ռսկերերանի գործերի միջև<sup>11</sup>: Ինչ վերաբերում է այդ գործերի լեզվին, ապա, ինչպէս ենթադրում է Ռ. Քոմսոնը, հեղինակը հավանաբար տիրապետել է հունարենին ու ասորերենին և հաճախ ուղղակի օգտվել այդ լեզուներով գրված աղբյուրներից<sup>12</sup>: «Վարդապետութեան» անգլերեն թարգմանութեան յուրաքանչյուր պարբերութեան ծանոթագրութիւններում Ռ. Քոմսոնը աշխատել է հնարավորութեան սահմաններում պարզել հայ հեղինակի օգտագործած աղբյուրները կամ պարզապէս ընդհանուր տեղիներ ու դուգահեռներ գտնել հայրաբանական գրականութեան դանազան հուշարձաններում:

Բոլորովին շահավակնելով տվյալ հարցում սպառիչ խոսք ասելու, ստորև նշում ենք Բ. Սարգիսյանի և Ռ. Քոմսոնի կողմից շնկատված կամ բավարարչափով չպարզարանված որոշ բնագրական ընդհանրութիւններ «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» և ասորերենից կատարված մի շարք հայերեն թարգմանութիւնների միջև<sup>13</sup>: Շարադրանքի հարմարութեան թելադրանքով այդ ընդհանրութիւնները ներկայացնում ենք «Վարդապետութեան» պարբերութիւնների հերթագայութեան կարգով:

\* \* \*

«Վարդապետութեան» 263—266 պարբերութիւններում հեղինակը քննում է մարդու աստվածանմանութեան հարցը: Երևելի արարածների մեջ ամենամեծ պատիվը տրված է մարդուն, որն Աստու կողմից իշխան է կարգվել ողջ աշ-

<sup>9</sup> Հմմտ. R. W. Thomson, The Teaching..., p. 3).

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 32—34:

<sup>11</sup> Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 365—392:

<sup>12</sup> R. W. Thomson, The Teaching..., p. 35.

<sup>13</sup> «Վարդապետութեան» ասորական աղբյուրների մասին ամբողջական պատկերացում տալու համար որոշ դեպքերում բերում ենք նաև Բ. Սարգիսյանի և Ռ. Քոմսոնի նշած բնագրական ընդհանրութիւնները, ինչպէս, օրինակ, 282, 424, 433 և 468 պարբերութիւններում:

խարհի վրա, և մյուս բոլոր արարածները պարտավոր են ծառայելու նրան: Մարդը հրեշտակների նման օժտված է անձնիշխանությամբ, ազատ գործելու կամքով, մինչդեռ մյուս արարածները շարժվում են Աստուծու հրամանով, մեկ անգամ ընդմիջտ նրա գծած ուղիով: Անձնիշխանության և բոլոր երևելի արարածներից վեր դասվելու այս շնորհն է, ահա, որ մարդուն նմանեցնում է Աստուծուն: Ուստի միայն այս իմաստով պետք է հասկանալ «Արասցո՛ւր, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան» նախադասությունը<sup>14</sup>, որովհետև, գրում է հեղինակը, «ըստ որո՞ւմ պատկերի արդեօք ասիցէ, և կամ ըստ որո՞ւմ նմանութեան զմարդն առնել. քանզի անեղծական, անստեղծական, անտարրական, իսկական աստուածութիւնն ճանաչի» (§ 263, 266): 264-րդ պարբերության մեջ աստվածամանությունը բացատրվում է նաև մարդուն վիճակված գիտության շնորհիվ. «զի զգիտութիւն Տեառն ի մէջ անցուցեալ, նորա գիտութեամբ զնորա արարածս ճանաչել՝ նորա նման անուանեցաւ»: Այս մտքերը թեև ոչ նույն հաջորդականությամբ ու ձևակերպումներով, համարյա ամբողջապես գտնում ենք Եփրեմ Ասորու «Արարածոց մեկնության» մեջ: Հմմտ.

Վարդապետութիւն Ա. Գրիգորի

§ 263. Որ յառնելն զմարդն՝ սքանչելագոյն կարգաւ զիշխանն ի մէջ անցուցեալ, և անդ է տեսանել սքանչելիս և զարմանալիս և անհասական հրեշտակակերպս: «Արասցո՛ւր, ասէ, մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»: Իսկ արդ՝ ըստ որո՞ւմ պատկերի արդեօք ասիցէ, և կամ ըստ որո՞ւմ նմանութեան զմարդն առնել. քանզի անեղծական, անստեղծական, անտարրական, իսկական աստուածութիւնն ճանաչի: Ո՞րպէս լինելոցն արդեօք էականին հանգոյն առնոյր լինել, կամ հողն սակաւիկ՝ ինքնարուն զօրութեանն Աստուծոյ, որ և անտեղեօք և անշափակալ վայրօքն, անսկզբնական լիութիւնն անմատոյց յումերէ ունի մըշտընչենաւոր նոյն պարզական և անշարժական միապէս:

§ 264. Իսկ արդ՝ ո՞րպէս ստեղծականին զինքն օրինակ զնիցէ, և կամ զկան զրօշեալ՝ Աստուծոյ պատկերուն ձևիցէ. զոր և ասէն իսկ, թէ «Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա»: Նախ ասաց բանս յառաջասաց պատմութեան հանդերձելոցն, ապա անց յառաջակայսն, և ի լինելոցսն նշմարեցուցանէ: Եւ են որ անդէն իսկ մօտայուտ առաջոյ՝ ի նոյն ի նմին ժամանակի զէմ յանդիման ցուցանէ. զի տէր ըստ պատկերի Աստուծոյ արար զնա: Մի՛ վասն իմաստութեան, բանաւորութեան, խելամտութեան, կենդանութեան, հոգե-

Եփրեմ, մեկնութիւն Աբաբաճոց

Եւ զի ասէ՝ «Ըստ պատկերի կերպարանաց մերոց», ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իշխանութեանն ասէ. զի որպէս իշխանութիւնն Աստուծոյ ի վերայ ամենայնի, սոյնպէս և տէրութիւնն Ադամայ ի վերայ ամենայնի եղաւ: Մեկնէ բանն որ զկնին ասաց. «Իշխեսցեն, ասէ, ի վերայ ձկանց ծովու և զազանաց երկրի և թռչնոց երկնից և ի վերայ անասնոց և ի վերայ ամենայն երկրի»: Արդ արար զնա զլուխ և առաջնորդ խօստն ի վերայ այնոցիկ՝ որ առանց բանից են. և զայն որ իմաստութեամբն գիտութեամբ էր ի վերայ այնոցիկ՝ որ ի բանութիւն. զի նա վարիչ և առաջնորդ անձին իւրոյ լեալ էր, և իմաստութեամբ անձնիշխանութեան



ւոր շնչոյն, զոր շնորհնաց առաւելութիւն՝  
գիտել ճանաչել իմանալ և ի միտ անուշ  
զամենայն շնորհաց դաստուածակիր գաս-  
տուածատուր իմաստութիւնն և զբանաւո-  
րութիւնն, գաստուածածանօթութիւնն և  
զպետութիւնն, և իշխել ի վերայ ամենայն  
երկրաբուզի երկրածին ստեղծուածոցն, և  
զգիտութիւն յառաջգիտութեանն, և կացոյց  
զնա տէր ամենայնի: Եւ ասաց Աստուած,  
Թէ «Ամենայն բազդրաբուզի սերմանիք  
երկրի՝ ձեզ լիցի ի կերակուր»: Եւ ապա  
զամենայն զազանս և զանասունս և զթռ-  
չունս ածեալ առաջի մարդոյն Հնազան-  
դէր: Իսկ ապա աստուածակիր իմաստու-  
թեամբն խելամանալ՝ ճանաչել ըստ իւ-  
րաբանչիւր ըստ առանձնային կերպա-  
րանաց զանունն նշմարեցուցանել, զի  
զգիտութիւն Տեառն ի մէջ անցուցեալ,  
նորա գիտութեամբ զնորա արարածս  
ճանաչել՝ նորա նման անուանեցաւ:

§ 265. Եւ մի՛ վասն այսորիկ ասե-  
նման, վասն անձնիշխանական կամացն  
իշխանութեան: Զի յԱստուծոյ յամենա-  
զործութեանն և ամենարարութեանն երկու  
արարածք պատուականք և արգոյք եղեալք  
ի բարերարէն Հաստատեցան, մարդիկ և  
Հրեշտակք: Արդ՝ զմարդիկ թողեալ ի կամս  
անձնիշխան կամաց, վասն զի իւրովը  
կամօք անձնիշխանութեանն գիտացել ընդ  
բարեացն զործոց՝ շնորհս գտանել ի  
բարերար Տեառնէն և յԱրարչէն. և եղեալ  
առաջի նորա զգիտութիւն պատուիրանաց  
Հաճոյիցն Աստուծոյ, զի գիտացել խոյս  
տալ ի շարէն, և զբարին ընտրել իւրոց  
կամացն յաւութեամբ, իբրև լինբան քա-  
չութենէ, իւրով անձնիշխան կամօք՝  
յԱրարչէ անտի գիւրոց վաստակոց առեալ  
զփոխարէնս պատուեսցէ:

§ 266. Իսկ վասն նմանութեանն իմա-  
նալի է այսպէս. զի ամենայն արարածք  
ընդ Հնազանդութեամբ ծառայութեան են  
Հարկեալք. զի մի՛ այլ աւելիս ինչ իշ-  
խանցեն զործել քան զայն, որչափ ինչ  
նոցայն հրամայեցաւ՝ Հարկք եղան ի վե-  
րայ իւրաբանչիւր՝ կատարել զհրամանս  
Բայց Աստուած զմարդն միայն բազմա-  
պատիկ փառաւորեաց և մտօք մեծացոյց  
Հոգեխառն Հրեշտակակիցս խոնարհագոյն:  
արար:

իւրոյ եղև վարիչ այնոցիկ՝ որ լիւրեանց  
բնութիւն կացեալ են. յայսմիկ անուա-  
նեցաւ. նա ըստ նմանութեան պատկերի  
կերպարանաց Աստուծոյ: Եւ զի ի ստեղ-  
ծուած ձեռաց Աստուծոյ կոչեցաւ, վասն  
պատուի փառաց մարդոյն ասաց. Թէպէտ  
է ի պատմել զրոցն՝ ասաց թէ առ Հոգ և  
ստեղծ զնա: Զի սովորութիւն է զրոց զկա-  
մելն Աստուծոյ՝ զործ ասել. որպէս այն  
զի ասէ, մարդ պատկեր Աստուծոյ է. ոչ  
զբնութիւն ասէ, այլ զիշխանութիւն աղա-  
տութեան նորա ասաց կերպարան. և որ  
զկնի ամենեցուն արար զնա, զի մի՛  
կարծիցէ մարդն, Թէ իւր իցէ արարչու-  
թիւնն<sup>15</sup>:

15 «Յրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 7:

\* \* \*

282-րդ պարբերութիւնը նվիրված է Մենդոց գրքի Գ, 9—10 համարների մեկնութեանը՝ «Եւ կոչեաց Տէր Աստուած զԱդամ և ասէ ցնա՝ Ո՞ւր ես: Եւ ասէ՝ Լուայ զձայն քո ի դրախտի աստ և երկեայ, քանզի մերկ էի, և թաքեայ»: Ըստ «Վարդապետութեան»՝ Աստված շի կամենում հանկարծակիի բերել մեղանշած Ադամին, այլ իր ոտնաձայնով հուշում է, որպէսզի վերջինս ինքնակամ կերպով խոստովանի իր մեղքը և փրկութեան արժանանա: Ինչպես ցույց է տվել Բ. Սարգիսյանը, այս հատվածում նույնպես «Վարդապետութեան» հեղինակը հետևում է Եփրեմ Ասորու «Արարածոց մեկնութեանը»<sup>16</sup>: Հմմտ.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ, Մեկնութիւն Արարածոց

§ 282. Սակայն բարերարին ձայն արկեայ, թէ «Ո՞ւր ես, Ադամ». և նա ասէ. «Լուայ զձայն քո և երկեայ, զի գնայիք ի դրախտի աստ. քանզի մերկ էի և թաքեայ»: Տեսանե՞ս ո՞րչափ մեթափոս և ծանօթ էին Աստուծոյ, մինչ և ոտնաձայնին անգամ շինել անտեղեակ: Քանզի բարերարն յանգէտս պատճառեալ՝ նախ ոտնաձայն ասնէ. զի յոտսն բաւութիւնաբերս հասնալ մարդոյն, ինքնապատում լինելով զյանցանացն՝ փրկութիւն գտանիցէ:

Նա և ինքն բարերարն ոչ յայաննցայանկարծակի, զի մի՛ զարհուրեցին նորա. և ոչ ծագեաց որպէս և փայլակն, զի մի՛ խոտկեցէ զնոսա. այլ արար ձայն ոտից իւրոց և առաքեաց առաջի իւր, զի ուսուցէ ապաշխարութիւն անզեղչ և անապաշաւ սրտին<sup>17</sup>:

\* \* \*

«Վարդապետութեան» 303-րդ պարբերութեան մեջ ևս Բ. Սարգիսյանը փորձում է տեսնել Եփրեմի «Արարածոց մեկնութեան» արձագանքը<sup>18</sup>, բայց այս դեպքում համեմատութիւնը ոչ թե բնագրական աղերսի, այլ հեռավոր նմանութեան տպավորութիւն է թողնում: Պատահական չէ, որ Բ. Քոմստներ նույն պարբերութիւնը բխեցնում է Հովհան Ոսկեբերանի՝ Մենդոց գրքին նվիրված մի մեկնողական ճառից<sup>19</sup>: Այնուամենայնիվ, տարակուսանքների տեղիք չտալու համար հարկ ենք համարում մեջբերել նաև խնդրո առարկա հատվածները:

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ, Մեկնութիւն Արարածոց

§ 303. Իսկ առ Յակոբ որդին Իսահակայ՝ ևս սքանչելագոյն սանդղաձև երկնարերձ տեսեամբ հանդերձ ամենայն հրեշտակօր՝ Տէրն ծանուցեալ երևի, և երբեմն իրրև զայր մի սոսկագոյն՝ զիշերամարտ մենակոխ. բայց մարգարէն հրեշտակ ասէ: Զոր և կաղացուցեալ իսկ՝ աստուածատես անուամբն նշանակեալ

Այս ևս մեծ է, զի Իսրայէլ անուանեցաւ. այն զի է նա այր, որ զԱստուած ետես. ապա եթէ բնութեամբ իւրով հրեշտակ էր այն՝ որ երևեցան, սուտ եղև բանն, որ Իսրայէլն ասէ յայսմիկ, զի ոչ ետես նա զԱստուած: Թէ այդ այդպէս է, ինքն հրեշտակն Աստուած էր, և մարդն Աստուած էր. այլ մարտնչելն ասն, և

16 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 368:

17 «Սերրոյն Եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, էջ 18—19:

18 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 368:

19 Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 57.

արձակէ, որ հանապազատեա յիշատակ զործն հրեշտակի, բայց գործին Ասորիացի Տէառն՝ յակորեան գաւակին փայլիցէ:

\* \* \*

347-րդ պարբերության մեջ «Վարդապետության» հեղինակը բացատրում է, թե ինչո՞ւ Աստված Մովսես մարգարեի ձեռքով սահմանեց իր օրենքները: Ազամի մեղքի պատճառով մահը թագավորում է աշխարհում, մարդիկ շարունակ շարիքներ են գործում և թաղվում ապականության մեջ: Ուստի Աստված հրապարակում է իր օրենքները՝ ամբարիշտներին ու անօրեններին պատժելու համար: Մյուս կողմից, ուրբեր սրբության հետևում են այդ օրենքներին, ազատվում են մահվան սպառնալիքից: Այս մեկնարանությունը, տեղ-տեղ նույնիսկ բառացի կերպով, բաղված է IV դարի ասորի մատենագիր Ափրահատ Իմաստունի ճառագրական ժողովածուից, որը հայ իրականության մեջ հայտնի է «Զգոն գիրք» անունով: Հմմտ.

Վարդապետարիւն Ա. Գրիգորի

Ափրահատ

§ 347. Քանզի իբրև ետես Աստուած զհամաշխարհագործ զմեղսն տարածեալ, և որով մահն թագաւորեալ՝ առ հասարակ կլանէր յԱզամայ մինչև ի Մովսէս, և ի մոռացոնս դարձուցեալ զկենսարեւ աւետիսն յառաջագիրս, որպէս հուր ինչ մոլեկան հրդեհի՝ որ ապականիցէ զլերինս և զղաշատ, արձակեալ այնուհետև ի ներքս զօրէնսն իբրև զհեղեղատ սաստիկ՝ շիջուցանել զայն համատարած: Վասն որոյ և ասէն իսկ, թէ «Ամենայն որ արասցէ զայս՝ կեցցէ ի սոսին»: զի որպէս Ազամայ, թէ ճաշակեցցէ ի ծառոյն՝ մահ սպառնացաւ, ուստի և թագաւորեաց իսկ մահ՝ նոյնպէս և զօրինացն ասաց, թէ «Որ արասցէ զայս՝ կեցցէ ի սոսին», որով և շիջու իսկ մահ:

Վասն անարինաց և ամբարշտաց եղեալ են արէնք: Եւ եթէ արդարութիւն ստուգութեանն կացեալ մնացեալ էր առ մարդկան, ոչ ինչ պիտոյ էին մեղ արէնքն: Եւ դարձեալ, եթէ ոչ արէնք եղեալ էին, զարութիւն Աստուծոյ ոչ երևեցուցանէր յամենայն աղզս զամենայն սրանչելիսս զոր եցոյց: Յանցանելն զպատուիրանաւ Ազամայ առաջին մարդոյն, մահ եմուտ յաշխարհ և զարութիւն Աստուծոյ յայտնի եղև, և իբրև ամենայն մարդիկ յառնեն ի ժամանակի, յորում բառնայ իշխանութիւն մահու<sup>20</sup>:

\* \* \*

424-րդ պարբերության մեջ, որ վերաբերում է Հովհաննու ավետարանի առաջին համարների մեկնությանը, «Վարդապետության» հեղինակը վերլուծում է աստվածային «Բան» հասկացությունը: «Բան» ասելով, ըստ նրա, պետք է հասկանալ ոչ թե որևէ խոսք, որ արտասանելուց առաջ գոյություն չունի, իսկ արտասանելուց հետո անհետ կորչում է, այլ հետևյալը. ինչպես խոսքն է արտաբերվում խոսողի կողմից, այնպես Աստվածահոր բոլոր հրամանները ելնում են Աստվածորդու բերանից, բանի որ որդին հոր կամքի գիտակն ու իրագործողն է: Սույն մեկնարանությունը բավականին տարածված է հայրաբանական գրականության մեջ (Որոգինես, Աթանասիոս, Բարսեղ Կեսարացի, Գրի-

<sup>20</sup> «Սրբոյն եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, էջ 97.—98:

<sup>21</sup> La version arménienne des oeuvres d'Aphraate le Syrien, éd. par Guy Lafontaine, CSCO 382, 405, 423, Louvain, 1977—1980. II, 2 (Այսուհետև՝ Aphraate le Syrien):

գոր նյութացի, Եփրեմ Ասորի)<sup>22</sup>, և դժվար է ասել, թե «Վարդապետությունը» որոշակիորեն որ աղբյուրից է բխում: Բ. Սարգիսյանի կարծիքով՝ հայ հեղինակը հետևում է Եփրեմ Ասորու «Համաբարբառ Ավետարանի մեկնությունը», թեև «գրեթե բառ առ բառ նույն է» նաև Բարսեղ Կեսարացու «Ի սկզբանէ էր բանն» ճառի մի հատվածը<sup>23</sup>: Ռ. Քոմսոնը նշելով, որ հատվածի վերջամասում Եփրեմի մեկնությունը բոլորովին տարբերվում է «Վարդապետությունից», վերջինիս աղբյուր է համարում Գրիգոր Նյութացու ճառերից մեկը<sup>24</sup>: «Վարդապետությունն» ու Եփրեմի «Համաբարբառի մեկնությունը» իսկապես զգալիորեն շեղվում են իրարից, ուստի դժվար է նրանց միջև բնագրական աղբյուր ենթադրել: «Վարդապետության» սույն հատվածի աղբյուրը պարզելու հարցում թերևս որոշ օգնություն կարող է ցույց տալ հայերեն թարգմանությամբ պահպանված մի այլ ասորական հուշարձան՝ Այթալահա Եղեսացու «Հովուական թուղթը», որտեղ ևս առկա է միևնույն մեկնաբանությունը: Բնագրերի առնչակցությունը ակնհերև դարձնելու նպատակով ստորև համադրաբար մեջ ենք բերում «Վարդապետության», Եփրեմ Ասորու և Այթալահա Եղեսացու համապատասխան հատվածները.

Վարդապետութիւն  
Ս. Գրիգորի

§ 424. Եւ զի՞նչ իցէ որ ասէ՝ «Բանն». միթէ բարբառ լոկ իցէ, բախիւն լեզուի բնդ օդս, որ յառաջ քան զասել ասողին չէ յայտ, և յետոյ անհետ՝ չէ ի միջի: Այլ վասն այսորիկ անուանեցաւ Բան, զի որպէս բան ի բերան ասողին՝ նոյնպէս և ամենայն հրամանք Հօր կամացն ելանեն ի բերանոյ Որդոյ: Զի գիտակ է Հօր և կատարիչ կամաց նորա, որպէս և ինքրն ասէ. «Ոչ որ գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի. որպէս և զՈրդի ոչ որ գիտէ՝ եթէ ոչ Հայր»: Եւ դարձեալ ասէ, եթէ «Եկի կատարել զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»: Եւ դարձեալ Յովհաննէս ասէ. «ԶԱստուած որ կրեր ոչ կտես, բայց միածին Որդին, որ ի ծոց Հօր՝ նա պատմեաց»:

Եփրեմ, Մեկնութիւն  
Համաբարբառի

Այլ զուցէ բան զոչդէ լսիցես, և խոնարհեցուցանիցես զնա առ ձայն, զի ձայն չէ ի սկզբանէ: Քանզի յառաջ քան զասելն չէր նա, և յետ ասելոյն դարձեալ չէ: Արդ ոչ եթէ ձայն էր նա, այն՝ որ նա ինքն էր նմանութիւն կերպարանաց հարն իւրոյ. և ոչ եթէ նա ձայն հար, այլ պատկեր նորա<sup>25</sup>:

Այրալահա Եղեսացի

Եւ որպէս բան՝ միշտ ի լուսեան և ի խառնել՝ յատողին իւրում է, և չիք ժամանակ թէ իցէ խառնող բանին առանց բանին իւրոյ. նոյնպէս ի բնէ և յանսկիզբն յախտեանս էր Որդի բնդ Հար և առ Հայր. ոչ իբրև զընկեր, այլ իբրև զձնունդ փառատրեալ ի ծոց Հար<sup>26</sup>:

<sup>22</sup> Հմմտ. R. W. Thomson, The Teaching..., p. 92—93.

<sup>23</sup> Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 382—383:

<sup>24</sup> Տե՛ս R. W. Thomson, The Teaching..., p. 93.

<sup>25</sup> Saint Ephrem, Commentaire de l'Évangile Concordant. Version arménienne. Éd. par Louis Leloir, «CSCO 137», Louvain, 1953. I, 3. Հմմտ. նաև I, 4.

<sup>26</sup> «Աթեղահայ կախկոպոսի Ուռհայի Թուղթ առ քրիստոնեայս Պարսից աշխարհին վասն հաւատոյ», աշխատասիրությունը Հ. Քորոսյանի, Վենետիկ, 1942, էջ 42:

«Վարդապետության» 433-րդ, 468-րդ և մի քանի այլ պարբերություններում Քրիստոսի մկրտության արարողությունը ներկայանում է որպես Հին և Նոր Ուխտերի միավորման արտահայտություն: Հովհաննես Մկրտիչը, լինելով Հին Ուխտի ավանդությունների՝ բահանայության, օծության, մարգարեության և թագավորության պահապանը, մկրտության խորհրդով դրանք փոխանցում է Քրիստոսին: Այդ ավանդությունները Քրիստոսն իր հերթին փոխանցում է առաքյալներին, որոնք արժանանալով Սուրբ Հոգու շնորհին, քարոզում են Քրիստոսի ավետարանը ողջ տիեզերքում: Ըստ Բ. Սարգիսյանի՝ այս էջերը «Ոսկերեքանի Յաղագս Քահանայութեան ճառերու..., Սևերիանոսի Եմեսացոյց Գ ճառին, և կամ Ս. Եփրեմի՝ Աւետարանի մեկնութեան մէկ տեղւոյն» հետևողություն կարելի է համարել<sup>27</sup>: Ավելի որոշակի և համոզիչ է Ռ. Քոմսոնի տեսակետը, որի համաձայն՝ «Վարդապետությունը» տվյալ դեպքում հետևում է Եփրեմին<sup>28</sup>: Հմմտ.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Եփրեմ. Մեկնութիւն Համարաբարտի

§ 433. Անդ արար Մովսէս զարծաթի եղջիրն օծութեան իւրոյ, ուստի բահանայրն և մարգարէքն և թագաւորքն օծանէին: Անդուսա զայր կարգեալ օծութիւնն մի ըստ միոջէ ըստ հրամանի իշխանութեան պատուիրանին, որ կարգեալ զայր առաջնորդութեամբ: ՅԱբրահամեան զաւակին պաշտէր խորհուրդն, զի աւանդապահքն տաչին ցմիմեանս մինչև ցՅովհաննէս՝ բահանայ, մարգարէ և մկրտիչ. և ի նա հասեալ՝ իբրև ի ժառանգ մնացեալ: Զի ի նա հասեալ էր յառաջին նախնեացն՝ թագաւորացն, մարգարէիցն և յօծելոց բահանայիցն՝ իբրև յաւանդապահ. և նա ետ զբահանայութիւնն, զօծութիւնն, զմարգարէութիւնն և զթագաւորութիւնն ցՏէր մեր Յիսուս Քրիստոս:

§ 468. Եւ եղևն իսկ հիմունք առաքելայրն, և առին շնորհս բահանայութեան և մարգարէութեան և առաքելութեան երկնաւոր խորհրդոյն գիտութեան, որ վարէր զայր յԱբրահամեան զաւակին. զոր ետ ցՏէր ժառանգութեանն աւանդապահն Յովհաննէս, և Տէր ետ առաքելոցն և զփականս արքայութեանն ետ ի ձեռս նոցա, զի ինքն իսկ Աստուածորդին էր զուտն մտողացն. վասն որոյ և մարգարէն աղաղակէր. «Այս զուտն Տեառն է, և արգարք մտանեն ընդ սա»: Արդ՝ ետ Յովհաննէս զբահանայութիւնն և զօծութիւնն

...Քանզի Յովհաննէս զարշապար է արինացն. «աւրէնք և մարգարէք մինչև ի Յովհաննէս», այլ Քրիստոս սկիզբն է նոր կտակարանացս: Զգեցաւ նա զարգարութիւն հնոյն մկրտութեամբ, զի ընկալցի նա զկատարած աւծման, և տացէ զնա լի և բովանդակ աշակերտացն իւրոց, զի ահա աւասիկ և զմկրտութիւն Յովհաննէս արինաւրն հանդերձ սահմանեաց, և մկրտեցաւ նա արգարութեամբ, քանզի առանց մեղաց էր նա, այլ մկրտեաց նա շնորհաւոր, զի մեղաւորք էին: Լոնցոյց զաւրէնս արգարութեամբ իւրով, և զաղարեցոյց զմկրտութիւն մկրտելովն իւրով:

Բայց զարձեալ «կատարեցցուք զարգարութիւնս ամենայն», զի Յովհաննէս էր ի զուտն բակին. զի ի մէջ նորա ամփոփեալ ժողովեալ էր հաւան իսրայէլացոց: Մուտ նա առ հաւան անդր ոչ իշխանութեամբ, այլ արգարութեամբ: Եւ վկայեաց Հոգին, որ հանգեաւ ի վերայ նորա ի մկրտել նորա՝ թէ նա է հովիւ. զի ընկալաւ նա ի ձեռն Յովհաննէս զբահանայութիւն, զարքայութիւն և զմարգարէութիւն: Արդ առ նա զարքայութիւն տան Դաւթի ծննդեամբն, որ եղև ի տանէ Դաւթի. և առ զբահանայութիւն տանն Ղեկայ երկրորդ ծննդեամբն մկրտութեամբն որդոյն Ահարոնի: Արդ այն՝ որ հաւատայ թէ ծնունդ երկրորդ լինի նմա յաշխարհի, ոչ

27 Տե՛ս Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 384:

28 R. W. Thomson, The Teaching..., p. 96.

և զմարդարեւոյնն և զթագաւորութիւնն  
ցփրկիչն մեր Քրիստոս. և Քրիստոս եւ  
առաքելոցն, և առաքեալքն՝ եկեղեցոյ  
մանկանց:

երկմտնալ լինի յայնմանէ, թէ վերջին  
ծննդեամբ մկրտութեամբն Յովաննու ա՛ն  
նա զքահանայութիւն Յովաննու<sup>29</sup>:

\* \* \*

«Վարդապետութեան» բազմաթիւ պարբերություններ նվիրված են Քրիստոսի խաչելութեան գրվագի նկարագրությանը, սակայն հեղինակին կարծես հետաքրքրում է ոչ այնքան Քրիստոսի շարժարանքի բուն էությունը, որքան խաչի խորհրդանշական իմաստի բացահայտումը: Խաչը այդ առումով հակադրվում է Բաբելոնի աշտարակին: Եթե վերջինս հանդիսանում է մարդկության բաժանման, լեզուների խառնակության խորհրդանիշը, ապա խաչի միջոցով, ընդհակառակն, բաժանված ազգերն ու լեզուները միավորվում են ճշմարիտ Աստծու ճանաչողությամբ: «Զի յառաջին աշտարակէն ցրումն եղև, իսկ ի խաչէս՝ ժողով», — գրում է հեղինակը (§ 629), կամ՝ «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ, որոյ զօրութիւնն մշտնջենական է, և փառք նորա Աստուած» (§ 581): Բաբելոնի աշտարակաշինությունից հետո մարդկությունը բաժանվեց 72 ազգերի՝ առաջնորդվելով նույնքան թվով նահապետների կողմից. «Եօթանասուն և երկու նահապետք լեզուաց կացեալ՝ բաժանեցան ընդ երկիր, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս» (§ 579): Իսկ խաչելությունից հետո մարդկությունը միավորվեց 72 առաքյալների գործունեության շնորհիվ. «Որ և ըստ առաջին լեզուացն բաժանելոց ամենայն ազգաց, երևեցուցեալ եօթանասուն և երկուս, որպէս յառաջագոյն քան զայս ասացար. զի նորօք ի միաբանութիւն զառաջին պատառումն ազգացն և լեզուացն ժողովեսցէ» (§ 612)<sup>30</sup>: Բաբելոնի աշտարակի և խաչի հակադրության վրա կառուցված նման մի միտք գտնում ենք Եփրեմ Ասորու «Համաբարբառ Ավետարանի մեկնութեան» մեջ. «Զոր աւրինակ ի բաժանելն այնոցիկ խափանեցաւ աշտարակն երկրաւոր և պատրաստութիւն ժամանակեան և տունն ապաւինին աշխատութեան, եւ նոցա կենարարն առ յինքենէ աշտարակ՝ որ վերացուցանէ հանէ ի բարձունս, և ծառ՝ որոյ պտուղ իւր դեղ կենաց է»<sup>31</sup>: Սակայն մեզ թվում է, որ Բաբելոնի աշտարակի՝ որպէս մարդկության բաժանման և խաչի՝ որպէս համախմբման խորհրդանշական բացատրությունը «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» հեղինակը, ամենայն հավանականությամբ, քաղել է «Վարդապետութիւն առաքելոց» անվավեր գրվածքից, որը հայերեն է թարգմանվել ասորերենից V դարի առաջին կեսին: Կարելի է մատնանշել նույնիսկ բնագրերի կապը հաստատող բառացի ընդհանրության մի դեպք.

<sup>29</sup> Saint Ephrem, Commentaire..., IV, 2—3.

<sup>30</sup> «Գրիգոր Լուսավորչի վարդապետութեան» մեջ արտացոլված խաչի խորհրդապաշտության մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, «Մուրբ Գրիգորի վարդապետութեան» արձագանքը (՝) խաչքարային արվեստի խորհրդապաշտության մեջ, «Էջմիածին», 1984, № 4, էջ 47—51:

<sup>31</sup> Saint Ephrem, Commentaire..., XIV, 2.

Վարդապետութիւն Ս. Գրիգորի

Վարդապետութիւն առաքելոց

§ 629. ...դի յառաջին աշտարակէն  
ցրումն եղի, իսկ ի խաշէս՝ ծողով:

...որպէս յաշտարակէն ցրումն, նոյն-  
պէս ի խաշէն ծողովումն<sup>32</sup>:

\* \* \*

«Վարդապետության» 641—658-րդ պարբերություններն զբաղեցնող մեռ-  
յալների հարության ճառը կազմում է մի ամբողջական ստեղծագործություն,  
որտեղ բանաստեղծական շնչով և գունեղ պատկերավորությամբ նկարագրվում  
է բնության զարնանային զարթոնքը, բույսերի, ծառերի, ծաղիկների ծլարծա-  
կումը, երամ-երամ թռչունների վերադարձը: Մեռյալների հարությունը համե-  
մատվում է, ահա, բնական այս երևույթի հետ. ինչպես բույսերը, ծառերն ու  
ծաղիկները զարնանը վերստանում են իրենց տեսքը, գույնը և բուրմունքը, այն-  
պես և մեռյալները, հարություն առնելով, վերստանում են իրենց կերպարանքն  
ու հոգին: Բացառված չէ, որ հայ հեղինակը, այս էջերը գրելիս, ներշնչվել է  
Եվսեբիոս Եմեսացու «Արարածոց մեկնության» հետևյալ հատվածից. «Եւ երևի  
թէ զարնանի ա՛ն սկիզբն աշխարհս լինելոյ, բանդի յայնժամ բուսանի ամե-  
նայն ինչ և ծաղկի: Զի զարնանի իսկ և Փրկիչն խաշեցաւ, և ի նմին ժամանակի  
նորոգեաց զաշխարհս. յայնժամ կոշեաց վերստին և զմարդիկ, յորժամ Ադամն  
իսկ եղև և մեղան, յայնս ուստի վրիպեցաքն»<sup>33</sup>:

648-րդ պարբերության մեջ նկարագրվում է հարություն առնող մարմին-  
ների վերականգնման ընթացքը, որը համապատասխանում է Եզեկիելի մար-  
գարեության ԼԷ, 8 համարին: Սակայն համեմատությունը ցույց է տալիս, որ  
ավելի բառացի է «Վարդապետության» և Ափրահատի հայերեն թարգմանու-  
թյան համապատասխանությունը: Այսպես.

Վարդապետութիւն  
Ս. Գրիգորի

Ափրահատ

Եզեկիել ԼԷ, 8

§ 648. ...Զի միանգա-  
մայն կազմիցին զոսկերօքն  
շորացելովք՝ միսքն և շիղ-  
բքն և աճառքն և նեարդքն,  
մորթովն զգեցեալք և մա-  
զովն զարդարեալք:

...Տեսանէր զի նեարդք և  
շիղք յաղիւքն պատէին և ա-  
մենայն ոսկերքն ցամաքեալք  
մարմնով լնուին և ամենայն  
մարմինն մորթով զգենուին  
և մորթն զգեցեալ մազով  
զարդարէին<sup>34</sup>:

...Եւ ահա շիղք, և մար-  
մինք պատէին, և ձգէր ի  
վերայ նոցա մորթ:

\* \* \*

668—670-րդ պարբերություններում, ինչպես նաև «Վարդապետության»  
մի բանի այլ դրվագներում շոշափվում է մարդկության պատմության շրջանա-  
բաժանումների հարցը: Աստվածորդին, ըստ հեղինակի, երկնքից իջել է մարդ-

<sup>32</sup> «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 63:

<sup>33</sup> Եսեբիոս Եմեսացի, Մեկնութիւնք Ռեթամատեան զրոց Աստուածաշնչին, աշխատասիրու-  
թյամբ Վ. Հովհաննիսյանի, Վենետիկ, 1980, էջ 15: Մեկնությունը հայերեն է թարգմանվել հու-  
նարենից V դ. առաջին կեսին. տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Եվսեբիոս Եմեսացու «Ռեթամատյանի  
մեկնությունը» և թարգմանության տեսության հարցերը V դարի հայ մատենագրության մեջ,  
«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 56—68:

<sup>34</sup> Aphraate le Syrien, VIII, 12.

կուսիցյան պատմութիւնն վեցերորդ հազարամյակում, որը արարածների նորոգման և աշխարհի վախճանի դարաշրջանն է, իսկ յոթերորդ հազարամյակը նախատեսված է արդարների հանգստի համար: Ինչպես տեսնում ենք, մարդկուսիցյան պատմութիւնն պարբերացումը կատարված է արարչութիւնն ընթացքի համեմատ, որի յուրաքանչյուր օրվան համապատասխանում է մեկ հազարամյակ:

Ռ. Քոմստնի կարծիքով՝ հայ հեղինակն այս հարցում հետևում է Իրեննոս Լուզգոնացու կողմից հաստատված ավանդութիւնն<sup>35</sup>: Իսկապես, Իրեննոսի «Ընդդէմ հերձուածոց» աշխատութիւնն 5-րդ դրբում գտնում ենք հետևյալը. «Քանզի որբան աւուրբք եղև աշխարհս, այսրան հազարամաք յանգ ելանէ. և վասն այսորիկ ասէ գիր կինելութեանն. «Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն զարդ նոցա: Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդում զգործան իւր, զոր արար, և զաղարեաց Աստուած յաւուրն եփներորդում յամենայն գործոցն, որոց արար»: Եւ է սա յառաջ եղելոցն պատմութիւն, որպէս եղև, և լինելոցն մարգարէութիւն. քանզի եթէ ար Տեառն իբրև զհազար ամք, և ի վեց աւուրս կատարեցան եղևալքն, երևելի է, զի կատարելութիւն նոցա վեց հազարեան ամն է»<sup>36</sup>:

Սակայն մեզ թվում է, որ «Վարդապետութիւնն» հեղինակը նշված գաղափարը կարող էր քաղել Ափրահատ Զգոնի ճառերի ժողովածուից, որտեղ այն նույնպես ձևակերպված է բավականին հստակ կերպով: Ուշագրավ է մանավանդ այն հանգամանքը, որ և՛ Ափրահատը, և՛ «Վարդապետութիւնն» օրվա ու հազարամյակի համապատասխանութիւնը հիմնավորում են Սաղմոսներից մեջբերված միևնույն մտքի օգնութիւնը (Սաղմ. 2Թ, 4): Հմտ.

## Վարդապետութիւն Ա. Գրիգորի

## Ափրահատ

§ 668 ...Այլ դարաշրջութեան ժամանակն, զոր արկն ընդ վեցօրեայ թուով, զի յայտնի լիցի մեծութիւն իւր՝ սոյն օրինակ կշռեաց վեց հազար ամ ժամանակի՝ ցատց քրտանց հոգոց աշխատութեանց երկրի. մի մի հազար ամաց՝ աս օր մի կշռեալ ըստ վեց աւուրն առաջնոյ, յորում լիցին ծնունդք և սերունդք բազմաց, ունդք լինելութեան:

§ 669. Յորում և փորձութիւնք հանդիսի լաւացն՝ գործնեցէ զընտրութիւն հատուցմանցն, պարզեառու խոստմանցն ակնկալութեանց, ժուժկալութեանց արդարոցն նեղութեանց, որ և բովք ի շարաթութեան ամացն աշխատութեանց. զոր և մարգարէն գոչեաց յամենեպն, ազգեցոյց

Այսպէս գրեալ է ի Դաւիթ ի սաղմոսին իննսներորդի. «Հազար ամ յաշտեառն իբրև դար երեկի զի անցանէ»: Զի և վարդապետք մեր իմաստունք այսպէս ասեն, թէ ի նմանութիւն վեց աւուր եղեալ է զաշխարհս Աստուծոյ, և ի կատարածի վեց հազար ամին լուծանի աշխարհս և լինի շարաթն Աստուծոյ ի նմանութիւն աւուրցն շարաթու՝ որ է զկնի վեց աւուր. որպէս մեկնեաց և եցոյց մեկ փրկիչն մեր վասն աւուրն շարաթու, այսպէս ասէ. «Յաղամս կացէք, զի մի լիցի փախուստ ձմերանի և մի յաւուր շարաթու»: Եւ առարեալ դարձեալ ասէ. «Յարդ ևս կայ շարաթն Աստուծոյ. յաւժարելի

<sup>35</sup> St. R. W. Thomson, The Teaching..., p. 166.

<sup>36</sup> Irenaeus, Gegen die Häretiker. Buch IV u. V. In armenischer Version entdeckt von K. Ter-Mekeritschian, herausgegeben von E. Ter-Minassiantz, Leipzig, 1910, V, 28, 3.



և ասէ. «Հազար ամ յաշս Տեառն՝ իբրև օր մի զի անցանէ»:

§ 670. Զի յառաջնումն՝ սկիզբն, և ի վեցերորդումն՝ նորոգումն, զոր արար իւրով զայստեամբն, և զէջս Հոգւոյն պարզեակաց. և ի սմին հազարի՝ վախճան, վասն որոյ և յեաին կոչի, յորում զարձեալ միսանդամ զալոց է, և զեօթներորդ աւուրն խորհուրդ ժամանակի, զառանց թուոյն և զառանց շափոյն զհանգիստն և զպարզեն, ընդ նմին բերելոց է. իսկ քանզի ինքն իւրոյ արարչութեանն զօրն եօթներորդ հանգիստ կոչէ՝ վասն այսորիկ և զօրն եօթներորդ սուրբ և փափուկ ունել պատուիրէ, զի ամենայն որ ծանուցեալ զօրն փափուկութեան հանգստին Արարչին՝ պատուեսցեն: Զի ընդ այսորիկ յեօթներորդ զարուն հանգուսցէ զաշխատեալսն, որ աշխատեցան ի վեցդարեան յիւրեանց ժամանակին. իբրև այն եթէ ընդ նմա աշխատեցան յիւրեանց ժամանակին՝ սոյնպէս ընդ նմին հանգիցեն յայն յերկայն ամին յանշափութեան անդ և ընդ նմին ուրախ լիցին:

լիցուք այսուհետև մտանել ի հանգիստ անդր»<sup>37</sup>:

\* \* \*

Այսքանով, ըստ երևույթին, շեն սահմանափակվում «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» և ասորական գրական աղբյուրների միջև եղած ընդհանրությունները: Հետագա պրպտումներն, անտարակույս, նորանոր փաստեր կարող են ի հայտ բերել այդ ուղղությամբ<sup>38</sup>: Սակայն եղածն էլ բավական է պատկերացնելու համար, թե ասորական աղբյուրներն ինչպիսի կարևոր նշանակություն են ունեցել հայ մատենագրության հնագույն հուշարձաններից մեկի ստեղծման գործում:

Ինչպես կարելի էր նկատել վերը նշված բնագրական զուգադրումներից, «Վարդապետության» հեղինակը ստրկորեն չի հետևում իր օգտագործած աղբյուրներին: Որպես սկզբունք նա համապատասխան աղբյուրից վերցնում է որևէ միտք և զարգացնում ու ճոխացնում այն նորանոր մանրամասներով ու սեփական դատողություններով: Պատահական չէ, որ «Վարդապետության» մեջ համարյա ոչ մի աղբյուրի հետ բառացի համընկնող բիշ թե շատ ծավալուն հատված չենք գտնում: Աղբյուրներից օգտվելու հեղինակի կիրառած եղանակը և «Վարդապետության» ստեղծման շարժառիթը, մեր կարծիքով, ճիշտ է ներկայացված Բ. Սարգիսյանի հետևյալ գնահատականի մեջ. «Հեղինակը թէ և

<sup>37</sup> *Aphraate le Syrien*, II, 14.

<sup>38</sup> Բ. Թոմսոնը «Վարդապետության» տարբեր պարբերությունների առիթով, ի շարս հայրաբանական գրականության այլևայլ ներկայացուցիչների, որոշ զուգահեռներ է մատնանշում նաև ասորի հեղինակների մոտ (հմմտ. R. W. Thomson, *The Teaching...*, § 267, 369, 378, 379, 443, 510, 529, 546, 638, 643): Բացի այդ նա ցույց է տալիս նաև «Վարդապետության» մեջ տեղ գտած ասորաբանությունների առանձին հետքեր (հմմտ. § 269, 315, 345, 360, 376, 386, 406, 588, 663):

նիւթապէս Ս. Գրոց պատմութեան ընթացիցը կը թուի հետեւել, բայց նորա գրութաւոր նպատակն է Լուսաւորչայ համառօտ վարդապետութեան<sup>39</sup> գործադրական մասունքն՝ անկէ վերջ եկող մեծանուն սուրբ Հարցն Եփրեմի, Բարսղի, Նագիանդացոյ, Նիւսացոյն և այլոց հաստահիմն վարդապետութեամբք և իրեն յատուկ ոճով ճոխացնել և իւր ազգակցաց համար Կիւրեղներու Կոչումն ընծայութեան և Պարապման գրոց նման Վարդապետարան մի պատրաստել<sup>40</sup>:

«Վարդապետութեան» աղբյուրների հարցը, բացի բուն հուշարձանի պատմութեան ուսումնասիրման տեսակետից, կարևոր նշանակություն ունի նաև ընդհանրապես հայ մատենագրութեան հնագույն շրջանի ժամանակագրությունը պարզելու համար: Քանի որ «Վարդապետությունն», ինչպես վերը նշվեց, ստուգապես թվագրվում է V դարի առաջին կեսով, ապա նրա աղբյուրները պետք է գոյություն ունեցած լինեն դրանից առաջ: Այդ հիման վրա կարելի է պնդել, իհարկե նկատի ունենալով նաև մի շարք այլ հանգամանքներ, որ բացահայտված ասորական աղբյուրները, այսինքն՝ Եփրեմի մեկնությունները, Ափրահատի ճառագրական ժողովածուն, «Վարդապետութիւն առաքելոց» անվավեր գրվածքը և Այթալահա Եղիսացու «Հովուական թուղթը» հայերեն են թարգմանվել «Վարդապետութեան» գրութեան ժամանակից առաջ: Անշուշտ, չպետք է անտեսել Թ. Թոմսոնի այն տեսակետը, որի համաձայն՝ հայ հեղինակը կարող էր օգտված լինել ուղղակի հունարեն և ասորերեն բնագրերից<sup>41</sup>: Սակայն այն փաստը, որ «Վարդապետութեան» և ասորական աղբյուրների միջև առայժմ բացահայտված բոլոր ընդհանրություններն էլ առկա են հայերեն թարգմանություններում, հիմք է տալիս մտածելու, որ հեղինակն այնուամենայնիվ իր ձեռքի տակ ունեցել է հայերեն բնագրեր:

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

## СИРИЙСКИЕ ИСТОЧНИКИ «УЧЕНИЯ ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ»

### Резюме

«Учение Григория Просветителя» является одним из древнейших памятников армянской литературы. По мнению большинства исследователей, оно создано в первой половине V в. основателем армянской письменности Месропом Маштоцем. В основу «Учения» легли многие теоретические положения патристики в области богословия и экзегезы.

Цель настоящей публикации—показать, что одним из основных источников «Учения» была сирийская патристика—произведения Афраата, Айталахи Эдесского, Ефрема Сирина, а также апокрифическое сочинение «Учение апостолов».

<sup>39</sup> Նկատի ունի Լուսավորչի մի համառօտ վարդապետական քարտզը, որն ընդգրկված է Ազաթանգեղոսի «Պատմութեան» առաջին գրքում, § 226—258:

<sup>40</sup> Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս..., էջ 370—371:

<sup>41</sup> S<sup>h</sup>'u R. W. Thomson, The Teaching..., p. 35.

L. H. TER-PÉTROSSIAN

LES SOURCES SYRIAQUES DE LA "CATECHÈSE DE GREGOIRE  
L'ILLUMINATEUR"

R é s u m é

La "Catéchèse de Grégoire l'Illuminateur" est l'une des oeuvres les plus anciennes de la littérature arménienne. De l'avis de la plupart des chercheurs, elle a été rédigée à la première moitié du Ve s. par Mesrop Machtotz, créateur de l'alphabet arménien. La "Catéchèse" est basée sur de nombreux principes théoriques de la patristique dans le domaine de la théologie et de l'exégèse.

Le but de la présente publication est de montrer que l'une des principales sources nourrissant la "Catéchèse" est la patristique syriacque, en particulier les oeuvres d'Aphraate, d'Aytallaha d'Edesse, d'Ephrem le Syrien, ainsi que l'ouvrage apocryphe intitulé "Doctrine des Apôtres".

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅՈՒ «ԱՂՎԱՆԻՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»  
ՉԵՌԱԳՐԵՐԸ

«Աղվանից պատմության» (այսուհետև՝ ԱՊ) 1860 թ. լույս տեսած առաջին երկու հրատարակությունները ձեռագրերի համեմատության միջոցով Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցու) երկի սկզբնագրի վերականգնման խնդիր չեն ունեցել: Մոսկովյան հրատարակությունը հիմնված էր ընդամենը երկու, իսկ փարիզյանը՝ շորս ձեռագրերի վրա<sup>1</sup>:

Առաջինը ԱՊ ձեռագրերի լիարժեք բնութիւնը զբաղվել է Խ. Դադյանը, որը «Արարատ» ամսագրում հրատարակած իր հոդվածաշարում մանրամասն նկարագրել է Կաղանկատվացու երկի՝ էջմիածնի մատենադարանում պահպանվող հինգ ընդօրինակությունները և նրանց բնագրագիտական համեմատության շնորհիվ կատարել էական ընդհանրացումներ<sup>2</sup>: Մասնավորապես նա պարզել է, որ ԱՊ հայտնի ձեռագրերը բաժանվում են երկու խմբի, ընդ որում առաջին խմբի մայրը 1289 թ. Հովհաննավանքում կատարված ընդօրինակությունն է:

Մի բանի տարի անց Մեսրոպ Տէր-Մովսիսյանն իր այդպես էլ չհրատարակված «Ընդհանուր ցուցակում» համառոտ նկարագրել է ԱՊ աշխարհի զանազան գրադարաններում պահպանվող 26 գրչագիր (իրապես՝ 25, բանի որ մեկը թյուրիմացաբար կրկնվում է), ընդ որում, ըստ երևույթին՝ պատահականորեն, 1289 թ. հնագույն ընդօրինակությունը ցուցակում չի արձանագրվել<sup>3</sup>:

Հենվելով Ա. Ժազիսում «հանդրատանաց» բառի տարբերությունների վրա, Հր. Աճառյանը էջմիածնի մատենադարանում պահվող ԱՊ 8 ձեռագրերը բաժանել է երեք խմբի<sup>4</sup>: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, նրա առանձնացրած

<sup>1</sup> Մովսեսի Կաղանկատվացույ Պատմութիւն Աղուանից աշխարհի: Ի լույս բնծայեաց Մէրտիչ էմին, Մոսկվա, 1860 (այսուհետև՝ էմին), էջ 01; Պատմութիւն Աղվանից արարեալ Մովսիսի Կաղանկատվացույ: Ի լույս բնծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ, 1860 (այսուհետև՝ Շահն.), հ. Ա, էջ 85:

<sup>2</sup> Խ. Վ. (Խաչիկ վարդապետ Դադեան), Մովսէս Կաղանկատվացույ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները, «Արարատ», 1895, էջ 235—238, 333—338, 388—390, 424—426; Եւոյնի՝ նիւթեր ուսումնասիրութեան Աղուանից պատմութեան, «Արարատ», 1896, էջ 22—26, 67—71, 125—128, 176—179, Եւոյնի՝ նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար, «Արարատ», 1897, էջ 67—70, 161—163 (այսուհետև՝ Դադյան, 1895, 1896, 1897):

<sup>3</sup> Մեսրոպ Մազիստոս Տէր Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 133, Մատենագիրներ, թղթ. 3, էջ 1550—1553:

<sup>4</sup> Հր. Աճառյան, Հայերէն արժատական բառարան, հ. 2, Երևան, 1977, էջ 40—41:

առաջին խմբի օրինակները (ձ<sub>1</sub> և ձ<sub>2</sub>) իրականում պատկանում են Ա խմբի ենթախմբերից մեկին:

ԱՊ-ը հանգամանորեն քննած Ն. Ակինյանը թվարկել է իրեն հայտնի 25 ձեռագիր (իրապես՝ 22, քանի որ երեքը թյուրիմացաբար կրկնվում են) և նշել յուրաքանչյուրի պատկանելությունը Ա կամ Բ խմբին (երբեմն՝ սխալ)<sup>5</sup>:

Չ. Դովսեթը ԱՊ անդլերեն թարգմանությունը կատարել է 9 ձեռագրերի համեմատությամբ, ձեռքի տակ ունենալով նաև էջմիածնի մատենադարանի 4 օրինակների տարբերակների ցանկերը, որոնք ԱՊ մի շիրականացած հրատարակության համար կազմել էր Խ. Դադյանը<sup>6</sup>: Վերջինս 1926 թ. այդ ցանկերը նվիրել էր Ն. Ակինյանին<sup>7</sup>, իսկ այժմ դրանք պահվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Թարգմանության առաջաբանում Չ. Դովսեթը կանգ է առել ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերի առանձնահատկությունների վրա՝ հիմնականում հետևելով Խ. Դադյանին և Ն. Ակինյանին<sup>8</sup>:

Մի քանի տարի առաջ ԱՊ գրչագրերի ճյուղագրությունը կազմելու փորձ է կատարել Ֆ. Մամեդովան<sup>9</sup>: Սակայն, ծանոթ չլինելով ձեռագրերի մեծագույն մասին, նա ստիպված է եղել բավարարվել գրականության մեջ արձանագրված փաստերը ի մի բերելով: Արդյունքում՝ առանձին փաստերի ոչ ճիշտ ընկալումը և որոշ չհաշտղված ենթադրություններ ուսումնասիրողին բերել են մի շարք լուրջ սխալների, որոնք անարժեք են դարձնում առաջարկված ամբողջ համակարգը:

Բոլորովին վերջերս լույս տեսավ ԱՊ նոր՝ համեմատական բնագիրը<sup>10</sup>: Աշխատասիրող Վ. Առաքելյանը այն կազմել է իր ձեռքի տակ եղած 15 ձեռագրերի, մի քանի ձեռագրական հատվածների և ԱՊ նախորդ հրատարակությունների համեմատությամբ<sup>11</sup>: Տողատակում տրված մանրամասն տարբերությունները հնարավորություն են ընձեռում ծանոթանալ գրեթե բոլոր կարևոր ձեռագրերի ընթերցվածքներին: Այդպիսով ծածկվում են այն մասնակի սխալները, որ տեղ-տեղ հայտնվել են նոր բնագրում՝ սկզբնագիրը վերականգնելու փորձերում ոչ ճիշտ հետևողական լինելու պատճառով (մի շարք դեպքերում շարդարացված կերպով բնագիր են մտցվել ընթերցումներ այնպիսի ընդօրինակություններից, որոնք ծագում են աշխատասիրողի ձեռքի տակ գտնված ավելի հին գրչագրերից, ընդ որում վերջիններիս մեջ այդ ընթերցումները բացակայում են): Վ. Առաքելյանը թվարկում է նաև իր ձեռքի տակ չեղած 16 ձեռագիր (իրականում՝ 14, որովհետև նախորդներից երկուսը թյուրիմացա-

5 Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 5—14:

6 The History of the Caucasian Albanians. By Mouses Dasxurançi. Translated by C. J. F. Dowsett, L., 1961, p. XI—XIV.

7 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 12:

8 The History, p. XIV:

9 Փ. Мамедова, «История албан» Моисея Каланкатуийского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977, с. 14—32.

10 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարդգ Առաքելյանի, Երևան, 1983 (այսուհետև՝ Կաղանկատուացի):

11 Նույն տեղում, էջ 17-18:

բար կրկնվում են) և տալիս դրանց համառոտ նկարագրությունները<sup>12</sup>: Ցավոք, ծանոթ լինելով ԱՊ երեք տասնյակ ձեռագրերի, ուսումնասիրողը չի ձեռնարկել նրանց ծագումնաբանության և ճյուղագրության կատարյալ քննությանը, իսկ ձեռագրերի նկարագրությունը կատարել է առանց հետևողական սկզբունքի:

Նկատի ունենալով ԱՊ առկա ընդօրինակությունների ծագումնաբանության ճշտման և ճյուղագրության կազմման կարևորությունը, ստորև փորձում ենք լուծել այդ հարցը: Ընդ որում, տեղի սղություն պատճառով ձեռագրերը մանրամասն չենք նկարագրում և անդրադառնում ենք հիմնականում միայն նրանց ծագումնաբանության հարցերի լուծմանը նպաստող տվյալներին: Ձեռագրերը նշանակում ենք նույն տառանիշերով, ինչ որ ունի Վ. Առաքելյանի հրատարակությունը: Որոշ կարևոր օրինակների համար առաջարկում ենք լրացուցիչ տառանիշեր:

ԱՊ ձեռագրերի Ա խումբ:

ՄՄ ձեռ. № 1531 (a): Երկաթագիր<sup>13</sup>: Սկզբից պարունակում է Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմությունը: ԱՊ-ը սկսվում է 231ա էջում և ավարտվում 377ա էջի 1-ին սյունակում: Ընդօրինակվել է Հովհաննավանքում վանահայր Համազասպ Մամիկոնյան Եպիսկոպոսի պատվերով: Սոկրատի պատմությանը հաջորդող հիշատակարանում ասվում է. «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոյով ի սուրբ մենաստանիս, ի վանս Յովհաննու, ես՝ Տէր Համազասպս, բազում թախանձանաւք ի խնդիր էի, զի յետ իմ մնասցէ ինձ ընծայ, ընդ մեծամեծս ի սուրբս այս Սիովն կաթողիկէի: Արդ աղաչեմ զձեզ, մանգունք սուրբ առագաստի, հայցեալ ի Քրիստոսէ զթողութիւն հանցանաց մերոց, եւ ինձ՝ եղկելի գրչիս»<sup>14</sup>: Գրիչը բազմաթիվ հիշատակագրություններ է թողել, սակայն առանց իր անվան հիշատակման: Ընդօրինակությունը կատարվել է 1289 թ., ինչպես երևում է 306բ էջի հիշատակարանից. «Աւաղ մեծի աղետիս եւ անմխիթար սգոյս, որ եհաս տանս Վրաց եւ քրիստոնէից, զի սպանաւ թագաւորն Դէմէտրէ յաղզէն նետողաց, ոչինչ մահու պարտական, ի սահմի ամսոյ, եւ էր թիւն ԶԼԸ: Եւ ահա ի մեծի վտանգի կանք...»: Հայոց ԶԼԸ թվականի սահմի ամիսն ընկնում է 1289 թ. մարտի 9-ից մինչև ապրիլի 7-ը<sup>15</sup>:

Հայոց ՌՃԻԵ (1676) թվականին այս ձեռագիրը Հովհաննավանքում նորոգվել է Աթանաս գրչի և «աշխատող հնացեալ գրոցս» Զաբարիայի կողմից (վերջինս պատմիչ Զաբարիա Քանաքեոցին է): Նորոգման մասին հիշատակարանը պահպանվել է վերջին էջում (377բ<sub>2</sub>): Նորացվել են 343, 351, 352, 362 և

<sup>12</sup> Նույն տեղում, էջ ԵԱ-ԵԲ:

<sup>13</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Դադյան, 1895, էջ 235—238; Սոկրատայ Սոկլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, քարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սեղրեսարոսի Եպիսկոպոսին Հռովմայ, քարգմանեալ Աբասուն Գրիգորի Զորափորեցոյ: Աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տէր Մովսէսեան, Վաղարշապատ, 1897, հ. Ա, էջ ԺԸ-ԻԳ:

<sup>14</sup> էջ 230բ<sub>2</sub>: Հոգվածում ամենուր ընդգծումները մերն են—Ա. Հ.:

<sup>15</sup> Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 278: Դեմետրեն սպանվել է մարտի 12-ին, տե՛ս «Վրաց ժամանակագրություն» (1207—1318): Քարգմանությունը հին վրացերենից, առաջարանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 158:

374—377 թերթերը: Հին, ըստ երևույթին խիստ մաշված թերթերի բնագիրը բոլորգրով ընդօրինակվել է նոր թերթերի վրա: Հին բնագրի խունացածության պատճառով ընդօրինակության մեջ սխալներ ու պակասներ կան: Բացի այդ, նորոգման ընթացքում պատահաբար դուրս է ընկել ձեռագրի թերթերից մեկը (ներկայիս 371 և 372 թերթերի միջև)՝ Ա.Պ. Գ, ի գլխից մի հատվածով<sup>16</sup>:

1760 թ. Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցու հրամանով այս ձեռագիրը տարվել է էջմիածին, և Ղունկիանոս Աշտարակեցի դպիրը Ա.Պ.-ից ընդօրինակություն է կատարել (ց ձեռագիրը): Խ. Գաղյանի կարծիքով հենց Ղունկիանոսն է, որ ձ ձեռագրի 236ա<sub>2</sub>, 359բ<sub>1-2</sub> և 375բ<sub>2</sub> էջերում քերել է գիրը և նույն երկաթագրով գրել բոլորովին այլ տեքստ՝ այն, որ առկա է այժմ և որն անցել է Ձ-ից կատարված բոլոր ընդօրինակություններին՝ սկսած Ղունկիանոսի (ց) ձեռագրից<sup>17</sup>: Չ. Գովսեթը նշում է, որ իրեն չի հաջողվել գտնել որևէ փաստ այն մասին, թե նշված միջամտության հեղինակը հենց Ղունկիանոսն է<sup>18</sup>: Սակայն, ինչպես էլ մտածենք, պարզ է, որ դա կատարվել է 1730-ական թթ. հետո, քանի որ ի ձեռագրի ընդօրինակման ժամանակ հնագույն ձեռագիրը զերծ է եղել այդ թերությունից<sup>19</sup>:

Ձեռագիրը հարուստ է քերականական սխալներով: Նույնատիպ սխալներն առկա են նաև գրչի թողած հիշատակագրություններում, ուստի պետք է ենթադրել, որ դրանք Ա.Պ. մաշր օրինակից շեն բխում, այլ հատուկ են ձ ձեռագրի գրչին: Սխալների բնույթից կարելի է ենթադրել նաև, որ ձեռագիրը գրվել է թելադրությամբ (Կպիսկոպոս, Կպարթոսութեանն, Ողիմպիաաումն, ընծայ,

<sup>16</sup> Խ. Գաղյանը, որն առաջինն է նկատել նշված պակասը, հրատարակել է այդ հատվածը ըստ Բ խմբի երկու ձեռագրերի (Գաղյան, 1897, էջ 161—163):

<sup>17</sup> Գաղյան, 1897, էջ 70:

<sup>18</sup> The History, p. XIV, n. 7.

<sup>19</sup> Խ. Գաղյանը, նրան հետևելով նաև Չ. Գովսեթը և Ֆ. Մամեդովան, Ղունկիանոսի արարքը բնորոշում են որպես Ա.Պ. հնագույն բնագրի գիտակցված կեղծում և խեղաթյուրում՝ էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների պայքարում երկրորդի դիրքերը թուլացնելու նպատակով (Գաղյան, 1897, էջ 70; The History, p. XIV; Փ. Մամեդովա, ԿԱՅ. ՍՈՎ., շ. 27—32): Սակայն Ա.Պ. Գ, բ գլխի աղբյուրի՝ Պարտավի 704 թ. ժողովի ընդունած որոշման հայտնաբերումից հետո պարզ դարձավ, որ իրողությունն այլ է: Համեմատությունից հստակորեն երևում է, որ, արտագրելով հիշյալ որոշման բանաձևը, Մովսես Կաղանկատվացին, ելնելով իր նպատակներից, փոփոխել է մի կարևոր հատված: ԺԸ դարում Ղունկիանոսը նկատել է Ա.Պ. Գ, բ գլխի հատվածի և նրա աղբյուրի տեղեկությունների այդ հակասությունը և, ենթադրելով, թե խեղաթյուրումը կատարվել է «գերիմաստ վարդապետ» Կաղանկատվացուց հետո, «Աղվանից սեպուխանների» կողմից, իրեն իրավունք է վերապահել «վերականգնել» սկզբնագիրը (մանրամասն տե՛ս Ա. Հ. Հակոբյան, Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը, ՊԲՀ, 1981, № 4, էջ 143—148): Ա.Պ. Ա, Թ-ում ևս Ղունկիանոսի «վերականգնումը» կատարված է սկզբնաղբյուրի հիման վրա. այս անգամ աղբյուրը Անանիա Մոկացու «Յաղագս ապոստամբութեան ատեն Աղուանից» երկի նույն բովանդակությունն ունեցող հատվածն է: Ինչ վերաբերում է Գ, ի գլխին, ապա այնտեղ Աղվանից առաջին կաթողիկոսների՝ Կաղանկատվացու որդեգրած հերթականությունն այնքան ակնհայտ սխալ է պարունակում, որ արդեն ԺԳ դարում Կիրակոս Գանձակեցին կասկածել է դրան, իսկ Մխիթար Այրիվանեցին ուղղակի Գրիգորիսին գրել է Շուփհաղիշոյից առաջ: Որ Ղունկիանոս դպրի արարքը ոչ թե թեմական պայքարի շահերով պայմանավորված խեղաթյուրում է, այլ բնագրագիտական աշխատանք, երևում է նաև նրանից, որ Կաղանկատվացու անհավաստի տեղեկություններ պարունակող բազմաթիվ այլ հատվածներ թողնվել են անխաթար Իհարկե, Ա.Պ. սկզբնագրի մասին ԺԸ դարի բնագրագետի տեսակետի հետ դժվար է համաձայնել, և եթե մեզ հետաքրքրողը ոչ թե Ը դարի իրողություններն են, այլ Կաղանկատվացու սկզբնագիրը, ապա պիտի կանգ առնենք Բ խմբի և ի ձեռագրի անխաթար ընթերցումների վրա:

կանք, մանգունք): Քելլադրոդը, հավանաբար, հիշատակագրություններից շորսում հիշվող Գրիգորէս կրոնավորն է (օրինակ՝ էջ 265ա<sub>2</sub>-ում «Աստանաւը չիշեսչիք զսրբազան էպիսկոպոսն զՏէր Լամազասպ, որ եղև ստացաւ զբոցս, եւ զԳրիգորէս կրանաւոր, թէ ճար կա՛ եւ զմեղապարտ գրիչս»): Հմմտ. նաև էջ 123բ<sub>1</sub>, 149ա<sub>1</sub>, 172ա<sub>1</sub>): ձ-ից ընդօրինակողները ուղղել են սխալները:

ձ ձեռագրից ծագում են բազմաթիվ ընդօրինակություններ, որոնք ձ-ի հետ միասին կոչվում են ԱՊ ձեռագրերի Ա խումբ:

Անթիլիասի Լայոց կաթողիկոսարանի մատենադարանի ձեռագիր № 75 (h): Մանրածապավենը պահպանվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում (№ 760): Գեղեցիկ բոլորգիր, գրիչն՝ անհայտ, տեղը՝ ամենայն հավանակա-նությամբ՝ Հովհաննավանք<sup>20</sup>: Միակ հիշատակագրությունը 47բ էջում է. «Զբստացող գրոյս՝ զերջանիկ հայրապետն Տէր Աբրահամ կաթողիկոսն ամենայն Լայոց»: Հիշված կաթողիկոսը կա՛մ Աբրահամ Բ Խոշաբեցին է (1730—1734), կա՛մ Աբրահամ Գ Կրետացին (1734—1737): Ըստ այսմ, ձեռագիրը պետք է գրված լինի 1730—1737 թթ. ընթացքում: Այն օրինակված է ձ-ից և նրա նկատմամբ գրեթե շեղումներ չունի<sup>21</sup>: h-ի կարևորությունը նրանում է, որ, արտագրված լինելով ձ-ից Ղունկիանոսի «վերականգնումներից» առաջ, ձեռագիրը պահպանել է մայր օրինակի սկզբնական ընթերցումները Ա, Բ, Գ, Ը և Գ, ից գլուխներում: h-ի պահպանած այդ հատվածները վերջնականապես հաստատում են Խ. Դադյանի տեսակետն այն մասին, որ Ղունկիանոսից առաջ ձ-ն նշված տեղերում ունեցել է նույն ընթերցումները, ինչ որ Բ խմբի ձեռագրերը:

#### Աց ենթախումբ:

ՄՄ ձեռ. № 2646 (g): Նոտրգիր: Ընդօրինակվել է էջմիածնում, Լայոց կաթողիկոս Լակոբ Շամախեցու պատվերով Հովհաննավանքից բերված ձեռագրից (a)<sup>22</sup>: Վերնագիրն է «Գիրք պատմութեան Աղուանից աշխարհին. ի չերիս հատորս բաժանեալ. շարագրեցեալ ի Մօսիսէ զերիմաստ վարդապետէ Կաղանկատացոյ. ի վաղնչուց ժամանակաց. ի փառս Աստուծոյ»: Գրիչ Ղունկիանոս դպիրը թողել է բազմաթիվ հիշատակագրություններ: Ձեռագրի վերջում, մի ընդարձակ հիշատակարանում (էջ 330ա—331բ) ասվում է մասնավորապես հետևյալը. «Եւ էր թուականս մեր ՌՄԺ (1761—Ա. Ը.), յսկզբան ամսոյն Յունվարի յորում սկսայ գրել, յոր և գրեալ բազմաւ ջանիւ և մեծաւ աշխատակրութեամբ և մանաւանդ ցրտանալով ի նոյնում թականիս և ի մարտի ամսոյ Ժ-ումն զրաւեցի հաջողութեամբն Աստուծոյ»: Այստեղ Ղունկիանոսը երևի մի փոքր շփոթում է, քանի որ այլ փաստերից երևում է, որ օրինակումն սկսվել է 1760 թ.: Այսպես, 85ա էջում ԱՊ Ա գրքի բնագրից հետո գրված է

<sup>20</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Ա. Սիւմէլեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Լայլայի և Անթիլիասի և մասնաւորաց, հ. Բ, Լայլայ, 1936, էջ 150—151; Ա. Դանիէլեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1984, էջ 294: 1932 թ. Անթիլիաս տեղագիտականաց առաջ այս ձեռագիրը պատկանել է կոստանդնուպոլսեցի Հովհաննես Մկրյան քահանային (Ա. Դանիէլեան, նշվ. աշխ., էջ Թ, ԺԲ) և որպէս այդպիսին նկարագրվել է Մեսրոպ Մագիսարոսի կողմից (նշվ. աշխ., էջ 1553): Մեսրոպ Մագիսարոսը և Վ. Առաքելյանը սխալմամբ հիշատակում են թե՛ h-ը, թե՛ Մկրյան քահանայի ձեռագիրը (Մեսրոպ Մագիսարոս, նշվ. աշխ., էջ 1553; Կաղանկատացի, էջ 12, ԽԲ):

<sup>21</sup> Դեռևս Չ. Գովսեթը նկատել է, որ h-ը Ա խմբի ձեռագիր է, և ոչ թե՛ Բ, ինչպէս կարծում էր Ա. Սյուրմեյանը (The History, p. XII, n. 1):

<sup>22</sup> Մանրամասն նկարագրությունը տե՛ս Դադյան, 1895, էջ 333—335:



«1209», որը, եթե վերածենք ըստ Հայոց թվականի, կտա 1760 թիվ (13.09.1759—11.09.1760): Իսկ 263 էջի հիշատակագրությունն ասում է. «1210 և ի լունվարի Գ.ին: Կատարեցաւ և գտեղի էառ երկրորդ հատար Պատմութեանս Ազունից»: Դժվար է մտածել, թե Ա.Պ երկու գրքերն ընդօրինակվել են հունվարի առաջին շորս օրվա ընթացքում, այն դեպքում, երբ ամբողջ օրինակումն ավարտվել է մարտին:

Ա.Պ բնագրից անմիջապես հետո գրիչը գետեղել է Կիրակոս Գանձակեցու Պատմութեան ժ գլխի՝ ժԲ—ժԳ դարերի Ազգանից կաթողիկոսների մասին պատմող հատվածը «Զներքոյ գրեալսդ ի Կիրակոս վարդապետի Պատմութենէն առեալ եղաք աստ» վերտառութեամբ (էջ 329): Ղունկիանոսը նկատել է մայր ձեռագրի քերականական սխալները և ընդօրինակելիս մեծ մասամբ ուղղել դրանք: Կան նաև ավելացումներ, մասնավորապես՝ Գանձակեցուց (օրինակ՝ Գ, իդ գլխի Միրայել Ա և Դավիթ Գ կաթողիկոսների մասին պատմող հատվածներում՝ 345, 1—2, 346, 1—3<sup>23</sup>): Ինչպես իրավացիորեն ենթադրում է Ն. Ակինյանը, ըստ երևույթին Ղունկիանոսը Գանձակեցու տեղեկութեան հիման վրա է վերականգնել նաև Ա.Պ հեղինակի «Մովսես Կաղանկատվացի» աշունք (ց-ն այդ աշունքը պարունակող հնագույն ձեռագիրն է)<sup>24</sup>: Գրիչը կատարել է նաև այլ փոփոխություններ, մասնավորապես, ընդարձակել է Գ, ա և Գ, ժգ գլուխների վերնագրերը, Գ, ժդ գլխի միջին հատվածը Մանկիկի և Մերդազատի վկայութեան մասին դարձրել է առանձին գլուխ՝ ժէ թվահամարի տակ և մի-մի պարբերություն է բաց թողել Գ, ժթ (իր՝ Ի) գլխի վերջում և Գ, իգ (իր՝ ԻԳ) գլխի Աբաս կաթողիկոսին վերաբերող հատվածում:

ՄՄ ձեռ. № 6520 (Պ): Շղագիր<sup>25</sup>: Ընդօրինակվել է Մոսկվայում, 1835 թ. Միրայել Սալանթյանցի ձեռքով, ինչպես ասվում է ՕՅա էջի հիշատակարանում «Ընդօրինակեաց Միրայել արքեպիսկոպոս Սալանթեանց ի Մոսկովյամին 1835»: Համեմատությունից պարզ երևում է, որ օրինակված է ց-ից<sup>26</sup>: Ա.Պ բնագրին հաջորդում է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրությունը:

ՄՄ ձեռ. № 6547 (Ո): Մանր, գեղեցիկ նոտրգիր: Ավանդաբար օրինակված է համարվում Մկրտիչ էմինի կողմից, 1849 թ.<sup>27</sup>: Սակայն դա չի կարող ճիշտ լինել թեկուզ միայն այն պատճառով, որ, ինչպես պարզորոշ ցույց տվեց մեր կատարած քննությունը, 1848 թ. կազարյան ձեմարանի հրատարակած քրեստոմատիայում Ա.Պ-ից վերցված երկու գլուխներն առնված են այս օրինակից<sup>28</sup>: Ձեռագիրն ընդօրինակված է, ըստ երևույթին, պրոֆեսիոնալ գրչի ձեռքով: Վերնագիրն ու հատորների նշումները գրված են մեծ, գեղագիր տառերով: Ո-ը ևս օրինակված է ց-ից: Գրիչն աշխատել է տառացիորեն պատճե-

<sup>23</sup> Այսպես նշանակում ենք Ա.Պ նոր հրատարակության հատվածները: Առաջին թիվը ցույց է տալիս էջը, երկրորդը՝ տողը:

<sup>24</sup> Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 10:

<sup>25</sup> Նկարագրությունը տե՛ս Կաղանկատուացի, էջ 1Ը-1Թ:

<sup>26</sup> Հմմտ. Կաղանկատուացի, էջ 1Թ:

<sup>27</sup> Մևուռայ Մազիստրոս, նշվ. աշխ., էջ 1552; Հր. Անտոյան, նշվ. աշխ., էջ 41; The History, p. XIII; «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Կ. Բ, Երևան, 1970, էջ 342, Կաղանկատուացի, էջ 1Թ (վրիպակ՝ 1847 թ.):

<sup>28</sup> «Ընտիր հատուածք, բաղեալք ի գրոց նախնի եւ արդի մատենագրաց Հայոց: Հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պետս աշակերտաց Լազարեանց ձեմարանի Արեւելեան լեզուաց», Մասն Ա, Մոսկվա, 1848, էջ 60—68:

նել մայր ձեռագիրը և ընդօրինակել է նրա բոլոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները: Վերջում արտագրված են նաև Գանձակեցուց քաղված վերոհիշյալ հատվածը (էջ 137բ—138ա) և Ղունկիանոսի ընդարձակ հիշատակարանը (138ա-բ): Զ-ի համեմատությամբ սրա ունեցած որոշ պակասները անուշադրության արդյունք են (ինչպես, օրինակ, 118բ էջում, ուր պակասում է Ղունկիանոսի օրինակի մի ամբողջ թերթի բնագիրը): Ո-ը եղել է Մ. էմինի հրատարակության հիմքը. դա հաստատվում է գրաբնչի մակագրության առկայությամբ (1ա): Հրատարակելուց առաջ Մ. էմինը Ո-ի բնագիրը մանրակրկիտ համեմատել է Մ. Սալլանթյանցի ընդօրինակության հետ և վերջինիս ունեցած բոլոր տարբերակները սովորական շղագրով գրանցել իր ձեռագրի մեջ: Բազմաթիվ էջերում պահպանվել են Մ. էմինի «Այս բառ պակասի առ Սալլանթեանն» կարգի գրությունները: Նա իր օրինակում ջնջել է բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, որոնք Սալլանթյանցի ձեռագրում չկային, վերջինիցս իր ձեռագրի մեջ վերարձակեցրել է Ղունկիանոսի հիշատակարանից մի հատված (137բ էջի լուսանցքում), լուսանցքներում և բառամեջերում համառոտ գրանցել այն փոքրաթիվ ժանոթությունները և Հայոց թվականի իր վերծանությունները, որ հետո արտահայտվել են հրատարակության մեջ<sup>29</sup>: Բացի այդ, հրատարակիչը վերնագիրը կրող էջի ներքևի անկյուններում ստորագրել է՝ «1849» և «Մ. էմին»: Այդ ստորագրությունը ձեռագրի գրության մասին ավանդական կարծիքին հիմք է դարձել, սակայն իրականում ցույց է տալիս Ո-ի՝ Մ. էմինի ձեռքն անցնելու ժամանակը միայն: Բուն գրչի հիշատակարան կամ այլ նշում ձեռագրում չկա: Զի հաջողվում գրության մասին որևէ տեղեկություն գտնել նաև Լազարյան ճեմարանի ձեռագրացուցակներում, որտեղ ձեռագիրը պահվել է մինչև էջմիածին տեղափոխվելը<sup>30</sup>: Ն. Ակինյանը այս ձեռագիրը թվագրում է 1841 թվականով<sup>31</sup>. այս եզրակացության նրա կրփանները մեզ հայտնի չեն, սակայն պայմանականորեն ընդունում ենք մեծավաստակ հայագետի թվագրումը:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 219 (P<sub>3</sub> 219): Նստերգիր<sup>32</sup>: Ըստ տիտղոսաթերթի, գրվել է 1852 թ., Մ. էմինի ձեռքով էդուարդ Գյուլոբյեի համար: Վերջում (էջ 274—275) ունի հիշատակարան, ուր ասվում է, թե ընդօրինակվել է այն օրինակից, որը Հայոց 1210 թ. (1761) գրել է Ղունկիանոս գրիչը<sup>33</sup>: Սակայն Մեսրոպ Մազիստրոսը, որը տեսել է այս ձեռագիրը, նշում է, որ այն «ընդօրինակութիւն է Մ. էմինի օրինակից (այսինքն՝ Ո-ից—Ա. Հ.), որը արտագրած էր Ղունկիանոս դպրի 1761 թ. կատարած ընդօրինա-

<sup>29</sup> Այս փաստերից երևում է, որ Վ. Առաքելյանի այն կարծիքը, թե «էմինի հրատարակությունը ոչ թե իր ձեռագրի ընդօրինակումն է, այլ՝ Սալլանթյանցի» (Կաղանկատուացի, էջ 10), պետք է համարել շարդարացված:

<sup>30</sup> Տուցակներից մեկում ճեմարանում գտնված ԱՊ ձեռագիրը թվագրվում է 1859-ով («Каталог книг и рукописей библиотек Лазаревского института восточных языков», М., 1888, с. 80): Սակայն ձեռագրի մասին հաղորդվող մյուս տվյալներից (չափսերը, թերթերի և տողերի քանակը) երևում է, որ խոսքը Ո-ի մասին է:

<sup>31</sup> Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 13:

<sup>32</sup> Նկարագրությունը՝ F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, P., 1908, p. 119:

<sup>33</sup> Նույն տեղում, The History, p. XIII:

կուսիներից<sup>34</sup>: Կարծում ենք, որ Դյուլորյեի համար գրած ձեռագրում Մ. էմինը մատնանշել է իր օրինակի (Ո) հիմքը (Զ):

Նորայր Բյուզանդացու ձեռագիրը: 1892 թ. Նորայր Բյուզանդացին ընդօրինակել է ԱՊ-ը՝ վերադասավորելով նրա գլուխներն ըստ «իրական ժամանակագրության», և հասել է մինչև Բ, լր գլուխը (մնացածի միայն զխացանկն է ընդօրինակված)<sup>35</sup>: Ձեռագիրն ունի 166 թերթ: Նորայր Բյուզանդացին, սկսելով «10 Յուլիս 1892», ծանուցում է, որ ընդօրինակությունը կատարել է Մ. էմինի հրատարակությունից (1ա): Քանի որ վերջինս հիմնված է ԱԶ ենթախմբի Մ և Ո ձեռագրերի վրա, ուստի ն. Բյուզանդացու ձեռագիրը ևս պետք է դասել այդ ենթախմբին:

Այսպիսով, ԱԶ ենթախումբը կազմում են Զ, Մ, Ո, Ք<sub>3</sub> 219 և Նորայր Բյուզանդացու ձեռագրերը: Ենթախմբի առանձնահատկությունները պայմանավորված են Զ ձեռագրի վերը ներկայացված առանձնահատկություններով:

Ա) ենթախումբ:

ՄՄ պատառիկ № 1351 (անվանում ենք Բ)<sup>36</sup>: Ունի 8 թերթ, գիրը նոտրգիր է, վերնագրերը՝ բոլորգիր: Առկա գլուխները համարակալված չեն: Պարունակում է երկու հատված ԱՊ Ա գրքից՝ ԺԱ գլխի վերջից մինչև ԺԴ գլխի սկիզբը (25,15—33,3) և ԺԶ-ի կեսից մինչև ԺԸ-ի խորագիրը (43,12—50,18): Բնագրի բնությունից պարզվեց, որ Բ-ի ձեռագիրը պատկանել է ԱՊ ձեռագրերի Ա խմբի, այն ենթախմբին, որին պատկանում են մեր ձեռքի տակ եղած Ի, Ճ<sub>1</sub>, Ճ<sub>2</sub> և Փարիզի № 217 ձեռագրերը (ԱՊ նոր հրատարակության մեջ մանրամասն ներկայացված են միայն Ճ<sub>1</sub>-ի ընթերցումները): Յոթ տասնյակի հասնող զեպրեում պատառիկի ընթերցումները նման են նշված ձեռագրերի ընթերցումներին: Ընդ որում մի շարք զեպրեում դրանք նման են կա՛մ Ի-ի, կա՛մ Ճ<sub>1</sub>, Ճ<sub>2</sub>, Փարիզի № 217 (վերջիններն ունեն ընդհանուր մայր՝ Մ<sub>1</sub>) ձեռագրերի իրարից տարբերվող ընթերցումներին: Դա թույլ է տալիս պնդել, որ Բ-ի ձեռագիրը եղել է Ի և Մ<sub>1</sub> օրինակների մայրը (կամ, ծայրահեղ դեպքում, օրինակված է այդ մորից. քանի զեռ ձեռագիրն ամբողջությամբ մեր ձեռքին չէ, նման հնարավորությունը չի կարելի բացառել):

Բ-ի ձեռագրից ծագող բազմաթիվ ընդօրինակությունները խմբավորում ենք որպես Ա խմբի Աք ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 4197 (Ի): Նոտրգիր<sup>37</sup>: Վերնագիրն է. «Գիրք պատմութեան Աղուանից: Բաժանեալ յերիս հատոս: Արարեալ ի Մովսիսէ Կաղկանտուացույ» (էջ 3ա): Ապա նույն էջում ունի. «Արտագրեալ ճիշտ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի Մատենադարանի Արոսոյ Սերոյն էջմիածնի: Ի պետս սարկաւազ Սահակայ Գեղամեանց. ի 1822 թուականի»: Գրիչը որոշ վրիպումներ

34 ՄԼուրայ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

35 ՄՄ, Արխիվ, Նորայր Բյուզանդացու թողոն, թղթ. 235/3, վավ. № 263:

36 Այս պատառիկի մասին տեղեկացել ենք Մաշտոցի անվ. Մատենադարանի զիտաշխատակից Ա. Մարգարյանից, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Ծնորհակալությամբ սխիտի նշենք նաև, որ ներկա աշխատանքը բազմաթիվ ուրիշ բացեր կունենար, եթե չլիներ Մատենադարանի ավանդապահ Յ. Վարդանյանի մշտական օգնությունը:

37 Նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ ԼԸ:

ունի, օրինակ, պակասում են Դավթակի ողբի Պ տառի քառյակի առաջին տողը և երկրորդի կեսը (229, 16—17):

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 8 (անվանում ենք W<sub>1</sub>): Գիր՝ շղագիր, խորագրերը՝ բույրգիր, ժամանակ՝ 1838 թ., «Գրիչ՝ անհայտ, ուսասնայ մը անշուշտ: Տեղի՝ հաւանականորեն էջմիածին», այլ տեղեկութուններ չունի<sup>38</sup>: Վերնագիրն է. «Պատմութիւն Աղուանից, բաժանեալ յերիս հատորս. Առաւելալ ի Մովսիսէ Կաղկանտուացոյ, որ առնէ զսկիզբն յառաջնաստեղծ մարդոյ անտի յԱդամայ եւ այնպէս շարունակելով զվերաբերեալսն ազգին Աղուանից եւ մասնաւորապէս այլոց ազգաց, եւ հասուցանէ ցաւարա իններորդ դարուն: Օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին՝ որ ի գրանոցի Արոտոյ էջմիածնի, յամի Տեառն 1838»<sup>39</sup>: Վերնագրի մեջ մեր ընդգծած հատվածները կրկնում են նախորդ՝ ի ձեռագրի վերնագիրը, ուստի կարելի է ենթադրել, որ սրանք բխում են մայր օրինակից, այսինքն Բ-ից: Ինչ վերաբերում է միջին հատվածին, ապա հակված ենք մտածելու, որ այն գալիս է Հովհաննես Շահխաթունյանցից, որն, ինչպես ստորև կտեսնենք, այս ձեռագրի ընդօրինակման կազմակերպիչն է, և որի 1829 թ. ընդօրինակության վերնագրում ԱՊ-ը բնութագրված է գրեթե նույն ձևով:

Ը. Տաշյանը W<sub>1</sub>-ի մասին հայտնում է նաև հետևյալը. «Թեև սկզբան տուած տեղեկութիւնը կրսէ, թէ օրինակած ըլլայ «բաղդատութեամբ էջմիածնի մեկ ձեռագրին», բաղդատութեան արդիւնքը կամ ընթերցուածոց տարբերութիւնք շենք գտներ նշանակուած ձեռագրիս վրայ: Միայն տեղ տեղ գրչին մոռցած բառերն ու խօսքերը աւելցուած են կամ սխալմունքն ուղղուած: Ամբողջ կը ցուցնէ, որ հրատարակութեան համար գրուած ըլլալու է եւ հայագէտ մը (Պրոսէ՞) եղերաց վրայ շատ յաջախ գաղղիներէն ծանօթութիւններ գրեր է՝ մեկնութիւններ դժուար բառերու եւ այլ տեղեկութիւններ»<sup>40</sup>: Այս քաղվածքի սկզբում Ը. Տաշյանի արտահայտած կասկածը փարատվում է վերը ներկայացված մեր այն ենթադրությամբ, ըստ որի «բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոտոյ էջմիածնի» արտահայտությունը գալիս է մայր ձեռագրից: Բրոսսին վերաբերող՝ Ը. Տաշյանի ենթադրության հետ դժվարանում ենք համաձայնել. Մ. Բրոսսեն, իր իսկ հաղորդման համաձայն, օգտվել է ԱՊ մի ուրիշ՝ 1841 թ. Պետերբուրգում գրված օրինակից (Ա)<sup>41</sup>: W<sub>1</sub>-ի ֆրանսերեն լուսանցարությունների հեղինակը, ամենայն հավանականությամբ, էժեն Բորեն է: Վերջինս 1838—1839 թթ. ճանապարհորդել է Հայաստանում՝ մասնավորապես Կաղանկատվացու անհայտ երկր գտնելու նպատակով<sup>42</sup>: էջմիածնում վանքի մատենադարանապետ Հովհաննես Շահխաթունյանցը նրան ցույց է տվել ԱՊ մի հին ձեռագիր և խոստացել ընդօրինակություն կատարել նրա համար: էջմիածնից հեռանալուց ութ ամիս անց, արդեն Թավրիզում,

<sup>38</sup> Ը. Յ. Վ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 51:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>41</sup> M. Brosset, Additions et éclaircissement à l'Histoire de la Géorgie. Depuis l'antiquité jusqu'en 1469 d J. C., SPb, 1851, p. 468.

<sup>42</sup> E. Boré, Histoire des Aghovans et de leur conversion au christianisme, «Univers catholique», XXII vol., 2-e série, t. II, 1846, p. 139.

է. Բորեն ստացել է խոստացած ընդօրինակությունը<sup>43</sup>: Այն գրված էր շղագրով և առատ էր համառոտագրություններով: Հատուկ անունների մեջ հանդիպող սխալները Բորեն վերագրում է մայր օրինակին և հիմնավորում այդ նրանով, որ ձեռագրի օրինակումից հետո Շահխաթունյանցը այն համեմատել է «արխետիպի» հետ և ուղղել սխալները<sup>44</sup>: Վերջին փաստը հիշեցնում է Հ. Տաշյանի վերը բերված նկարագրության մեջ մեր ընդգծած հատվածը այն մասին, որ Պ<sub>1</sub>-ում գրչի բաց թողած բառերն ավելացված են և սխալներն ուղղված: Նըշված հանգամանքները ցույց են տալիս, որ Պ<sub>1</sub>-ը գրականության մեջ հայտնի Բորեի օրինակն է, որից ընդօրինակված են d<sub>1</sub> և d<sub>2</sub> ձեռագրերը:

ՄՍ ձեռագիր № 3043 (d<sub>1</sub>): Գեղեցիկ նոտրգիր<sup>45</sup>: Ընդօրինակված է Թավրիզում 1839 թ. է. Բորեի օրինակից: Վերնագիրը նույնն է, ինչ Պ<sub>1</sub>-ինը: Միայն թվագրումն է տարբեր. «Փրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյն էջմիածնի, յամի Տեառն 1839, ի մայիսի 1-ին» (3ա): Այնուհետև գրիչն ավելացրել է. «Իսկ այժմ վերստին ընդ օրինակեալ ի միաբանէ սրբոյ էջմիածնի, Նրեանցի Պարոն Անդրէասեան Մկրտիչ աւագ սարկաւագապետէ, հրամանաւ դաստիարակին իմոյ՝ Տէր Մարտիրոսեան հանճարիմաստ Ղազար վարդապետի, ի վարժարանն Գավրիժու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, ի վայելս անձին իմոյ»: Ձեռագրի վերջին երեք էջերում տեղավորված «Վախճանական ազդարարութիւն ընդ օրինակողիս» վերտառութեամբ հիշատակարանում գրիչը հայտնում է նաև հետևյալը. «որպէս և հոգևոր հօրն մերոյ՝ գերապատիւ տեառն Ղազարու վարժապետ վարդապետի... գնացեալ առ գաղիղեացի ոմն, որոյ անուն միախ Պօռէ կոչեցեալ, և խնդրեալ ի նմանէ թախանձանօր զերկուս հռչակելի պատմագրութիւնս՝ դՅովհաննէսի, Հայոց գերիմաստ կաթողիկոսի և գԱղուանից պատմութիւն Մովսիսի Կաղկանտուացոյ, զորս բերեալ և վաղ ուրեմն ջերմեռանդն սիրով խնդրէաք ձեռնասուն աշակերտեսս նորին ի ձեռս բերել, զորս ի բերեալն ընդ իւր ետ մեզ՝ աշակերտացն իւրոց ի յընդ օրինակել զնոսա..., որոյ և իմ սիրով հորդորեալ ի հազար ուրն հարիւր երեսուն և ինն ամի, ի մինն սեպտեմբերի սկսեալ օրինակեցի ես՝ աւագ սարկաւագ Սրբոյ էջմիածնայ, տիրացու Մկրտիչ Պարոն Անդրէասեան Նրեանցոյ՝ ի վայելս անձին իմոյ և իմայնոցն, և աւարտեալ ի նոյն ամի նոյեմբերի տասին և յանձնեալ զամենեսին մարդասիրութեան բարեմիտ ընթերցողացդ...» (էջ 369—370): Անհասկանալի է մնում միայն մի փաստ՝ ինչու է գրիչն իր գաղափար օրինակը (Պ<sub>1</sub>) թվագրում 1839 թ. մայիսի 1-ով: Գուցե պետք է ենթադրել, թե էջմիածնից հեռանալուց 8 ամիս անց, խոստացած ձեռագիրը Թավրիզում ստանալով, է. Բորեն նրա վրա մատիտով նշել է ստացման ամսաթիվը, որը հետագայում ջնջվել է և այդ պատճառով չի արձանագրվել Հ. Տաշյանի նկարագրության մեջ:

ՄՍ ձեռագիր № 6466 (d<sub>2</sub>): Շղագիր<sup>46</sup>: Առաջին երեք էջերի վրա բաժան-

43 նույն տեղում:

44 նույն տեղում:

45 նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ 46: Վ. Առաքելյանը այս ձեռագիրը սխալմամբ նկարագրել է նաև երկրորդ անգամ՝ իբրև Թավրիզի երրորդ ձեռագիր (էջ 10Ա). այդպիսին իրականում գոյություն չունի:

46 Համառոտ նկարագրությունը՝ Մեսրոպ Մազիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

բաժան գրված է  $W_1$ -ի և  $d_1$ -ի վերնագիրը, միայն թվագրումն է տարրեր. «Օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ էջմիածնի, յամի Տեառն 1839, ի մայիս 9»: Ապա գրիչը շարունակում է. «Իսկ այժմ վերստին երրորդ անգամ օրինակեալ ի դարիժեցոյ Տէր Յովհաննէսեան Յովսէփայ դպրէս, հրամանաւ դաստիարակին իմոյ՝ Տէր Մարտիրոսեան հանճարիմաստ Ղազարու վարժապետ վարդապետի: Ի վարժարանն Գարիժու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնոյ եկեղեցոյն»: Այսպիսով,  $d_2$ -ն ընդօրինակված է նույն տեղում, ինչ որ  $d_1$ -ը, նույն Ղազար վարդապետի հրամանով և նույն թվականին: Համեմատությունն էլ, ինչպես և պետք էր սպասել, ցույց է տալիս, որ ձեռագիրն ընդօրինակված է Բորեի ( $W_1$ ) օրինակից (այն տեղերում, ուր  $d_1$ -ի ընթերցումները տարրերվում են մեր ձեռքի տակ գտնվող  $p$  և  $i$  ձեռագրերի ընթերցումներից,  $d_2$ -ը համապատասխանում է  $p$ -ին և  $i$ -ին): Անհասկանալի է մայր օրինակի թվագրումը 1839 թ. մայիսի 9-ով, փոխանակ գոնե  $d_1$ -ի պես՝ մայիսի 1-ի: Այս անհամապատասխանությունը կա՛մ պատահական սխալի արդյունք է, կա՛մ մնում է ենթադրել, թե է. Բորեն իր օրինակի վրա նշանակել էր մեկից ավելի ամսաթիվ (ասենք՝ ընթերցման սկզբի և ավարտի):

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 217 ( $P_1$  217): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (№ 880): Շղագիր<sup>47</sup>: Պահպանակի վրա գրված վերնագիրը կրկնում է  $W_1$ ,  $d_1$ ,  $d_2$  ձեռագրերի վերնագրերը: Միայն վերջին նախադասութունն է փոփոխված. «Մերս ընդօրինակութիւն եղև ցարտադրութեանն բաղդատելոյ ընդ գաղափարին՝ եղելոյ ի գրատան էջմիածնի. ի 1839 ամի»: Ներքևում գրչի նշումն է. «Գրութեամբ Արէլ վարդապետի Մխիթարեանց: 1850. ի սուրբ էջմիածին»: Համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այս ձեռագիրն ընդօրինակված է  $d_1$ -ից, բանի որ կրկնում է նրա՝ Ար ենթախմբի մյուս ձեռագրերի ընթերցումներից ունեցած շեղումները:  $P_1$  217-ը, ամենայն հավանականութեամբ, Կ. Շահնազարյանի հրատարակութեանը հիմք ծառայած ձեռագրերից երրորդն է<sup>48</sup>:

Արմաշի վանքի ձեռագիր № 61: Գիր՝ շղագիր, ժամանակ՝ 1838, տեղ՝ էջմիածին, գրիչ, ստացող, հիշատակագրություններ կամ այլ տեղեկություններ չունի<sup>49</sup>: Վերնագիրը բառացի կրկնում է  $W_1$ ,  $d_1$ ,  $d_2$ ,  $P_1$  217 ձեռագրերի վերնագրերը, իսկ թվագրությունը՝  $W_1$ -ինը. «օրինակեալ բաղդատութեամբ ընդ գաղափարին, որ ի գրանոցի Աթոռոյ էջմիածնի, յամի Տեառն 1838»: Ուրեմն ընդօրինակված է  $W_1$ -ից: Սակայն անսպասելիորեն Լ. Թոփճյանի նկարագրութեան մեջ հանդիպում ենք հետևյալ տեղեկութեանը. «Առանձին մտադրութեան արժանի է ձեռագրիս 35-րդ գլուխը (երկրորդ գրքի—Ա. Լ.), որուն վերնագիրն է Ողբք ի մահն Զեւանշէրի մեծի իշխանին (Զ. էջ 222 = տպ. էջ 354), որովհետեւ Զ-ի մէջ այս գլուխը կը վերջանայ բառերովս «որ գամենայն զիրչաց փարատէր զյուզմունս» (Զ. էջ 225) և տպագրի համեմատութեամբ (տպ. էջ 357)

<sup>47</sup> Նկարագրությունը՝ F. Macler, նշվ. աշխ., էջ 118; Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>48</sup> Նահն. էջ 85: Հմմտ. Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>49</sup> Յ. Թօփճեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 202: Այս ցուցակը կազմվել է 1903—1904 թթ.:

ուղիղ երկու երես կամ էջ թերի կը մնայ վերջէն կամ կը կրճատուի»<sup>50</sup>:  $W_1$ -ը Դավթակի ողբի շարունակութիւնն ունի (նրանից ընդօրինակված  $d_1$  և  $d_2$  ձեռագրերում այն կա), ուստի և Արմաշի ձեռագիրն էլ պիտի ունենար այն: Ստիպված ենք ենթադրել, թե վերջինս սկսել են ընդօրինակել  $W_1$ -ից և շարունակել մի ուրիշ ձեռագրից: Արմաշի վանքի գրչագրերը Մեծ եղեռնի ժամանակ կողոպտվել են<sup>51</sup>:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 36 ( $W_2$ ): Ընդօրինակութիւնն է նույն մատենադարանի № 8 ձեռագրից: Բնականաբար վերնագիրը նույնն է, ինչ  $W_1$ -ինը և Արմաշի օրինակինը: Հիշատակարան չունի: Ըստ Հ. Տաշյանի, ընդօրինակվել է 1845—1867 թթ.<sup>52</sup>:

Այսպիսով, ԱՅ ենթախումբը կազմում են Ծ պատառիկը և նրա ձեռագրին հանգող  $\bar{1}$ ,  $W_1$ ,  $W_2$ ,  $d_1$ ,  $d_2$ ,  $P_1$  217 և Արմաշի № 61 ձեռագրերը: Անկասկած Ծ-ից է ծագել նաև Կ. Շահնազարյանի՝ էջմիածնում ընդօրինակած ձեռագիրը, քանի որ այն ունեցել է Դավթակի ողբը լրիվ (Շահն., հ. Ա, էջ 85): Ենթախմբի հիմնական առանձնահատկութիւնն այն է, որ Դավթակի ողբն այստեղ ամբողջական է: Ինչպիսի՞ն է Ողբի երկրորդ կեսի ծագումը. Ծ-ի գրիչն օգտվել է ինչ-որ հնագույն աղբյուրի՞ց, թե՞ ինքն է հնարել մայր օրինակում պակասող շարունակութիւնը<sup>53</sup>: Խնդիրը կարող է հատուկ լեզվական քննութիւն: ԱՅ ենթախմբի մյուս առանձնահատկութիւնն այն է, որ այն ունի Բ խմբի ձեռագրերին բնորոշ երեք տասնյակի հասնող տարբերություններ, այդ թվում՝ երկու ընդարձակ հատված: Բ, իր գլխում, Զվանշիր իշխանի ստացած թուփակի նկարագրութիւն մեջ, առկա է Ա խմբի մյուս ձեռագրերի մեջ պակասող «Այսպէս և բիրք աշացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն ի վայր կոյս» հատվածը (199, 14—15) և Գ, ի գլխում<sup>54</sup>, ուր հնագույն ձեռագրից մի թերթ ընկած լինելու հետևանքով Ա խմբի մյուս ձեռագրերում առկա է «Որոյ նշխարքն լուսաճաճանշ կոտորեաց զնոսա» անիմաստ արտահայտութիւնը (էմին, էջ 265), ԱՅ ենթախումբը դեն է նետում «կոտորեաց զնոսա»-ն և շարունակում ու ավարտին է հասցնում պարբերութիւնը. «լուսաճաճանշ փայլմամբ ահացուցանէր զթշնամիսն, զոր տեսեալ նոցա՝ անհետեցին ի գիշերի, և ոչ ոք գիտաց զնա ի քրիստոնէիցն, պսակողին իւրում մնայ միայն յայտնութեանն» (Շահն., հ. Բ, էջ 58): Հնարավոր չէ ճշգրիտ որոշել, թե Բ խմբի ո՞ր ձեռագիրն է օգտագործել Ծ-ի գրիչը: Կարելի է միայն ենթադրել, որ, ինչպես և Աէ ենթախմբի համար, դա Ե ձեռագիրն է: Վերջինս էջմիածին է բերվել 1766 թ.<sup>55</sup>: Եթե մեր

50 նույն տեղում:

51 նույն տեղում, էջ 5:

52 Հ. Յ. Վ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 193:

53 Այս հարցն առաջադրել և խնդրին խոստացել է անգրագետնալ դեռևս Խ. Դադյանը («Իսկյան», 1895, էջ 337), սակայն իր խոստումը չի իրագործել:

54 Նոր բնագրում՝ Գ, իսկ Վ. Առաքելյանը, հետևելով Աջ ենթախմբի ձեռագրերին, Մանկիկի և Մերդազատի պատմութիւնը ներկայացրել է առանձին՝ Գ, ժէ գլխով, որի հետևանքով ԱՊ վերջին գլուխների համարները մեկով աճել են: Պետք է հետևել Կ. Շահնազարյանի հրատարակութիւն, 2. Գովսեթի՝ անգլերեն և Վ. Առաքելյանի՝ աշխարհաբար թարգմանութիւնների գլխակարգութիւնը:

55 «Գիւան Հայոց պատմութեան», Գիրք Գ, «Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը»: Կենսագրութեամբ և յանելութենով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Քիֆլիս, 1894, էջ 376:

ենթադրությունն արդարացի է, ապա Բ-ի ձեռագրի ընդօրինակման ժամանակը կարելի է սահմանափակել 1766—1822 թթ. միջև:

Այ ենթախումք:

ՄՄ ձեռագիր № 2866 (1): Նոտրանման շղագիր<sup>56</sup>: Սկզբում ունի ուսերեն վերնագիր. «История происхождения Агванов, жителей Русских мусульманских провинций, Моисея Кагкантиваца, списанная с древней рукописи, хранящейся в Эчмиадзинской библиотеке, Армянским Архимандритом Иоаннесом Шахатуновым» (1ա): Հաջորդում է հայերեն ընդարձակ վերնագիր-ծանոթագրությունը. «Պատմութիւն Աղուանից: Արարեալ Մովսէսի Կաղանկատուացոյ ի նոյն ազգէ և յաշխարհէ. սկիզբն առնէ ի ծննդոցն Յարեթի և հասուցանէ ցվախճան իններորդ դարուն, շարակարգելով զպատմութիւն հայրենի աշխարհին, իշխանութեանն, բրիստոնէական լուսաւորութեանն և յաջորդութեան հոգեոր իշխանութեան և զայլ պարակայս, վերաբերեալս ազգի և աշխարհի իւրոյ» (2ա): Նույն էջի ներքեում գրչի հիշատակարանն է. «Այս մատեան, բովանդակեալ չերիս հատորս, գտանէր ի Գրանոցի մեծի Աթոռոյս կաթողիկէ էջմիածնի, հնագոյն գրչութեամբ եղելոյ ի մենաստանին Յովհաննավանաց՝ որ մերձ ի Կարբի, ի վերայ Քասաղ գետոյ, յարևմտից նորա, ի ժամանակի անդ առաջնորդութեան այնր վանաց Համազասպ, որ ունէր յիշատակարան ի սկիզբն պատմութեան յայս օրինակ: «Այս պատմութիւն իմաստասիրական ոչ գոլով ի սուրբ մենաստանս Յովհաննու...»: Արդ նոյն առաջի գաղափարի պատմութեանս գոլով կարի մեծագիր և դժուարընթերց, օրինակեցի ես ինքնին և յաւելի ևս ի վախճանին զցանկ մտացն բովանդակ ըստ այբուբենական կարգի: Յամի Տեառն 1829. ի սուրբ էջմիածին—Յովհաննէս արեղայ Գէորգեան Շահխաթունեանց Շահրիարցի» (2ա): Բնագրից հետո Շահխաթունյանցը տեղադրել է երեք ցանկ՝ «Անուանք կաթողիկոսաց աղուանից՝ որ ի վերջին սոյն այս բովանդակեն. և թիւք ամաց և ամսոց իշխանութեան նոցին» (էջ 89ա-բ), «Յանկ իւրաբանչիւր գլխոց երից հատորոց պատմութեանս աղուանից» (90ա—92բ) և «Յանկ մտաց պատմութեանս աղուանից այբուբենական կարգաւ շարայարիլ» (93ա—101բ):

Շահխաթունյանցը տառացիորեն հետևում է մայր օրինակին (ա), միայն ուղղելով նրա բերականական սխալները: Նա համեմատել է իր ընդօրինակությունը Բ խմբի մի ձեռագրի հետ, որի որոշ ընթերցումներ նշել է լուսանցքում, բնագրում ընդգծելով համապատասխան բառը կամ տեղը: Դրանց թվում են նաև վերը նշված այն երկու համեմատաբար ընդարձակ հատվածները, որոնք բնագրում ուղղակի ավելացրել էր Բ-ի գրիչը: Համեմատությունը ցույց է տալիս, որ Բ խմբի օգտագործված ձեռագիրը Ե-ն է<sup>57</sup>: Այսպես, «ոսկեստրեայն»-ի դիմաց, լուսանցքում (էջ 45ա) գրված է «ոսկեստրեան» (175,9), «իւրոց»-ի դիմաց (53բ)՝ «իւրոյ» (207,13), «տարաւարողք»-ի դիմաց (71ա)՝ «տաղաւարողք» (276,11), 87ա էջի լուսանցքում ավելացված է Ա խմբի ձեռագրերում

<sup>56</sup> Նկարագրությունը՝ Դաղյան, 1895, էջ 336:

<sup>57</sup> Հմմտ. The History, p. XIII:





պակասող «ընթանալ» բառը (338,3): Բերված դեպքերում այդպիսի ընթերցումներ ունի միայն Ե ձևագիրը:

ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հայերեն ձևագիր № В—56 (նշանակում ենք Ա): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահպանվում է այս ձևագրի մանրածապավենը (№ 275): Ձևագիրն ինստիտուտի գրադարան է փոխանցվել Ռուսաստանյան Կայսերական ԳԱ Ասիական թանգարանից<sup>58</sup>, որի մասին ֆրանսերեն նշում կա պահպանակ թերթի վրա: 1ա էջում կրկնված է Ե-ի ընդարձակ ուսերեն վերնագիրը, որին հաջորդում է գրչության մասին ֆրանսերեն հիշատակագրությունը «Cette histoire des Aghovans a été copiée sur le manuscrit d'Edchmiadzin... par Ioan Nazarof. 1841»: Բառացի կրկնվում է նաև Ե-ի վերնագիրը՝ ներառյալ Շահխաթունյանցի ստորագրությունը (2ա—3ա): Ձևագրի ընդօրինակման մասին Ք. Պատկանյանը հայտնում է հետևյալը. «Շ. Շահխաթունին իր իսկ ձեռքով իր համար առանձին օրինակ է արտագրել, որը Գիտությունների Ակադեմիայի խնդրանքով 1841 թ. ուղարկվել է Պետերբուրգ: Ակադեմիան կարգադրել է իր համար ընդօրինակություն կատարել, որից և արված է ներկա թարգմանությունը»<sup>59</sup>: Ա-ն իրոք Ե-ի տառացի պատճենն է: Գրիչ Հովհաննես Նազարովը<sup>60</sup> լուսանցքներում ընդօրինակել է նաև Ե ձևագրից Շ. Շահխաթունյանցի քաղած լրացումները: Միայն մի տեղ՝ Գ, ի գլխի ընդարձակ հատվածը մտցված է բնագիր:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձևագիր № 218 (P<sub>2</sub> 218): Շղայիր է, ունի ֆրանսերեն հետևյալ հիշատակագրությունը. «Ընդօրինակված է իմ՝ էդ. Գյուլոբյեի կողմից Ս. Պետերբուրգի Գիտությունների Կայսերական Ակադեմիային պատկանող բառածալ ձևագրից, 1852 թ. սեպտեմբեր-նոյեմբերին. նույն տարվա դեկտեմբերի 11—19-ին համեմատված է վերը հիշված ձևագրի հետ և՛ մի ձևագրի, որը պատկանում էր սկյուտարցի պարոն Չամուրջի Օղլուն, և (վերջինի տարընթերցումները—Ա. Շ.) իմ ընդօրինակության վրա նշված են В տառով»<sup>61</sup>: 224 էջից սկսվում է գլխացանկը, իսկ 252 էջից՝ հատուկ անունների ցանկը<sup>62</sup>: Ինչպես տեսնում ենք էդ. Գյուլոբյեի տեղեկությունից՝ P<sub>2</sub> 218-ն ընդօրինակված է Ա-ից: Ինչ վերաբերում է Չամուրջի Օղլու (կոստանդնուպոլսեցի հայանի գործիչ Հովհաննէս Չամուրճյան Տերոյինց) ձևագրին, որը P<sub>2</sub>-ը տեսած Չ. Գովսեթի տեղեկության համաձայն՝ թվագրված է եղել 1838 թվականով<sup>63</sup>, ապա մեր կարծիքով դա կարող է լինել հետագայում Արմաշի վանքին պատկանած օրինակը, որն, ուրեմն, ժամանակին գտնվել է Փարիզում, ուստի կարելի է նաև ենթադրել, թե 1860 թ. այն օգտագործվել է Կ. Շահնազարյանի կողմից (Շահն. 4):

<sup>58</sup> Ն. Ալինյանը այս ձևագիրը սխալմամբ հիշատակում է երկու անգամ, մեկ՝ որպես Պետերբուրգի Ակադեմիայի, մեկ՝ Ասիական թանգարանի ձևագիր (Ն. Ալինյան, նշվ. աշխ., էջ 13):

<sup>59</sup> История агван Мусея Каганкатвацц, писателя X века. Перевод с армянского, СПб., 1861, с. IV: Հմմտ. М. Brosset, նշվ. աշխ., էջ 468:

<sup>60</sup> Նրա մասին տե՛ս Р. Р. Орбелу, Собрание армянских рукописей Института востоковедения АН СССР, УЗИБ, т. VI, М.—Л., 1953, с. 110.

<sup>61</sup> F. Macler, նշվ. աշխ., էջ 119: Նկարագրությունը տե՛ս նաև Մեսրոպ Մազխարազ, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>62</sup> Մեսրոպ Մազխարազ, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>63</sup> The History, p. XIII.

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 221 (P<sub>5</sub> 221): Գեղեցիկ շղագիր է, ընդօրինակված 1859 թ. ապրիլին Մ. Բանելլի կողմից, մի օրինակից, որը հանդում էր էջմիածնի գրադարանի 13-րդ դարի ձեռագրին. վերջում ունի գլխացանկ և անվանացանկեր<sup>64</sup>: Առաջին և երկրորդ էջերում բացի ընդօրինակված են 1-ի ընդարձակ վերնագիրը և 2. Շահխաթունյանցի հիշատակագրությունը<sup>65</sup>, որոնք, ինչպես ասացինք, առկա են նաև և ձեռագրում: Թե՛ վերնագիրը, թե՛ բնագրի վերջում ցանկեր ունենալը, ցույց են տալիս, որ P<sub>5</sub> 221-ը պատկանում է Ա՛ ինթախմբին: Գրիչ Մ. Բանելլի անունով Ազգային գրադարանում պահպանվում են ևս երկու հայերեն ձեռագիր, օրինակված Փարիզում էդ. Գյուլորյանի համար: Անկասկած Փարիզում պիտի ընդօրինակված լինի նաև P<sub>5</sub>-ը: Այն չի կարող ընդօրինակված լինել 1859—1860 թթ. Փարիզում գտնված Արմաշի (2. Չամուրճյանի) ձեռագրից, քանի որ վերջինս կրում է W<sub>1</sub>-ի (է. Բորևի օրինակի) վերնագիրը: Այն չի կարող ընդօրինակված լինել նաև նույն ժամանակ Փարիզում գտնված Մ. Մոմճյանի օրինակից (Շահն. 2), քանի որ վերջինս ամենայն հավանականությամբ, չունի գլխացանկ և անվանացանկեր (սրանից ընդօրինակված Արմաշի ձեռագրի նկարագրության մեջ ցանկերի մասին ոչինչ չի ասվում): Հավանաբար 1859 թ. Փարիզից պիտի արդեն Պետերբուրգ վերագարձված լինեն նաև և ձեռագիրը, ուստի մնում է ենթադրել, որ P<sub>5</sub>-ի օրինակումը կատարված է էդ. Գյուլորյանի պատկանած ձեռագրից, այսինքն՝ P<sub>2</sub> 218-ից:

Այսպիսով, Ա՛ ինթախումբը կազմում են 1, և, P<sub>2</sub> 218 և P<sub>5</sub> 221 ձեռագրերը: Անկասկած 1-ից է ծագել նաև 4. Շահնագարյանի օգտագործած երկրորդ ձեռագիրը (Շահն. 2), որի մասին հրատարակիչը հայտնում է, թե ընդօրինակված էր էջմիածնում և նվիրվել էր իրեն մեծանուն գիտնական Մկրտիչ աղա Մոմճյանի կողմից (Շահն., 4. Ա, էջ 85): Ներկայումս անհայտ այդ ձեռագիրը չէր կարող պատկանել ԱԶ ենթախմբին, որովհետև Փարիզի հրատարակությունն ամենևին չի արտացոլում ց ձեռագրի բնորոշ առանձնատեսությունները: Այն չէր կարող ծագել նաև Ծ ձեռագրից, քանի որ Դավթակի ողբը կիսատ ունի: Ի դեպ, Մկրտիչ Մոմճյանը կոստանդնուպոլսեցի էր<sup>66</sup>, ուրեմն 1-ից ծագող և Դավթակի ողբը կիսատ ունեցող Շահն. 2-ը ժամանակին գտնվել է Պոլսում: Այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, հենց նրանից են շարունակել ընդօրինակել Հովհաննես Չամուրճյանին պատկանած, 1852 թ. Փարիզ տարված, 1860 թ. Գալուստ Տեր-Պողոսյանի կողմից 4. Շահնագարյանին տրամադրված և 1880-ական թթ. Պոլսի մոտ գտնվող Արմաշի վանքին անցած ձեռագիրը, որի սկիզբն ընդօրինակված էր է. Բորևի օրինակից (W<sub>1</sub>): Այս առիթով

64 Նկարագրությունը տե՛ս F. Macler, նշվ. աշխ., էջ 119—120; Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1552:

65 Մաշտոցի անվ. Մատենադարանի ավանդապահ Յ. Վարդանյանի սիրալիր միջնորդությամբ սույն ձեռագրի մասին մեզ յրացուցիչ տեղեկություններ է ուղարկել Փարիզի Ազգային գրադարանի հայկական բաժնի վարիչ պ. Հարություն Գևորգյանը, որին հղում ենք մեր խորին շնորհակալությունը:

66 Կ. Կոստանեանց, Կարապետ վարդապետ Շահնագարեանց: Կենսագրական ակնարկ, Թիֆլիս, 1911, էջ 28:

կարելի է նշել նաև, որ է. Բորեն Կոստանդնուպոլսում է գտնվել 1846 թ.<sup>67</sup>, ուստի Արմաշի վանքի ձեռագրի ընդօրինակումը ենթադրաբար կարելի է դնել 1846 և 1852 թվականների միջև:

Բ խմբի ձեռագրեր:

bil ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 1725 (b): Նոտրգիր<sup>68</sup>: Գրիչը թողել է մի համառոտ հիշատակագրություն. «զՅօհաննէս պիտակ՝ սպասաւոր Յիսուսի, յիշեալ աղաչեմ» (160ա): ԱՊ վերջին գլուխը՝ Աղվանից կաթողիկոսացանկը, գրիչը շարունակել է և հասցրել մինչև Պետրոս Խանձկեցի կաթողիկոսը՝ վախճանված հայոց ՌՃԻԳ (1675) թվին: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը հենց այս թվականն էլ համարում է ձեռագրի գրչության տարին<sup>69</sup>: Կաթողիկոսացանկի վերջում հետագա մի ձեռք ավելացրել է հաջորդ կաթողիկոսների անունները մինչև Տեր Իսրայել Խոտրաշինացին՝ ՌՄԺԲ (1763) թ.: Ձեռագրի վրա պահպանվել են նաև Հայոց կաթողիկոս Սիմեոն Երեանցու նշումները<sup>70</sup>: Ինչպես վերը նշեցինք, Ե-ն էջմիածին է տեղափոխվել 1766 թ.:

ԱՊ ընագրից հետո գրիչը վերստին ընդօրինակել է երկու հատված՝ Գ, ա-բ և ժզ գլուխները՝ համապատասխանաբար «Պատմութիւն վասն Մահմետին» և «Ապստամբութիւն հայոց և Մահմետին զայն ի Հայս և առումն Սեանայ և մահ Մահմետին» խորագրերով (էջ 283ա-288բ): Համեմատությունը ցույց է տալիս, որ այս հատվածներն օրինակված են ոչ թե մի ուրիշ ձեռագրից, կամ գրչի նախընթաց ընդօրինակությունից, այլ՝ նույն մայր օրինակից (bil ենթախմբի մյուս ձեռագրերի համեմատությամբ Ե-ն որոշ սխալներ ու բացթողումներ ունի, որոնց մի մասը այս հատվածներում չկա): Այսպիսով, նշված հատվածները կարող են Ե-ի հետ մեկտեղ օգտագործվել ԱՊ ըննական ընագիրը կազմելիս:

ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հայերեն ձեռագիր № С—59 (l): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահպանվում են ԱՊ ընագրի լուսանկարները (№ 61): Մանր բոլորգիր: Պարունակում է Եվսերիոսի Եկեղեցական պատմությունը (էջ 4ա—118բ), Հովսեպոսի Հրեական պատերազմը (119ա—286ա), ԱՊ (286բ—364ա), Գրիգոր Ակնեցու Պատմությունը (365ա—375բ), Կոստանդիանոս կայսեր թուղթը Շապուհին (375բ—376բ) և ԺԶ—ԺԷ դդ. երկու փոքրիկ հիշատակարան (376բ): Ունի բազմաթիվ հիշատակարաններ: Գրիչները շորսն են՝ Ստեփանոսը, Գասպար երեցը, Հովսեփ դպիրը և Մարտիրոս քահանան: Սկսած ԱՊ-ից մինչև ձեռագրի վերջը գրել է Մարտիրոս քահանան: Լ-ի գրչության թվականը նշված է Գասպար երեցի երկու հիշատակարաններում՝ «ԹՎին ՌՃԻԷ, ի ամսոյն մայիս Ժ» և «ԹՎին ՌՃԻԷ, ի ամսոյն յունիս Ա» (էջ 57ա, 88բ): Այսպիսով, ընդօրինակումը կատարվել է 1678 թ.: Ձեռագրի պատվիրատուն բազմաթիվ հիշատակագրություններում հիշատակված Վարդան Բաղիշեցին է՝ ԺԷ դարի նշանավոր ժամանակագիրը և հո-

67 E. Boré, նշվ. աշխ., էջ 285: Ի դեպ, է. Բորեն և Հ. Չամուրչյանը բարեկամներ են եղել (տե՛ս Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 30):

68 Մանրամասն նկարագրությունը՝ Գաղյան, 1895, էջ 424—426:

69 Մեսրոպ Մազխարոս, նշվ. աշխ., էջ 1551:

70 Տե՛ս Գաղյան, 1895, էջ 424, 1897, էջ 68:

գևոր գործիչը: Հիշատակարաններից երևում է նաև, որ ընդօրինակումը կատարվել է Սպահան քաղաքում<sup>71</sup>: ԱՊ բնագիրն Վ-ում բերականորեն ընտիր է. գրիչ Սարտիրոսը միայն շնչին սխալներ ու բացթողումներ է արել:

Երուսաղեմի Սբոց Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագիր № 375 (նշանակում ենք յ): Մանր նստրգիր, գրիչ՝ Վարդան Յունանեան, գրված է Հայոց ՌՃԼԳ (1685) թ.<sup>72</sup>: Պարունակում է Բնագննություն, ԱՊ և Գրասխանակերացու Հայոց պատմությունը: Բնագրերն էջակալված են առանձին-առանձին, ԱՊ-ը՝ էջ Գ-ՃԾԳ: Ձեռագիրն ունի երեք ուշ հիշատակարան, որոնցից երկուսը՝ թվագրված (1718 և 1740 թթ.)<sup>73</sup>: Վ-ի մասին մեր տեղեկությունները, բացի նորայր եպիսկոպոսի վերահիշյալ նկարագրությունից, գալիս են նաև նույն հեղինակի մի հոդվածից, ուր ներկայացված են ԱՊ այս բնագրից քաղված մի քանի հատվածներ<sup>74</sup>: Եղած նյութը լիովին բավարար է այս ձեռագիրը Բ խմբի bil ենթախմբին դասելու համար:

Տյուրինգենի պետական համալսարանի գրադարանի ձեռագիր № Ma XIII 69: Ունի 172 թերթ, գրվել է 1833 թ., գրիչ՝ Տեր Ղազարով (Տէր Ղազարեան)<sup>75</sup>: Նկարագրության մեջ բնագրի մասին տրվում են նաև հետևյալ տեղեկությունները. 1. Մովսես Կաղանկատվացի անունը չունի (ինչպես վերը նշեցինք, այս հատկանիշը բնորոշ է ԱՊ բոլոր հին ձեռագրերին և նրանցից կատարված հարազատ ընդօրինակություններին). 2. հիմնականում նման է Մ. էմինի հրատարակությանը, սակայն նրանից տարբերվում է գլուխների բաժանումով. հաճախ այլ են գլուխների վերնագրերը, երբեմն՝ ավելի ընդարձակ, երբեմն՝ համառոտ. այսպես, բացակայում է 14-րդ գլխի սկիզբը և ամբողջ 18-րդ գլուխը (պետք է մտածել, որ այստեղ խոսքը Ա, Ժդ և Գ, ժը գլուխների մասին է. վերջինը Մ. էմինի հրատարակության նման ունեն միայն Ա, ց ենթախմբի ձեռագրերը. ինչ վերաբերում է Ա, Ժդ-ին, ապա այդ գլխի սկիզբը շունենալը ցույց է տալիս, որ ձեռագիրը պատկանում է Բ խմբի օրինակներին). 3. դրա փոխարեն ձեռագիրն ունի Վաչագան արքայի հրամանը, որ հրատարակության մեջ չկա (անկասկած, խոսքն Ա, իա գլխի մասին է. Բ խմբի ձեռագրերում այդ գլխի վերնագիրն է. «Յայնժամ առնէր հրովարտակ քաղալորն ընդ ամենայն կողմանս իւրոյ տէրութեանն օրինակ զայս») և գլխում տրվում է Վաչագանի հրամանի բնագիրը. Ա խմբի ձեռագրերում գլխի վերնագիրն է. «Յուղթ արքային Վաչագանայ...» և գլխում հրամանի վերաշարադրությունն է երրորդ դեմքով. ուրեմն այս տեղեկությունն էլ խոսում է ձեռագրի՝ Բ խմբին պատկանելու օգտին). 4. 20 և 24-րդ գլուխներն ավելի մանրամասն են (խոսքն, ըստ երևույթին, Գ, ի և իդ գլուխների մասին է. իսկապես, հնագույն ձեռագրից թերթ ընկած լինելու հետևանքով Ա խմբի օրինակները Գ, ի-ում պակաս ունեն, իսկ Գ, իդ-ում

71 Օրինակ. «Յիշել աղաշեմ զմեղապարտ Վարդան բանի սպասաւոր զԲաղիշեցիս՝ զստացող այսմ պատմագրոցս, որ բազում աշխատութեամբ գտի զօրինակն և կտու գրել ի քաղաքն Եսպանան յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց...» (էջ 121ա):

72 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 299:

73 նույն տեղում, էջ 299—300:

74 Ն. Եպս. Մովսէս. Աղուան գրողներ, «Սիոն», 1968, էջ 244—247:

75 F. N. Finck und L. Gjandschezian. Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek, Tübingen, 1907, S. 108:

Աջ ենթախումբը և Մ. էմինի հրատարակությունը որոշ նախադասություններ դուրս են թողել): Այսպիսով, բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Տյուրինգենի ձեռագիրը պատկանում է Բ խմբին: Քանի որ նկարագրողները լրացուցիչ հինգ գլուխների գոյությունը շեշտ արձանագրել, ուրեմն ձեռագիրը պատկանում է Բ խմբի ոչ թե ԵՄ<sub>1</sub>, այլ b11 ենթախմբին (դժվար է մտածել, թե 1833 թ. ընդօրինակված ձեռագիրը կարող է մի երրորդ ճանապարհով հանգել Բ խմբի մայր օրինակին): Գրչի անվան ձևը՝ «Տէր Ղազարով», հուշում է, որ նա ուսասհայ է եղել: Կարելի է նշել, որ 1833 թ. b11 ենթախմբի մեզ հայտնի օրինակներից Արևելյան Հայաստանում գտնվում էր միայն Ե-ն (էջմիածնում): Ամենայն հավանականությամբ, հենց վերջինից էլ ընդօրինակված է Տյուրինգենի ձեռագիրը:

b, i, l և Տյուրինգենի ձեռագրերը մենք առանձնացնում ենք որպես Բ խմբի առանձին՝ b11 ենթախումբ, որովհետև, ինչպես երևում է բնորոշ տարրն-թերցումների քննությունից, այդ ձեռագրերը հանգում են մի ընդհանուր մայր օրինակի: Այսպես, b, i և l ձեռագրերը Գ, ի գ գլխի սկզբում ունեն. «Արդ, զի էր (b՝ ի փխ զի էր) պատճառ լուսաւորութեան մերում սուրբն Եղիշէ» այն դեպքում, երբ a-ն և ԵՄ<sub>1</sub>-ը ունեն. «Արդ, զի առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ»: Այս ենթախմբի b և l ձեռագրերի ընթերցումների՝ a, c, r ձեռագրերի նման ընթերցումներից տարբերվելու տասնյակ այլ օրինակներ կարելի է գտնել ԱՊ նոր հրատարակության տողա-տակում:

ԵՄ<sub>1</sub> ենթախումբ:

ՄՄ ձեռագիր № 2561 (c): Բոլորգիր, գրիչ՝ Սիմոն, տեղ՝ Ամարաս, ժամա-նակ՝ 1664 թ., պատվիրատու՝ Պետրոս Աղվանից կաթողիկոս, ստացող՝ Ամարասի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոս<sup>76</sup>: ԱՊ բնագրից անմիջապես հետո գրված է Հացունյաց խաչի պատմությունը (էջ 241ա—259ա): Ապա հետևում են գրչի համառոտ և ընդարձակ հիշատակարանները (259ա—262ա): Ընդար-ձակում մասնավորապես ասվում է. «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ եղև կատարումն այսմ լուսա(ղա)րդ և ներբողունակ մատենիս ի շրջաբերութեան թուականիս Հայագնի ի Ռ. ի Ճ. ի Փ. և չ Գ. ամին: Ի հայրապետութեան աշ-խարհիս Աղուանից տեառն Պետրոսի երջանկափառ կաթողիկոսի, վերադի-տողի մեծի աթոռոյն Գանձասարայ...: Գարձեալ հա գրել (Պետրոսը—Ա. Հ.) յոլով գրեանս, յորոց մինն է և զայս պատմագիրք, զոր ի վաղուց հետէ սպա-ռեալ էր ի տանէս Աղուանից և գտեալ եղև ի ձեռն լուսաւոր հոգի Ղուկաս վարդապետին (Պետրոսի ուսուցիչն է—Ա. Հ.), զոր հա վերստին գրել և օրի-նակել վերոյգրեալ հայրապետս<sup>77</sup>: ...Արդ, ...յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զառաջ-նորդ սուրբ ուխտեայս, կորովամիտ և հանճարապատում Բարսեղ արհի կախ-կոպոսն, որ ստացող եղև զայս ներբողունակ մատենիս, ... ընդամին և միարան՝ տեղոյս ...Ընդ որոց և զիս՝ զՍիմոն, լոկ անուամբն բանի սպասաւորս յիշել ժտիմ, որ զսակաւ յիշատակարանս գրեցի...»: 262 ա-ը էջերի վրա մի հետա-գա ձեռք գրել է Աղվանից կաթողիկոսների ցանկը՝ սկսած Մարկոսից, որը հա-

<sup>76</sup> Նանրամասն նկարագրությունը՝ Գաղյան, 1895, էջ 338—339:

<sup>77</sup> Վ. Առաքելյանը սխալմամբ կարծում է, թե Ե-ի ստացողը եղել է Ղուկաս վարդապետը (Կաղանկատուացի, էջ 1<sup>թ</sup>):

չորդել է ԱՊ մեջ հիշված վերջին՝ Մովսես կաթողիկոսին, մինչև «Տէր Իսրայէլ Մեծկունէից, որ այժմ վարէ ժողովուրդս. ՌՄԺԲ (1763)»: Սիմոն գրիչը որոշ սխալներ ու բացթողումներ է արել: Այսպես, Ա, ա գլխի վերնագիրն է. «Նախերզան սակս պատմութեան Աղաւթից» (փխ Աղուանից), Ա, գ-ում պակասում է «Յառաջ քան զգալ կենարարին մերոյ» (7, 9) արտահայտութիւնը և այլն<sup>78</sup>:

Վենետիկի Մխիթարեան մատենադարանի ձեռագիր № 1485 (նշանակում ենք V<sub>1</sub>): Այս ձեռագրի մասին մեր պատկերացումներն ամբողջովին հանգում են Չ. Գովսեթի խիստ համառոտ նկարագրութեանը<sup>79</sup>: Օրինակը Վենետիկ է տեղափոխվել Մադրասից, 1835 թ.: Թվագրված չէ: Պարունակում է. Մատթեոս Ուսհայեցի (էջ 1—283), Մեսրոպ Երեց (284—322), ԱՊ (323—533), հատված Կիրակոս Գանձակեցուց (533—537)<sup>80</sup>, հատված Սամվել Անեցուց (541—553): ԱՊ բնագիրը խճճված է և պակասներ ունի՝ ձեռագրի թերթերի անկանոն դասավորութեան հետեանքով<sup>81</sup>: Մեսրոպ Մագիստրոսը, որ տեսել է այս ձեռագիրը, հայտնում է, որ այն գրված է նոսր գրով, և թվագրում է ԺԸ-ԺԹ դդ.<sup>82</sup>: V<sub>1</sub>-ը պատկանում է Բ խմբի ձեռագրերին, որ իրավացիորեն արձանագրել է դեռևս Չ. Գովսեթը: Քանի որ այն ունի Գանձակեցուց բաղված գլուխները, ուրեմն վերաբերում է Ը և Ե ձեռագրերի ենթախմբին: Դա երևում է նաև Չ. Գովսեթի թարգմանութեան տողատակերից, ինչպես նաև՝ 1849 թ. «Բաղմավեպում» հրատարակված ԱՊ մի հատվածի բնորոշ տարրնթերցումներից, հատված, որը Վենետիկի Մխիթարյանները պետք է վերցրած լինեին կամ V<sub>1</sub>-ից, կամ՝ վերջինիցս օրինակված V<sub>2</sub> ձեռագրից<sup>83</sup>: Հաշվի առնելով V<sub>1</sub> ձեռագրի համեմատաբար հին լինելը, մենք այն պայմանականորեն հանգեցնում ենք ենթախմբի մայր օրինակին<sup>84</sup>:

Բրիտանական քանգաւրանի գրադարանի ձեռագիր № Or. 5261 (r): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (№ 362): Բոլորգիր է, որոշ մաշված հատվածներ վերականգնված են շղագրով<sup>85</sup>: Գրչի հիշատակարան շունի: Ֆ. Կոնիբերը, ինչպես գրչութեան առանձնահատկութիւններից, ձեռագիրը թվագրում է ԺԶ դարով<sup>86</sup>: Չ. Գովսեթն այս թվագրութիւնը շատ վաղ է համարում և նշում է, որ ձեռագրի գիրը նման է 1628 թ. օրինակված մի ձեռագրի գրչութեանը<sup>87</sup>:

78 Վ. Առաքելյանի կարծիքով, Ը-ից են ընդօրինակված Բ խմբի բոլոր ձեռագրերը, որն այդ պատճառով կոչված է Ը խումբ (Կաղանկատուացի, էջ 17, ե, նԱ): Իրականում Ը-ից կատարված որևէ ընդօրինակութիւն մեզ չի հասել:

79 The History, p. XI, n. 5—6.

80 Իրականում, Գանձակեցուց բաղված այս հատվածը ԱՊ տվյալ բնագրի մի մասն է: ԸրV<sub>1</sub> ենթախմբի բոլոր ձեռագրերում այդպես է:

81 The History, p. XI, n. 6; XIV.

82 Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552:

83 «Մենամարտութիւն Բարկայ Սիւնոյ ընդ Հոնին», «Բաղմավեպ», 1849, էջ 180—181:

84 Չ. Գովսեթի տված ոչ լիակատար տարրնթերցումները բաղական շնորհ V<sub>1</sub>-ի ծագումը (Ը-ից կամ Ե-ից, թե՛ նրանց մոտից) ճշգրիտ որոշելու համար:

85 Նկարագրութեանը՝ F. C. Conibear, A Catalogue of the armenian Manuscripts in the British Museum, L., 1913, p. 292—293:

86 Նույն տեղում, էջ 293:

87 The History, p. XI, n. 5.

1ա էջի վերևի աջ անկյունում շղագրով գրված է. «Ի վանկշութին Յովհաննէս վարդապետին, որ ի Գանձասար»: էջի ներքևում նույն շղագրով գրված է. «Ի 74<sup>88</sup> թուականութեան Լայոց գրեցեալ է այս պատմութիւնս ի Մովսիսէ վարդապետին Կաղանկատուացոյ»: 3ա էջի ներքևում նույն շղագրով ավելացված է. «Ի հայրապետութեան երից աշխարհացս Աղուանից, այսինքն՝ Աղուանից, Լփնաց և Չորա Տեանն Վիրոյ սրբազնասուրբ կաթողիկոսին և իշխանութեանն Վարազ Գրիգորի գրեցաւ այս պատմութիւնս ձեռամբ Մովսէս վարդապետի Կաղանկատուացոյ. որ է Վարունկաթաղ: Ի 74 թուականութեան Լայոց, որպէս Բ հատորն. 14 գլուխն յայտնէ»: 93բ էջում Ա.Պ Բ, ժա գլխի «չանդիման մեծ գեղին Կաղանկատուաց, որ և նմին յնտի գաւառի, յորմէ և էս» արտահայտութեան կողքին լուսանցքում նույն Հովհաննէս վարդապետի շղագրով ավելացված է. «Ի թու(ականութեան) Լայոց 74»:

Ձեռագրի յուրաքանչյուր թերթի առաջին էջի աջ լուսանցքում մի այլ շղագրով գրված են տառեր, որոնք թերթ առ թերթ միացնելով՝ մի քանի անգամ ստանում ենք Բաղդասար միտրոպոլիտի անունը և տիտղոսները տարբեր համառոտութեամբ («Վի-ճա-կա-ւոր առաջ-նորդ Ղա-րա-բա-ղու Շա-բույ և Քալի-շու Արք եպիս-կո-պոս Լա-յոց և աս-պետ Բաղ-տա-սար Գա-նիէլ Բե-կեան Լա-սան Զա-լա-լեանց»): Այս վանկարկված լուսանցագրութեանից պարզ է դանում, որ ձեռագիրը պատկանել է Բաղդասար միտրոպոլիտին, այսինքն՝ Ե-ը գրականութեանից և հիշատակարաններից լավ հայտնի այն ձեռագիրն է, որին հանգում են բազմաթիվ ընդօրինակութեաններ<sup>88</sup>: Այս նույն շղագրով են վերականգնված բուն բուլոբգրի մաշված մասերը:

Հետագայում ձեռագիրը պատկանել է Բաֆֆուն: Յբ էջի լուսանցքում մի երրորդ շղագրով նշված է. «Բաֆֆիի գրչագիրների ժողովածուից»: 1897 թ. Բաֆֆու կինը ձեռագիրը վաճառել է Բրիտանական թանգարանին<sup>89</sup>: Վերջին էջում գնորդի գրութեանն է. «245 folios, june 1897»:

5-րդ թերթի առաջին երեսի վերջին երկու տողը և երկրորդ երեսի բուն բուլոբգիրը մաշված է և ամենևին չի երևում, սակայն բնագիրը վերականգնված է Բաղդասար միտրոպոլիտի շղագրով (հատված է Ա, գ գլխից): Համեմատութեանից երևում է, որ վերականգնման մայր օրինակը պատկանում է ՇՄՂ ենթախմբին: Ընդ որում, դա Ը-ն չէ, որովհետև բնագրում առկա է Ը-ում պակասող «չառաջ քան զգալ կենարարին մերոյ» արտահայտությունը: Վերականգնման մայր օրինակն, ըստ երևույթին, Տ և Չ ձեռագրերի մայրն է, որն ինքը ժամանակին ընդօրինակված պիտի լինի Ե-ից: Ե-ի բուլոբգիրն ամբողջովին մաշված է նաև Տա էջում: Բնագիրը (հատված Ա, գ-ից) վերականգնված չէ: Նշված երկու պակասները չեն եղել ՏՉ-ի մայր ձեռագրի ընդօրինակության ժամանակ և արդեն եղել են Ը ձեռագիրն օրինակելիս (1848 թ.):

Ե-ի վերջից մի քանի թերթ է ընկել, որի հետևանքով արդեն Ֆ. Կոնիբերի ժամանակ պակասում էր բնագրի մի մեծ հատված՝ Գ, ի գլխի «յեզր Եփրատ

<sup>88</sup> Այս թվերը Ֆ. Կոնիբերը սխալմամբ կարդացել է որպես հայերեն Կ և Վ՝ տվյալ դեպքում անհնաստ տառեր (նշվ. աշխ., էջ 293):

<sup>89</sup> Ե.րեմն սխալվում է Ն. Ակինյանը՝ Բրիտանական թանգարանի օրինակի կողքին Բաղդասար միտրոպոլիտի ձեռագիրը գնելով (նշվ. աշխ., էջ 13):

<sup>90</sup> F. C. Conibear, նշվ. աշխ., էջ 293:



գետոյ իջուցանէ» (332,18) հատվածից մինչև ԵՄՆ Լնթախմբի ունեցած հինգ լրացուցիչ գլուխներից շուրջորդի կեսը: Ե-ին հանգող բոլոր ձեռագրերն ունեն այդ հատվածը, Բաղդասար միտրոպոլիտի վանկարկված լուսանցագրությունն էլ եղել է պակասող թերթերի վրա, հետևաբար վերջիններիս կորուստը տեղի է ունեցել ԺԹ դարի երկրորդ կեսին:

Ե-ի անհայտ գրիչը հազվագեպ է սխալվել, սակայն առկա սխալները կարևոր են այս ձեռագրից կատարված ընդօրինակությունները պարզելու համար: Ա, ժա գլխի երրորդ նախադասության սկիզբն է. «Եւ ահա թուի ինձ...» փխ մյուս հնագույն ձեռագրերի «Եւ ահ անկաւ ինձ...» ընթերցման (18,1): Բ, ծգ գլխում «այժմ ունի կին ոմն՝ Մարիամ անուն Շամբորեցի» հատվածում Ե-ն ունի «Մարամ» ընթերցումը (285,16):

Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 1146 (նշանակում ենք V<sub>2</sub>): Այս ձեռագիրը համառոտ նկարագրել են Մեսրոպ Մագիստրոսը և Չ. Գովսեթը: Ըստ առաջինի, այն պարունակում է հետևյալ հիշատակարանը. «Զընտիր օրինակ պատմութեանս գաղափարեցաւ ի բոլորգիր օրինակէ, զոր առարեալ էր առ մեզ ի 1842 ի Ղարապաղ Պաղղասար եպիսկոպոս Հասան-Ջալալեան»<sup>91</sup>: Ինչպես տեսանք, Բաղդասարի ձեռագիրը Ե-ն է: Սակայն, ըստ Չ. Գովսեթի, V<sub>2</sub>-ն օրինակված է V<sub>1</sub>-ից, բայց ունի ընթերցումներ Ղարաբաղի ձեռագրից, որը 1842-ին Հասան Ջալալյան եպիսկոպոսի կողմից ուղարկվել է Վենետիկ, ապա՝ վերագրարձվել. ընդ որում, Ղարաբաղի ձեռագրից վերցված հատվածները նշված են V<sub>2</sub>-ի լուսանցքներում (Չ. Գովսեթը դրանք ներկայացնում է Չ տառով)<sup>92</sup>: Պիտի եզրակացնել, որ V<sub>2</sub>-ը հավասարապես ընդօրինակված է V<sub>1</sub>-ից և Ե-ից:

ՄՄ ձեռագիր № 8035 (e): Նոտրգիր<sup>93</sup>: Պատկանել է Աղգագրական ընկերությանը, որի կնքադրոշմը կա պահպանակի վրա: Վերնագիրն է՝ «Պատմութիւն Աղուանից, արարեալ ի Մովսիսէ Կաղաղատուացոյ» (1ա): Վերջում ունի հետևյալ ընդարձակ հիշատակարանը. «Ի կայսրութեան ռուսաց նիկողայոսի, որ տիրէր նա և ամենայն սահմանաց Հայոց և Վրաց, ի հայրապետութեան Տեառն Ներսիսի Աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց, արքեպիսկոպոսութեան և ի մետրապօլիտութեան Աղուանից Տէր Բաղդասարայ Հասան Ջալալեանց, ևս՝ Ներսէս Տէր Բարսեղեան Արովեանց Օձնեցի, աշակերտ Սարգիս վարդապետի Հասան Ջալալեանց, գտայ ընդ նմին ի Ղարաբաղ, որ կարգեալ կայր ի բնութիւն վասն հոգևորական գործոյ աշխարհին Արցախու և Աղուանից ցշունարակերտ քաղաքն, ի սմին դիպօղ ժամու արտագրեցի դայս պատմութիւնս Աղուանից՝ Մովսէս Կաղանղկատուցի անուանեալ: Արդ, աղաշիմ զընթերցողս լիշել դիս յաղօթս ձեր, զի և դուք լիշեսչիք առաջի Աստուծոյ յաւերժ ուրախութեամբ: Ի թուին Փրկչին ի 5 սեպտեմբերի 1848 ամի. և ի Հայոց՝ 1297. ի քաղաքն Շուշի» (344բ): Համեմատությունը ցույց է տալիս, որ Ե-ն ընդօրինակված է Ե-ից: Գրիչը կրկնել է մայր օրինակի վերը նշված սխալները Ա, ժա-ում և Բ, ծգ-ում և

<sup>91</sup> Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1552: Վենետիկի հետ Բաղդասար Հասան-Ջալալյանցի կապերի մասին հայտնում է նաև Սարգիս Ջալալյանցը («Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», Կ. Բ., Թիֆլիս, 1858, էջ 355):

<sup>92</sup> The History, p. XI, n. 7, XII:

<sup>93</sup> Նկարագրությունը՝ Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 1553: Կազանկատուացի, էջ Ե:

պահպանել բուն գիրը ջնջված լինելու հետևանքով Ա, գ և զ գլուխներում եղած պակասները: Գրիչը բաց է թողել միայն լրացուցիչ Գ, իե-իը գլուխները:

ՄՄ ձեռագիր № 8057 (s): Շղագիր<sup>94</sup>: Պահպանակի վրա կան Ազգագրական ընկերության կնքադրոշմը, ուսերեն վերնագիրը և մի նշում. «Из рукописей Якова Давидовича Лазарева»: Այնուհետև՝ հայերեն. «Նվեր Մարիամ Լազարեանից»: Չեռագիրը շունի գլխացանկեր: Վերջում կա հիշատակարան. «Այս պատմագիր արտագրեցաւ ի պատճէնէն, յորչորջելոյ Պատմութիւն Աղուանից, զոր գրեալ էր յ74 ամին Հայոց Մոսէս վարդապետն Կաղանկատուացի: Ի 1855 ամի Փրկչին և 1304 Հայոց»: Գրութեան տեղը և գրիչը հայտնի չեն:

Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագիր № 220 (Ք, 220. նշանակում ենք զ): Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվում է այս ձեռագրի մանրածապավենը (№ 881): Շղագիր<sup>95</sup>: Պահպանակի վրա գրված է հետևյալ նամակը. «Յարգելի Իվան Ստեփանիչ! Ահա ձեր ուղած ձեռագիրն, որոյ մէջ կայ Աղուանից պատմութիւնը. այսպիսի ազգային թանգարան չէք գտնիլ. այս պատմութիւնիցը գանազան կան: Բայց կատարեալն ու ճիշտը սա է: Ներէք, վրագ դուրս էի գալիս, շկարողացի առանձին նամակագրիլ: Ն. Աթաբէկեան: 6 սեպտ. 1857 ամի: Շուշի»: Առաջին գրքի ցանկից առաջ կա հետևյալ նշումը. «Յամի ազգական ՌՅԶ և փրկչական 1857 ամի, ի 5-ին Յունիսի» (էջ 1): 6-րդ էջում գրված է. «Ի թախանին Հայոց յօթանասուն և շորս և ի հայրապետութեան երից աշխարհացս Աղուանից, Լիւնաց և Չորայ Տեառն Վիրոյ կաթուղիկոսին գրեաց Պատմութիւնս Աղուանից Մովսէսն Գաղանկատուածոյ վարդապետն, այսինքն է Վարանկաթաղեցի»: Վերջում ունի հետևյալ հիշատակարանը. «Յամի ազգական ՌՅԶ և փրկչական 1857 պարզագրեցաւ պատմութեանս այս Սիւնեաց վիճակին, Ղափանու գաւառին, ի գելոն Ոչաքան, ձեռամբ Սողոմօնի հոր ձ. Վեզիրեանց՝ ծառայողի Գրիգորի Տաթևացոյն տիեզերալոյս վարդապետին, ի 19 յուլիսի, ի քաղաքն Շուշի» (էջ 559): Այսպիսով, գրիչը Սողոմոն Վեզիրյանցն է: Ընդօրինակումն սկսվել է Ղափանի գավառի Ոչաքան գյուղում<sup>96</sup> և ավարտվել Շուշիում:

1855 և 1857 թթ. օրինակված Տ և զ ձեռագրերն անկասկած հանգում են Դ-ին: Նրանք կրկնում են Դ-ի սխալները Ա, ժա և Բ, ծգ գլուխներում, երկուսում էլ կան Դ-ի մեջ Հովհաննես վարդապետի գրանցած նշումների հատվածները, որոնցում հիշվում են հայոց 74 թվականը և Մովսես Կաղանկատուացի-Վարունկաթաղեցին: Մակայն, ի տարբերություն ավելի վաղ գրված Ե ձեռագրի, սրանց մեջ Ա, գ և զ գլուխները լրիվ են: Այս հանգամանքը ասիպում է եզրակացնել, որ Տ-ը և զ-ն օրինակված են ոչ թե անմիջապես Դ-ից, այլ՝ մի ձեռագրից, որը ժամանակին ընդօրինակվել է Դ-ից: Այդ ենթադրելի օրինակի գրութեան ժամանակը պետք է նշանակել Հովհաննես վարդապետի (որի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող) ժամանակի և 1848 թվականի (Ե-ի ընդօրինակման տարվա) միջև:

Այսպիսով, ԵՄՆ ենթախմբի մեջ մտնում են Ե, Դ, Վ<sub>1</sub>, Վ<sub>2</sub>, Ե, Տ և զ ձեռագրերը: Դ-ից պատճենվել են նաև ներկայումս կորած երկու ձեռագիր՝ Մարգիս Զա-

<sup>94</sup> նկարագրությունը՝ Կաղանկատուացի, էջ ԽԱ:

<sup>95</sup> նկարագրությունը՝ F. Macler, նշվ. աշխ., էջ 119, Մեսոպ Մագիստոս, նշվ. աշխ., էջ 1553:

<sup>96</sup> Ըստ Վ. Աթաբէկյանի՝ Վաշական (Կաղանկատուացի, էջ ԽԲ):

լալյանցի օրինակը և Գալուստ Շերմաղանյանցի հավաքածուի № 190-ը: Ենթախմբի հիմնական առանձնահատկությունը ԱՊ բնագրի մեջ մտցված հինգ լրացուցիչ գլուխների առկայությունն է: Բ, ծ գլխին ծԱ. թվահամարի տակ հետևում է «Վասն պատուական գլխոյն Յովհաննու Մկրտչին. թէ որպէս բերաւ ի գաւառն Արցախս և եղաւ ի սուրբ Գանձասար, որ է աթոռ Աղուանից» վերտառութեամբ մի գլուխ (Բ գրքի վերջին գլուխները կրում են համապատասխանաբար ծԲ և ծԳ համարները): Սա մի պատմություն է Հովհաննես Մկրտչի նահատակության, նրա գլխի գլուտի և Ջալալ Դոլա Հասան-Ջալալյան իշխանի կողմից Գանձասար տեղափոխվելու մասին, որը առանձին չի պահպանվել<sup>97</sup>: Մյուս չորս հավելվածային գլուխները դրված են ԱՊ բնագրի վերջում և ունեն հետևյալ գլխահամարները և խորագրերը. «ԻԵ<sup>98</sup>. Վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչենոյ և վասն բարեպաշտ իշխանին Ջալալին», «ԻԶ. Վասն եկեղեցոյն, որ շինեաց մեծ իշխանն Ջալալ Դոլա Հասանն ի Գանձասար», «ԻԷ. Վասն մահուանն բարեպաշտ իշխանին Ջալալ Դոլա Հասանոյն», «ԻԸ. Վասն մահուան իշխանին Շահնշահի և որդոյ նորին Ջաբարէին»: Ենթախմբի մայր օրինակի գրիչը այս գլուխները բառացի քաղել է Կիրակոս Գանձակեցու Հայոց պատմությունից (հմմտ. Կ. Մելիք-Օհանջանյանի հրատարակության Լ, ԼԱ, ԿԳ և ԿԴ գլուխները): Ամբողջ նյութը վերաբերում է Գանձասարին և այն շենացնող Հասան-Ջալալյան իշխաններին: Կարելի է ենթադրել, որ ՇՄՆ-ի մայր օրինակը կազմվել է Գանձասարի նոր վերևի շրջանում՝ ժՁ դարի սկզբին, երբ Ազգանից կաթողիկոսարանը ձալեթից տեղափոխվեց Գանձասար<sup>99</sup>: Ենթախումբը բազմաթիվ ուրվմեծ ու փոքր բնորոշ տարրնթերցումներ, սխալներ և պակասներ ունի, որոնք ներկայացված են ԱՊ նոր հրատարակության տողատակում:

### Ներկայումս անհայտ ձեռագրեր:

Այսպիսի երկու ձեռագրի մասին արդեն խոսք եղավ վերը: Դրանք էին՝ ՄՄ № 1351 պատանիկի ձեռագիրը, որի մեծագույն մասը ներկայումս անհայտ է, և Արմաշի վանքի № 61 ձեռագիրը, որի մասին մեր պատկերացումները հենվում են Հ. Թովմյանի մանրամասն նկարագրության վրա: Մենք պարզ պատկերացում կարող ենք կազմել նաև Սարգիս Ջալալյանցի ձեռագրի մասին, քանի որ նրանից հրատարակվել են ընդարձակ հատվածներ<sup>100</sup>: Դրանցում արտացոլված բազմաթիվ բնորոշ տարրնթերցումները ցույց են տալիս, որ ձեռագիրը հանդում է Դ-ին: Այդ մասին գրում է նաև Ս. Ջալալյանցը. «(Բաղդասար միտրոպոլիտը) առաքեաց ի վանս Վենետիկոյ առ Սուրբաս Արք Եպիսկոպոսն Սոմա-

97 Վ. Առաքելյանը հրատարակել է իրեն հավելված (Կաղանկատուացի, էջ 348—350):

98 Ենթախմբի ձեռագրերի Գ գրքի ցանկում ժԸ գլխի վերնագրի («Ի գրենոյն Ստեփաննոսի...») կողքին երկու թվահամար (ժԸ և ժԹ) դրված լինելու հետևանքով վերջին գլուխների համարները մեկով անել են, և Կաթողիկոսացանկը կրում է ԻԳ թվահամարը: Գրիչները բնագրում ուղղել են ենթախմբի մայր օրինակի այդ սխալը, սակայն թողել են լրացուցիչ գլուխների գլխահամարները՝ ԻԵ-ԻԸ:

99 Յ. Շակիարունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 344; Մ. Բաբխուատունեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին Գաղստան), Քիֆլիս, 1893, էջ 252:

100 Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 217—222, 234—239, 248—255, 261, 319—330, 334—336, 345—349, 352, 370—375, 381, 384—388, 391—393, 426, 471—479:

լեանց զնշանաւոր գումար և բնկալաւ ի նմանէ զգիր շնորհակալութեան հանդերձ մի մի օրինակօք մատենիւք տպեցելովք ի նոյն վանս, ուր ընդ նոսին միալորեալ և զգրչագիր մատեանսն իւր յօրինեաց զճոխ գրատուն ի պետս վերձանութեան ուսումնասիրաց. յորոց և ես արտագրեցի զգատաստանագիրս Գօշ Մխիթարայ, զՄաշտոց ձեռնադրութեան կուսանաց, զՊատմութիւն Աղուանից, զՄեկնութիւն Յորայ, և զքանի մի հարկաւոր թուղթրս»<sup>101</sup>:

Շեմագանյանցի հավաքածուի N° 170 և 190 ձեռագրեր: Գալուստ Շերմագանյանցի ձեռագրերի հավաքածուի անտիպ նկարագրութեան մեջ հիշատակուում են ԱՊ երկու ձեռագիր: Հավաքածուի N° 170-ի մասին ասվում է. «Պատմութիւն Աղուանից ի Մովսիսէ Կաղականտացոյ մինչև ի տասներորդ դարն: Քառածալ. օրինակեալ ի Ռէթուականի Հայոց»<sup>102</sup>: Եթէ դա իսկապես եղել է 1558 թ. կատարված ընդօրինակութիւն, ապա մեզ մնում է խորապես ափսոսալ իր հնութեամբ միայն ձ-ին դիչող ԱՊ այդ օրինակի կորստի համար: Հավաքածուի N° 190-ի մասին նկարագրութեան մեջ ասվում է. «Պատմութիւն Աղուանից. օրինակեալ ի գաղափարէն Բաղասար մետրոպոլիտի Հասան Զալալեան»<sup>103</sup>, ուստի և այն օրինակվել է Ե-ից: Շերմագանյանցի ձեռագրերը, շնչին բացառութեամբ, հրդեհի ճարակ են դարձել<sup>104</sup>:

#### ԱՊ հրատարակութիւններ:

Մ. Էմինի հրատարակութիւնը կատարվել է վերը նկարագրված III և IV ձեռագրերի հիման վրա<sup>105</sup>: Ինչպես նշում է Վ. Առաքելյանը, կարելի է միայն գարմանալ, որ հրատարակիչը երկու օրինակն էլ համարում է անթվակիր<sup>106</sup>:

Կ. Շահնագարյանի հրատարակութեան հիմք ծառայած ձեռագրերի մասին աշխատասիրողը գրում է հետևյալը. «Տպագրութիւն մատենիս եղև շորից օրինակաց համեմատութեամբ. յորոց զառաջինն բազում զգուշութեամբ գաղափարեալ էի ես ինձէն ի ս. էջմիածին, ի մտի ունելով միշտ զտպագրութիւն այնորիկ ի պատեհ ժամու: Զերկրորդն նոյնպէս օրինակեալ ի ս. էջմիածին, ընծայեաց ինձ ազգասիրաբար Մեծապատիւ գիտնական Մկրտիչ աղայն Մոմճեան՝ բարեկամն իմ. զերրորդն՝ գրեալ ի Գալեթ յայլ իմն ձեռագրոյ, ետ ինձ համեմատութեան աղագաւ արգոյ բարեկամն իմ Գրիգոր էֆենտին Մարկոսեան, և զչորրորդն՝ գաղափարեալ ի Կոստանդնուպոլիս, ետ ինձ պատուարժան Գալուստ աղայն Տէր Պօղոսեան: ...Զսրտառուշ ողբն Դաթակայ քերթողի արարեալ ի մահն Զեանշիրի, պակասեալ ըստ կիսոյն յերկրորդ և ի շորրորդ օրինակս մեր, անթերի ունէին առաջին և երրորդ օրինակքն»<sup>107</sup>: Մանթագրութիւններում Կ. Շահնագարյանը տալիս է ձեռագրերի որոշ տարբերութիւններ, ցավօք, շնչ-

101 Նույն տեղում, էջ 355:

102 «Յուցակ գրչագիր մատենից Գալուստի Շերմագանեանց, ժողովեալք ի միչոցս 30-ամաց ձանապարհորդութեան իւրոյ», ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 17, էջ 16ա:

103 Նույն տեղում, էջ 17բ:

104 Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ LXXXI:

105 Էմին, էջ 61:

106 Կաղանկատուացի, էջ 1Թ: Ինչպես վերևում տեսանք, Ո-ը իսկապես անթվական է, սակայն III-ը թվագրված է 1835 թ.:

107 Շահն., հ. Ա, էջ 85:

շելով ձեռագրի պայմանական համարը: Այնուամենայնիվ, դրանց բնությունը ցույց է տալիս, որ Շահնագարյանի ձեռագրերը պատկանել են ԱՅ և ԱՆ ենթախմբերին. բնդ որում, տարրնթերցումները հիմնականում 2—2 կամ 3—1 հարաբերակցությունն ունեն: Իհարկե, ԱՅ ենթախմբին են պատկանել Շահն. 1 և Շահն. 3 ձեռագրերը, որոնցում Դավթակի ողբը լրիվ էր: Շահն. 3-ը, ամենայն հավանականությամբ, Ք<sub>1</sub> 217 ձեռագիրն է, իսկ Շահն. 1-ը պետք է օրինակված համարել Ս պատառիկի ձեռագրից (համենայն դեպս, այն չի կարող ընդօրինակված լինել ժԹ դարի կեսերին էջմիածնում գտնված ՚ կամ ձ<sub>1</sub> ձեռագրերից, քանի որ Շահնագարյանի հրատարակության մեջ արտացոլված շեն առաջինի պակասները, իսկ երկրորդի բնորոշ շեղումները հրատարակիչը վերագրում է միայն մեկ ձեռագրի, որը պետք է լինի ձ<sub>1</sub>-ից պատճենված Ք<sub>1</sub> 217-ը): Շահն. 4-ը, ամենայն հավանականությամբ, եղել է Արմաշի վանքի ձեռագիրը (վանքի հավաքածուն սկսել է կազմվել 1880-ական թվականներից<sup>108</sup>): Այս ենթադրության օգտին խոսում է այն փաստը, որ Կ. Շահնագարյանի տված ծանոթագրությունների մեջ կան դեպքեր, երբ երեք ձեռագիր ունեն ԱՅ ենթախմբին, իսկ մեկը՝ ԱՆ ենթախմբին բնորոշ ընթերցումներ (ինչպես վերը նշեցինք, Արմաշի ձեռագիրն ամենայն հավանականությամբ սկսել են ընդօրինակել Ս<sub>1</sub>-ից և շարունակել՝ Շահն. 2-ից, ուր Դավթակի ողբը կիսատ էր): Վերջապես, Շահն. 2-ն ընդօրինակվել է էջմիածնում, 1846 թվականից առաջ, է-ից, կամ նրան հանգող որևէ օրինակից:

Ք. Պատկանյանը ԱՊ-ը թարգմանել է վերը նկարագրված Ա ձեռագրից<sup>109</sup>: 1848 թ. Լազարյան ձեմարանի հրատարակած մի քրեստոմատիայում տպագրվել է ԱՊ երկու հատված (Բ, ա և ժբ գլուխները)<sup>110</sup>: Համեմատությունը ցույց է տալիս, որ հրատարակության հիմքը եղել է վերը նկարագրված Ո ձեռագիրը:

1849 թ. «Բաղմավեպ» հանդեսում հրատարակվել է մի փոքրիկ հատված ԱՊ Բ, ա գլխից (109, 13—110, 18)<sup>111</sup>: Ինչպես վերը նշեցինք, հրատարակիչներն օգտագործել են կա՛մ Վ<sub>1</sub>, կա՛մ Վ<sub>2</sub> ձեռագրերը:

1852 թ. Կոստանդնուպոլսի «Նոյան աղավնի» շաբաթաթերթում հրատարակվել է Դավթակի ողբի առաջին կեսը<sup>112</sup>: Բնագիրը՝ առաջաբանով, Պոլիս էր ուղարկել Մսեր Գրիգորեան Չմիռնացին (Մսեր Մսերյանց): Նա իր ձեռագրի մասին ոչինչ չի հայտնել, սակայն համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ հատվածը հանգում է Ո ձեռագրին: Նույն շաբաթաթերթի 1853 թ. ապրիլի 18-ի համարում (№ 58, էջ 3) հրատարակված է Ողբի երկրորդ կեսը՝ ուղարկված նույն թղթակցի կողմից: Համեմատությունից երևում է, որ հատվածը չի ծագում մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից: Պետք է ենթադրել, որ այն հանգում է Ս պատառիկի ձեռագրին, կամ վերջինիցս կատարված ինչ-որ մի ընդօրինակու-

108 Յ. Թովհեան, նշվ. աշխ., էջ 5:

109 «История арван...», с. IV.

110 «Ընտիր հատուածք, քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց Հայոց: Հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ», Մասն Ա, Մոսկվա, 1848, էջ 60—68:

111 «Մենամարտութիւն Բարկայ Սիւնույ բնդ Հոնին», «Բաղմավեպ», 1849, էջ 180—181:

112 «Մահ օրհասական Ջիւանշիրի մեծի իշխանին: Հանեալ ի Պատմութենէն Աղուանից, գրելոյ ի Մովսիսէ վարդապետէ Կաղանկատացոյ (Հատոր Բ, գլ. 17)», «Նոյեան աղանի», թ. 36 (8 նոյ. 1852), էջ 2—3, թ. 37 (15 նոյ.), էջ 3:

թյան (Մսեր Մսերյանցը, որ Մոսկվա էր տեղափոխվել էշմիածնի ճեմարանում սովորելուց և աշխատելուց հետո, կարող էր իր հետ վերցրած լինել Թ-ի ձեռագիրը):

1860 թ. Մոսկվայում լույս տեսնող «Ճոարադ» հանդեսում Գալթակի ողբը ամբողջությամբ, առաջաբանով հրատարակել է Զարմայր Մսերյանցը<sup>113</sup>: Համեմատությունից պարզ է դառնում, որ հատվածի աղբյուրը նույն այն ձեռագիրն է, որից քաղված էր «Նոյեան աղավնու» երկրորդ կտորը: Եղած որոշ տարբերությունները պետք է համարել հրատարակչական միջամտության արդյունք:

ԱՊ մի շարք հատվածներ հրատարակել է Ղևոնդ Ալիշանը. ինչպես արդեն պարզաբանել է Չ. Գովսեթը, նրա ձեռքի տակ եղել է ոչ թե ինչ-որ ընտիր ձեռագիր, ինչպես համարում էր Հր. Աճառյանը, այլ Մ. էմինի հրատարակությունը<sup>114</sup>:

#### Հատվածներ ԱՊ-ից:

ՄՄ № 2966 և 3062 ձեռագրերում պահպանվել է հատված ԱՊ Ա, ժա գլխից՝ «Սկիզբն Պատմության Աղուանից, որով պարծինն: Սրբոյ Վաչէի ի Գիւտայ եպիսկոպոսէ լի երկնաւոր շնորհօքն Աստուծոյ ողջոյն: Յետ սկզբանն զկնի առաջաբանութեան ինչ» վերնագրով («Արդ յորմէ երկուցեալն էի... տղայոցն կալ առաջի» 18,13—21,28)<sup>115</sup>: Այս հատվածի ընթերցումների մի մասը համընկնում է ԱՊ ձեռագրերի Ա, մյուս մասը՝ Բ խմբի բնորոշ տարրնթերցումների հետ: Սրանից հետևում է այն կարևոր եզրակացությունը, որ հատվածը սկզբնապես քաղված է ԱՊ այնպիսի օրինակից, որն անկախ է եղել ձեռագրերի Ա և Բ խմբերից:

ՄՄ № 579 ձեռագրում արտագրված է ԱՊ Գ, ժդ գլուխը միևնույն՝ «Միբայնի Աղուանից հայրապետի խնդիր յաղագս պապանձմանն Զարարիայ մարգարէի և ծննդեան և յարութեան Փրկչին. ընդդէմ երկաբնակաց» վերնագրի տակ<sup>116</sup>: Այս հատվածի ընթերցումները ևս համընկնում են մեկ Ա, մեկ Բ խմբի ձեռագրերի տարրնթերցումների հետ, հետևաբար այն հանգում է այդ խմբերից անկախ օրինակի: Այս հատվածը շենք կարող անմիջապես հանգեցնել Կաղանկատվացու աղբյուրին՝ Միբայնի կաթողիկոսի երկին, քանի որ նրանում շենք գտնում ո՛չ հեղինակային առաջաբան, ո՛չ էլ որևէ բառ, որը չլիներ ԱՊ ձեռագրերում: Բացի այդ, Նիկիայի ժողովի մասնակից Երուսաղեմի Մակար եպիսկոպոսը այս հատվածում ևս կոչված է «Մարկոս», իսկ այդ սխալը կատարված պետք է համարել, ամենայն հավանականությամբ, ԱՊ հեղինակի և ոչ թե Միբայնի կաթողիկոսի գրչի տակ:

<sup>113</sup> Ղ. Մսերեանց, Տեղեկութիւն ի վերայ Զուանչիբ իշխանի և Գալթակ ճարտասանի, «Ճոարադ», 1860, էջ 76—86:

<sup>114</sup> Ղ. Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, հ. Բ, էջ 220—226: Հմմտ. The History, p. XI, n. 7 (p. XI—XII).

<sup>115</sup> ՄՄ № 2966 (Ժէ դար), էջ 120ա-բ; ՄՄ № 3062 (ԺԸ դար), էջ 199ա-բ: Սրանք թղթերի հայտնի ժողովածուներ են, որ գրականության մեջ երբեմն կոչվում են «էշմիածնական Գիրք իղից» (նկարագրութիւնը՝ Գ. Տէր Մկրտչեան, Անանիա Մոկացի. «Արարատ», 1897, էջ 95—96; Յ. Գիւլիսանդանեան, «Գիրք թղթոցի» պակասները և նրանից դուրս մնացած թղթեր. «Արարատ», 1902, էջ 561—563):

<sup>116</sup> ՄՄ № 579 (ԺԳ դար), էջ 80բ—82բ:

ՄՄ № 4284 ձեռագիրը ի թիվս այլ նյութերի պարունակում է նաև ԱՊ Գ, ժք գլխի լրիվ բնագիրը՝ «Սակս աւերման Իլիոնի և շինելոյն Հառմա» վերնագրի տակ<sup>117</sup>: Այս հատվածի ընթերցումներն էլ համընկնում են մերթ Ա, մերթ Բ խմբի ձեռագրերի բնորոշ տարրնթերցումներին, հետևաբար այն սկզբնապես արտագրվել է ԱՊ Ա և Բ խմբերից անկախ մի ձեռագրից:

Հայկական բազմաթիվ ճառընտիրներում կա Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի նշխարների գյուտի պատմութունը, որ քաղված է ԱՊ-ից և ընդգրկում է նրա Ա, Ի-ից գլուխներն ամբողջութամբ<sup>118</sup>: Այդ սյուժեին սովորաբար նախորդում է Գրիգորիսի կյանքի և նահատակութեան պատմութունը, որը քաղված է Փավստոս Բուզանդից: Նշված հատվածի վերնագիրը՝ «Գիւտ նշխարաց Երանելոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, որ վկայեաց յաշխարհն Մազքթաց ի ձեռաց Սանեսանայ (որոշ ձձ՝ Սանեսայ—Ա. Հ.)» գրեթե նույնանուն է ԱՊ Ա, ի գլխի վերնագրի հետ: Որպես առանձին հատվածի գրված խագիր, ճառընտիրներում պահպանված է նաև Ա, իր գլխի վերնագիրը: Ա, իա գլխի վերնագիրը պահպանվել է միայն երկուսում (Վենետիկի Բ և Գ ճառընտիրներ), իսկ մյուսներում միացված է բնագրին: Մի շարք ճառընտիրներում սրանցից բացի կա նաև ԱՊ մի ուրիշ հատված՝ Ա, ժթ գլուխը, իր վերնագրով. «Յայտնութիւն նշխարաց սրբոյն Չաբարիայի՝ հարն Յովհաննու, և Երանելոյն Պանդալեոնի, որ վկայեաց ի նիկոմիդեա քաղաքին, զոր տարեալ էր մանկանն Գրիգորիսի յաշխարհն ճղբաց»<sup>119</sup>:

Բնագրերի համեմատութունը ցույց է տալիս, որ արդեն ժԲ դարի ճառընտիրներում առկա այս հատվածները հիմնականում համընկնում են Բ խմբի ձեռագրերի ընթերցումներին: Կան նաև Ա-ին համընկնող ընթերցումներ, սակայն՝ քիչ ու անկարևոր, և կարող են անգամ համարվել պատահական նմանութեան արդյունք: Այսպիսի հարաբերակցութունից կարելի է անել երկու հետևություն. կա՛մ մայր ճառընտրի գրիչն օգտվել է Բ խմբի ձեռագրից (այդ դեպքում Բ-ի մայր օրինակը պիտի կազմված լինի ժԲ դարից ոչ ուշ), կա՛մ նա օգտվել է Ա և Բ խմբերից անկախ մի ձեռագրից (այս դեպքում պիտի ընդունենք, որ Ա խմբի մայր օրինակը կազմելիս ԱՊ, Ա, ժթ-ից գլուխները լուրջ խմբագրման են ենթարկվել): Ըստ ամենայնի, ավելի հավանական է թվում երկրորդ հնարավորութունը, ուստի և մենք ճառընտիրների նշված հատվածները հանգեցնում ենք ԱՊ սկզբնագրին Ա և Բ խմբերի ձեռագրերից անկախ:

ՄՄ № 6577 ձեռագրում քիչ բան ասող «Աղուանից» խորագրի տակ կա ԱՊ բովանդակութունը ներկայացնող մի համառոտութուն (էջ 159ա-բ): Մի բանի բնորոշ տարրնթերցումներ ցույց են տալիս, որ այս համառոտութունը կազմվել է ց ձեռագրի հիման վրա: Ըստ Մատենադարանի ձեռագրացուցակի

<sup>117</sup> ՄՄ № 4284 (ժէ դար), էջ 48բ—50բ: Ձեռագիրը պարունակում է աշխարհագրական, բնագիտական, տոմարագիտական, փիլիսոփայական, քերականական, դավանաբանական զործեր («Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, Երևան, 1965, էջ 1185):

<sup>118</sup> ՄՄ № 3787 (ժԳ դար), էջ 429ա—438բ; ՄՄ № 6196 (ժԳ դար), էջ 153բ—158ա; Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 200 (ճառընտիր Ա, ժԳ դար), էջ 121բ<sub>2</sub>—125բ<sub>2</sub>; № 201 (ճառընտիր Բ, ժԲ-ժԳ դդ.), էջ 204բ<sub>2</sub>—210բ<sub>2</sub>; № 202 (ճառընտիր Գ, ժէ դար), էջ 642ա—546ա: Վերջիններն ըստ՝ Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, 1914, հ. Բ, էջ 9, 47—48, 112:

<sup>119</sup> ՄՄ № 6195, էջ 151բ—153բ; Վենետիկ, № 200 (ճառընտիր Ա), էջ 120ա<sub>1</sub>—121բ<sub>2</sub>:

(Տ. Բ, էջ 347)՝ № 6577-ը գրվել է 1786 թվականից առաջ, ուրեմն, կարող ենք ավելացնել՝ 1761-ի և 1786-ի միջև:

ԱՊ-ից հատվածներ կան նաև ՄՄ № 4442 ձեռագրում, որը կազմվել է 1870—1891 թթ., Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում և այլուր<sup>120</sup>: Առաջին էջում նշվում է. «Այս ընդօրինակութիւն՝ ի նոսհատոր Պատմութիւնէ Աղվանից՝ արարեալ ի Մովսիսէ Կաղանկատուացոյ պատմագրէ, զոր ի լոյս ընծայեաց... արժանայիշատակ Կարապետ վարդապետ Շահնազարեան ի Փարիզ...»:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիր № 324-ում, որ գրվել է Կիլիկիայում, 1305 թ., ներկայացված են ԱՊ Գ, ա-բ գլուխները «ՅԱղուանից պատմութիւնէն. Պատմութիւն վասն Մահմետի» վերնագրի տակ, որից ընդարձակ կտորներ է հրատարակել Ն. Ակինյանը (290,1—15, 291, 4—5, 292, 6—14)<sup>121</sup>: Համեմատությունից պարզ երևում է, որ այս հատվածն էլ վերցված է ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերից անկախ մի օրինակից:

ՄՄ № 1725 (b) ձեռագրի մասին խոսելիս նշեցինք նաև նրա մեջ առկա մայր օրինակից ծագող ԱՊ հատվածի գոյությունը, որն ընդգրկում է Գ, ա-բ և ժզ գլուխները:

Վերջապես, ԱՊ-ից ծագող հատվածների կողքին պետք է դնել նաև Ուխտանեսի և Անանիա Սանահնեցու երկերում պահպանված կարևոր բաղվածքները: Ժ դարի վերջերին, այսինքն Մովսես Կաղանկատուացու ժամանակից մի փոքր անց, Ուխտանեսը հնարավորություն է ունեցել իր երկի մեջ մուծել ԱՊ Ա, գ-է և Բ, խէ գլուխները<sup>122</sup>: Անանիա Սանահնեցու (ԺԱ դար) «Բան հակաճառութեան ընդդէմ երկարնակաց» աշխատության Ը գլխում կան ԱՊ Բ, խէ գլխի առաջին և Բ, խը գլխի երկրորդ կեսերը՝ «Ի չաղուանից պատմութիւնէն» և «Պատճառ բաժանման Վրաց» ենթավերնագրերի տակ<sup>123</sup>: Ինչպես և պետք էր սպասել, համեմատությունից պարզվում է, որ Ուխտանեսի և Անանիայի ձեռքի տակ եղել են Ա և Բ խմբերից անկախ ձեռագրեր: Նույնը պետք է արձանագրել էաև ԺԳ դարում Մխիթար Գոշի և Կիրակոս Գանձակեցու ունեցած ԱՊ օրինակների մասին<sup>124</sup>:

#### ԱՊ Ա և Բ խմբերի առանձնահատկություններ:

Խ. Գաղյանը, որն առաջին անգամ իրավացիորեն առանձնացրել է ԱՊ ձեռագրերի Ա և Բ խմբերը, դրանք տարբերակում է երկու հիմնական հատկանիշներով: Առաջին. Բ խմբի ձեռագրերը Գ, ի գլխում ունեն մի հատված, որը Ա-ի մեջ չկա՝ հնագույն ձեռագրից թերթ ընկած լինելու պատճառով: Երկրորդ. Ա, Բ, Գ, Ը և իգ գլուխներում կան հատվածներ, որտեղ երկու խմբերում առաջացել են տարբեր ընթերցումներ՝ հնագույն ձեռագրում Ղունկիանոսի միջամտության հետևանքով, ընդ որում, ԱՊ սկզբնագրին համապատասխանում են Բ խմբի

<sup>120</sup> «Յուցակ ձեռագրաց...», Տ. Ա, էջ 1214:

<sup>121</sup> Հ. Յ. Վ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 770: Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 338—340:

<sup>122</sup> Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, Տ. Բ, էջ 122—124, 131 (գլուխ ԳԵ, ԿԹ): Հեղինակը որոշ շափով վերաշարագրել է նաև ԱՊ Բ, խը գլխի տեղեկությունները (գլուխ ԿԳ-ԿԴ):

<sup>123</sup> ՄՄ № 567, էջ 83ա—85բ: Այս երկը պարունակող ձեռագրերի և նրա խմբագրությունների մասին տե՛ս Հ. Ս. Անաչյան, նշվ. աշխ., Տ. Ա, էջ 778—782:

<sup>124</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., Տ. Բ, էջ 384—385: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց: Աշխ. Կ. Ա. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 192—199:



ընթերցումները<sup>125</sup>: Չ. Գովսեթը նշվածներին ավելացնում է մի երրորդ հատկանիշ. նրա կարծիքով, Բ խումբը («համենայն դեպս՝ P<sub>4</sub>-ը և Բրիտանական թանգարանի ձեռագիրը») պարունակում է Բ, ծա գլուխը, ուր Հովհաննես Մկրտչի գլխի պատմությունն է<sup>126</sup>: Ուսումնասիրողն այս հարցում սխալվում է, քանի որ նշված գլուխն առկա է Բ խմբի միայն ՇԿՆ<sub>1</sub> ենթախմբի ձեռագրերում: Անհաշող է նաև Ֆ. Մամեդովայի ենթադրությունը, ըստ որի՝ Բ խմբի ձեռագրերում առկա է Գավթակի ողբի երկրորդ կեսը<sup>127</sup>: Սակայն Ա և Բ խմբերի տարբերություններն էականապես չեն արտացոլում նաև Խ. Գաղյանի նշած հատկանիշները: Այդ երկու տարբերություններն էլ առաջացել են միայն ԺԷ-ԺԸ դարերում՝ արհեստական ճանապարհով: Ներկայումս հայտնի է Ա խմբի մի ձեռագիր՝ Խ-ը, որն օրինակվել է Ձ-ից 1761 թվականից առաջ և զերծ է իր մայր օրինակի՝ Խ. Գաղյանի նշած երկրորդ թերությունից: Կարելի է հուսալ, որ երբևէ կհայտնաբերվեն 1676 թվականից առաջ Ձ-ից ընդօրինակված ձեռագրեր, որոնք զերծ կլինեն նրա՝ նաև առաջին թերությունից:

Ա և Բ խմբերի իրական տարբերությունը բնագրի բազմաթիվ անխաթար հատվածների տարբերություններն են, որոնց մի մասը, անկասկած, խմբագրական փոփոխությունների հետևանք է<sup>128</sup>: Դրանցից թերևս ամենակարևորը գտնվում է Ա, ժդ գլխում: Բ խմբի ձեռագրերը շունեն այդ գլխի առաջին մասը (նոր հրատարակության մեջ՝ 3 էջ), ուր պատմվում է Գրիգոր Լուսավորչի և Հայոց դարձի մասին: Համապատասխանաբար Բ խմբում գլխի վերնագիրն էլ ավելի համառոտ է. «Ձեռնագրութիւն սրբոյն Գրիգորիսի և ևկն յԱղուանս լուսաւորելն և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» փոխանակ Ա-ի «Սակաւիկ յայտարարութիւն վասն սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի, և երանելի որդոց նորին. և ընդ նմին ձեռնադուրիւն սրբայն Գրիգորիսի՝ որդոյ վրթանիսի, թոռին մեծին սրբոյն Գրիգորի ի կաթողիկոսութիւն Աղուանից և Վրաց. և ևկն նորա յԱղուանս ի լուսաւորութիւն աշխարհիս և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» վերնագրի<sup>129</sup> (այսինքն՝ Բ-ն ունի Ա-ի միայն ընդգծված հատվածները): Քննությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Ա<sup>9</sup> սկզբնագրից

<sup>125</sup> Գաղյան, 1897, էջ 67—70:

<sup>126</sup> The History, p. XIV:

<sup>127</sup> Փ. Мамедова, указ. соч., с. 25:

<sup>128</sup> Հմմտ. Կաղանկատուացի, էջ 1Դ-1Ե:

<sup>129</sup> Անդրադառնալով այս տարբերությանը, Ֆ. Մամեդովան ենթադրում է, թե Ա<sup>9</sup> սկզբնագրին համապատասխանում է Բ խմբի վերնագիրը (Փ. Дж. Мамедова. Текстологический анализ «История албан» Моисея Каланкатуйского, «Бартольдские чтения 1981 года». Тез. докл.: М., 1981, с. 55), սակայն քննությունը չի հաստատում այդ ենթադրությունը: Ի դեպ, տեղին է անդրադառնալ նշված թեզիսներում ուսումնասիրողի կատարած մի շարք սխալներին: 1. Չգտելով ցույց տալ, թե Ա<sup>9</sup> բնագիրը Մ. էմինի և Կ. Շահնազարյանի կողմից նպատակադրված խմբագրման է ենթարկվել, Ֆ. Մամեդովան գրում է, որ հրատարակությունների մեջ Ա, ժդ-ի վերնագիրն ընդարձակված է իր ձեռքի տակ գտնվող Ա խմբի երկու (Անինդրագիր В—56 և P<sub>1</sub> 217) ձեռագրերի համեմատությամբ, ուր առկա է համառոտ «Յայտարարութիւն սակաւիկ յաղագս սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի և երանելի որդեացն, և ընդ նմին՝ որդրոյն Գրիգորիսի ձեռնագրութիւն և ևկն յԱղուանս, և լուսաւորելն դսա և նահատակութիւն նորին և բերումն նշխարացն» վերնագիրը: Զարմանալի՜ պնդում: Վերցնելով այս վերնագիրը В—56 ձեռագրի Ա դրբի գլխացանկից (էջ 291բ. այդպես ունեն նաև Ձ-ի և Ա խմբի մյուս օրինակների գլխացանկերը. ի դեպ, P<sub>1</sub> 217-ը գլխացանկեր և այս վերնագիրը չունի!), ուսումնասիրողը չի՞ նկատել, որ իր երկու ձեռագրերի բնագրերում էլ (այդպես՝ նաև Ա խմբի մյուս օրինակներում) վերնագիրն ընդարձակ է, այսինքն՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին ներկայացված է հրատար

շեղվածք Բ խմբի տարրերակն է: Նախ՝ Բ խմբում գլուխն սկսվում է Ա խմբի հատվածին փոխարինող հետևյալ ծանոթությամբ. «Որ ինչ սակս երիցս երանելոյն Գրիգորի՝ Լայոց լուսաւորչի պատմութեան՝ Ազաթանգեղոս ուսուցի. իսկ զոր առ Աղուանս կատարեաց գործ ընդ ձեռն մանկանն Գրիգորիսի, գտանի յայսմ մատենի»: Ընդգծված բառերը կրկնում են Ա-ի բնագրի առաջին նախադասության մեջ Գրիգոր լուսավորչին նվիրված ավելի ընդարձակ բնորոշման կեսը («մինչև եկն հոշակելին պատերազմողն և երիցս երանելին Գրիգորիոս»): Երկրորդ, գլխի Ա խմբի ունեցած հատվածն իր լեզվով ու ոճով ամբողջովին համապատասխանում է գլխի երկրորդ մասի լեզվին ու ոճին: Դա տվյալ հատվածում Կաղանկատվացու բառացի արտագրած աղբյուրի՝ «Վաշագանի վեպի» լեզուն ու ոճն է<sup>130</sup>: Երրորդ, եթե ենթադրենք, թե նախնականը Բ խմբի տարրերակն է, ապա պետք է մտածենք, որ Ա-ի մայր ձևագրի գրիչը՝ ելնելով Ազաթանգեղոս անունից, կաղմել է Ազաթանգեղոսի պատմության մի համառոտություն: Այնինչ, գլխի սկիզբը որոշակի տարբերություններ ու անձանոթ մանրամասներ ունի Ազաթանգեղոսի՝ Ժ դարից շատ առաջ կանոնացված բնագրի համեմատությամբ: Իրականում այդ տարբերություններն ու մանրամասները «Վաշագանի վեպի» հեղինակի ստեղծագործության արդյունքն են, որը, ի թիվս այլ պատճառների, Զ դարում իր ձևերի տակ պիտի ունենար Լայոց դարձի պատմության մի ուրույն տարրերակ (թերևս՝ Փալստոս Բուզանդի մեզ չհասած առաջին դպրություններից բաղված)<sup>131</sup>: Չորրորդ, թեև Բ-ի վերնագիրը խոսում է միայն Գրիգորիսի մասին, իսկ գլխի սկզբի ծանոթությունը խոստանում է գրել միայն Աղվանքում նրա կատարածի մասին, իրականում գլխի երկրորդ մասում պատմվում է նախ՝ Գրիգոր լուսավորչի, ապա՝ Վրթանեսի, և հետո միայն՝ Գրիգորիսի գործունեության մասին:

Նշված փաստերից ակնհայտ է դառնում, որ ԱՊ սկզբնագիրը փոփոխված է Բ խմբի ձևագրերում: Այդ դեպքում անհրաժեշտ է միանգամից ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Բ խմբի երկու ենթախմբում էլ Ա, ժդ

բաղությունների մեջ (B—56, էջ 25բ—26ա, P<sub>1</sub> 217, էջ 12բ): 2. Թեղիսների երկրորդ կետում կատարած մի անհաշող պնդմամբ, Բ խմբի բոլոր ձևագրերը հանգեցվում են ՄՄ Ք 1725 (b) ձևագրին: 3. Չորրորդ կետում Յ. Մամեղովան գրում է, թե Լենինգրադի C—59 (1) ձևագրի «Ցանկը առաջնոյ հատորին Պատմութեան Աղուանից ազգին» վերնագիրն ունի նաև P<sub>4</sub> 220 ձևագիրը (նպատակն է՝ ցույց տալ, թե նշված վերնագիրն ունեն Բ խմբի բոլոր օրինակները): Իրապես, P<sub>4</sub>-ը ԵՄ<sub>1</sub> ենթախմբի մյուս ձևագրերի նման ունի «Ցանկ և նախադրութիւն սակս Պատմութեան Աղուանից» վերնագիրը (էջ 1): 4. Ուսումնասիրողը շարունակում է, թե C—59-ի վերը բերված «Աղուանից ազգ» ընթերցումը Բ խմբի ձևագրերում ավելի հաճախ է հանդիպում, քան Ա խմբում: Եվս մի դարմանալի պնդում, որովհետև բերվածից բացի երկրորդ այդպիսի դեպք գոյություն չունի: Այսքան վատ ստուգված (՝) փաստերի հիման վրա ընթերցողին նման լուրջ եզրակացություններ մատուցելը անվավեր անթույլատրելի է:

<sup>130</sup> «Վաշագանի վեպի» մասին, որը մենք թվագրում ենք Զ դարի երկրորդ կեսով, տե՛ս Ն. Ալիևեան, նշվ. աշխ., էջ 142; Կ. Ա. Կադրամանյան, Источники «Истории страны Агванк»: Автореф. дис., канд. ист. наук, Ереван, 1973, с. 22; А. А. Акоюн. Роман об албанском царе Вачагане Благочестивом в «Истории Албании» Моисея Каланкатуйского. «Кавказ и Византия», вып. IV, Ереван, 1984, с. 159—171:

<sup>131</sup> Մանրամասն տե՛ս Ա. Լ. Լակոբյան, Փալստոս Բուզանդի «Լայոց պատմությունը» որպես «Վաշագանի վեպի» աղբյուր, «Ներխառնարդ արևելագետների հանրապետական X գիտական նստաշրջան», Զեկուցումների թեզեր, Երևան, 1984, էջ 15:

գլխի բնագիրը կիսատ ու խմբագրված է: Այդ փաստից բխում է այն կարևոր եզրակացությունը, որ *bil* և *eryi* ենթախմբերի մայր ձեռագրերն ընդօրինակվել են մեկ ընդհանուր մորից. դա Բ խմբի մեզ չհասած մայր օրինակն է, որի գրիչն էլ նշված և բազմաթիվ այլ խմբագրումների ու բնորոշ տարբնթերցումների աղբյուրն է:

Ա և Բ խմբերի երկրորդ խոշոր տարբերությունն առկա է Ա, ԺԹ-ի գ գլուխներում: Այստեղ, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Առաքելյանը, «բնագրերը բոլոր խմբերի այնքան են զանազան, որ երբեմն կարելի է ինքնուրույն բնագրեր համարել»<sup>132</sup>: Հնագույն ճառքնտիրներում այս հատվածի առկայության շնորհիվ հաջողվում է պարզել, որ սկզբնագրից շեղվել և այն խմբագրման է ենթարկել Ա խմբի մայր ձեռագիրը<sup>133</sup>: Սակայն Բ-ն էլ այս հատվածում կորցրել է մի կարևոր մանրամասն, որը Ա-ում մնացել է անխաթար: Ա խմբի ձեռագրերի մեջ Ա, իսկ գլխի վերնագիրն է. «Թուղթ արքային Վաչագանայ առ ամենայն կախկոպոսունս եւ քահանայս առ ի շնորհել նմա ի ձեռն աղաթից եւ պաղատանաց նոցա դժածկեալ գանձն»: Բ խմբում այս վերնագիրը չկա. նրա դերը կատարում է գլխի առաջին նախադասությունը՝ «Յայնժամ առնէր հրովարտակ թագաւորն...»: ԱՊ Ա գրքի գլխացանկերում թե՛ Ա, թե՛ Բ խմբի ձեռագրերն ունեն Ա խմբի բնագրում եղած վերնագիրը՝ «Թուղթ արքային Վաչագանայ...»<sup>134</sup>: Դա ցույց է տալիս, որ ԱՊ սկզբնագրում եղած վերնագիրն անթերի պահպանվել է Ա խմբի ձեռագրերում:

Այս եղանակով, ԱՊ-ից քաղված հնագույն կտորների օգնությամբ, բազմաթիվ այլ հատվածներում էլ հաջողվում է պարզել, թե խմբերից որի ընթերցումն է համապատասխանում սկզբնագրին, այսինքն՝ վերականգնել սկզբնագիրը: Նույն խնդիրն իրագործելուն օգնում է նաև Ա և Բ խմբերի տարբնթերցումների համեմատությունը ԱՊ աղբյուրների հետ: Հասկանալի է, որ սկզբնագրից գալիս է այն ընթերցումը, որը համապատասխանում է Կաղանկատվացու աղբյուրի բնագրին<sup>135</sup>: Բոլոր հնարավոր դեպքերի համար մեր կատարած այս կարգի համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սկզբնագիրն արտադրվելու հարցում Ա և Բ խմբերի արժանիքներն ընդհանուր առմամբ հավասար են:

Վերջապես, մնում է քննել այն հարցը, թե Ա և Բ խմբերի մայր ձեռագրերը ԱՊ սկզբնագրին հանգում են անմիջականորեն, թե՛ միջնորդավորված: Բնագրական մի քանի հակասությունների ըննությունը ցույց է տալիս, որ խմբերի կազմավորումից առաջ Կաղանկատվացու սկզբնագրից օրինակվել է առնվազն մեկ ձեռագիր: Այսպես, Բ, իսկ գլխի սկզբում բոլոր ձեռագրերը, նաև՝ Ուխտանեսի և Անանիա Սանահնեցու մոտ պահպանված հատվածները, պարունակում են հետևյալ արտահայտությունը (աննշան տարբնթերցումներով). «Քառաս-

<sup>132</sup> Կաղանկատվացի. էջ 17:

<sup>133</sup> Տե՛ս վերը: Ի դեպ, բացառված չէ, որ իսկական իմաստով Ա խմբի մայր օրինակը, այսինքն՝ բնագրի որոշ հատվածներ խմբագրողը, ոչ թե Ձ-ն է, այլ նրա՝ մեզ չհասած մայր ձեռագիրը:

<sup>134</sup> Բացառություն է կազմում Վ ձեռագիրը, որի ցանկում նույն վերնագիրն է, ինչ որ բնագրում՝ «Յայնժամ առնէր հրովարտակ...»: Ինչպես երևում է, ուշագիծ գրիչը ցանկը համապատասխանեցրել է բնագրին:

<sup>135</sup> Կարելի է պնդել, որ միակ դեպքը, երբ Կաղանկատվացու աղբյուրների հիման վրա գրիչը փոխել է ԱՊ բնագիրը, Ղունկիանոսի միջամտությունն է:

ներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայր ի հաւատս, և Աղուանից լուսաւորութեանն ՄԶ ամ յառաջ»: Ստացվում է, որ Հայոց լուսավորութիւնը տեղի է ունեցել 327 թվականին (284 + 43)<sup>136</sup>, իսկ Աղվանից լուսավորութիւնը՝ դրանից 270 տարի անց, այսինքն՝ 597-ին: Աղվանից լուսավորութեան նման անմիտ թվագրութիւն ոչ մի պատմիչ տալ չէր կարող, առավել ևս՝ Աղվանից պատմութիւն գրողը: Իրականում շատ պարզ է, որ Կաղանկատվացու սկզբնագրում գրված է եղել, թե Աղվանից լուսավորութիւնը՝ կապված Եղիշա առաքյալի գործունեութեան հետ, 270 տարով նախորդել է Հայոց լուսավորութեանը, որն, այսպիսով, կապվել է միայն Գրիգոր Պարթևի գործունեութեան հետ<sup>137</sup>: Ուրեմն, ԱՊ սկզբնագրում պետք է եղած լինի «և Աղուանից լուսաւորութիւնն՝ ՄԶ ամ յառաջ», ճիշտ այնպես, ինչպես վերականգնել ենք ընդհարել Մ. Էմինն ու Կ. Շահնաղարյանը<sup>138</sup>: Անհավանական է մտածել, թե Ա. և Բ. խմբերի մայր ձեռագրերը, Ուխտանեսը և Անանիա Սանահնեցին իրարից անկախ, միևնույն ձևով փոփոխել են տվյալ հատվածը: Պետք է ուրեմն եզրակացնել, որ Կաղանկատվացուց հետո նրա ձեռագիրն ընդօրինակվել է մեզ անհայտ գրչի կողմից, որին անհարիր է թվացել քննութեան առարկա արտահայտութիւնը, և նա պարզապես «լուսաւորութիւնն»-ը դարձրել է «լուսաւորութեանն»:

ԱՊ նշված առաջին ընդօրինակութեան հետ պետք է կապել նաև Գ, իր գրչւթում առկա հակասական ընթերցման ծագումը: Այստեղ, Միհրական տոհմի ծագումնաբանութեան հատվածում ասվում է. «քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, և ոչ շինողն Գարդման բերդոյ» (339, 2—3): Իսկ Բ, ժէ գլխում ունենք. «Վարդ ծնանի գրաչն Վարդան, որ շինեաց գրեղն Գարդմանայ գերիս ամս» (172, 4—5): Երկու հատվածում էլ խոսքը նույն Վարդանի մասին է՝ Արմայելի որդի Վարդի որդու և Վարազ-Գրիգորի հայր Վարդի հոր: Դա նշանակում է, որ Գ, իր-ում պիտի եղած լինէր «և ոչ շինողն Գարդման բերդոյ»: Պարզ է, որ հաջորդող «շինողն» բառի առաջին շշական հնչյունի ազդեցութեամբ գրիչը «որ» բառի մեջ «ր» տառի փոխարեն պատահաբար «չ» է գրել (առնմանութեան օրենք): Եվ քանի որ այդ ընթերցումն ունեն թե՛ Ա, թե՛ Բ խմբերը, ուրեմն սխալը ծագել է ԱՊ առաջին ընդօրինակողի գրչի տակ:

Երրորդ փաստը, որը միաժամանակ թույլ է տալիս նաև որոշել հուշարձանի ստեղծման ժամանակը, հետևյալն է: ԱՊ վերջին տողում խոսվում է Մովսես կաթողիկոսի մասին. «Տէր Մովսէս ամս 2. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց»: Հարց է ծագում՝ Եթե Կաղանկատվացին իմացել է Մովսեսի կաթողիկոս-

<sup>136</sup> Հետ երևույթին «Հոռոմոց թուական» (սկիզբը՝ 247 թ.) ասելով, Կաղանկատվացին կամ նրա աղբյուրը հասկացել է Գիսկղեախանոսի թվականը (սկիզբը՝ 284 թ.): Հակառակ դեպքում՝ Աղվանից լուսավորութիւնը՝ այսինքն Եղիշա առաքյալի գործունեութիւնը, ընկնում է մ. թ. 20 թվականին, երբ Հիսուսը ղեռ կենդանի էր (247 + 43 = 270 = 20), որպիսի սխալ դժվարանում ենք վերագրել Կաղանկատվացուն կամ նրա աղբյուրին:

<sup>137</sup> Այլ հարց է, որ Եղիշան «Հայոց» լուսավորիչ Բագետի աշակերտն էր, և, նույն տրամաբանութեամբ, Հայոց լուսավորութիւնն էլ պետք է թվագրվեր մ. թ. Ա դարով: Աղվանից եկեղեցու առաջնահատմութեան ջատագով հեղինակի տրամաբանութիւնն այստեղ հասկանալի պատճառներով հետևողական չէ:

<sup>138</sup> Էմին, էջ 214; Շահն., հ. Ա, էջ 405:

սության ավարտի մասին (982—988)<sup>139</sup>, ինչու՞ նա չի գրել նաև հաջորդ կաթողիկոսի անունը: Այս հակասությունը կարելի է լուծել՝ ենթադրելով, թե Կաղանկատվացին չի իմացել և չի հիշատակել Մովսեսի կաթողիկոսության ավարտի մասին, իսկ «Զ» (6) թիվը ԱՊ մեջ ավելացրել է սկզբնագրի առաջին ընդօրինակողը: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա ԱՊ գրության ժամանակն անհրաժեշտ է դնել 982 և 988 թվականների միջև:

Այսպիսով, ներկայումս գոյություն ունեն ԱՊ 28 ձեռագիր: Դրանից բացի, տարբեր ժամանակներում գրականության մեջ արձանագրվել և նկարագրվել են ներկայումս անհայտ 7 ձեռագիր (դրանցից մեկից պահպանվել է պատառիկ, մի քանիսից հրատարակվել են հատվածներ): Հավաստիորեն վերականգնվում են նաև ուրիշ 5 ձեռագրեր՝ Տ և Գ ձեռագրերի մայրը, ՅԼ և ԵԿՄ, ենթախմբերի մայրերը, Բ խմբի մայրը և Ա և Բ խմբերի մայրը: ԱՊ ճյուղագրությունն արտահայտում ենք աղյուսակում ներկայացված ձևով:

А. А. АКОПЯН

## СПИСКИ «ИСТОРИИ АЛБАНИИ» МОВСЭСА КАЛАНКАТУАЦИ

### Резюме

В настоящее время существуют 28 списков «Истории Албании» Мовсэса Каланкатуаци (Дасхуранци). Кроме того, в научной литературе встречаются упоминания или описания еще 7 списков, утерянных или ныне неизвестных (сохранились фрагмент одного из них и опубликованные отрывки других).

Уверенно можно предположить существование еще 5 списков, в том числе—архетипа групп А и Б, архетипа группы Б и архетипов обеих подгрупп группы Б.

К статье прилагается таблица генеалогии списков «Истории Албании».

<sup>139</sup> Չ դարի Աղվանից կաթողիկոսների ժամանակագրությունը կազմելիս պետք է նկատի ունենալ ԱՊ ձեռագրերում առկա հետևյալ երկու սխալները: 1. Գագիկ կաթողիկոսը («Տէր Գագիկ ամս ԺԳ (Ա խումբ՝ ԺԳ-Ա. Հ.)» յնպիսկոպոսութենէն Գարդմանայ. ի սորա շորորդ ամին լցա: թին Հայոց ն») պիտի իշխած լինի ոչ թե 13 տարի (948—961), այլ՝ 10, ինչպես որ նշում է Մխիթար Գոշը (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 385), քանի որ Անանիա Մոկացու հաղաստի վկայությամբ, նա մահացել է Հայոց նէ (958) թվականին («Տեառն Անանիայի Հայոց կարողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արաքոյ ս. Լուսաւորչի աթոռոյն»: Հրատ. Գ. Տէր Մկրտչեան, Արարատ, 1897, էջ 144): 2. Գագիկին հաջորդել է ոչ թե «Տէր Գալիթ ամս է. յնպիսկոպոսութենէն Կապաղակայ», ինչպես որ վկայում են Ա խմբի ձեռագրերը և ընդունված է գրականության մեջ, այլ հաջորդը՝ «Տէր Գալիթ ամս Զ. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց. սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՛ Հայոց կաթողիկոսէ»: Առաջին Գալիթին շունեն Բ խումբը, Գոշը, Գանձակեցին և Մխիթար Այրիվանեցին: Անանիա Մոկացին ևս վկայում է, որ Գագիկի մահվան տարում ինքը Աղվանից կաթողիկոս է ձեռնադրել Գալիթ վանականին (նույն տեղում): Այսպիսով, պետք է դուրս գցել առաջին Գալիթի մասին Ա խմբի համապատասխան առղը՝ որպես 1676 թ. ձ-ի վերջին թերթերը վերականգնողների սխալի հետևանք: Նշված ուղղումներից հետո Մովսեսի աթոռակալության շրջանն ընկնում է 982—988 թվականներին:

A. H. HACOBIAN

LES COPIES MANUSCRITES DE "L'HISTOIRE DE L'ALBANIE" DE  
MOVSES KALANKATVATSI

## Résumé

Il existe actuellement 28 copies manuscrites de „L'Histoire de l'Albanie“ de Movses Kalankatvatsi (Daskhourantsi). En outre, les ouvrages scientifiques décrivent ou mentionnent 7 autres copies, perdues ou inconnues (un fragment de l'une d'elles et des passages publiés d'autres copies nous sont parvenus).

On peut supposer avec certitude l'existence de 5 autres manuscrits, dont l'archétype des groupes A et B, l'archétype du groupe B et les archétypes des deux sous-groupes du groupe B.

La table généalogique des copies manuscrites de „L'Histoire de l'Albanie“ est donnée en appendice à l'article.

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

«ԾՆՆՊՅԱՆ» ԹԵՄԱՆ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Թորոս Ռոսլինի մանրանկարչական ծառանգության մեջ Քրիստոսի ծնունդյան պատմությունը մեկն է ավետարանական այն թեմաներից, որոնցով մանրանկարիչը ներշնչվել է իր կյանքի տարբեր տարիներին: Այս թեմայով նա ստեղծել է մի քանի պատկերներ և, ինչպես ցույց է տալիս դրանց քննությունը, յուրաքանչյուր անգամ «Ծննդյան» ավանդությունը նկարազարդել ինքնատիպ, ինքն իրեն շրջանակող եղանակով: Ավետարանական այդ պատմությունը ձևավորող նրա աշխատանքները, ավելի լավ, քան մյուս թեմաներով կատարված մանրանկարները, վկայում են հեղինակի գեղարվեստական բարձր պատրաստվածության, հարուստ գիտելիքների, յուրահատուկ վառ երևակայության ու ընտիր էաշակի մասին:

Քրիստոսի ծնունդը Թորոս Ռոսլինը առաջին անգամ պատկերել է 1260 թ. Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսի հրամանով Հռոմկլայում ընդօրինակված Ավետարանում (Երուսաղեմ, սր. Հակոբյանց վանքի գրադարան, № 251)<sup>1</sup>:

Այս թեման ձևավորելիս Ռոսլինի պես զարգացած մանրանկարիչը իր աչքի առջև կարող էր ունենալ ոչ միայն նախընթաց դարերի հայկական հուշարձանները, այլև վաղ բրիստոնեական շրջանից միջնադարյան արվեստագետների կուտակած փորձն ընդհանրապես<sup>2</sup>:

Հայտնի է, որ «Ծնունդ» տեսարանին վերաբերող հնագույն պատկերները երևան են գալիս Հռոմի և Գալլիայի IV դ. սարկոֆագների քանդակներում<sup>3</sup>:

VII դարի հայկական աղբյուրների համաձայն այս թեման մասն էր կազ-

<sup>1</sup> Տե՛ս G. Millet, Recherches sur l'iconographie de l'Évangile aux XIV<sup>e</sup>, XV<sup>e</sup> et XVI<sup>e</sup> siècles d'après les monuments de Mistra, de la Macédoine et du Mont Athos, Paris, 1960, fig. 103, p. 152; Ա. Մխիթարյան, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դանձեբը, Երուսաղեմ, 1969, նկ. 5. 2; Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը 12—13-րդ դդ., Երևան, 1964, նկ. 69; S. Der Nersessian, Miniatures ciliciennes.-En: Etudes byzantines et arméniennes - Byzantine and Armenian Studies, Louvaine, 1973, t. 1, p. 512—513, t. 2, fig. 249.

<sup>2</sup> «Ծննդյան» թեմայի պատկերազրույթյան մասին տե՛ս՝ Н. Покровский, Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПб., 1892, с. 48—98; G. Millet, op. cit., p. 92—169; L. Réau, Iconographie de l'Art Chrétien, t. 2, Paris, 1957, p. 213—255, G. Schiller, Christian Iconography, vol. 1, London, 1971, p. 58—88; G. Ristow, Geburt Christi.-Im: Reallexikon zur byzantinischen Kunst, Bd. 2, Stuttgart, 1971, col. 637—666, P. Wilhelm, Geburt Christi.-Im: Lexikon der christlichen Ikonographie, Rom, Freiburg, Basel, Wien, 1970, Bd. 2, S. 86—119.

<sup>3</sup> Տե՛ս G. Schiller, op. cit., p. 59.

մում այն տոների շարքի, որոնք ներկայացվում էին հայկական եկեղեցիների որմնանկարներում<sup>4</sup>:

Օձունի հուշակոթողի քանդակը (VII դ.) և Աղթամարի տաճարի վիմանկարը (915—921 թթ.) ցույց են տալիս, որ «Մնունդը» արդեն հին շրջանում ծանոթ էր հայ վարպետներին<sup>5</sup>:

X—XII դարերից պահպանված գրքարվեստի նմուշները վկայում են, որ դեռևս Ռոսլինից շատ դարեր առաջ այդ թեմայով ստեղծված հայկական մանրանկարներում ընդհանուր համաքրիստոնեական պատկերազրույթյան հետ միասին արտացոլվել են նաև ազգային կանոնիկ ավանդույթները<sup>6</sup>:

«Մննդյան» տեսարանների կանոնիկ առանձնահատկությունները ձևավորվել են Մատթեոսի (գլ. Բ, 1—12) և Ղուկասի (գլ. Բ, 6—20) բնագրերի, ինչպես նաև Հակոբի նախաավետարան կոչվող պարականոն գրվածքի հիման վրա: Գրական այս աղբյուրների տվյալները, համաքրիստոնեական և, մասնավորապես, հայ արվեստի մեջ «Մննդյանը» վերաբերող օրինաչափությունները, խորհրդանշական կողմերը ըստ ամենայնի յուրացնելով, Քորոս Ռոսլինը այդ թեմայով կատարած իր առաջին իսկ ստեղծագործության մեջ է ներկայանում իրրև անսահման մեծ երևակայության տեր վարպետ:

1260 թ. Ավետարանում խնդրո առարկա մանրանկարը գետեղված է Մատթեոսի բնագրում (էջ 15բ): Առաջին հայացքն անգամ բավական է համոզվելու, որ մեր առջև է բացառիկ հորինվածք ունեցող մի պատկեր<sup>7</sup>: Այն ցուցադրում է քարանձավի առաջ շքեղ գահին նստած Մարիամին ու նրա գրկում գտնվող մանկանը, որոնք շրջապատված են հովիվներով, մոզերով, հրեշտակներով, ծնունդն ընդունող կանանցով և այլ կերպարանքներով (նկ. 1):

Այս ստեղծագործության բաղկացուցիչ գրվածքները, մանրամասնությունները և երբեմն նաև դրանց տեղադրությունը ծանոթ են տասնյակ այլ հուշարձաններից, բայց այն ամբողջությունը, որը կազմված է այդ հատվածներից, անծանոթ է ու նոր:

Ինչի՞ մասին են պատմում հիշյալ մանրամասները, ի՞նչ գեղարվեստական երկեր է «մտապահել» Ռոսլինը, ուրեմն և ո՞ր գեղագիտական հոսանքների, երևույթների հետ է առնչվում նրա մանրանկարը և ի՞նչ է պատմում վերջինս վարպետի աշխատանքային եղանակի մասին:

Հիշյալ հարցերի պատասխանը տալիս է միայն պատկերազրական տարրերի մանրակրկիտ վերլուծությունը:

Ուսումնասիրողների կարծիքով այս ստեղծագործությունը առաջին հերթին բացառիկ է, որովհետև ներկայացնում է Մարիամին ու մանկանը գահին

<sup>4</sup> Տե՛ս S. Der Nersessian, Une Apologie des Images du Septième Siècle.-En: Etudes byzantines et arméniennes, p. 379—403.

<sup>5</sup> Տե՛ս Լ. Ռ. Ագարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 74, 93—94, 104—105, նկ. 56, S. Der Nersessian, Aghtamar. Church of the Holy Cross, Cambridge, Mass., 1965, p. 38, fig. 59, J. Strzykowski, Die Baukunst der Armenier und Europa, Bd. II, Wien, 1918, S. 538, Abb. 580.

<sup>6</sup> Տե՛ս J. Lafontaine-Dosogne, Les représentations de la Nativité du Christ dans l'art de l'Orient chrétien—In: Miscellanea Codicologica F. Masai, Dicata MCMLXXIX, Gand, 1979, p. 18.

<sup>7</sup> Տե՛ս L. Hadermann—Misguich, Kurbinovo. Les fresques de Saint-George et la peinture byzantine du XII<sup>e</sup> siècle, Bruxelles, 1975, p. 113, note 286.





նկ. 1

նստած քարանձավի մոտ<sup>8</sup>: «Ծննդյան» թեմայի ամբողջական, դարգացած այնպիսի մի բազմակերպար պատկերազրական տարբերակում, ինչպիսին է Թուզինի ձևավորումը, երբեք Մարիամը երեխայի հետ չի բազմում դահի վրա: Այսպես արքայազավյել նրանց պատկերում են միայն «Մոզերի երկրպագության» առանձին նկարներում<sup>9</sup>:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս Կ. Wessel, Anbetung der Magier und Hirten.—Im: Reallexikon zur byzantinischen Kunst, Bd. 1, Stuttgart, 1966, col. 147—154.

Մանրանկարի ձախ կողմում դահի հետևից երևացող Հովսեփը որպես կանոնիկ կերպար մուտք է գործում «Մոզերի երկրպագության» պատկերագրության մեջ դեռևս վաղ միջնադարյան շրջանում և, ստեղծագործությունից ստեղծագործություն անցնելով, պահպանվում դարեր շարունակ<sup>10</sup>: Հովսեփի կերպարը, դահին նստած Մարիամն ու մանուկը երեք արքա-մոզերի հետ միասին կազմում են «Մոզերի երկրպագությունը» պատկերի կանոնիկ հիմնական տարրերակը, որտեղ երբեմն ընդգրկվում է նաև արքաներին առաջնորդող (այստեղ բացակայող) հրեշտակը:

Պատահում է, որ արքայավայել ներկայացված կույսին ու նորածնին վաղ միջնադարյան շրջանում ցուցադրում են երեք մոզերի ու հովիվների արանքում: Այդպիսին է Իտալիայում Մոնցայի արքայությունում պահվող սրբադան յուզի համար նախատեսված Պաղեստինից բերված (շուրջ 600 թ. գործ հանդիսացող) տափաշշերից մեկի վրայի պատկերի կանոնիկ հորինվածքը<sup>11</sup>:

Նախքան Ռոսլինը ստեղծված «Մենդյան» կամ «Մոզերի երկրպագության» տեսարանները ուսումնասիրելիս, պարզվում է, որ միայն մեկ հուշարձանում՝ Վերոնայի (Իտալիա) տաճարի (1139 թ.) ճակատամասի քանդակում է երևան գալիս մեկ հետաքրքրող պատկերագրությունը<sup>12</sup>: Թորոս Ռոսլինի մանրանկարում և Վերոնայի քանդակում հովիվները ցույց են տրված ձախից, որը արտասովոր է ու աննախընթաց «Մենդյան» կամ «Մոզերի երկրպագության» թեման ներկայացնող հուշարձանների համար: Նույնիսկ Մոնցայի վերը հիշված տափաշշի վրա հովիվները զբաղեցնում են աչ կողմը, իսկ ձախը գրավում են արքաները:

Մեծ կիլիկեցու և Իտալիայի արվեստագետի աշխատանքների նմանությունը պատահական չի թվում: Համեմատվող երկերը արդյո՞ք նման են, որովհետև նրանց հիմքում ընկած է Մոնցայի տափաշշի պատկերի վաղ միջնադարյան հորինվածքը կամ որևէ այլ օրինակ: Բացառված չէ, որ Ռոսլինը ներշնչվել է հատկապես Վերոնայի քանդակից, քանի որ մանրանկարի հետագա վերլուծությունը բացահայտում է ուսմանական և գոթական քանդակագործության սկզբունքներին նկարչի ծանոթ լինելը:

Վաղ միջնադարյան արվեստից հայտնի մեկ ուրիշ տարածված կանոնիկ տարրերակի համաձայն, նորածին աստվածորդուն այցի եկած մոզերին կույսը դիմավորում է մանուկը գրկին՝ քարանձավի մոտ ժայռերին նստած<sup>13</sup>:

Ռոսլինից առաջ հորինված հիշյալ նախօրինակները թույլ են տալիս գաղափար կազմել, թե ինչպես է կիլիկյան վարպետը հաշվի առել իր նախորդների փորձը ու կերտել այս պատկերը:

Ռոսլինյան հրաշակերտի մյուս հատվածներում կարելի է նկատել նաև ոչ այնքան հին դեղարվեստական ավանդույթների արտացոլքը:

Ընծայարեր արքաներից ցած այստեղ ցույց է տրված նորածնի լվացման գրվազը՝ մանկաբարձուհին սպասուհու օգնությամբ կոնքի մեջ լողացնում է մանուկ Քրիստոսին, իսկ նրանց կողքին, անմիջապես Հովսեփի ներքևում նկարված է Մատթեոս ավետարանիչը՝ նստած, փաթեթի վրա ավետա-

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, J. Lafontaine—Dosogne, Les représentations..., pl. 2b.

<sup>12</sup> Տե՛ս G. Schiller, Christian Iconography, p. 108, fig. 276.

<sup>13</sup> Տե՛ս K. Wessel, Anbetung der Magier..., col. 149—150.

րանական պատմությունը շարադրելիս: Մանրանկարի ստորին մասում ներկայացված այս կերպարները շատ փոքր են վերևիների համեմատ:

«Ծննդյան» պատմության և Մատթեոսի ցուցադրումը մի նկարի մեջ, բայց շափերի հակառակ հարաբերակցությամբ, ծանոթ է Կոստանդնուպոլսի հետ կապվող մի շարք բյուզանդական ավետարանների ձևավորումներից<sup>14</sup>։ XI դ. վերջից մինչև XII դ. կեսը բնկած ժամանակահատվածում ծաղկված այդ մատյանների նկարադարձումներում, ի տարբերություն Ռոսլինյան պատկերի, ավետարանիչների (նաև Մատթեոսի) կերպարները մեծ են և ուղեկցվում են տերունական (ընդ որում և «ծննդյան») փոքր տեսարաններով: Ավետարանների հիշյալ խմբում է XII դ. սկզբի նշանավոր էբներիանուս կոչվող ձեռագիրը (Օբսֆորդ, Բողևյան գրադարան, Auct. T. inl. 1.10), որի ձևավորումներում արտահայտվել է արևելյան հուշարձանների ազդեցությունը: Ուշագրավ է, որ այս հինավուրց գրքի պատկերները կապվում են ոչ միայն Թորոս Ռոսլինի, այլև XIII դ. ուրիշ հայ ծաղկողների աշխատանքների հետ:

Այսպիսով, կրկին անգամ համոզվում ենք, թե ինչպիսի ստեղծագործական մոտեցում է ցուցաբերում Ռոսլինը, այս դեպքում արդեն կոմնիկյան դարաշրջանի գեղանկարչական ավանդույթների հանդեպ, և ինչ ձևով է վերաիմաստավորում նախորդների ձեռքբերումները:

Կիլիկյան վարպետի մանրանկարում կարելի է մատնանշել նաև XIII դ. հասարակական հոգեբանության արտահայտությունը, որն իր կնիքն է թողել պատկերադրության վրա:

Քննության առարկա հուշարձանը բացառիկ է և այն առումով, որ երեք մոզերի կողքին ի հայտ են գալիս հինգ ուրիշ կարմրազգեստ ու մոնղոլատիպ դեմքեր: Վերջիններիս մոտ տեսանելի է «թաթարն երեկ այսաւր» մակագրությունը<sup>15</sup>: Այդ ձևով Ռոսլինը կապում է արևելքից եկած մոզերի գալուստը մոնղոլ թաթարների այցելության միանգամայն որոշակի իրադարձության հետ:

Հետաքրքիր է, որ նման մոնղոլի արտաքինով մոզ-արքայի նկար տեսնում ենք նաև Սինայի ս. Կատարինե վանքի հավաքածուի մի սրբապատկերում, որը վենետիկյան վարպետների կողմից ստեղծված է 1245—1260 թթ. բնթացքում, Երուսաղեմի խաչակրաց թագավորության տարածքում<sup>16</sup>:

Ռոսլինի մանրանկարում և նույն ժամանակ կատարված խաչակրաց սրբապատկերում առկա նորությունը պատճառարանելուն օգնում է ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանի կարծիքը: Վաստակաշատ գիտնականը նշում է, որ XIII դ. սկզբին մոնղոլների արշավանքին և առհասարակ առաջխաղացմանը դուզրն-թաց նրանց մասին հորինվեցին ու տարածում գտան դանազան լուրեր, որոնք արտացոլված են Կիրակոս Գանձակեցու «Պատմության» մեջ:

<sup>14</sup> Տե՛ս C. Meredith, The Illustration of Codex Ebnerianus, A Study in Liturgical Illustration of the Comnenian Period.—Journal of the Warburg and Courtauld Institute, 29 (1966), p. 419, pl. 69.

<sup>15</sup> Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Սորժորի գրքոցը, «Բաների Մատենագարանի», № 11, 1973, էջ 127, Armenian Art Treasures of Jerusalem, Ed. by B. Narkiss, In collaboration with M. E. Stone, Historical survey by A. K. Sanjian, New Rochelle, 1979, p. 52.

<sup>16</sup> Տե՛ս K. Weitzmann, Icon Painting in the Crusader Kingdom.—Dumbarton Oaks Papers, vol. 20 (1966), p. 63—64, fig. 23.

Ըստ պատմագրի՝ հետո երկրից եկած այդ նվաճողները ներկայացվում էին որպես մոգեր, որոնք գալիս էին քրիստոնյաների վրեժը լուծելու մահմեդականներից: Ի դեմս մոնղոլների տեսնում էին «այն ժողովուրդը, որոնց թագավոր մոգերը երկնառաք պատգամով արևելքից Բեթղեհեմ էին եկել նորածին աստվածորդուն՝ Հիսուս Քրիստոսին երկրպագելու»<sup>17</sup>:

Լ. Ս. Խաչիկյանը ցույց է տալիս, որ այդ մտայնությունն է արտահայտվել նաև Ռոսլինի 1260 թ. ձեռագրի «Մենդյան» մանրանկարում: Գիտնականի կարծիքով, կիլիկյան մեծանուն վարպետը՝ «Մոնղոլներին դասելով Քրիստոսի ավետարանով սրբագործված ժողովուրդների շարքը... ընդառաջել է նոր այդ աշխարհակալների հետ համագործակցության և բարեկամության դաշինք կնքած կիլիկյան հայկական թագավորության իշխող շերտերի նկրտումներին»<sup>18</sup>:

Ութ մոգերի (նկատի ունենք երեք նվիրատու արքաներին և հինգ մոնղոլատիպ կերպարանքները) առկայությունը Ռոսլինի մանրանկարում դարմանալի ու արտասովոր երևույթ է: Անհրաժեշտ է հիշել, որ 1038 թ. Ավետարանի (Մատենադարան, № 6201) «Մենդյան» պատկերում<sup>19</sup>, ի տարբերություն XI դ. հայ գրքարվեստի այլ ստեղծագործությունների, նույնպես տեսնում ենք շեղում եկեղեցու կողմից դարերով սրբագործված կանոնից, երեք մոգերի փոխարեն ներկայացված են չորսը: Հայ մանրանկարչության հեղինակավոր գիտակներից Տ. Ա. Իզմայլովան դա բացատրում է շատ հին պատկերագրական տարբերակի ընդօրինակությամբ:

Երեք մոգերի թիվը այս տեսարանում կանոնացվել է IV դ. սկսած, իսկ մինչև այդ հայտնի են դեպքեր, երբ Արևելքից եկած արքաները պատկերվել են երկու, չորս կամ վեց հոգով<sup>20</sup>: Ամենայն հավանականությամբ հայ նկարիչը հարություն է տվել տեղական հին ավանդույթին, որը նրան կարող էր փոխանցվել վաղ միջնադարյան շրջանի հայկական հուշարձաններից կամ XI դարի մատյանների ձևավորումներից: Բացի այդ, պետք է անպայման հաշվի առնել, որ մեծահամբավ վարպետը իր ձեռքի տակ կարող էր ունենալ և նախօրինակներ կամ տեսնել արվեստի ստեղծագործություններ՝ հորինված հին դարերում, որոնք չեն հասել մեզ:

Ինչպես քիչ հետո կհամոզվենք, 1038 թ. Ավետարանի «Մենդյան» պատկերագրության հետ Ռոսլինի ծանոթությունը արտահայտվել է նաև նրա մյուս աշխատանքներում:

Մինչև այդ, մատնանշենք Թորոս Ռոսլինի մանրանկարի առանձնահատկություններից երկուսը, որոնցով նա կանխում է իրենից հետո եկող հայ և այլազգի արվեստագետների որոնումները:

Մեծ կիլիկեցու ստեղծագործությունը վերևից պսակվում է կապույտ պատածե կրիզով, որի վրա իրար հետևից շարված են վեր սլացող ութ հրեշտակներ, որոնցից միայն վեցի դեմքերն են երևում: Նկարիչը ասես փորձում է մեզ

17 Լ. Ս. Խաչիկյան, Արտադի հայկական իշխանությունը..., էջ 126—127:

18 Նույն տեղում, էջ 127, ծանոթ. 4:

19 Տե՛ս L. A. Dournovo, Miniatures arméniennes, Paris, 1960, p. 42—43; T. A. Izmailova, Le Tetraévangile illustrés arménien de 1038 (Maténadaran, № 6201). — Revue des Etudes Arméniennes, t. VII, 1970, p. 214—218, fig. 9, Idem, Армянская миниатюра XI века, М., 1979, с. 51, 59, J. Lafontaine—Dosogne, op. cit., p. 18, pl. 4a.

20 Տե՛ս T. A. Izmailova, Le Tetraévangile illustrés..., p. 216, note 37, 38.

տալ երկնակամար բառի գեղանկարչական համարժեքը և օժտում իր երկը ևս մի բացառիկ առանձնահատկությամբ:

«Մենդյան» XIV—XV դդ. բյուզանդական օրինակներում նկատելի է մսուրի գլխին ճախրող հրեշտակների թիվը ավելացնելու միտում<sup>21</sup>: Թեև 1178—89 թթ. դպտական Ավետարանի (Փարիզ, Ազգային գրադարան, դպտ. 13) մանրանկարում պատկերված են լեռան վերևում միասին ճախրող վեց հրեշտակներ<sup>22</sup>, բայց այդուհանդերձ մեզ չի թվում, որ նրանց կամարի վրա գետեղենը գաղափարը Ռոսլինը ստացել է այդ կարգի որևէ ստեղծագործությունից: Կարելի էր մտածել, որ մեծ նկարիչը այս հարցում ներշնչվել է Մոնցայի տափաշչի պատկերից (որտեղ նույնպես հորինվածքը պսակվում է աստղի կողքերից սավառնող երկու հրեշտակներով) կամ դրանց հարազատ որևէ այլ հուշարձանից:

Այդպես ենթադրելը հավանական կլիներ, թերևս նաև համոզիչ, եթե Ռոսլինի մանրանկարը աղերսվեր միայն արևելյան արվեստի երկերին: Սակայն նրա քաջատեղյակությունը արևմտյան ստեղծագործությունների պատկերագրությանը թույլ է տալիս մեզ հետաքրքրող մանրամասնը փնտրել եվրոպական հուշարձանների կանոնիկ առանձնահատկությունների մեջ:

Ե դեմս Վերոնայի վերը նշված քանդակի, մենք առիթ ունեցանք տեսնելու, որ «Մոգերի երկրպագությունը» հանդես է գալիս նաև ումանական տաճարների արտաքին հարդարանքում: Այդ թեման հայտնվում է XII—XIII դարերի գերմանական, ֆրանսիական եկեղեցիների ճակատամասում ևս:

XII դարի վերջի Ժերմինյի-Լ'էրզամթի (Ֆրանսիա), Սաքսոնիայում Ֆրայբերգի (1220 կամ 1230 թթ.) տաճարներում, ինչպես և Տրիրի 1260 թ. հետո կառուցված Լիբֆրաունկիրխենյի քանդակներում մանկան հետ գահին նստած Մարիամը գրավում է պատկերի կենտրոնը, նրա մի կողմում մոգերն են, իսկ մյուս կողմում՝ այլ կերպարներ, բացառությամբ հովիվների, որոնք ներկայացված չեն<sup>23</sup> (ուշագրավ է Ֆրայբերգի քանդակը, որտեղ այդ մասում հանդես են գալիս ումանական արվեստին ոչ բնորոշ, բայց արևելյան, մանավանդ բյուզանդական հուշարձաններին հատկանշական, Հովսեփն ու հրեշտակը)<sup>24</sup>:

Այս ումանական ստեղծագործությունների թվարկումը մեզ համար էական է հատկապես այն իմաստով, որ թե դրանց և թե շատ ուրիշ գոթական եկեղեցիներում ճակատամասի քանդակները զարդարված են պայտածև կամարների վրա տեղադրված հրեշտակների շարքերով, անգամ եթե ձևավորումները վերաբերում են այլ թեմաների<sup>25</sup>:

Ըստ երևույթին ումանական արվեստից եկող կանոնիկ առանձնահատ-

<sup>21</sup> Տե՛ս G. Ristow, Geburt Christi..., col. 657—658.

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, J. Lafontaine—Dosogne, Les représentations..., p. 20, pl. 5a.

<sup>23</sup> Տե՛ս G. Schiller, Christian Iconography, p. 108, fig. 277—279.

<sup>24</sup> Տե՛ս A. Weis, Drei Könige.—In: Lexikon der christlichen Ikonographie, Bd. 1, Rom, Freiburg, Basel, Wien, 1968, col. 545—546, Abb. 4, H. Magrius, Zu Fragen der Ikonographie der Goldenen Pforte.—In: Kunst des Mittelalters in Sachsen, Festschrift Wolf Schubert, Dargebracht zum sechzigsten Geburtstag am 28. Januar 1963, Weimar, 1967, S. 198—221.

<sup>25</sup> Տե՛ս E. Mâle, The Gothic Image. Religious Art in France of the Thirteenth Century, New York, 1958, fig. 111, 127, 129, 131, 134, 174, 176, 178, 179, Idem, Religious Art. From the Twelfth to the Eighteenth Century, New York, 1958, fig. 10, 22

կությունն է հուշել Ռոսլինին ստեղծելու իր պատկերի գեղանկարչական համապատասխան մանրամասնը: Քանդակագործական սկզբունքը ձևափոխելով, ճարտարապետական զարդը «թարգմանելով» նկարչական լեզվի միջոցներով, երկնային էակների խմբով պսակելով իր երկը, կիլիկյան վարպետը մի նոսրինքնատիպ երանգ է հաղորդում «Մննդյան» մանրանկարին և ուրիշ մի ամուր կապի մեջ առնում վերին ու ստորին կերպարները:

Պատկերը ընդգրկվում է յուրահատուկ ձվաձև շրջանակի մեջ, որի կենտրոնը Մարիամն է մանկան հետ: Այս շրջանակը կազմվում է երկնականարի հրեշտակներից, հովիվներից, մոզերից, Հովսեփից, Մատթեոս ավետարանչից, նորածնին լողացնող կանանցից:

Մանրանկարի հորինվածքում շրջանի գաղափարը դնելը արդյոք չի գալի՞ս Դիոնիսիոս Արիսպագացու երկնային հեերարխիային վերաբերող գրվածքից, որտեղ ասվում է, թե բոլոր երկնային դասերը, արարածները Աստծու գահի շուրջը կազմում են մեծ լուսավոր շրջաններ և որքան նրանք մոտենում են բուն լույսի աղբյուրին, այնքան նրանց փայլն ավելանում է: Հիշարժան է, որ հատկապես գրական այս ստեղծագործությանն է դիմում ֆրանսիական միջնադարյան արվեստի հմուտ գիտակ է. Մալր ումանական, գոթական քանդակներում պայտածե կամարի վրա սերովբեների և քերովբեների ներկայությունը բացատրելու համար<sup>26</sup>:

Ինչպես կտեսնենք ավելի ուշ, եվրոպական արվեստի հետ Ռոսլինի պատկերների առնչությունները հանդես են գալիս բավական հաճախ: Այդօրինակ կապերի վերաբերյալ հետաքրքիր մտորումների առիթ է տալիս նաև խնդրո առարկա մանրանկարում հովիվներին ավետող հրեշտակը: Մարիամի գլխավերևում պատկերված, նա իր կենտրոնական դիրքով անսովոր, նոր երևույթ է «Մննդյան» թեմայի կատարման կանոնիկ առանձնահատկությունների տեսանկյունից:

Միջնադարյան արվեստի միայն մեկ օրինակում, այն էլ իտալական գեղանկարչության պատմությունից է հայտնի այդպիսի բացառիկ տեղադրություն ունեցող ավետող հրեշտակի կերպարը: Խոսքը վերաբերում է Բոլոնիայում (Ակադեմիա, № 316) պահվող XIII դ. վերջին կամ XIV դ. սկզբին ստեղծված սրբապատկերին<sup>27</sup>:

Սա այն դեպքերից մեկն է, երբ Ռոսլինը իր ձևաքերումներով առաջ է անցնում նախավերածնության արվեստագետներից:

Մարիամի հետ միևնույն առանցքի վրա գտնվելով, ավետող հրեշտակը ոճական որոշակի խնդիր է իրականացնում՝ նրա միջոցով նկարիչը շեշտում է, ևս մի անգամ ընդգծում կույսի ու մանկան կերպարների առաջնայնությունը մյուս գործող անձանց համեմատ:

Մարիամի և երեխայի կարևորությունը հաղորդված է ոչ միայն նրանց կենտրոնական դիրքով: Մարիամը ավելի մեծ է պատկերված, քան մյուս կերպարները: Նրա և նորածնի նշանակությունը առանձնացված է այլ ոճական միջոցներով ևս: Այս երկուսի ընդհանուր կոնաձև կամ բրդաձև եզրանկարը կրկնված է քարանձավի և սպա երկնականարի սլացիկ ձևերով, հովիվների ու մոզերի ուղղվածությունը և շարժումներով:

<sup>26</sup> St'« E. Mâle, The Gothic Image..., p. 8.

<sup>27</sup> St'« G. Millet, Recherches..., p. 105, fig. 46.

Թուսլինի նկարի այս թաքուն երկրաչափականությունը խիստ բնորոշ է նրա աշխատանքանակին և ի հայտ է գալիս մեզ հասած նրա առաջին իսկ մանրանկարներում: Պատկերի տարրեր մասերի կուռ փոխկապակցությունը ոչ միայն ապահովում է ստեղծագործության ութմիկ ներքին կառուցվածքը, այլև վկայում է հեղինակի՝ իրրև փայլուն գծանկարչի ձիրքը:

Ոճական առումով Մարիամի կերպարը այստեղ կարող է դիտվել որպես Թուսլինի աստվածամայրերից լավագույնը:

Նկարիչը կարծես կույսի գեմքը պատկերել է կանացի կատարյալ գեղեցկության մասին իր ունեցած պատկերացումների համաձայն: Նրա ճաշակը այստեղ, թվում է թե, արձագանքում է դասական անտիկ շրջանի վարպետների ըմբռնումներին: Թեև Մարիամի դեմքը աչքի է ընկնում իր շեշտված հայկական ազգային գծերով, բայց, այդուհանդերձ, հնարավոր չէ ձերբազատվել այն տպավորությունից, որ նկարչին կարող էր նախօրինակ ծառայել նաև հելլենիստական ժամանակաշրջանի արձանագործության որևէ նմուշ:

Թուսլինի կողմնորոշումը անտիկ արվեստի ավանդույթների ու շափանիչների կողմը կարող էր պայմանավորված լինել կոմենիյան և պալեոլոգյան բյուզանդական գեղանկարչության մեջ դիտվող հելլենիստական սկզբունքների վերածնությունը<sup>28</sup>: Չպետք է բացառել նաև հայ միջնադարում երբեք չմարող հետաքրքրությունը անտիկ քաղաքակրթության նկատմամբ:

Թուսլինյան այս երկը բացառիկ է ոչ միայն իր գեղարվեստական արժանիքներով, այլև պատմական, ազգագրական տեսանկյունից. հովիվների և մոզերի գլխարկների ձևերը, զգեստի առանձին մանրամասները գաղափար են տալիս XIII դարի տարազների վերաբերյալ<sup>29</sup>:

Թուսլինի «Մենդյան» թեմայով հորինված մեզ հասած երկրորդ աշխատանքն է նրա ծաղկած ամենաշքեղ ձևագրի՝ 1262 թ. Սերաստիայի Ավետարանի (Բալթիմոր, Վոլթերս Պատկերասրահ, 539) մանրանկարը: Այս մատյանը նկարիչը ձևավորել է Կոստանդին կաթողիկոսի եղբորորդի Քորոս քահանայի պատվերով:

Մեզ հետաքրքրող մանրանկարը ներկայացված է Ղուկասի բնագրում (էջ 208 բ) և աչքի է ընկնում իր համառոտ պատկերագրությամբ: Այն ծավալվում է երկու հանդիպակաց էջերի վրա, որոնցից մեկի վրա պատկերված է բարանձավի մեջ պատկած Մարիամը, նրա կողքին մանուկը և կենդանիները, ձայնում նկարված է մտածկոտ դիրքով նստած, կոնակը մյուսներին դարձրած Հովսեփը, իսկ աջից ցույց են տրված հովիվները:

Մանրանկարի բացառիկ հատկանիշն է այն, որ հովիվները գառներ են գրկել, այսինքն՝ մոզերի նմանողությամբ բերել են իրենց ընծաները:

Նախրատու արջաները մանրանկարում ներկա չեն:

<sup>28</sup> Տե՛ս K. Weitzmann, Eine spätbyzantinische Verkündigungssikone des Sinai und die zweite byzantinische Welle des 12. Jahrhunderts.—In: Festschrift Herbert von Einem, Berlin, 1965. S. 299—312, Idem, The Classical in Byzantine Art as a Mode of Individual Expression.—In: Byzantine Art—An European Art. Lectures, Athens, 1966, p. 166—170, E. Kitzinger, The Hellenistic Heritage in Byzantine Art Reconsidered.—XVI. Internationaler Byzantinistenkongress, Wien. 4—9. October, 1981, p. 663—665, 669—670.

<sup>29</sup> Տե՛ս S. Der Nersessian, Miniatures ciliciennes, p. 512—513.

Այստեղ ընդգրկված է նաև սրնգահար-հովիի կերպարը, որը շատ տարածված է «Մենդյան» հայկական մանրանկարներում: Վերջինս իր գեմբը շրջել է և նայում է դիմացի էջի վրա ներկայացված հրեշտակին, որի ներքևում, լուսանցքի տարածության մեջ նկարված են ոչխարների, այծերի հոտերը<sup>30</sup>:

Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով այս պատկերը «Մենդյան» թեմայի նոր, մինչ այդ անծանոթ մեկնաբանությունն է: Անվանի գիտնականը նշում է, որ հովիվների երկրպագությունը ի հայտ է գալիս վաղ քրիստոնեական շրջանում պաղեստինյան (այսինքն՝ Մոնցալի.-Լ. Չ.) վերահիշյալ տափաշշի վրա, որտեղ մանուկը գրկին նստած կույսը մի կողմից ընդունում է երեք մոզերի ընծաները, իսկ նրա մյուս կողմից ցույց են տրված նվերներ շունեցող, աստղն ու հրեշտակին մատնանշող երեք հովիվները:

Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, ավելի ուշ ստեղծված բյուզանդական ձեռագրերում, օրինակ Վատիկանի գրադարանի № 1156 և Ֆլորենցիայում կաուրենցյան գրադարանի Plut. VI, 23 մատյաններում առանձին մանրանկարներ պատկերում են հովիվներին սկզբից՝ հրեշտակին ունկնդրելու պահին, հետո մտերի և կույսի մոտ կանգնած, բայց այդ ստեղծագործություններում նրանք ներկայացված են առանց ընծաների: Վաստակաշատ գիտնականը եզրակացնում է, որ ոստինյան այս երկը ցուցադրում է ավետարանական բնագրի ազատ մեկնաբանությունը<sup>31</sup>:

Մեկ այլ ուսումնասիրողի՝ Փ. Լաֆոնտեն-Դոզոնի կարծիքով այդ պատկերը կարող էր վկայել խաչակիրների միջոցով եկած արևմտյան ազդեցության մասին, եթե 1038 թ. հայկական Ավետարանում (Մատենադարան, № 6201) շահնդիպեր նույն մոտիվը՝ գառը կրող հովիի կերպարը, որը վկայում է տեղական ազգային ավանդույթի մասին<sup>32</sup>:

Անհրաժեշտ է նկատել, որ Ռոսլինի արվեստում օրինաչափ կերպով մերթ ընդ մերթ երևան է գալիս կողմնորոշումը XI դ. հայ գրքարվեստի, հատկապես, Անիի դպրոցի սկզբունքների վերածնման նկատմամբ:

Կիլիկյան նկարչի պատկերի անկրկնելիությունը պարզող առանձնահատկությունների հետ մեկտեղ այստեղ առկա են մանրամասներ, որոնք հնարավորություն են տալիս կամրջելու հուշարձանը նախընթաց շրջանի հայկական և այլ ժողովուրդների ստեղծագործությունների հետ:

Մարիամի մի ձեռքը հանգչում է ծնկին, իսկ մյուսը բարձրացված է կրծքին:

Այս տարբերակը միջնադարյան արվեստում հանդես է գալիս ոչ թե XII դ. սկսած, ինչպես կարծում է Գ. Միլեն<sup>33</sup>, այլ շատ ավելի վաղ: Չնայած թեթևակի բարձրացրած Մարիամին տեսնում ենք VI—VII դդ. պաղեստինյան սրբաբանի (Հոռոմ, Վատիկանի գրադարան, Սանկտա Սանկտորում մատուռ) նկարում, Սինայի VII կամ IX—X դդ. սրբապատկերներում<sup>34</sup>:

<sup>30</sup> Տե՛ս S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Walters Art Gallery, Baltimore, 1974, pl. D, fig. 110—111.

<sup>31</sup> Տե՛ս նույն աեղում, էջ 22:

<sup>32</sup> Տե՛ս J. Lafontaine—Dosogne, Les représentations..., p. 18, pl. 4a; T. A. Ismailova, Le Tétravévangile illustré, p. 214—218, fig. 9.

<sup>33</sup> Տե՛ս G. Millet, Recherches..., p. 106, 107.

<sup>34</sup> Տե՛ս K. Weitzmann, The Monastery of Saint Catherine at Mount Sinai, Thecons, Princeton, New Jersey, 1976, vol. 1, p. 73—75, pl. XXX, fig. 14.



Այս պատկերագրական տիպը տարածում է գտնում XII դարում, օրինակ, Գեյր էս-Սուրյանի ասորական վանքի և Նովգորոդի Սպաս ներեդիցայի (1199 թ.) որմնանկարներում, Բրիտանական թանգարանի հունական մատյանի (Հարլի, 1810) և դալցրուրգյան մի ձեռագրի (Մյունխեն, Բավարական պետական գրադարան, լատ. ձեռ. 15903) մանրանկարներում<sup>35</sup>:

1226 թ. ասորական Ավետարանի (Միդիաթ, ասորական-օրթոդոքսալ եպիսկոպոսություն), XIII դ. երկրորդ քառորդին վերաբերող խաչակրաց ձեռագրի (Պերուչա, Քաղաքային գրադարան, 6) և 1232 թ. Քարգմանչաց Ավետարանի (Սատենադարան, № 2743) մանրանկարները վկայում են, որ ռոսլինյան դարաշրջանում հին ավանդույթը շարունակում էր պահպանվել նաև Արևելքում<sup>36</sup>:

Հիշարժան է, որ Քարգմանչաց Ավետարանի ու Ռոսլինի մանրանկարների համեմատությունը երևան է բերում մի շարք բնահանուր նախօրինակներ, որոնք ժամանակին գործածվել են մեծ կիլիկեցու և նրա ավագ ժամանակակցի՝ Գրիգոր ծաղկողի կողմից:

XIII դարի հայ գրքարվեստի այդ երկու տաղանդավոր վարպետների երկերի առնչությունները կարելի է բացատրել Հռոմկլայի գրչատան XII դարի երկրորդ կեսի կամ XIII դարի սկզբի ստեղծագործությունների՝ Կարինում (որտեղ ենթադրում են, որ ծաղկվել է Քարգմանչաց Ավետարանը) հայտնի լինելու պարագայով: Բացառված չէ նաև հակառակը՝ կարնեցի արվեստագետների աշխատանքների օգտագործումը Ռոսլինի կողմից, որ պատճառաբանվում է կենտրոնական Հայաստանի գեղանկարչությունը հարազատ մնալու նրա ձրգտումով:

«Մենդյան» թեմայով հորինված Ռոսլինի երկերի շարքում բոլորովին շուտամնասիրված օրինակներից է 1268 թ. Մալաթիայի Ավետարանի (Սատենադարան, № 10675) մանրանկարը<sup>37</sup>: Մեծաքանակ լուսանցազարդերով, փառահեղ պատկերներով ծաղկված այս մատյանը ստեղծվել է Կոստանդին Բարձրբերդցու հանձնարարությամբ ի վայելումն Հեթում Ա. թագավորի թոռ Հեթումի, որն այդ ժամանակ, ինչպես նկատում է Լ. Ս. Խաչիկյանը, իր կյանքի երեք տարին նոր բոլորած մի մանուկ էր, բայց 1288 թ. պիտի ժառանգեր Կիլիկիայի թագավորական գահը<sup>38</sup>:

Մալաթիայի Ավետարանի «Մնունդը» գտնվում է Ղուկասի բնագրում (էջ

<sup>35</sup> Տե՛ս W. F. Volbach, *J. Lafontaine—Dosogne, Byzanz und die christliche Osten*, P. K. G., III, Berlin, 1968, Abb. 394. *J. Leroy, Le décor de l'église du couvent des syriens au Ouady Natroun (Egypte)*.—Cahiers Archéologiques, t. 23 (1974), p. 157, 164, 166—167, fig. 9, 11, *G. Millet*, op. cit., p. 100, 148, *G. Swarzenski, Die Salzburger Malerei von den ersten Anfängen bis zur Blütezeit des romanischen Stils*, Leipzig, 1908, Tafelband, Taf. LII, Abb. 158.

<sup>36</sup> Տե՛ս *J. Leroy, Les manuscrits syriaque à peintures conservés dans les Bibliothèques d'Europe et d'Orient*, Paris, Album, pl. 102, fig. 1, *H. Buchthal, Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, Oxford, 1957, pl. 58b; *Л. Б. Чугасян, Иконография миниатюры «Рождество» Евангелия Таргманчац*.—В кн.: Армянское искусство, т. 2, Ереван, 1984, с. 82—85, рис. 47.

<sup>37</sup> Տե՛ս Sotheby and Co., *Catalogue of Twenty-three Important Armenian Illuminated Manuscripts*, London, 1967, p. 8—9.

<sup>38</sup> Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Քորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը, «Գարուն», 1976, № 4, էջ 60:



Նկ. 2

187ա): Ե՛վ այս պատկերը, և՛ հուշարձանի ձևափորման մյուս մասերը առանձնահատուկ արժեք են ներկայացնում: Մալաթիայի Ա. փետարանը Քորոս Թոսլինի ստորադրութունը կրող վերջին ձեռագիրն է, և այդ մատչանում է ըստ ամենայնի գրանորվել արվեստագետի՝ տարիների ընթացքում ամբարած հմտութունը, հզկվել ու բյուրեղացել են նրա աշխատանքանակի վարպետութունը, ավելացել կենսափորձը: Այս աննման ձեռագրի մեջ յուրաքանչյուր նկարազարդում ուրույն կերպով պատմում է մեծ նկարչի մասին, ներկայացնում նրան որպես իմաստուն փիլիսոփայի, կյանքի դառնութունն ու քաղցրութունը մինչև վերջ ճաշակած խորունկ արվեստագետի:

Մալաթիայի Ավետարանի «Մենդյան» իրրև բազմակերպար մանրանկար ընդհանրացնում, ի մի է բերում հեղինակի իմացությունը խնդրո առարկա թեմայի պատկերագրություն վերաբերյալ (նկ. 2):

Նկարագարգլոզ բնագրի համաձայն Մարիամն ու նորածին Քրիստոսը ցույց են տրված քարանձավի ներսում, որից աչ տեսանելի են ընծաներ բերած երեք մոզերը: Վերջիններս ներկայացված են մի գծի վրա՝ մեկը մյուսի տակ: Ավանդության համաձայն նրանք տարբեր տարիքներ ունեն. ամենաներքևի արքան ծերունի է, կենտրոնում գտնվողը միջին տարիքի, իսկ վերևում կանգնածը երիտասարդ: Զախից, ստորին անկյունում մտածմունքի մեջ, մեջքով դեպի մյուս կերպարները նստած է Հովսեփը: Նրանից աչ, ավելի բարձր պատկերված Մարիամը ցույց է տրված իր առջև նայելիս, ձախ ձեռքը դրած ծնկին, իսկ աչք բարձրացրած դեպի պարանոցը, կարծես պատրաստվելով գլուխը հենել ձեռքին:

Հովսեփի կողքին ներկայացված է մանկան լվացման դրվագը. կանգնած մի կին սափորով ջուր է լցնում կոնքի մեջ, որտեղ ցույց է տրված նորածին Քրիստոսը, իսկ մեկ ուրիշը՝ հավանաբար մանկաբարձուհին, պահում է վերջինիս ջրի մեջ: Մոզերի վերևում տեսանելի են շորս հրեշտակներ, որոնցից երեքը, դատելով նրանց ձևերի շարժումներից, երկրպագում են երկնային լույսի շիթը՝ նրա մեջ տեսնելով աստվածային ներկայությունը, իսկ մեկը՝ թեքվելով փոքրին աչ, բարի ավետիսն է հայտնում երկու հովիվներին: Այս երկուսը հանդես են գալիս մոզերի կողքին, մանրանկարի աչ մասում:

Ստեղծագործության նկարագրությունից հետևում է, որ այստեղ գործ ունենք «Մենդյան» թեմայի զարգացած պատկերագրության հետ, որը միջնադարյան արվեստում ձևավորվել է Ռոսլինի աշխատանքից շատ առաջ:

Պատկերի տրամաբանական կենտրոնը կազմում են Մարիամն ու նորածինը, և մյուս բոլոր կերպարները, օգակելով քարանձավի մեջ գտնվող մորն ու մանկանը, կարծես պատվում են նրանց շուրջ: Այս նույն սկզբունքը, բայց բոլորովին այլ կերպ, նկարիչը, ինչպես տեսանք, իրականացրել էր դեռևս 1260 թ. Ավետարանի «Մենդյան» տեսարանում:

Ի տարբերություն հիշյալ ստեղծագործության ներքին շարժուն ուժի՝ Ռոսլինը այստեղ հաղորդում է անդորրի, հավասարակշռության տրամադրություն, որ ճառագում է առաջին հերթին Մարիամի՝ թիկն տված, ընդարմացած դիրքից: Հիշարժան է նրա աչ ձևերի շարժումը, որը տարբերում է կույսի կերպարը բյուզանդական և արևելաքրիստոնեական այլ ժողովուրդների «Մենդյան» մեջ նկարված աստվածամոր տիպերից:

Դժվար չէ նկատել, որ Տրապիզոնի Ավետարանի (Վենետիկ, Մխիթարյան միարանության գրադարան, № 1444) և Մուզնու Ավետարանի (Մատենադարան, № 7736) «Մենդյան» պատկերում<sup>39</sup> և Ռոսլինի ստեղծագործության մեջ Մարիամը նույն շարժումն է անում՝ ձևերի դաստակը ծալելով, մոտեցնում է վզին:

Համեմատության համար բերված այս երկու հուշարձանները համարվում են Անիի XI դարի գրքարվեստի նմուշներ: Ռոսլինի մանրանկարի և դրանց ընդհանրությունները պատահական չեն: Մեծ արվեստագետի առաջին իսկ աշխա-

39. Տե՛ս Մ. Ճանաչան, Հայկական մանրանկարչություն, Վենետիկ, 1966, պատկ. 19, T. A. Izmailova, Le cycle des fêtes du Tetraévangile de Mougna (Maténadaran, № 7736).—Revue des Etudes Arméniennes, 1969, t. VI, pl. 11.

տանքում՝ 1256 թ. Զեյթունի Ավետարանում հանդիպում են բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք գալիս են Անիի մանրանկարչությունից: Թե՛ այստեղ և թե՛ անդրանիկ ստեղծագործություններում Քորոս Ռոսլինը վերածնում է Բագրատունյաց մայրաքաղաքի ձեռագրերի պատկերազարդման փառավոր ավանդույթները:

Սակայն կիլիկեցի ծաղկողի մանրանկարում Անիի պատկերների Մարիամը նույնությամբ ընդօրինակված չէ: Անիի մատյանների ձևավորումներում կույսի ձևերը բողբոջված է զգեստի կտորով, իսկ Ռոսլինի մանրանկարում այն բաց է:

Քորոս Ռոսլինից առաջ կատարված երկերից միայն մեկում՝ Յլորենցիայի Ռիկարդինա գրադարանի (Ms. 323) Սաղմոսագրքի «Մենդյան» պատկերում է հանդիպում այդ ձևով նկարված Մարիամը<sup>40</sup>: Խաչակիրների գրքարվեստի հայտնի գիտակ Հ. Բուխթալի կարծիքով հիշյալ ձեռագիրը ստեղծվել է Երուսաղեմում 1235—1237 թթ. Ֆրիդրիխ 2-րդ կայսեր համար՝ նրա և անգլիական արքայազուսար Իզաբելլայի պսակադրության առթիվ: Որպես ամուսնական նվեր նախատեսված այս մատյանի ծաղկողը հավանաբար եղել է սիցիլիացի: Ուսումնասիրողները գտնում են, որ խաչակիրների Սաղմոսագրքի ձևավորումներում արտահայտվել է գերմանական գրքարվեստի ազդեցությունը և բյուզանդական նախօրինակների իմացությունը:

Ռիկարդինա գրադարանի ձեռագրի Մարիամի ոչ սովորական շարժումը կարող էր ծնվել Կիլիկիայում կամ Երուսաղեմում Անիի XI դ. մանրանկարների և XII դ. բյուզանդական նախօրինակների «խաչասերումից»: XII դարի բյուզանդական նման աշխատանքներ կարող էին լինել Աթոս լեռան (Հունաստան) Պանտելեյմոն վանքի № 6 ձեռագրի մանրանկարը<sup>41</sup>, Մոնրեալի (Սիցիլիա) տաճարի խճանկարը<sup>42</sup> և այլ երկեր:

Մարիամը այս պատկերներում պատկած է, գլուխը հենած մի ձեռքին, իսկ մյուս ձեռքը դրած ծնկին: Մոնրեալի խճանկարի առիթով Օ. Գեմուսը նշում է, որ այդ դիրքը բնորոշ է XII—XIII դդ. անցումային շրջանի հուշարձաններին<sup>43</sup>:

XII դարում քննվող առանձնահատկությունը հանդիպում է նաև բյուզանդական արվեստի ազդեցությամբ ստեղծված անգլիական Վինչեստրի Աստվածաշնչի (Վինչեստրի տաճարի գրադարան) 1150—1180 թթ. ձևավորման մեջ<sup>44</sup>, իսկ ավելի ուշ, այն նկարազարդող անգլիացի մանրանկարչի մեկ ուրիշ աշխատանքում՝ Սիգենայի (Իսպանիա) Սալա Կապիտոլարե տաճարի «Մենդյան» XIII դ. սկզբի որմնանկարում, որը ոչնչացել է մեր դարի 30-ական թվականներին: Սիգենայում անգլիացի վարպետի՝ սիցիլիա-բյուզանդական տարրեր ունե-

<sup>40</sup> Տե՛ս H. Buchthal, *Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, p. 42—43, pl. 52a. *A History of the Crusades*, General editor Kenneth M. Setton, vol. IV, *The Art and Architecture of the Crusader States*, Edited by Harry W. Hazard, Wisconsin, 1977, p. 129—130, fig. XL1a.

<sup>41</sup> Տե՛ս S. M. Pelekanidis, P. C. Christou, Ch. Tsioumis, S. N. Kadas, *The Treasures of Mount Athos, Illuminated Manuscripts*, vol. 2, Athens, 1975, fig. 305

<sup>42</sup> Տե՛ս O. Demus, *The Mosaics of Norman Sicily*, London, 1949, pl. 65b.

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 273:

<sup>44</sup> Տե՛ս C. M. Kauffmann, *Romanesque Manuscripts 1066—1190. A Survey of Manuscripts Illuminated in the British Isles*, London, 1975, p. 108—111, fig. 239.

ցող ստեղծագործությունները ուղղակի ծագում են Մոնրեալի պատկերներից<sup>45</sup>։ Այս երկերը և Մարիամի նույն կանոնիկ տիպն ունեցող մատավորապես 1225 թ. թյուրինգիայում կամ Սաքսոնիայում ծաղկված ձեռագրի մանրանկարը<sup>46</sup> վկայում են Միջերկրական ծովի ավազանի և նույնիսկ ավելի հեռու ընկած երկրների արվեստում հիշյալ պատկերագրական նախօրինակի տարածված լինելու մասին։

Թվարկված դեղանկարչական նմուշները օգնում են պարզելու, թե Անիի մանրանկարներից բացի ո՞ր պատկերների օգտագործումով կարող էին առաջանալ Ռիկարդինայի Սաղմոսագրքի և Ռոսլինի մատյանի ձևավորումները։

Կիլիկիայի հայկական թագավորության կապերը Միջերկրական ծովի ավազանի երկրների և Արևելքում հաստատված խաչակիրների հետ ըստ երևույթին նպաստավոր հնարավորություններ էին ընձեռում Եվրոպայի ու կիլիկեցի արվեստագետների շփումների համար։ Ամենայն հավանականությամբ, Ռոսլինի տեղյակությունը արևմտյան հուշարձաններին պայմանավորված է այդ կարգի առնչություններով։

Ուշագրավ է, որ Ռիկարդինայի Սաղմոսագրքի նկարագործումների հետ են առնչվում Ռոսլինի ոչ միայն այս, այլև ուրիշ մանրանկարները։ Խաչակիրների գրքարվեստի այդ օրինակը աղերսվում է նաև հայկական այլ մատյանների հետ<sup>47</sup>։

Ռիկարդինայի Սաղմոսագրքի և Ռոսլինի ձեռագրի պատկերներում Մարիամի բացառիկ շարժումը ավելի մտերմիկ զգացողություն է հաղորդում աստվածամոր կերպարին, ևս մեկ անգամ հուշելով նրա հետձենդաբերության թույլ վիճակը։

Տարբեր ձևերով հաղորդված կույսի հոգնած դիրքը միջնադարյան նկարիչների համար ակնարկ էր, որ Քրիստոսը մարդ է՝ ծնված կնոջից<sup>48</sup>։ Գիտնականները ենթիմաստ են տեսնում նաև «Մենդյան» տեսարանի մյուս կերպարների մեջ։ Կոնակը բոլորին դարձրած Հովսեփի դիրքը Ա. Գրաբարի կարծիքով պատկերագրողների ակնարկն է այն մասին, որ Քրիստոսի իրական հայրը Հովսեփը չէ<sup>49</sup>։

Հետևաբար Ռոսլինը կանոնիկ սովորական և ոչ սովորական ձևերով տալիս է Մարդեղության գաղափարի հակասական կողմերը։ Ասվածին է վերաբերում նաև Քրիստոսի առաջին լողացման դրվագը, որը հուշում է մանկան մարդկային նկարագրի մասին<sup>50</sup>։

Արվեստագետների կատարած ուսումնասիրություններից պարզվում է, որ լվացման հատվածի պատկերագրությունը, կապված նորածնի դիրքի հետ, լինում է երեք տիպի։ Դրանցից առաջինը ցուցադրում է մանկանը կոնքի մեջ, երկրորդը երեխային ներկայացնում է մանկաբարձուհու ծնկներին կանգնած,

<sup>45</sup> Տե՛ս O. Demus, Romanesque Mural Painting, New York, 1970, p. 52, 54, 57, 119, 124, 487, fig. 224.

<sup>46</sup> Տե՛ս G. Schiller, Christian Iconography, fig. 178.

<sup>47</sup> Տե՛ս Լ. Զալգասզյան, Մի էջ Գրիգոր ծաղկողի ժառանգությունից, «Էրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 2, էջ 87։

<sup>48</sup> Տե՛ս G. Schiller, Christian Iconography, p. 62.

<sup>49</sup> Տե՛ս A. Grabar, Christian Iconography, A Study of Its Origins, Princeton, New Jersey, 1968, p. 130.

<sup>50</sup> Տե՛ս G. Schiller, Christian Iconography, p. 64.

իսկ երրորդի համաձայն կինը պահում է նորածնին երկու ձևերով, պատրաստ ընկղմելու նրան ջրի մեջ<sup>51</sup>:

Այս դասակարգման համապատասխան լվացման դրվագը Ռոսլինի մանրանկարում վերաբերում է առաջին տիպին: Այն, այսինքն կոնքի մեջ ուղիղ կանգնած մանկան պատկերով կանոնիկ տարբերակը, որպես օրենք հարատևում է վաղ և միջին բյուզանդական շրջանում, ընդհուպ մինչև XII դարի վերջը<sup>52</sup>:

Օ. Դեմուսի կարծիքով, կոնքի մեջ նստած նորածինը XII դարի վերջից սկսած ավելի հաճախ է հանդիպում «Մենդյան» թեման ներկայացնող ստեղծագործություններում, քան մինչև այդ<sup>53</sup>:

Ուշագրավ է, որ թե՛ այս դրվագը և թե՛ մանկաբարձուհու ջրի շերմաստիճանը փորձելու պահը, որպես մոտիվ ծագում են անտիկ արվեստից<sup>54</sup> և դարից դար ընդօրինակվելով գալիս հասնում Ռոսլինի մանրանկարին: Ջրի տաքությունը ստուգելու մոտիվը XIII դարում գրավում է ոչ միայն մեծ նկարչին, այլև նրան գրեթե ժամանակակից 40-ական թվականների բյուզանդական որմնանկարիչներից ոմանց<sup>55</sup>:

Միջնադարյան արվեստում սակավ է պատահում, որ մանկաբարձուհին նկարված լինի նորածնի հետևից ոչ լրիվ, այսինքն այնպես, ինչպես ցույց է տրված ռոսլինյան պատկերում: Կանոնիկ այդ առանձնահատկությունը ունեցող հուշարձաններից են Փարիզի Ազգային գրադարանի XI դարի Ավետարանի (հուն. 74), Բարսեղ 2-րդ կայսեր նույն ժամանակի Հայսամավուրբի (Վատիկանի Առաքելական գրադարան, հուն. 1613) մանրանկարները, 1100 թ. Դաֆնիի խճանկարը, XIII դ. սրբապատկերի բեկորը (Արևմտյան Բեռլին, Պետական թանգարաններ)<sup>56</sup>:

Այս հազվագյուտ պատկերազրական հատկանիշը ունեցող երկերի թվարկումը թույլ է տալիս համոզվելու, որ Ռոսլինը կողմնորոշվում էր նաև դեպի բյուզանդական արվեստի առավել ընտիր հուշարձանները, օգտագործում նրանց հեղինակների գեղարվեստական ձևաբերումները:

Մանկաբարձուհուն մանուկ Քրիստոսի կոնակից տեղադրելը և կիսով շափ պատկերելը ոճական իմաստով ծառայում է խորություն ստեղծելու նպատակին: Նույնը կարելի է ասել նաև իրար տակ զետեղված մոզերի կամ հովիտների վերաբերյալ:

Ուշագրավ է, որ երեք արքաների այսօրինակ ներկայացումը բավական հազվադեպ է և ծանոթ է ոչ կոմնիսյան դարաշրջանի բյուզանդական արվեստի նմուշներից, մասնավորապես Հագուդերայի (Կիպրոս) Պանագիա տու Արա-

<sup>51</sup> Տե՛ս S. Katopissi-Verti, Die Kirche der Hagia Triada bei Kranidi in der Argolis (1244), München, 1975, S. 94—95, G. Ristow, Geburt Christi, col. 652—653.

<sup>52</sup> Տե՛ս S. Katopissi-Verti, Die Kirche der Hagia Triada..., S. 94.

<sup>53</sup> Տե՛ս O. Demus, The Mosaics of Norman Sicily, p. 273.

<sup>54</sup> Տե՛ս S. Katopissi-Verti, Die Kirche der Hagia Triada..., S. 93—96.

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 93—94, գծանկար 14, տախտ. 4—5:

<sup>56</sup> Տե՛ս G. Millet, Recherches..., fig. 100, P. Wilhelm, Geburt Christi, S. 97—98, Abb. 1, W. F. Volbach, J. Lafontaine—Dosogne, Byzanz und die christliche Osten..., Abb. 18, A. B. Банк, Прикладное искусство Византии IX—XII вв., М., 1978, рис. 97.

կու վանքի 1192 թ. որմնանկարից<sup>57</sup>: Ռոսլինը այդ միջոցը կիրառում է այլ պատկերներում ևս<sup>58</sup>:

Նվիրատու մոզերի երկրպագությունը «Մենդյան» նկարների բաղկացուցիչ մասն է դառնում սկսած միջին բյուզանդական շրջանից<sup>59</sup>: XII դարի ընթացքում այն լայն տարածում է գտնում հուշարձանների մեծ մասում<sup>60</sup>:

Արևելյան, նաև հայկական արվեստում (օրինակ Մուղնու և Քարգմանչաց Ավետարանների մանրանկարներում) շատ հաճախ է հանդիպում մոզերին մսուրի աչից, իսկ հովիվներին ձախից ցուցադրող պատկերագրական տարբերակը<sup>61</sup>: Այսպիսի հորինվածքով ստեղծագործությունները XII և XIII դարերի բյուզանդական արվեստում ավելի մեծ թիվ են կազմում, քան այն երկերը, որտեղ ընծայաբեր արքաները հանդես են գալիս մսուրից ձախ, այսինքն Ռոսլինի նկարած պատկերի նման<sup>62</sup>:

Ըստ երևույթին կիլիկյան նկարիչը կերպարների տեղադրության հարցում առաջնորդվել է XI դարի հայ գրքարվեստում հայտնի այնպիսի հազվագյուտ պատկերագրական տարբերակներով, ինչպիսին է վերը արդեն հիշատակված 1038 թ. Ավետարանի մանրանկարի նախօրինակը<sup>63</sup>: Թե՛ Մալաթիայի Ավետարանի և թե՛ 1038 թ. ձեռագրի ձևավորումներում մոզերն ու հովիվները դրավում են ստեղծագործության աջ մասը, որը շատ սակավ է պատահում:

Բրիտանական գրադարանի XII—XIII դդ. ասորական Ավետարանի (Օղ. 3372) մանրանկարը և XII դ. վերջին կամ XIII դ. սկզբին Երուսաղեմի խաչակրաց թագավորության տարածքում նկարված սրբապատկերներից մեկը (Սինայ, ս. Կատարինե վանքի հավաքածու) այն փոքրաթիվ հուշարձաններից են<sup>64</sup>, որտեղ մոզերը ցուցադրված են աչից, բայց նույնիսկ այդպիսի նմուշները՝ ի տարբերություն ռոսլինյան խնդրո առարկա հրաշակերտի, ներկայացնում են հովիվներին ձախից:

Քորոս Ռոսլինի մանրանկարի ոչ այնքան հաճախ հանդիպող հատկանիշներից է մոզերի ուղիղ դիրքը: 1260 թ. նրա Ավետարանի «Մենդյան» մեջ, ինչպես ռեսանք արդեն, մոզերից առաջինը հարգանքով խոնարհվում է մոր և մանկան առջև: Նույն կանոնն ենք տեսնում և տասնյակ ուրիշ արևելյան հուշարձաններում: Այս իմաստով մեծ կիլիկեցու աշխատանքը կրկին մերձենում է 1038 թ. և Քարգմանչաց ավետարանների նկարադարձումներին, ինչպես նաև վերը հիշված ասորական ձեռագրի մանրանկարին ու մոնղոլ մոզի կերպարն ընդգրկող Սինայի սրբապատկերին:

Պալեոլոգյան շրջանում տարածում գտած կանոնիկ նախօրինակները մո-

<sup>57</sup> Տե՛ս J. Lafontaine—Dosogne, Les representations..., pl. 2c.

<sup>58</sup> Տե՛ս Լ. Բ. Ազարյան, Քորոս Ռոսլին, Հայկական Մովսեսական Հանրագիտարան, էջ 209:

<sup>59</sup> Տե՛ս G. Ristow, Geburt Christi, col. 654—655.

<sup>60</sup> Տե՛ս L. Hadermann-Misguich, Kurbinovo..., p. 116.

<sup>61</sup> Տե՛ս G. Millet, Recherches..., p. 151.

<sup>62</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 152:

<sup>63</sup> Տե՛ս վերը, էջ 3, ծանոթ. 19:

<sup>64</sup> Տե՛ս J. Lafontaine-Dosogne, Les representations..., pl. 4b. K. Wetzmann, Byzantium and the West around the Year 1200.—In: The Year 1200: A Symposium, New York, 1975, p. 59, 60, 82, fig. 17.

գերին և հովիվներին տեղաբաշխում են տեսարանի տարբեր կողմերում<sup>65</sup>, բայց ոչ միասին (այս իմաստով հազվագյուտ բացառություն է խաչակրաց վարպետների նկարած մոնղոլ արքայի կերպարով Սինայի սրբապատկերը): Հետևաբար, այստեղ կրկին անգամ դրսևորվում է փոփոխություններ մտցնելու և տարածում գտած պատկերագրությունը վերաշարադրելու, վերածնելու ուսլիինյան սկզբունքը:

Սոգերի հայացքները ուղղված են նորածնին, և նրանց դեմքերին դրոշմված են հարզանքի, պատկառանքի արտահայտություններ: Այդ ձևով հեղինակը շեշտում է մանուկ Քրիստոսին տրվող կարևորությունը և նվիրատու արքաների նկատմամբ նրա գերադաս լինելը:

Յորոս Ռոսլինի մանրանկարում երեսան, ինչպես բյուզանդական կամ հայկական ստեղծագործություններում, բարուրված չէ, այլ գլխանոցով զգեստունի հագին, որ հիշեցնում է արևմտյան արվեստից հայտնի «Մենդյան» որոշ նկարներ<sup>66</sup>:

Նորածնից վերև պատկերված երկու հրեշտակների, մանավանդ ավետարների թևերը դուրս են գալիս մանրանկարի շրջանակից: Ստեղծագործական այդ ազատությունը հիշեցնում է Ռոսլինի 1260 թ. Ավետարանի «Մենդյան» կապակցությամբ նշված 1245—1260 թթ. ընթացքում Երուսաղեմի խաչակրաց վարպետների նկարած սրբապատկերը<sup>67</sup>, որտեղ նույնպես հրեշտակների թևերը դուրս են գալիս շրջանակից:

Համեմատելով Ռոսլինի մանրանկարի կերպարները միմյանց հետ, նկատում ենք, որ երկնային դասի ներկայացուցիչներն ու Մարիամը իրենց շափերով ավելի մեծ են, քան մյուսները: Հրեշտակների մեծությունը կարծես նախապատրաստվում է կոնքի մեջ չուր լցնող սպասուհու, մանկաբարձուհու, Հովսեփի, մոգերի և հովիվների կերպարների աստիճանական՝ ներքևից վերև գնացող խոշորացումով:

Մալաթիայի Ավետարանի պատկերի կերպարների քաջ առ քաջ ավելացող մեծությունը ստեղծում է կարծես որոշ շարժման զգացողություն, հատկապես, երբ նրանք գտնվում են մեկ գծի վրա: Կարելի է մատնանշել այդպիսի երկու առանցքներ, որոնք միմյանց հետ սուր անկյուն են կազմում, եթե մտովի շարունակենք դրանք մանրանկարից դուրս: Առանցքներից մեկի վրա են չուր լցնող սպասուհին, երեք մոգերը և նրանց վերևի հրեշտակը, իսկ մյուսի վրա են Հովսեփը, Մարիամի մարմնի մի մասը և նրա գլխավերևում գտնվող հրեշտակը:

«Մենդյան» մանրանկարի կերպարների շափերի տարբերությունները միտումնավոր են արդյոք և ծառայում են ոճական որոշակի նպատակի, թե՞ այստեղ պիտի սահմանադատել Յորոս Ռոսլինի և նրա աշակերտների աշխատանքային ոճերը:

Իրավացի կլինե՞նք, եթե Մարիամի ու հրեշտակների կատարումը վերագրենք Ռոսլինին, իսկ մնացած կերպարները նրա աշակերտներից որևէ մեկին:

<sup>65</sup> Sk'ւ G. Ristow, Geburt Christi, col. 657—658.

<sup>66</sup> Sk'ւ G. Schiller, Christian Iconography, fig. 166—169.

<sup>67</sup> Sk'ւ K. Weitzmann, Icon Painting in the Crusader Kingdom, fig. 23.



Այս հարցերին առայժմ դժվար է պատասխանել:

Մինչև այսօր միայն Ս. Տեր-Ներսեսյանին է հաջողվել 1262 թ. Սերաստիայի Ավետարանի ձեւավորման մեջ համոզիչ կերպով մատնանշել Ռոսլինի և նրա աշակերտների աշխատանքանակների ոճական տարբերությունները<sup>68</sup>:

Երկնային դասի ներկայացուցիչների մեծությունը և գեղեցկությունը (առանձնապես հանդիսավոր ու ներշնչված դիմքեր ունեն կրկու կենտրոնական հրեշտակները) ընդգծում է նաև նրանց նշանակությունը և արածի կարելիությունը: Գեղարվեստական բարձրագույն կատարելության արտահայտություն են այդ կերպարները և պատկերի մեջ են ներմուծում ցնծագին, տոնական տրամադրություններ:

Մարդկային կերպարների զգացմունքայնությունը, որը հատուկ է XII դ. կրկրորդ կեսի ստեղծագործություններին, այստեղ դրսևորված է գույների բացառիկ աշխուժությամբ, մասնավորապես կոնքի մեջ ջուր լցնող կնոջ զգեստի, Մարիամի մահճի, երիտասարդ մոգ-արքայի, նրա գլխավերևի հրեշտակի, պատանի հովվի զգեստների բոցավառվող կարմրի օգնությամբ:

Կարմրի տեղաբաշխումը մանրանկարի տարբեր մասերում ծառայում է նաև պատկերի մեջ գունային հավասարակշռություն ստեղծելու նպատակին: Այս երևույթը միանգամայն համապատասխան է Ռոսլինի աշխատանքանակին և այն կարելի է տեսնել դեռևս նրա 1256 թ. ձեռագրի ավետարանիչների կատարման մեջ:

Մալաթիայի Ավետարանի «Մենդյան» մեջ նույնքան ներգաշնակ են բաշխված կապույտներն ու վարդագույնը:

Գույների տեղադրությունը օգնում է Ռոսլինին մանրանկարի մեջ խորություն հաղորդելուն: Անձավի ներսը մատուցված է կապտախառն թվացող սև ներկով, որի պաստառի վրա պարզորոշ կերպով ընդգծվում են Մարիամը իր մահճով հանդերձ, մանուկը մսուրի մեջ և կենդանիները: Ալեհեր մոգի ստեղծի տակ երևացող մուգ կանաչավուն ծաղկաշատ հողակտորը նպաստում է նորածնի լվացման հատվածի խորքը՝ բաց շագանակագույն շերտեր ունեցող նուրբ կանաչավուն բլրակը, շեշտելուն:

Եթերային թվացող այս կանաչավուն-շագանակագույն լեռան լանջը վերելում ավելի ցցուն է դառնում շնորհիվ հրեշտակներից մեկի համեմատաբար մուգ կապտավուն և մյուսի կարմիր թիկնոցների: Ստեղծագործական նույն սկզբունքն ենք տեսնում նաև հովիվների, նրանց ավետող հրեշտակի և մոգերի զգեստների գունավորման պարագայում: Հեռանկարը հաղորդելու ռոսլինյան մտահոգությունը նկատվում է և այստեղ:

Բաց կանաչավուն հատվածների մեղմ շագանակագույն շերտերի միջոցով հեղինակը կարողանում է շոշափելիորեն մեզ հասցնել լեռան ծավալայնությունը: Լանջերի կորագիծ վեր ձգվող հզրանկարը, անձավի մուտքի ալիքաձև կտրվածքը իրենց հերթին ավելացնում են լեռան եռաչափ բնույթի և ողջ տեսարանի խորության զգացողությունը:

Բնանկարը ավելի տարածական դարձնելու անդրանիկ փորձերը ի հայտ են գալիս XII դ. և XIII դ. սահմանագծին նկարված որոշ սրբապատկերներում:

<sup>68</sup> Տե՛ս S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Walters Art Gallery, p. 10—30.

(Մինայ, ս. Կատարինե վանքի հավաքածու), որոնք դասվում են բյուզանդական արվեստի գլուխգործոցների շարքը<sup>69</sup>:

Ուշագրավ է, որ այդ երևույթը բացակայում է նույն ժամանակի բյուզանդական կոթողային նկարչության մեջ և միայն ավելի ուշ՝ XIII դ. կեսի (այսինքն Ռոսլինի ժամանակի) իտալական գեղանկարչության մեջ է հանդիպում<sup>70</sup>: Վերոհիշյալը վերաբերում է նաև ոչ այնքան ձևավորելու, որքան բնանկարին զգացմունքային երանգ հաղորդելու նպատակով գույնի յուրահատուկ օգտագործմանը<sup>71</sup>:

Ռոսլինի մանրանկարում ճիշտ այդպիսին է գույնի կիրառությունը: Մեղծ շագանակագույնի հետ շաղախված լեռան նուրբ կանաչը քնարական տրամադրություն է բերում ստեղծագործության մեջ և բնապատկերի այս զգացմունքային կատարումը ավելի ուշ շրջանի Պալեոլոգների արվեստում ծաղկում ապրած ոճական առանձնահատկություններից է<sup>72</sup>:

Սա այն հետաքրքիր դեպքերից մեկն է, երբ XII—XIII դդ. սահմանագծի բյուզանդական վարպետների ոճական նորամուծությունը փոխանցվում է Ռոսլինին և վերջինս, կտրվելով նրանցից, դարգացնում, առաջ է մղում կատարողական այդ սկզբունքը, դրանով համաբալլ ընթանալով իր ժամանակի իտալական նկարիչների հետ:

Մալաթիայի Ավետարանի ձևավորումների շարքում Քրիստոսի ծննդյան թեման ներկայացված է ոչ միայն մեր քննած պատկերով: Այդ պատմության հետ է առնչվում առանձին կատարված, ոչ պակաս նրբագեղ «Մոգերի երկրպագության» մանրանկարը: Վերջինս գտնվում է ձեռագրի սկզբում՝ Մատթեոսի բնագրի առաջին մասում (էջ 23 ա):

«Մոգերի երկրպագությանը» վերաբերող գրական երկերից են Մատթեոսի (գլ. Բ, 1—12), Հովհաննեսի (գլ. Ա, 4, Ը, 12) բնագրերը նոր կտակարանում, Ծսայու մարգարեության հատվածը (գլ. ԽԹ, 8, Կ, 1—6) և Սաղմոսը (գլ. ԿԸ, 32, ԸԲ, 9—11) Հին կտակարանում:

Մանրանկարի սեղադրությունը ցույց է տալիս, որ այն դարդարում է Մատթեոսի պատմության համապատասխան դրվագը (նկ. 3):

«Մոգերի երկրպագությունը» հայ մանրանկարիչները ձևավորել են գեոևս VI—VII դարերում: Այդ մասին է վկայում 989 թ. էջմիածնի Ավետարանի (Մատենադարան, № 2374) վերջում պահպանված պատկերը, որը աչքի է ընկնում իր ինքնատիպ, ազգային նկարագրով<sup>73</sup>:

Մալաթիայի Ավետարանի մանրանկարը, ի տարբերություն նույն ձեռագրի

<sup>69</sup> Տե՛ս K. Weitzmann, Byzantium and the West around the Year 1200, fig. 16, p. 60—61.

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 61:

<sup>71</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 61, 65:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 60—61, 65:

<sup>73</sup> Տե՛ս Th. Mathews, The Early Armenian Iconographic Program of the Ejmiacin Gospel (Erevan, Matenadaran MS. 2374 olim 229).—Dumbarton Oaks Symposium 1980, East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period, Washington, 1982, p. 205—209.



Նկ. 3

«Մենդյան» նկարադարձան, հրապարակվել և հիշատակվել է գիտական գրականության մեջ (նկատի ունենք Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունները)<sup>74</sup>:

Այս ստեղծագործությունը ներկայացնում է Մարիամին՝ մանուկը գրկին նստած շքեղ գահին, քարանձավի մուտքի առջև: Աջից ցույց են տրված երեք մոզերը իրենց ընծաներով ու նրանց առաջնորդող հրեշտակը, իսկ ձախից կույսի գահի ետևից պատկերված է Հովսեփը: Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ այս

<sup>74</sup> Տե՛ս S. Der Nersessian, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, Washington, 1963, fig. 362, p. 42. Idem, *Miniatures ciliciennes*, p. 513.

կանոնիկ տարրերակը նույնությամբ կրկնված է 1260 թ. ձեռագրի և Վաշինգտոնի Ֆրիք պատկերասրահում գտնվող Վասակ իշխանի Ավետարանի մանրանկարներում<sup>75</sup>: Իր վերջին աշխատություններում անվանի գիտնականը նշում է, որ Ֆրիքի անստորագիր մատյանը նկարազարդված է Ռոսլինի կողմից և պետք է համարվի նրա վերջին աշխատանքը<sup>76</sup> (թեև նկարչի անունը և ձեռագրի թվականը ինչ-ինչ պատճառներով չեն պահպանվել հիշատակարաններում):

Ինչպես 1260 թ. Ավետարանի, այնպես էլ 1268 թ. խնդրո առարկա և Ֆրիք պատկերասրահի մատյանների ձևավորումներում Թորոս Ռոսլինը կրկին միացնում է, մեզ արդեն հայտնի, երկու պատկերագրական հորինվածքների առանձնահատկությունները (կամ օգտագործում մի նախօրինակ, որտեղ երկու տարրերակների հատկանիշները միահյուսված են), խուսափելով տասնյակ հուշարձանների միատեսակ կատարումից: Ինչպես վերը նշեցինք, կանոնի ուժ ունեցող այդ պատկերատիպերից մեկը ցուցադրում է Մարիամին մանկան հետ գահի վրա, Հովսեփին, հրեշտակին և երեք մոզերին: Այս դեպքում, որպես օրենք, բացակայում է քարանձավը:

Վերջինս հանդես է գալիս Ռոսլինին հայտնի երկրորդ պատկերագրական տարրերակում, որն ընդգրկում է երեք ընծայաբեր արքաներին և Մարիամին մանկան հետ՝ քարայրի մոտ ժայռերին նստած:

Մեր նկարագրած երկու նախօրինակներն էլ հանդիպում են դեռևս վաղ միջնադարյան շրջանում, արտանկարվելով անգամ XI—XII դարերում:

Ֆրիքի պատկերասրահի Ավետարանի ձևավորման մասին Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ «Մոզերի երկրպագությունը» հանդիպակաց էջերի վրա որպես առանձին գրվազ գեղեղելով, ծաղկողը նոր ձևով է մատուցում այդ թեման, որովհետև նրանից առաջ հայ մանրանկարիչները սովորաբար միացնում էին երեք արքաների պատմությունը «Ծննդյան» պատկերի հետ: Ֆրիքի ձեռագրի մանրանկարը, ըստ գիտնականի, աղերսվում է Բարսեղ 2-րդի Հայամավուրքի համանուն ձևավորման հետ: Երկու հուշարձանները հարազատացնող մանրամասներից են ողջ հասակով մեկ նկարված հրեշտակը և քարանձավի մուտքի մոտ նստած Մարիամի կերպարը<sup>77</sup>:

Պատկերագրական իմաստով Մալաթիայի Ավետարանի, ինչպես և Ֆրիքի մատյանի մանրանկարները փոքր-ինչ յուրահատուկ են, բայց 1268 թ. ձևավորումը առավել կարևոր է ու հետաքրքիր իր ոճական կատարումով:

Աչքի է զարնում, որ այստեղ նույնպես լեռը ներկայացված է միայն Մարիամի գլխավերևում, շեշտելով նրա և մանկան գերազանցությունը մյուս կերպարների նկատմամբ:

Պատահակա՞ն է արդյոք լեռան և կույսի ու նորածնի կապակցության ընդգծումը այստեղ և 1260, 1268 թթ. մատյանների «Ծննդյան» մանրանկարներում: Այսպիսի հարցադրման համար որոշակի հիմքեր է տալիս միջնադարյան գրականությունը: Աստվածաշնչի մեջ Ամբակում մարգարեի բնագրում «Վեմ» է անվանվում աստված (Չլ. Ա., 12), իսկ նրա խոսքերի վրա հիմնվելով՝ Կոզմա Երուսաղեմցին (VIII դար) որպես «սուրբ լեռ» է ներկայացնում կույսին կամ

<sup>75</sup> Տե՛ս Idem, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, p. 42, fig. 60.

<sup>76</sup> Տե՛ս Idem, L'Art Arménien des origines au XVII<sup>e</sup> siècle, Paris, 1977, p. 138.

<sup>77</sup> Տե՛ս Idem, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, p. 46.

առնչում նրա գալուստը լեռան հետ («...Մացառներով ստվերապատված լեռից ես դու գալիս...») <sup>78</sup>:

Ըստ երևույթին ոսսլինյան ստեղծագործության մեջ գեղանկարչական ձևավակերպում է ստացել գրական, բանաստեղծական պատկերային արտահայտությունը:

Քորոս Ռոսլինի մանրանկարի ուշագրավ ոճական առանձնահատկություններից է ալեհեր ծերունի մոգի խոնարհություն խորհրդանշող դիրքը: Ի տարբերություն մյուս երկու նվիրատու արքաների փոքր-ինչ առաջ թեքված կեցվածքների՝ տարեց մոգի կերպարանքը ասես առնված է իրական կյանքից: Նրա դիրքը այնքան ճշմարտացի է, որ կարելի է մտածել, թե այստեղ պահպանվել են նկարչի անձնական տպավորությունները, դիտումները կիլիկյան պալատական արարողություններից: Ըստ երևույթին, Ռոսլինը բազմիցս ականատես է եղել, թե ինչպես են հայոց արքային խոնարհվել, ընծաներ մատուցել տարբեր երկրներից եկած դեսպանները և կամ իր իշխանները: Ծերունի մոգը ոսսլինյան հրաշակերտի մեջ ավելի է կուսցած, քան ընդունված է:

Այս թեմայով կատարված հուշարձաններում առաջին արքային խոնարհված դիրքով, իսկ մյուսներին թեթևակի առաջ մղված կեցվածքներով սկսում են պատկերել X դարի կապագողկյան որմնանկարներում, մասնավորապես Քորալե Քիլիսիում <sup>79</sup>:

Բայց մեզ հետաքրքրող հատկանիշը կիլիկյան փառաբանված ծաղկողի աշխատանքում ավելի է շեշտված:

Եթե ալեհեր մոգի կերպարը ծնվել է նկարչի իրական դիտումներից, ապա հրեշտակի տիպը, մեզ թվում է, ունեցել է որոշակի նախորինակ: Նրա դեմքը և մի քանի այլ մանրամասներ խիստ հիշեցնում են XIII դարի 2-րդ կեսի իտալական մի սրբապատկերի հրեշտակներին (Ֆլորենցիա, Ակադեմիայի պատկերասրահ) <sup>80</sup>:

Հավանորեն հայ և իտալացի նկարիչները ձեռքի տակ են ունեցել միևնույն նախորինակը:

Հիշարժան է, որ երկու ժողովուրդների արվեստում տեղ գտած այդ կարգի երևույթների հետ մենք պարբերաբար առնչվում ենք XIII դարի 70—80-ական թթ. կիլիկյան մանրանկարչության քննության առիթով <sup>81</sup>:

Մալաթիայի Ավետարանի «Մոգերի երկրպագության» մեջ գեղարվեստական իմաստով ավելի կատարյալ են երեք արքաների և հրեշտակի կերպարները: Հատկապես նուրբ է հրեշտակի դեմքը:

<sup>78</sup> Տե՛ս G. Ristow, Geburt Christi, col. 651—652.

<sup>79</sup> Տե՛ս K. Wessel, Anbetung der Magier..., col. 149—150.

<sup>80</sup> Տե՛ս P. d'Ancona, Les primitifs italiens du XIe au XIIIe siècle. Paris, 1935, pl. XXVIII, fig. 44, 45.

<sup>81</sup> Տե՛ս К. Бертелиу, Заметки об иконе богородицы Одигитрии из церкви Сан Лука близ Болоньи.— В кн.: Византия, южные славяне и древняя Русь, западная Европа, Сборник статей в честь В. Н. Лазарева, М., 1973, с. 418—420; S. Der Nersessian, L'Art Arménien des origines..., p. 148, V. Pace, Armenian Cilicia, Cyprus, Italy and Sinai Icons: Problems of Models.—In: Medieval Armenian Culture, Ed. by Th. J. Samuelian and M. E. Stone, University of Pennsylvania Armenian Texts and Studies; № 6. Chico, Calif., 1984, p. 291—305.

Բացառիկ ու արտասովոր երևույթ է այս պատկերում մոզերին կարմրադեմ ներկայացնելը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով արքաների դեմքերը վերականգնված են<sup>82</sup>: Սակայն մեզ թվում է, որ դա ճիշտ չէ: Դեռևս մի քանի տասնամյակ առաջ, Ռոսլինի 1266 թ. ծաղկած Մաշտոցի (Երուսաղեմ, ս. Հակոբյանց վանքի գրադարան, № 2027) ձևավորումների առիթով հայ մշակույթի մեծ երախտավոր Գ. Հովսեփյանը նշել է, որ կարմրավուն դեմքերով կերպարները ընդհանրապես բնորոշ են Ռոսլինի արվեստին<sup>83</sup>:

1266 թ. ձեռագրի նկարադարդումները, մասնավանդ «Հրեաների անցնելը կարմիր ծովով» պատկերը (որտեղ կարմրադեմ են եգիպտացիները և նրանցից հալածված իսրայելցիները), ստիպում են մտածել, որ նկարիչը կարմրադեմ է ներկայացնում սեմական ժողովուրդներին: «Մոզերի երկրպագությունը» թեմայով կատարված ստեղծագործություններում երբեք արքաները այդպես չեն պատկերվում:

Աշխարհի երեք մասերը՝ Եվրոպան, Ասիան, Աֆրիկան զբաղեցնող երեք տարրեր ուսանելին խորհրդանշող մոզերից միայն մեկին (այն էլ շատ հազվադեպ և հիմնականում Ռոսլինից հետո՝ XIV—XVII դարերում) են հաղորդել այլ գույնով, մասնավորապես, սևամորթի տեսքով: Այս առանձնահատկությունը առաջին անգամ հանդիպում է XII դարում՝ հունական Բարբերինի Սաղմոսագրքում (Վատիկանի գրադարան, բարբ. հուն. 372)<sup>84</sup>, իսպանական մի ձեռագրում և ոսմանական մի քանի այլ երկերում<sup>85</sup>:

Բացառված չէ, որ Ռոսլինը ծանոթ է եղել այսօրինակ հուշարձաններին և դրանք նրան հուշել են ու լրացուցիչ հիմքեր տվել կարմրադեմ ներկայացնելու բոլոր մոզերին:

Սակայն հնարավոր է նաև, որ նա իր երկը ստեղծեր անկախ վերը նշված նմուշներից:

Այդ դեպքում նրան կարող էին առիթ լինել հին և նոր կտակարաններից «Ծննդյան» և «Մոզերի երկրպագության» տեսարաններին վերաբերող հատվածներից Հովհաննեսի բնագրի մեջ բերված Քրիստոսի խոսքերը. «Ես եմ լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՝ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (զլ. Ը, 12): Ուրեմն մոզերին կարմիրով գունավորելու իմաստը կարելի է նաև հասկանալ, որպես նրանց «զլոյսն կենաց» ընդունելու նշան: Հովհաննեսի Ավետարանի այդ տողերը արձագանքում են Եսայի մարգարեի բնագրի մի հատվածին, որտեղ ասվում է «Լուսաւորեաց լուսաւորեաց, Երուսաղեմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն՝ ի վերայ քո ծագեացեն: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուռ զհեթանոսս. բայց ի քեզ Տեր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երեւեսցին, և գնասցեն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քոյ» (զլ. 4, 1—3):

<sup>82</sup> Տե՛ս „Sotheby and Company...“, p. 10.

<sup>83</sup> Տե՛ս Գ. Հովսեփյան, Կոստանդին Ա. կաթողիկոս որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր:—Նյութեր և ասումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա., Երևան, 1983, էջ 336—337:

<sup>84</sup> Տե՛ս Н. Покровский, Евангелие..., с. 123.

<sup>85</sup> Տե՛ս L. Réau, Iconographie..., p. 240. A. Wels, Drei Könige, col. 541—542. G. Schiller, Christian Iconography, p. 95.

Դեպի աստծո լույսը եկող Երեք թագավոր-մոգերը իրենց վրա են բնորոշում Քրիստոսի լույսը, պայծառությունը:

Մեզ թվում է, որ Ռոսլինը այս միտքն է ցանկացել ձևավորել՝ կարմիր գույնը բնծայաբերների դեմքին դրոշմելով:

Այդպես նրա արվեստում կրկին անգամ ի հայտ է գալիս գրական պատկերի փոխակերպումը գեղանկարչականի:

Մալաթիայի Ավետարանի մանրանկարում հրեշտակի կերպարի հանդարտությամբ ու խաղաղությամբ հեղինակը կարծես հավասարակշռում է «արևադեմ» մոգերի հուզմունքը, լարվածությունը, վախը: Անհանգիստ սպասման զգացողությունն է ընթերցվում նաև Հովսեփի նկարագրում:

Ինչ-որ սպառնալից ելևէջներ են գուժում անգամ քարանձավի բացվածքի վերևից ցած կարկառող ժայռակտորները: Վերջիններիս դրամատիկ հնչեղությունը միանգամայն համապատասխանում է Պալեոլոգների շրջանի արվեստի ոճական սկզբունքներին: Մալաթիայի Ավետարանի «Ծննդյան» մանրանկարի առիթով արդեն նշեցինք, որ այդ ժամանակի գեղանկարչության առանձնահատկություններից է բնանկարի զգացմունքայնությունը: Ռոսլինի ստեղծագործությունների մեջ այս ոճական սկզբունքի հաճախակի կիրառությունը վկայում է նկարչի՝ իր բյուզանդացի ժամանակակիցների հետ համաքայլ ընթանալու մասին:

«Մոգերի երկրպագությունը» մանրանկարի զգացմունքային հագեցվածությունն է նպաստում մուգ կապույտի և կարմրի ակտիվ գործածությունը: Վերջիններիս առավելագույն հնչեղությունը նկարիչը ապահովում է ավելի բաց գույների, մասնավորապես, բաց վարդագույնի, բաց կապույտի ու բաց կանաչի հարևանությամբ: Մանրանկարի մեջ համեմատաբար մեծ մակերես է զբաղեցնում մուգ կապույտը (քարանձավի բացվածքի, Մարիամի զգեստի, ալեհեր արքայի թիկնոցի վրա), որը իր հետ պատկերի մեջ է ներմուծում խորհրդավորության զգացողությունը: Գույների ընտրության մեջ ի հայտ են գալիս դրամատիկ տրամադրության ելևէջներ:

Կասկածից վեր է, որ այս աշխատանքը Քորոս Ռոսլինի ամենանրբագեղ, նույնիսկ կարելի է ասել, բանաստեղծական ստեղծագործություններից մեկն է:

Քրիստոսի ծննդյան պատմությանը վերաբերող ռոսլինյան նկարաշարը զաղափար է տալիս հեղինակի գեղագիտական պրպտումների մասին, բացահայտում նրա կապերը հարևան ու հեռավոր երկրների հետ: Այդ կապերի մեջ գերիշխում են հայ-իտալական առնչությունները: Մեզ թվում է, որ Ռոսլինը Դանթեի հայրենակիցների ստեղծագործություններին կարող էր ծանոթանալ ոչ միայն նրանց երկիրը մեկնելով և այնտեղ շրջագայելով (որտեղ ի դեպ բավականին շատ էին հայկական եկեղեցիները կամ այլ կերպ ասած «հոգեմտերը»)՝<sup>86</sup>, ինչպես անում էին շատ հայեր<sup>87</sup>, այլև «ավետյաց երկրում» խաշակիրների հաստատած իշխանությունները այցելելով: Հայտնի է, որ «Քրիստոսի գերեզ-

<sup>86</sup> Տե՛ս L. B. Zekiyan, Le colonie armene del medio evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la Storia degli Armeni in Italia).—Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena (Bergamo, 28—30 Giugno 1975), San Lazzaro-Venezia, 1978, p. 803—946.

<sup>87</sup> Տե՛ս Ժ. Դեդյան, Հայ վանականները և բխտավորները Արևմտյան Եվրոպայում 10-րդ դարի վերջում—11-րդ դ. սկզբում, ՊՅԶ, 1984, № 3, էջ 21—36:

մանր ազատելու» մեկնած ասպետների մեջ իտալացիները ավելի մեծ թիվ էին կազմում, քան Ֆրանսիացիները կամ գերմանացիները: Սինայի ս. Կատարինե վանքում հավանքված խաչակրաց սրբապատկերների հսկա հավաքածուն Կ. Վելյցմանին ենթադրել է տալիս, որ XIII դարում բազմաթիվ իտալացի ու ֆրանսիացի նկարիչներ էին մեկնում «ավետյաց երկիրը» արվեստանոցներ հիմնադրելու նպատակով<sup>88</sup>:

«Մենդյան» թեմայով կատարված բոսլինյան նկարաշարքը նրա արվեստում բացահայտում է հին ու նոր պատկերազրական և ոճական ավանդույթները:

Այս երկերը ուղի են հարթում դեպի նկարչի գիտելիքների ոլորտը, վեր հանում նրա մտքի աշխատանքը: Մենք ասես ականատես ենք դառնում, թե ինչպես է ըմբռնում վարպետը ավետարանական պատմությունը և ինչ ձևով է զուգակցում իրական կյանքի արձագանքները միջնադարյան կանոնիկ մտածողության հետ:

Հերիաթայինը, հրաշապատումը նրա արվեստում շաղխված է առօրյա կյանքի երևույթների, տրամադրությունների հետ:

Ժողովրդի լավագույն ավանդույթներին հարազատ մնալու հետ մեկտեղ թորոս Ռոսլինը հարստացնում է արվեստի պատմությունը համատարած ընդունելություն գտած միջնադարյան պատկերազրության իր անձնական մեկնաբանությամբ և անհատական խիստ յուրահատուկ այդ մոտեցումով: Նա հայ մանրանկարչության անդաստանում մի խոր ակոս է բացում, որով դալիս անցնում են գալիք սերունդների ծաղկողները: Հայ ազգային մշակույթի հիմնաշենքում մեծ կիլիկեցին մի նոր քար է դնում, որից ողջ կառույցը դառնում է ավելի ինքնատիպ ու հզոր:

Մայր հողից Միշերկրականի ափերը տարած ձևազրական սկզբունքներին հավատարիմ գտնվելը Ռոսլինին տանում է դեպի կիլիկյան մատենանկարչության մեջ ազգային կողմերի զարգացումը: Իսկ դա իր հետ բերում է այն, որ զրբարվեստը դառնում է կիլիկյան հայկական հոգևոր-մշակույթի առաջատարը ազգային ավանդույթները լավագույնս արտացոլելու իմաստով: Ռոսլինյան վառ, յուրօրինակ մտածողությունը ծնում է հրաշալիքներ, որոնք կիլիկյան մանրանկարչությունը իր ողջ միջազգային կապերով հանդերձ տանում են դեպի անկախացում: Այս ճանապարհով առաջանում են որակական այնպիսի արժեքներ ու փոփոխություններ, որոնք հարևան կամ հեռու ժողովուրդների մոտ հանդես են գալիս ավելի ուշ: Միջնադարյան կանոնիկ արվեստի պայմաններում հայ նկարչի և նրա տաղանդաշատ հաջորդների երևակայությունը վերախմբագրում ու սրբագրում է անցած դարերի փորձը, վերափմաստավորում ու արտադրում երկեր, որոնք իրենց առանձնահատուկ կողմերով պայմանավորում են կիլիկյան զրբարվեստի հայեցի բնույթը, նրա անկաշկանդ ընթացքը և մանրանկարիչների ինքնուրույն գործելակերպը:

<sup>88</sup> Ss. u. K. Weitzmann, Crusader Icons and Maniera Greca.—In: Byzanz und der Westen, Studien zur Kunst des europäischen Mittelalters, Hrsgb. von I. Hutter, Mit einem Vorwort von H. Hunger, Wien, 1984, p. 169.



Л. Б. ЧУГАСЗЯН

## ТЕМА «РОЖДЕСТВА» В ИСКУССТВЕ ТОРОСА РОСЛИНА

## Резюме

История «Рождества Христа» занимает значительное место в творчестве Тороса Рослина. На эту тему художник создал несколько изображений, изучение которых показывает, что в каждом отдельном случае Рослин иллюстрировал легенду «Рождества» в оригинальной манере, не повторяя самого себя. В исследуемых миниатюрах четко выступает ориентация мастера на образцы армянского рукописного наследия XI века, в особенности, Анийской книжной живописи.

В статье выявляются общности работ Рослина с произведениями искусства стран Средиземноморья. В миниатюрах достаточно часто встречаются особенности, связывающие его живопись с итальянскими и византийскими произведениями. Знания в области родного искусства, а также наследия соседних стран дают богатую пищу яркому, своеобразному мышлению Рослина, и его интеллект плодит шедевры, которые ведут киликийскую миниатюру, при всех ее международных связях, к независимости и самостоятельности. На этом пути возникают качественно новые явления и изменения, которые лишь позже появляются в искусстве соседних и далеких народов. Фантазия мастера пересматривает, переосмысляет опыт прошлых веков, рождая произведения, своей неповторимостью определяющие национальный характер киликийской книжной живописи.

L. B. TCHOUKASZIAN

## LA "NATIVITE" DANS L'OEUVRE DE THOROS ROSLINE

## Résumé

L'histoire de la "Nativité du Christ" occupe une place considérable dans l'oeuvre de Thoros Rosline. Le peintre est l'auteur de plusieurs illustrations de ce sujet, dont l'étude montre que dans chaque cas particulier, Rosline a traité la légende de la "Nativité" d'une manière originale, sans se répéter. Dans les miniatures étudiées, on observe nettement l'orientation de l'artiste vers les spécimens de l'héritage manuscrit arménien du XIe siècle, en particulier la miniature d'Ani.

L'article révèle la communauté des travaux de Rosline avec les oeuvres d'art des pays méditerranéens. Les miniatures abondent en particularités liant sa peinture aux oeuvres italiennes et byzantines. Ses connaissances dans le domaine de l'art arménien, ainsi que dans celui

de l'héritage des pays voisins, nourrissent la brillante et originale imagination de Rosline et son intellect donne naissance à des chefs-d'oeuvre qui conduisent la miniature cilicienne, malgré toutes ses relations internationales, à l'indépendance et à l'originalité. C'est sur cette voie qu'apparaissent des phénomènes et des changements foncièrement nouveaux. La fantaisie de l'artiste modifie et développe l'expérience des siècles passés, créant des oeuvres dont l'originalité détermine le caractère national de l'enluminure cilicienne.

ՍԵԴԱ ՄԱՐԱԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՅՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիգոր Խլաթեցին (1349—1425 թթ.) միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործիչներից է, մատենագիր, պատմական, վարքագրական, վկայարանական երկերի, մեկնությունների, բանաստեղծությունների (գանձ, տաղ, մեղեդի, շափածո հանելուկ, հիշատակարան, ներբող), ծիսական-գրական ժողովածուների հեղինակ, մանկավարժ, երաժիշտ, գրիչ և նկարիչ:

Սովորել է ժամանակի բարձրագույն դպրոցում, Հովհաննես Ռրոտնեցու համալսարանում, Գրիգոր Տաթևացու, Գևորգ Երզնկացու և այլոց հետ միասին: Վարդապետական աստիճան է ստացել Հ. Ռրոտնեցու լծակից Սարգիս Ապրակունեցի բաբունապետից և ամբողջովին նվիրվել իր սիրած բնագավառներին, որոնց մեջ առանձին տեղ էր գրավում գրչությունը: Գրում էր, բնդօրինակում, խմբագրում, հորինում, նկարում, սրբագրում, նորոգում, լրացնում, հղանակավորում, սովորեցնում:

Թովմա Մեծոփեցին իր Պատմության մեջ երկու անգամ անդրադառնում է Խլաթեցուն և երկու դեպքում էլ չի մոռանում շեշտելու նրա գործունեության այդ բնագավառը: «Եւ հիսուն ամ (մյուս անգամ՝ «հիսուն հինգ ամ»—Ս. Մ.),— գրում է նա,—գիրս գրեաց տիւ և գիշեր, անհանգիստ տքնութեամբ, որպէս գիտակ է գաղտնեաց գիտակն»<sup>1</sup>: «...Ձի գրէր յամենայն ժամ,—լրացնում է Առաքել Բաղիշեցին,—յամարայնի և ի ձմերայնի, յաշուն և ի գարուն, ի տրէ և ի գիշերի, ի տուն և ի դուրս, ի վանք և ի գեօղ և ի քաղաք: Եւ զայս ոչ եթէ ի մանկութեան ժամանակն միայն, այլ ի ծերութեան, մինչև յօր նահատակութեան»: Իսկ ինչ էր անում գրածը: «Գրէր և վաճառէր և զգինն տայր կարատելոց, և ոչ միայն քրիստոնէից, այլև այլազգաց ևս առնէր ողորմութիւն»<sup>2</sup>: «Եւ զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր»,—լրացնում է Թովմա Մեծոփեցին: Ուրիշները նրան համարում էին «արգիւնական հոետոր», «անհամեմատ քարտուղար», «տիեզերալոյս վարդապետ» և այլն:

Գրիգոր Խլաթեցին գրչությամբ զբաղվել է շատ վաղ հասակից: 1415 թ. Երուսաղեմում ընդօրինակած ձեռագրում ասում է, որ «ԿԶ. (66) ամաց եմ ես ու եմ. (48) տարւոյ արեղայ. և զայս ճառերս («Յաճախապատում ճառք»

1 Յ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաշորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 42, 85:

2 Մատենադարան, ձեռ. № 4866, էջ 251ա:

—Ս. Մ.) շեմ տեսել, և ոչ ի մեր երկիրն կային սոքա՝ Յաճախապատումս և կամ ներբողեանքս ասացեալ ի Վարդանայ բանիրուն վարդապետէ»<sup>3</sup>:

Այստեղից երևում է, որ Գրիգոր Խլաթեցին գրչությամբ գրադվել է 18 տարեկան հասակից (66—48=18), այսինքն 1367 թվականից (1415—48=1367) և շարունակել մինչև «յօր նահատակութեան», այսինքն 58 տարի: Եվ երկրորդ, որ նա ընդօրինակել է ոչ միայն իրեն հանդիպած կամ պատվիրած գրքերը, այլ ընտրել, տարիներով որոնել, գտել, արտագրել ու շրջանառության մեջ է գրել իր նախասիրած, ավելի արժեքավոր գրքերը: Այս ավելի պարզ է երևում նույն հիշատակարանի շափածո շարունակության մեջ.

«...որ ցանկացայ այսմ տառի  
գրոց մերոյս կուսաւորչի.  
որ ի վաղուց փափագէի  
և որոնեալ՝ շգտանէի:  
Մինչ որ յերուսաղէմ եկի,  
եւ աստ գրտի գոր ցանկայի,  
Յոր ձեռնարկեալ իմ գրեցի...»:

### Սակայն՝

«Մին կարօտ այլ կայ ի սրտի  
Մեղապարտիս իմ Գրիգորի,  
Որ Չգան անուն գիրքն Յակորի  
Ջայն Մրծբնայ հայրապետի,  
Ջայն այլ գրեմ հողըս գերի,  
Ընդ լուսատու այս բաների,  
Որ երկօրեանն ի մի տրտի  
Լիցին բաներս հոգելի...»<sup>4</sup>:

Կարողացել է նա «Չգոն» գիրքն ընդօրինակելու իր ցանկությունը կատարել թե ոչ, առայժմ հայտնի չէ:

Իր նախասիրած հեղինակի ձեռագիրը տեսնելու և ընդօրինակելու ցանկությունն էր, որ 1387 թ. կանկ-Քամուրի մոլեգնության տարում, նրան Ապրակունիսից տուն տանելու փոխարեն տարավ Այրիվանք, Մխիթար Այրիվանեցու Գանձարանի համար. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ (1286) թրին ասացեալ էր գիր բանսն, և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387) թին հանդիպեցաւ նորա բանիցն»<sup>5</sup>:

Այդ առիթով Խլաթեցին գրում է.

«ՊԼԶ (1387).  
Այլև գ՛րիգոր մեղաք լրցեալ,  
Եւ արեղայ անամբ կոչեալ...  
Որ յետ հարեւր ամաց անցեալ  
Մրխիթարայ բանիցս ոգեալ,  
Ի յԱյրիվանս մեզ պատահեալ,  
Փափագ սրտիս եղև լրցեալ

<sup>3</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 315ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մ. Ա, Երևան, 1955, էջ 178:

<sup>4</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 220ա—220բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԾ դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 339:

<sup>5</sup> Նույն տեղում, ձեռ. № 6529, էջ 4բ:

Ձի ի վազուց հետէ րդձեալ  
Տեսլեան տեղոյս ես տենչացեալ  
Նաև բանից շնորհաբ լըցեալ,  
Մխիթարայ, զոր ասացեալ,  
Քան զկամացս իմ կատարել  
Քսան ու վեց ամ յառաջեալ  
Ձի Այրիվանաց անուն լրեալ  
Ի ընտիր գանձուցրս հանդիպեալ»<sup>6</sup>։

Հետագայում ոչ միայն հնագույն ձեռագրեր է արտագրում, այլև պահպանելով հնի առողջ մասը՝ լրացնում և ամբողջացնում է ձեռագիրը<sup>7</sup>, նույնիսկ թանարով նորից անցնում է խունացած ու աղտոտացած տողերի, էջերի, պրակների վրայով<sup>8</sup>, կամ օգնում է ուրիշներին՝ առանձին պրակներ ու թերթեր գրելով՝ ավարտելու մատչանը<sup>9</sup>։ Իսկ ինքը, ինչպես վկայում է Առաքել Բաղիշեցին, գրում է գիշեր ու ցերեկ, որպես.

«Քաշ հոնտոր և բանասէր,  
Երագարան ու աղօթասէր,  
Գրիշ արագ, աշխատասէր,  
Յաւե վարժիչ, իմաստասէր»<sup>10</sup>։

Ինչո՞վ բացատրել պատմիչի, րարունապետի, վարքագրի ու բանաստեղծի, տարբեր մարդկանց կողմից հասարակական հոգսերով ծանրաբեռնված, որբեր խնամող և գերիներ փրկող Գրիգոր Խլաթեցու այսքան «գրչասիրությունը», այսինքն ձեռագրեր ընդօրինակելու անկասելի սերը։ Պատճառը կանկթամուրի Հայաստան կատարած աշխարհավեր արշավանքների ահավոր հետևանքներն էին։ «Աղբյուրների վկայություններից երևում է, — գրում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, — որ կանկթամուրի արշավանքների ժամանակ Անդրրկովկասի և Հայաստանի բնակչության կազմի մեջ տեղի էին ունեցել նոր փոփոխություններ... Իրն-Արարշահի ասելով՝ կանկթամուրի սովորությունն էր փոփոխել զորքերի և ժողովուրդների բնակչության տեղերը: ...Նրբ նա տիրում էր որևէ մի բաղաբի՝ անպատճառ զորքերի մի մասն այնտեղ էր բնակեցնում և այդ երկրում էր թողնում, իսկ այդ աշխարհի մարդկանց մի մասը փոխադրում էր և բնակեցնում ուրիշ երկրում»<sup>11</sup>։ Հայաստանը բացառություն չէր կազմում։ Կանկթամուրի բնակեցրած այլազգիների ներկայությունը աշխուժացնում է վաղուց Հայաստանում բնակված այլազգիներին, որոնք վերսկսում են բռնի հավատափոխությունը, դարձնելով այն մասսայական երևույթ և ավելի են ծանրացնում հայ ժողովրդի վիճակը։ Տառապանքներով լի էր հայ ժողովրդի կյանքը նաև կանկթամուրի արշավանքների նախօրյակին և իր դառնությամբ կարող էր զիջել միայն այդ արշավանքների ժամանակ ստեղծված անտանելի վիճակին։ Գրիգոր Խլաթեցին ապրել է իր ժողովրդի բախտով, տեսել, զգացել և ասպա լանկթամուրյան սարսափները նկարագրել իր ողբում<sup>12</sup>։

<sup>6</sup> Նույն տեղում, ձեռ. № 6529, էջ 4ր, 5ա։

<sup>7</sup> Նույն տեղում, ձեռ. № 6792։

<sup>8</sup> Նույն տեղում, ձեռ. № 2783։

<sup>9</sup> Նույն տեղում, ձեռ. № 4884, 4522։

<sup>10</sup> Նույն տեղում, ձեռ. № 8639, էջ 146ա։

<sup>11</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 372—373։

<sup>12</sup> Լ. Խաչիկյան, Ժժ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 247։

Ժողովրդի ճակատագիրը բաժանում էր նաև նրա մշակույթը: Արշավանքների, կողոպուտի ու ավերածությունների հետևանքով ձեռագրական հսկայական կորուստներ են եղել: «Լանկթիմուրն, որ բոտ աւանդութեան,—գրում է Ղ. Ալիշանը,—ժողովել տուած է զգրեանս, և իր մայրաքաղաքին Սմրղանդի ամուր աշտարակի մի մէջ պահել»: Ավանդություններն, անշուշտ, հիմք են ունենում: Ժամանակակից Մխիթար Ապարանեցին վկայում է, որ Մակվի բարաբերդի մէջ, որն հայտնի է «Մակն Մակուայ» անունով, «հիսուն լիար գիրք ավելի կայ՝ միայն ի Սըսայ բերած», որոնք միայն կրոնների միաբանության խնդիրների վերաբերյալ գրքեր էին, իսկ հայերեն այլևայլ կողմերը տարածված գրքերը. «եթե հնար էր զամենայն ժողովել ի մի վայր, ավելի գոյր՝ քան զհազար բեռն»<sup>13</sup>: Պետք էր փրկել եղածը, բազմացվեր ապագային փոխանցելու և տարածվեր ժողովրդի մէջ՝ հավատը անսասան պահելու համար:

Աշխուժացել էին նաև միարարները, կաթոլիկ եկեղեցու գործակալները: Սրանց դեմ Հովհաննես Ռոտնեցին, Գրիգոր Տաթևացին և նրանց աշակերտները բազմաթիվ գործեր էին ստեղծել, որոնք նույնպես բազմացնելու և տարածելու կարիք էին զգում: Հենց այս պատճառով էր, որ Գրիգոր Տաթևացին Մեծոփա նորաբաց բարձր տիպի դպրոցին գրչության թեքում տվեց<sup>14</sup>: Այդ գործն էր կատարում նաև մեծ բարունապետների գաղափարակից Գրիգոր Խլաթեցին:

Այժմ փորձենք ի մի բերել Գրիգոր Խլաթեցու մեզ հայտնի ձեռագրական ժառանգությունը, որից հետո միայն հնարավոր կլինի պարզել նրա ընդհանուր մատենագրական՝ ինքնուրույն ստեղծագործությունների և խմբագրական գործունեության սահմանները: Երբեմն ամբողջական ձեռագիրն է նրա երկը, ինչպես՝ Հայոց պատմությունը, որը մեզ չի հասել, Հովհաննու Ավետարանի մեկնությունը և Վարդանի Արարածոց մեկնության համառոտությունը: Մյուս դեպքում՝ իր ընդօրինակած որևէ ձեռագրում՝ նրա երկը հավելված է կամ հիշատակարան, իսկ երբեմն էլ իր խմբագրությամբ ստեղծված ժողովածու է, ներհյուսված սեփական ստեղծագործություններով, ինչպես Հայսմավուրք, Գանձարան և Տոնական ժողովածուները:

Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգության մի մասը մեզ է հասել ինքնագրով և ուրիշների հետ համատեղ գրված, մյուս մասը՝ Խլաթեցու գրած ձեռագրերի ընդօրինակություններն են, որոնց հիշատակարաններում կամ խորագրերում հիշվում են, որ ընդօրինակված է Գրիգոր Մերենցի օրինակից:

Այժմ Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգությունը ներկայացնում ենք ժամանակագրական կարգով:

1. Տօնական. գրիչ Գրիգոր որդի Մերի և Խոյանդի, ԺԳ դ., գրել է պարոն Հնդուի և նրա կողակից Խութլու խաթունի համար:

Հովհաննեսի զավակը սպանվում է անօրենների ձեռքից, ստացողի ժառանգն է դառնում իր եղբոր որդի Զաքարեն, ապա Զիման մամը, որը նաև նորոգել է տալիս ձեռագիրը<sup>15</sup>: Ձեռագրի տարբեր ժամանակների, այսինքն՝ Զաքարեի, ապա Զիմանի վերաբերյալ հիշատակագրությունները գրել է Խլա-

<sup>13</sup> Ղ. Ալիշան, Հայաստան, մ. Ա., Վենետիկ, 1901, էջ 11—12:

<sup>14</sup> Ա. Մարեոսյան, Գրիգոր Տաթևացին և Մեծոփա վանքի դպրոցի հիմնադրումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 2, էջ 146—156:

<sup>15</sup> Մատենադարան, ձեռ. № 4803:

թեցին: Ուրեմն երկար ժամանակ ձեռագիրը պահվել է այնտեղ, որտեղ ապրել է Գրիգոր Խլաթեցին:

Սույն ձեռագրի գրչությունը տարբերվում է Խլաթեցու՝ մեզ հայտնի բոլոր ձեռագրերի գրչությունից: Եթե ծնողների անունը պահպանված չլիներ, դժվար թե սույն ձեռագիրը ընծայվեր Խլաթեցուն: Մեր կարծիքով այն Խլաթեցու առաջին ձեռագրերից է: Իրա ապացույցն է նաև այն, որ Գրիգորը այստեղ միայն «գրիչ» է, «գծողակ», «գրողակ», «փցնամատ գրող» և ոչ «սպասաւոր» կամ «խնդրող բանի» վարդապետ կամ բարունի: Ուրեմն, Խլաթեցին այն գրել է մինչև վարդապետ ձեռնադրվելը, կամ համալսարան ավարտելը:

2. Գանձաբան Մխիթարայ Այրիվանեցույ. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1387 թ.: Ինքնագիրը մեզ չի հասել: Այն Մխիթար Այրիվանեցու 1286 թ. գրած Գանձաբանի ընդօրինակությունն է: Մատենադարանի № 4011, 6529 և 3540 ձեռագրերում, որոնք Խլաթեցու խմբագրած Գանձաբաններից են արտադրված, այդ մասին պահպանվել է հետևյալ հիշատակարանը, որը ամենայն հավանականությամբ Գրիգոր Խլաթեցին է գրել:

«ԻԱ (21) գանձ կայ տէր Մխիթարայ Այրիվանեցույն ի գիրքս և այս Բ (2) երգս նորկերտ գրոց և պատկերաց սրբոց»<sup>16</sup>: Այնուհետև հետևում է Խլաթեցու հիշատակարանի հիման վրա գրված սույն վկայությունը. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ (1286) թրին ասացեալ էր զիւր բանսն, և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387) թին հանդիպեցաւ նորա բանիցն»<sup>17</sup>:

Եվ վերջապես Գրիգոր Խլաթեցու Հիշատակարանը, ՊԼԶ (1387) թվականից (տե՛ս աստ, էջ 174—175):

3. Ուլիափոս ժողովածու. գրիչ Գրիգոր վարդապետ, 1391 թ., վաչր Սուխարա կամ Խառարաստա վանք: Արտագրված է ուխտի առաջնորդ Հաբեոս եպիսկոպոսի համար, որը «թող զայս այլ և շատ աւգտակար գրեանք ստացաւ»<sup>18</sup>, որոնց մի մասը հավանաբար Գրիգորն էր գրել: Առաջին անգամ այստեղ Գրիգորը հիշվում է որպես վարդապետ:

4. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1393 թ., ստացող՝ Հովհաննես քահանա: Ձեռագիրն սկսում է «ի վանս Սուհարայ որ այժմ կոչի Խառարաստայ.. և աւարտեցաւ ի վանս Յիպնայ... ի թուականիս Հայոց ի ՊԽԲ (1393) ամի, յամսեանն արեգի»<sup>19</sup>: Հիշատակարանում նկարագրվում է այն ծանր վիճակը, որ ապրում էր հայ ժողովուրդը և ավարտվում Հաբարիա Աղթամարցու նահատակության մասին ողբով: «Աւետարանը զարդարուած է Քրիստոսի մարդեղութեան տասնչորս և չորս ավետարանիչների եօթը պատկերներով»<sup>20</sup>:

5. Գանձաբան. փոքրագիր, միասյուն գրությամբ, գրած է «[ի խնդրոյ] Աստուածատուր քահանայի, ձեռամբ Գր[իգորի] պիտակ անուն բանի խըն[դրողի] ի վանս Յիպնայ, ընդ հովանե[աւ] [ամե]նազօր սուրբ նշանի ի Պ... թրականութեանս Հայի...»<sup>21</sup>: Քայքայվածության հետևանքով թվականի տաս-

16 Մատենադարան, ձեռ. № 4011, էջ 3բ, № 6529, էջ 4բ:

17 Նույն տեղում:

18 Հ. Քոփեյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքի, Վենետիկ, 1962, էջ 20—21:

19 Ն. Լալայան, Չավախք, «Ազգագրական հանդես», Բ տարի, Բ գիրք, Թիֆլիս, 1897 թ., էջ 281—284, Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, էջ 599—601:

20 «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, էջ 282:

21 Մատենադարան, ձեռ. № 8366, էջ 212ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԵ դարի հիշատակարաններ, մ. Գ, 1967, էջ 365:

նավորն ու միավորը բացակայում են, իսկ նրանք եղել են, այլապես միայն պահպանված թվանշանից դատելով կստանանք 1351 թվականը, երբ Խլաթեցին երկու տարեկան էր, այնինչ իրեն համարում է «սպասաւոր քանի»: Մատենադարանի գիտաշխատակից է. Հարությունյանը Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգութունն ուսումնասիրելիս նկատում է, որ Գրիգոր Խլաթեցին սույն, № 8366 ձեռագիրը ընդօրինակել է ավելի վաղ, քան 1387 թ., երբ դեռ ձեռքի տակ չունեի Այրիվանեցու Գանձարանի ընդօրինակութունը, որ այն գրվել է 1360—61 թթ. և 1387 թ. միջև ընկած ժամանակաշրջանում<sup>22</sup>: Բայց որոշ հանգամանքներ նկատի ունենալով պետք է ընդօրինակութունը մի քիչ ուշ կատարված համարել: Բանն այն է, որ Խլաթեցին իրեն այդտեղ համարում է «սպասաւոր քանի» և «բարունի», որին նա արժանացել է մի քանի տարի անց:

6. Մուշտոց. Մատենադարանի № 4884 ձեռագիրը երեք գրիչների գործ է, որոնցից միայն Ստեփանոս գրչի անունն է պահպանվել: Ծաղկողը Սարգիսն է, ստացողը Հովհաննեսը: 220—278 թերթերի գրիչը Գրիգոր Խլաթեցին է, ինչպես երևում է գրութունից: Ձեռագիրը գրված է Լանկ-Քամուրի արշավանքների ժամանակ, ուրեմն ժԳ դարի վերջում, պահպանվել են մի քանի մանր հիշատակագրութուններ: Գրանցից մեկում կարդում ենք. «Ով եղբարք անմեղադիր լերուք, զի բազում խաբարս և խեղճս լսեաք ի ձեռաց Քամուրէն և սրտերս իբրև զնաւ անհանգիստ կենայր, վասն այնոր բազում սխալեցաք ի գիրս: Անմեղադիր լերուք աղաչեմ. զի ժամանակս յոյժ դառն էր»<sup>23</sup>:

7. Գանձարան. Գրիգոր Խլաթեցին 1400 թ. գրում է մի Գանձարան, որից կատարված ընդօրինակութուններ են մեղ հասել, ինչպես Մատենադարանի №№ 4011, 6529, 3540 և էջմիածնի Մայր աթոռի № 1 գանձարանները: Հիշատակարանը ավարտվում է 1399 թվականով. «Ի յութ հարիւր Հայոց թվին և բառասուն և ութ ամին (1399)»<sup>24</sup>, բայց հիշատակվում են նրանից հետո կատարված Սերաստիայի և Վրաստանի ավերումը, որոնք տեղի են ունեցել 1400 թվականին: Հետևաբար ձեռագիրը ավարտվել է 1400 թվականին: Մատենադարանի № 4011 և 6529 (սրանից միայն սկզբի 6 թերթն է պահպանվել և համապատասխանում է առաջինի սկզբի թերթերին) ձեռագրերը հիշատակարան չունեն և Խլաթեցու ինքնագիրը չեն: Այդ պարզ երևում է գրչութունից, նախ սրանք գրությամբ իրար նման չեն, ապա նման չեն Խլաթեցու մյուս Գանձարանների և ընդհանրապես ընդօրինակութունների գրչությանը, որը բավականին ինքնատիպութուն ունի և անմիջապես տարբերվում է այլ գրիչների գրածից № 4011 ձեռագրում պահպանվել է հետևյալ հիշատակագրութունը, որը գաղափար օրինակից է գալիս. «Բարխաւսութեամբ սրբոյն Սարգսի զաւրավարին և ամենայն սրբոց նահատակութեամբ, որ աստ կան հաւաքեալ սղորմեա Տէր զձողի սորա Գրիգորի»<sup>25</sup>:

22 է. Հարությունյան, Մխ, Այրիվանեցու Գանձերը Գ. Խլաթեցու խմբագրած Գանձարաններում, «Բանբեր Համալսարանի», № 2, 1977, էջ 229—230:

23 Մատենադարան, ձեռ. № 4884, էջ 70ա—71ա, ստորին լուսանցքում, Հմմտ. Ա. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 570:

24 Այդ թվականն է նշված նաև «Որդոց որոտման» գանձի կաֆայում. «Ի վեշտասան յորելինի և չորրորդ երկտասանի»  $(16 \times 50) + (4 \times 12) + 551 = 1399$  (ձեռ. № 4011, էջ 349 բ):

25 Մատենադարան, ձեռ. № 4011, էջ 76ա:



Այնտեղ հիշատակված Գրիգորը Գանձարանի առաջին գրիչ-խմբագիր Խլաթեցին է: Նկատելի է, որ այդ հիշատակագրությունը Գանձարանի բուն գրչության համեմատությամբ ավելի մանր է գրված, այնպես, ինչպես Մխիթար Այրիվանեցու մասին երկու փոքրիկ հիշատակագրությունները:

8. Մեկնութիւն կաթողիկէից քղրոց Սարգսի Շնորհալիոյ. գրիչ Գրիգոր խնդրող բանի, 1400 թ., գրված Ստեփանոս արեղայի համար, «ի գաւառիս Քաջերունույ ի վանս Սուխարայ որ այժմ ասի Խառաքաստայ և այլարանի խեռարարձայ, յառաջնորդութիւն տեր Զաքէոսի եպիսկոպոսի... առ ոտս երջանիկ և բարերարույ, հանդարտ և հըմտավարժ վարդապետի, ամենագով և հանճարեղ, գիտնական, իմաստնական, և արդիւնական, մեծանուն Սարգիս բարունապետի»<sup>26</sup>: Զեռագրի ծաղկողը ներսես պատանին է: Ավարտել է Առջիկ գյուղում, ուր ապաստանել են Լանկ-Քամուրի հրոսակներից հալածված: Զեռագիրն սկսվում է Սարգիս Շնորհալու վարքով և ավարտվում Խլաթեցու արժեքավոր հիշատակարանով<sup>27</sup>: Ունի բազմաթիվ մանր հիշատակագրություններ, արձակ և շափածո, և գովեստի գրվատ՝ նվիրված Աստվածածնին<sup>28</sup>:

Սույն ձեռագրին կից, մեկ կազմի մեջ է ամփոփված Խլաթեցու մի ժողովածուն, գրված 1413 թվականին:

9. Մեկնութիւն Յովհաննու աւետարանի. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1400 թ., վայր՝ Սուխարա վանք, «Արդ ևս վերջինս, և տրուպս ի խնդրողս բանի, Գրիգոր անպիտան կրօնաւոր, ժողովեցի զծաղկաբաղ Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու, ըստ ամենայն աւուր դասու՝ ի լուսաւոր բանից տեառն իմոյ և վարժապետի՝ մեծին Սարգսի կորովամիտ բարունապետի... Եւ արդ՝ եղև հաւաքումն լուսաւոր և պայծառ բանիցս՝ յամի Պեթ (1400) թուականիս... ի վանս Սուխարայ, որ կոչի Խառաքաստայ... յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս՝ վերոյ ասացեալ մեծ վարդապետի և տէր Զաքէոսի... եպիսկոպոսի»<sup>29</sup>:

10. Յայտաւարք. գրիչ և խմբագիր Գրիգոր Խլաթեցի, 1401 թ.: Ինքնագիրը մեզ չի հասել, բայց բազմաթիվ ընդօրինակություններ են պահպանվել: «Ի վերջին ժամանակիս, որ էր թուական Հայոցս Պ և Մ (1401) վարդապետումն շնորհալի, Գրիգոր անուն, ի մայրաքաղաքէն Խլաթայ, Մերենց կոչեցեալ, յոյժ կորովամիտ, հանճարեղ և բանիրուն, և անհամեմատ քարտուղար որ է գրագիր... գրեալ և ընթերցեալ բազում անգամ զառաջին կարգեալ սրբոց գիրքս և զի էր կարճառօտ բանք նոցա: Եւ ինքն ըստ իւրում իմաստութեանն յաւել ի գիրքս յայս բազում շահաւէտ և օգտակար բանս ի հարանց վարուց և ի պատմագրաց... և գովասանութիւնս, է որ յինքենէ և է որ ի Տօնապատճառէ... եղ ի գիրքս և հարստացոյց զսա»<sup>30</sup>:

«Մեծ վարդապետն մեր, քաջ եկլեստիաստէն Հայոց Գրիգոր Մերենց... զարդարեաց լուսափթիթ բուրաստանս, որ գրեաց և հրաման ևտ ամենեցուն նոյնպես գրել»<sup>31</sup>:

<sup>26</sup> Մատենադարան, ձեռ. № 5435 (1—488բ), էջ 471բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 628—629:

<sup>27</sup> Անդ, էջ 481ա:

<sup>28</sup> Անդ, էջ 480բ:

<sup>29</sup> Երուսաղեմ, ձեռ. № 2521, Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 8, Երուսաղեմ, 1977, էջ 194—195:

<sup>30</sup> Մատենադարան, ձեռ. № 4721, էջ 654ա:

<sup>31</sup> Երուսաղեմ, ձեռ. № 1919, էջ 1225 բ, Ն. Պողարյան, Մայր ցուցակ, հ. 6, էջ 372:

11. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1402 թ., գրված «ի սուրբ վանս Մատենականի, մերձ Խլաթայ՝ մայրաքաղաք Բզնունեաց գաւառի... ի վայելումն պատանեկին Ընքստակէսի... որ ի մարէն որք մնաց ի տիս համբակին»<sup>32</sup>: Ստացողն է Կարապետ քահանան: Չեռագիրն սկսվում է քսաներեք տերունական նկարներով և տասը խորաններով, որոնց հաջորդում է խորանների մեկնութիւնը: Ապա ավետարանիչներն են և ավետարանաառաջները: Յուրաքանչյուր ավետարան վերջանում է ավետարանիչի մասին քառատող ոտանավորով: Ամենավերջում «Գովեստ տացուք» բանաստեղծութիւնն է «Գրիգորի է» նախագծով, որին հաջորդում է բուն հիշատակարանը:

12. Տօնական. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1402—1406 թթ., ստացողներ՝ վանքի առաջնորդներ Հովհաննես և Թոմա եղբայրներ, Ռշտունյաց նկարեն վանքում: Մի շարք ճառեր է մուծել հայ հեղինակներից, կան նաև սեփական ստեղծագործութիւններ: Չեռագիրը այժմ կիսված է երկու հատորների, որոնք պահվում են Մատենադարանում 1520 և 1521 համարների տակ: Այն իր շափսերով բավականին մեծ է եղել, ինչպես ցույց են տալիս կտրված լուսանցազարդերը<sup>33</sup>: Չեռագիրը շն (75) պրակ կամ  $75 \times 12 = 900$  հաստ թերթ է ունեցել, որի պատճառով էլ կիսվել է երկու մասի: Այժմ ձեռագրից պակասում է 45 թերթ: Այդ վիճակով էլ նկարագրվել է Գ. Շահնազարյանի և հրատարակվել Լ. Կարենյանի կողմից, 1863 թ.<sup>34</sup>:

13. Աւետարան. գրիչ Հովհաննես Օրբել, 1302 թ., ստացող Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյան, ծաղկող Մոմիկ: Ավելի քան հարյուր տարի անց, (1406 թ.) Ավետարանը, որից մնացել էր 158 մագաղաթյա թերթ, անցնում է Գրիգոր Խլաթեցու ձեռքը: Վերջինս պահպանելով ձեռագրի թերթերի, սյունակների տառերի շափը, ավելացրել է 144 թերթ և կրկին ամբողջացրել ձեռագիրը, թողնելով այդ մասին մի հիշատակարան, որի սկզբնատառերը հողում են «Գրիգոր վարդապետի է այս»։ Ահա վերջին մասը՝

«Ես անպիտան յամենայնի  
Գրիգոր գծող այսմ տառի,  
Տեսի ղկըտակս ցանկալի՝  
զաւետարանքս Քրիստոսի,  
Ի թուականիս ութհարիւրի  
յիսուն ու հինգ ամ աւելի (1406),  
էտո՛ւ քաջալերս իմ սրբախ  
աշխատութեամբ զըծագրեցի:  
Աւետարանս էր այս թերի  
միայն Յոհան էր ի կարգի,  
Յերից ղլիոց սակաւ ունի  
զսկիզբն և զաւարտն ի պատշաճի:

<sup>32</sup> «Բանասեր», Փարիզ, 1905, № 4, էջ 97—100: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 308—309:

<sup>33</sup> Մատենադարան, ձև. № 1520, 1521: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 48: Չեռագրի մասին մանրամասն տե՛ս Ա. Մարեոսյան, Չեռագրական մանր սրբագրութիւններ հողվածք, «Էջմիածին», 1968, № Ե, էջ 50—64:

<sup>34</sup> «Մայր ցուցակ», ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի: Տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց: Մխիութի Կարենոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ զպրոցի ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի, Թիֆլիս, 1863, № 915, 914:

Սակս որոյ հոգս ինձ արարի,  
 և յաւժար կամար զթերին լցի»<sup>35</sup>:

14. Գանձարան. Խլաթեցու ինքնագիրն է և ծաղկածը<sup>36</sup>: Պակասավոր է «կզբից և վերջից, շունի հիշատակարան և ոչ մի տեղ չի պահպանվել գրչի սանունը: Այս ձեռագրի համեմատությունը Մատենադարանի № 4011 և 3540 Գանձարանների հետ (վերջինս գրված է 1408 թ. Յիպնավանքում, Հովհաննես գրչի ձեռքով. «առ ոտս գերիմաստ և երանաշնորհ և արդիւնական հոետորիս Գրիգոր վարդապետի»)»<sup>37</sup> ցույց է տալիս, որ այն ավելի մոտ է երկրորդին: Վերնագրերում, որտեղ Խլաթեցու ինքնագրում գրված է «ի գծողէս», այստեղ Հովհաննես գրչի մատ փոխված է «ի Գրիգոր վարդապետէ» ձևով:

Խլաթեցու ձեռագրի վերջում Զարարիա Աղթամարցի կաթողիկոսի նահատակության անթիվ, 1393 թ. գրված ողբը վերնագրված է «Ողբ ի գծողէս Գրիգորի»<sup>38</sup>, իսկ № 3540 ձեռագրում՝ «Ողբ նորին Գրիգորի վարդապետի ասացեալ»: Օրինակները բազմաթիվ են: Ուրեմն Մատենադարանի № 6851 ձեռագրի գրիչը Գրիգոր Խլաթեցին է, վայրը՝ Յիպնավանքը, իսկ գրության ժամանակը՝ մինչև 1408 թվականը:

15. Տոնական. գրիչ Գրիգոր, որդի Մերի և Խոյանդի, ստացող՝ Հովհաննես արեղա և Հովհաննես փիլիսոփա եղբայրներ: Որպես սրանց մտերիմ և աշակերտ հիշվում է նաև Առաքելը՝ նկարենա վանքի հայրպետը: Այդ վանքում է գրվել նաև նախորդ մեծ Տոնականը (№ 12):

Համեմատությունից երևում է, որ այս ձեռագիրը նախորդի համառոտումն է, այն այդպես էլ կոչվում է «տանականաձագ»<sup>39</sup>: Ձեռագիրը թյուրիմացաբար ժԶ դարի ընդօրինակություն է համարվել<sup>40</sup>: Այն գրվել է մինչև 1425 թվականը, 1406 թ. հետո:

16. Յայսմաուրեֆ. նախորդ ձեռագրի հիշատակագրություններից մի քանիսում կարդում ենք «Ողորմի Քրիստոս Աստուած մեր ստացողի գրոցս Յոհաննէս սրբազան արեղային, որ ստացաւ զայս գիրքս և Բ (2) գիրք այլ՝ Տարեգիրք մի և Յայսմաուրք մի յիշատակ եղբարն իւրոյ Յովհաննէս փիլիսոփային տարածամ գնացելոյն առ Քրիստոս»<sup>41</sup> կամ՝ «որ ստացաւ զայս գիրքս և Բ՝ Յայսմաուրք և Տարեգիրք մի ի միում ամի»<sup>42</sup>: Հավանաբար նրա համար Խլաթեցին է ընդօրինակել, այլապես մի քանի անգամ չէր հիշատակի:

17. Տարեգիրք. Տե՛ս նախորդ (№ 16) ձեռագիրը<sup>43</sup>:

18. Գանձարան. գրիչ Գրիգոր վարդապետ, ստացող՝ Թումա: Միագույն

35 Մատենադարան, ձեռ. № 6792, էջ 247բ, 248ա: Ձեռագրի 11ա էջում կարդում ենք «...ի յամի ԳԿ (1411) թրվականիս Հայոց... ևս Գրիգոր վարդապետս ձախեցի զԱւետարանս Յոհաննէս խաչպան երիցուն, որ այլ ումէք զաւի շկայ ի հետ»: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, էջ 8—10:

36 Նույն տեղում, ձեռ. № 6851:

37 Նույն տեղում, ձեռ. № 3540, էջ 257բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 92:

38 Նույն տեղում, ձեռ. № 6851, էջ 283բ:

39 Նույն տեղում, ձեռ. № 4774, էջ 247բ:

40 «Յուցակ ձեռագրաց Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 1283:

41 Մատենադարան, ձեռ. № 4774, էջ 129բ:

42 Անդ, էջ 176բ:

43 Անդ, էջ 129բ, 176բ:

գլխազարդերով, լուսանցազարդերով ու զարդագրերով նկարազարդված մատ-  
յանը գրվել է «ի վանս Յիսնայ... յամս թագաւորութեան ազգին նետողաց  
Ղարա-Ուսուֆին և որդոց նորին»<sup>44</sup>: Լ. Ս. Խաչիկյանը նկատի ունենալով, որ  
1408 թ. Հովհաննէս գրչի նույն վանքում արտագրված Գանձարանը<sup>45</sup> և նրա  
հիշատակարանը արտագրված է սույն օրինակից, գրութեան թվականը նշա-  
նակում է 1408-ը<sup>46</sup>: Սույն ձեռագիրը հավանաբար գրվել է 1408 թ. հետո: Չե-  
ռագրի «հիշատակարանում մանրամասնորեն խոսվում է ժողովածուի նպա-  
տակների ու կազմութեան պարագաների մասին: Ուստի հնարավոր է են-  
թադրել, որ այս հիշատակարանը հենց Գրիգոր Խլաթեցու «Գանձարանի» ինք-  
նագիր օրինակի հիշատակարանն է, — գրում է Լ. Խաչիկյանը, — սակայն կա-  
րելի է կարծել, որ վերոհիշյալ անձինք խնդրել են Գր. Խլաթեցուն, ընդօրի-  
նակել արդեն գոյութիւն ունեցող և ճանաչված ժողովածուն, նրա խմբագրու-  
մից տարիներ հետո: Անկասկած է, սակայն, որ այս հիշատակարանը գրվել է  
Ղարա Յուսուֆի և նրա որդիների իշխանութեան ժամանակ («յամս թագաւո-  
րութեան նետողաց Ղարա-Ուսուֆին և որդոց նորին»), ուրեմն 1408—1420 թ.  
միջոցին»<sup>47</sup>:

19. Ժողովածու. գրիչ Գրիգոր վարդապետ, 1409 թ.: Չեռագիրը երեք տար-  
բեր ժամանակների ընդօրինակություն է: Չեռքի տակ ունենալով 12 և 13 դա-  
րերի երկու տարբեր ձեռագրեր, Խլաթեցին լրացնելով ու ամբողջացնելով,  
կցել է իր ժողովածուին<sup>48</sup>, որը պարունակում է Հովհաննէս Երզնկացու, Հով-  
հաննէս Գառնեցու, Եփրեմ Ասորու, Վարդան վարդապետի, Հովհաննէս Ոսկե-  
բերանի, Հովհաննէս Մանդակունու և այլոց խրատներն ու ճառերը: 127-րդ  
թերթից սկսվում է հին, XIII դարի գրութեամբ ներսես Շնորհալու «Թուղթ  
ընդհանրականը», որից ընկած մի քանի թերթերը լրացրել է Խլաթեցին: 177—  
220 թերթերը պարունակում են Խլաթեցու «Համառատ մեկնութիւն արարածոց  
գրոցն, հաւաքեալ ի մեկնութենէն Վարդանայ վարդապետի» աշխատությունը,  
որն ինչպես երևում է, նա կատարել է 1409 թ. և վերստին ընդօրինակել  
1413 թ.: Սրանց համեմատությունը պարզում է Խլաթեցու՝ որպես գրչի և գիտ-  
նականի աշխատանքի հետաքրքրական շատ կողմեր (որոնց կանգրադառնանք  
առանձին): Ժողովածուին կցված երրորդ, ավելի հին ձեռագիրը՝ ճառերի ժո-  
ղովածու է: Այն միասյուն է՝ գրված բոլորգրով, տառերն այնքան են գունա-  
թափվել և փնասվել ջրից, որ Խլաթեցին դրանց մի մասի վրայով թանաքով  
կրկին անցել, թարմացրել է և հետո՝ ընդօրինակել 1413 թ. ժողովածուում:  
Խլաթեցին ճառերի այս ժողովածուն պարզապես փրկել է, հնացած, քայքայ-  
ված և կորստի գատապարտված մասերը նորոգելով և վերստին ընդօրինա-  
կելով:

20. Ժողովածու. գրիչ Գրիգոր պիտակ անուն խնդրող բանի, 1413 թ.,  
«Կաթողիկէից թղթոց» հետ (484ա էջից մինչև 584 բ) մի կազմի մեջ է ամ-

44 Մատենադարան, ձեռ. № 5328, էջ 289բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակա-  
րաններ, մ. Ա, էջ 91:

45 Մատենադարան, ձեռ. № 3540:

46 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, Երևան, 1955 թ., էջ 90, ձժ. 1:

47 Նույն տեղում:

48 Մատենադարան, ձեռ. № 2783, էջ 32ա, Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դ. հիշատակարան-  
ներ, մ. Ա, էջ 99:

փոփոխված, հավանաբար այդ թվականին<sup>49</sup>: Պարունակում է վարդան Արևելցու Արարածոց մեկնությունը՝ «Համառատ մեկնութիւն գրոցն արարածոց՝ հաւաքեալ ի մեկնութենէն վարդանայ վարդապետի՝ առն հոգելի և իմաստոյ, աշխատութեամբ Գրիգորի անմտի և մեղապարտի» վերնագրով: Մրկուական ճառ եփրեմ Ասորու և Փիլիքսիանոս եպիսկոպոսից, որի վերջում պահպանվել է 1187 թ. թարգմանության հիշատակարանը<sup>50</sup>, այնուհետև «խաւք իմաստասիրաց և ուղղափառ վարդապետաց՝ ասացեալ վասն զազանաց և սողնոց և ոչք ի նոսա սահմանեալ կան, բարք և բնութիւնք յաղագս արինակի արդարոց և մեղատորաց և այլոց բանից»<sup>51</sup> և այլ նյութեր:

21. Մատեան ողբերգութեան Գրիգորի նարեկացոյ. յուրաքանչյուր «բան»-ից հետո համապատասխան մեկնությամբ: Նաև շափածո գովք նվիրված նարեկացուն: Մեզ է հասել Մատենադարանի № 622 (գրված 1629 թ.), № 1573 (Ժէ դ.), № 4989 (1681 թ.), № 6733 (Ժէ դ.) ձեռագրերում, տարբեր գրիչների ընդօրինակությամբ: № 1573 ձեռագրում, նարեկացու վարքից հետո կարմիր երկաթագրով գրված է ՊԿԲ (1413), իսկ № 4989 ձեռագրում նույն տեղում թվականի փոխարեն գրված է «Ասացեալ Գրիգորի վարդապետէ Խլաթեցո՝ Մերենց կոչեցեալ»<sup>52</sup>: Այնուհետև գովքն է, որի սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է այս բանքս թողուլ զմեղս»: Սրանից բացի, որոշ ձեռագրերի սկզբում, մատչանի և նրա հեղինակի մասին կա հանելուկ (Ն. Շնորհալու հանելուկների շարքում): Բերում ենք դրանք:

ա

«Գոյր ոմն ընտիր հայկազանց  
 ի գաւառէն Ըորշտունեաց  
 Բարուն բարի ճոթ վկայած  
 անհամեմատ վարդապետաց.  
 Իմաստութեամբ յոյժ գերապանձ  
 բանիւ պայծառ և գերազանց  
 Գրքով սրբոց էր նա վարժած  
 իմաստութեամբ հոգոյն լցած  
 Որպէս զարեւն ի յաստեղաց  
 էր նա ի մէջ վարդապետաց  
 Բամից հանուրց հոնտորաց  
 և բանիրուն գիտնականաց  
 Ի հայոց էր նա ծընած  
 որ յայլ ազգեաց ենք յետս անկած  
 էր գերագույն նա և յունաց  
 աստուածարան վարդապետաց,  
 Եւ արտաքնոց համերոսաց,  
 այն պերճարան պիթագորեանց»<sup>53</sup>:

49 Մատենադարան, ձեռ. № 5435, էջ 556ա, հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 156:

50 Անդ, էջ 527ա, 539:

51 Անդ, էջ 539:

52 Մատենադարան, ձեռ. № 4989, էջ 309բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 156:

53 Մատենադարան, ձեռ. № 6733, 6ա: Սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է»:

## Բ

«Ոմն ի երկրէն Ղոշաունեաց  
էր յոյժ փարթամ յամեն բարեաց՝  
նա բարելի սեղան կազմեաց  
Ջամենեւեան ի հաշ կոշեաց  
Ող յայն հացէն աղասամբեաց  
Ինքն հաւիտեան բաղցած մնաց»<sup>54</sup>։

22. Յանախապատում հառֆ. գրիչ Գրիգոր Մերենց, 1415 թ., վայր Երուսաղէմ, ստացող՝ Մկրտիչ Մեծոփեցի։ Այդ առթիվ գրում է «եւ արդ գրեցաւ սա յաստուածակոխ բաղաբս յԵրուսաղէմ, ի վանս սուրբ Յակոբայ... ձեռամբ յորնամեղ և անարհեստ գրչի՝

«Գրիգորի մեղապարտի,  
Պիտականուն վարդապետի,  
նր ցանկանայ այս[մ] տառի՝  
Գրոց մերոյս լուսաւորչի,  
նր ի վաղուց փափազէի  
եւ որոնեալ շատանէի,  
Մինչ որ յԵրուսաղէմ եկի  
եւ աստ գրտի, զոր ցանկայի,  
Տոր ձեռնարկեալ իմ և գրեցի  
Ձայս լուսատու բանքս ի բարտի»<sup>55</sup>։

Յանախապատումից հետո տպագրվում է Վարդան վարդապետի վեց հանրը Գրիգոր լուսավորչի, նրա որդիների, հետին թոռների և հետնորդների, ինչպես նաև Սահակի, Մեսրոպի և մյուս թարգմանիչների մասին<sup>56</sup>։

1418 թ. Մկրտիչ Մեծոփեցին նույնաչափ թղթերի վրա գրում է Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» և խլաթեցու ձեռագրի հետ միասին կազմում։

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 7ա։ Վերջում կա նաև մի ոտանավոր, որի սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է»։

«Գոյս է շնչին սակաւատր,  
արդշունքն մեծ և զորատր,  
Բամեալ բանիւ յոյժ փառատր,  
գիտուն մտաց է բղծատր։  
Իմաստութեամբ խորհրդատր  
եւ հանճարեղ բան լուսատր,  
Գրբեալ ի պէտս հոգեւոր  
բանասիրաց բան շահատր,  
նրբ միտ գնեն բանիս բոլոր,  
պաղարբերեն յոյժ բեղմնատր,  
Բոտեալ սիրով արգասատր  
բզղծողս յիշեն՝ գիտ Գրիգոր,  
Ի հանդիսի տօն խմբատր,  
սրբոց արանց պսակատր,  
էին բանի հօրն երկնատր  
փառս տացուք մեր բանատր»։

<sup>55</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 220ա։ Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԵ գարի հիշատակաբաններ, մ. Գ, էջ 338—339։

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 221ա—315ա։

23. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1419 թ., վաչր Յիսկնա վանք: Ձեռագրի սկզբում բերված են ներսես Շնորհալու «Պատճառ ժ խորանաց սրբոց Աւետարանիս և վասն երանկ ոանկ գունոց ծաղկանց և հաւուցն ու ծառոցն»<sup>57</sup> և «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց աւետարանիս»<sup>58</sup> մեկնությունները և վերջում պարզաբանում մեկնությունների ստեղծման պատճառը: Խորագրերում Խլաթեցին սխալվել է: Առաջինը Ստեփանոս Սյունեցու մեկնությունն է, երկրորդը՝ վարդան Արևելցու: Ձեռագրի ծաղիկողը նույնպես Խլաթեցին է: Ձեռագիրն ավարտվում է մատչանի հետագա ժառանգողներին ուղղված խրատով, որն ունի այսպիսի վերնագիր՝ «Խաւսք և պատուեր սուրբ գրոցս, առ այնոսիկ որ ժառանգեն զսա յապայս ժամանակաց վասն զգուշութեան»:

24. Գանձարան. արտագրված է Գրիգոր Խլաթեցու օրինակից, որի կաֆաներից մեկի մեջ հիշված է 1418 թվականը:

«Գանձ Յովնանու զխաւաման  
Գանձս ասէ զկաֆայս  
Գանձս գրեցայ ևս պիտանի  
Բոտեալ բանիս ախորժելի,  
Ի Գրիգորէ գարչ աղտելի,  
Գրեալ սրբոյն Կարապետի,  
Երդոյն սուրբ Զարարիայի,  
Բամից փրկչին մըկրտողի,  
Ի տասն և յեաթն յոբելին[ի]  
է և տասին թիւ աւելին (1418)  
Բանքս գրեցաւ այս գովելի,  
Այն Յովնանու Կարապետին,  
Նախամեծար սրբոց դասին»<sup>59</sup>:

Խլաթեցին սովորություն ուներ Գանձարաններում գլխավոր հիշատակարանից դատ, թվականը հիշել նաև ձեռագիրը ընդօրինակելու ժամանակ գրված կաֆաներից մեկում, ինչպես 1399—1400 թ. խմբագրված Գանձարանում (ձեռ. № 4011): Մեր կարծիքով այս թվականը այն գանձարանի գրության թվականն է, որը գաղափար օրինակ է ծառայել Մատենադարանի № 4200 ձեռագրի համար:

25. Ճաշոց. Կարապետ գրիչը, 1421 թ., Աղեթում հյուան Հովհաննեսի համար ընդօրինակում է Ճաշոցը:

Կարապետի հետ որոշ էջեր (238բ—272ա, 286բ—288ա—295բ—301ա և այլն) ընդօրինակել և հիշատակարանը (գրչի անունից) ինչպես նաև վերջի շափածո մասը (սկսվում է «Իսկ ի յամի ութ հարիւրին» և կազմում է «Յիշատակարան աղետից» ողբի վերջին մասը) շարադրել ու գրել է Գրիգոր Խլաթեցին. ինչպես երևում է գրչությունից<sup>60</sup>:

<sup>57</sup> Մատենադարան, ձեռ. № 3714, էջ 1ա: Այս ձեռագրից են արտագրված Մատենադարանի № 7772 և № 9432 ձեռագրերը նրա աշակերտ Աստվածատուրի կողմից, որը պահպանել է և խորանների մասին մեկնությունները, և նկարաշարը, և վերջին խրատը: Մեկնությունների վերջում Խլաթեցու «պատճառը» բուն ձեռագրում թերի է, թերթ ընկնելու պատճառով, իսկ այստեղ լրիվ:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 2ա:

<sup>59</sup> Մատենադարան, ձեռ. № 4200, էջ 252ա:

<sup>60</sup> Մատենադարան, ձեռ. № 4522, էջ 431բ:

26. Գանձարան. Մատենադարանի № 5798 ձեռագիրը 1462 թ. ընդօրինակված է Գրիգոր Խլաթեցու 1422 թ. գրված Գանձարանից, որն ավարտվել է «Յիշատակարան աղէտից» նշանավոր ողբով: Այն պահպանվել է նաև Կարապետի ձեռագրում հետևյալ վերնագրով. «Յիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում, զոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականունն Մերենց կոչի, Խլաթեցի»<sup>61</sup>:

Այսպիսով, Խլաթեցու խմբագրության մեզ հայտնի վեց գանձարաններից երեքը ինքնագիր են, երեքը՝ ինքնագրերից արտագրված:

27. Յիսուս որդի Ներսիսի Շնորհալիոյ. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1423 թ.: Հայտնի չէ ձեռագրի ճակատագիրը: Այն գրվելուց անմիջապես հետո կազմվել է Գրիգոր Նարեկացու «Մատենի» հետ, որն այժմ պահպանվում է Մատենադարանում և կրում 7019 համարը: Սկզբում եղել է Մատչանը, վերջում՝ Յիսուս որդին:

Ձեռագրի 164ա էջում կարդում ենք. «1801 թ. սեպտեմբերի 16-ին Վանայ հեծեալն գնաց ի Մահմուտի ի վերայ Աւտի աղին, նա փախեալ գնաց Խոչ, գիւր (իմա՝ գոյր) նորին աւարի և թախթան արարին: Զայս հրաշալի սուրբ նարեկս անկեալ էր ի ձեռս այլազգի միոյ...»

Հէքիմպաշոնց Մահդասի Աահակ աղային ի գութ շարժեալ մեծի, էառ իւր հալալ արդեանց, որ էին գրեալ Բ(2) գիրք ի միասին կազմեալ էին, յոյժ թանձր էր եղեալ, որ էր մէկ Յիսուս որդի՝ զոյգ ընդ նարեկիս: Վասն որոյ թվին ՌՄՄԸ (1809) նոյեմբերի Ա. (1) վերստին Լտուր մեկնել ի միմիանց յատուկ-յատուկ՝ Լտ նորոգել վասն փոքր լինելոյ: Բայց յիշատակարանս ի վերջն Յիսուս որդոյն էր գրած, ի մեկնելն միմիանց՝ մնաց նարեկն առանց յիշատակարան: Եւ Լս մեղօք մածեալ Կարապետս բերանով նորին գրեալ եմք...»:

«Յամի թուականութեանս Հայոց ՊԷԲ (1423) գրեցաւ գիրքս այս աղօթական Լոամեծին սրբոյն Գրիգորի Նարեկացոյն և վանից վանականի և Հայոց փիլիսոփայի: Գրեցաւ ձեռամբ Եզնկացոյ, և Գրիգորի Խլաթեցոյ, և իմովս մեղապարտի տխրիժ մատամբս, և յևտինս ի բանասիրաց և տրուպս ի բանաստեղծաց, և ի խնդրողաց բանին Յիսուսի հսկող անուանեալ հոմանուն Գրիգորի...»<sup>62</sup>:

Մատչանի գրությունը Գրիգոր Խլաթեցունը չէ, ուրեմն Երզնկացունն է: Ձեռագրի վերջին 14 էջերն են Խլաթեցունը, ինչպես երևում է գրությունից, և նրան հաջորդող ներսես Շնորհալու Յիսուս որդին պոեմը, որն անշատվել և առանձին կազմվել է:

28. Փամագիրք, սաղմոսաբան, տօնացույց. ձեռագրի մասին իմանում ենք 1620 թ. ընդօրինակությունից (գրիչ՝ Ստեփանոս քահանա, վայր՝ Վան, ստացող՝ Գէորգ Լախսկոպոս), որի հիշատակարանում կարդում ենք. «...Իսկ Լս

61 Որոշ հատվածներ հրատարակվել է Ղ. Փիրզալեմյանի «Նօտարք Հայոցում» (Կ. Պոլիս, էջ 5, 36, 47): Ամբողջական հրատարակվել է «Ազրյուր» ամսագրում, Քիֆլիս, 1889, № 11, էջ 127—133, Արխատակես Լալ. Սեդրակյանի կողմից, Ղ. Ալիշանի «Հայապատումի» Բ հատորում, Վենետիկ, 1901, էջ 563—568: 1897 թ. Գ. Խալաթեցունցը հրատարակեց «Արարատում», Վաղարշապատ, 1897, իսկ 1959 թ. Լ. Խաչիկյանը հրատարակեց համեմատական քննարկը երեք ձեռագրերի համեմատությամբ (Ժն դարի հիշ., մ. Ա, էջ 272—286):

62 Մատենադարան, ձեռ. № 7019, էջ 164ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, Ժն դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 311:



եպիսկոպոսս Գէորգ ծառայ ծառայիցդ Աստուծոյ ի բազում տենչամբ տոչորեալ էի ի սէր ուղղաբան Սաղմոսարանիս ատենի, ահա հանդիպեցայ լաւ և ընտիր արինակէ Մերենց Գրիգորի, որ բազում ճգամբ և ջերմեռանդ սրտիւ և տու գրել...»<sup>63</sup>: Մարգիս աշխարհականը 1629 թ. Խոտածան գյուղում ընդօրինակում է մի Սաղմոսարան «յընտիր և լաւ արինակէ Մերենց կոչեցեալ»<sup>64</sup>: Հավանաբար նույն դորժը նկատի ունի:

29. Ասագ Մաշտոց. Մեզ է հասել Թումա Աղթամարցու 1499 թ. Աղթամարում կատարած ընդօրինակութեամբ. «Բազում աշխատանօք գծագրեցի զսա ի ստոյգ և յընտիր արինակէ, զոր սրբագրեաց և փարթամացոյց մեծ հոհտորն Գրիգոր վարդապետն քաջ և արին»<sup>65</sup>:

Ձեռագրում պահպանված են Գրիգոր Խլաթեցու մի քանի գանձեր («Գանձ արհնելոյ», «Գանձ ձեռնադրութեան» և այլն):

Այդ նույն օրինակից կիմ անապատում 1530 թ. Ռստակես Աղթամարցին արտագրում է Մաշտոց, ուր կա նաև մի «Շարական ի Մերենց շնորհալի վարդապետէն Գրիգորոյ վասն տնտես արհնելոյ» նաև «Գանձ ձեռնադրութեան քահանայից ի Մերենց Գրիգորէ վարդապետէ Խլաթեցոյ», իսկ վերջում մի ոտանավոր, որ գտնվում է նաև «Նարեկի»՝ Խլաթեցու ընդօրինակութեան մեջ<sup>66</sup> «Գոյս է շընչին սակաւաւոր» սկսվածքով, որի սկզբնատողերը հոգում են «Գրիգորի է»<sup>67</sup>:

30. «Պատմութիւն գերից ժամանակաց ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս». այս տեղեկության միակ վկայությունը Թովմա Մեծոփեցու Պատմութիւնն է<sup>68</sup>: Երկը հայտնաբերելու ուղղութեամբ մեր որոնումները առայժմ արդյունք չեն տվել:

31. «Գրիգոր Մերենց Խլաթեցին զէ(7) անուր արաւշաւրեանն գրեաց յայսմ վայրի»<sup>69</sup>:

32. Մատենադարանի № 1981 ձեռագրի 92ա—100ա էջերը Գրիգոր Խլաթեցու գրութեամբ ավելացրած թերթեր են<sup>70</sup>:

Ահա այն ձեռագրերը, որ մեզ հայտնի են Գրիգոր Խլաթեցուց, որոնցից մի քանիսը նրա խմբագրություններն ու մեկնություններն են, մյուս մասը՝

63 Մատենադարան, ձեռ. № 4927, էջ 354ա:

64 Բ. Կյուլիսեբյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիզիաս, 1957, էջ 1215: Հավանաբար Մերենցի օրինակը պահվել է Մեծօփա վանքում, ինչպես երևում է 1620 թ. արտագրված մի Սաղմոսարանի հիշատակարանից «եւ երթեալ հասեալ մեծահոշակ վանքն Մեծօփ և մտեալ ի սրբատունն [ևտես] Սաղմոսարան մի որ Մերոց (Մերենց—Ս. Մ.) կոչին»: Հմմտ. վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Փէ դար, հ. Ա, Երևան, 1974, էջ 734:

65 Մատենադարան, ձեռ. № 6326, էջ 406ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, Փե դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 284:

66 Տե՛ս աստ, էջ 21:

67 Ն. Պողոսյան, Մայր Ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 143—147:

68 Թովմա Մեծօփեցի, Պատմութիւն, էջ 42:

69 Գրված է Մերենցի՝ Հայսմավորքից արված ընդօրինակության վերջում: (Ա. Սյուրմեյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի...», Երուսաղեմ, 1935, էջ 292):

70 Պարունակում են 92ա «Առաջել Երիցու բանիրուն և շնորհալից քահանայի ասացեալ բան քաղցրաշատ ի նախահայրն մեք...», 98բ «Թովասանութիւն գրոցն այրուրենի», 100ա «Ախթար»:

ընդօրինակությունները, որոնց մեջ պահպանվել են հեղինակի շափածո և արձակ ստեղծագործությունները, պատմությունները, վարքերը և վկայաբանությունները, հարյուրից ավելի գանձեր, տաղեր, մեղեդիներ, ներբողներ, մանրերկեր, հիշատակարաններ և հիշատակագրություններ՝ պատմագրական հրակայական տեղեկություններով:

Մրանց պետք է ավելացնել նաև այլևայլ ժողովածուներում հանդիպող նամակները, հարցմունքների պատասխաններն ու հանելուկները: Գրանք են. ա. «Էտապատան Գրիգոր Մերենց վարդապետի»<sup>71</sup>:

բ. «Խրատի ժամակարգութեանց, աղօթից և ճերարութեանց հասարակաց յանձնառութեան և առանձնութեան ի Գրիգոր վարդապետէ»<sup>72</sup>:

գ. «Խրատի ժամատեղեաց քստ Արևելեան սահմանացն սկսուածոց և ասութեան աղօթից, զոր խնդրեալ սուրբ վարդապետն Յակոբ Աբիմեցի ի բարունոյն Գրիգորի Խլաթեցոյ»<sup>73</sup>:

դ. «Թուղթ», որոնք տեղափոխված են Թովմա Մեծոփեցու հավաքած նամակների ժողովածուում, որի վերնագիրն է «Թուղթ նամակի վարդապետաց: Եկեղեցոց, զոր ի կեանս իմ գտի՝ ևս պիտականուն վարդապետ Թովմա, աստ հաւարեցի վասն գրոց աշակերտի»:

Զեռագիրը հետագա ընդօրինակությամբ պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում<sup>74</sup>:

ե. «Հանելուկի ի Գրիգոր վարդապետէ Մերենց»<sup>75</sup>:

Այս է Գրիգոր Խլաթեցուց մեզ հասած ձեռագրական ժառանգության պատկերը, որոնց (ինչպես նաև հիշատակարաններին) կանդրադառնանք առանձին-առանձին:

«Ոչ միայն գրասիրության այլև ուսումնասիրության մի տիպար է եղել այս վարդապետը»<sup>76</sup>,— գրում է Մանուկ Արեղյանը Գրիգոր Խլաթեցու մասին: Խլաթեցին գրչության արվեստի ուսուցիչ էր Խառաքստա վանքում, գրչապետ, գեղեցկագիր: Հաճախ է հիշում հիշատակարաններում, որ ձեռագիրը ավարտել է առանց գրչափոխության, որ վարպետության նշան էր<sup>77</sup>:

«Ինքն գիտէ Տէրն կայուն.

Որ ի յայրէն մինչև ի նուն,

Ոչ է կորած գրիչս ի բուն»:

Այստեղ նշված են Ավետարանի սկզբի և վերջի տառերը, այսինքն «Աւետարան» բառի առաջին և «ամէն» բառի վերջին տառերը: Նշանակում է, ամբողջ ձեռագիրը գրել է նույն գրչով, որը երբեք չի սրել: Նա էր զարդարում իր ընդօրինակությունները զարդագրերով, լուսանցազարդերով, գլխազարդերով և տերունական նկարներով:

71 Մատենադարան, ձեռ. № 8076, էջ 74ր:

72 Նույն տեղում, ձեռ. № 5128, էջ 245ա:

73 Մատենադարան, ձեռ. № 9244, էջ 139ա:

74 Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, № 92: Նույնի մանրածագավենը, Մատենադարան № 377: Հմմտ. Ս. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու նամակները, «Լրարեր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1978, № 5:

75 Ա. Մնացականյան, Հայ Միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 381—387:

76 Մ. Արեղյան, Երկեր, հ. 4, Երևան, 1970, էջ 409:

77 Լ. Խաչիկյան, ԺԳ գրքի հիշատակարաններ, էջ 601:

Գրիգոր Խլաթեցին հմուտ գրիչ լինելուց բացի նաև ծաղկող էր: Նա ինքն է նկարագարել իր ընդօրինակած ձեռագրերից շատերը, շնայած այդ մասին որևէ հիշատակություն չի արել: Եթե Խլաթեցու ընդօրինակությունների ծաղկողը այլ անձնավորություն է լինում, ապա հիշատակարանում անպատճառ նշվում է նրա անունը: Իսկ երբ այդ բացակայում է, մանավանդ երբ նկարների բացատրություններն ու բնագրի ձեռագիրը նույնն են, այդ դեպքում կասկած չի մնում, որ գրիչը և ծաղկողը Խլաթեցին է:

Գրիգոր Խլաթեցու ինքնագրով մեզ հասած Մատենադարանի № 1520 ճառընտիրում 49-րդ պրակի «Երանելույն Եփրեմի խորին Ասորույն ասացեալ ի գալուստն Քրիստոսի բառասնարեալ ի տաճարին յընծայումն» ճառի դիմաց, լուսանցքում նկարված է մի գեղեցիկ տաճար և ստորին լուսանցքում գրչի ձեռքով գրված. «Այս արարի, որ թիւն ի ՊՄԵ էր: Տաւնս, ի յայս տեղս եղաք»<sup>78</sup>: Այս փաստն ուղղակիորեն ասացուցում է, որ Խլաթեցին նաև ձեռագրի մանրանկարիչն է:

Լինելով բազմակողմանիորեն զարգացած մարդ և գրչության արվեստին կատարելապես տիրապետող գրիչ, Խլաթեցին իր ընդօրինակած ձեռագրերում կատարել է և թեմատիկ նկարներ, գլխազարդեր, լուսանցազարդեր և զարդագրություններ<sup>79</sup>:

Գրիգոր Խլաթեցին նաև նշանավոր երաժիշտ էր: Իր գանձերից շատերը ինքն է խաղաղրել, ձայնաղրել և երգել քաղցրաձայն, ինչպես վկայում են ինքնաստեղծ գանձերը, տաղերը, մեղեդիները և հիշատակարանները:

Գրիգոր Խլաթեցու մանրանկարչական, ինչպես նաև երաժշտական ժառանգությունը արժանի է մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրության:

С. Т. МАРАБЯН

## РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ГРИГОРА ХЛАТЕЦИ

### Резюме

В статье представляется рукописное наследие одного из крупных представителей средневековой армянской культуры, писателя, поэта, педагога, писца, художника, религиозного деятеля Григора Хлатеци (1349—1425). Хлатеци занимался рукописным делом около шести десятилетий, с восемнадцатилетнего возраста до «дня мученичества» и писал «летом и зимой», осенью и весной, днем и ночью, дома и вне его, в монастыре, в деревне и в городе.

В рукописном наследии Григора Хлатеци насчитываются 32 рукописи, хранящиеся в Матенадаране им. Маштоца и других армянских рукописных собраниях. Среди них имеются как автографы, так и последующие копии. В целях восстановления колоссальных рукописных потерь, возникших в результате походов Тамерлана, Хлатеци не толь-

<sup>78</sup> Մատենադարան, ձեռ. № 1520, էջ 131ր: Հմմտ. Ա. Մարեոսյան, Ձեռագրագիտական սրբագրություններ, էջ 60:

<sup>79</sup> Զ. Հակոբյան, Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ծերենց) մանրանկարիչ, «Էջմիածին», № 5, 1975:

ко сам переписывал, но и побуждал других делать то же самое. Он разыскивал и размножал редкостные рукописные образцы.

В перечне рукописей Хлатеци мы встречаемся не только с обыкновенными списками, такими как Евангелие, Чашоц, Маштоц и т. д., но и с редакциями церковно-ритуальных сборников, выполненных им самим, например Четы-Миней, праздничный лекционарий, Гандзаран, а также с собственными толкованиями евангелия от Иоанна и сокращением толкования Пятикнижия, принадлежавшим перу Вардана Аревелци; собственные произведения—«Повествование о трех временах в вопросах и ответах» и др.

S. T. MARABIAN

## L'HERITAGE MANUSCRIT DE GRIGOR KHLATETSI

### Résumé

L'article présente l'héritage manuscrit de l'un des représentants éminents de la culture arménienne, médiévale, Grigor Khlatétsi (1349—1425), écrivain, poète, pédagogue, peintre, homme d'Eglise. Khlatétsi a consacré environ six décennies de sa vie au métier de scribe, de l'âge de dix-huit ans jusqu'au "jour de son martyr"; il a écrit "en hiver et en été, en automne et au printemps, le jour et la nuit, à la maison et dehors, au monastère, à la campagne et en ville".

L'héritage manuscrit de Grigor Khlatétsi compte trente-deux manuscrits conservés au Maténadaran Machtotz et dans les autres collections de manuscrits arméniens. Certains de ces ouvrages sont autographes, d'autres des copies d'oeuvres antérieures. Dans le but de compenser les énormes pertes de manuscrits ayant résulté de l'invasion de Tamerlan, Khlatétsi, non content de copier lui-même, encourageait les autres à suivre son exemple. Il cherchait, trouvait et recopiait les manuscrits rares.

В общем и целом между формами букв таблички и рукописи наблюдается удивительное, вернее сказать—палеографически невероятное, согласие. Оно-то и явилось причиной первых наших подозрений. Но куда красноречивее (помимо уже отмеченной перестановки рядов) допущенные фальсификатором оплошности.

Оплошность первая: пропуск буквы № 25. Эта ошибка, правда, говорит лишь о рассеянности автора подделки.

Оплошность вторая: необычная форма буквы № 35 (A-15). Достаточно одного взгляда на любую репродукцию рукописи 7117, чтобы понять, откуда взялось Т-образное навершие. Оно состоит из армянских букв *шп* (из названия буквы № 30 *каг*) и узкого вертикального зигзагообразного пятна, соединяющего их с самой буквой № 35. Используемое воспроизведение явно не отличалось большой разрешающей способностью.

Оплошности третья и четвертая обнаруживаются при решении проблемы «лишних» букв. Опять-таки достаточно взглянуть на любую репродукцию рукописи 7117, чтобы убедиться, что за буквой № 4 *гат* (B-11)—если не обращать внимание ни на что, кроме величины знаков—непосредственно следуют две буквы большого формата: арм. *Ա* а—первая буква армянской транскрипции названия алуанской буквы № 1 *алт'*—и арм. *Զ* з—первая буква армянской транскрипции названия алуанской буквы № 3 *зит*. *Эти-то армянские буквы и изображены на табличке в виде знаков B-12 и B-13!* (На небольшие сравнительно с этими первые буквы названий алуанских букв № 2 *одет'* и № 4 *гат* создатель таблички просто не обратил внимания: откуда было ему знать, что и те, и другие армянские инициалы, в отличие от алуанских букв, были написаны в рукописи красными чернилами? Его-то оригинал был несомненно черно-белым!). И лишь за ними—и в рукописи, и на табличке—следуют истинно алуанские буквы № 5 *еб*, № 6 *зарл* и т. д. Таково происхождение «лишних» алуанских букв и такова мера невежества их «изобретателя».

Впоследствии, однако, поняв свои последние две ошибки и замыслив превратить неверные знаки в «неуцеленные», «поврежденные» или «неразборчивые», он почти полностью уничтожил знак B-12 (в результате чего разбил табличку?), отретушировал (?) знак B-13 и зачем-то (скорее всего, чтобы вообще не было «лишних» букв) прошелся шкуркой по вполне безупречным знакам B-14 и B-15, не стерев их, однако, полностью<sup>23</sup>.

*Вывод.* Так называемый «новонайденный список албанского алфавита из Верхнего Лабко»—отнюдь не «в высшей степени ценная находка», а наглая и грубая фальшивка, обман как научной, так и широкой общественности, обошедшийся государству в немалую копейку<sup>24</sup>!

<sup>23</sup> К этому последнему действию применимо то же рассуждение, что и в прим. 19. Виной этих запоздалых пертурбаций мог явиться В. Л. Гукасян, точнее—интерес, проявленный им к «лишним» буквам.

<sup>24</sup> Справедливости ради отметим, что уже В. Л. Гукасян не исключал возможно-

\* \* \*



Post scriptum. Желаящие собственными глазами увидеть использованный фальсификатором оригинал найдут его в том самом издании, на которое, согласно В. Л. Гукасяну, ссылался Х. М. Арсланбеков (см. выше, § 1), и в которое мы решили, на всякий случай, заглянуть, когда предшествующие страницы уже были написаны, а именно: Р. М. Магомедов. История Дагестана.—Махачкала: Дагучпедгиз, 1961 (см. рис. 15 на с. 53). Указанному рисунку присущи (за одним исключением) все черты, которые мы умозрительно «вычислили» выше. На нем воспроизведены вместе обе стороны листа 142 рукописи 7117 Матена-дарана, причем без окончания грузинского алфавита и начала коптского. Изображение алуанского алфавита мелкое, черно-белое, без полутонов, с плохим разрешением деталей. Буква № 35 имеет, вследствие последнего обстоятельства, точно такое же Т-образное навершие, какое вызвало справедливое удивление В. Л. Гукасяна на табличке (А-15). Армянские инициалы названий *alt'* (№ 1) и *zim* (№ 3) выделяются на фоне мелкого болоргира своей строки несколько ярче, чем обычно, и, разумеется, имеют тот же цвет, что и алуанские буквы. Однако, вопреки нашему предположению, оба букворяда—соответствующий лицевой и соответствующий оборотной сторонам листа—не переставлены: они просто разделены довольно широким пробелом, как перед новой главой. Эта пустая полоса, видимо, и явилась причиной «фальстарта». Но поскольку, покончив со 2-м букворядом, автор таблички все же дополнил его частью 1-го, значит он *знал*, что нарушил алфавитный порядок, но не придал этому значения! Непростительная небрежность, когда речь идет о «самой древней надписи Дагестана».

---

сти подделки (с. 133: «если он [алфавит] подлинный!»), что не помешало ему, однако, опубликовать его без какой-либо дополнительной экспертизы. Сильно сомневался в аутентичности таблички и акад. А. Г. Шанидзе, писавший нам: «Этот документ и мне внушает подозрение» (письмо от 7.II.80 г.).



Рис. 1—3. Табличка из Верхнего Лабкомахи: 1—по В. Л. Гукасяну (1971); 2—по Г. А. Климову (1976 г.); 3—по муляжу А. Г. Шаидзе (1971): фото без прорисовки (а) и с прорисовкой и нумерацией знаков (б). (См. прим. 8).



ГРУЗИНСКИЙ  
АЛФАВИТ  
(окончание)

1	2	3	4	
alt'	odet'	zim	gat	
5	6	7	8	9
ēb	zaŕl	en	žil	t'as
10	11	12	13	14
ča	yud	ža	irb	ša
15	16	17	18	19
len	ina	xēn	dan	čar

8

20	21	22	23	24	
zox	kar	lit	hēt	hay	
25	26	27	28	29	30
ar	yoy	di	č'ay	mak	kaŕ
31	32	33	34	35	
nuc'	jay	šak	Jayn	un	
36	37	38	39	40	
tay	xam	jay	č'at	pen	
41	42	43	44	45	
p'ēs	kat	sēk	vēz	tiwr	
46	47	48	49	50	
soy	ion	caw	c'ayn	yayd	
51	52				
p'iwr	k'iw				

КОПТСКИЙ АЛФАВИТ  
(начало)

6

Рис. 4. Албанский алфавит на лицевой (а) и обратной (б) сторонах листа 142 рукописи 7117 (XV в.) Матенадарана им. Месропа Маштоца: фото (сверху); нумерация букв и транскрипция их названий (снизу).



Ս. Ն. ՄՈՒՐԱՎՅՈՎ (Մոսկվա)

ԶԳՈՒՇԱՑԵՔ, ԿԵՂԾԻՔ Է

(Աղվանական այբուբենի մի նորահայտ ընդօրինակման մասին)

Ա մ փ ո փ ո լ մ

1970 թ. դեկտեմբերի 30-ին «Դագեստանսկայա պրավդա» օրաթերթը հրատարակեց մի հոդված, որի հեղինակ Խ. Աբսլանբեկովը հաղորդում էր այն մասին, որ նույն թվականի սեպտեմբերին գտել է մի քարե սալիկ, որի վրա դրոշմված են աղվանական այբուբենի տառերը: Այնուհետև, բացի Խ. Աբսլանբեկովից, դրա մասին որպես «վերին աստիճանի արժեքավոր հայտնագործություն», գրել են Վ. Ղուկասյանը և Գ. Կլիմովը:

Հոդվածի հեղինակն ապացուցում է, որ այդ «գյուտը» մի կեղծիք է, գիտական հասարակայնությանը մոլորեցնող խաբերայություն: Յուրյց է տրվում, որ կեղծարարը օգտվել է Մատենադարանի № 7117 ձեռագրի 142-րդ թերթի լուսանկարից: Քանի որ աղվանական այբուբենը պարունակող այդ ձեռագիրը հայտնաբերվել է 1937 թ., ապա և, ըստ հեղինակի, կեղծարարն իր սալիկը պետք է պատրաստած լինի 1938—1970 թթ. միջև ընկած ժամանակահատվածում:

S. N. MOURAVIEV (Moscou)

ATTENTION, FALSIFICATION!

(Sur une copie nouvellement découverte de l'alphabet des Albanais du Caucase)

R é s u m é

Le 30 décembre 1970, la "Daghestanskaya Pravda" publiait un article dont l'auteur, Kh. Arslanbékov déclarait avoir découvert, au mois de septembre de la même année, une dalle en pierre où sont gravés les caractères de l'alphabet des Albanais du Caucase. Par la suite, V. Ghoukassian et G. Klimov ont reparlé du fait, le qualifiant de "découverte extrêmement importante".

L'auteur de l'article prouve que cette "découverte" est une falsification destinée à induire en erreur les milieux scientifiques. Il démontre que le falsificateur s'est servi de la photographie du fol. 142 du manuscrit no. 7117 du Maténadaran, contenant l'alphabet des Albanais du Caucase. Comme ce manuscrit a été découvert en 1937, donc, selon l'auteur de l'article, le falsificateur a dû fabriquer sa dalle entre les années 1938-1970.

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ

## ՆՈՐԱՀԱՅՑ ՆՇԽԱՐՆԵՐ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ թարգմանական մատենագրության յուրաքանչյուր միավորի հայտնաբերումը, հրատարակումն ու արժևորումը կարևոր է ոչ միայն հայ թարգմանական գրականության պատմության, այլև շահեկան՝ մասնավորապես, հայ թարգմանական գրականության ծավալաքանակի ճշտորոշման համար: Մատենագրական այսօրինակ միավորներն, ինչպես հայտնի է, շատ հաճախ լինելով ոսկեդարյան, այսօր առանձնակի կարևորություն են ստանում նաև հայոց լեզվի պատմության ուսումնասիրման համար:

1914 թ. արքունի խորհրդական, Վիեննայի համալսարանի աստվածաբանական բաժնի երբեմնի ուսուցչապետ W. A. Neumann-ի անձնական գրադարանում պահվող հայերեն կրկնագիր ձեռագրերի մեջ երջանիկ մի պատահականությամբ Mspt. syr 3 համարը կրող ասորերեն մի գրչագրում Հ. Ն. Ակինյանն ի հայտ բերեց Հովհան Ոսկերեբանի, մինչ այդ հայերեն թարգմանությամբ որոշ հատակոտորներով միայն հայտնի<sup>1</sup>, սաղմոսաց ընդարձակածավալ մեկնության (շուրջ ճժէ—ճԽճ սաղմոսաց մեկնությունը պարունակող) մի հատվածը՝ գրչագրված, ըստ երևույթին, 2—է դդ.<sup>2</sup>: Հանգամանալից նկարագրելով ձեռագիրն ու իբրև «ճաշակ բանասիրաց» հրատարակելով առանձին ընթեռնելի հատվածներ՝ երկասիրության հայերեն թարգմանության ու հունարեն բնագրի խնդրական պարագաների լուսաբանմանը նվիրված բաժնում հայագետը գրում է. «Ստուգիվ անբացատրելի էր մեզի թե ինչպես վրիպած էին թարգմանչաց մտադիր աչքեն՝ Ոսկերեբանի մեկնական գրվածոց ամեննն գեղեցիկն և ներկուտն սաղմոսաց մեկնությունքն, մանավանդ որ սաղմոսաց ուրիշ համապատասխան մեկնություն մ'ալ չէին տված: Այս հիմամբ կրնաինք ի հառաջագունն իսկ ենթադրել սույն թարգմանությանս գոյությունը, թեև անոր հետքն հայ մատենագրության մեջ իսպառ կորսված երևար: Ո՞չ

<sup>1</sup> Տե՛ս «Յովհաննու Ոսկերեբանի ճառք», Վենետիկ, 1861, էջ 110—122, 773—778, «Յովհաննու Ոսկերեբանի... Մեկնութիւն թղթոցն Պաղոսի», հ. Բ, Վենետիկ, 1862, էջ 654—676, «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ...» (հրատ. Կարապետ Եպիսկոպոս [Տեր-Մկրտչյան]), Ս. էջմիածին, 1914, էջ 319:

<sup>2</sup> Հ. Ն. Ակինեան, Յովհաննու Ոսկերեբանի սաղմոսաց մեկնութեան նորագիտ հայերէն թարգմանութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 2—31:

ապարեն նույն Ոսկերերանի ծանոթ մեկնությունքն ալ գիպվածով իմն հասած են մեզի...: Զարմանք չէ ուրեմն եթե այսպիսի բախտի պատահած ըլլա նաև սաղմոսաց մեկնությունն, որուն գոյությունն այսօր երևան կ'ելլէ դիպվածով մը...: Ցավ է, սակայն, որ այս հայտնությունը կոչված է միայն համողելու զմեզ, թե ստուգիվ գոյություն ուներ այնպիսի թարգմանություն մը՝ առանց զոհացնելու մեր ախորժակն վայելելու ամբողջական բնագրին վայելչությունը: Սաղմոսաց մեկնությանց թարգմանությունս կատարված է Ս դարուն առաջին կեսին՝ միաժամանակ Ոսկերերանի այլ մեկնությանց և նույն նկարագրով ըստ ամենայնի՝ ազատ ըստ ճարտարության քաջ թարգմանչին, բարձր, ճոխ ու կանոնյալ դասական հայերենով: Ոչ միայն նյութին ընտրությունն, այլև լեզվին ազնվությունը գերազանց կրնժայեն թարգմանությունս և հարզն անզնահատելի: Ցանկալի էր, որ կարգացված քանի մը էջերն հետաքրքրություն դարթուցանեին ամբողջ կրկնագիրն ընթերցանելի ընելու և զբժոյն կարևորությունը գրգիռ ըլլաւ բանասիրաց խուզակելու գրչագրաց հավաքածուներու մեջ ամբողջական բնագիրը...»<sup>3</sup> (ընդգծումը մերն է—Ղ. Ք.):

Դժբախտաբար քաղաքական վերահաս պայմաններն ու աննպաստ ժամանակը այնպես էլ թույլ չտվեցին հայագետին իրագործել կրկնագրի նմանատպության մասին հայտնած իր շահեկան դիտավորությունը: Զեռագրի հետագա ճակատագիրն այժմ անհայտ է:

Մի քանի տարի անց, դարձյալ երջանիկ պատահականությամբ, Ն. Ակինյանը Երնջակի Նորանիշիկ գյուղում 1669 թ. ընդօրինակված (ալեքսանդրապոլցի Կեղամ Տեր-Հարությունյանցին պատկանող) մի ձեռագրի պահպանակներում ի հայտ բերեց (և և ԽԲ) սաղմոսաց մեկնության նշխարներ, որոնք բանասերի կողմից հրատարակվեցին Ոսկերերանի անվամբ<sup>4</sup>:

Ինչպես հայտնի է, Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հունարեն բնագիրը ամբողջական չէ: Մեզ են հասել միայն Գ-ԺԲ, ԽԱ, ԽԳ-ԽԹ, Ս (հատված), ՀԱ (հատված). ԸԳ-ԸԶ, ԸԼ-ԸԺէ, ԸԽԵ, ԸԺԹ-ԸՄ սաղմոսաց մեկնությունները<sup>5</sup>: Այսու հայագիտության (և ոչ միայն հայագիտության) համար բանասիրական, լեզվամշակութային մեծ կարևորություն կարող են ներկայացնել ոչ միայն ընդհանրապես հայերեն թարգմանությամբ ի հայտ բերվող Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հատվածները, այլև հեղինակի այս երկասիրության հատկապես այն նշխարները, որոնց համապատասխանող հունարեն բնագրերն այժմ հայտնի չեն: Շնորհիվ, մասնավորաբար, երկրորդ իրակության, հայերեն թարգմանությունը, բնագրային արժեք ստանալուց դատ, այս սյարագային, ձևոր է բերում արդեն բանասիրական հանգամանք: Բանն այն է, որ ոսկերերանյան երկերի հրատարակիչները, սկսած Montfuncon-ից, զանազան, հաճախ իրարամերժ կարծիքներ են հաղորդել այս գործի մասին: Ոսկերերանի սաղմոսաց մեկնությունը քննող հետազոտողներից Bauer-ի

<sup>3</sup> Ն. Ակինյան, *նշխ. աշխ.*, էջ 23—24:

<sup>4</sup> Ն. Ակինյան, *Երկու նորագույն հատակոտորներ Յովհան Ոսկերերանի սաղմոսաց մեկնության հայերեն թարգմանությունն*, «Հանդես ամսօրեայ», 1922, էջ 322—331:

<sup>5</sup> Տվյալները բերված են ըստ՝ M. Geerard, «Clavis Patrum Graecorum, vol. II, Ab Athanasio ad Chrysostomum», Brepols-Turnhout, 1974, p. 519—520, 552—556.

Հայրաբանական այս կարևոր մատենացույցը մեզ տրամադրեց բանասեր, ասորագետ Է. Տեր-Պետրոսյանը:

կարծիրով, օրինակ, Ոսկերերանը գրել է ձեռագրերում և տպագրությանը հիմա հայտնի մեկնությունները միայն, «ուստի և այժմյան ծանօթ ձեռագրաց մեշ որևիցե թերույթ չկա»<sup>6</sup>: Այս կարծիքը, որ հիմնված էր լատին եկեղեցու նշանավոր հայրերից Ս. Հերոնիմոս Երանելու 404 թ. Օգոստինոսին հղած թղթում սաղմոսաց լիակատար մեկնություններ հեղինակած մատենագիրների շարքում Հովհան Ոսկերերանի անվան բացակայության փաստի վրա<sup>7</sup>, մերժելի է թվում ոչ միայն հայրախոսական վկայությունների ծաղկաբաղ օտար ժողովածուներում Ոսկերերանի այս գործից բերված առկոչումներով և հայ թարգմանական մատենագրության մեջ մինչ այդ հայտնի (հունարեն բնագրում բացակայող) թեկուզև աննշան հատակոտորների առկայությամբ<sup>8</sup>, այլև նորերս հայտնաբերված երկու մեծարժեք հատվածներով<sup>9</sup>: Հատվածներ, որոնք միանալով խնդրո առարկա երկի հայերեն թարգմանության մինչ այդ արդեն հայտնի նշխարներին, վկայում են այն մասին, որ «հայ՛! հավանորեն ծանոթ էին Ոսկերերանի սաղմոսաց լիակատար մեկնության բնափ բնագրի մը»<sup>10</sup> (ընդգծումը Ակինյանինն է—Հ. Ք.):

Ոսկերերանի սաղմոսաց մեկնության նորահայտ հատվածները գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանի 472 (230ա—237բ) և 2783 (238ա—241բ) թվահամարը կրող ձեռագրերում, «Պատճառք սաղմոսին զոր արարել է տեան Բարսղի և Յովհաննու Ոսկերերանի» խորագիրը կրող նյութի մեջ (№ 472, էջ 215ա—239բ, № 2783, էջ 226բ—244ա)<sup>11</sup>: Սակայն երկու ժողովածուներում էլ «պատճառքի» հանդամանքով ներկայացված նյութերը միատարր չեն: Եթե երկու ձեռագրերում էլ «պատճառքը» սկսվում է Բարսեղ Կեսարացու Պահոց գրքից բերված «Ի սաղմոսն առաջին» (ԺԱ) ճառով<sup>12</sup>, ապա Ոսկերերանի հեղինակած «պատճառքը», որ երկու գրչագրերում էլ զատորոշված չէ նախորդ նյութից, № 472 ձեռագրում սկսվում է Ոսկերերանի՝ Եսայու մարգարեության Ե 1 համարի մեկնությունից (էջ 222բ) և շարունակվում մինչև նույն գլխի 7-րդ համարի մեկնությունը (էջ 229բ): Այնուհետև ընդհատվում է նյութի մեջ ներմուծված սաղմոսաց մեկնության հատվածով ու դարձյալ շարունակվում «պատճառքի» եզրափակիչ մասում (էջ 238ա—239ա) և ավարտվում Եսայու տվյալ համարի՝ գրչի կարճառոտ հավելում-բացատրությամբ: Եսայու մեկնության այս հատվածը ոչ այլ ինչ է, բայց եթե հունարեն բնագրի

<sup>6</sup> «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 25—26:

<sup>7</sup> Անդ, էջ 25—26:

<sup>8</sup> Տե՛ս «Յովհաննու Ոսկերերանի ճառք». Վենետիկ, 1861, էջ 773—778, «Հանդէս ամսօրեայ», 1922, էջ 325—330, «Կնիք հաւատոյ...», էջ 319:

<sup>9</sup> Բացառված չէ, որ Ոսկերերանն իր այս երկը շարագրած լինի 404—407 թթ. միջև, այսինքն՝ Հերոնիմոս Երանելու կազմած ցուցակից հետո, մինչև իր մահն (407 թ.) ընկած տարիների ընթացքում:

<sup>10</sup> «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 27—28:

<sup>11</sup> Այս նույն խորագիրն է կրում նաև Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1398 ձեռագրում (էջ 323ա—328բ) ղեւեղված սաղմոսաց պատճառքը, սակայն այստեղ բացակայում են մեկ հետաքրքրող ոսկերերանյան հատվածները:

<sup>12</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 822, էջ 99բ—109բ:

և հայերեն թարգմանության համապատասխան մասի<sup>13</sup> խմբագրում-համառոտումը՝ կատարված, ըստ երևույթին, հայ գրչի կողմից<sup>14</sup>:

Այլ է նյութերի դասավորությունը № 2783 ձեռագրում: Ի տարբերություն № 472-ի, № 2783 ձեռագրում բացակայում է Եսայու մեկնության հիշյալ հատվածը: Եթե երկու ձեռագրերում էլ սաղմոսաց մեկնությունը սկսվելով Ա 1 համարից՝ համընթաց է մինչև «խոտորել ի շարէ և առնել զբարի» բառերը (№ 2783, էջ 238ա—241 բ, № 472, էջ 230ա—234ա), ապա տարբեր է դրա շարունակության մեջ: № 2783 ձեռագրում «...ոչ միայն, ասէ, զգուշացուցանեմ յամբարշտաց և ի մեղաւորաց և ի ժանդից» բառերով սկսվող հատվածը (էջ 241բ—243բ), ելնելով № 1398 ձեռագրի համապատասխան հատվածներում առկա լուսանցային «Եպ», «Եփ» նշումներից՝ խմբագրումն է Եպիփան Կիպրացու և Եփրեմ Ասորու Ա սաղմոսի մեկնության (№ 1398, էջ 332ա—333բ): Այնուհետև բնագիրը շարունակվում է սաղմոսաց մեկնության հետ շառնչվող այլ բառերով, որոնք պատկանում են նվիրապետական ինը աստիճանակարգին վերաբերող, հունարան հայերենով շարադրված մի տեքստի: Մինչդեռ № 472-ում վերոբերյալ «խոտորել ի շարէ և առնել զբարի» բառերին հետևում է ԶԶ 2 սաղմոսի մեկնությունը (էջ 234ա) և շարունակվում մինչև «խաւսի զխաղաղութիւնս և առնէ խաղաղութիւնս իւրոց» բառերը (էջ 237բ), որից հետո շարունակվում է Եսայու խմբագիր մեկնության հիշյալ հատվածի երկրորդ մասը, որով և ավարտվում է «պատճառք»:

Այսպիսով, «պատճառքում» գետեղված խնդրո առարկա հրատարակելի նյութերը սաղմոսաց Ա գլխի 1—2 և ԶԶ գլխի 2 համարի մեկնություններն են, որ գրիչների կողմից բաղվելով Հովհան Ոսկերեբանի սաղմոսաց ձույլ, ամբողջական մեկնությունից, այստեղ են ներմուծվել իրրև «պատճառքի» մասեր:

Այն, որ սաղմոսաց սույն մեկնությունն իրապես Ոսկերեբանինն է, հավաստվում է ոչ միայն ձեռագրական ավանդույթով (երկու գրչագրերում էլ գործս հիշվում է Ոսկերեբանի անվամբ) և լիզվառճական նկարագրի մասնահատկությամբ, այլև մեկ այլ իրողությամբ. Սաղմոսաց մեկնության մեջ վկայակոչելով Սաղ. Ա 2-ը՝ Ոսկերեբանը սրան անընդմիջաբար հավելում-կցում է Բ օրինաց Զ 7 կամ ԺԱ 19 համարը: Սուրբգրային համարների այսօրինակ հարակցում առկա է դարձյալ Ոսկերեբանի «Ի բան տերունական որ ասէ «Արթուն կացէր... նախախնամութիւն Աստուծոյ և բարեբարութիւն նորայայնժամ յայտնի է...» սկսվածքով ճառում ևս, ուր կարդում ենք. «Եւ աչք, և

<sup>13</sup> Sk'a Migne, PG. t. 56, col. 56—67, «Երանելոյն Եովհաննու Ոսկերեբանի Մեկնութիւն Եսայեազ մարգարեի», Վենետիկ, 1880, էջ 45, տող 1—էջ 51, տող 15:

<sup>14</sup> Այս հանգամանքը նախ բացատրելի է նրանով, որ սուրբգրային վկայակոչումները բերված են ըստ Աստվածաշնչի հայերեն ընկալյալ թարգմանության, մինչդեռ սպաղարում դրանք նույնանում են, հուն. բնագրում առկա վկայակոչումներին, օրինակ, եթե Ես. Ե 3-ում հուն. «εν χερσῶν» ձևի դիմաց տպագիրն ունի «չեղջէր» ճիշտ թարգմանությունը, ապա խմբագիր մեկնությունն մեջ այն փոխարինված է «չանգեան» ձևով, որ նույնանում է Ս. Գրքի հայ կանոնական թարգմանությանը: Ես. Ե 1 համարում հուն. «τοῦ ἀγαπίτου ποῦ» («սիրելույ իմոյ») ձևի դիմաց խմբագրությունս տալիս է «սիրելույ նորա» հայ կանոնական ընթերցվածք: Մեկնության խնդրո առարկա հատվածի՝ հայ միջավայրում խմբագրված լինելու մասին է խոսում և մեկ այլ հանգամանք. Շատ հաճախ խմբագրողը մեկնության հայերեն թարգմանությունից, առանձին պարբերությունների ձևով, բառացի ներմուծումներ է կատարում խմբագիր հատվածի մեջ:

միտք, և խորհուրդք իւր ի վերայ որդւոց իւրոց «ի աւէ և զիշերի» (Սաղ. Ա. 2) «ի նստել ի տան ի գնալ ի նանապարհ» (Թ. օրէնք Զ 7, ԺԱ. 19) և ամենայն ժամ միտքն ծնողին ևս դաւակն իւր»<sup>15</sup> (այս և հետագա ընդգծումները մերն են—Ն. Ք.):

Թվում է տեսականորեն ևս հնարավոր է Ոսկերերանի հեղինակային պատկանելութունը փաստարկել: Այդ է հավաստում հեղինակի «Ի Սուրբ Երրորդութիւնն» երկի և սաղմոսաց մեկնութիւն համարելով հատվածների դուզադրումը.

«Եւս է Հայր, վասն զի «Աստուած յոյս է» (Ա Յովհ. Ա 5). Եւս է և Որդին. «Ես եմ յոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): Եթե ոչ էր յոյս և Հօգին Սուրբ...»: «Կնիք հաւատոյ...», էջ 47, տ. 17—19:

«...Եւս է Հայր, յոյս է և Որդին, յոյս է և ամենայն Սուրբ Հօգին...»<sup>16</sup>:

Ոսկերերան, «Պատճառք» սաղմոսաց, № 472, էջ 232ա:

Եվ իրապես, ելնելով երկուստեք ընդգծյալ բառերից՝ կարելի է հետևցնել, որ Սաղմոսաց մեկնութիւնից վկայարկոված հատվածը ոչ այլ ինչ է, քան տեսական (նաև՝ բնագրային) ամփոփումը Ոսկերերանի «Ի Սուրբ Երրորդութիւնն» երկի համապատասխան հատվածի:

Ինչպես երևում է, Ոսկերերանի սաղմոսաց մեկնութիւն հայերեն թարգմանութիւնը հրապարակի վրա է եղել մինչև Ժ—ԺԱ դդ., որովհետև ԺԲ—ԺԾ դդ. սաղմոսաց մեկնութիւն հեղինակած և սաղմոսներին անդրադարձած հայ մատենագիրներից և ոչ մեկը (Հովհաննես Սարկավագ, Ներսես Լամբրոնացի, Վարդան Արեւելցի, Վանական վարդապետ, Հովհաննես Գառնեցի, Կիրակոս վարդապետ, Դավիթ փիլիսոփա, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Հոլով, Նփրեմ Սսեցի և Միրայել Չամչյան) չի վկայակոչում Ոսկերերանի այս մեկնութիւնը<sup>17</sup>: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ասորերեն վերոհիշյալ կրկնագիրը գրչագրվել է մոտավորապես ԺԱ—ԺԲ դդ. «հայագետ ասորու» կամ «ասորագետ հայի» կողմից<sup>18</sup>, կնշանակի, այսուամենայնիվ, Ոսկերերանի այս երկի կամ սրա մաս կազմող «պատճառքի» մասին հայ մատենագիրները թվում է մինչև ԺԱ—ԺԲ դդ. պետք է որ գոնե հեռավոր պատկերացում ունենային: Խնդրո առարկա մեկնութիւնը կամ, որ ավելի հավանական է, սույն «պատճառքին» ծանոթ հայ մատենագիրներից մեկը թերևս Ներսես Շնորհալին է: Այս մասին կարող են վկայել Ոսկերերանի սաղմոսաց մեկնութիւն և Ն. Շնորհալու Մատթեոսի մեկնութիւն ներքորերյալ հատվածները.

«...քստ այնմ յորում առաջ իսկ ասաց Պաղոս. «Երանելին միայն հզարեք քազարեք քազ[արաց]» (Ա Տիմոթ. Զ

«զի՞նչ է սահման երանութեան, յորմէ կարեմք և զայլս իմանալ: Երանութիւն պարտաութիւն է ամենայն բարեաց... Ե:

<sup>15</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4774, էջ 337բ—338ա:

<sup>16</sup> Հմմտ. «Սերերիանոսի նմեսացոյ զարադացոց եղիսկոպոսի հառք ժն», Վենետիկ, 1830, էջ 6:

<sup>17</sup> Հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1917—18, էջ 25—26:

<sup>18</sup> Անդ, էջ 7:

15) ...Իսկ երանութիւն պարտութիւն է ամենայն բարեաց...»

Ոսկերերան, Մեկնութիւն սաղմոսաց, № 472, էջ 232ա-Բ:

արդ՝ առաջին մեզ ծանուցեալ լիցի երանութեանց ընդունող տիրապէս չէիցս աստուածութիւնն, ըստ առաքելոյ թէ՛ «երանելիքն և միայն հզօրն...»<sup>19</sup> (բնագրային ընդգծումները մերն են—Ղ. Ք.):

«Մեկնութիւն սուրբ աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն ներսիս Շնորհալուս...», Կ. Պոլիս, 1825, էջ 87:

Դեռ ավելին. մեկ անգամ արդեն ծանոթ լինելով Ոսկերերանի այս երկասիրութեանը՝ ներսես Շնորհալին, թվում է, կարող էր օգտվել դրանից և իր այլ գործերում: Այս հանգամանքի մասին է խոսում սաղմոսաց մեկնության և «Հաւատով խոստովանիմ»-ի առաղրվող հատվածների նույնությունը.

«եռկասջիբ ի դա (a) ի տէ և գիշերի (b) նստել ի տան և զնալ ի նանապարհ և ննջել և յառնել»<sup>20</sup>:

Ոսկերերան, Մեկնութիւն սաղմոսաց, № 472, էջ 233ա-բ

«Աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ (a) ի տուէ և գիշերի (b) ի նստիլ ի տան, ի զնալ նանապարհ ի ննջել և ի յառնել»:

«Հաւատով խոստովանիմ»

Զուգադիր հատվածների ընդգծված մասերը ոչ այլ ինչ են, քան վերն արդեն դիտարկված Սաղ. Ա. 2 (a) և Բ օրէնք Զ. 7 կամ ՓԱ. 19 (b) տեղիների համակցումը: Այստեղ, սակայն, կարևորը ոչ միայն աստվածաշնչական տարբեր տեղիների համակցման համապատասխանության փաստն է, այլև այդ համակցման մեջ սուրբգրային համարների հերթագայման շարահյուսական աչքի դարնող նույնությունը:

Արդ, այսօրինակ փաստերի առկայության պայմաններում բացառված չէ, որ, հավասար հնարավորությամբ, «Հաւատով խոստովանիմ»-ի այդ պատկերը կարող էր բերված լինել ինչպես Ոսկերերանի հիշյալ ճառից, այնպես էլ (առավել հավանական է) նրա սաղմոսաց մեկնության առաղրված հատվածից: Իսկ որքանով ներսես կամբրոնացին, որ կրտսեր ժամանակակիցն էր Ն. Շնորհալու, իր սաղմոսաց մեկնության մեջ շի հիշատակում Ոսկերերանի խնդրո առարկա երկը, կնշանակի ներսես Շնորհալու ձեռքի տակ եղել է ոչ թե Ոսկերերանի սաղմոսաց մեկնությունը, այլ, ամենայն հավանականությամբ, այդ ընդարձակ երկասիրությունից (մինչ այդ արդեն) ընտրաբար բաղված և կազմված հրատարակվող «պատճառքը»:

<sup>19</sup> Ոսկերերանի սաղմոսաց «պատճառքի» համապատասխան հատվածից, հավանաբար ներսես Շնորհալու Մատթեոսի մեկնության միջոցով, իր հերթին օգտվել է Սարգիս Շնորհալին «Կաթողիկէ թղթոց» մեկնության մեջ. տե՛ս «Նոր բողոքիք Հայկազեան լեզուի», հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 629:

\* Սակայն բացառված չէ, որ Շնորհալին ընդգծյալ հատվածի համար կարող էր աչքի առչե ունենալ նաև Գրիգոր Նյուսացու երկերից մեկի «Ծրանութիւն է պարտութիւն ամենայն բարւոյն իմանալեաց, յորոց հեռի է ի բարի ցանկութենէն...» պարբերությունը. Տե՛ս Ղ. Ք. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 308:

<sup>20</sup> Եպիփան կիպրացու սաղմոսաց մեկնության մեջ համապատասխան մասում վկայակոչվում է սուրբգրային այս մեջբերման միայն Ն հատվածը, այն էլ՝ «խորհեսցիս ընդ սմայ ի նստել քում և յառնել, ի կալն քում և ի զնալն ի նանապարհ» բնագրային կերտվածքով (Մատենադարան, ձեռ. № 1398, էջ 332ա, հմմտ. ձեռ. № 1144, պահպանակ Ա, էջ 2բ): Այնպես որ բացառվում է Եպիփանի մեկնությունից ներսես Շնորհալու օգտվելու նվազագույն հնարավորությունն իսկ:

Ելնելով հոսորով Անձևացու և Գրիգոր Մազիսարոսի մոտ գտնվող (առաջին զուգադրություն մեջ բերված) համարնույթ հատվածների առկայությունից<sup>21</sup>, պետք է ենթադրել, թե Ոսկերերանի այս երկն առհասարակ հայ մատենագրությանը ոչ անհայտ և, ինչպես երևում է, մինչև ժ—ժԱ դդ. մեղանում կենցաղավարող գործերից էր:

Սաղմոսաց նորահայտ մեկնության մեջ առկա նորակազմություններից են բանամտութիւն<sup>2</sup>, Բառագարս, վերատրապես բառերը, որոնք բացակայում են գրարարի բառագանձը ներկայացնող մի այնպիսի ընդգրկուն բառարանում, որպիսին է «Նոր Հայկադյանը»:

«Պատճառքի» բաղադրամիավորներում (ինչպես նաև՝ դրանց հերթագայություն մեջ) առկա տարբերությունները վկայում են գործիս (ըստ երևույթին մի նախագաղափար միավորից ծագող) տարբեր գրչագրերից ընդօրինակված լինելը:

№ 472 (A) ձեռագիրն ընդօրինակվել է Մարկոս երեցի կողմից, 1229 թ.: Տեղը՝ անհայտ: Գրչագիրս բաղկացած է 265 թերթից: Գրված է խիստ անկանոն բոլորգրով: Բնագրային աղճատումները վկայում են այն մասին, որ ձեռագիրը ընդօրինակվել է, ըստ երևույթին, արդեն բավական խաթարված մի տեքստից: Ի դեպ ձեռագրում 233-րդ թերթահամարը կրկնված է, որի պատճառով հետագա թերթակալումը սխալ հերթագայությամբ է նշվել:

Երկրորդ՝ № 2783 (B) ձեռագիրն ընդօրինակվել է Գրիգոր վարդապետի (Ա) և Վարդան գրչի (Բ) կողմից ժԲ դ., 1409 թ.: Տեղը՝ անհայտ: Գրչագիրս բաղկացած է 264 թերթից: Գրված՝ կանոնավոր բոլորգրով: Սաղմոսաց «պատճառք» պարունակող ձեռագրի երկրորդ մասը միասյուն է<sup>22</sup>: Տեքստի առանձին հատվածներ (հատկապես թերթերի եզրամասերում) մաշվելով դարձել են գրեթե անընթեռնելի: Դժբախտաբար եղծված են ոչ միայն բառեր, այլև տեղատեղ՝ նույնիսկ տողեր: Այսօրինակ տեղիները, հնարավորության սահմաններում, վերականգնել ենք անկյունագծերում:

Նկատի առնելով բնագրի ոսկեդարյան լինելը՝ այն բերում ենք ըստ նախնական դիտվող A ձեռագրի ուղղագրության:

### Ի ՍԱՂՄՈՍԱՅ ՄԵԿՆՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ<sup>23</sup>

A 230ա «Արդ մի նստիցիս յաթոռ ժանդից եւ կալցիս հաղորդութիւն ընդ  
B 238ա մարդկան ապականեցելոյ ժանդացուցանողաց, եւ մի յամենցի ի խորհուրդս շարութեան»<sup>1</sup>, զոր մարգարեն ուսուցանէ հոգովն սրբով եւ

<sup>21</sup> Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, էջ 629:

<sup>2</sup> Բառս, հավանաբար, չպետք է շփոթել Եպիփան Կիպրացու սաղմոսաց մեկնության համապատասխան հատվածում առկա «ի բնէ մտիցն» հարադրության հետ, ձեռ. № 1144, պահանակ Ա, էջ 2բ:

<sup>22</sup> Ձեռագրերի համառոտ նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 328, 375:

<sup>23</sup> Երազրումը մերն է—Զ. Ք:

<sup>1</sup> Սաղ. Ա 1:



ասէ. «Եր[ան]եալ [է] նա, [որ] ոչ նստաւ»<sup>2</sup>: Այսոքիկ վարդապետա-  
րենն եւ բարոզարար ա(սա)ցեալ, որ վերագրեալդ է եւ ունի դիմառնա-  
բար ասացեալ մարգարեութիւնս կատարել ի վերայ նախապետացն  
եւ մարգարեիցն: Առաւել ի վերայ Մովսիսի եւ Դանիելի եւ մակարա-  
յեցոցն եւ Եղիայի եւ Նոյի<sup>3</sup> եւ Յովսիփայ, Աբրահամու եւ Սահակայ  
եւ Յակոբայ եւ Յեսուայ եւ Սամուելի եւ նոյն իսկ Դաւթի, իսկ առ ի  
միտս ի վերայ Քրիստոսի եւ առաքելոցն եւ մանավանդ ի վերայ մար-  
տիրոսացն եւ վկայիցն, վասն որոյ պարտք է գեղանական իւրաքանչիւ-  
րոց յայտնել խորհուրդ, եւ ցուցանել, թէ ոչք են երանութեանց արժա-  
նաւորք: Նախ՝ առաջին Հաբել Երանելի, որ ոչ խոտորեցաւ ի շար եւ

B 238բ անգորոյն||խորհուրդս Կայենի, այլ անարատ մտաւք ի բոլոր||սրտէ

A 230բ մատոյց զհաճոյական պատարագն Աստուծոյ եւ ընդունելի եղեւ զնոյն  
երանութիւն: Ենովս ընկալաւ, ուստի եւ արժանի եղենն նախ քան զա-  
մենայն մարդիկ կարդալ յուսով զանուն Տեառն Աստուծոյ: Եւ յոյս  
նորա ընդունել[ի] եւ հաճոյ եղեւ Աստուծոյ: Այսպէս եւ Ենովք ժա-  
ռանկորդ եղեւ աչսմ եղեալ եւ յայնմ երանութեան, զկնի հաճոյական  
վարուցն եւ արդարազնացիկ կենացն, յաղագս որ ի մշտնջենաւ[որ]  
եւ անանց կեանս փոխեալ եղեւ, իսկ զնոյէ զերանելոյն զինչ ար-  
դեւք ասասցուք, որ ի մեջ խառնակեց մարդկանս: Յորժամ ամենայն  
մարմին սպականէր զճանապարհս իւր առաջի Աստուծոյ, եւ նա կու-  
սութեամբ եւ մարգարէութեամբ կազմեաց<sup>\*\*</sup> զանձ իւր տաճար Աս-  
տուծոյ, որ եւ յաղթեաց բոցո ցանկութեան ի մեջ վաւաշտ եւ պղծա-  
լից կանանցն, վասն որոյ երկրորդ նախահայր մարդկութեանս եղեւ  
յիտ ջուրցն հեղեղի եւ կատարեալ արդարութեամբ գովեցաւ նա յԱս-  
տուծոյ: Իսկ զհաւատոցն Աբրահամու առաքեալ[ն] Պաւղոս յայտնա-

A 231ա պէս ասէ. «Հաւատաց Աբրահամ յԱստուծոյ եւ համար[եցաւ]||նմա  
արդարութիւն»<sup>3</sup>: Նոյնպէս եւ Իսահակ Երանելի եւ Յակոբ, մինն յա-  
ղագս խորհրդական պատարագին եւ միւսն վասն [ս]ք[անչ]ելի տ[ե]խ]ս-  
լեանն եւ հանդիպմանն Աստուծոյ, եւ երկորինն երանեցան արհնու ||

B239ա թեամբ յԱստուծոյ: Եւ գովեցան յԱստուծոյ ըստ աչսմ արինակի եւ  
Յովսեփ եւ [Յ]որ Համբերող նահատակն ի դարս ժամանակաց իւ-  
րեանց ոչ գնացին ի խորհուրդս ամսարշտաց եւ ի ճանապարհի մե-  
ղաւորաց: Յովսեփ ոչ խաբեցաւ յեգիպտոհոյն, եւ Յոր ոչ թիւրեցաւ  
ի բարեկամացն շատախաւսութենէն: Այսպէս եւ Աբրահամ եւ Իսա-  
հակ եւ Յակոբ ոչ երբէք մոլորեցան ի պատրանս հեթանոսաց:  
Մովսէս ոչ գնաց ի խորհուրդս յեգիպտացիոց[ն] եւ ոչ Եղիա՝ ի խոր-  
հուրդս Աքաաբու եւ ոչ Դանիել՝ ի խորհուրդս քաղղեացոցն, եւ ոչ մա-  
կարայեցիքն՝ ի խորհուրդս Անդիոքոսի, եւ ոչ մարգարէքն ի սուտ  
մարգարէիցն: Արդ ամենեքեան սորա երանութիւն ընկալան եւ գովե-  
ցան յԱստուծոյ: Ընդ այնոսիկ գովութիւն եւ երանութիւն ունիցին Յեսու

<sup>2</sup> Սաղ. Ա 1:

<sup>3</sup> Հոովմ. Դ 3:

\* Զ ե ո ա գ բ ե ր ու մ՝ ն ու յ ն ի:

\*\* Ա՝ սրբեաց:

- A 231բ *Ռրդին նաւեայ եւ դատաւորքն յառաջինք եւ առաքինիք եւ թագաւորք արդարք, որպէս Գեղեոն եւ Բարուկ... [հան]դերձ Գերովրայիւ, եւ Սամսոն, եւ Յեփայի, եւ Սամուել, եւ Գաւթի, եւ Եղեկիա, եւ Յովսիա [եւ] ոչ երբէք խոտորեցան իւրեանց ժամանակսն ոչ ի հանապարհս մեղաւորաց եւ ոչ ի խորհուրդ[ս] ամբարշտաց, այլ էին խորհրդակիցք Աստուծոյ եւ երկնաւոր քաղաքականութեամբ կային յաշխարհի, ըստ*
- B 239բ *այնմ որպէս մարգարէն ասէ. ի դիմաց Աստուծոյ. «Խորհուրդ իմ ինձ եւ ընդանեաց իմոց»<sup>4</sup>: Արդ ընդ սոսա, զորոց թուեցար զանունս, ասասցոսք եւ զերանելի առաքեալսն եւ զմարտիրոսսն եւ զհայրապետսն, որք վկայեցին ճշմարտութեան, երանեցա[ն] ի Տեառնէ ըստ այնմ. «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն եւ հալած[իցեն] եւ այլն, զի վարձք ձեր [բազում է] յերկինս, զի այսպէս հալածեցին [զմարգար] եսն» եւ այլն<sup>5</sup>: Եւ առ Պետ[ր]ոս ասէ. «Երանի քեզ, Սիմոն, որդի Յովնանու»<sup>6</sup>: Արդ առաքեալքն ոչ գնացին ի խորհուրդս սուտ առաք[ելոցն] եւ կախարդացն Սիմոնի եւ Վաղենտի եւ Մենանդրեայ: Եւ մարտիրոսքն ոչ գնացին ի խորհուրդս կռապաշտիցն եւ հայրապետքն սուրբ ոչ գնացին ի խորհուրդս հերձուածողացն, թողում ասել եւ զանապատաւոր միանձնացեալսն, որք ոչ երբէք խորհան զխորհուրդ\**
- A 232ա *կենցաղոյս || եւ հայեցան ի մարմնաւոր հեշտութիւն, այլ զվերինն խորհեցան, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ, զի նայ, յորժամ յայտնեցի ի փառաւք, նորա ընդառաջ վերանան եւ ընկալցին երանութեամբ զփառսն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Եւ արդ տողեալ թուեցա[ւ] զ[փառսն] երանելի արանցն եւ արդարոցն, որք ընդունակք եղեն երանութեամբ ըստ հրամանին մանին մ || արգարէին եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բազմակերպարանաւք երանէ զմարդիկ արժանաւոր լինել արքաութեան Աստուծոյ: Արդ ճշմարտութիւն սաղմոսիս ի նոյն ինքն ի Քրիստոս կատարի մարգարէութեամբ, զի նա իսկ է այրն երանելի, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, քանզի «ոչ արար մեղս եւ ոչ գտաւ անարէնութիւն»<sup>7</sup> ի բերան նորա»<sup>8</sup>, ըստ մարգարէին, որպէս եւ ինք[ն] իսկ ասէ. «Ո՞վ որ յանդիմանեցէ զիս վասն մեղաց»<sup>9</sup>: Իսկ երանակ[ան] անունն միայն Աստուծոյ է սեփական, ըստ այնմ յորում առաջ իսկ ասաց Պաւղոս. «Երանելին, եւ միայն հզարն թագաւոր թագաւորաց եւ Տերն տերանց»<sup>9</sup> Եւ այլն եւ այս Երրորդութիւն եւ քանզի ինքն միածին է ընդ Հաւր իսկակից եւ փառակից Սուրբ Հոգին, ոչ եւս վերջանա*
- A 232բ *յերանութեանցս կոչմանց: || Իսկ երանութիւն պարառութիւն է ամենայն*

4 Ես. ԻԴ 16:

5 Մատթ. Ե 11—12:

6 Մատթ. ԺԶ 17:

7 Հմմտ. Սաղ. ԼԱ 2:

8 Յովհ. Ը 46:

9 Ա Տիմոթ. Զ 15:

\* Ե՛ գնացին ի խորհուրդ փխ խորհան զխորհուրդ:

\*\* Ե՛ նենգութիւն:

բարեաց եւ այս նորա ճշմարտութեամբ է, զի շիբ որ հաւասարորդ նորա բարեացն, զի ինքն է բարի եւ աղբիւր բարութեանց եւ ամենայն, ինչ որ առ եղականքս, մասն է բարեաց, ի նմանէ յառաջ գայ: Ըստ որում ասէ. «Ամենայն տուրք, բարիք եւ պարգևը կատ[արեալ]ք ի վերուստէն իշեալ առ ի Հարէն լուսոյ»<sup>10</sup>. Լոյս է Հայր, Լոյս է Որդի, Լոյս է եւ Հոգին Սուրբ. Կենդանի է Հայր, Կենդանի է Որդի, Կենդանի է եւ Սուրբ Հոգին: Նոյնպէս եւ բարութիւն, նոյնպէս երանութիւն, ըստ

B 240բ այսմ խորհրդեան ի Քրիստոս կատարի\* երանութիւն մ||արգարէիս աստուածութեամբ եւ մարդկութեամբ, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, փարիսեցոցն, դպրացն եւ ոչ ի ճանապարհս մեղաւորաց եւ ամբարտաւան աղգին հրեից եւ ոչ նստաւ յաթոոս ժանդարարոյ դատաւորացն: Այլ ատելով ատեաց նա զսնափառութիւն զստոց առաքելոց եւ [զ]շարութիւն զստոց մարգարէիցն՝ ասելով. «Ի բաց կացէք

A 233ա մշակ(ք) նենգաւորք ոչ զիտեմ զձեզ»<sup>11</sup>|| եւ զայսոցիկ ասէ զորս մոլարս անուանեն աստուածային գիրք: Դարձեալ զայն ի դեպ է ասել, զի ոչ գնաց ի կամս\*\* ամբարիշտ փորձապետին եւ ոչ պատրեցաւ\*\*\* ի նմանէ, որպէս զԱդամն առաջին: Այլ յաղթեաց փորձողին մերով բնութեամբս եւ մեզ շնորհեաց յաղթութիւն ընդդէմ բանսարգուին, բանզի սաստեաց նմայ եւ ասաց. «Երթ յետս իմ, սատանայ»<sup>12</sup>: Եւ ապայ մատեան հրըշտակը եւ պաշտէին զնայ: Նմայ փառք յաիտեան:

Յաջորդի սոյն այսոսիկ յարմարի բանամտութեամբ եւ իրաւք, զի յառաջնումն երանեաց զառաքինիսն վասն ի շարեացն ի բաց մերկանալոյ: Եւ այժմն գովէ զայնոսիկ, որ կամաւք իւրեանց հետեւին արինացն Աստուծոյ առաքինութեամբ, վասն զի ասէ. «Այլ արէնս Տեառն նմանի բանս արինացն Աստուծոյ, զոր պատուիրեաց ժողովրդեան ի ձեռն Մովսէսի, մի մեկնեսցի զիր արինացս այս ի բերանոյ ձերմէ»<sup>13</sup>

A 233բ եւ «խոկասչիք ի դա ի||տվե եւ ի||գիշերի»<sup>14</sup>, «նստել ի տան եւ ի

B 241ա գնալ ի ճանապարհի եւ ի ննջել եւ ի յառնել»<sup>15</sup> որպէս ինքն իսկ երանելին Դաւիթ յայլում սաղմոսի ասէ իբրեւ պարծանք իմն. «Պատուիրանք քո խաւսք իմ էին»<sup>16</sup> եւ այլուր «Աւրհնեցից զտեր յամենայն ժամ»<sup>17</sup>, դարձեալ՝ «[խրատք] քո ուսուցին զիս» եւ այլուր՝ «Բաց զաշս իմ եւ նայեցայց ի սքանչելիս աւ[րինաց քոց]»<sup>18</sup>, եւ Եսայի մարգարէ

10 Յակ. Ա 17:  
 11 Բ Կորնթ. ԺԱ 15:  
 12 Մատթ. ԺԶ 23, Մարկ. Ը 33:  
 13 Հմմտ. Սաղ. ճժԸ 72, Յեսու ԻԲ 5:  
 14 Սաղ. Ա 2:  
 15 Բ օրէնք 2 7, ԺԱ 19:  
 16 Սաղ. ԺԸ 143:  
 17 Սաղ. ԼԳ 2:  
 18 Յաղ. ԺԷ 36, ճժԸ 18:  
 \* Ե՝ պատշաճի:  
 \*\* Ե՝ ի խորհուրդս փխ ի կամս:  
 \*\*\* Ե՝ պարտեցաւ փխ պատրեցաւ:

ասէ աւելինն. «Երատ Տեառն բանայ զականջս ունկն ի լսել»<sup>19</sup> եւ դարձ[եալ] ասէ. «Տէր Տէր տայ ինձ լեզու խրատու [խաւ]սել ի ժամու գրանն»<sup>20</sup>: Այսպիսի արինակաւ եւ մեզ պարտ է խորհել եւ խաւսել զարէնս աւետարանին եւ ի բաց կալ յաշխարհական ցանկութեանց եւ առ Քրիստոս ընթանալ, որպէս ազգն Ղեւեա հասեալք առ Մովսէս եւ ի բաց գնացեալք յորթոյ անտի եւ «քանզի արէնս Տեառն ունէին զկամս իւրեանց որդիքն Ղեւեայ»<sup>21</sup>, վասն այսորիկ առ Մովսէս դարձան: «Եւ գինեցան ի վերայ եղբարց իւրեանց եւ կոտորեցին երեք հազար ի դրանէ ի

- A 234ա գուրն»<sup>22</sup>: Եւ մի եղիցուք որպէս զԱբար որդի Արմեայ՝ կամ իրրեւ զԱբար եւ զԵղարել, որ արհամարհեցին զնզովս արինացն Աստուծոյ եւ ի բաց կացին յարհնութեանցսն, զոր գրեաց Մովսէս եւ յետ նորա որդի
- B 241բ նաւեայ Յեսու, զի գառաջին զգրեալն ի Մովսէսէ արհամարհեցին եւ երկրորդ զԵսուայն, [որպ]էս զիրք թագաւորութեանցն եւ Մնացորդացն ցուցանէ: Բայց ոչ միայն հրեական արինացն ասէ, այլեւ զաւետարանին, զոր եթէ արասցէք, կեցցէք ի նմին, զի Քրիստոս ոչ եկն լուծանել արէնսն, այլ լնուլ եւ կատարել առ[աւ]ելութեամբ իւր ... իր ունին, զի արէնքն զկատարումն ... րգ... լու, իսկ աւետարանն զսկզբա[նն] ... խաշն բառնալ հրամայէ եւ ծնանէ ... սգոյ եւ համբերել ի սպառ, ես սիրէ... զհայր եւ զմայր, աղբատս... սուգ ունել ի վեր[ա] մենայն] ... ել, քաղցնուլ արդարութեամբ, ողորմած լինել, սուրբ ունել զսիրտս, խաղաղարար լինել, հալածանս եւ նախատանս ընդունել յաղագս Քրիստոսի, նմանող լինել մարգարէիցն եւ ամենայն արդարոցն, զորոց յառաջագոյն նշանակեցար զանուանս, բանզի նորա ամենեքեան յանարէնս, Աստուծոյ ունէին զխորհուրդս իւրեանց եւ զկամս իւրեանց խտտորել ի շարէ եւ առնել զբարի:

\* \* \*

«Հիմունք նորա ի լեառն սուրբ»<sup>23</sup> նորա սերէ հիմնացեալք են յեկեղեցոց: Եւ նախնիք բարիք բարեկարգութիւն սորայ մարգարէքն հոգեկիրք ի ժամանակի երիցութեան, իսկ գերապատուութեան եւ շնորհի

- A 234բ առատութեամբ՝ զառաքեալսն: Ասէ քրիստոսունակն Պաղոս. «զորս եղ Աստուած յեկեղեցոջն այս է. նախ զառաք[եա]լս, երկրորդ՝ [զմարգարէս]»<sup>24</sup>, սակայն ի համաձայնակի [յ]արմարութիւն նոյն եւ մի է ի պետս հաստահեղոյս ի բանս մարգարէ այնու գուշակ հոգեկնուագին Գաւթայ գտանեմք յոյժ իր սքանչա[յ]արմար արվեստակեալս խորհրդական բանիւք վասն հիմնարկութեան սրբոյ եկեղեց[ւոյ] եւ ութանասներորդ վեցերորդ սաղմոսին, որ ի թիւս խորհրդականս հաստատեցաւ վասն ութուտասներեկան կատարեալս, զկատարմանց ամենայն:

19 Հմմտ. Ես, Լ 21, Լթ 3:

20 Ես. Ծ 4:

21 Սաղ. Ա 2:

22 Հմմտ. Յեսու է 4—5:

23 Սաղ. 92 2:

24 Ա Կորնթ. ԺԲ 28:

- յաւիտեանց ունի նշանակ, յորում աւարտի խորհուրդ եկեղեցոյ յառաջ-  
նորդն յաւիտեան, իսկ զվեցերորդն յաւելուած արար, զի վեց հազա-  
րեան դարու շինան հաւատացեալքն ի Քրիստոս տուն եւ բնակարան  
Սուրբ Երրորդութեան, ամենայկատար շնորհ Հոգոյն Սրբոյ ի հրեից եւ  
ի հեթանոսաց նոր Իսրայէլի Քրիստոս, ոչք քարինք սուրբ հոլովեցան ի  
A 235ա հիմունս\* եկեղեցոյ, զորոց եւ ասէ մարգարէն. «Հիմունք նորա ի  
լեան սուրբ»: Հիմունք վերատրապէս սկսբունք են աստուածային խոր-  
հրդոցն\*\*: Նախ երկին առաջոյ եւ իմանալի բնակչաց նորա պատրաս-  
տութեան, յորս բնակել ասի անսահմանելի աստուածութեան: Եւ ապա  
դրախտն աստուածատունկ, որ եւ ընթացարան Աստուծոյ անուանի.  
«Նստի ասէ յերկնից յերկինս եւ գնայր ի դրախտի անդ»<sup>25</sup>: Վասն որոյ  
եւ յանց լերանց բարձրագունից<sup>26</sup> ըստ տեղոյ եւ խորհրդեան ասէ մար-  
գարէս՝ եղեալ զհիմունս եկեղեցոյ ի հրշտակս եւ ի մարդիկս, յորս  
բնակէ եւ գնայ. ի բնակիչս յերկրի ի դրախտին հիմացոյց զսայ: Եւ ի  
խորհուրդս ապաստանի տանն նոյ[ի] ի լերին[ն] Կորթուաց, յորում  
նստաւ նա զիշանել շրհեղեղին եւ ի լերինն ամուրհացիոց, ի խորանն  
Արրահամու ընդունարան Աստուծոյ եւ հրշտակաց եւ ի Բեղել, յորում  
A 235բ տուն Աստուծոյ անուանեց, ի Սինեա, որում տուն անուանեցաւ Աս-  
տուծոյ, ի միտս Մովսիսի կարգագրեցան: Սոքա են լերինք սուրբք, ուր  
հաստատեաց բարձրեալ զհիմունս նոր Սինի, իսկ կատարեալն խոր-  
հուրդն կատարեալ եւ բարձրագոյն, քան զամենայն բարձրագոյնս  
տնաւրինութիւն Քրիստոսի՝ զլուխ եկեղեցոյ, յոր[ում] եւ ամենայն  
մարմին պատշաճի եւ աճէ: Մինչեւ ի հանդերձեալն եկե[ղե]ցականու-  
թիւն, յորում եւ հիմացեալ են առաքեալք եւ մարգարէքն ըստ Պաւղոսի.  
զոր եւ ասէ. «Հաւատով արդարացեալս հիմնացեալք, ասէ, յառաքեալսն  
եւ մարգարէս եւ զլուխ ունիք զՔրիստոս զսուրբն սրբոց»<sup>27</sup>: Եւ լերինն  
նմանեցուցանէ զամբիժ հաւատսն զառաքելական եկեղեցոյ, զոր եւ  
քաղաք նշանաւոր ասէ Տէր մեր յաւետարանի անդ: «Ոչ կարէք անթաք-  
չելի»<sup>28</sup>, այսինքն՝ յանվանելի դաւանման Պետրոսի, որով ունին, այլ  
A 236ա փականս արբա[յ]ութեան, զկապանս եւ զուղղո՞ւմն կողմնակի իշ-  
խանութեան: Լուծցէ զտղիտութիւն, զանհաւատութիւն\*\*\* եւ զմեղս եւ  
կապեցցէ ընդ աւետարանի հաւատսն: Եւ ընդ շնորհս սրբարար յայ-  
տոսիկ\*\*\*\* ի հիմուն[ս] հիմացեալ հաստատեցան համաժողով կաթողի-  
կէ սուրբ եւ հոլովեցան ի սայ քարինք սուրբք ըստ մարգարէութեան,  
որք ի զանազան մասունսն հոգոյն փաղփուն եւ կարծր հաւատովք եւ  
տաքինութեամբ զպաշտանս սրբութեամբ, բանին ճշմարտութեա[մբ]  
եւ արդիւնարեր շահեկանութեա[մբ], անձնական նուիրաւք եւ արեան

25 Հմմտ. Սաղ. Կէ 34:

26 Հմմտ. Սաղ. ՂԴ 4:

27 Հմմտ. Եփես. Բ 20:

28 Հմմտ. Մատթ. Ե 14:

\* Չ ե ո ա գ ր ու մ՝ հումունս:

\*\* Չ ե ո ա գ ր ու մ՝ սկսբունք են Աստուած են աստուածային...:

\*\*\* Չ ե ո ա գ ր ու մ՝ բ ա ո ս կ ր կ ն վ ա ծ է:

\*\*\*\* Չ ե ո ա գ ր ու մ՝ յայտ ոսկի:

- վկայութեամբ, որով զեղու ի նոսայ սերն հայրական, ի Տեառն քսա [յ]աջորդիս: «Սիրէ Տէր զըրունս Սիրնի»<sup>29</sup>. Գրունք վերին Սիրնի երկնաւոր բազաբի են եկեղեցիք հաւատացելոց, որք եւ մարմին են բանին Աստուծոյ, որք դատերք ասին Սիրնի իբրու ծնունդ առաջնոյն. Այս եւ ծնունդ երկ[ն]աւոր գահից անուանին, վասն այսրէն անդ երանելոյն ॥
- A 236բ եւ յառազատն յայն մտանելոյն: Սակայն աստէն սկսանի սիրել եւ բան: Եւ է սայ հաւատն ճշմարտութեան, [առաջն] որդութեան, որդին Աստուծոյ: Եւ զինքն դուն անուանեաց եւ հաւատոյն դրամբ ի նոյն [յ]որդորեաց. «Ընդ իս եթէ որ մտց[է] ճարակ գտցէ»<sup>30</sup> եւ՝ զբանին կերակուրն: Եւ զմարմին կենարար եւ զկեցուցիչ են եւ դրունք առաքինութեան՝ իմաստուն հոգոյն բանականի եւ զարութեանց զգա[յ]ութեանց բաժանեալք, որովք, ընդ որս մտեալ, կարասցուք յիմաստութիւն յԱստուծոյ տունն յարիարար եւ ողջախոհութեամբ, զորս դի[ւ]րին է գտանել հետեւողաց ուղիղ բանին ճշմարտութեան: «Ձալսոսիկ դրունս սիրէ Տէր բան զամենայն յարկսն Յակորայ»<sup>31</sup>: Այսինք[ն]՝ զստուերական արինաց տեղիս կատարման. եւ զխորանին, եւ զտաճարին, եւ, որ ի Սինա արինադրեցան, Հագարա աղախնոյն ծնունդ անուանին
- A 237ա յառաքելոց<sup>32</sup>: Իսկ վերին Սիրն ॥ ազատ է մալքն խաղաղութեան [ո՞րդ-ւ]ոց նոր Սիրնի, զոր սիրեաց զըրունս հաւատոցն արդարութեան, զի հաւատ]ով սիր[ո] գտցուք զարդարութիւն եւ դրամբ շրթանց\* խոստովանիմք զսիրկութիւն: Իսկ յառաջին արք\*\* Յակորաւ տարագիր եղէն սրտիւք եւ ական[ջ]աւք եւ շրթամ[բ]ք այսմն դաւանութեան ատարք եղէն ի մարէ եւ խաբեցան սուտ\*\*\* յարգանդէ եւ խաւսեցան սուտ, բանզի ստոյն իսկ զբանէ հետեւեցին կամաց եւ խորհրդոց, սպան զաէր այդոյն ընդ ծառաիցն\*\*\*\*, առաքելոց առ մշակսն<sup>33</sup>, եւ ինքեանք տարագրեցան անդ ի ծառայութենէն: Սիրելիքն յառաջ ատելիք եղէն յետոյ, զի շանց կատ]աղեաց եւ իժից ծննդոց նմանեցան եւ տակաւին եւս թուք, հայհոյութիւն ի նե[ր]քոյ շրթանց նոցա: Իսկ դրունք նորա Սիրնի. Սիրտք եւ շրթունք առաքելոցն բանան բանիւք զսիրտս հաւատացելոց ի Քրիստոս, զի բացին շրթունք նոցա ի փառատրութիւն շինողին եկեղեցի, որպես եւ յաջորդս ցուցանէ. «Փառաւորեալք խաւսեցան վասն քո, բազալթ Աստուծոյ»<sup>34</sup>: Վասն զի քարոզութիւն առաքելոցն եւ նախադրութիւնք մարգարէիցն երգս հոգննուագ: [յ]արմարեցին ի տունս այսմիկ, որ է եկեղեցի Աստուծոյ կե[ն]դան[ւ]ոյ եւ բազաբ հոշակաւոր ամենաժողով [բազմա՞ց]եալ շահիւք եւ վերամբարձ պար-

29 Սաղ. 22 2:

30 Յովհ. 6 9:

31 Սաղ. 22 2:

32 Հմմտ. Գաղատ. Գ 24—25:

33 Հմմտ. Մատթ. ԻԱ 33—40:

34 Սաղ. 22 4:

\* Զ ե ա ա գ ը ու մ՝ շրթանց:

\*\* Զ ե ա ա գ ը ու մ՝ արկ:

\*\*\* Զ ե ա ա գ ը ու մ բառս բերված է կետազծերի մէջ:

\*\*\*\* Զ ե ա ա գ ը ու մ՝ ծառիցն:

սպար, հաւատով, սիրով եւ սրբութեամբ եւ հրշտակավաւելուչ\* կար-  
 փար եւ կրօնիւք՝ ի հրշտակաց Աստուծոյ պահպանեալք, որոց երգա-  
 կիցք եղէն ի տան Տեառն տնաւրինութիւն Միածնի Աստուծոյ՝ ասելով.  
 «Փառք ի բարձունս Աստուծոյ»<sup>35</sup>: Վասն զի Աստուած Հայր, ի փառա-  
 տրեալ յանդրանիկ փառաւորչաց իւրոց, խաւսեցաւ նոց[ա] եւ մարգա-  
 րեալք առաջնաւք զփառս Միածնին իւրոյ այնմիկ, որ խաւսի զխաղա-  
 դութիւնս ընդ հեթանոսս եւ առ[ն]է խաղաղութիւնս իւրոց: ||| . . .

A. KESSEYAN

НОВОНАЙДЕННЫЕ ФРАГМЕНТЫ «ТОЛКОВАНИЯ  
 ПСАЛМОВ» ИОАННА ЗЛАТОУСТА

Резюме

Публикация содержит новонайденные фрагменты армянского перевода «Толкования Псалмов» Иоанна Златоуста (Пс. 1, 1—2. 86, 2), греческий оригинал которых не сохранился. Текст этих фрагментов подготовлен на основе армянских рукописей Матенадарана № 472 и 2783.

H. KIOSSEYAN

FRAGMENTS NOUVELLEMENT DECOUVERTS DU  
 „COMMENTAIRE AUX PSAULMES“ DE JEAN CHRYSOSTOME

Résumé

Cette publication présente des fragments nouvellement découverts de la traduction arménienne du „Commentaire aux Psaulmes“ de Jean Chrysostome (ps. 1, 1—2. 86, 2), dont l'original grec ne s'est pas conservé. Le texte des fragments a été préparé d'après les manuscrits arméniens nos. 472 et 2783 du Maténadaran.

<sup>35</sup> Ղուկ. ԺԹ 38:

\* Զ ե ա ա դ ր ո ս լ մ՝ հրշտակավաւելուչք:





թղթերը 927 հատ են (1802 թերթ), որոնցից հնագույնը հիշք. 985 (1577) թ. վանի, Արճեշի, Ադիլջավազի (Արծկե), Բիթլիսի (Բաղեշ), Բերկրիի և Քեսունի (Կեղան) լիվանների, միջին շափսի վեց թղթերի վրա, մեծ մասամբ մանր սիակաթ գրությամբ գրված թիմարների դեֆթերն է, որտեղ արձանագրված են այդ լիվաներին ենթակա Դավաշի, Արճեշի, Տատիկի, Օխկանի, Չուկուրի, Ամյուկի, Արգիլի, Մուշի, Ադիլջավազի, Կապանի, Բերկրիի և այլ նահիաներում գտնվող 104 գյուղերի ու ագարակների (կարիյյա և մազրաա) թիմարների, ինչպես նաև հանքերի, ներկատների, գինետների, անասունների և գերեվաճառության շուկաների, կաշվի դարադման արհեստանոցների (դարադխանե) և այլ եկամտաբեր օբյեկտների մուկաթիանների գումարները<sup>3</sup>:

Նույնպիսի մի դեֆթեր պահպանված է նաև հիշքեթի 1012 (1603) թվականից<sup>4</sup>, որը հիմնականում համապատասխանելով 1577 թ. դեֆթերին, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Բիթլիսում իշխող Ռոժակի ցեղի առաջնորդների ֆեոդալական տան զիամեթների ու թիմարների մանրամասն նկարագրությամբ: Հայտնի է, որ դեռևս ամիր Շամս-էդ-դինի ժամանակներից (XV դ.) Բիթլիսի, Խլաթի, Մուշի, Խնուսի շրջանները, որպես սոյուրդալներ, Բիթլիսի ամիրների ֆեոդալական տիրույթներն էին<sup>5</sup>, որոնք XVI դարի երկրորդ կեսում (1578 թ.) ժառանգաբար անցան նույն ընտանիքի նշանավոր դեմբերից, մեծ ամիր և անվանի պատմիչ, «Շարաֆնամե» պատմական երկասիրության հեղինակ՝ Շարաֆ-խան Բիթլիսիին<sup>6</sup>: Սույն դեֆթերում գրանցված են Բիթլիսի ամիրների թիմարների սահմաններում գտնվող, ինչպես բուն Բիթլիս քաղաքից, այնպես նաև վերոհիշյալ կազաններին ենթակա Խուլփիկի, Խութի, Դատվանի, Խլաթի, Տատիկի, Դավառի, Կարճկանի, վանի, Մուշի, Ադիլջավազի (Արծկե), Արճակի, Արճեշի և այլ նահիաների հարյուրավոր գյուղերից ստացվող եկամուտները, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1415372 աբշև:

Վավերագիրը ուշագրավ մանրամասնություններ է պարունակում նաև Շարաֆ-խանի սպանությունից հետո նրա տիրույթների՝ շատ կարճ ժամանակով եղբորը Խալաֆ-խանին անցնելու, իսկ վերջինիս սպանությունից անմիջապես հետո նույն տիրույթների՝ Շարաֆ-խանի որդի Զիա-էդ-դինին տրվելու վերաբերյալ: Իսկ դեֆթերի առաջին էջի վերի մասում, ավելի ուշ կատարված մակագրությունից պարզվում է նաև, որ հիշք. 1028 (1619) թ. այդ նույն թիմարները տրվել են վախճանված Զիա-էդ-դինի որդուն՝ Շարաֆ-խանին<sup>7</sup>:

<sup>3</sup> Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվ, ֆոնդ 223 Ա, վավ. 511 (Այսուհետև՝ ԿՄԺԳԱ):

<sup>4</sup> ԿՄԺԳԱ, ֆոնդ ՕԱԿ, վավ. 162/36:

<sup>5</sup> Scheref-nameh ou Histoire des kourdes, par Scheref, prince de Bidlis. Publiée par V. Véliaminof-Zernof, t. I, texte persan, ière partie, St. Pétersbourg, 1860, էջ 376—378 (Այսուհետև՝ Շարաֆնամե):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 454:

<sup>7</sup> Ցարդ հայտնի չէ պատմիչ Շարաֆ-խան Բիթլիսիի մահվան թվականը: Վ. Վելյամինով-Զեռնովը հաստատում է, որ նա մինչև 1599 թ. ողջ է եղել (տե՛ս Շարաֆնամե, առաջաբան, էջ 16—17), որից հետո տեղեկություններ չկան, թե մինչև ո՞ր թվականն է ապրել: 1603 թ. կազմված սույն դեֆթերում նկարագրված Բիթլիսի ամիրների հաջորդականությունից երևում է, որ նա սպանված պետք է լինի 1601—1602 թթ., որից հետո զիամեթներին տիրել է նրա եղբայր Խալաֆ-խանը, որն այս ընթացքում սպանվել է իր իսկ աշիրեթի քրդերի ձեռքով, և նորից այդ տիրույթները տրվել են պատմիչի որդիներից Զիա-էդ-դինին, ինչպես երևում է, երկու եղ-

Կան նաև XVIII դարի 30-ական թվականներին վերաբերող Վանի բերդի մուտքի և ելքի, խրթին սիակաթով գրված մանրամասն հաշվեկշիռներ (Դեֆթերի իրադ վե մեսարիֆ-ի խազինա-ի Վան)<sup>8</sup>, որոնք Վանի մերձակա, ինչպես նաև Ռշտունիքի, Շատախի, Գավաշի, Արճակի և այլ շրջանների բազմաթիվ գյուղերից ստացվող հացահատիկի (ցորեն, գարի, բլղուր, ալյուր և այլն), յուղի, մանր եղջերավոր անասունների (արու և էգ ոչխար, գառ, այծ և ուլ) վերաբերյալ ուշագրավ տվյալներ են պարունակում: Այս բնույթի վավերագրերը իրենց հարուստ բովանդակությամբ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև Վասպուրականի հիշյալ և այլ գավառների և նրանց, մեծ մասամբ հայկական անուններով պահպանված, հարյուրավոր գյուղերի տեղագրական ուսումնասիրության տեսակետից: Վանի մերձակա Շուշանց, Ավանց, Արճակ, Խառակոնիս, Ղալաշուկ (Լեսկ) և այլ գյուղերից բացի հիշատակված են նաև վերոհիշյալ նահիաների Միրաբ, Այանս, Բերդիկ, Կղզի, Անկշտան, Սբուրթան (Սուրբ Վարդան), Նորավանց, Զըվըն, Դոնաշեն, Փակիս, Դանբաթ, Գոմս, Սոսրաթ, Քյոշք, Իսբելե (Ախավանք), Իշխանի գոմ, Քարվանց, Շխենի, Արտավեղ, Թիմար, Խիարթան, Զուլալ, Խորավել, Անար, Մճառիզ, Փշրավանք և բազմաթիվ այլ գյուղեր:

Գյուղերի (կարիյյա), ագարակների (մագրաա) և այնտեղ բնակվող ռայաթների վերաբերյալ վիճակագրական ուշագրավ տվյալներ կան մերթրնդմերթ անցկացվող ընդհանուր գրանցումների (թահիր) և ստուգումների (յոքլամա) ժամանակ կազմված մեծ և փոքր ցուցակներում ու զեկուցագրերում: Այսպես, օրինակ, XVII դ. 80-ական թվականների նման մի ցուցակում հանրագումարի են բերված 631500 մուլքեր և հողեր և 196784 ռայաթներ<sup>9</sup>:

Վանի ֆոնդում առկա են արքունի խասերի (խավասս-ի հումայուն), զիամեթների ու թիմարների, բերդի գանձատան ելքի ու մուտքի և զինվորականության ոռոգիկների (իրադ վե մեսարիֆ, թա՛լինաթ-ի ասաքիր), բանակի կարիքների համար բնակչությունից գանձված կամ գնված մթերքների և այլ նյութերի (զախաիր), գլխահարկի (շիզյա) և նահիաների, գյուղերի, ագարակների և այլ եկամտաբեր վայրերի ու հաստատությունների վարձակալման գումարների (մուկաթիաթ) զեֆթերներ: Մեծ թիվ են կազմում հատկապես թիմարներին վերաբերող համառոտ և ընդարձակ ցուցակներն ու այլ պաշտոնական փաստաթղթերը<sup>10</sup>:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ֆոնդում գրանցված մյուս բազմաբովանդակ տարարնույթ գրությունները (բողոքներ, զեկուցագրեր, վիճարանական գրություններ, ստուգումների արձանագրություններ, հրահանգներ,

բայրների միջև սպանությունների դրդող թշնամություն է եղել, որի ընթացքում, ամենայն հավանականությամբ, հոր հետ սպանվել է նաև մյուս որդին՝ Շամս-էղ-զինը: Քանի որ իր պատմության վերջում Շարաֆ-խանը նշում է, որ թեև 1578 թվականից նա տիրում էր իր ժառանգական տիրույթներին, սակայն, հավանաբար զբաղված լինելով իր երկի շարագրությամբ, կառավարչական գործերը թողել էր ավագ որդուն՝ Շամս-էղ-զինին (Շարաֆնամե, հ. Ա, էջ 456): Թվում է, թե Խալաֆ-խանի սպանությունից հետո, երբ կրկին տիրույթները տրվել են Շարաֆ-խանի ուղիղ գծով ժառանգներին, պետք է իշխեր ավագ որդին, որը փաստորեն իշխում էր զեռ հոր կենդանության օրոք:

<sup>8</sup> ԿՄԺԳԱ, ֆոնդ 0245:

<sup>9</sup> Նույն տեղում, ֆոնդ 233 Ա, վավ. 74:

<sup>10</sup> Նույն տեղում, վավ. 313—447:

վճռագրեր և այլն), որոնց համակողմանի համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու ինչպես սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատկությունների, այնպես նաև պետական, զինվորական, վարչական ու ֆինանսական համակարգի վերաբերյալ:

Պետք է ասել, որ XVIII—XIX դդ. վավերագրերը ավելի մեծ թիվ են կազմում, հարուստ են բովանդակությամբ և մեզ են հասել առավել անվնաս վիճակում: Դրանք մեծ մասամբ վերաբերում են խաս, միրի և մալիքանե հողերի եկամուտների մուկաթիաներին, այդ վայրերի բնակիչներից ստացվող հարկերի ու տուրքերի գանձման իրավունքի աճուրդով վարձակալման կամ իլթիզամով տիրելու համակարգին: Ուշագրավ մանրամասնություններ են պարունակում հատկապես Մոկսին, Սղերզին, Խիզանին, Սպարկերտին, Հաքքարիի շրջանում՝ Աղբակին, Շամդինանին, Զուլամերիկին, Գավառին և Կոթուրին, Ադիլչավաղի յուրթլըքներին և օջաքլըքներին, Բերկրիի գյուղերին, ինչպես նաև Վանի սանջաքի զինապարտության տուրքերին (բեդել ասկարի) վերաբերող վավերագրերը, որոնց մեջ արտացոլված է XVIII դ. երկրորդ կեսում և XIX դարում Օսմանյան կայսրության այս ծայրամասի տնտեսական անկումը, պաշտոնեության և մուլթեգիմների հարստահարություններին ու քրդական աշիրեթների կողոպտիչ արշավանքներին ենթակա բնակչության աշխատավորական զանգվածների ծանր վիճակը: Առավել բնորոշ են այն վավերագրերը, որոնք վերաբերում են հողատիրության տարբեր ձևերին կամ վկայում են տեղական իշխանությունների ղեկուցադրերի հիման վրա սուլթանական հրամանով հողերի սեփականատիրական կատեգորիաների փոփոխման մասին: Այս կարգի վավերագրերի, որպես բացառիկ արժեք ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների մասին գաղափար կազմելու համար բավական է ծանոթանալ Վանի սանջաքին և Բերկրիի, Ոստանի ու Գավաղի նահիաներին վերաբերող, հիշք. 1201 (1786) թ. բովանդակալից մի վավերագրի հետ, որը թեև ծավալով մեծ չէ, սակայն Օսմանյան կայսրության ավատատիրական համակարգի, պետական (խաս և միրի) և մասնատիրական (մալիքանե) հողատիրության և մանր ու խոշոր ավատատերերի հարստահարության ներքո հեծող ուսյաթների ծանր վիճակի վերաբերյալ ուշագրավ տվյալներ է պարունակում:

Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան վերոհիշյալ թվականին Բարձրագույն դռանը ներկայացրած ղեկուցադրերից մեկում տեղեկացնում է, որ հիշքեթի 1187 (1773) թվականից ի վեր Վանի մուհաֆիզներին որպես ոտճիկ նշանակված որոշ խասեր ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրվել, որի հետևանքով մուհաֆիզության հասույթները պակասել են: Միաժամանակ մյուս խասերի ուսյաթների վրա լրացուցիչ պարտականություններ են դրվել, որոնք նրանք ի վիճակի չեն հատուցելու, և այս պարագան կարող է պատճառ դառնալ ուսյաթների ցրվելուն: Ուստի, վկայակոչելով Վանի կազիի և ժողովրդի անունից ներկայացված գրությունը (թահրիր), խնդրում է կարգադրել, որպեսզի մալիքանե դարձված գյուղերը վերստին վերականգնվեն որպես խասեր և դրվեն միրմիրանի (բեյլարբեյության) տրամադրության տակ: Զեկուցադրին առնթեր տրված է Վանի միրմիրանին ենթակա Զրվանդանց, Կղզի, Աթանանց և Գավաղ գյուղերի և Բենդ-ի մահի (ձկան ամբարտակ) կոչվող ձկնորսարանի, ինչպես նաև տեղի զինվորականության օջաքլըքների մեջ մտնող Օսման-բեկի ազարակի մուկաթիաների գումարներն ու դրանց վրա բերաթ ստացողների անունները:

Վավերագրի առաջին էջի վրա Քեյմուր փաշայի ղեկուցագրի բաղվածքն է և նշված վայրերի վերաբերյալ տրված տեղեկանքները: Երկրորդ էջի վերի աջ անկյունում գրանցված հարց ու պատասխանից պարզվում է, որ կատարված կարգադրությանը նախորդել է, որոշ բնություն պարզելու համար, թե նման այլ դեպքեր եղե՞լ են արդյոք: Թեև պարզ չէ, թե հարցն ում է ուղղված, սակայն պետք է ենթադրել, որ բացատրություն տվողը, հարցին լավատեղյակ, պատասխանատու պաշտոն զբաղեցնող անձնավորություն է եղել, որը պատասխանելով Բարձրագույն դռան հարցումին, նշել է, որ Վանի միրմիրանին պատկանող խասերը թեև ժամանակին մուհաֆիզների տնօրինությամբ տրվել են մասնավոր անձանց որպես մալիքանե, սակայն, որքանով որ մասնատիրական (մալիքանե) հողերի վերստին խաս կամ միրի դարձնելը հակասում է մալիքանեի օրենքներին, ուստի այդ կարող է տեղի ունենալ միայն սուլթանական հրամանագրով: Այս բացատրագրի հիման վրա էլ վավերագրի առաջին էջի կենտրոնական մասում, դիվանի խոշոր գրություն, կարգադրված է նշված մուկաթիաների եկամուտները նորից վերականգնել որպես անմիջապես միրիին, կոնկրետ դեպքում Վանի միրմիրանին պատկանող եկամուտներ:

Ինչպես տեսանք, XVIII դ. հողատիրության առանձնակի մի հարցի վերաբերելով հանդերձ, վավերագիրը պարունակում է տարբեր պաշտոնատար անձանց տարաբնույթ ղեկուցագրեր, տեղեկանքներ և մակագրություններ, և այդ առումով էլ առավել բնորոշ մի օրինակ հանդիսանալով, ըստ ամենայնի բացահայտում է վավերագրերի այս խմբի, որպես որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների, ընդհանուր պատկերը:

Ստորև հրապարակելով վավերագրի բնագրի նմանահանությունը, վերծանությունն ու հայերեն թարգմանությունը, կարծում ենք, որ այն, վերը մասնակիորեն գնահատված փաստական նյութով, կարող է որոշակի գիտական ուշադրության արժանանալ ավելի լայն գիտական շրջանակների կողմից: Ինագրում տեղ գտած սոցիալ-տնտեսական, վարչական և այլ տերմինները, քավարար շափով հետազոտված և մեկնաբանված են մասնագիտական գրականության մեջ:

Ներկայումս Վանի մուհաֆիզ, մեծաբզո վեզիր, նորին վսեմություն, գեեբջանիկ Քեյմուր փաշայից ստացված գուրբյան մեկ հոգվածի համառոտ շարադրանքն է:

1201 թ. սաֆարի 13-ին (1786 թ. դեկտ. 5):

Թեև հնուց ի վեր Վանի մուհաֆիզներին որպես ապրուստի միջոց և ոռճիկ նշանակված խասերն ու այլ եկամուտները ավելի քան 25000 դուրուշ է եղել, սակայն 1187 թվականից ի վեր, հիշյալ խասերից որոշ գյուղեր, ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրված, որի պատճառով վիլայեթի հասույթները նվազել ու պակասել են: Բացի այդ, հիշյալ խասերից, այն գյուղերի ռայաթներին, որոնք մալիքանե չեն արձանագրված, սովորական ձևով պարտադրվել են սե-

րայի (պալատական), ինչպես նաև վառելափայտի և այլ սովորութային ծախսերը, որոնք, ինչպես ղեկուցված է, ռայաթները ի վիճակի շեն հատուցելու, և բանի որ պարզվում է, որ այս վիճակը շարունակվելու դեպքում, նշված ռայաթները թշվառության կմատնվեն և կցրվեն, ուստի պետք է վերոհիշյալ խասերի այն գյուղերը, որոնք մալիքանե են արձանագրված, վերցվեն և ինչպես առաջ էր, նորից խաս արձանագրվելով միացվեն միմիբրանին: Վանի կազին և ժողովուրդը իրենց գրությամբ խնդրում են, գերագույն հրամանի հրապարակումով և շնորհումով, պահպանության տակ վերցնել վերոգրյալ ռայաթ-ծառաներին և թույլ շտալ, որ նրանք թշվառության մատնվեն ու ցրվեն:

Վանի միմիբրանին ենթակա

Վանին ենթակա Զրվանդանց գյուղը 1189 թ. գանձատուն  
ուղարկվող, տարեկան՝ 1000 դուրուշ

Վալիի խասի համար՝ 45 »

Մուհամադ-Սադիդ էֆենդիի անունով, 1197 թ. շավալի 29-ին  
բերաթներ են տրված, կանխիկ, առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը Վանի միմիբրանի խասերից լինելով, ամեն տարի մի մուլթագիմի էր տրվում, իսկ մուլթագիմները, անձնական շահերից զրդված, իրենց ռայաթների նկատմամբ ոտնձգություններ են թույլ տալիս և պատճառ դառնում մյուս միմիբրաններից ստացվող եկամուտների նվազելուն, որի համար էլ Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառված է որպես մալիքանե:

Չկան ամբարտակի (բանդ-ի մահի) մուկաթիան, որը այսքան  
մալիքանեի հարկով (մալով) Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի խնդրի հիման վրա վաճառվել է 1189 թվականին: Տարեկան՝ 200 դուրուշ

Գարվիշ սեյիդ-Մուհամադի, Մահմուդի և սեյիդ Ֆեյզուլլահի  
անուններով բերաթներ են տրված 1194 թ. շավալի 21-ին.  
կանխիկ առձեռն՝ 100 »

Տարիներ շարունակ որսավայր հանդիսացող գետի նախկին հունից շեղվելու հետևանքով, ձկան որսը վերացել է, որից և նվազել են միմիբրանի եկամուտները, և Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին վերավաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Կզզի գյուղը 1189 թ., վալիի  
ներկայացմամբ, տարեկան՝ 50 դուրուշ

Սեյիդ Մուլեյմանի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի 18-ին կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղին որպես մակթու տիրող Մուհամադի մահանալու պատճառով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին որպես մալիքանե վաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Աթվանանց գյուղը 1189 թ.,  
տարեկան՝ 80 դուրուշ

Սեյիդ Մուլեյմանի անունով բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի  
18-ին, կանխիկ առձեռն՝ 15 »

Մի քանի տարուց ի վեր ուսյաթների ցրված լինելու պատճառով, վերստին շենացնելու նպատակով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառվել է որպես մալիքանե:

Վանի էյալեթի Գավաշ նահիայի Գավաշ գյուղը, Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշայի ներկայացմամբ, 1191 թ. ըստ ներկայացման 28000 փարա (°). տարեկան՝ 50 դուրուշ

Աղաների աղա Մուհամադ-Ամինի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված. 1191 թ., կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը միրմիրանի խասերից լինելով, մուլթազիմների շահատակության, ընշաքաղցության և ոտնձգությունների պատճառով, ուսյաթները թրշվառության են մատնվել ու ցրվել. գյուղն ավերվել է, միրմիրանի եկամուտները նվազել են ու պակասել: Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան, գյուղը վերստին որպես մալիքանե վաճառելու մասին գեկուցել է և նրա ներկայացմամբ, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառվել է:

### Վանի զինվորականության օջափլբֆին ենթակա

Ֆրիզունի (°) կազային ենթակա Օսման բեկի ազարակի մուկաթիան. կես բաժնի մալը—տարեկան՝ 1000 դուրուշ

Հասանի որդի Աբդուլլայի անունով բերաթ է տրված. կես բաժնի դիմաց, կանխիկ առձեռն՝ 15 »

Հիշյալ գյուղի կես բաժնին մակթուի իրավունքով տիրող Հուսեյնի մահից հետո, այդ թափուր բաժինը, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառված է:

Ամեն տարվա մալը Վանի մուհաֆիզներին հատուցվող վերոհիշյալ վեց մակթուները, այս շափի ձևակերպումներով, մալիքանեի կարգով արձանագրված են վերոհիշյալ անձանց վրա: Հրամանը նորին սրբություն, վսեմաշուք սուլթանինն է:

1201 թ. սաֆարի 16-ին (1786 թ., դեկտ. 8):

— Այս ձևի ալլ օրինակներ կա՞ն:

— Այս ձևը, միրմիրանի խասերից լինելով, իրենց դիմումների համաձայն, շենացման պայմանով, որպես մալիքանե, շնորհված է ուսյաթներ խնամող որոշ մարդկանց, որից հետո, վերստին վերացնելու օրինակներ չլինելուց բացի, հիշյալ մուկաթիայի հինգ կտորը Վանի նախկին մուհաֆիզների և մեկ կտորը ներկայիս Վանի մուհաֆիզ, վերոհիշյալ վեզիրի ներկայացմամբ, շնորհված լինելով, վերստին վերացումը, մալիքանեի պայմաններին հակառակ լինելու պատճառով, այժմ դրա վերացումը հաքիմների ցանկությունից է կախված. հրամանը վսեմաշուք և ողորմած նորին սրբություն սուլթանինն է:

(Ստորագրություն)

Հիշյալ թվականից ի վեր, միրմիրանի խասերից, Վանի էյալեթում գտնվող գյուղերի մալիքանե տրված այն մուկաթիաների մալն ու մուամիլաները, որոնք գրանցված են իրենց լիազորների վրա և արձակելով նորից մալիքանե են տրված, թող վերականգնվեն որպես միրմիր:

(Ստորագրություն)



حالا وان محافظی وزیر مکرم سعادتلو تيمورباشا حضرتلری طرفندن  
وارد اولان تحریراتدن بر ماده نك خلاصه سیدر • فی ۱۳ ص سنه ۱۲۰۱

وان محافظترینه از قدیم مدار و معاش تعیین اولنان خواص و  
ما بر ابرادات اتحق یگر می بنی بیک غروشه بالغ اولورا یکن بیک یوز  
سکان بدی تار بخندن برو خواص مرفوم قرالرنندن بعضیلری برو تعریب  
مالکانه قید اولندی عینه بناء حاصلات ولایة کسرو نقصان تر نب  
ایلدگندن ما عدا خواص مذکور قرالرنندن مالکانه قید اولمیان قرال  
رعایا لرینه معتاد اولان سرای مصارفی و حلب و سایر مصارفات عرفیه  
طرح و تحمیل اولند قجه ادایه عدیما اقتدار اولد قترینی بیان و بو  
صورتده فالورایسه رعایای مذکوره بر اکنده و پریشان اولد قظر ظاهر  
اولمقله خواص مرفومه دن مالکانه قید اولنلر رفع و ینه قدیمی اوزره  
خاص قید اولنوب کما فی الاول خواص میر میرانه الحاق و اقتضا ایدن امر  
عالی اصدار و عنایت و بو وجهله رعایای مرفومه قوللری پریشان نیتدن  
صیانت بیورلمسی مشارالیه وان قاضیسی و اهالیسی تحریر ایدر لر •

### تابع خواص میر میران وان

قریه زیر و اندانیس تابع وان در سنه ۱۱۸۹

فی ارساله خزینه فی سنه ۱۰۰۰ غروش

برای خاص والی فی سنه ۴۵ غروش

بنام محمد صادق افندی بروات داده فی ۲۹ ل سنه ۱۹۲

معجله ۵۰ غروش

قریه مزبور میر میران وان خواصندن اولوب بهر سنه سر ملتزمه

ورلمک تقریبیله ملتزملر کفدو نفعلری سوداسیله رعایا سنه تعدی



ایلدکلرندن باشقه میرمیران اولنلرک ایرادی کسریته باعث اولمقله  
 وان محافظی احمدباشانک عرضی موجبجه تاریخ مزبورده مالکانه  
 فروخت اولنمشدر .

مقاطعه بند ماهی که با این قدر مال مالکانه فروخت شده با  
 عرض احمدباشا محافظ وان در سنه ۱۱۸۹

فی سنه ۲۰۰ غروش

بنام درویشسید محمد و محمود و سید فیصل الله بروات داده

فی ۲۱ ل سنه ۱۹۴

معجله ۱۰۰ غروش

بر قاج سندهن سرو مستمراً صید اولنان نهری میرای قدیمندن  
 انحراف و شکار ماهی اولمدیقندن ایراد میرمیران کسرجاری اولمقله  
 وان محافظی احمد باشانک عرضی موجبجه تاریخ مزبورده مجدداً فروخت  
 اولنمشدر .

قریه کغزی در ناحیه واسطان در ایالت وان سنه ۱۸۹

با عرض والی فی سنه ۵۰ غروش

بنام سید سلیمان بروجیه مالکانه برات داده فی ص سنه ۱۱۹۲

معجله ۱۵ غروش

قریه مزبوره بروجیه مقطوع متصرف اولان محمد فوت اولمقله وان  
 محافظی عرضی موجبجه بالمزایده تاریخ مزبورده مالکانه فروخت  
 اولنمشدر .

قریه اتکنانس در ناحیه واسطان در ایالت وان در سنه ۱۱۸۹

فی سنه ۸۰ غروش

بنام سید سلیمان بروجیه مالکانه برات داده فی ۱۸ ص سنه ۱۱۹۲

معجله ۱۵ غروش

قریه مزبورك برفاچ سنه دن برو رعایاسی پراکنده و پریشان  
اولمقدن شن و آبادان اولمقلفه وان محافظی عرضی موجبنه تاریخ  
مزبوره ده مالکانه فروخت اولمشندر .

قریه کواش تابع تاحیه کواش در ایالت وان پرموجب عرض تیمور  
پاشا محافظ وان در سنه ۱۱۹۱

بر موجب عرض ۲۸۰۰۰ تاروب

فی سنه ۵۰ غروش

بنام محمد امین اغا، اغایان وان پروچه مالکانه پرات داده فی

سنه ۱۱۹۱

معجله ۵۰ غروش

قریه مزبوره خواص میر میرا، تدن اولوی ملتوملری تفعلربجون  
اکالیق و تعدیا تلرتدن ناشی رعایا پراکنده و پریشان وقریه مزبوره  
اولندیغندن ایراد میر میران کسر و نقصان جاری اولمقله مرقوم مجدداً  
مالکانه فروخت اولمشنی وان محافظی تیمور پاشا عرض اتمکله عرضی  
موجبنه بالمتزایده تاریخ مزبوره ده مالکانه فروخت اولمشندر .

تابع اوچقلق تفرات وان

مقاطعه مزرعه عثمان یک تابع قضاء قریدون

مال نصف حصه فی سنه ۱۰۰۰ غروش

بنام عبدالله بن حسن پروچه مالکانه پرات داده

نصف حصه معجله ۱۵ غروش

قریه مزبورك نصف حصه سنه پروچه مقطوع متصرف اولان حسین

فوت اولمنله حصه بی محلولندن بالمزایده بروجہ مالکانہ تاریخ  
مزبورہ ده مالکانہ فروخت اولنمشد .

بهر سنه مالترین وان محافظترینه وریک التي مقطوعات مزبورہ  
بو مقدار معاملات ایله مرقومونک بروجہ مالکانہ عہدہ لرنده اولدی  
مقیدر - فرمان دولتلو سلطانم حضرتلرینگدر . فی ۱۶ ص سنه ۱۲۰۱

- بو مقوله نک امثالی وارمیدر ديه .

- بو مقوله میرمیران خواصندن اولوب کندو عرضلری موجبہ سنو  
آبادان ایتمک شرطیله بعض رعایا پرور کمنه به عمار شرطیله بروجہ  
مالکانہ توجیه اولتدقدن صگره تکرار رفع اولندیقک امثالی بولنمه  
دیقندن باشقه مقاطعه مزبورک بش قطعہ سی سابق وان محافظلری عرضی  
و بر قطعہ سی حالا وان محافظی وزیر مشارالیه نک عرضی موجبہ توجیه  
اولنمرا اولمنله تکرار رفعی شروط مالکانہ به مخالف گورنمکله الحال  
هذه رفعی اراده حکامه منوطدر - فرمان دولتلو عنایتلو سلطانم حضر  
تلرینگدر . فی ۲۰ ص سنه ۱۲۰۱ (امضاء)

تاریخ مذکوردن برو خواص میرمیران اولوب وان ایالتنده واقع  
قرالرن مالکانہ وریلان مقاطعات مالی و معاملہ لری وکیللرک اوزرینه  
ایلدگی وینه عتقنه مبنی مالکانہ ورلمش اولندیغی میری وقرار  
اولنه .

صح

А. Д. ПАПАЗЯН

ОСМАНСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ НАРОДНОЙ  
БИБЛИОТЕКИ КИРИЛЛА И МЕФОДИЯ В СОФИИ,  
ОТНОСЯЩИЕСЯ К ВАНСКОМУ ЭАЛЕТУ

## Резюме

В отдельном фонде Восточного архивного отдела Народной библиотеки Кирилла и Мефодия в Софии хранятся 927 документов, относящихся к Ванскому эалету Османской империи XVI—XIX вв., которые имеют значение важнейших первоисточников, освещающие социально-экономическую и политическую историю упомянутых веков.

Предварительное изучение документов показало, что среди них находятся большие и малые дефтеры знаметов и тимаров XVI—XVII вв., росписи прихода и расхода гарнизона Ванской крепости (ирад ве месариф), перечни воинских жалований (та'йиннат-и асакир), документы о купле или изъятии у местного населения продовольствия и других продуктов на нужды армии (захаир). Кроме того, здесь находятся и списки поголовной подати (джизия), тексты контрактов об аренде доходов или предоставления во владение сел, хуторов (мазра'а) и других прибыльных мест и учреждений с илтизамом, а также другие документы, всестороннее изучение которых в большей степени будет способствовать освещению основных вопросов, связанных как с социально-экономической и политической историей Васпуракана в упомянутое время, так и с проблемами топографии и демографии этого региона.

В качестве примера, заслуживающего внимания, нами издается прочтение турецкого текста документа от 1201 г. х. (1786 г. н. э.) вместе с переводом его на армянский язык. Этот документ содержит разрешение султана, данного в ответ на докладную ванского Теймур паши о преобразовании ранее переведенных из категории «хасс» в «маликане», сумм «мукат'а», сел Зрванданц, Кхзи, Атананц и Гаваш, рыбных угодий Бенд-и махи, находящихся в ведении мирмираана эалета (бейлербея), а также входящего в местный военный оджаклык хутора Османбека из категории «маликане» с переводом их снова во владение «мири».

H. D. PAPAZIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES OTTOMANS CONCERNANT  
L'EALET DE VAN DE LA BIBLIOTHEQUE CYRILLE ET METHODE  
DE SOFIA

## Résumé

Le fonds privé des Archives orientales de la Bibliothèque Cyrille et Méthode de Sofia conserve 927 documents des XVIe-XIXe siècles concernant l'éalet de Van de l'Empire Ottoman, documents qui présen-

tent l'importance de sources précieuses éclairant l'histoire sociale, économique et politique des siècles mentionnés.

L'étude préalable de ces documents montre qu'on y découvre des deffers grands et petits des ziamets et des timars des XVIe-XVIIe siècles, l'enregistrement des recettes et dépenses de la garnison de la forteresse de Van (irad ve messarif), l'énumération des soldes militaires (ta'yinat-i assakir), des documents relatifs à l'achat ou la confiscation de chez la population locale de vivres et d'autres marchandises pour les besoins de l'armée (zakhaïr). En, outre, on y trouve aussi les listes de la capitation (djizia), les textes des contrats de location de revenus ou de dons en propriété de villages, de métairies (mazra'a) et d'autres endroits et exploitations à revenus avec iltizam, de même que d'autres documents dont l'étude approfondie contribuera dans une grande mesure à l'éclaircissement des questions essentielles concernant l'histoire sociale, économique et politique du Vaspourakan à l'époque mentionnée, ainsi que les problèmes de la topographie et de la démographie de cette région.

En guise d'exemple, nous publions le texte turc d'un document de l'an 1201 du Hégire (1786) avec sa traduction en arménien. Ce document contient la permission du sultan, donnée en réponse au rapport de Telmour pacha de Van, pour la réforme des sommes "moukat'a", auparavant transférées de la catégorie "Khas" à la catégorie "malikané", des villages de Zrvandantz, Keghzi, Atanantz et Gavach, des exploitations poissonnières Bend-i mahi, qui se trouvaient sous la juridiction du mirmiran de l'ealet (beylerbey), ainsi que pour transférer la métairie d'Osman-bey, faisant partie de l'odjaklyk militaire local, de la catégorie "malikané" sous la juridiction "miri".

ԴՈՆԱՐԱ ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎԱՍԱՓ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ «ԲԺՇԿԱՐԱՆ ԸՆՏՐԵԱԼ ՏԱՐՐԱԿԱՆ  
ՄԱԼՈՅԻ» ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐ

Սերաստահայ բժշկական դպրոցի ժամանակագրական առումով մեզ հայտնի առաջին բժշկագիտական երկը պատկանում է XVI դ. ճանաչված մատենագիր Հովասափ Սերաստացու գրչին:

Հեղինակի պատմագրական, բանաստեղծական, նկարչական և գրչական գործունեությունը դեռ անցյալ դարի 60-ական թվականներից գտնվել է հայ բանասիրության քննության շրջանակներում:

Այսուհանդերձ ուսումնասիրողների ուշադրությունից մինչև վերջերս դուրս է մնացել Հովասափ Սերաստացու գործունեության մի կարևոր բնագավառը՝ նրա բնագիտական գործունեությունը: Միայն վերջերս ակադ. Լ. Խաչիկյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրվեց այն փաստը, որ Հովասափը հեղինակել է բնագիտական բնույթի մի գործ, որի մեջ քննարկվում են տեսական-դեղագիտական, սաղմնաբանական, կաղմախոսական ու բնախոսական կարևոր խնդիրներ: 1971 թ. իր «Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ.» ուսումնասիրության մեջ, ուր քննության առարկա է դարձել միջնադարյան հայ բնագիտական միտքը իր տարրեր դրսևորումներով, մեծանուն գիտնականը առաջին անգամ վկայակոչում է Հովասափի հեղինակած «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական գործը ու բնութագրում այն, որպես միջնադարյան բնագիտության մի արժեքավոր գործ<sup>1</sup>: Այսօր արդեն հայտնի են այդ աշխատության երկու ձեռագիր ընդօրինակություններ հեղինակային հիշատակարաններով, դրանցից մեկը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7049 ձեռագիր-բժշկարանն է<sup>2</sup>, իսկ մյուսը Զմմառի վանքի մատենադարանի № 212 ձեռագիրը<sup>3</sup>:

Հովասափ Սերաստացու հեղինակած բժշկարանի գիտական քննությունը գալիս է հավաստելու, որ ի դեմս Հովասափի հայ բժշկագիտությունն ունի բավական ինքնատիպ մի բնագիտ:

«Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» գործը իրենից ներկայացնում է փոքրածավալ, բայց յուրօրինակ ու արժեքավոր մի ստեղծագործություն,

1 Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դդ., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1971, ՀՍՍՀ ԳԱ, № 2, էջ 23—43:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

3 Ն. Ակիմևան և Հ. Ոսկևան, Յուզակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատոր Բ, Անտոնյան հավաքածու, Վիեննա, Մխիթարյան տպ., 1971, էջ 209:

որի առաջաբանն իսկ պատկերացում է տալիս այդ գործում բնութիւյան առարկա դարձած բնագիտական խնդիրների մասին:

Մեր կողմից կատարված բանասիրական և աղբյուրագիտական համեմատական բնութիւյունը ցույց տվեց, որ այս երկի ստեղծագործական աղբյուրներն են եղել Ամիրզոյլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» ծավալուն երկասիրութիւյան առաջին՝ «Ուսումն բժշկութեան» տեսական բաժինը, նույն հեղինակի «Անգիտաց անպէտ» ընդարձակ դեղաբառարանի առաջաբանը, միջնադարյան տարրեր բնույթի ձեռագիր ժողովածուներում հանդիպող «Ի շորից գոյացեալ ասի մարդ, դի շորք պատճառք են եղելութեան» բնաբանով անհեղինակ գործը (որը նվիրված է շորս տարրերի ուսմունքին) և XIV դ. հայ հանրագիտ-փիլիսոփա Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» հանրագիտական աշխատութիւյան հինգերորդ՝ «Յաղագս լինելութեան մարդոյն» տիեզերագիտական-բնագիտական հարցերին առնչվող բաժինը:

Բժշկարանի այդօրինակ քաղվածական բնույթն, անշուշտ, դույզն իսկ չի արժեքազրկում այդ գործի գիտական նշանակութիւյունը, բանի որ հեղինակը, նախ, այդ բոլոր բժշկական-բնագիտական աղբյուրները մեխանիկորեն չէ որ օգտագործել է, այլ ստեղծագործաբար ի մի բերելով բնագիտական այդ նյութը, սիստեմավորված հետևողականութեամբ շարադրել է տվյալ բնագիտական-բժշկական խնդիրների մասին արդեն իր՝ թող որ ազդեցութիւյուն կրած, տեսակետը: Թերևս այս դեպքում խոսք կարող է գնալ լոկ ազդվածութեան, և ոչ՝ փոխառութեան մասին: Եվ հետո շափազանց արժեքավոր է այդ գործն՝ իր կիրառական նշանակութեամբ: Փաստորեն Հովասափ Սերաստացին իր այս գործով օժտել է ժամանակի բժիշկներին որոշակի բնագիտական գիտելիքներով՝ որոնք անշուշտ, ըստ ամենայնի, օժանդակել են միջնադարյան հայ բժշկագիտական մտքի զարգացմանը:

Հովասափի բնագիտական հայացքների հիմքում ընկած է ողջ միջնադարում գերիշխող 4 տարրերի վերաբերյալ ուսմունքը: Սա ինքնին հասկանալի է: Դեռ անտիկ շրջանում (մ. թ. ա. V դ.) հույն բժիշկ-փիլիսոփա էմպեդոկլեսի կողմից տեսութեան վերածած իր ժամանակի համար առաջադեմ բնափիլիսոփայական այդ ուսմունքը որպէս ստեղծագործական աղբյուր հարատևեց գրեթէ ամբողջ միջնադարում:

Հայ միջնադարյան մտածողները (Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Հովհաննես Իմաստասեր) ամենատարբեր առիթներով բնագիտական-բնափիլիսոփայական, կենսաբանական բնույթի իրենց աշխատութիւյուններում դիմել են շորս տարրերի ուսմունքին, որը բեկվելով հայ մտածողների ինքնատիպ բնափիլիսոփայական ընկալումներով տվել է զարմանալի յուրակերպ արտահայտութիւյուններ:

Մասնավորապէս, շորս տարրերի վերաբերյալ Դավիթ Անհաղթի՝ իր ժամանակի համար զարմանալի առաջադեմ մատերիալիստական մեկնաբանումների, Հովհաննես Իմաստասերի «հակադրութիւյունների ներդաշնակութեան» և հավերժութեան ինքնատիպ դիալեկտիկական հայեցակետի, ընդհանրապէս միջնադարյան հայ բնափիլիսոփայական առաջադեմ մտքի ֆոնին Հովասափ Սերաստացու բնափիլիսոփայական ըմբռնումները շորս տարրերի ուսմունքի վերաբերյալ, կարելի է որակել որպէս շափազանց ավանդական: Հովասափը նույնպէս գտնում է, որ երկրի վրա գոյութիւյուն ունեցող խիստ բազմազան

էականերն ու մարմինները արդյունք են 4 տարրերի բազմապիսի զուգակցումների. «զի ի շորից նիւթից ասի գոյացեալ»: Չորս տարրերի ուսմունքով են պայմանավորված նաև Հովասափ Սեբաստացու սաղմնաբանական պատկերացումները: Արական սկզբին վերագրելով երկու տարրերի (հուր և օդ) հատկանիշները, իսկ իգական սկզբին՝ մյուս երկու տարրերի (ջուր և հող) որակական հատկանիշները, Հովասափը պտղի սաղմնավորումը պայմանավորում է արգանդում այդ շորս տարրերի միացումով:

Սաղմնաբանական այդ պատկերացումները, անկասկած, իրենց հիմքում ունեն սաղմի առաջացման վերաբերյալ Հիպոկրատ-էպիկուրյան տեսությունը, ըստ որի բեղմնավորումը տեղի է ունենում, երբ արգանդում միանում են արական և իգական սեռական բջիջները՝ ի տարրերություն արիստոտելյան այն տեսակետի, ըստ որի սաղմը արգանդում գոյանում է միայն արական սկզբի (բջիջի) միջոցով, երբ արական սեռական բջիջն ընկնում է կնոջ դաշտանային արյան միջավայրը:

Ընդհանրապես ոչ միայն Հովասափի, այլև միջնադարյան հայ բնագետների մեծ մասի՝ սաղմի ֆիզիոլոգիայի վերաբերյալ պատկերացումները հենված են Հիպոկրատ-էպիկուրյան տեսության վրա, թերևս այն պատճառով, որ հայ բնագետ-բժիշկների հիմնական կողմնորոշումը եղել է դեպի հունա-հոմեոկան դասական բժշկագիտությունը (Հիպոկրատ, Գալեն, Նեմեսիոս Եմեսացի, Գրիգոր Նյուսացի և այլք), որոնց գործերին նրանք ծանոթ էին ոչ միայն թարգմանությունների, այլև բնօրինակների միջոցով:

Չափազանց ուշագրավ են Հովասափ Սեբաստացու պատկերացումները սաղմի ներարգանդային աճի ու զարգացման ընթացքի վերաբերյալ: Ուշագրավ այն առումով, որ այս դեպքում նա կարևոր նշանակություն է տալիս ժառանգականության գործոնին. «Իսկ ստրղծու մանկանն ըստ բնութեան հօրն, գոյանայ մանուկն, թէ մաղձոտ լինի և կամ այլ ինչ աղտ ցաւոց ունենայ ըստ այնմ գոյացութեան առնու խառնուածքն. վասն այնորիկ պարտ է առն և կնոջն զժամանակն առողջութեան ընտրել. զի առողջ լիցի մանուկն, որպէս մշակ, որ ընտրեն զժամանակ սերմանելոյն, զի թէ ցամաք լինի երկիրն և կամ տղմուտ և գէճ՝ ոչ տայ պտուղ...»<sup>4</sup>:

Պտղի բնականոն աճի ու զարգացման համար ոչ պակաս նշանակություն ունի, ըստ Հովասափի, հղի կնոջ աշխատանքի բնույթն ու սննդի հիգիենան:

Սաղմի բեղմնավորման ու պտղի ներարգանդային աճի ու զարգացման վերաբերյալ այդ ուսուցիչ տեսակետների հետ միաժամանակ Հովասափի մոտ առկա են նաև, և սա ինքնին հասկանալի է, սխալաստիկ պատկերացումներ. մասնավորապես դա վերաբերում է 12 կենդանակերպերի ու մուլորակների՝ պտղի ներարգանդային զարգացման վրա ունեցած ազդեցության մասին Հովասափի պատկերացումներին:

Սաղմնաբանությունը հետևում է բժշկարանի մարդակազմության ու բնախոսության բաժինը: Այն հիմնականում համընկնում է Ամիրզոլլաֆ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գործի համապատասխան բաժիններին: Բժշկարանի այս հատվածի ուսումնասիրությունը հուշում է, որ Հովասափը, ամե-

<sup>4</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7049, էջ 96ա:



նայն հավանականություններ, ծանոթ է եղել նաև մինչև XVI դարը հայերեն լեզվով ստեղծված այլ կազմախոսական գործերի:

Ընդհանրապես XI—XV դդ. հայ բժշկագիտության մեջ մենք հանգամանալի անդրադարձումներ ենք տեսնում անատոմիայի և ֆիզիոլոգիայի հարցերին: Ավելորդ չէ նշել, որ հայ բժշկագետների այդ անդրադարձումները իրենց հիմքում ունենալով մարդակազմության գալենյան պատկերացումները, անշուշտ, հարստացված են սեփական դիտարկումներով: Այս վերջին հանգամանքը պայմանավորված է թերև: նրանով, որ միջնադարյան Հայաստանում, ի տարբերություն միջնադարյան Եվրոպայի, պաշտոնապես թույլատրվում էր դիաճերձումներ կատարել<sup>5</sup>: Եվ պատահական չէ, որ դիցուք՝ XV դարի հայ բժշկագետ Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկախոսության կազմախոսության և բնախոսության բաժինները իրենց առավել ամբողջականությամբ, պիտական ճշգրտությամբ շահեկանորեն տարբերվում են հայերեն լեզվով մեզ հասած առաջին կազմախոսական գործերից՝ XII դ. բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» աշխատությունից<sup>6</sup>: Սա վկայում է, որ այդ դարերում հայ բժշկագիտության մեջ կազմախոսության և բնախոսության հարցերին մեծ կարևորություն է տրվել<sup>7</sup>: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Հովասափ Սերաստացու բնագիտական երկի կազմախոսության և բնախոսության բաժինները:

Այն սկսվում է կարճառոտ առաջաբանով, որտեղ, նույնպես հումորալ տեսության տեսանկյունից, մեկնաբանվում են մարմնի նորմալ կենսական պրոցեսները:

Առաջաբանից հետո, միայն քանակական տվյալներ հաղորդելով ոսկրերի, անոթների և նյարդերի թվի մասին, հեղինակն անցնում է ներքին օրգանների կազմախոսությանն ու բնախոսությանը, որից հետո մի առանձին գլխում՝ («Վասն, որ չիշենք զն (5) սգայութիւնքն մարդոյն» վերնագրով) անդրադառնում է հինգ զգայարանների բնախոսությանը:

Ներքին օրգանների անատոմիական նկարագրությունը Հովասափը սկսում է գլխուղեղից, այն համարելով գլխավոր օրգանից՝ սրտից («որ է ինքն թագաւոր ամբողջ անձին») հետո երկրորդ կարևոր օրգանը «ըզրդն, որ վեզիր է այն թագաւորին»: Հովասափ Սերաստացուն հայտնի են ուղեղը ծածկող երկու (կարծր և փափուկ) թաղանթները, որոնց դերն է ուղեղը պահպանել արտաքին վնասներից, ընդ որում թաղանթներից առաջինը ամուր կպած է գանգոսկրին և ավելի կարծր է քան երկրորդը, իսկ երրորդ պատյանը ավելի նուրբ է ու

5 Լ. Ս. Խաչիկյան, Գիաճերձումները հին Հայաստանում (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», Երևան, 1947, № 4, էջ 70—90: նաև Գ. Հ. Գրիգորյան, Միջնադարյան Հայաստանում դիաճերձման գոյությունը հաստատող մի նոր փաստ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, № 6, էջ 293—295:

6 Անտարակույս ղևա XI դ. Մխիթար Հերացին գրել է կազմախոսական մի աշխատանք, որը մեզ չի հասել (այդ մասին հավաստի վկայություններ կան հետագա դարերի հայերեն բժշկարաններում):

7 Մասնավորապես կազմախոսությանը առնչվող բաժիններ կան նաև XIII դ. հայ անվանի բժշկագետ Գրիգորիսի, ինչպես նաև հայերեն լեզվով անհեղինակ բազմաթիվ այլ բժշկարաններում (Մատենադարան, ձեռ. № 4268, 8382, 464, 549, 453, Երուսաղեմի մատ. № 370): Այդ մասին տե՛ս Ա. Ս. Կժոյան, Բժշկագիտությունը Հայաստանում XI—XIV դարերում, էջ 60—96:

փափուկ և անմիջապես կպած է ուղեղին: Հովասափը նկարագրում է նաև գլխուղեղի երեք փորոքները, նշելով, որ դրանք իրար հետ ամուր միացած են «պոստոնի տմաղի» (խոսքը *commisura cerebri magna*-ի մասին է) միջոցով, որի մեջ իր հերթին կան «կարմիր երկնի» (պետք է հասկանալ գլխուղեղում գոյություն ունեցող զարկերակները՝ *arteria cerebri*):

Անտիկ և միջնադարյան բնագետների նման, Հովասափը գլխուղեղում տարբերում է երեք փորոքներ, որոնցից առաջինում՝ ամենամեծում տեղավորված է տեսողության կենտրոնը (այն գտնվում է ճակատային հատվածում. «ինքն հիմն է և տուն է տեսողութեան, և աշացն լուսաւորութիւնն և մթնալն ի յայն փորոքնուն է»)՝, միջին փորոքում է գտնվում խելքը և եթե ուղեղի այս հատվածը վնասվի «մարդն սահր (թուլամտություն) և սարթա (կաթված) լինի»: Երրորդ՝ ամենափոքր բաժնում կենտրոնացված է հիշողությունը, որի վնասվելուց մարդ դառնում է մոռացկոտ և «զինչ որ ունի յուշ միտքն ձգէ»:

Միջնադարյան հայ հեղինակների պատկերացումները գլխուղեղի անատոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ գրեթե նույնությամբ համընկնում են գալենյան անատոմիային ու ֆիզիոլոգիային (որը բժշկագիտության մեջ գրեթե անփոփոխ մնաց մինչև XVII դ.):

Հովասափի ձևակերպումները թերևս վերահիշյալի կրկնություններն են:

Գլխուղեղի նկարագրությունից հետո մեր հեղինակը անցնում է օրգանիզմի ամենակենսական օրգանի՝ սրտի կազմախոսությունը, այն համարելով մարմնի կենսունակության և ջերմության աղբյուր: Միջնադարյան հայերեն բժշկարաններում տեղ գտած սրտի կազմախոսության նկարագրությունները գալիս են հավաստելու վերահիշյալ պնդումը, որ միջնադարյան Հայաստանում անատոմիական գիտությունն անշուշտ զարգացում է ապրել, հենց հիմնականում պայմանավորվելով դիահերձման դիտարկումներով: Այսպես, եթե Գալենը «Մարդկային մարմնի անդամների դերի մասին» աշխատության մեջ գրտնում է, որ սիրտը բաժանվում է երկու կեսի և տեղադրված է կրծքավանդակի կենտրոնում<sup>8</sup>, ապա ըստ միջնադարի հայ բնագետների, այդ թվում և Հովասափ Սերաստացու՝ սրտի տեղագրական անատոմիայի, այն գտնվում է կրծքավանդակի ստորին ձախ կեսում և բաժանվում է շորս կեսերի. երկու փորի և երկու ականջի (խոսքը, ամենայն հավանականությամբ, սրտի աջ և ձախ փորոքների ու նախասրտերի մասին է):

Բացի այդ, ի տարբերություն գալենյան մարդակազմության, որտեղ սիրտը նկարագրվում է որպես ոչ մկանային օրգան (այդ իրողությունը բացատրելով բարձրագույն նպատակարանական թելեոլոգիական սկզբունքով), Հովասափ Սերաստացին սիրտը ներկայացնում է որպես մկանային մի օրգան, որը տեղադրված է հատուկ պարկի մեջ (խոսքը սրտակրանքի՝ *pericardium*-ի մասին է), որ շվնասվի. «Եւ ինքն ամուր միս է և յայնմ յամանի մէջ է ամուր, որ պահէ զինքն յամէն շարէ»<sup>10</sup>:

<sup>8</sup> Մատենադարան, ձև. N 7049, էջ 100ա:

<sup>9</sup> «Սիրտը գտնվում է կրծքի խոռոչի կենտրոնում, շրջափակված թորով, որի բլթերը գրկում են սիրտը, ինչպես մատները»: (К. Гален, О назначении частей человеческого тела, перевод с древнегреч. проф. Кондратьева, под ред. Терновского В. Н., М., 1971, с. 227).

<sup>10</sup> Մատենադարան, ձև. N 7049, էջ 100բ:

Հովասափը խոսում է նաև սրտակրանքի մեջ առկա շճային հեղուկի մասին, որը գյուրացնում է սրտի աշխատանքը. «Եւ հանց զէտ փրփուր իրք ունի մէջն և սիրտն այն կու դաշի»<sup>11</sup>:

Բժշկարանի «Վասն քստըղծման լերդին» գլխում հեղինակը համեմատաբար սեղմ ներկայացնում է լյարդի կազմախոսութիւնն ու բնախոսութիւնը: Այս օրգանի նորմալ անատոմիական տեղադրութիւնն, ըստ Հովասափի, կրճաբանդակի աջ կեսն է և նրանից կախված է լեղապարկը այնպես. «որպէս որ մէկ մի զթուրինճն (նարինջ) ի ձեռքն բռնէ և լեղին այլ ի լերդին երեսն ի վայր կախէ»<sup>12</sup>: Լյարդի դերը օրգանիզմում մեկնաբանելով հումորալ պաթոլոգիայի տեսանկյունից, Հովասափը նրան վերագրում է կերակրանյութերից արյունաստեղծման և արյունը օրգանիզմի տարրեր մասերը անհրաժեշտ քանակութեամբ տեղաբաշխելու դերը. «Եւ կերակուր և բմպելի, որ մէջն ի ստամոքին կիսաեփ լինի և լերդին երակնին զուծն ի յինքն քաշեն և լերդն արին դարձուցանէ և զայն արինն բաժանէ յանձն, որ պէտ անէ իր»<sup>13</sup>:

Հովասափը գտնում է, որ լեղի արտադրող այս օրգանը ունի երկու բերան, որոնցից մեկով լեղին լյարդից իրեն է քաշում (հավանաբար՝ ductus hepaticus-ն է), իսկ մյուսով լեղին լեղապարկից գնում է դեպի ստամոքս (խոսքը, ամենայն հավանականութեամբ, ductus cysticus-ի մասին է): Հիմք ընդունելով հումորալ պաթոլոգիայի տեսակետը, Հովասափը գտնում է, որ լեղապարկի ֆիզիոլոգիական դերն օրգանիզմում կերակրանյութերի մարսման պրոցեսին մասնակցելն ու արյան մաքրումն է:

«Վասն ստեղծման փածղանքն» գլխում, Հովասափ Սերատացին ճշգրտորեն նկարագրում է փայծաղի տեղագրական անատոմիան: Ընդհանրապես փայծաղի անատոմիական նկարագրութիւնը տրված է շատ հակիրճ, նշվում են միայն այն երկու երակները, որ փայծաղից դեպի ստամոքս են գնում (խոսքը հավանաբար փայծաղային երակի և զարկերակի մասին է, որոնք անցնում են ստամոքսի հետին մասով):

Ինչ վերաբերում է փայծաղի՝ օրգանիզմում ունեցած դերին ու նշանակութեանը, ապա Հովասափը կրկին հիմք ընդունելով հումորալ պաթոլոգիայի թեզը, գտնում է, որ փայծաղը ստեղծված է արյունը մաքրելու և առհասարակ մարմնի մեջ առաջացած «ամէն աղբ» իր մեջ կուտակելու համար, այլ կերպ ասած՝ կատարում է գտիշի դեր:

Փայծաղի այդօրինակ ֆիզիոլոգիական դերն, ըստ Գալենի, օրգանիզմում իրագործվում է նրա սպունգանման կառուցվածքի շնորհիվ<sup>14</sup>: Նույն տեսակետին է նաև Հովասափը, ըստ որի փայծաղը իր ֆիզիոլոգիական գտող դերն իրականացնում է այն բանի շնորհիվ, որ այն ցանցառ (ասել է սպունգանման) մարմին է:

«Վասն ստեղծման թոքին» գլխում գրեթե շանդրադառնալով թոքի անա-

11 Տե՛ս նույն տեղում:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 101բ:

13 Նույն տեղում:

14 «Այժմ մենք կտեսնենք այն ամենը, որ վերաբերում է փայծաղի կառուցվածքին և առաջին հերթին նրա նյութին, որին ումանք անվանում են պարիենիմա, և որի շնորհիվ փայծաղը ձեռք է բերում լեղին իր մեջ ներծծելու հատկութիւնը: Այդ նյութը ստեղծված է բավական ցանցառ, ինչպես սպունգ, որպեսզի հեշտութեամբ կլանի այդ թանձր հյութերը» (Galien, c. 185).

տոմիական կառուցվածքին, Հովասափը անցնում է շնչական այդ օրգանի ֆիզիոլոգիական դերի նկարագրությանը:

Հովասափի մեկնությամբ այն պայմանավորված է թոքի կառուցվածքով և իրազործվում է իրար հակառակ այն երկու շարժումների (հեթեթեթ) շնորհիվ, որ արաբական բժշկության մեջ անվանվում է «հեթեթեթի ինպիսաթ»՝ ներշնչման փուլը (արաբ. انقباض) ընդարձակվել, լայնանալ արմատից) և «հեթեթեթի նդպագ»՝ արտաշնչման փուլը (արաբ. — انبساط — կծկում արմատից):

Ի տարբերություն մարտոդական տրակտի այլ օրգանների (լյարդի, փայծաղի, լեղապարկի), Հովասափ Սերաստացին բավական հանգամանորեն և ճշտորեն ներկայացնում է ստամոքսի տեղագրական անատոմիան (կրծքավանդակից ներքև, վերին հատվածը թերված դեպի ձախ, իսկ վարինը՝ դեպի աջ):

Ի դեպ, հարկ է նշել, որ նա, քաղցի ֆիզիոլոգիայի մեջ առանձնացնում է ստամոքսի pyloric հատվածի նշանակությունը. «Նւ ինքն կոհար է փուճ փուճ, անոր համար է, որ այլ տեղաց ուժ առնու կերակուր ուտելու համար և խիստ ուժ ստամոքին բերանն է և այս է զօրութիւն, որ քաղցեցնէ զմարդն»<sup>15</sup>: Այստեղ կրկին առկա է առնչումը գալենյան կենսաբանությանը:

Այնուհետև Հովասափը անդրադառնում է ստամոքսի քարշողական, բոնոդական, եփողական և վանողական գործողություններին: Նշենք նաև, որ Հովասափ Սերաստացուն հայտնի է եղել ստամոքսապատի անատոմիական կառուցվածքը՝ նրա երեք հյուսվածաբանական շերտերը (շճաթաղանթային, լորձաթաղանթային և մկանային):

Հովասափի՝ աղիների դասակարգումը համարյա նույնությամբ կրկնումն է գալենյան դասակարգման, այսուհանդերձ բարակ և հաստ աղիների բոլոր հատվածների արաբական անվանումները գալիս են ասելու, որ ինչպես միջնադարյան հայ բժիշկներից շատերի, այնպես էլ Հովասափի համար այդ հարցում սկզբնաղբյուր է հանդիսացել արաբական բժշկագիտությունը (մասնավորապես Իբն Սինայի «Կանոնը»):

Միզասեռական օրգանների կազմախոսությունն ու բնախոսությունը բժշկարանում ներկայացված է բավական սեղմ: Երիկամների ու միզապարկի տեղագրական անատոմիան և ֆիզիոլոգիան, Հովասափը ներկայացրել է ըստ Ամիրդովլաթի, որի համար էլ հիմք են հանդիսացել Իբն Սինայի «Կանոնի» համապատասխան բաժինները<sup>16</sup>: Հարկ է նշել, որ միջնադարյան հայ բժիշկները բավական իրական պատկերացում են ունեցել երիկամների կառուցվածքի՝ նրա ավազանի (pelvis renalis), պարիենխիմալի, երիկամային զարկերակի և երակի (arteria et vena renalis), ինչպես նաև երիկամներում ու միզապարկում քարագոյացման ախտածագման մասին:

Բժշկարանի կազմախոսության բաժինը ավարտվում է զգայարանների կազմախոսությանն ու ֆիզիոլոգիային նվիրված բավական ընդարձակ հատվածով:

<sup>15</sup> Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7049, էջ 105ա:

<sup>16</sup> Այդ համոզմանը մենք եկանք, երբ համեմատեցինք Իբն Սինայի «Կանոնի» և Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» գործի «Կերպ ստեղծման երիկամացն» և «Կերպ ստեղծման հարբշտին» գլուխները (Տե՛ս, Абу Али Ибн Сина, Канон врачебной науки, с. 269, և Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, էջ 34, 37):

Ուշագրավ է Հովասափի հետևությունը, որ մարդու կատարելությունը պայմանավորված է հինգ զգայարաններով, որոնք ֆիզիոլոգիապես կապված են միմյանց:

Զգայարանների բնախոսությանը նվիրված բաժնով ավարտվում է բժշկարանը: Սրանք են հիմնականում Հովասափ Սերաստացու բժշկագիտական բնկալումները:

Հովասափ Սերաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» ստեղծագործության բնությունը մեզ համոզում է, որ հայ բնագետի բժշկական հայացքները հիմնված են անտիկ բնափիլիսոփայության, արիստոտելյան փիլիսոփայության ու գիտության, ինչպես և հայ բժշկական դպրոցի լավագույն ներկայացուցիչների հայացքների վրա. Պլատոն և Արիստոտել, Հիպոկրատ և Գալեն, Նեմեսիոս և Նյուսացի, Նզնիկ Կողբացի և Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի ու Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Հերացի և Ամիրդովլաթ Ամասիացի. ահա այն խոշոր իմաստասեր գիտնականները, որոնց գրքվածքների (թեկուզ և շատերից միջնորդաբար) ստեղծագործական յուրացմամբ նա ստեղծել է իր արժեքավոր բժշկագիտական գործը:

\* \* \*

Հրատարակվող բնագրի համար հիմք է ծառայել Մաշտոցի անվան Մատենադարանի № 7049 (XVII դ.) բժշկարանը: Բայց միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք Զմմառի վանքի № 212 գրչագրի մանրածապավենը, որի առանձին հատվածները միայն, խիստ անհրաժեշտության թելադրանքով, համեմատել ենք հրատարակվող գրչագիր օրինակի հետ:

Տողատակի ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով ընդհանրապես չենք արտացոլել քերականական (կետադրական, շարահյուսական), ինչպես նաև երկրորդական ուղղագրական բնույթի տարբերությունները:

#### ԲԺՇԿԱՐԱՆ № 7049<sup>17</sup>

Փամանակ՝ Ժէ դ.: Թերթ՝ 270: Թուղթ: 14×19,5: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 17—23: Կազմ՝ կտղ: Աստա՝ դրոշմադարդ կտավ: Հշտկրճ հետագայի՝ 2ա (1842 թ.), 4բ (1845 թ.), 87բ (1849 թ.):

Բվնդ. Աբուսայիդայ Յաղագոս կաղմութեան մարդոյ (1ա—40ա):

Վասն բնութեան մարդոյ՝ ի շորից գոյացեալ (40բ—63ա):

Յովհաննիսի հերիմի Վասն երակաց և արին առնելոյ (63բ—70ա):

Դեղագիրք (70բ—86բ):

Յովասափայ Սերաստացույ Բժշկարան ընտրեալ տարրական մախցի (87ա—114բ):

Ամիրդովլաթի Ամասիացույ Ուսումն բժշկութեան (115ա—158ա):

Դեղագիրք (158բ—193բ):

Բժշկարան հաւաքեալ հրամանաւ թագաւորին Յովհաննիսի (193բ—270ա):

17 «Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, Երևան, 1970, էջ 450.

## ԲԺՇԿԱՐԱՆ ԸՆՏՐԵԱԿԱԿԱՆ ՍԱՐՐԱԿԱՆ ՄԱԽՅԻ

- 87ա Առաջին՝ դեղոց ժողովելույ զատենն և զժամանակն և թէ որպէս պահել պարտ է; որ ուժն շանցանի: Երկրորդ դուռն մարդակազմութիւն ցուցանէ. զանդամն, զօղվածն զըղեղն և զչրհեղն և զամեն երակսն և զցաւոց շարժմունքն սկսեալ ի տարերաց ըստեղծմանէն մինչև բոլոր մարմնոյն ԺԳ (13) փոխնշան կերպարանացն: Երրորդ դուռն վասն հիւանդին նշաննուն և երակին և կարուրային և վնաս դեղերոց զոր պարտ է բժիշկն ուսանիլ և գիտանալ և Գ (4) բաժին այն է՝ զմարդոյն կազմն և դեղն և Դ (4) մախցին և ժամանակին և եղանակին || և Դ (4) տարերց բնութեան:

[Ա.]յսպէս՝ զստածումն ամենայն դեղոց, զոր ցուցանէ զամեն ցեղ ցաւոց զինչ որ յարարածս լինի, գրած կայ այրէն մինչև ի քէն: Որպէս ի յայրէն կայ գրած աշաց, ակընջի, օձիկի, բենին վերա՝ բերան ցաւի, բորի, բաւասիրի և այլն, զիմի՝ զլիսացաւի, զիրութեան, զոզարգիլի, զոզի, և ի թօն՝ թերբիպն և ի թրիաբերն, կարաւ զինչ դեղ որ առաջի գիրն է, այն բանին վերայ, լիւնին<sup>18</sup> վասն լուծման, մենին վերայ՝ մաճունին ամէն ցաւոց, մինչև ի քէն՝ քէջի, քերի և քարի և այլն, ի Ֆեն՝ ֆոանկ ցաւի, ֆոանկ բորի և ֆլոնիայի և այլն: Ե (5) դուռն առանձին մեծամեծ և անպիտան դեղոց պատմութիւն պիտանի ցանկով<sup>19</sup>:

- 88ա [Ա.]ւրհնեալ է բարերար և ողորմածն Աստուած յորժամ ըստեղծ զմարդն առաջին, քանի որ ի դրախտին եկաց ոչ ցաւ ի մարմնի կայր և ոչ հիւանդութիւն ի հոգի: Յորժամ անցաւ զպատուէրն ապայ ամէն ցաւ և հիւանդութիւն տիրացօ տարերաց հակառակութեամբն զի ի մէջ տարերաց եմուտ աշխարհս: Նայ արարչայդործն Աստուած ամէն ծաղիկ և խոտոյ շնորհք մի ետուր և հոգովն սրբով իմացուց յառաջին իմաստասիրացն զամէն ցաւոց զդեղն, որ անուամբն Աստուծոյ գտանէ զառողջութիւն: Բայց մեք՝ անպիտան ծառայս ձեր մեղայապարտ Յովասափ անուն սարկաւագ || Սերաստացի կամեցայ զ[ը]նտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստասիրականաց և բժշկական զամէն ցեղ ցաւոց ըստացումն, զեփելն, զտրորելն զամէն դեղոց և խնամածել ցաւածին: Եւ նայ որ ըստեղծաւոն է տայ զառողջութիւն և նմայ փառք և պատիւ յաւէտ և յաւիտեանս անբասպառ յաւիտենից ամէն:

- 88բ Զառաջն գրեմք զեղանակ դեղոց հաւաքելոյն: Եւ գիտացիր եղբայր որ զինչ յաշխարհս դեղ կայ Գ (3) ցեղ են. կամ խոտ է, որ ի գետնէն բուսանին, և կամ քարինք են, որ ի մատանէ ելանեն, և կամ անասնոց զաւղվածք են: Եւ թէ կամենաս խոտի հունդ ժողովել վասն դեղոց որպէս 89ա քարաֆիան, քամունն և անխոնն || և որ նման է սոցայ այն ատենն պիտի, որ հասըլ լինի և գիճութիւն ի մէջն շմնայ: Եւ թէ տաք է որպէս ակըրրդարհան և ճնտիանան և պահմանն և որ նման է սոցայ այնժամ պիտի ժողվել, որ շորանայ և ըսկսանի տերեն թափիլ: Եւ թէ ծաղկունք են՝ որպէս մանուշակն և նոճէղն և զամպախն և որ նման է սոցա, յայն

18 Բնագրում՝ լիւնին:

19 Այս հատվածը բացակայում է Զմմառի վանքի մատենադարանի № 212 ձեռագրից (այսուհետև Չեռ. № 212):

ատենն պիտի ժողովել, որ լման հասնի և բացուի և շփոխի գոյնն և թէ որձայ կամենաս առնել, որպէս ըստխաւտօսն և զարնապն և հաշան և որ նման է սոցայ, լման հասածէ լինի և շփոխի գոյնն: Եւ այն խոտն, որ ամէն բան կու մտնէ, որպէս զանդարիոնն և զայսիումն՝ այն ատէնն պիտի, որ ըսկանու հունտ կապել: || Այլ և աւղն իստակ և պարզ պիտի լինի: Եւ գիտացիր, որ այն, որ վայրի<sup>20</sup> բոյս է, յուծով է քան գածուոցն<sup>21</sup>: Եւ այս դեղերս, որ խոտ է ուծն մինչև Գ (3) տարին և Ե (5)՝ կու վատուծի: Եւ թէ խէժ կամենաս ժողովել որպէս Ֆարֆիոնն և աւշախն և ճաւշիրն, և թէ տակի կեղևն որպէս շէտարաճն և սալիխան և մահի գահրաճն յայնժամն առ, որ դեռ որձայ չէ հաներ: Եւ թէ յավսարա առնէս որ է քամուքն որ է կաթն որպէս աղաղիան<sup>22</sup> և աֆիան և որ նման է սոցայ յայնժամ առ, որ չինքն դեռ ջուր կենայ, որ ուծն յուշ երթայ և շատ դիմանայ: Երբ այս քամուքնիս ըսկանու ի վատուծիլ, շուտ ի բան տար, որ ուծն շերթայ: || Եւ թէ այն դեղերուն լինի, որ անասնոց գաւթվածք է կամ եղջիր, կամ լեղի, կամ լերդ և այլ պատեհ է, որ ի մատղաշ կենդանիս առնես ի գարնանաին եղանակն և առողջ անասնոց մորթեն և ապա առնեն:

Եւ այն որ քարինք են, որ է մատէն, որպէս զալղանդարն և զոնխրն և այլն: Լան այն է քարերուն, որ կու բանուի և յիստակ լինի և աղէկ և մէջն հող և քար շրկենայ և գոյնն փոխած շրլինի. այսպէս ընտրես զամէնայն:

Այլ և դեղերուն պահելն Ե (5) ցեղ են: Առաջն այն է, որ ժողովեն և զուրս շինես և պահես որպես տարչինն: Երկուս այն է, որ խառնես զայն դեղն ի յայն, որ զուծն կու պահէ խասլիաթով, որպէս Ֆարֆիոն պահեն քարով, որ կեղևն հանած լինի, || զքաֆուրն պղպեղով, բաղլաով: Երեք այն է, որ զմուշկն և զամպէրն և զքաֆուրն որ և նման է սոցայ՝ հանց աման պիտի, որ բերանըն նեղ լինի, որ բռնեն մոմով: Եւ մուշկին լաւ պահելն այն է, որ զինքն արճիճէ աման դնեն և կամ ապիկի կամ ի տպպա: Կայ այլ դեղեր, որ ի պտուկ դնեն, որպես տերևաան և այլ հնտերք, որ ի տ[պ]պայի մէջ կու դնեն, որպես քարուպարն: Եւ զոր ի տօպրակ կու դնեն, որ ի քթանէ լինի, որպէս աղախիան և քամուքնին: Եւ դեղերուն պահելն հանց տեղ պիտի դնել, որ ոչ հով լինի և ոչ գէճ, ոչ տաք լինի և ոչ շոր, ի մէկխոտ կամ ի դիշահոտ տեղ շրլինի: Երրորդ այն է, որ զսուր դեղերն և զվատուծն ի մէկ տեղ շրպիտի պահել, որ ի մէկ մէկէ<sup>23</sup> հոտ շառնու և փոխվին ի բնութենէ, որպէս մանուշակն || և նունայֆարն և որ նման է սոցայ:

Ապայ այսուհետև գրեմք զմարդակազմութիւնքն, որպէս հրամացին բժշկական վարդապետքն իմանալ զբնութիւն մարդոյն զանդամն և զօդուածքն, զսիրտն ու զդեղն, զարիւնն և զզղերն, զոսկորն և զցաւոց շարժմունքն: Բժշկացն խնամ տանելն մարմնոց, առ ի պէտս առողջութեան, զի ի ձեռն խոստովանութեան լինի բժշկութիւն հոգոց, այսպէս

20 Բնագրում՝ վայրի է:  
 21 Բնագրում՝ զայծուոցն:  
 22 Բնագրում՝ աղալղիան:  
 23 Բնագրում՝ ի ա ա է:

և մարմնոց ի ձեռն դեղոց՝ որպէս մարգարէն ասէ, թէ «որ ոչ իցէ առողջ մարմնով, ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգւով»:

Յաղագս բնութեան մարդկան, թէ որպէս արարչագործեցան յարարչէն իւրեանց, վասն զի ի շորից ընթացից ասի գոյացեալ մարդ՝ հող և ջուր և հով և հուր: Իսկ Բ (2) տարեբց տարողք են հուր և օդ՝ այրական և Բ (2) կրողք են ջուր և երկիր՝ իգական, զի շրոյ խոնաւութիւն առանց շերմութեան ամուլ է, իսկ ընդ միմեանս խառնարբեալ պտղաբերեն:

Հուրն մշտաշոր է ըստ տագուն, ըստ ցասմանն և սրտմտականն: Եւ ջուրն ցանկական է և գիճին և արտասուին: Քամին զրուց և թեթևութիւն տուր և առ շնչին շարժուն: Հողն ծանար և կրող ամենայնի, որ Աբրահամ ասէր՝ «ես հող եմ և մոխիր»:

Հարց՝ Վա՞սն էր մարդ ի հողոյ ասէ ստեղծ և աստ հող և ջուր, հով և հուր:

Պատասխանի՝ մարդ ի հողոյ արար Աստուած ըստ շրոյն շաղվեաց, որպէս ասէ: «էառ հող ընդ ի Սիոնէ և արար կաւ և Ադամ, զի Ադամ կաւ թարքմանի և փշեաց ի նա շունչ կենդանութեան և ետ նմա հոգի անմահ, որ է հուր և լոյս, զի ի մեռանել մարդուն քամին և կրակն ելանէ և մնա հող և ջուր անշունչ և անհոգի»:

Հարց՝ զի՞ արդ ետոյ ըստրդծ Աստուած զԱդամն տէր և թագաւոր ամենայնի մինչև իւր քան զիմաստուն պատկերն ի նմայ:

Պատասխանի՝ Աստուած արար զԱդամ բայց ի հողոյն, վասն այն ստեղծ զի ամօթ լինի հպարտն: Յարինեաց ըզգրախտն գահոյք թագաւորի, այլ և զանասունսն սպասաւոր ծառայ և տունկ ի բոյս վայելչական և ակունք անգինս և երկու շահս ցորեկոյ և գիշերոյ և զայն երգոց պարուց թռչնոց ճիւղողականս, որպէս որ զթագաւորի պատիւ նախ ըզպէտս պատրաստէ և ասպա կոչէ որպէս ասէ մարգարէն: «Մարդ ի պատի էր և ոչ իմացաւ հաւասարեաց անասնոց՝ ասպա գիտացաւ»: Եւ տասներկուսն պարգևօք զարդարեալ էր ի լոյս անեղութեան պարուրեալ էր անճառելի:

Զի արեգակն ի նոյն լուսոյն մասն ինչէ տեսութեամբն Աստուծոյ զուարճախօսիլն ընդ ըստեղծօղն անմահ, անյաղթ կեանք անծերանելի, հասակն վայելչութիւն անաշխատ փափկութեան, քահանայութիւն և թագաւորութիւն ի վերայ ամէնայն ձեռակերտաց: Զայս տասներկու պարգևքս զրկեաց ի մէնչ սատանայ՝ ասելով յորժամ ուտիցէք ի ծառոյն յայնժամ ճանաչէք զբարի և զչար: Իսկ ամենողորմ և ծածկագէտն Աստուած, որ ի սկիսքն ըստրդծմանէ գիտէր զպատրանօք խաբիլն յորմէ ասէր: ընդ ի յորդին Աստուած մարմնանալով զարձուցանեմ զնայ»:

Հարց՝ զի՞նչ է ասելն ոտնաձայն կամ գալուն ի դրախտն:

Պատասխանի՝ վասն ողորմած կամացն էր այն, զի մեղայ ասիցեն և ոտք անկանիցեն: Յայնժամ ասէ Ադամ, կինս այս՝ զոր ետուր ինձ սայ խաբեաց զիս, և կինն զօձն պատճառեց:

Հարց՝ Վա՞սն էր զամէնայն կենդանի յառաջ քան զԱդամ ստրղծեաց և զկինն յետո ի կողէն:

Պատասխանի՝ վասն զի Ադամ մի հպարտացի թէ և ես անեղ եմ



այլ եղական որպէս զկին: Եւայ զոր կտես իւրմէ ստրղծեալ, բայց ոչ կարաց ասել մեղայ, զի կապեաց զնա սատանայ, և զի փորձ ոչ կայր ի դրախտն և ոչ զհտէր յորժամ կամուտ յաշխարհի մէջ տարերացս ըմբռնեցին տարերքն զնայ և ամէն տարերք յինքն քարշելով յաւելուլ և պակասիլ ցեղ ու ցեղ ցաւ և նեղութիւն եղև ի մարդն: Ըստ այնմ գազանք և անասունք թշնամիք դարձան միմեանց այնմհետէ և գիտաց Ազամ ճանաչեաց զբարի և զչար, զգեցաւ թղենի և յետոյ մաշկեղէն, որ ետ հրեշտակն որ մորթ կենդանեաց, վասն առակութեան, վասն մեռելութեան և վասն ընկնելոյ ի ծառայութիւն և աշխատանօք գործել զերկիր: Եւ վասն մարդայկազմութեան հետէ գամք, թէ վասն է՞ր զգլուխն բարձր և դէմքն լուսաւորօքն:

Հարց՝ մարդն նմա՞ն է ամենայն աշխարհի՞ զլուխն երկնից օրինակ, բարձր և հով, և հուր, և լուսօտրքն՝ օրինակ արեգակն և լուսինն, և երկիր, և ջուր և հող, երկակաց շարժմունք: Այլ նման է մարդ աշխարհի զի իմանալի ըստ հրեշտակաց և սգալի ըստ անասնոց, մարմնովն աճէ ըստ տնկոց, գոյանայ ըստ անշնչից, զի աշխարհ որբան է ի բեռնէ հիւսիսոյ՝ ի բեռնէ հարաւոյ, նոյնքան է յարեւելից մինչև յարեմուտս: Այսպէս՝ մարդոյ մարմինն ի գազաթէ գլխոյն մինչև ի ներբանքս ոտիցն որբան է՝ նոյնքան է լայնութիւն ի մէջ երկուց երկայն մատոց ձեռաց: Այլ և ոսկերքն նման են քարանց և մարմինն նման է հողո, երակ արեանն գետոց և աղբերացն, մազն բուսոց և տնկոց, և շունչն հողմոց, բոլոր զլուխն երկնից, աչքն երկու լուսաւորաց, է (7) ծակ զլուխն՝ է (7) լուսաւորաց մոլորականացն, երկոտասան<sup>24</sup> անդամքն՝ երկոտասան կենդանայկերպացն և երկոտասան մասին աշխարհի:

94բ

ՎԱՍՆ ՍԵՐՄԵԼՈՅ

Ասացին իմաստունքն Հոմերիոս, Վերգիլոս, Պղատոն և Գալիանոս, և Արիստոտել և այլ որք մտաքինսն՝ և որ ի միջոյ, եթէ գործարանքն սերմանն երկու երակս է, որ ի գլուխն ելանէ և իջանէ՝ մինն լի արեամբ և մինն լի փքով և յորժամ հասանի երակ արեանն ի յարանսն՝ նայ արիւնն ի սերմն դառնայ, որպէս ըստինս կանանց ի կաթն դառնայ: Արդ իմա ծնուլն սերմանն ընդ կնոջ յարգանտն լինի արիւն ի 9 (6) օրն և ապա ծնանի որթն որպէս ասէ Դաւիթ՝ «ես որդն եմ և ոչ եմ մարդ», ի 10 (40) օրն, ապա կատարին անդամքն և առնու հոգի Աստուծոյ, որ ինքն միայն գիտէ, որ ըստրղծ զնայ:

Էգ մանուկն 9 (80) օրն կատարի և առնու հոգի, զի արու մանուկն յաջոյ կողմանէն են և լերդն ընդ կողմն է տաք, զի զիւրեաւ աճի մանուկն որպէս ընդ դէմ արևու և շող տեղի զիւրեաւ աճին բոյսքն: Իսկ ստրղծու մանկանն ըստ բնութեան հօրն գոյանայ մանուկն, թէ մաղձոտ լինի և կամ այլ ինչ աղտ ցաւոց ունենայ, ըստ այնմ գոյացութեան առնու խառնուածքն: Վասն այնորիկ պարտ է առն և կնոջն

24 Բնագրում՝ ԲԺ:

95բ զժամանակն առողջութեան ընտրել, զի առողջ լինի մանուկն որպէս  
 մշակ, որ ընտրեն զժամանակ սերմանելոյն, զի թէ ցամաք լինի երկիրն  
 և կամ տղմուտ և դէճ ոչ տայ պտուղ այլ յորժամ տնկի մանուկն յորո-  
 վայն մարն՝ պորտն առնու զկերակուրն՝ որպէս սեխ և դդում: Վասն  
 որոյ պարտ է կնոջն մինչ մանուկն յարգանտին կայ || ի վնաս կերակ-  
 րոց պատրաստ կենալ, ի դիժար բանէ, զի մատաղ մանուկն որպէս  
 մատղաշ տունկ է, դիւրեաւ սղալի ի ցրտոյ կամ ի տօթոյ, կամ անհալ  
 կերակրոց և դիպուածոյ և ի լուծման դեղ տալոյ և տաք և շոր լինի:

Իսկ ըստեղծման՝ նախ սիրտն զոյանայ և ի վաղճանելն յետոյ մե-  
 ոանի: Մանուկն ի յորովայն մօրն ի կանգուն, կայ և ի ծնանելն ապա  
 գլխի վայր դառնայ, որ նշանակէ զանկումն մարդոյն: Իսկ աւազանի  
 գլխի վեր մկրտիմք և վերստին կանգնիլ դարձեալ ի Քրիստոս նշանա-  
 կիմք:

### ՎԱՍՆ ԾՆԸՆԴԵԱՆ

Արդ ծնանի մանուկն Ք (9) ամիսն և է (7) ամիսն և այսորիկ այ-  
 96ա րին և առողջ լինին: Իսկ Ը (8) ամիսն ոչ ապրի, զի Ք (9) թին || խոր-  
 հրրգական է: Յառաջի ամիսն Զօհալին բնութեամբն և իշխանութեամ-  
 բրն է, հով է և շոր, զոր գիճութիւնն շորցնէ: Բ (2) ամիսն Մուշթարին է,  
 տաք է և գէճ, զայն գիճութիւն յարին զարձնէ: Գ (3) ամիսն Մառխն  
 է, զարինն զօգուածն կատարէ: Դ (4) ամիսն Արեգակն է, զաւղուածն  
 և զշղերն ամրացնէ և շնչաւոր առնէ: Ե (5) ամիսն Զաւհրան է, զաչքն և  
 զղեղն շինէ: Զ (6) ամիսն Օտարիտն է, պնտէ և զոսկերն շինէ: Է (7)  
 ամիսն Լուսին է, զուտելեաց տեղն և զստամորսն շինէ: Թ է (7) ամ-  
 սոյ ծնանի տղան, նա ապրի, զի է (7) աստղի հայեցքն լման կա ի նմայ:  
 Իսկ Ը (8) ամիսն կրկին հով և շոր, թէ ծնի՝ չապրի, զի Ը (8) տունն մա-  
 96բ հուտուն ասացին իմաստասէրքն: Իսկ Ք (9) || ամիսն Մուշթարին է,  
 կենաց տուն թէ ծնի տղան ապրի: Իսկ յորժամ ընծայի տղան, դու հա-  
 շուէ զկենդանակերպքն թարպեխ և տես թէ լուսինն յինչ կերպ է և գէպի  
 յետ համարեայ ՄՀԳ (273) օր և դիտացիր թէ լուսինն որ կենդանակեր-  
 պի էր և դիտենաս զբարին և զչարն, պուրճն և տալէհայն: Եւ Արիստո-  
 տէլ ասաց, թէ ստրղծ Աստուած մարդն, որպէս քաղաք մի, որ լինի  
 երկոտասան դռնէն, որ հանապաղ ելանեն տոյգորք դեղերն, որ անձին  
 օկտութիւն [ունի] Բ (2) վտակ մեծ, Բ (2) դիմացն ըստեղծ և ամէն  
 վտակ ՃՄ (150) և կայ որ անդամքն իւրմէն նիւթ առնու: Մեղ (248)  
 շնչերակ կայ ի մարմինն, զօգուածքն Մեղ (248) ոսկոր է, Իէ (27)  
 լուծք ջիւք են, ՅԿՆ (365) անդամք են, ՅԿ (360) երակն ի շարժման կայ,  
 97ա որ միսն իւրմէն բուսանի և ժԲ (12) դուռն զոր || յիշեցար. Բ (2) աչքն,  
 Բ (2) հոտոտելիքն է, Բ (2) ականջն է և Բ (2) ծիծքն են, Ա (1) բերան  
 է, Ա (1) պորտն է, Ա (1) առաջի դիհն է, Ա (1) վերջինն: Եւ Ե (5)  
 սգայարանքն և այս ևս ունի ըստ նըմանութիւն Դ (4) տարերացն, զի  
 շօշափելիքն հողոյ օրինակ են և ճաշակելիքն ջրոյ, որ ի վեր է բան  
 զհող: Լսելիքն և հոտոտելիքն է քամոյ և տեսանելիքն հրոյ օրինակ է:  
 ՇՀ (570) կաթ արին է մարդս և ամէն կաթ Ա (1) մսղալ է և տանուտէրն

խոյն է: 34 (360) շնդ արօ զմարդն և տանուտէր զԼուսինն եղիր: Մարդուն մորթին տաք է և շոր և տանուտէրն Արեգակն է: Եւ ասոր ամէնուն ղեղ օրինեաց Աստուած, որ անուանէն Աստուծոյ լինի բժշկութիւն, զի Աստուծոյ անունն հազար ու մեկ է<sup>25</sup> և ղեղերուն խոտերուն՝ հազար ու մեկ է:

97բ || Գարձեալ Գ (4) տարերաց՝ կրակ, քամի, ջուր և հող և Գ (4) հողմն ի աշխարհս կայ՝ յարեւից, յարեւմտից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ: Նոյնպէս և ի մարդն՝ արիւն և խարտէշ մաղձն, սէվտան և պալղամն: Յարեւից հողմն տաք է և գէճ՝ քամոյ, յարեւմտից հողմն՝ շոր և հողոյ բնութիւն, հիւսիսոյն՝ հով է և գէճ՝ ջրոյ բնութիւն և հարաւային տաք և խորշակ կրակի է: Գ (4) ջուր կայ աշխարհս՝ աղի, լեղի, անուշ, հոտած: Նոյնպէս և ի մարդն՝ աչից ջուրն աղի է, ականջին՝ լեղի է, բերնին՝ անուշ է, միշացն՝ հօտած է, որ արտաքս ելնէ: Նոյնպէս և տարին, գարունն տղակութիւն է, բնութիւն արեան արեւից տաք և գէճ է: Ամառն ժՅ (15) մինչև ԼԲ (32) երիտասարդութիւն՝ տաք և շոր

98ա մաղձի է, հարաւային || ամառն և մէջօրեանն կրակի է: Աշնան բնութիւն մինչև խառնի ալիքն հով է և շոր սէվտայ է, արեւմտից՝ աշնանային է, հողային է: Չմեռն է ծերութիւն՝ Բ (2) օրն հով է և գէճ, հիւսիսային է, պալղամուն ի ջուր է և թուլ: Գարձեալ թէ աչից ջուրն շէր աղի, ճրագուն հալէր աշացն և լուսոյն գէն առնէր: Թէ ակնջին շէր լեղի՝ սողուն մտանէին ընդ այն և զղեղն ալիքէին և մարդուն շարածաղիկ լինէր: Եւ բերանոյն ջուրն վասն այն արար քաղցր, որ զուտելոյ և զըմպելոյ համն առնու և հոտած ջուրն արտաքս ելանէ:

Բայց 34Ե<sup>26</sup> (365) ոսկորն որ կա ի մարդուն այս են. է (7) գանկն է, ժԲ (12) երեսն և կղակն, ԼԲ (32) ատամն է, է (7) շիթն է և շիցն ի վարի դին է (7) այլ կայ, է (7) կուրցքն է, ժէ (17) ողնշարն է, ժԲ (12) կոճղն է՝ զիհն Բ (2) բէճն է, Զ (6) բաղուկն է, Խ (40) ձեռացն կոճն է, Գ (4) ոտներն է, || Բ (2) անդամն է, Բ (2) լսեռնէ, Բ (2) ոլոքն է, Բ (2) կոճն է, Խ (40) ոտիցս անտրերն է: Եւ տանուտէրն Զօհալն է և ուժն սէվտայի է: Կցեաց Աստուած զոսկերքն շլովք և զշիլն ի միսն և զմիսն երակօք պնտեաց, 34Ե (365) երակ սփռեաց ի վրայ մսին և զմիսն մորթովն հաստատեաց և մորթուն ուժն երակացն ի վեր է և քեզ վկայ՝ զի մարդուն մորթին ոչ արեւն շորնայ և ոչ ի ջուրն կակղանայ և դրջի:

Յորժամ ստրղծ Աստուած զմարդն գարուն էր և արեգակն ի Խույն էր, նիսանի Ա (1) գիշերն և ցորեկն պարապ էր արեր: Գարնան եղանակն տաք է և գէճ է և արիւն և մաղցն զարար է մարդուն: Վասն այն ասացին իմաստունքն թէ մարդուն շէրպէթ տալու լինիս կամ երակ առնուլն և այլն յայնժամ աղէկ է առնուլն:

25 Բնագրում՝ Թ ու ա է:

26 Բնագրում սխալ է. պետք է լինի՝ ՄԽԸ:

## ՎԱՍՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԳԼՈՒԽՆ ԵՒ ԸՂԵՂԻՆ Է ԱՅՍ

- 99ա || Եւթներորդն՝ վասն ստրղծման և գլուխն և ըղըղան: Գիտացիր, որ Գ (3) իրք ի մարդուն յանձն մեծ և շնահար է և պատական է քան զամենայն զօգուած և իր զօրութիւն ի յանձն աւելի է քան զամենայն որք բժշկական ասոնց յազայի ըոսսիայ ասեն և այս Գ (3) Ա (1) սիրտն է և ինքն թագաւոր է ամենայն անձին և Բ (2) ըղըղն, որ վեզիր է այն թագաւորին և Գ (3) լերդն, որ տանուտէր է ամենայն անձինն և բաժանող կերակրին և ամենայն անձինն: Եւ գիտացիր, որ ըղըղան տեղն գլուխն է և շատն այնոր համար է, որ աշքն գլուսն ի ըղեղէն կու առնու և տեսութիւնն ըղեղն է և աշքն անձինն պահողն է և թէ աշքն չբ լինի, նայ մարդ զանձն չրկարէ շուրջ ածել: Եւ գիտացիր || որ ըղըղան բնութիւնն հով է և գէճ է ինքն, և ի գլխուն մէջն է: Բայց գիտացիր, որ յայս Բ (2) փէրտէս ի գլուխն կիպ է և թէ իրենն զէն հասնի և միջի փէրտէն ծակ ունի, որ քիթն ծակու զէմէ կիջնու, որ ըղեղին յաւելուածն այն ի քթէն վայր ջաղէ: Եւ այն ծակէն, որ ըղեղն զհոտն առնու, թէ այն ծակն, որ կալնվի նա քիթն հոտ չի առնուր, և բուն լինալն և արդնալն յայն ըղեղէն է և ի ներքևս ըղեղին կիպ է և ինքն Գ (3) բաժին է: Եւ այն որ պօտունիս տմաղ ասեն և այն ամէն բաժինն յիրար կիպ է և այն պուտունիս կարմիր երկնի կա և ինքն ի շարժման է: Եւ այլ գիտացիր, որ առաջի բաժինն, որ ի ճակատին վերայ է քան զայն Բ (2) բաժինն: Այս այլ մեծ է և || ի յինքրն Աստուած զաշաց տեսութիւն է գրեք, և ի միջի բաժինն ունի զսգայութիւնն և զխելքն և թէ ասոր զէն հասնի նա մարդն սահր և սաթա լինի և լակուայ: Եւ Գ (3) բաժինն ունի զպահողութիւն և յիշողութիւն և այս քան զամէնն փոքր է և թէ ի յայս բաժինս քան կամ զէն հասանի, նա մոռացկոտ լինի և զինչ, որ ունի յուշ միտքն ձգէ՝ այսպէս է գրեք:

ՎԱՍՆ<sup>27</sup> ԸՍՏԸՂԾՄԱՆ ՍՐՏԻՆ

- 100բ Որ ինքն է անձին և իր բնութիւնն տաք է և շոր և իր տեղն ի կրծոց ներքեն ի ձախ դին է և ինքն քան զամենայն անգամ պատական է՝ ինքն հոգուն տուն է և զառողջութիւն և զտաքութիւն ի սիրտն է գրեք Աստուած: Եւ ինքն ամուր միս է և յայնմ ի մէջ է ամուր, որ պահէ զինքն յամենայն շարէ և իր ամանն հանց է, որ իսկի սիրտն ի յիրար չի դիպնուր ||: Եւ հանց զէտ փրփուր իրք ումի մէջն է և սիրտն այն կու զպչի: Եւ սիրտն նման է փիճոյ մրգի և բոլոր և իր վարի ծայրն բարակ և վերինն հաստ և հանց գիտացիր, որ սիրտն Բ (2) փոք ունի և Բ (2) ականջ՝ Ա (1) աջիկ զիհն է և Ա (1) ի ձախն: Եւ այն փորն, որ յաջ դին է՝ ինքն Բ (2) ծակ ունի ի յայն երակնէն, որ զարիւնն ի լերդէն ի սիրտն կուղարկէ: Եւ Ա (1) այն է, որ ի սրտէն ի թոքն կերակուր կուղարկէ, և այն փորն որ ի ձախ դին է և այն այլ Բ (2) ճանապարհ ունի՝ Ա (1) վասն

27 Ձեռ. № 212, պակասում են «վասն ըստրղծման սրտին», «վասն ըստրղծման լերդին», «վասն ըստրղծման փածղանքն», «վասն ստրղծման թոքին», «վասն ըստրղծման լեղուոյն», «վասն ստրղծման իրիկամացն» գլուխները:

101ա օղայ համար և Ա (1) որ ի թորն քամի հասցնէ ի շարժելովն և զինքն հովացնէ, և Ա (1) այլ այն է, որ ան մեծ երակին համար է, որ շիրեանին երակն յիրմէն կելնէ և զամէնայն անձն այն կու տարցնէ, որ յառաջն պիտի յիշեմ: Եւ ամենայն անձն, որ լերդէն երակ բաժնի ի սրտէն  
 101ա այլ բաժնի || քան զայն մեծ և հաստ: Եւ այն անձն, որ շիրեան զէն հասնի, նա այն տեղացն տարութիւնն այլ պակաս լինի մօտոյ: Գիտացիր, որ մարդուն տարութիւն յայն արեանէն լինի, որ ի սրտին մէջն է: Եւ յայնժամ, որ այն արիւնն ի հովութենէ կամ ի շորութենէ պաղի անհնար է, որ մարդն մեռանի: Եւ տէր Աստուած ի սիրտն Բ (2) փոր և Բ (2) ականջ անոր համար է ստեղծեր, որպէս Բ (2) աչք և Բ (2) ձեռք և Բ (2) ականջ և Բ (2) ոտք այնոր համար է, որ թէ Ա (1) զէն հասնի և այ Ա (1) մնա Աստուծոյ կարող զօրութեամբն և մարդուն ազատէ:

ՎԱՄՆ ԸՍՏԸՂԾՄԱՆ ԼԵՐԳԻՆ, ՈՐ Է ՏԱՆՈՒՏԷՐ ԱՆՁԻՆՆ

101բ Գիտացիր, որ լերդին բնութիւնն տաք է և գէճ է, և իր կեցուածն ի մարդուն ի կրծոյ ներքեն ի յաջ դիհն է, և իր կերպն նման է է (7) օրեա լուսին և ինքն ստամոզն ի կիպ է և ստամոզն այն, || որ ի փոսն է որպէս որ մէկ մի զթուրինճն ի ձեռքն բռնէ և լեղին այլ ի լերդին երեսն ի վայր կախէ:

Վարդապետքն ի յայտ արուեստն ասացեալ են թէ ինքն նման է կրակի և լերդն նման է քալիստի և ստամոքն նման է պտկի և կերակուր և ըմպելի ի յանոր մէջն և ի ստամոքին մէջն կիսակի լինի և լերդին երակնին զուծն ի յինքն քաշեն: Եւ յորժամ կերակուրն որպէս որ ի գետին ջուր կենայ և ծառին մազմզուկն ի յինքն քաշէ և յորժամ կերակուրն ի բարակ աղիքն հասնի, նայ լերդին երակն զայլ գիճութիւն ի յինքն քաշէ և զայն գիճութիւն՝ լերդն արիւն դարձուցանէ և զայն արիւնն բաժանէ յանձն, որ պէտ անէ իր և քիչ մի յինքն պահէ և որ անդամն, որ արիւնն պակասէ յայնտեղն ուղարկէ, որ վատուծ չըլինի:

102ա

ՎԱՄՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՓԱՄՂԱՆԸՆ

Գիտացիր որ Աստուած զփայծեղն հով և շոր է ստեղծեր և իր կենալ տեղն ի կրծոց ներքեն ի ձախ դին է և ինքն քիչ մի երկան է որպէս եզնալեզու: Եւ այն դին, որ ի ստամոքն կիպ է, քիչ մի փոս է: Եւ Ա (1) մեծ երակ մի փայծղէն ի ստամոքն կիպ է որպէս ձկան բերան ունի: Բ (2) բերան ունի՝ և Ա (1) բերնին պատճառն այն է, որ զսէվտան ի ստամոքէն վաղէ յայնժամ, որ ստամոքն պարսպ լինի կերակրէ և ստամոքին ուժն կերակուր տա ուտել և անոր պատճառովն կերակուր տա ուտել, որ ինքն զարիւնին մրուրն յինքն քաշէ և սէվտա առնէ և իր կերակուրն այն մրուր արիւն է: Եւ հանց գիտցիր, որ փայծեղն մարմին մի է ցանձառ և մէջն փունճ փունճ և ինքն այնոր համար, որ թանձր արիւնն յինքն քաշէ և ինքն անձինն ախտոն է:

102բ

## ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԹՈՔԵՆ

- Գիտացիր, որ Աստուած զթորին բնութիւնն հով և գէճ է արեր և ինքն ի կրծոց մէջն կախուէր է և ինքն Բ (2) շարժումն ունի. Ա (1) Ա (1) հակառակ: Եւ գիտացիր, որ հէքիմն ամէն շարժման անուն մի ասեն. Ա (1) հէրէքէթ-ի [ի]նպիսաթ և մէկին հէրէքէթ-ի [ի]նդպագ: Եւ հէրէքէթ-ի [ի]նպիսաթն այն է, որ ի ժիր գհով քամին ի խռչակն ի վար քաշէ վասն տաքութեան սրտին համար, որ սրտին տաքութիւն անձինն զէն շառնէ: Եւ հէրէքէթ-ի ինդպագն այնոր համար է, որ թորն զտաք բուխարնին, որ կառնէ յինքն և խռչակէն ի դուրս կու վարէ, որ ի բերնին ճամբէն և ի քթէն ի դուրս ելանէ: Եւ գիտացիր, որ արարիչն Աստուած զթորին միսն կակուղ և թրթև միս է արեր և մէջն փունճայ,
- 103ա նորա || համար է, որ ինքն քամու տուն է և սարվազն է, որ ի ժիր ի յանձն քամի բերէ և որ սիրտն յինքն քարշէ որպէս յիշեցար: Եւ յորժամ քամին յանձն ժողովէ և քիշ քիշ ի սիրտն հասնի և զսրտին տաք քամին յինքն կու քաշէ և այն պատճառն է, որ մարդն կու զրուցէ և շունչ կառնէ և կու տայ և ի ժիր շի պակասիր իր առնուլն և տալն: Եւ շես տեսնուր, որ թէ մարդ զգլուխն ի ջուրն խօթէ նա Ա (1) ժամ չըկարէ համբերել և շուտ կու հանէ զգլուխն ի ջրէն և պահ մի շի համբերեր: Եւ այն պատճառէն է, որ ի թորն արգիլած պոլխար կապի, պիտի որ թորն զայն հանէ և ի տեղն հով բերէ և թէ որ չըբերէ նա ի ժ[ա]մուն սպանանէ զմարդն || այն պատճառովն որ պոլխարնին ի ներս մնա:
- 103բ

- Եւ այլ թորին զօրութիւն այն է, որ յորժամ քամին ի յինքն քաշէ նա զինքն լատիֆ այն է և զինքն ի սիրտն զրկէ զի կենդանութեան հոգոյն կերակուրն քամին է, որ հոգուն ուժ տայ և զօրացնէ: Որպէս որ լերդն սարվազ է, որ զկերակուրն արին անէ և ամենայն յանձն քաժանէ և թորն այլ սարվազ է, որ զքամին առնու և տայ սրտին, որ զհոգին կերակրէ և զայն օթն որ ի սիրտն հասնի և ի սրտէն ի շիրեանն հասնի և անկից ըղեղն հասնի և լինի հոգի զգաստութեան որ է նալսանի ասեն: Եթէ անկից հասանի լերդն՝ նա լինի հոգի որ բնութեանս ասեն, որ ըրուհի տապալի ասեն և զայսոց այլ խորու զօրութիւնն տէր
- 104ա Աստուած գիտէ և պատճառ պատմելոյն այն է, որ գիտենան || զիմաստութիւնս զայս:

Եւ գիրքս կու յիշէ զայն, որ պետք է մեզ և օգուտ է բժշկութեան:

## ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԼԵՂՈՅՆ

Գիտացիր, որ լեղուն բնութիւնն տաք և շոր է և իր բնական տեղիքն ի լերդին երեսն է բուսէր, որպէս որ յառաջն յիշեցար: Եւ լեղին այլ Բ (2) բերան ունի, որպէս զէտ զփայծղան և Բ (2) բերանն այն է, որ զսաֆրան ի լերդէն ի յինքն քաշէ և Ա (1) բերանն այլ զսաֆրան ի ստամոքն վաղէ, որ զպալղամին զպեղծն և զսուրն և զլեղին ի ստամոքէն ի դուրս հանէ: Զմարդն ի մեծ զահմէթէ պահէ և զանձն թրթևացնէ: Եւ զօրութիւն լեղոյն այն է, որ զսաֆրան չարենէն քաժանէ և յինքն քաշէ և յիստիկէ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԻՐԻԿԱՄԱՑՆ

104բ Գիտացիք, որ իրիկամին զօրութիւնն և բնութիւնն տաք է և գէճ, և իր տեղիքն կոնտակին || ներքին է: Եւ յաչ իրիկամն լերդին մօտիկ է, անոր համար յերկան է [բան] ձախ իրիկամն, բայց Բ (2) իրիկամին տեղն այլ մէկ մէկի մաւտ է և ամէն մէկի փոսն Ա (1) մեծ երակ մի կայ, երակին մէջն փունճ է, որ ինքն որպէս շիրեան է և ի լերդն կից է և Բ (2) երակին ծարերն այլ ի հալարուշտն կիպ է և յիրմէն սերմն գայ: Եւ վարդապետքն յայս արուեստն ասացեր են թէ յորժամ սերմն յայն երկուսին ծայրն հասանի, որ ի լերդն կիպ է՝ արիւն լինի և միւս ծայրն հասանի, որ ի հալարուշտն կիպ է՝ ապայ սերմն լինի: Եւ այլ գիտացիք, որ գոգին ճանապարհն այլ ի յիրիկամէն է և յորժամ գոգն ի յիրիկամն գայ նա դիժար թրւենայ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՍՏԱՄՈՔԻՆ ԵՒ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՅ ՆՈՐԻՆ

105ա Գիտացիք, որ ստամոքին բնակարան տեղն ի կրծոց || ներքին է, բայց վերին դիճն քիչ մի ձախ դիճն է և ներքի դիճն ի յաջն մօտ է, և սիրտն և լերդն և փայծաղն ի նորա բոլորն է, որպէս որ լերդն ի յաջն է և փայծեղն ի ձախն և ներքին ամուր միս կայ և վերին նօսր միս կայ: Եւ ասոնք ամէնն ի ստամոքի բոլորն են Բ (2) իրաց համար, Ա (1) այն է, որ թէ զստամոքն տաքցնէ, որ զկերակուրն կարէ հալել և Բ (2) այն է, յորժամ որ մարդն ուժով բան առնէ նա իր տեղացն չը խախտի: Եւ ինքն որպէս դուռ է, որ երկու վիզ ունի և այն, որ ի կոնակի դիճն է, տափակ է և այն, որ ի փորուն դիճն է գունտ է պարպուտ, և ինքն կոհար է փուճ փուճ անոր համար է, որ այլ տեղաց ուժ առնու կերակուր ուտելու համար: Եւ խիստ ուժ ստամոքին բերանն է և այս է զօրութիւն, որ քաղցեցնէ դմարդն: Եւ մէջն || գէճ է, որպէս ընկուզ և մեծ է և յերկան շէ, և ինքն Գ (4) ուժ է ստղծեր Աստուած: Ա (1) ասեն բժիշկն զուվաղ ճաղիպայ, թէ քաշող է զկերակուրն ի յինքն, և երկրորդին ասեն զուաթ մասիբա, թէ յորժամ, որ ստամոքն կերակուր մտնէ նա կենա և հալի և շելանէ ստամոքէն ի դուրս, և Գ (3) ասեն զուվաթ հաղիմայ, անոր համար է, որ զկերակուրն մարսէ և խակ չըմնայ, և Գ (4) ասեն զուվաթ-ի տայֆեայ, որ է ի դուրս հանէ՝ յայնժամ արտաքսելանելոյ է և յորժամ, որ այս ուժն վատուծի նա փորն կապի և վնաս բերէ անձինն և զէն անէ: Եւ շատ զէն և վնաս անձին ստամոքէն գայ և ոմանք ասացին ի բժշկապետացն, թէ ամենայն զօղուածք Գ (4) ուժ և զօրութիւն է:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԱՂԵՅՆ

106ա Գիտացիք, որ աղեցն կազմելիքն || որպէս ստամոքին է և ամէնն Զ (6) աղիք են՝ Գ (3) վերինն բարակ է և պինտ է, և Գ (3) ներքինն հաստ և թանձր է: Բայց բժիշկն վերի աղեց միոյն ասեն իսնայշարիայ, որ է ԺԲ-ն (12) և է իր երկայնութիւնն ԺԲ (12) մատ թէ մարդ է, թէ

տղայ և ինքն ըղորդ է գէտ այլ աղիքն՝ ծուռ և փաթաթ չէ և Ա (1) ծայրն ստամոքին ներքին է, այնոր պապ ասեն: Եւ Բ (2) ասեն սայիմ, անոր համար ասեն, որ ինքն փայթման է և յինքն կերակուր կու հայի և չի մնար ի մէջն: Եւ Գ (3) ամախտ դաղ ասեն և ինքն պուտ պուտ է և ի յայս աղիքն կերակուր շատ չի կենար: Եւ այլ գիտացիր, որ վարի Գ (3) աղեցն բժիշկն Ա (1) միայ-ի ավար ասեն և ինքն աղիք է լայն և Ա (1) բերան մի այլ ունի յայն դիհն, որ ի վայր իջնու և ինքն նման է քէսէի, և Բ (2) ասեն ամյայի դուլին || և ինքն աղիք է լայն և այս ամենուս ներքին է ի կարգին: Եւ Գ (3) ասեն միյայ-ի մուսթաղիմ և ինքն աղիքն է լայն քան զամէնայն և Ա (1) ծայրն ի նստելտեղն կիպի և Աստուած զայս աղիքս ծուռ և փաթութ այնոր համար է ստըղծէր, որ կերակուրն ի յինքն արգիլէ և զարութիւն առնէ և այնոր համար Գ (3) վերին աղիքն բարակ է և Գ (3) վարինն հաստ, որ մարդ շուտ շուտ ի դուրս շելնէ և համբերէ և կենա ի յայն աղիքն և այս աղեցն վերի ծայրն ի կողին ներքին է, և Ա (1) ծայրն ստամոքն կիպ է: Եւ այս աղիքներս սարվազ է անձին առողջութեան և կերակրելուն և զօրութեան և ուժովութեան, որ պիտի:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՀԱԼԱԲՇՏԻՆ

Գիտացիր, որ հալարուշտն մարդուն յաճուկն է և վիզ ունի որպէս  
 107ա շիշէի և վիզն բարակ և մէջն լայն որ զգոզն || ի մէջն առնու և յամէն ժամ մարդն շրգոզէ: Հալարուշտն պինտ և ամուր է յօրինած, անոր համար սաֆրաին գիճութիւնն շօիրէ զինքն և ի բերանն քիշ մի միս կայ և Ա (1) երակ մի զինքն բոլոր է ածեր և Ա (1) երակ այլ ճուճ է փաթրվեր: Եւ այն կտոր մի միսն, որ ի հալարշտին բերանն է նայ զԲ-ն (2) այլ կու պահէ և գոզն յամէն ժամ ի նոյն տեղն կու դադարի և յորժամ որ ի դուրս վաթէ նա երակն կու թուլնա, մարդ զգոզն շրկարէ արգիլեր ի յայն երակին վատուծութենէն և իժիր ի ճուճէն ծայրէն ջուր կու կաթէ: Եւ այլ ասկից ի վայր յիշենք զգուրսի զաւղուածքն որ մեղի պարտ է խիստ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԵՒ ՅԱԻՐԻՆՈՒԱԾՈՅ ԱԶԱՅ

Գիտացիր որ տէր Աստուած զաչք ի փոս տեղ անոր || համար է ստըղծէր, որ ինքն քան զամենայն անզամ պատուական է և ճակտին ոսկորն անոր համար ի դուրս է ստեղծէր որ զաչքն պահէ յամէնայն շարէ և զունքն անոր համար է ստեղծէր Աստուած որ զաչքն պահէ և ի հեռու տեղաց տեսնելու ուժ տայ, և զթարթիչքն պահապան է աչիցն, որ զհոզն ու զփոշին և զայլ իրք պահէր, որ չըմտէ: Եւ այլ հանց գիտացիր, որ Աստուած զաչքն է (7) տապաղա է ըստըղծեր և Գ (3) գիշութիւն և ամէն գիշութիւն Ա (1) գուն է՝ աղզի աղզի: Եւ գիտացիր առաջի տապաղան, որ աչիցն ի դրսի դիհն է, բժիշկն այնոր տապայ-ի մուլթահիմայ ասեն<sup>28</sup>, այնոր համար որ ինքն զաչից բոլորն զամէնն ի մէջ առեր

<sup>28</sup> Աչքի կազմախոսութեան մեջ Հովասափ Սերաստացու կիրառած անվանումները համընկնում են Աբուսայիգի, Մխիթար Հերացու և Ամիրղովյանի՝ աչքի կազմախոսութեան և բնա-



- 108ա է և ինքն խիստ նաւոր է և գունն խիստ ըսպիտակ: Եւ Բ (2) տապաղա-  
 յին. ասեն տապաղաչ-ի զարունիայ || և ինքն պինտ է և գունն խիստ  
 սպիտակ է և Գ (3) տապաղան ասեն յանապիայ, որ ինքն նման է խա-  
 դողի հատ և դուրսի դիհն գունտ է և ներսն գունտ շէ և քիչ մը ըսպի-  
 տակ է և Դ (4) տապաղաչ-ին ասեն յանքասութիայ այնոր համար, որ  
 ինքն նման սարդի ոստան և գունն խիստ սպիտակ է և յիտակ: Եւ Ե  
 (5) տապաղաչ-ին շապարա ասեն և ինքն նման է յայն շարին, որ ի  
 տղին երեսն կու լինի երբ ծնի և ինքն խիստ նօսր է: Եւ Զ (6) տապա-  
 ղաչ-ին սուլպիա ասեն և ինքն խիստ պինտ է քան զամէն տապաղանին,  
 որ յիշած է: Եւ է (7) տապաղաչ-ին ճալիտիա ասեն և ինքն նման է պա-  
 ղին և ամուր է: Եւ զայս ամէն տապաղանիս, որ յիշեցար ամէն Ա (1)<sup>29</sup>  
 Ա (1) զարութիւն ունի, և առաջի տապաղաչին զօրութիւնն այն է, որ  
 զան գիճութիւն, որ ճալիտայ ասեն ի զարկուց և այլ վնասէ պահէ:  
 108բ || Եւ Գ (3) տապաղաչին զարութիւնն այն է, որ երկուսում տապաղան  
 կերակրէ և զիր պնտութիւն գիճութիւն ճալիտայ տաֆ այնէ և ի ժիր զա-  
 ջից լոյսն ի տեղն պահէ և զամէնայն իրք մարդն յիտակ տեսնու և զա-  
 ջից լոյսն չը ցրուէ և ի տեղն պահէ: Եւ Դ (4) տապաղաչին զօրութիւնն  
 այն է, որ Գ (3) տապաղան պահէ և կերակրէ<sup>29</sup> և զճալիտային գիճու-  
 թիւնն ի պնտութիւնէ է՝ և խոշորութիւնէ պահէ: Եւ Ե (5) տապաղաչի  
 զօրութիւնն այն է, որ ինքն տեսութեան հոգուն կից է և զրոտուպատ  
 ճալիտիայն պահէ և կերակրէ և ըոտուպաթ զուճաճիէն յինքն տայ: Եւ  
 Զ (6) տապաղաչին զարութիւնն այն է, որ և ըոտուպաթ ճալիտիային ի  
 109ա տարութիւնէ ի շիրեանին և ի մէջ տապաղաչին || շապարիային պահէ և յի  
 անցնի որ յիրմէն շարժումն գայ: Եւ է (7) տապաղաչին այն է, որ զէն  
 և վնաս յաջիցն ի ոսկրէն և աշիցն ի բունէն և ամէնայն տապաղաչէն  
 յետ պահէ և զաչքն ի յիր տեղն ամրացնէ:  
 Եւ այլ հիշեմ զԳ (3) գիճութիւն՝ թէ որպէս է: Եւ յառաջի ըոտուպա-  
 պատն է, որ է գիճութիւն՝ որ է պաղիան և է ինքն գէճ որպէս հա[ւ]կթի  
 սպիտկուցն և սպիտակն: Եւ Բ (2) ըոտուպաթն ճալիտիայն է և ինքն  
 յիտակ է որպէս պաղ: Եւ Գ (3) ըոտուպաթն, որ է զուճաճիայ և ինքն  
 յիտակէ որպէս ապիկի հալած և ըոտուպաթ ճալիտիայն ի յաշիցն մէջն  
 է, որ կու տեսնու և ինքն խիստ իտակ է և պսպղուն և ինքն ի տեսու-  
 թիւն շատ տեսնու և ցոլա և կերակուր նորա ըոտիպաթ զուճաճիայէն  
 109բ է և ինքն ըոտիպաթ պաղիանի յառջևն է և ինքն || գիճութիւն ունի և  
 զօղին զշորութիւնն տանի: Եւ հանց որ զան է (7) տապաղան, որ յիշեցի  
 և Գ (3) ըոտուպաթ և յառջև ճալիտիայ և ըոտուպաթ ազիայ՝ Գ (3) տա-  
 պաղին յետն է: Եւ աջից սեութիւն ի մէջ Գ (3) տապաղաչին է և մէջն  
 պարապ: Եւ յառաջի բաժին ըղըզան ի յաչքն է եկեր մինչև ըոտուպաթ  
 ճալիտիանն ի պուխարէ և տեսութեան և լուսուն աշիցն գայ և այն-  
 ջղերն, որ մէջն փուճ է, և կփ մթնէ, կու լաննայ և լուսն նեղ լինի և յոր-

խոտութիւն տեքմինոլոգիային, որի մանրագին բնութիւնը տե՛ս Արուսայիզ, Յաղագս կազ-  
 մութեան մարդոյն, աշխ. Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 18—24, 37—45:

<sup>29</sup> Բնագրում՝ կրակէ:

ժամ, որ այն շղերն որ լայն լինի՝ նայ աչքն իսկի շրտեսնու: Եւ շատ կայ հանց մարդիք և բժշկնին, այնոր ինդիշար ասեն և Աստուած զայն իսկի մարդու շք տայ: Եւ զկերպն աշիցն և զլուխն և զմէջն փուճ Բ (2) 110ա շղին և զաշիցն լուսուն անցնելու տեղն || և զթէրքիպն փէրտէներուն զոռթպաթին զամէնն ի կերպ բերեմ, որ ուսնողին հեշտ լինի և աղէկ իմանայ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԱԿԱՆՋԻՆ

Գիտացիր, որ զականջն Աստուած անոր համար է ստրղծեր, որ լսելուն և ձայն առնելուն և հասկանալուն սարվազն է և իր ծակն զէտ քեղիկոնի ծակ է և ինքն զէտ նաւի լելքն է: Եւ Աստուած զայն անոր համար հանց արեր է որ հող և փոշի շրմտնէ ի մէջն: Եւ զի ջուրն լեղի է արեր անոր համար, որ ճանճ և ճիճի ի մէջն շրմտնէ: Եւ այն լեղի ջուրն որպէս զէհիր է և կու սպանէ զկենդանին, որ ի յականջն մտնու:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՔԹԻՆ

Գիտացիր, որ այս քթին մարդու երսան շնորքն է և առանց քթին իսկի մարդուն երեսըն շնորք չունի և մէջն երկու բաժին է: Եւ այն, որ 110բ ոսկորն որպէս կռճուկ է և Գ (3) յօկտութիւն ունի: Յառաջինն || այն է, որ շունչ կառնու և Բ (2) այն է, որ զհոտն զաղէկն և զվատն կու ճանաչէ և Գ (3) այն է, որ զպիղծ Ֆազլանին ի յրղեղէն ի վայր իջեցնէ և յիստակէ զանձն և բանայ և զհոտն աղէկ առնու<sup>30</sup>:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՊՌԵԿԱՅ ԵՒ ԼԵԶՈՒԻՆ

Գիտացիր, որ պոկունքն բերնին պահարան է և ակոային փէրտէն է: Եւ այնժամ, որ սկսնու զրուցել՝ նա պոկունքն և ակոան է, որ զմարդուն խօսքն աղէկ այնէ: Եւ թէ ակոան և պոկունքն շինար, նա մարդ շէր կարեր աղէկ զրուցեր: Եւ լեզուն նօսր և բարակ և կակուղ միսմ է և խօսելոյն սարվազն է և ի խօսքն իսկի պակասութիւն չի թողուր և ինքն գիճութիւն ունի և կակուղութիւն և ամէն գիճ կու ճկի և զկերակուրն կղորդէ, որ ծամելոյն հեշտ լինի: Եւ ինքն ունի ի շիրեանէն շատ երկ- 111ա նի || և ի լեզվին ծայրն է ժողովէր, որ զպալղամն ի բերանն ժողովէ: Եւ այն, որ սաքպաթ ուլ լուսպ ասեն և ի յայս զօրութիւնս Բ (2) պատճառ ունի՝ Ա (1) այն է, որ ի ծիր գէճ լինի և թէ շոր լինի գիժար է զրուցելու, և Բ (2) այն է, որ թէ շոր լինի նա մարդն ոչ կարէր կերակուր ուտէ և հեշտ հալէ:

#### ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԶԵՌԱՅՆ

Գիտացիր, որ Աստուած զշատ զօրութիւն ի ձեռքն է դրէր և զարկ արուրստնին բանիլն՝ որպէս գրագրութիւն կամ ծաղկել և զինչ որ նոցին

30 Այստեղ ավարտվում է № 212 ձեռագիրը:

նմանէ: Եւ Ե (5) սպայութեան Ա (1)՝ ի ձեռքն է, որ զկակուղն և զպինտն, զծանտրն և զթեթիկն ձէռքն ճանաչէ: Եւ զվաստական ձեռքն այնէ: Կա, որ թէ ի մարդուն յանձն օտար ձեռք հասնի՝ նա ձեռքն պահէ և չըթողու:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԾԸԾԵՐՈՒՆ

- 111բ Գիտացիր, որ || ծծերն թոյլ միս է և շիրեանին երակնին յինքն կիցէ և իր դօրութիւն այն է, որ զմանուկն կերակրէ և զկերակուրն տղան ի ծծէն ուտէ: Եւ յորժամ տղան ի մօրն փորն լինի՝ զմօրն հայզին արիւնն ուտէ: Եւ ի լերդին և սրտին տաքութիւնն զհայզին դարիւնն հալէ և շիրեանին արիւնն ի ծիծն երթայ և հալի և ծծին բնութիւն զայն կաթ անէ և սպիտակ լինի և այնոր համար ծծին միսն սպիտակ է և կակուղ է և կաթն այլ սպիտակ է և կակուղ է: Եւ պատեճ է, որ ծծին միսն զայն արիւնն կաթ անէ և տղան ուտէ: Եւ պատճառն այն է, որ կաթն ի հայզին արու-նէն է և ծծին այլ ի յարգանդն կից է: Եւ պատճառն այն է և յորժամ կինն յղի լինի, պիտի որ հա[յ]զն կապի և տղին կերակուր լինի մինչև ծնի: Եւ թէ կնկան ձախ ծիծն || թոշմած լինի գուշակէ, որ աղչիկ անցնէ: Եւ թէ յաղչիկ ծիծն թոշմած լինի գուշակէ, որ կտրիճ տղա անցանէ պատաղվորն:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԶԸԻԵՐՈՒՆ

Գիտացիր, որ ձեւերն սերման տուն է արեր Աստուած և Բ (2) այլ սպիտակ և ճերմակ միս է և կակուղ և ցանցառ է: Եւ ամէն Ա (1) ի Ա (1) իրիկամն ի կից է և կայ ի յինքն ի շիրեանին երկնէն երակն և իջնու՝ սերմն ի երիկամացն կիսահփ և գա ի ձուն և լման եփի և գունն սպիտակ է և թանձր և լազիճ լինի և հանց, որ արիւնն ի ծիծն եփի: Եւ Բ (2) մեծ ծակ ի ձրւնն ի ճուճն կիպ է և բժիշկն այն ծակերուն ավի ամանի ասեն և ինքն եփի ի ձուն և երբ պիտենայ՝ նա դուրս վաղէ ի յարտարս:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ՃՈՒՃԻՆ

- 112բ Գիտացիր, որ ճուճն զօղուածքմն է մէջն փուճ է և ի մէջն իսկի գիճութիւն շկայ և ինքն շեղ է և երկնուկ է, որ ի մերձաւորութեան ժամն զհամն առնու և այնոր համար մէջն փուճ է || որ ի մէջն քամի մտէ և կանգնի՝ մերձաւորութիւն առնէ և զսերմն ի ըղեղն հասցնէ և շուտ ի վայր թափէ: Գիտացիր, որ կնկան և այրին ի յայս անդամս մէկ է, այնոր համար, որ կնկան ի ներսն է և էրկան ի դուրս է: Եւ հանց, որ մարդուն ճուճն ի վիզն և կնկան արգանտին վիզն Ա (1) է և կնկան ձուն ի յարգանտին ի քովն է և բոլոր է և պինտ է: Եւ էրկանն թուլ է և այսպես են գրեր փոքր ի շատէ:

ՎԱՍՆ ԸՍՏԵՂԾՄԱՆ ՈՍԿԵՐԱՅՆ ԵՒ ՄՍԻՆ ԵՒ ԶՂԻՆ ԵՒ  
ԿՅՈՒԱԾՈՅՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԵՒ ԱՄԷՆԱՅՆ ԱՆՁԻՆ

Եւ գիտացիր, որ մարդուն ամբողջ ոսկորն Մե՛լ (248) ոսկոր է և ի յայս ամէն ոսկերացն՝ է (7) ի գլուխն է և ԼԲ (32) ի ակոան է և Գ (4) ի վզին ողաշարն է և ի Դ (4) ի կողն է և է (7) ի կուրցքն և Գ (4) ի բազուկն և Դ (4) ի Բ (2) ստրն և Դ (4) ի կրունկն և Բ (2) ի թաթն և Բ (2) յառջևն և Բ (2) յետևն և Լ (30) ի մատներն:

113ա Եւ թիւն ամբողջ ջղացն մարդուն շէ (77) ջեղ է և ամէնն է (7) ջուխտակ է: Ի բղեղն է ԷԼԵՐ և Ա (1) ջուխտակն աշքն, Բ (2) ջուխտակն ի կոպերն ի կիպ և Բ (2) ջուխտակն ի Բ (2) ականջն է և ի քիթն || և ի պոկունքն կիպ է: Դ (4) ջուխտակն ի խոշակն և ի լեզուն ի կից է և Ե (5) ջուխտակն ի յականջն և ի վիզն կից է և Զ (6) ջուխտակն ի մէջ փորուն է և է (7) ջուխտակն ի լեզուն և ի յականջն ի կից է և ԼԱ (31) ջուխտակն այն է, որ հիմնէ ի մարդուն բղեղնէ և ի կոնակնէ՝ ի դուրս գայ և լինի ողոշարին պարապար և յետոյ ճապղի: Եւ է (7) ջուխտակն ի վիզն է և ԺԲ (12) ջուխտակն ի կոնակն է և Ե (5) ի փորն է և Գ (3) ջուխտակն ի սրունքն է և Գ (3) ջուխտակն ի ողաշարքն է և երթայ ի յողոշարէն ներքեւէն մինչև ի նստայ տեղն: Եւ գիտացիր, որ մարդուն ջղերուն թիւն այս է և ասոնց ծայրերն ի յամբողջ մարմինն ճապղեր է և բարկըցեր է խիստ:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԷԶԱՆԵՐՈՒՆ, ՈՐ ԿՏՈՐ ՄԻ ՄԻՍ ՅՈՍԿՈՐՆ

113բ Եւ ինքն ՅԻ (320) է: Եւ այս ամէնէն ԻԳ (23) ի գլուխն է և Դ (4) ի յաջուին է և ԽԳ (43) յերեսն է || և ի պոկունքն և ի բերանն է: Եւ Թ (9) ի լեզուն է և Ի (20) ի կզակին ներքևն է և ի կուշտն և Զ (6) ի վիզն է և ԻԶ (26) ի ձեռուին և Զ (6) ի թևերն է և ԼԴ (34) ի մատներն և ԼԶ (36) յարն է և ՃԷ (107) ի կուրծքն է և Դ (4) ի նստեկատեղն է և ԻԳ (24) ի սրունքն է, ԺԶ (16) ի յանգամն և ԼԱ (31) ի յաճուկն ի վայր և Մ (50) յոտվին լինի և այս է էզանին:

ՎԱՍՆ ՍՏԸՂԾՄԱՆ ԵՐԱԿՈՒՆ, ԹԷ ՔԱՆԻ Է ԵՒ ՔԱՆԻ ԲԱԺԱՆԻ

Գիտացիր, որ ամէն երակ մարդոյն ՅԿԵ (365) երակ է և այս ՅԿԵ (365) երակէս ՃՄԵ (155) երակն կու շարժի և ՄԺ (210) չի շարժիր և այս ամէն շարժող երակներն որ կան Գ (3) երակ մեծ է՝ Ա (1) կիֆա[լ]ն է, Բ (2) ակհալն է և Գ (3) պասիլիկն է և այս Գ (3) մեծ երակն ամէն Ա (1) ՃԻ (120) երակ է բուսեր և այս երակնին, որպէս ծառ և ճիւղ է և այն երակնին, որ ի շարժման է ի սրտէն կելնէ և այն, որ անշարժ է ի լերդէն կելնէ:

114ա ՎԱՍՆ ՕՐԻՆՈՒԱԾՈՅ ԵՒ ԸՍՏԵՂԾՄԱՆ ՓԱՅՎԱՆԴՆԵՐՈՒՆ

Գիտացիր, որ ի մարդուն յանձն մեծ և փոքր ԶԹ (309) փայլանդ է և ի յայս համարէս՝ ՃԽ (140) ի գլուխն է և ի յերեսն և ԺԸ (16) ի վիզն է, ԽԸ (48) ի կողն է, ԺԴ (14) ի կուրծքն է և Դ (4) ի բազուկն է և

Ը (8) ի թևերն է և ԼԲ (32) ի մատներն է, և ՓԸ (18) ի ձեռաց վերևն է և Կ (60) ի մատունքն է և ԼԴ (34) ի կոնակն է և Դ (4) ի ծունկն է և Ը (8) ի կրունկն է և Ը (8) ի կրկին առջևն է և Ի (20) յտիցն վերևն է և Կ (60) ի յտից մատներն է:

ՎԱՍՆ, ՈՐ ՅԻՇԵՆՔ ԶԵ (5) ՍԳԱՅՈՒԹԻԻՆՔՆ ՄԱՐԴՈՅՆ

Գիտացիր, որ տէր Աստուած ի մարդուն Ե (5) սգայութիւնք է ըստըզծեր և մարդուն կատարելութիւնքն Ե (5) սգայարանօքն է և մարդուն զբնութիւն կրակին ունի և լուսն կրակովն է ցօրեկովն ի օրինակ քեզ՝ որ քանի հետու լինի նայ լուսօորութիւն առաւել լինի: Եւ Բ (2), որ լսելիքն որ լսէ զձայնն և է ի ականջէն և ինքն քիչ է քան զաշաց 114բ զգայութիւն և ինքն զքամու բնութիւն ունի այնոր || համար որ զձայնն և կանչելիքն շուտով լսէ և չէ քան զաշքն: Եւ Գ (3) սգայութիւնքն, որ կիմանայ զանուշ հոտերն և զչանուշն, թէ հոտվտայ քթովն և ինքն պակաս է քան զլեսիլքն և ինքն զզրի բնութիւն ունի և այն պատճառովն է: Եւ Դ (4) համն իմանալ զքաղցրն և զլեղին և զաղին ինքն լեզուէն է և իր ուժն պակաս է քան զհոտվտայն: Եւ Ե (5) իմանալ զխոշորն և զկակուղն և զպինտն: Ինքն ունի զհողի բնութիւն, ինքն լինի ձեռովին և ի ոտովին և ծանտրն և զթևթևն, զկակուղն և զպինտն յիմացուի և Աստուած չիր ողորմութենէն է ըստըզծեր զամէնն, Ա (1) ի մէկ տեղ է զրեր և յորժամ այս Ե (5) ըսգայարանացն, որ Ա (1) պակաս լինի, նա Ա (1) այլ պակաս չի լինիր, հանց որ հոտն քիթ կառնու և աշքն չառնու, և ձայնն ականջն լսէ և քիթն շըլսէ, և այլն այսպէս է, զուր կու յիշենք: Եւ զայս անդամնիս, որ կու յիշեմք հանց որ ամէնն լման լինի նայ զոհութիւն տայ Աստուծոյ և յամէն ժամ օրհնէ զԱստուած:

Հրատարակվող բնագիրը մատչելի ու հասկանալի դարձնելու համար նպատակահարմար համարվեց ստորև տալ բնագրում հանդիպող օտար և անծանոթ բառերի համառոտ բացատրությունը, հետևյալ սկզբունքով. նախապես տրված է բառը բնագրի ուղղագրությամբ, այնուհետև փակագծում նշված է լեզվական պատկանելիությունը՝ (ա.)—արաբերեն, (պ.)—պարսկերեն, (թ.)—թուրքերեն, (հուն.)—հունարեն, (հ.)—հայերեն: Քանի որ արաբական բառերն ու տերմինները միջնադարյան հայերեն բժշկարաններում միօրինակ տառադարձություն չունեն, այդ պատճառով տրվում է բառի ճիշտ արաբատառ ձևի ժամանակակից արևելագիտության մեջ բնորոշված լատինատառ տառադարձությունը, որին հաջորդում է այդ բառի հայերեն բացատրությունը և լատիններեն համարժեքը: Օտար բառերի ու տերմինների ստուգաբանության հարցում մեզ օգնել է պրոֆ. Հ. Փափազյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Զեռքի տակ ենք ունեցել հետևյալ գրականությունը.

1. Արուսայիդ, Յաղագս կազմութեան մարդոյն, աշխատ. Ս. Ա. վարդանյանի, Երևան, 1974:
2. Ալիշան Ղ., Հայ բուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, 1895:

3. Անառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Գ, Երևան, 1971—1979:
4. Ամիրզոլլաբ Ամասիացի, Օգուտ բժշկութեան: Խմբագ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940:
5. Ամիրզոլլաբ Ամասիացու Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց: Ի լոյս էած հանդերձ ծանոթագրութեամբ Կ. Յ. Բասմաշեան, Վիեննա, 1926:
6. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց: Աշխատասիրությամբ Ա. Ս. Կժոյանի, Երևան, 1962:
7. Լատին-ուս-հայերեն բժշկական բառարան, Երևան, 1951:
8. Մատուցյան Ք. Գ., Բույսերի անունների լատիներեն, հայերեն, ռուսերեն բառարան, Երևան, 1970:
9. Ղազարյան Ռ. Ա., Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Երևան, 1981:
10. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Գ, Երևան, 1944—1945:
11. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Երևան, 1979—1981:
12. Փէշարմալեան Գ., Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Կ. Պօլիս, 1844—1846:
13. Баранов Х. К., Арабско-русский словарь, М., 1957.
14. Миллер Б. В., Персидско-русский словарь, М., 1953.
15. Bedevian A. K., Illustrated Polyglot Dictionary of Plant Names, in Latin, Arabic, Armenian, English, French, German, Italian and Turkish Languages, Cairo, 1936.
16. Loghat-Nama, Alī Akbar Dehkhodā, Tehran, 1325 (1946)—:

### Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

- Ակրրդարհա (ա.) -akrkaḥā, (հ.)—բողոց տակ—Pyrethrum Balsamita L.:
- Ակհալ (ա.)—akḥal, (հ.)—կենտրոնական մեծ երակ, հիմնական երակ—vena magna:
- Ամայի տղաղ (ա.)—am‘ā-yī daḳiḳ, (հ.)—բարակ աղիի ստորին հատվածը գալարաղի:
- Ամյայի-ի դուլին (ա.)—am‘ā-yī kūlī, (հ.)—խթաղիք—Colon:
- Անիսոն (ա.)—ānisūn, (հ.)—Անիսոն, կարար—Pimpinella Anisum L.:
- Աղաղիա (հ.)—Acacia Arabica W.:
- Աշախ, աշակ (հ.)—Dorema Ammoniacum D.:
- Բաւասիր (ա.)—bawāsīr, (հ.)—ավելորդ բուսած միս, թուխք—Haemorrhoides:
- Բէն, բէջ (հ.)—թիակ, ուսագլուխ:
- Բուխար (ա.)—bukhār (հ.)—գոլորշի:
- Զահմէք (ա.)—zahmat, (հ.)—նեղութուն:
- Զարնապ (ա.)—zarnab, (հ.)—հալխունկ—Libanotis:
- Զաւհրայ (ա.)—zuhra, (հ.)—Արուսյակ մուրրակ—Venus:
- Զեհիր (ա.)—zahr, (հ.)—օձի կամ ալլ դեռանի թույն:
- Զէն (ա.)—ziān, (հ.)—միաս:

- Ջուճանի (ա.)—zudjadjī, (հ.)—ապակեմի—corpus vitreum:
- Ջռնեխ (ա.)—zarnīkh, (հ.)—Չառիկ—Arsenicum:
- Ջոհալ (ա.)—zuḥal, (հ.)—Երևակ մոլորակ—Saturn:
- Ըռուտուպաթ (ա.)—ruṭūbat, (հ.)—հեղահյութ—humor:
- Ըրուհի տապալի (ա.)—rūhī tabī'ī, (հ.)—բնական հոգի, հոգու զորութուն:
- Ըսախալուս (ա.)—asfūkhūduṣ, (հ.)—Եղնախոտ, Եղնա խոտ, արեղախոտ—  
Lavandula Stoechuc L.:
- Թարպեխ (ա.)—tarbi, (հ.)—Լուսնի փուլերից մեկը, ըստ երևույթին 1/4-ը:
- Թերքիպ (ա.)—tarkīb, (հ.)—խառնվածք, բաղադրութուն, տվյալ դեպքում՝  
դեղախառնուրդ:
- Թրիաք (ա.)—tiryāk, (հ.)—ընդհանուր անուն, որոշակի բաղադրութամբ  
դեղախառնուրդի, որ դեռ շատ հին ժամանակներից համարվել է ընդ-  
հանրական միջոց դանազան թունավորումների դեմ—Theriak:
- Ինդիշար (ա.)—intishar, (հ.)—բրի լաջնանալուց լույսի ցրվելը:
- Իսնայշարիա (ա.)—ithnāa'shariyya, (հ.)—տասներկու մատնչա—duodenum:
- Լազիճ (ա.)—lazīdj, (հ.)—մածուցիկ:
- Լակուայ (ա.)—lakūa, (հ.)—գիմալին ներվի լուծանք—paralysis n. facialis:
- Լաաիֆ (ա.)—laʿīf, (հ.)—մեղմ, նուրբ, ախորժելի:
- Խապիաք (ա.)—khāssiāt, (հ.)—բնական զորութուն:
- Խոչակ (հ.)—larynx:
- Խոյ (հ.)—12 կենդանակերպերից առաջինը—Aries:
- Կիֆալ (հուն.)—κεφαλική, (հ.)—գլխի երակ—vena cephalica:
- Հալարուշա (հ.)—միզապարկ—vesica urinaria:
- Հայզ (ա.)—hā'id, (հ.)—դաշտան—menstruatio:
- Հաշայ (ա.)—hashā, (հ.)—Չամպուր, Իշածոթրին, Չիաթորին—Thymus  
capitatus L.:
- Հասըլ (ա.)—hāşil, (հ.)—պտուղ, բերք:
- Հերեքեթ-ի ինդպազ (ա.)—harakat-ī inkibād, (հ.)—կծկում, սեղմում, տվյալ  
դեպքում՝ արտաշնչում:
- Հերեքեթ-ի ինպիսաթ (ա.)—harakat-ī inbisāt, (հ.)—ընդարձակվել, լաջնա-  
նալ, տվյալ դեպքում՝ ներշնչում:
- Ղալղանդար (ա.)—kaikantār, (հ.)—արշասպ կանանչ—Couperous verte:
- Ղայսիում (ա.)—kaysūm, (հ.)—Որձաբարձիկ, Համբարձում, սև օշինդր—  
Artemisia Abrotanum L.:
- Ղանգարիոն (ա.)—kanṭūryon, (հ.)—ծծմոր, Կապուտիկ, Կապուտածաղիկ—  
Centarea jacea L. B.:
- Ղուրս (ա.)—kūrş, (հ.)—մի քանի դեղամիջոցներից պատրաստված բարդ  
դեղախառնուրդ ներքին ընդունման համար:
- Ղուվաթ-ի հազիմայ (ա.)—kūwat-ī hādīma, (հ.)—մարսեցնող ուժ:
- Ղուվաթի հազիպայ (ա.)—kūwat-ī djazība, (հ.)—քարշող ուժ:
- Ղուվաթ-ի մասիքա (ա.)—kūwat-ī māşika, (հ.)—բռնող ուժ:
- Ղուվաթ-ի սայֆեայ (ա.)—kūwat-ī dāfi'a, (հ.)—դուրս քշող, վտարող ուժ:
- Ճալիաի (ա.)—djālidī, (հ.)—սսպնյակ—Lens crystallina:
- Ճաւշիր (ա.)—djāwshir, (հ.)—Չոշիր, Ճոշիր—Opopanax Chironium Koch.:
- Ճնաիաճայ (ա.)—djintjāna, (հ.)—Օձադեղ, օձի սխտոր, հոսոմ կրնշան—  
Gentiana lutea L.:

- Մահի զահրան (*պ.*)—māhī-zahradj, (*հ.*)—*Ձիան թույն, մահկասերմ*—*Menispermum Cocculus L.*:
- Մանեթ (*ա.*)—mirrikih, (*հ.*)—*Հրատ մուրակ*—*Mars*:
- Մաան (*ա.*)—ma'dan, (*հ.*)—*հանք*:
- Մեկթուա (*հ.*)—*մզլածու, բորբոսածու*:
- Միայ-ի ալար (*ա.*)—mi'ā-yī a'wār, (*հ.*)—*կուլր աղիք*—*intestimum coecum*:
- Միայ-ի մուքաղիմ (*ա.*)—mi'āyi mustakīm, (*հ.*)—*ուղիղ աղիք*—*intestinum*:
- Մուշարի (*ա.*)—mushtarī, (*հ.*)—*Լուսնի թագ մուրակ*—*Jupiter*:
- Մուշկ (*ա.*)—mushk, (*հ.*)—*Թորդկուտց, Կոնկակուտց*—*Erodium gruinum Sol.*:
- Մաղալ (*ա.*)—mithkal, (*հ.*)—*քաշի միավոր, հալասար 5,1 գրամի*:
- Յազայի ընաւիայ (*ա.*)—a'dāyī ra'siyya, (*հ.*)—*ծառայող օրգաններ, ծալր-անդամներ*:
- Յամպեր (*հ.*)—*նաև Մշրուներ*—*Abelmoschus muschatus Moench.*:
- Յանապիայ (*ա.*)—anabiyyai, (*հ.*)—*ծիածանաթաղանթ*—*Iris*:
- Յանքապուրիայ (*ա.*)—a'nkabūtiya, (*հ.*)—*սարգոստենի, ցանցենի*—*Retina*:
- Յաւարա (*ա.*)—u'sara, (*հ.*)—*քամված հլութ, մզլած ք, նաև՝ քամել, ճմլել*:
- Նաւանի (*ա.*)—nafsānī, (*հ.*)—*շնչական, շունչ*:
- Նիսանի (*ա.*)—nīsānī, (*հ.*)—*երբայցիցիների առաջին ամիսը, պարնանալին հասարակածից սկսած՝ հաշվում է մարտի 22-ը*:
- Նուևայֆար (*հ.*)—*Nymphaea alba L.*:
- Շարայ (*ա.*)—sharay, (*հ.*)—*մաշկի վրա սոսքացած գնդասեղի գլխիկի մեծության ցան, սրբ քոր է գալիս*:
- Շեաարան (*ա.*)—shitaradj, (*հ.*)—*Պղպեղիկ, նվարախոտ, նվարտակ*—*Lepidium latifolium L.*:
- Շիրեան (*ա.*)—shiryān, (*հ.*)—*գարկերակ*—*arteria*:
- Պազիա (*ա.*)—baydiyya, (*հ.*)—*սպիտակուց*:
- Պապ (*ա.*)—bāb, (*հ.*)—*դուռ, սվլալ դեպքում՝ գրուլ*—*pylorus*:
- Պասիլիկ (*հուն.*)—*Բասիլիկ երակ*—*vena basilica*:
- Պուրն (*ա.*)—burdj, (*հ.*)—*կենդանակերպ*:
- Պօաուևիթի ամաղ (*պ.*)—baft-i khunī-i damāgh, (*հ.*)—*ուղեղի արյան անոթներով հարուստ հլուսվածք*:
- Պահման (*պ.*)—bahman, (*հ.*)—*Փշաքեղ*—*statice Limonium L.*:
- Սալիխա (*ա.*)—salikha, (*հ.*)—*Կասի, Ս. Գրիգորի ծառ*—*Cinnamomum Cassia B.*:
- Սահր (*ա.*)—sihr, (*հ.*)—*կախարդված, սվլալ դեպքում՝ ընկնալուրություն*—*epilepsia*:
- Սարվազ (*պ.*)—sarbaz, (*հ.*)—*զինվոր*:
- Սայիմ (*ա.*)—sā'im, (*հ.*)—*քաղցած աղիք*—*intestinum jejunum*:
- Սաքա (*ա.*)—sakta, (*հ.*)—*ուղեղալին կաթված*—*apoplexia cerebri*:
- Սուքպար ուլ լուապ (*ա.*)—thukbat ūl-lu'āb, (*հ.*)—*լեզվի վրա կղած փոքրիկ անցքեր, սրոնցից թուք է հոսում*:
- Սևվաա (*ա.*)—sawdā, (*հ.*)—*սև մաղձ*—*atrabilis*:
- Սուլպիա (*ա.*)—sulbiyya, (*հ.*)—*սկզկենի*—*sclera*:
- Տալեհայն (*ա.*)—ṭālī'a, (*հ.*)—*բախտազուշակություն*:
- Տապաղա (*ա.*)—ṭabaḡa, (*հ.*)—*թաղանթ*—*membrana*:



- Տապաղայ-ի մուլթանիմա (ա.)—tabaka i multahima, (հ.)—շաղկապենի—conjunctiva:
- Տապաղայ-ի դարունիա (ա.)—tabaka-i karniyya (հ.)—հղջերենի—cornea:
- Տաֆ (ա.)—daf', (հ.)—փարատել, մի բանից աղատվել, հեռ մղել, վանել:
- Տեքնաա (հ.)—Cneorum L.:
- Տոգոբ (հ.)—ներծժվող, օրգանիզմից դուրս եկող նյութեր:
- Տպպա (ա.)—dabba, (հ.)—հատուկ պարկ հեղուկ նյութ պահելու համար:
- Փայվանդ (սլ.)—paywand, (հ.)—հողակապ:
- Փերաե (սլ.)—parda, (հ.)—վարագույր, տաղատ, ավլալ դեպքում՝ թաղանթ—membrana:
- Փիճոյ (հ.)—Օսոբ մի տեսակ պտուղ—Abies picea L.:
- Քամուքս (հ.)—պտուղների և բույսերի հյութը, որ ստացվում է ճնշումով, եփելով կամ այլ միջոցով:
- Քարաֆիս (ա.)—karafs, (հ.)—Քեղակարոս, Չիալախոս—Apiummontanum:
- Քամուն (թ.)—kammün, (հ.)—Չաման, Քիմոն—Cuminum Cyminum L.:
- Քարուպար (սլ.)—kährubā, (հ.)—սաթ, բազմազանի ախն:
- Քաֆուր (ա.)—kāfūr, (հ.)—Քափուրենի—Cinnamonum aromaticum:
- Քեղիկոն (հ.)—աղանջակոնքի արտաքին պարարածե մասը:
- Քեսե (ա.)—kāsa, (հ.)—լալն բերանով աման, քլասա:
- Սաարիա (ա.)—'uṭārīd, (հ.)—Փալլածու մոլորակ—Mercurius:
- Ֆազլա (ա.)—iaḡla, (հ.)—մնացորդ, ավելցուկ:
- Ֆարֆիոն (թ.)—farfiyon, (հ.)—Կաղնջան, Աղանդակ—Eupharbia L.:

Д. М. КАРАПЕТЯН

ЕСТЕСТВЕННОНАУЧНЫЙ ТРУД ОВАСАПА СЕБАСТАЦИ  
«ОТМЕННЫЙ ЛЕЧЕБНИК КАРДИНАЛЬНЫХ ВЛАГ»

Резюме

На основании новых рукописных материалов Матенадарана им. Маштоца впервые вводится в научный оборот ценный естественнонаучный труд неизвестного в армянской филологии поэта-миниатюриста Овасапа Себастаци. Основными первоисточниками его лечебника были творчески усвоенные им труды классиков античной и средневековой медицины, а также мыслителей античной и средневековой армянской научной мысли. В своем труде Овасап Себастаци обращается к учению о четырех элементах, которое лежало в основе средневекового естествознания, толкуя его с точки зрения античной науки и видных средневековых армянских естествоиспытателей. Автор лечебника рассматривает на должном научном уровне вопросы эмбриологии, а также анатомии и физиологии внутренних органов. Отдельная глава лечебника посвящена физиологии пяти органов чувств.

Оценив научность труда армянского врача-ученого первой половины XVI в. Овасапа Себастаци, можно с полной уверенностью сказать, что как естествоиспытатель он занимает достойное место в средневековом армянском естествознании.

D. M. KARAPETIAN

L'OEUVRE SUR SCIENCES NATURELLES "TRAITE DE MEDECINE  
SUR LES HUMEURS CARDINALES" DE HOVASSAP SEBASTATZI

## R é s u m é

Se basant sur les nouveaux documents manuscrits du Maténadaran Mesrop Machtotz, l'auteur présente aux spécialistes un précieux ouvrage en sciences naturelles de Hovassap Sébastatsi, poète et miniaturiste bien connu dans la philologie arménienne. Les principales sources de son traité médical sont les oeuvres des classiques de la médecine antique et médiévale, ainsi que celles des représentants de la pensée scientifique arménienne antique et médiévale. Dans son oeuvre, Hovassap Sébastatsi a recours à la doctrine des quatre éléments, qui est à la base des sciences naturelles médiévales, l'interprétant du point de vue de la science antique et de celui des plus importants naturalistes médiévaux arméniens. L'auteur du traité de médecine examine au niveau scientifique requis les questions relatives à l'embryonologie, de même qu'à l'anatomie et à la physiologie des organes internes. Tout un chapitre du traité est consacré à la physiologie des cinq organes de sens.

Appréciant à sa juste valeur l'oeuvre de Hovassap Sébastatsi, médecin-chercheur arménien de la première moitié du XVIe siècle, on peut affirmer sans crainte de se tromper qu'en tant que naturaliste, il a apporté une contribution notable aux sciences naturelles médiévales arméniennes.

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎՐԵԺ ՆԵՐՍԻՍՅԱՆ

(Անգլիա)

### ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԱՅ ԼՈՆԳՈՆԻ ՎԵԼՎՈՄ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ\*

Վելբոմ ինստիտուտի գրադարանը համարվում է բժշկության պատմության և հարակից մասնագիտությունների գծով աշխարհի մեծագույն գրադարաններից մեկը. այն հիմնադրվել է 1890 թվականին Սեր Հենրի Վելբոմի (1853—1936) կողմից: Երբ 1936 թվականին Վելբոմը մահացավ, գրադարանն արդեն ուներ ավելի քան 300.000 անուն գիրք: Գրադարանի կազմակերպումը և հանրային շահագործման հանձնումը տեղի է ունեցել 1949 թվականի դեկտեմբերին:

Գրքերի, նամակների և նկարների հետ մեկտեղ, հաստատությունը ունի նաև արևելյան ձեռագրերի ուշագրավ մի հավաքածու, հիմնականում բժշկության վերաբերյալ:

Այս հավաքածուի մեջ են մտնում նաև 15 հայերեն ձեռագրեր, որոնցից միայն մեկն է բժշկարան: Հայերեն ձեռագրերի գոյության մասին իմացանք, երբ քննում էինք Բոյեռ և Բարբլետ, դեկ. 18, 1906, Ստիվենզ, ապրիլ 14—15, 1931 և Սոքրիզ, փետր. 23—24 և հունիս 8—10, 1931 աճուրդային ցուցակները: Պրպտումները ցույց տվեցին, որ հայերեն ձեռագրերից մի քանիսը ձեռք են բերված հենց այդ աճուրդներից:

Հավաքածուի մեջ կան նաև հայերեն 6 հնատիպ գրքեր, որոնցից ուշագրավ է Պաղտասար Դպրի Քերականության երկրորդ հատորը (Կ. Պոլիս, 1736):

1

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Wellcome Institute, № 56311)

Ձեռ.—1495

Գրիչ՝ Շմաուն: Մաղկող՝ Աբրահամ: Սաացող՝ Նէնայ:

Թերթ՝ 249: Նյուրթ՝ Թուղթ: Մեծուրյուն՝ 18,2×13 սմ: Գրուրյուն՝ երկսյուն:  
Գիր՝ բուրբուր: Տող՝ 22: Մանրանկարչուրյուն—Մատթեոս 2բ, Մարկոս 67բ:

\* Wellcome Institute for the History of Medicine (Library), 183 Euston Road, London, NW1 2BP.

Ղուկաս 110բ, Հովհաննես և Պրոխորոն 185բ (ավետարանիչների պատկերները մակագրված): Կիսախորան՝ 3ա, 68ա, 111ա, 186ա, բուսական ինքնատիպ լուսանցազարդեր և թռչնազիր զարդագրեր. Ավետարանների սկզբնագրերը արված են տվյալ ավետարանչի խորհրդանշանով՝ մարդ, առյուծ, եղև և արծիվ: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառը՝ ծաղկազարդ գործվածք: Կազմի Ա. փեղկին ականակուռ մետաղյա խաչ: Վիճակ՝ կազմի կողի կաշին պատռված, Բ պրակից որոշ թերթեր տեղահանված և դրված վերջում:

### Բովանդակություն

1. 3ա—67բ. Աւետարան ըստ Մատթէոսի:
2. 68ա—110ա. Աւետարան ըստ Մարկոսի:
3. 111ա—185ա. Աւետարան ըստ Ղուկասու:
4. 186ա—243բ. Աւետարան ըստ Յովհաննու:

### Հ ի շ ա տ ա կ ա Ր ա ն

#### Գրչի

243բ. Փա՛ռք... Հստ այսմ արինակի փափաքաւղ եղև աստուածասէր և հաւատարիմ ապաշխարողն Սէնայ (sic), և ետ գրել զաստուածաշու[ն]չ և աստուածախաւս սուրբ Աւետարանս՝ յիշատակ իւր և ծնողացն, ի հալալ յընչից և ի բարեգործ վաստակոց իւրոց: Այլ և կրկին ձայնիւ մաղթանաւք առ ոտս ձեր անկեալ աղաչեմ, յիշեցէք ըզվերջին Նէնայ՝ ստացաւ գրոցս, զնէնա յապ[աշ]խարողն... և զեղբայրն իւր Բաղշիկ և զկողակիցն իւր՝ Խարունմէր, որդին իւր՝ Նղիշա, Մելիֆշայ, Նղիայ, Սաեփանոս, Դաւիթ, Պապոս, և զամենայն արեան մեր[ձ]աւորս յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զքեզ յիշէ: Արդ, եղև զբաւ գրչութեան Աւետարանիս ի թուականութեան Հայկազեան տումարի ԶԽԴ (1495) ձեռամբ անպիտան Շմաւոնիս...

#### Ծաղկողի

2բ (Մատթեոսի պատկերի տակ). Չանարժան Աբրահամս յիշեա և ասա Տէր ողորմիեա:

#### Հետագայի

247ա. Դարձեալ յիշեցէք և Աստուած ողորմիա ասացէք տէր Կարապետին և իւր կողացուն՝ Աղաբէկուն, և իւր որդոյն՝ Յակոբ սարկաւազին, որ փոխեալ է առ Քրիստոս, և ծնողացն՝ Կարապետին, մօրն՝ Ինախին և այլ ամենայն արեան մերձաւորացն, և փոքր որդոյն՝ Սուփիասին և դստէրն՝ Նուբարին. յիշեցէք և Աստուած ողորմիա ասացէք, և Աստուած ամենայն յիշողացդ ողորմեսցի իւր միսանկամ զալքստեանն. ամեն:

247բ. Փառք... Ես Մկրտիչ երէցս, ի բաղաբէն Մարաղու, ի գեղջէն Բաֆղուրա, առի զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ և ծնողացն իմոց, հօրն իմոյ՝ Խլղաքին և մօրն իմոյ՝ Բաղգային, և Եխբօրն իմոյ՝ Յակոբին, Փանոսին և Բաղասաւրին, և իմ կողակցուն՝ Խանումին, և որդոյն

իմոյ՝ Մեսրոպին, և եղբորորդոյն իմոյ՝ Ղուրասարին, և այլ ամենայն արեան մերձատրացն իմոյ: Որք (sic) շունի իշխանութիւն ի վերայ սուրբ Աւետարանիս, զի իմ է, ի հալալ վաստակոց գնեցի զսա ի թվականութեանս Հայկազան տօմարի ՌՃԺ և Զ (1667), ի հայրապետութեան տեսոն Յակոբա և առաջնորդութեան մերում նահանգի՝ Իսահակ բարունապ[և]տի՝ առաջնորդ Սրբոյ առաքելոյն Թաղևոսի:

248ա. Յիշեցէք ի Քրիստոս զՄարգարիտն, որ Բ զոռոշ Աւետարանին գինք էրետ, Աստուած զուր մեղս թողնէ ամենայն: Յիշեցէք [Ի] Քրիստոս զՅովանէս, որ մասնակից եղաւ Աւետարանիս առնելուն ահիւ մեղոք...

249ա. Թվին ՌՃՀէ (1728) մարդի Ժ(10): Ես տէր Մկրտիչի որդի Մեսրոբըս սուրբ Աւետարանըս առել էր իմ հայրըս... իմ Եխպօր որդի Մարտիրոսին. յիշատակ զարդան ինձ ողորմի... էս շի ծախվի, ով որ ծախի զամ գողանայ, պատիժ առնի:

(Տարբեր գրիչ) Ես տէր Պետրոսըս տէր Սարգիսի որդի Ղսանդայեցի տվեցի այս Ավետարանս տէր Մկրտչին, ով որ |||

185ա. Փա՛ռք... Դարձեալ յիշեցէք Խոնազիզ որդի Սեանին, տէր Մարէոս Խոնէն և հանգուցեալ տէր Մարէոս և կողակից Մասում փաշայ և որդին նորա՝ Գիգոր, Սարգիս, Շահազէն, Մարգարէն, և որդիս նորա՝ Հայրապետն, Գուգին, Խարուազին. ամէն: Հայր մեր որ երկ...

Կնքադրոշմ՝ 2բ, 248բ. «Քրիստոսի ծառայ տէր Մինաս. ՌՃՂէ (1748)»:

1ա, 247բ, 248ա. գրաքննչական սյարսկերեն կնքադրոշմ՝ «Թավրիզ. ստուգվեց և քննվեց, 1315 (1935)»:

Տե՛ս Sotheby & Co. Catalogue of a fine collection of Persian pottery, also oriental manuscripts and miniatures, textiles, carpets, works of art, etc. February 23–24th, 1931. Lot. 204. D. 15.

## 2

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Wellcome Institute, № 75535)

ԺԶ—XVI

Թերթ՝ 141: Նյութ՝ մագաղաթ: Մեծութիւն՝ 7,5×5,5 սմ: Գրութիւն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25: Մանրանկարչութիւն—խորան՝ 1ա, 131ա: Ունի բուսական լուսանցազարդեր և թռչնագիր զարդագրեր: Մարկոսի և Ղովասի ավետարանների զարդագրերը արված են տվյալ ավետարանչի խորհրդանշանով: Վիճակ՝ քայքայված. սկզբից և վերջից՝ պակասավոր, եզրերը՝ պատուված, թերթերը՝ խախտված, գիրը՝ գունաթափ:

## 3

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Wellcome Institute, № 16585)

ՌԶԵ—1636

Գրիչ՝ ներսէս:

Թերթ՝ 270: Նյութ՝ մագաղաթ: Մեծութիւն՝ 14,3×10 սմ: Գրութիւն՝ երկ-

սյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 25: Մանրանկարչություն—Մատթևոս՝ 20բ, Մարկոս՝ 92բ, Դուկաս՝ 140բ, Հովհաննես՝ 213: Խորան՝ 7բ—16ա (Եւսեբիոսի թղթով և համաբարբառ կանոններով): Կիսախորան՝ 21ա, 93ա, 141ա, 214ա: Բուսական լուսանցազարդեր և թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ դրոշմազարդ կաշեսպատ տախտակ, աստառ՝ դեղին մետաքս: Վիճակ՝ բավարար:

### Բովանդակություն

1. 17ա—18բ. Գլուխք Աւետարանին ըստ Մատթէոսի: 21ա—90ա. Աւետարան ըստ Մատթէոսի:
2. 90բ—91ա. Գլուխք Աւետարանին ըստ Մարկոսի: 93ա—137բ. Աւետարան ըստ Մարկոսի (չիք՝ «Յարուցեալ Յիսուս»):
3. 138ա—140ա. Գլուխք Աւետարանին ըստ Դուկասի: 141ա—211բ. Աւետարան ըստ Դուկասի:
4. 212ա—բ. Գլուխք Աւետարանին ըստ Յովհաննու: 214ա—267ա. Աւետարան ըստ Յովհաննու (ունի՝ «Իբր կնոջն շնացելոյ»):

### Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

#### Գրչի

Ի տասն հարիւր Հայոց թվական,  
 Ութսուն ու հինկ սկսեալ նոր ամ (1636),  
 Մատեանս գրեցաւ տէրունական,  
 Որ յորչորջի Աւետարան:  
 Եր յամսարեալ ունի յինքեան  
 Ըղղւոյ վերիչին ներմարդութեան,  
 Ըղջանս և զգործքս զանազան,  
 Շարայնանալ յոյժ հրաշագան:  
 Ի յիշմանէ Աստուածքն Բան  
 Ի ծոց կուսին լոյս հայրական.  
 Զբարակին են զուգական:  
 Իսկ արծրին ի շտուշման  
 Հրեչէ բզմբնունդն անճառական,  
 Ըղբանքն հօր որ ի սկրդրան  
 Որտաւորվ ցօղէ մարդկան:  
 Զահեղ ծրնունդն հայրական  
 Սայ բարոզէ առ անձնական,  
 Հօր ծոցածին անգատական,  
 Անմայր անախտ անհասական:  
 Այլ և շորիցքն միարան,  
 Համանգամայն շարադրութեամբ  
 Գասմօղ եղեալ Բանին իշման  
 Սահա խաշի և յարութեան:  
 Եւ գհամբարձունն առ հայր դարձման  
 Դուկասս պսամէ մեծ վիզասան,  
 Այս մարգարտի անդին ական  
 Գալձառ ոսկոյ սոփեբական:  
 Ուրն կըցարդ գոլով անուան  
 Տարսնացոյն համակոշման,  
 Եաղձանք շարժեալ ներբուսական,

Իբր իմաստուն վաճառական:  
 Ստացաւ զսալ զանձ անզուգական  
 Զարմ ի Սիոն երանութեան  
 Եւ Մարգարիտ գեղեցկական  
 Իսկոյ յեռեալ գոյն զանազան:  
 Եւ յիշատակ բարի յինքեան,  
 Եւ ծընողաց առու արեան  
 Համայնգամայն բոլոր ծնընդեան,  
 Ազգատո՛միցրն միարան:  
 Արդ աղաչեմ զամենեսեան,  
 Դրք հանգիւղիք յայս երեխան,  
 Եւ ի խորտակացքս զանազան,  
 Լըցեալ լինիք անմահական:  
 Մինչ ի դարձումըն միւս անգամն  
 Անդրէն յախոս իւր սեփական,  
 Զորեք կարեան ականց նրման  
 Որ էր ի յանջն ա՛նարոնեան:  
 Քառեակ թրվոլըն պատուական  
 Անգին ակունք սոփերական,  
 Զորից գետոց համանրման,  
 Մեզ յոռոգումըն զովացման:  
 Համայնատակ յոյժ ցարարեան  
 Բարձօղ կառացն աստուածութեան,  
 Այլ և շորից տարեցրս բան,  
 Նիւթ գոյութեան նորոյ ստեղծման:  
 Եւ շորս հիւթոցըն խաորնման,  
 Պատճառ կենաց ի մեզ իջման,  
 Այսպէս կրրկին կառք գաբարեան  
 Լըծեալքըն կան յայս խորհրդեան:  
 Եւ շորս հիւսունք շինողական.  
 Նոր զաճարիս նոր նորոգման,  
 Եւ շորք եղչերք մեզ զօրութեան  
 Զորեակ ախախցրն սատակման:  
 Քառակուսի ծագաց սահման,  
 Քառեակ գետոյիս կան ոռոգման,  
 Քառանիւթով բնութեան մարդկան,  
 Սովաւ գմայլեալ զըւարթանան:  
 Քառեակ հողմունք քառեակ կոշման  
 Սովաւ հընչեալ ի մեզ իջման,  
 Կենդակենաց արեգական.  
 Շողք եռակի լուսոյն շրջման:  
 Զըւարակացն երկոյտասան,  
 Բարձօղ զխորհուրդ նոր ծընընդեան,  
 Յիմանալի լուսոյն իջման,  
 Սկիզբն արարեալ մարդեղութեան:  
 Մարդն և առիւծըն միարան  
 Եւ ի գինոյս ուրախական  
 Զմայլելիք ճրմլեալ նոր խաորնման:  
 Ստացօղ տառիս այս վեհական,  
 Բարոյ յիջման առնէք արժան,  
 Սովաւ ցընծալ այժմ յաւիտեան,  
 Եւ ուրախանալ անեղրական:  
 Հուսաւորեալ զողիս մարդկան,  
 Որք ի խուար մեղաց նըստան,

Հարբեալս զինովն լիմարական՝  
 Հարբեցանէ ի յայս խրթան:  
 Եւ զգլորեալսն անկանգնական,  
 Տարուցանել սովաւ անկման,  
 Եւ ըզբեկեալսն խորտակման՝  
 Առողջ գործել ի յարշուման:  
 Զհոգիս սրգեղ անմարբական  
 Զբքնաղազարդ պրճնեալ փայլման,  
 Աննուլ զպսակն երանական,  
 Լրսել ըզձայն բաղցր կոշման.  
 Եկայք, օրհնեալք հօր սեփհական,  
 Ժառանգ բարեացն անկրական,  
 Վայելեցէք անզրաւական,  
 Յանկէտ անեզր և յախտեան:  
 Եւ զճեղուցեալ ոգի նրնջման,  
 Գասեալ ի դասս յաշակողմեան:

5ա. մակագրված՝ «Ս. Լուսաւորչայ»:

Տե՛ս Messrs F. W. Bowyer and Bartleet. Catalogue of Oriental paintings, manuscripts, old arms, etc. December 18th, 1906. Lots 164—166.

Ծանթ. Այս վաճառքի ձեռագրերը շին նկարագրված:

## 4

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Wellcome Institute, № 74294)

Հարար

ՌՃԺԹ—ՌՃԻ—1670—1671

Գրիչ՝ Պաղտասար դպիր: Ստացող՝ Եղիսարէթ:

Թերք՝ 271: Պրակ՝ Ա.-ԻԱ.: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 19,8×15 սմ: Գրութիւն՝ Երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 22: Մանրանկարչութիւն—Մատթևոս՝ 2բ, Մարկոս՝ 77բ, Ղուկաս՝ 127բ, Հովհաննէս՝ 208բ: Կիսախորաններ՝ 3ա, 78ա, 128ա, 209ա, բուսական լուսանցազարդեր և թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ շրջանակով հյուսածո խաչ պատվանդանի վրա, կաշվե ամրիչներով, աստառ՝ դաջված կտավ: Վիճակ՝ բավարար. թերթերը մասամբ ձեթոտված:

## Բովանդակութիւն

1. 3ա—76բ. Աւետարան քստ Մատթևոսի:
2. 78ա—126բ. Աւետարան քստ Մարկոսի (շիթ՝ «Յարուցեալ Յիսուս»):
3. 128ա—207բ. Աւետարան քստ Ղուկասու:
4. 209ա—268ա. Աւետարան քստ Յովհաննու (շիթ՝ «Իրք կնոջն շնացելոյ»):

Հ ի յ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

207բ. Պաղտասար անարժան գրիչս յիշեցէք, և Աստուած զձեզ յիշէ. ամէն: Թվ. ՌՃԺ և յինին (1670):



268ա—270բ. Փառք եղակի եռահիսակ դաւանութեանն... Արդ, գրեցաւ կենսարեր սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ և սուտանուն Պաղտասար դպրի, ի թուարերութեանս Հայոց ՌՃԻ (1671)-ին, ի յերկիրս Հագարեան, ի գեօղս որ կոչի Հարաւ, ընդ հովանեաւ Սերոյս Ստեփաննոսի, ի հայրապետութեան տանս Աղւանեաց տեառն Պետրոսի և բաղմահանճար կաթողիկոսի, և բոնակալութիւն տաճկաց Շահ Արլեմանին: Ի յայսմ աստուածախումբ տառիս ցանկացող եղեալ ի հոգւոյն սրբոյ յեռացեալ և զմտաւ ածեալ զբանն Սողոմոնի որ ասէ. Երանի որ ունիցի զուակ Սիոնի և ընդանիք նորա յերուսաղէմ: Զի այս երանելի և բարեսէր գինս Եղիսաբէր զստացող եղև այսմ աստուածախօս և անգին մարգարտիս և սուրբ Աւետարանիս. բարի յիշատակ իւրըն և ծնողաց, հօրն՝ Խօնին և մօրն, և կենակցին՝ Միքայիլին, և դստերըն՝ Կօզալին, և Միֆայէլին. հայրն՝ Աւագին, և մօրն՝ Կօզալին և Միֆայէլին, քոյրն՝ Խանումին: Դարձեալ յիշեցէք զԵղիսաբէրն և զՄեֆայէլն և իւր ամենայն ազգայինսն. զհանգուցելոցն արքայութիւն պարգևեսցէ և զկենդանիքն՝ անսասան պահեսցէ մինչև վաղճանն իւրոց. և յետ աստեացս ելանելոյ՝ ընդ սրբոյն իւրոյ դասակցեսցէ. ամէն. Եւ դարձեալ զայս խնդրեմ ի ձեռն, հարբ իմ և եղբարբ, զի յորժամ ի ձեռս ատնուք կամ տեսութեան և կամ օրինակելոյ, յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյ գրեալսն և ընդ նոսին և զմեղսամած գրչակս աղաչեմ յիշել ի Տէր միով ողորմիաւ հանդերձ ծընօղօք. զյիշողիդ յիշեալ լիչիք զտէր Աստուծոյ մերմէ. ամէն: Հայր մեր որ...

### Հետագայի

27բ. Յիշեցեք դուստա Մարգարէս, որ զՄիֆայէլին փեսայ էր. որ Միֆայէլն, իւր կողակից զԵղիսաբէրն առ Քրիստոս են փոխե[ա]լ, որ անգին մարգարտիս վերակացուն այս էր, որ պահամ ի լաւ. յիշե[ա]լ լիչիք զյիշողդ. ամէն: Հայր...

2ա. և 270բ. Գրաքննչական պարսկերեն կնքադրոշմ՝ «Թավրիզ. ստուգվեց և քննվեց»:

Տն՝ Sotheby & Co. Catalogue of valuable printed books, autographs, letters and historical documents, oriental drawings and manuscripts, etc. June 8—10th, 1931. Lot. 109.

### 5

Բ Ժ Շ Կ Ա Ր Ա Ն

(Wellcome Institute, № 66855)

Կաստանդոնուպոլիս

1802

Գրիչ՝ Գրիգոր Նիշաստաճեան: Թերթ՝ 70: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 25 × 16,5 սմ: Գրութիւն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր: Կազմ՝ կաշեպատ թուղթ: Վիճակ՝ բավարար:

Բովանդակութիւն

1. 1ա—49ա. Դեղորայք բիմիականք և գաղենականք՝ հաւաքեալ ի գրոց Կապեղեան Յօհաննու: Թարգմանութեամբ և աշխատասիրութեամբ ի լոյս ածեալ

ի Գրիգորէ նիշաստանեան, ուսեալ ի Թրեւր աւանի, խնդրանօք և ծախուք մեծառու բժշկին պարոն Բաղասացի ազնուական Յովսէփայ ի Կոստանդնուպօլիս, ի 1802:

— 2աբ. [Կանխարանութիւն]—Մեծի յարգութեան արժանաւոր քաջագնիտեանդ: Նախանձելի իմաստութեանդ բորբոր ի բժշկական մակացութիւնս, յորդորեաց զմեզ ի սոյն աշխատասիրել... Ազնուութեան ձերում մնամ յամենայնի պատրաստական՝ Գրիգոր նիշաստանեան նուաստ ծառայ:

— 3ա—45բ. Յառաջ քան սկիզբն անուլս գրել, կամեցար համառօտիտանել զօրինակ նշանագրաց...

— 46ա—49ա. Յանկ գրելոց (այբուբենական)—Այբօղ դեղ՝ 39, 60, 61, 48... Յրենկի բորին, որ հին է՝ 22:

2. 51ա—70ա. Բացատրութիւն իտալական բառից խոտոց տնկոց ծաղկանց ի դեղոց. ի լատին ի տանիկ ի հայ՝ իտալերէն արութայից կարգին:

Ահա այսու կարգաւ դասատրեներ զբացատրեալ բառոց.

Իտալերէն	Լատիներէն	Տանկերէն	Հայերէնն
Ապիէիէ	ապիէս	բատրամ աղանը	եղենափայտ

(768 բառ է):

6

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ւ  
(Wellcome Institute)

ՌՃԽԲ—1693

Գրիչ՝ Աղէքսանդր: Ստացող՝ մահդասի խոջա Աւետիք:

Թերթ՝ 228: Պրակ՝ Ա.ԺԹ: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 16×10 սմ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 20: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառը՝ ծաղկավոր կարմիր կտավ: Վիճակ՝ բավարար. սկզբից մի քանի թերթ ընկած: Թանաքի կաշտնությունից շատ թերթեր կպել են իրար և անջատման ժամանակ վնասել առանձին տողեր և բառեր:

Բովանդակութիւն

— 1ա—2ա. [Յանկ ՄԹ գլխոց գրոց Վարուց Յովհաննու Ոսկերեւանի—...]: Ա. Յաղագս զբազարտութեան Իսիդորոսի քահանայի և այլոց, զոր արար Թէոփիլոս... ՄԹ. Յաղագս սքանչելեացն որ եղև ի սուրբ նշխարացն Յոհաննու, և վերջ պատմութեանս:

1. 2բ—199բ. [Պատմութիւն սբոյն Յոհաննու Ոսկերեւանի... Ա. Յաղագս նախերգանի գրոյս]—Ամենեքեան որք ի հնումն գրողք եղեն...

— 200աբ. Յաղագս յիշատակարանի և քաղցմանութեան գրոց—Յամի հազարերորդի և հարիւրերորդի և միոյ ամի Աստուծոյ մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստենէն, և ի հինգ հարիւրերորդի և ի յիսուներորդի ի մերում թուականութեանս, և ի տասն և եօթներորդի ամի թագաւորութեան Կամեննոսի

Ալէքսի բոնակալի, ևս՝ Գրիգորիս, որդի Գրիգորի Մագիստրոսի Հայկազնոյ Պարբե, ըստ ժառանգութենէ Պահլաունիս, ըստ գեղ[ընտիր] լինելոյ յազգէ Արշակունիս, որ ողորմութեամբն Աստուծոյ կոչեցայ ի դիտապ[ետութիւն Ասքանազեանս], ի բնիկ յաթոռ հայրապետութեան նախնեաց իմոց, որ և բազում նեղութեամբ [կրեալ մեր] յայլասեռ ազգաց հեթանոսաց և [բնակաց]: Եւ սպա ի յառաջ[աս]ացեալ ամս հաստատեալ ի սուրբ լեառս, զոր Աեաւն կոչեսցեր սեփական պարգևական եկեղեցիքն յու[խտն սուրբ], զոր ըստ ասորի բարբառոյ Պառ[լահոյ կոչի], որ թարգմանի՝ դրախտ Աստուծոյ: Եւ[անդ է] և Զ ամի մերոյ աթոռակալութեան [թար]գ[մա]ն[ե]ցի զվարս ճգնու[թեան] մեծ և սքանչելի առնն Աստուծոյ Յոհաննու Ոսկիբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի, ի ձեռն առն միոյ, որում անունն էր Թէոփիստայ, ազգուալ յայն: [Եւ ապա] ետու վերստին արծարծել զսա ի [տարա]բան և օտարաձայն բայից և բառից առաջին թարգմանութեան, [ըստ] գրոցն իմաստից: Միաշար տողելով ի ձեռն Մատթէոսի եպիսկոպոսի, որ սնեալ [և վարժեալ էր ընդ մերով] ձեռամբ: [Արդ, որք մտադրութեամբ ընթեռնուք զվարս սրբոյն և կամ ընդօրինակէք գրչութեամբ, աղօթից մասին արժանատրեցէք զառ հասարակ աշխատողքս, որպէս] զի աղօթիք սրբոյ հայրապետին ընկալցուք մասն [ի յարութեան] նորին: Արդ, աղաչեմ զօրինակագիծ գծողս[դ], այլ և հրաման պատուիրանի աւանդ[եմ. մի՛] որ իշխեսցէ հատանել [զյիշատակարան] աշխատողացս, զի մի՛ և ինքն [չնչեսցի ի դպ]րութենէն կենացն. ամէն:

2. 201ա—208բ. Յարմարեցաւ զովեստ ներբողեան ի սուրբ Աստուածածինն և ի ձնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տէր Առաքել վարդապետէ—Զբերան իմ բացից յօժարութեամբ կամաց... Քաղցրաձայն երգով փառաւորեմք...

3. 209ա—217ա. Գովեստ ոտանաւոր ի սուրբ Աստուածածին կոյսն Մարիամ, ոգեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց եպիսկոպոսի և շնորհալից վարդապետի—Աստուածածին կոյս պատուական / Ըօր Աստուծոյ խորհրդարան...

— Յարմարեցաւ ճառս ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և յայտնութեան փրկչին Յիսուսի և զովեստ տիրամայր սուրբ Աստուածածինն, ի բազմամեղ Առաքել վարդապետէ, ի նորաշէն յանապատիս, զոր յանուն Սրբոհոյ Աստուածածինն և Յոհաննու Կարապետին, ի թուարեութեանս Հայոց ութ հարիւր ութսուն (1431): Ասացաւ շնորհօք տեաան մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յախտեանս:

4. 217բ—222ա. Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան— Ի յութ հարիւր և իննսուն (1441) թուականիս մեր, ազգեցութեամբ Ըօղոյն Սրբոյ, հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ և միաբանութեան ամ[ենայն] Հայոց նստաւ կաթողիկոս ի սուրբ էջմիածինն սքանչելի և փառաւորեալ այրն Աստուծոյ զտէր Կիրակոս պատրիարկ և հայրապետն ամենայն Հայոց... Տասներորդ. լրումն եհաս ժամանակի փրկութեան ազգիս Քորդոմեան: Վա՛յ, վա՛յ, վա՛յ բիրաւոր բիրօք անգամ, զոր ինչ առն կարգուի:

Գրեալ ասացաւ ի ճափս աւելորդօք—տեսանեմք բազում այլ ամկիս:

5. 222բ—227ա. Վարժ անկարգ կաթողիկոսաց ի Բուզանդէան վիպագրութեամբ: Յաղագս վարուց Զաիմաց—Եւ էր Զաւենս այս անուանի դաւակ Աղբիանոսի եպիսկոպոսի, ի գեղջէ Մանազկերտոյ... վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն յայնմանէ: Սահակ Կորնէից, Ասպուրակ Մանազկերտացոյ, Յովհաննես:

## Հ ի շ ա տ ա կ ա Ր ա ն

## Գրչի

2բ. Բարեաց ամենից առաջնորդ Սուրբ Հոգի Աստուծոյ, առաջնորդեա ժխտող և դատապարտեալ ծառայի քո՝ տէր Աղէֆսանդրի, հասանել յաւարտ գրիս:

208բ. ... Գթա ի հոգի հանգուցեալ ծառայիս՝ մահգասի խօջայ Աւետիփին և իւրոցն ամենայնի, որոյ էր օրինակս:

217ա. Յիշեցէք ի Քրիստոս զարժանին յիշատակի զմահգասի խօջա Աւետիփն՝ զտէր օրինակիս, հանդերձ իւրովքն ամէն:

227աբ. Աւրհնեալ, գովեալ և փառաւորեալ անբնին էակ, անզնին գոյակ և անհաս գոյակ, անճառելի և եռանձնեալ, Սուրբ Երրորդութիւն և միասնական աստուածութիւն՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի: Գոհութիւն և երկրպագութիւն անբաւ բիւրօք մատուցանեմ քեզ մեղաւոր շրթամբք և տայտամ լեզուաւ, որ ետուր կարողութիւն դատապարտեալ ծառայիս քո՝ տէր Աղէֆսանդրի, շանարժան բանի պաշտօնէի անուամբ [այ]ցելուիս, հասանիլ յաւարտ տառիս, զոր ծրայրեալ դրոշմեցի զսա մեղսաթառաւ անձամբս, աղգեղաշաղախ ձեռօքսն և մեղ[նա]ներկ մատամբս, և բնծայեալ նուիրեցի զսա խայրիս խորհրդ[գական] և... համունս նուիրական անպակաս գանձույա կաթողիկէ առաքելական եկեղեցոյ: Ընկալ քեզ ի հաճոյս զսակաւագիծ աշխատութիւնս իմ և եթէ ոչ ընդ կատարեալսն, այլ իբրև զլոմա այրոյն, և կամ ընդ բաժ մի ջրոյն, զոր և ալն ունելով սպասեմ փոխարինացն. յանճառական գթութեամբ մարդասիրութեամբդ շնորհել մեղաց թողութիւն կարելէր խոցելոյս կրկնակի մարդով, և ծնողացն իմոց՝ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ, և որոց ունին զերախտիս և զաշխատանս ի վերայ մեր, այլ և ամէնից բրիստոնէից՝ ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց, բարէրարաց և շարարաց, նաև որոց ունին ոխս ի սրտի յաղագս իմոյ անզգամութեամբ, և որ շարիս խորհին, խօսին և գործեն ընդդէմ իմ, մի՛ համարեսցի այն նոցա ի մեղս, այլ ընկալցին մասն բարեաց յաւուր յարութեան և արքայութեան. ընդ նոսին և համօրէն աշխատողաց ի սմին, և զօրինակն շնորհողի. ամէն: Եղև յաւարտումն յուլիս ԺԳ (14) ՌՃԽԲ (1693) թուին:

7

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ւ

(Wellcome Institute, № 66373)

1795

Գրիչ՝ Խաչատուր զպիր Կեսարացի:

Թերթ՝ 79 (գրչի էջակալմամբ՝ ա-ճժէ). շարված՝ 1-լա, ծ-ծք: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 21×16 սմ: Գուրջութիւն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 22: Մանրանկարչութիւն—Կենդանակերպ՝ էջ ա, Աստղագետ դիտակով և կշռով, գրչիսովերևում կենդանակերպեր՝ էջ լբ: Ունի բուսական լուսանցազարդեր և թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Վիճակ՝ բավարար:

## Բովանդակություն

1. էջ ա-իզ. Յաղագս երկնային շարժման. նուստ Յոհանէսի երզրնկաց-  
ույ շարադրեալ յիմաստնոց բանից՝ ի խրնդրոյ բարեպաշտ և երկիւղազարդ  
պատանոյն պարոն Վաղբանկա(զլ. Ա.-ԻԴ)—Ամենայն որ որ զԲան, որ է  
ծնունդ...

2. էջ իէ-իբ. Վասն թուոց աստեղաց կենդանակերպից—Խոյն որ իշխան է  
ամպրոպայ, / Տասրն և վեց աստղ կայ ի նրմա...

3. էջ իբ-իթ. Վասն ընթացից արեգականն առ կենդանակերպսրն—Այլ և  
յայտնել մեկնեմ զայս բան, / Յատուկ յատուկ առանցնական...

4. էջ լզ-խթ. [Յ]անուն ամենակալին Աստուծոյ, որ շնորհեաց մեզ զաս-  
տրղագիտութիւնս զայս, թէ որով կենդանակերպով գրտան ըստուգապէս զերկ-  
րաշափութիւնս և արհեստից հաննարս և ամենայն գործքս հրամանատու և գո-  
ղոց յայտնիչս ի գանձուց: Եւ Քրիստոսի փառք յաիտեանս. ամէն:

5. էջ ծթ-ճծգ. Յաղագս երկնային աստեղաց, որ ցուցանէ զանազան զօրու-  
թիւնս և պէսպիսութիւնս (զլ. Ա.-Խէ)—Պարտ է գիտել նախ աստեղաց խիրանն  
և գուշակումն նոցին...

6. էջ ճծդ. Վասն ժԲ կենդանակերպից՝ որն որ գոյն է կամ զինչ բաժին  
ունի յերկինս:

7. էջ ճծե. Նարիստուլ գլուխ վիշապին այսպէս արայ—Կալ ըզՀայ թվա-  
կանն մերբեզին:

8. էջ ճծզ. Ամսովրն Տանկաց ծրնունդ լուսնի ցուցանէ:

9. էջ ճծէ. Ամսամուտ Տանկաց սոյնպէս արայ—Կալ զգիր տարոյն...

## Հ ի շ ա տ ա կ ա Ր ա Ն

## Գ Ր Ն Ի

էջ իզ. Վերջ գրոյս... որ և շարադրեալ եղև Ովանէս Մործուեցոյ հոգէլից  
և իմաստուն վարդապետին:

Ընդարինակեցաւ և գրեցաւ ձեռամբ Կեսարացի սահաթնի մահտեսի Խա-  
շատուր դպրի, ի թվին Քրիստոսի Տեանն մերոյ և փրկչին 1795 ամին, որ և  
յիշեսցիք ընդերձողդդ ի բարին, և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի Աս-  
տուծոյ մերոյ. ամէն:

## 8

## Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

(Wellcome Institute, № 16345/17074 M. S. C. 41. J)

Սերաստիա

ՌՄԽԶ-ՌՄԽԷ—1797—1798

Գրիչ՝ Մինաս արեղայ:

էջ՝ 172+90: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 23×16,5: Գրություն՝ միասյուն:

Գիր՝ նոսր: Տող՝ 33: Մանրանկարչություն—Ս. Երրորդության պատկերը՝ Հի-

սուս խաչք ձեռքին, Հայր Աստուած և նկարի ներքեր Աստուածածինն երկու հրեշտակներով: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ: Վիճակ՝ բավարար:

Մանր. Բաղկացած է նույն Մինաս գրչի ձեռքով գրված 2 առանձին մասերից. առաջին մասը (էջ 1—172, § Ա.) գրված է 1797-ին, իսկ երկրորդ մասը (էջ 1—90, §§ Բ-Գ)՝ 1798-ին:

### Բովանդակություն

Ա. 1—172. Բանք և նառք սրբոց տօնախմբութեանց, արարեալ գերյարգելի Յակոբ կրօնատրի արհիեպիսկոպոսի, ի կարգէ ֆարոզդաց: Բանք ոսկիական յաղագս գլխատր սրբոց տօնախմբութեց, զորս հոշակէ եկեղեցին: Ի հնութենէ և անքի սխալանց սրբագրելիք եղեն ի ձեռն այլ գերյարգելի կրօնատրի, որ կոչի Ռատուֆիս մականու[ա]մբ Կլուդոս ի նոյն կարգէ և կրօնէ Տօմինիկան ֆարոզդ[ա]ց: Նոր նշանախեցիւք և թուահամարիւք ի լուսանցս, և ամենանոյս ցանկով իրաց:

—172. Համառօտ ցանկ գլխոց, հանդերձ քղրահամարովն ըստ այրութենից:

Բ. էջ 0ա—58. Տետր՝ հաւաքեցեալ ֆարոզ սրբոյն Գրիգորի Տաքեացոյ և այլոց:

1. էջ 0աբ. Նախերգանք ֆարոզի. արարեալ աստուածարան վարդապետաց:

*Ընդհանուր խորագիրն ու նախերգանքը բովանդակող թերթը (էջ 0ա, 0բ), առանց համարակալման, սխալմամբ տեղադրված էջ 58-ից հետո:*

2. էջ 1—7. Հաւաքեցեալ ի յումեմնէ լոկ անուն Պետրոս արեղայէ: Քարոզ վասն ողջունատուութեան—*Որպես ասէ Տէրն առ աշակերտսն իւր պատուէր տալով նոցա. եւ իբրև մտանիցէք ի տուն, ողջոյն տաշիք նմա և ասացէք. Ողջոյն տանս այսմիկ...*

3. էջ 7—16. Քարոզ Գրիգորի Տաքեացոյն վասն տասն հաւուածոցն եգիպտոսի, ի բան իմաստնոյն որ ասէ. Որով մեղանչէ ոք՝ նովիմք և տանչի (Ամառան հատոր, Ե):

4. էջ 16—26. Նորին սրբոյն Գրիգորի Տաքեացոյն Քարոզ և խրատ ամենայն մարդկան, ի բանն օրի. 15. 9: Հայեաց ի ֆեզ՝ զուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում (Ամառան հատոր, է):

5. էջ 26—48. Նորին սրբոյն Գրիգորի Տաքեացոյն Քարոզ վասն տարածամ մահու, ի բանն Իմա. 1. 13: Աստուած զմահ ոչ արար. նախանձո[ւ] բանաւրկուին եմուտ մահ յաշխարհս (Ամառան հատոր, ՀԱ):

6. էջ 49—53. Քարոզ սրբոյն Գրիգորի Տաքեացոյն վասն կարգաց ազօրից, ի բանն. Տէր եթէ զչրբունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո (Ամառան հատոր, ՉԳ):

7. էջ 54—56. Ի Մեկնութիւն Յայտնութեան որ ի Կուռնէլիոսէն Ալֆապետէն ժողովեալք պիտանացու գլխատր բանք այն ինչ կամ այն ինչ:

8. էջ 57—58. Յաղագս ողջունատուութեան առ հաւատացեալս Քրիստոսի:

9. էջ 59—90. [Տաղարան]:

1. էջ 59—85. Տեան ներսիսի սրբազան եպիսկոպոսապետի եղբօր Տեան

Գրիգորիսի Հայոց կարողիկոսի, Բան բառանական, տառի շափեալ հոմերական, խոսեալ բանի ողբերգական վասն Եղեսիոյ մեծի առման, ի բուականի հինգ հարիւր և իննսուն ընդ երեքի, Բասն և երեքն ղեկեմքերի, յերուող ժամու օր շարաբու—*Ողբացէք եկեղեցիք, հարսունք վերին առագաստի...*

2. էջ 85—88. Մերոյն Կիրակոսի Քարբուզիանի ասացեալ ոտանաւոր վասրն շորից վերջնոց մարդոյն, որք զարբուցանեն զմարդն ի յապաշխարարին—*Մարդ արարեալ ի յԱստուծոյ, / Վասն է՞ր մարմնի մահկանացոյ...*

3. էջ 88—89. Տաղ աղերսանաց առ սուրբն Յովսէփ Աստուածահայրն—*Աստուածահայր Տեառն Յիսուսի, / Որդի Դաւթի մարգարէի...*

4. էջ 89—90. Երգ ի վերայ աւաղելի Սիս, աւարեալ յումեմնէ բանասիրէ ի Կոստանդնուպոլսոյ Յարութին զպրէ, եւ ի նորոգ սրբագրեցեալ ի Խաչատուր վարդապետէ Կեսարացոյ—*Մենացիր անձն իմ խղճալի, ի բազմութեանց լեալ ի բաց, / Յումմէ յուսա[ս] զբարութիւն, բարիպաշտօն շիմընաց...*

## Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

### Ա մասի

էջ 1. Օգնեա, հոգիտ սուրբ Աստուած և հասո զսկսեալս աւ[ա]րտ:

էջ 172. Ի վայելումն Մինաս արեղայի, միաբան Մերոյ Նշանի, որ ի ՌՄԽԶ (1797) և ղեկեմքերի ԻԳ (24) եղև, զի ընդ բոլորն 1(30) օրն գրեցիավ:

### Բ մասի

էջ 90. Ի թվականիս Հայոց ՌՄԽԷ (1798) և փետրվարի ԻԱ (21) էհաս աւարտ և լրբաւ էառ օգնականութեամբն այս ինչ պիտանացու բարոզք սրբոյ Գրիգորի Տաթևացոյ, և կամ այլ ինչ (ի) լատինացոց բարբառէ թարգմանեալ՝ վասն զլիսաւոր սրբոց զեղեցկայարմար և ընտիր բարոզք և ճառք ութսուն և շորս, և այլ ինչ պիտանացու շահաւետք և օգտակար բանք ասացեալ հընոց սրբոց վարդապետաց և իմաստնացելոց, որոց ընդ ամէնն ի մի հաւարեալ՝ հառու կազմեալ, որ և իսկ տեսանեսդ: Որ և գրծող և վայելող սորին՝ յետնեալ միաբան Մերոյ Նշանի տէրն Սեբաստիոյ Մինաս և վշտակիր արեղայի, որոց սըրբազնակատար աղօթիւք և մեղ բարի վայելումն շնորհեսցէ Աստուածն. ամէն:

## 9

### Ճ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

(Wellcome Institute, № 18233.59. A. 4)

ԺԸ—XVIII

Սաացող՝ Յակոբ:

Թերք՝ 232: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 17×10 սմ: Գրութիւն՝ միասլուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 17: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զրոշմազարդ, աստաղ՝ զրոշմազարդ գործվածք: Վիճակ՝ վնասված և պակասավոր:

## Բովանդակություն

1. 1ա—8բ. [Յաւելագրութիւն]  
 ա. 1ա-2բ. Աւետիս քեզ Մարիամ... (տե՛ս § 4. ա):  
 բ. 2բ—4ա. Աւետիս մեծ խորհրդոյ... (տե՛ս § 4. բ):  
 գ. 4ա—8բ. Հրճութիւնք այսօր մեք հոգեպէս... (տե՛ս § 4. գ):
2. 9ա—125ա. [Ժամագիրք]: Հրաժարումն—Հրաժարիմք ի սատանայէ...  
 Չհանգստեան աղօթս և զաղաչանս (ընկալ), մարդուասէր Աստուած, ի հաճոյս բարերար կամաց քոց:
3. 125բ—166բ. Պատմութիւն եփկարայ իմաստնասիրի, զոր պարտ է իմանալ և ի միտ առնուլ ամենայն մարդոյ՝ վասն շահի և օգնութեան—Յամի Սինեքարիմայ արքայի Ասորեստանեաց և Նինուէի... և որ զհետ երթայ բարեաց՝ ժառանգէ զնա Աստուած:
4. 169ա—227բ. [Տաղարան]  
 ա. [Ա. Տաղ Աւետեաց—Աւետիս քեզ Մարիամ...] | Եւ ի ազգաց ասէ՛ Մաղկեցար ծառ կենաց մեզ...  
 բ. Բ. [Տաղ ազնիւ ի նարեկացոյ]—Աւետիս մեծ խորհրդոյ...  
 գ. Գ. [Տաղ Մենդեան... ի Կոստանդին կարողիկոսէ]—Հրճութիւնք այսօր մեք հոգեպէս...  
 դ. Դ. Տաղ անուշահամ—Յանդստանի Տեառն յայտնեծա...  
 ե. Ե. Տաղ երեմէայի—Գառնացեալ ցրրտում կայր ի տաճարին...  
 զ. Չ. Տաղ անուշահամ—Ասիմ մեղայ Տէր իմ Յիսուս...  
 է. Է. Տաղ Յայ[տնութեան]—Սուրբ սիրամարք ոսկէփետուր...  
 ը. Ը. Տաղ Յարութեան—Գոյն ըզգոյն զարմանահրաշ...  
 թ. Թ. Տաղ անուշահամ—Սրբոյն Մաղիմայ ծառայ եղին զիս...  
 ժ. Ժ. Տաղ Լազէլեաց—Աննման ի մէջ մարդկային...  
 ժա. ԺԱ. Տաղ պաղչայի—Արեկ որ մըտնումք պաղչան...  
 ժբ. ԺԵ. Տաղ Աւետեաց—Անեղին տաճար, Բանին բարերար...  
 ժգ. ԺԶ. Տաղ Մենդեան—Մաղիկ պայծառ ծովային...  
 ժդ. ԺԸ. Տաղ Զրօրհնեաց—Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ...  
 ժե. ԺԹ. Տաղ Զրօրհնեաց—Այսօր ձայն հայրական...  
 ժզ. Ի. Տաղ Տեառն քեզ առաջին—Այսօր ցնծայ յերուսաղեմ...  
 ժէ. ԻԱ. Տաղ Տեառն քեզ առաջին—Քրիստոս փառաց թագաւոր...  
 ժբ. ԻԲ. Տաղ Մաղկազարդի—Այսօր ցնծան արարածք...  
 ժբ. ԻԳ. Տաղ Յարութեան—Գասրըն հրէական էին պահապան սուրբ գերեզմանին...  
 ի. ԻԴ. Տաղ վրեժաման պատարագի—Անձն իմ յամենայն ժամ ի Տէր պարծեսցի...  
 իա. ԻԵ. Տաղ ի վերա նախ—Ահա տեսէք զինչ կայր ծովին...  
 իբ. ԻԵ. Տաղ սուրբ Ստեփանոսին—Գերագոյնք երկնից հիացան...  
 իգ. Տաղ վարդի և պուլպուլի—Ականջ դրէք բանիս, որ պատուական է...  
 իդ. ԻԸ. Տաղ Յարութեան—Գոչէր հրէշտակն առ վիմին...  
 իե. ԻԹ. Տաղ Յարութեան—Յայնժամ սիրով սիրական...  
 իզ. Լ. Տաղ Յարութեան—Յարեաւ յաւուր երրորդին...



- իէ. ԼԱ. Տաղ նոր կիրակէին—Այսօր նոր արե հարեալ ի նորահրաշ արե-  
գակնէ...
- իբ. ԼԲ. Տաղ վարդավառին—Այսօր ցնծայ լեանն թափօր...
- իբ. ԼԳ. Տաղ սուրբ Աստուածածնին—Խնկի ծառին նման էս...
- լ. ԼԳ. Տաղ Աստուածածնի—Ողջոյն ընդ Մարիամ մայր Աստուծոյ...
- լա. ԼԶ. Տաղ Գիւտ հաշին—Այսօր եղև գալ դշխոյին...
- լբ. ԼԷ. Տաղ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին—Ի յելս արևու, արևն ի յելս ծա-  
գեաւ մեզ յարեմտից...
- լգ. ԼԸ. Տաղ Ոսկեանց—Սուրբ ոսկի քահանայք նազելի...
- լդ. ԼԹ. Տաղ սրբոյն Մինասայ—Տէր բարերար Հօր միածին...
- լե. Խ. Տաղ Իգնատիոսի հայրապետի—Ի սուրբ սերմանց առաքելոց...
- լզ. ԽԲ. Տաղ ողբերգական—Գանգատ ունիմ ասել քեզ, թագաւոր իմ...
- լէ. ԽԳ. Տաղ վասն Աղամայ—Աղամայ ստեղծողն եկեալ իւր պատկերն ի  
տես...
- լր. ԽԴ. Տաղ ազնիւ և գեղեցիկ Սիմէօն վարդապետէ ասացեալ Զուղայե-  
ցո—Նս էի ազատ ազգի, վայ, աւաղ վայ...
- լթ. ԽԵ. Տաղ անուշ ազնիվ. Առաքեալ վարդապետէ ասացեալ—Աստուածա-  
ծին կոյս Մարիամ, սրբուհի, սրբուհի...
- լս. ԽԶ. Զրնարեալն որ ասես, մեղեդի մի՛ ասէր—Ընտրեալըդ Աստուծոյ,  
ո՛վ երջանիկ սուրբ քահանայ...
- լտա. ԽԷ. Ողբ Աստուածածնին ի ժամու երեկոյին—Աստուածածին կոյսն  
Մարիամ կայր առ խաշին...
- լտբ. ԽԸ. Ողբ Խաշելուրեան Քրիստոսի—Աստուածածին սրբբուհին, ամէն-  
օրհնեալ սրբբուհին կայր առ խաշին Յիսուսի...
- լտգ. Ի. Տաղ պատշան անուր թաղման Քրիստոսի—Լըցան բանքն այսօր  
սուրբ մարգարէիցն...
- լտդ. ԻԱ. Զծայն փոխէ—Յարեաւ յաւուր երրորդին...
- լտե. ԻԲ. Տաղ ազնիւ և յարմարաւոր—Եկեալ Մարիամ Մագդաղէնացի...
- լտզ. ԻԳ. Տաղ վասն Յարութեան—Դասքրն հրէական եղին պահապան...
- լտէ. ԻԴ. Յորդուակ—Միաշարար յօր հանգըստեան...
- լտբ. ԻԵ. Տաղ երեման Սուրբ Խաշին—Խաշն ի հնումն երեւցաւ...
- լտր. ԻԶ. Տաղ ի Սիմէոն վարդապետէ ասացեալ է—Ի կոհակաց սասանեցա  
և ի յայլեաց տատանեցա...
- ծ .ՄԷ. Այլ տաղ ի Սիմէոնէ վարդապետէ—Իմ գեղեցիկ եղբայր սիրուն և  
նազելի...
- ծա. ՄԸ. [Անխորագիր]—Յործամ յուսաւ կատարեցաւ, եղև ծանօթ Աւետա-  
րանի, | Աւետարանն մեկնիչ ուղեց, դայն այլ ոսկով գրել տուին...
- ծբ. ՄԹ. [Անխորագիր]—Իմ ճովրան ծագուլ պլպուլի, | Դու ես նման կար-  
միր վարդի... | Լոյս կուտա տիրոջ տիվան այցելիմ այսօր:
- 231ա—232բ. [Յանկ]—Կանոն՝ Աւետիս քեզ Մարիամ... Կանոն՝ Իմ  
ճովրան ձագուկ:

## Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

229բ, 230ա. (շրջանակի մեջ) Յակոբին:

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Տ Ե Տ Ր

(Wellcome Institute, № 74775)

[Եղովիա]

ՌՃԿԱ—1712

Գրիչ՝ Եղիայ Մարսվանցի: Ստացող՝ Անտոն:

Թերթ՝ 25: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 29,3×21,5 սմ: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բուլղարի: Տող՝ 20: Մանրանկարչություն՝ գեղեցիկ, ինքնատիպ բաժանմունքներ երկու սյունակների: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ թուղթ, աստաղ՝ սպիտակ և կապույտ գույնի մետաքսե գործվածք: Վիճակ՝ կազմը պատռված, որոշ թերթերի լուսանցքները այրված, կազմից անշատ թղթյա պահպանակների մեջ:

Հ ի շ ա տ ա կ ա Ր ա ն

Գրչի

24ր. Չեռամբ Մարսվանցի մեղապարտ Եղիայ գրչի:

Ստացողի

24ր. Փա՛ռք... Որ ետ կարողութիւն վասն ծառային իւրոյ, որ բազում ժամանակաց ցանկայի այսպիսի յիշատակ ըստանալ: Զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս կամեցաւ ստանալ իւր մեղապարտ ծառային իւրոյ: Որպես ասացիր, Տէր իմ և Աստուած իմ, ի բոյլ պատգամայն թէ՛ Ով որ փոքրոյ հաւատարիմ է և բազմաց կացուցից և անցեալ պաշտեցից, և այլն թէ՛ Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, որ ոչ գող մերձենայ և ոչ ցեց և ոչ ուտիչք: Տէր իմ և Աստուած իմ, յազազս այսմայն երանական բարբառաւրն դայս ի մտի եղեալ՝ ստացայ դայս փոքրիկ գանձն, որ կոչի Խորհրդարան: Ով Տէր իմ և Աստուած, վասն ծառայիս բո կամեցար, որ զմեղուցեալս արարիր յիշատակ մասնակից: Ով քահանայք և ընթերցողք, յիշեսչիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմեղապարտ յարեկցի, ի գիւղէն Մարսվանու Քաղէոսի որդի Անտոնին յիշատակն է, որ ետուր ի դուն Սուրբ Նշանի, ի տաճարն Աստուծոյ, անդ մնասցէ, որ անուանի անուն գիւղին Պիժնոի, որ սրբոյն Յոհան Ոսկիբերանի գերեզմ[ա]յն կառուցեալ է. սա եղաւ թվին ՌՃԿԱ (1712)-ին, նոյեմբ[ե]րի ԻԱ (21) օրն: Հայր մեր:

1ա. մակագրված՝ «Ս. Լուսաւորիչ»:

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Տ Ե Տ Ր

(Wellcome Institute, № 18228)

Եղովիա

ՌՃԿԳ—1714

Գրիչ՝ Եղիայ Մարսվանցի:

Թերթ՝ 24: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 29×20,8: Գրություն՝ երկսյուն: Գիր՝

բուրգիր: Տող՝ 22: Մանրանկարչություն—Վերջին ընթրիք՝ 2բ (12 առաքյալները սեղանի շուրջ, եկեղեցու գմբեթի տակ): Սարկավագը ձեռքին սաղավարս՝ 4ա, Եպիսկոպոսը ծնկաչոք՝ 5բ, Եպիսկոպոսը խաչակնքելիս՝ 8բ, Սարկավագը Ավետարանը ձեռքին՝ 10ա, Վերաբերումի պահը—եպիսկոպոսը սկիհով, սարկավագը խնկարկելիս՝ 11բ, Պատարագիչը սկիհն օրհնելիս՝ 15ա, Պատարագիչը գոհության պահին՝ 19ա: Խորան՝ 3ա: Լուսանցազարդեր՝ 12բ, 16բ, 21բ, 23ա և զարդագիր թռչնագրեր: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ սովարաթուղթ, աստաղ՝ դեղին թուղթ: Վիճակ՝ բավարար:

### Բովանդակություն

Խորհրդատետրի վերջում՝ 23ար. «Սրբոյն Եփրեմի ասացեալ է աղօթս՝ Վասն Տէր ողորմեայն...»:

### Հ ի շ ա տ ա կ ա Ր ա Ն

#### Գրչի

3ա. Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց իմոց աշողեա մեզ: Զեռամբ Մառավանցի մեղապարտ Եղիա գրչի, ի վայելումն մահտեսի... (քերված և փոխարենը գրված՝ «Զախաբե») ի դուռն Սուրբ Պարսամ եկեղեցոյ, ի տաճարն Աստուծոյ. անդ մնասցէ թվին ՌՃԻԳ (1714)-ին:

Սրդալ բանիցս եմ ամոթալի

Եւ ի դասուց կարգաւորի,

Ով որ յիշէ՝ յիշեալ լինի:

Հայր:

#### Հետագայի

24ա. Պարզեվեա ըզպիտոյս և ղօգտակարս մեր, յիշեա, Տէր և ողորմեա ուխտաւորաց և պտղաբերից եկեղեցոյ քում սրբոյ, և որք յիշեն զաղբատս ողորմածութեամբ, և բարերարաց մերոց, որ մեզ այց առնեն, հատոյ նոցա ըզպարտս նոցին ըստ ընդարույս առատութեամբ քոապատիկ աստ և ի հանդերձելումն: Յիշեայ, Տէր, և ողորմեա և զթայ ի հոգիս հանգուցելոց, որ վասն նոցա պատարագս մատուցանի, հանգո զամենէսեան մեծաւ այցելութեամբ ի լույս երեսաց քոց: Յիշեա, Տէր, և ընդ նոսին զամենայն հոգիս նընչեցելոց մերոց, որք ի գերութեան և ի բանտին ննչեցան և ամենայն տեղիս՝ ի անապատս և ի ճանապարհս վճարեցին ըզկեանս իւրեանց, և որք ի տարածամ մահվամբ ի ցասմանէ քումէ նընչեցին, և որք ոչ կարացին խօստօվանիլ և ապաշխարել ըզմեղս իւրեանց: Թող, Տէր, ամենեցուն ըզմեղս, լուսաւորեա և զասաւորեա ընդ սուրբս քո արքայութեանա երկնից և արժանի արայ ողորմութեան քում: Յիշեայ, Տէր, և ըզհոգի ծնօղացն մերոյ: Յիշեա, Տէր, զամենայն հոգիս ննչեցելոց և զարեան մերձաւորս մեր և ողորմեա մեծաւ այցելութեամբ ի լույս երեսաց քոց: Յիշեա, Տէր, և զկենդանիս պատարագիս մատուցողաց: Երկըրպազանեմբ և աղաշեմբ և խնդրեմբ ի քէն, բարերար Աստուած, առաքեա առ մեզ ըզմշտնչնաւորակից և էակից Սուրբ հոգիա, զի հանգիցէ ի վերայ սուրբ

և անմահ պատարագիս, և ի ձեռն սորա մարբեա ըզմեզ աստուածային շնորհօք և ողորմութեամբ բօլ Սուրբ Երրորդութեան ընկալ ըզպատարագս վասն հոգոյ ծառային բո գծողի սորին՝ Ըստեփաննոս անարժան քահանային և վասն հոգոց ամենեցուն հաւատով ի բեզ նընչեցելոց, զի արժանի լիցին մասին վիճակի սրբոցն ի լույս յաւիտենական կենացա. և բեզ այժմ և յաւիտեանս. ամէն: Չեռնադրեալ եղէ անարժանս ի Պետրոսէ Բերդումեան կոչեցեալ արքեպիսկոպոսէ և առաջնորդէ ի թվին 1228 (1779) ապրիլի 10-ին Եղովիեա ի Սուրբ Պարսամ Եկեղեցո ըսպասաւորելոյ:

16բ. (լուսանցքին՝ մի ուրիշ թղթի վրա) Յիշեա, Տէր, զհանգուցեալ հոգիքն Մահաեսի Թորոսին, Ալեքսանին, Աստղիկին, Խանումին:

1ա. մակագրված՝ «Ս. Լուսաւորիչ»:

12

ՄԱՇՏՈՅ

(Wellcome Institute, № 74773)

Մարունան

ՌՃԻԳ—1674

Գրիչ՝ Մարտիրոս քհ.:

Թերթ՝ 358. չգրված՝ 358 բ: Պրակ՝ է-ԼԳ: Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 18,3×12 սմ: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18: Մանրանկարչուրյուն—ճակատագարդեր՝ 39ա, 62ա, 99բ, թռչնագիր զարդագրեր, բուսական ու կենդանական լուսանցագարդեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմագարդ, աստառ՝ ծաղկագարդ գործվածք: Վիճակ՝ սկզբից պակասում են Ա-Զ պրակներն ու կազմի առաջին փեղկը: Նախկինում վերանորոգված և պակասավոր մասերը լրացված (է-Ժ պրակները՝ տարբեր թուղթ և գրություն):

## Բովանդակություն

1. 1աբ. [Կանոն պսակի—...] զոսա գութս առ միմեանս, շնորհեա սոցա: զաւակ բստ կամաց սոցա...:
2. 2ա—24բ. Կանոն հաղորդութիւն տալոյ:
3. 24բ—62ա. Կանոն յորժամ զտղայն առանց կնունք մեռանի:
4. 62ա—100ա. Կանոն գամենայն վախճանեալսն ի հանգիստ:
5. 100բ—104ա. Կանոն հոգէհանգիստ առնել մեռելոց:
6. 104ա—122բ. Կանոն խաչ արհնելոյ:
7. 122բ—129բ. Կանովն տեառնական արհնելոյ:
8. 130ա—133բ. Կանոն սերմն և շեղչ, կալ:
9. 133բ—134բ. Վասն արհնութեան այգի և հնձանի, գինոյ և կարասի:
10. 134բ—136ա. Արհնութիւն հաաի պատարագի, տանձի, խնձորի, խաղողի, շամշի և այլ ամենայն մրգի:
11. 136ա—137բ. Կանոն յորժամ նոր դուռն Եկեղեցոյ դնեն:
12. 137բ—138բ. Կանոն արհնութեան զգեստի սրբութեան Եկեղեցոյ:
13. 138բ—140ա. Կանոն սկիհ և մաղզման արհնելոյ:
14. 140աբ. Կանոն նկարեալ Եկեղեցի արհնելոյ:
15. 140բ—144ա. Կանոն զնշխար սրբոցն ընդունել և փոխել:

16. 144ա—145բ. Կանոն ժամահար արհնելոյ:  
 17. 145բ—148բ. Կանոն խաչալուսա առնելոյ ամենայն ցաւոց, բուսոց և պտղոց:  
 18. 148բ—149ա. Կանոն խունկ արհնելոյ:  
 19. 149աբ. Կանոն նորակերտ գրոց:  
 20. 149բ—154բ. Կանոն աւագան արհնելոյ:  
 21. 155ա—164բ. Կանոն նաւակատեաց եկեղեցոյ կամ պղծել:  
 22. 164բ—186բ. Կանոն ջուր արհնելոյ:  
 23. 186բ—198ա. Կանոն ապաշխարող առնելոյ:  
 24. 198ա—224բ. Կանովն Մեծի հինգշաբթին ապաշխարողս արձակելոյ:  
 25. 224բ—246ա. Կանովն ոտնալուային:  
 26. 246աբ. Կանոն գառն արհնելոյ:  
 27. 246բ—250ա. Կանոն վասն հիւանդաց աղօթելոյ:  
 28. 250բ—252բ. Կարգ երկրորդ ամուսնութեան:  
 29. 253ա—337ա. Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանա կատարի ամուսնամբ:  
 30. 337ա—344բ. Կանովն երկրորդ ատուրն:  
 31. 344բ—346բ. Կանովն երրորդ ատուրն:  
 32. 346բ—349ա. Կանոն չորրորդ ատուր:  
 33. 349ա—351բ. Կանոն հինգերորդ ատուրն:  
 34. 351բ—354ա. Կանոն վեցերորդ ատուրն:  
 35. 354ա—357բ. Կանոն եօթներորդ ատուրն:

## Հ ի շ ա տ ա կ ա Ր Ա Ն

## Գրչի

358ա. Աւրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն... Որ ետ կարողութիւն տկար և տարտամ անձին, սուտանուն, մատնաղեղեղ փծուն գրչի՝ Մարտիրոս քահանայի հասանել յաւարտ սուրբ գրոցս, որ կոչի Հայր Մաշտոց: Արդ, սկիզբն եղև Մաշտոցիս ի յերկիրս Շօշ՝ որ է Ասպահան, ի գեօղս՝ որ կոչի Մարունան, ընդ հովանեաւ Սրբոյն Մինասա, ի հայրապետութեան սուրբ աթոռոյն էջմիածնի տեանն Յակոբ կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան Զուղայեցի տեանն Դարի արհիեպիսկոպոսին, և ի թագաւորութեան այլասեռից փոքրիկ Շահ Սուլէմանին: Գրեցաւ թիւն ՌՃԻԳ (1674) մարտի Ի (20):

13

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

(Wellcome Institute, № 74774)

ԺԶ—XVI

Գրիչ՝ Կոստանդին սրկ.: Ստացող՝ Ստեփանոս քհ.:

Թերթ՝ 244: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 13 × 10 սմ: Գրութիւն՝ միասլուն:

Գիր՝ մանր բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչութիւն—կիսախորան՝ 68ա, ճակատազարդ՝ 44ա, 96բ, 139ա, 192ա, 207ա, 226ա, բուսական և կենդանական

լուսանցազարդեր, թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ, աստառը՝ կապույտ գծերով սպիտակ կտավ: Վիճակ՝ քայքայված, սկզբից և վերջից պակասավոր, մի շարք թերթեր մկրատված:

### Բովանդակություն

Սկիզբ՝ 4բ. [Շարական Պահոց]—Որ հայիս քաղցրութեամբ յարարածըս բո... (1ա—4ա քայքայված):

Վերջ՝ 241ա—4բ. Շարական ամենայն ննջեցելոցն—Աստուած անեղ անձամանակ... | Տան աւետիս ազգի մարդկան | Վասըն կենացն... (շար. թափուած):

### Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

#### Գրչի

67բ. Չթափուրս ի բարեաց և ըզփարթամս ի մեղաց, զլցեալս ամենայն սղալանաւր զԿոստա[նդին] սարկաւագ և զծնաւոսն իւր աղաշեմ յիշել ի Տէր, և որ յիշէ՝ յիշեալ լիցչի ի Քրիստոսէ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն: Եւ առաւել աղաշեմ յիշեսչիք զՍտեփա[նոս] քահանայ և զորդիան իւր՝ զՆերսէս քահանայ, որ ետուն գրել զսա ի պէտս հոգւոյ և մարմնոյ, ի փառս Քրիստոսի, որ է արհնեալ յաւիտեանս:

191բ. Կոստանդին գրողի և իւրոցն Քրիստոս տացէ զվարձս բարիս:

14

### Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

(Wellcome Institute, № 16586)

Մարզումն

ՌՃԻԸ—1679՝

Գրիչ և ստացող՝ Թորոս դպիր:

Թերթ՝ 292: Պրակ՝ ին: Նյութ՝ մազաղաթ: Մեծություն՝ 13,8×9 սմ: Գիր՝ բոլորգիր, մանր: Տող՝ 26: Մանրանկարչություն—Հովակիմ և Աննա՝ 2բ: Ճակատազարդ՝ 3ա, 42բ, 85ա, 108ա, 189բ, 274բ: Բուսական լուսանցազարդեր և թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառը՝ ծաղկաթուղթ: Վիճակ՝ բավարար:

### Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

#### Գրչի

289բ—290ա. Փա՛ռք... Շնորհիւ և ողորմութեամբ, կարողութեամբ ամենազարին Աստուծոյ յանգ ելեալ աւարտեցաւ հոգիաբուղիս սուրբ երգարանս որ կոչի Շարակնոց լաւ և ընտիր արինակէ: Գրեցաւ սա ի գիւղաքաղաքն:

Մարզուան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս, ձեռամբ յոգնամեղ որդեակին իմոյ՝ Թորոս զրպրի, զոր Տէր Աստուած բարով վայել տացէ և ընդ երկայն աուրս արասցէ, մինչև ի խորին ծերութիւն հասուցանէ. ամէն: Այլ և կրկին անգամ յիշեցէք զվերոյ գրեալ Միքայել երէցս հանդերձ ծնաւորիք. հայրն իմ՝ Առաքելն, մայրն իմ՝ Նազլուն, հօրեղբայրն իմ՝ մահտեսի Եսային, ամուսինն իմ՝ Գոհարն, զաւակք իմ՝ Նազլուն, որ հանգուցեալ է առ Քրիստոս, Հեղինէ, Մարիամ, Կատարինէ և փոքր Մարիամ, և սոքա ևս հանգուցեալ են առ Քրիստոս, և ուստերք իմ՝ Առաքելն որ Ե (5) ամաց եղեալ և սա ևս փոխեցաւ առ Քրիստոս: Եւ յետ սոցա ծնաւ Թորոս զրպիրն և Սարգիս զրպիրն, և քոյրս սոցա՝ Աննան, որ կան ի մարմնի. խընդրեմ և հայցեմ յապէնի[ազ] արարչէն՝ անփորձ և անսասան սրահեսցէ, մինչև ի խորին ծերութիւն հասուցանէ. ամէն:

Քրիստոս Աստուած մեր, որ առաջն է [ի] տուրս բարե[ա]յց, գծողի սորա և ընթերցողի և ձեր յիշողք՝ յիշեալ լիջիք առաջի ատենին Քրիստոսի. ամէն: Հայր մեր որ յեր[կինս...]:

### Հետագայի

1884 փրկչական թուին եղած հայկական թուականն է հետևեալն—1334: 1128 Շարականին թուականը: 206. Երկու հարիւր վեց տարեկան ձեռագիր Շարական:

15

Ք Ա Ր Ո Ձ Գ Ի Ի Ք

(Wellcome Institute, № 160107)

ԺԶ—XVF

Թերք՝ 195: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 16×11 սմ: Գրութիւն՝ միասլուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 17: Կազմ՝ կաշեպատ տախտակ, աստառը՝ անզարդ կարմիր գործվածք: Վիճակ՝ քայքայված, սկզբից և վերջից պակասավոր: Կազմի կաշին մաշված, առաջին փեղկի տախտակը ջարդված և կողքը վնասված: Մանր. գրված է 2 տարբեր գրիչների ձեռքով՝ 1—161 և 162—195:

### Բովանդակութիւն

1. 1ա—52ա. [Առանց խորագրի]: Եցոյց ինձ Տէր Երկուս կողովս թողոյ որք կային յառաջի... և պատմէ խորհուրդակցացն և յայնժամ շրշնջին լինի ի մէջ նոցայ ծածուկ:

2. 53ա—161ա. [Առանց խորագրի]: Ասէ յառաքեալն Յակոբ, թէ ցանկութիւն յղացեալ՝ մեղս ծնանի և մեղք կատարեալ՝ զմահ ծնանի.. և Դանիէլ եղև մեծ առաջի ժողովրդեանն յօրէն յայնման[է] և անդր մարգարէացաւ Հոգով Սրբով բերանովն:

3. 162ա—195բ. Քարոզ վարդապետաց պիտանի: [Գրիգորի Անաւարզեցւոյ ներբողեան ի պատիւ սրբոցն Աստուծոյ հնոց և նորոց]—Կաթուղիկէ եկեղեցի սուրբ Երկինս հաստատեցաւ... ամենայն զարդուքն իւրովք ցարդ յոյժ սիրեմ զտեղին և ոչ կամիմ հեռանալ ի դրաց գերեզմանին, այլ անդէն...

Ընդհանուր տախտակ հայերեն ձեռագրաց Վեյրոմ ինստիտուտի գրադարանի

№	Բովանդակութ.	Ժամանակ	Տեղ	Գրիչ	Մաղկոց	Մտացոյ
1	Աւետարան	1493	—	Շմաւոն	Արքահամ	Նէնայ
2	Աւետարան	ժ.2	—	—	—	—
3	Աւետարան	1633	—	Ներսէս	—	—
4	Աւետարան	1670/1	Հարսր	Պաղտատար զպ.	—	Եղիսարէթ
5	Բժշկարան	1802	Կ. Պոլիս	Գրգր. Նիշաստահան	—	—
6	Ժողովածու	1693	—	Աղէքսանդր	—	Աւետիք
7	Ժողովածու	1795	—	Քչտր Կեսարացի	—	—
8	Ժողովածու	1797/8	Սերաստիա	Մինաս արզյ.	—	—
9	Ժողովածու	ժ.Ը	—	—	—	Յակոբ
10	Քորհրդատետր	1712	Եվզոկիա	Եղիա Մարսիանցի	—	Անտոն
11	Քորհրդատետր	1714	Եվզոկիա	Եղիա Մարսիանցի	—	—
12	Մաշտոց	1674	Մարունան	Մարտիրոս քհյ.	—	—
13	Շարակնոց	ժ.2	—	Կոստանդին սրկ.	—	Մտեփանոս քհյ.
14	Շարակնոց	1679	Մարգուան	Թորոս զպիք	—	Թորոս զպիք
15	Բարոզգիրք	ժ.2	—	—	—	—



ԲԱՐԿԵՆ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԱՅ ՄԱՄՆԱՎՈՐ ԱՆՉԱՆՑ

1

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Փարիզ, Սիրարփի Տեր-Ներսեսյան)

ԺԳ դար

Թերթ՝ 296: Գրիչ և ստացող՝ Յովհաննէս: Նյութ՝ մագաղաթ: Մեծուքուն՝  $9 \times 12,5$ : Գրուքյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 18: Մանրանկարչուքյուն՝ Մարկոս՝ 65բ, Հովհաննէսը Պրոխորոնի հետ՝ 222բ, Կիսախորաններ՝ 66ա, 225ա, լուսանցադարդեր՝ բուսական: Կազմ՝ չիբ: Պահպանակ՝ մագաղաթ 2 վերջից: Վիճակ՝ սկզբից և միջից պակաս թերթեր:

Ծանոթ. Չեռագիրը նախկինում պատկանել է Մաղաքիա արք. Օրմանյանին՝ անվանի արվեստագետ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանի մորեղբորը: 1982 թ. մայիսի 15-ին Փարիզում հարգելի պրոֆեսորը տողերիս գրողի միջոցով մատյանը նվիրեց Մատենադարանին. գրանցվել է 10866 թվահամարի ներքո:

Հ ի շ ա տ ա կ ա գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ն Ե Ր

1. 64բ. Չտառապեալ գծողս յիսեսչիբ ի Տէր, զՅոհաննէս եղկ[ելի]:
2. 127բ. Չստացաւ սուրբ Աւետարանիս զՅոհաննէս և գծնող և զեղբարսն իմ և վարդապետս յիսեսչիբ ի Տէր աղաչեմ:
3. 222բ. Չտառապեալս Յոհաննէս յիշեսչիբ ի Տէր:

2

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Արթիկ բաղաբ, Կարապետ Վահրամի Կարապետյան)

ԺԵ դար

Թերթ՝ 232: Գրիչ, ծաղկող և վայր՝ անհայտ: Նյութ՝ թուղթ: Մեծուքյուն՝  $12 \times 17,5$ : Գրուքյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 22: Մանրանկարչուքյուն—Մարկոս՝ 68ա, Ղուկաս՝ 118բ: Սկզբնաթերթեր՝ 89ա, 119ա, 191ա: Նուսանցադարդեր՝ բուսական: Կազմ՝ նոր, կաշեպատ տախտակ: Պահպանակ՝ թուղթ: Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած:

Ծանոթ. Սույն ձեռագիրը 1829 թ. Արևելյան Հայաստան է բերվել Կարինի շրջանի Կան գյուղից և պահվել Կարապետյանների ընտանիքում:

Չեռագրի հասցեն մեզ տրամադրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, ճարտարապետ տիկին Ալեքսանդրա Երեմյանը:

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված և հրդեհից տուժած այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եզանյանը խառնրված թերթերը վերադասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության: Չեռագիրը վերանորոգումից հետո վերադարձվել է տիրոջը:

#### Հիշատակաբան հետազայի

1. 67բ. Աւարտեցաւ սուրբ Աւետարանս սրբոյն Մինասայ տաճարին ձեռամբ Տէր Ոստիկայն վա[ր]դապետին: Գիրս որ ի մէջ տաճարին գրեցինք պահօք և պատարագօք երեք հատօք նուն շափօք շուր: Թվին հայոց Չե (1491)-ին սեպտեմբերին ժԸ (18), գծողս մի (ընդհատված):

2. 67բ. Յիշատակ է Աւետարան: Յիշատակ է թվին հայոց այս ՉՉ (1521)—ին:

Մանր. Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. մայիսի 15-ին:

### 3

#### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Լուսակերտ (նախկին Թալիբօղլի) գյուղ, Արթիկի շրջան, Անուշավան (Արզուման) Հովհաննեսի Կարապետյան)

#### Փ Ե Ղ Ե

Թերթ՝ 316+1 (կրկ. 65): Գրիչ, ծաղկող և վայր՝ անհայտ: Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 14,5×21: Գուրյուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչություն՝ Մարկոս՝ 95բ, Ղուկաս՝ 151բ, Հովհաննեսը Պրոխորոնի հետ՝ 244բ: Սկզբնաթերթեր՝ 96ա, 152ա, 245ա: Լուսանցազարդեր՝ բուսական և թեմատիկ: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ՝ վրան արծաթյա երեք խաչեր և մետաղյա շորս ձեռքեր: Պահպանակ՝ թուղթ: Վիճակ՝ սկզբից, միջից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած:

Մանր. Սույն ձեռագիրը 1828 թ. բերվել է Ղարսի շրջանի Բագրամատ գյուղից:

Չեռագրի հասցեն մեզ տրամադրել է Արթիկ քաղաքի ճարտարապետ Ռազմիկ Հովսեփյանը:

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված ու պատառոտված այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եզանյանը խառնված թերթերը վերադասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության: Չեռագիրը վերանորոգումից հետո վերադարձվել է տիրոջը:

#### Հիշատակաբան հետազայի

244ա. Յիշատակ է սուրբ Աւետարանս նորաւին, հօրն՝ Շահպարտնին, մօրն՝ Զմբուրին, եղբարն՝ Խաչատուրին, թոռինն՝ Աստուածատուրին, կողակցին իւրոյ՝ Շամիխանին, դստերացն՝ Շահրիստանին, Կուլիստանին, Մարգարտին: Աւետարանս Սեբաստիացի ի Պախնանուկ գեղջէն կոչի:

Ով որ զսա ծախել կամի  
 Կամ գրաւի զնել տանի՝  
 Անցի բզման Յուզայի  
 Եւ պատինն կայենի:  
 Ով որ ըզսա խնամ տանի՝  
 Արջայութեան որդի կոչի,  
 Ընդ առաքեալսն զասեցի,  
 Ամէն, ամէն և եղիցի:  
 Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի:

Մանր. Սույն նկարագրութիւնը կատարվել է 1983 թ. մայիսի 17-ին:

## 4

## Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

(Մարսել (Ֆրանսիա), Անդրե Սիսակյան)

ժԶ դար

Քերթ՝ [311]: Նշուր՝ թուղթ: Մեծուրյուն՝ 10,5×15,5: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ շեղագիր: Տաղ՝ 18: Մանրանկարչուրյուն՝ Գրիգոր Նարեկացի (°) 5բ (խիստ վնասված), սկզբնաթերթ՝ 6ա, հաշվութիւն՝ 31բ (խիստ վնասված), Ներսես Շնորհալի (°)՝ 62բ (խիստ վնասված), Հակոբ Մծբնեցի՝ 289բ, Պարսամ Ճգնավոր՝ 303ա, լուսանցազարդեր՝ ծաղկագիր, թռչնագիր և ավետարանական թեմաներով: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Պահպանակ՝ 2+2, թուղթ: Վիճակ՝ բավարար:

Մանր. Սույն նկարագրութիւնը կատարված է 1982 թ. մայիսի 5-ին Մարսելում:

## 5

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Արուվյան քաղաք, Դավիթ Հովհաննեսի Մելիքյան (Մելիքսեթյան)

ժԶ—ժԷ դար

Այս ձեռագիրը, որ «Թուխ մանուկ» է կոչվել, 1949 թ. Իրանի Թեհրան քաղաքում տեսել և նկարագրել է Վիեննայի Մխիթարյան միաբանութիւնի անդամ Հ. Համադասպ Ոսկյանը: Նկարագրութիւնը տպագրվել է «Հանդէս ամսօրեայում», 1953 թ., էջ 95—97:

Ձեռագրի վերջին ստացող Դավիթ Մելիքյանը (Իրանի Բուրվառ գավառի Գովղ գյուղից) 1968 թվականին Թեհրանից ներգաղթել է Հայրենիք: Դ. Մելիքյանի հասցեն մեղ է տրամադրել Իրանից հայրենադարձ Սալբի Կարապետյանը:

Ձեռագիրը տեսել ենք 1976 թ. սեպտեմբերի 18-ին: Որոշ ժամանակ անց այն հանձնվել է էջմիածնի Վեհարանի մատենադարանին:

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Քրիլիսի, Քյուրքչյան էդուարդ Արշավիրի)

Ստամպոլ

ՌԾԸ—1609

Գրիչ՝ Միքայել Թոխատցի: Ստացող՝ Տեր Ստեփանոս Աղնաղալացի: Թերթ(°): Նյուր՝ թուղթ: Մեծություն՝ 16×21,7: Գրություն՝ երկսյուն: Տող՝ 20: Գիր՝ բոլորգիր: Մանրանկարչություն՝ խորաններ 10, Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչներ, կիսախորաններ 4, լուսանցազարդեր, թռչնադիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ, վրան՝ թիթեղյա մեծ խաչեր՝ անարվեստ: Վիճակ՝ բավարար, ջուր տեսած, կազմի երկրորդ փեղկը ջարդված, որի կեսը առանց կաշվի:

Մանր. Չիք էջահամարներ:

## Հիշատակարան գրչի

(ԻՆ պրակ, 1ա) Փառք... Գրեցաւ սուրբ Աւետարանս թվին ՌԾԸ (1609) ի մայրաքաղաքն Ղստամպոլ ի դուռն կոմրուկու սուրբ Նիկողայոսին, առաջնորդութեան Կեսարացի Գրիգոր քաջ բարունապետին, թագաւորութեանն Սուլթան Անմատին. Աստուած զիւր սուրն կտրուկ անէ, ձեռամբ անարժան Թոխացի Միքայելին ի վայելումն Աղնաղալացի Տէր Ղստեփանոսին || (ԻՆ պրակի 1բ էջ) (Թերթը պատուված, առաջին տողերը շիք)... և զկենակիցս, զննչեցեալս և զկեն... Աստուած զյիշող... է իւր միւս անգամ գալստեանն. ամէն. Հայր մեր: Այլև յիշեցէք զստացող սորին զՂստեփաննոս քահանայն և զհայրն իւր զԱրմպատն և զմայրն իւր զՓաշան և զմամն իւր զԱբե տիկինն և զիւր իրիցակին զՊահերին և զղուստրն իւր զԱբե տիկինն և վա... էծոցն զվարդապետն և զեղբայրն իւր զՎ.աան և զքոյրն իւր Շահմելիքն և զԿուպանարն: Գարձեալ յիշեցէք զհոգևոր եղբարքն զԹուրինն և զՊապանանն և զորդին իմ: Այլև յիշեցէք զյաշխատող սորին և Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալրստեանն. ամէն. Հայր մեր:

Չունի որ հրաման և իշխանութիւն զԱւետարանս զայս ի դումրէ (°) ձեռացն հանել ոչ յիմոց և ոչ յաւտարաց: Եւ թէ որ յանդգնի՝ զմասն Յուդայի ընկալցի. ամէն:

## Հետագայի

(Առաջին պրակ, 4ա) Ես Տէր Խաչատուրս հրամանան Աստուծոյ թվին ՌՃՂԹ (=1750) ամսիեան մառտին. ամէն:

(ԻՆ պրակ, 2ա) Թվին Խաչատուրին իմացումն լինի, որ ՌՃՄԸ-ին (=1709) իշեալ է. Աստուած իւր կեանքն երկար առնէ և զինքն անփորձ պահէ ի շարեաց. ամէն:

Մանր. Սույն նկարագրությունը կատարվել է 1981 թ. դեկտեմբերի 10-ին Քրիլիսի քաղաքում: Ձեռագրի հասցեն մեզ հայտնել է Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի արտասահմանյան բաժնի աշխատակից Ջավեն Սարգսյանը:

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Հրազդան, Միկրոշրջան, Շահմիրզա Սարգսի Կարապետյան)

ՌկԳ—1614

Քարտ գյուղ (Սպահանի շրջան)

Գրիչ և ծաղկող՝ Զաքարիա Վանեցի: Ստացող՝ Շաղոսկի: Քերթ՝ 266: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 25,5×20: Գույքուն՝ երկսյուն: Տող՝ 25: Գիր՝ բուրգիր: Մանրանկարչություն՝ վեցօրյա արարչագործություն՝ 1բ, 2ա, 2բ, 3ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, Ավետումն՝ 6բ, Մկրտություն՝ 7ա, Պայծառակերպություն՝ 7բ, Ոտնալվա՝ 8ա, Խորհրդավոր ընթրիք՝ 8բ, Բժշկություն անդամալուծին՝ 9ա, Մատնություն՝ 9բ, Զոհաբերություն Աբրահամու՝ 10ա, Հոգեգալուստ՝ 10բ, Հարություն Քրիստոսի՝ 11ա, Համբարձումն՝ 11բ, Քրիստոսը գահի վրա՝ 12ա, խորաններ 10, Մատթեոս՝ 19ա, Մարկոս՝ 87բ, Գուկաս՝ 131բ, Հովհաննես՝ 203բ, ավետարանիչներ, սկզբնաթերթեր՝ 4, լուսանցազարդեր, թռչնագիր զարդագրեր: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Վիճակ՝ սկզբի 10 թերթերը և կազմի մի մասը այրված:

Մանր. Ձեռագրի հասցեն մեզ է տրամադրել հրազդանցի գրքասեր Մելիքսեթ Պողոսյանը:

## Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

## Գրչի

356ա. Փառք անսկզբնական հար և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և անգրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն: Սովորութիւն է աստուածային արանց միշտ և հանապազ խոկեալ աստուածային պատուիրանս ի տրէ և ի գիշերի, միշտ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ աշմէ Աստուծոյ:

Եւ վասն բազում պատճառի բազումք փափագին ջերմեռանդ սիրով և յրդձալի ցանկութեամբ արդիւնայ և գործս կատարեալ: Նախ վասն յաւիտենական և անմահ կենացն զանցաւորս արհամարհեն և զայն ստանան կեանս, որ մնացական է: Որպէս ասէ Տէրն՝ Երթայք գործեցէք մի ղկորստական կերակուրն, այլ կերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենականսն: Երրորդ զի հրամայէ Տէրն՝ Գանձեցէք ձեզ գանձս ի յերկինս, ուր ոչ ցեցք և ուտիչք ապականեն և կամ գողք ական հատանեն և գողանան: Գրեմք ղգիրս աստուածային, որ զամենայն գանձ և զամենայն բարիքն ի յինքն պարունակեալ ունի: Նախ զվերին իմաստութիւն և ապայ զամենայն սբանշիլայգործութիւնս որ ի սմայ: Երրորդ վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանի յԵրուսաղէմ: Զորրորդ վասն քառութեան և թողութեան մեղաց մերոց բարեխաւս, որպէս ասէ մարգարէն՝ զՄեղսքս ողորմութեամբ քաւեսցես և զանարէնութիւն քո տրաւք տնանգաց:

Քրիստոս գթած և ողորմած  
Քրիստոնէից Տէր Աստուած  
Զողորմութեան քո ղգուոն բաց,  
Լուր տառապեալ քրիստոնէացս:  
Յամէն ղիմաց ենք մեք նեղած,  
'Ի ամէն ազգաց կոխան եղած.  
Եկեղեցիք բազումք բակած,

Բազում խաչեր է խորտակած,  
 Գիրք է Աւետարան գերի վարած,  
 Կանաչը և ազալը գերի վարած,  
 Գիշեր ցերեկ կմք վարանած,  
 Անայրենիկալ և զարհուրած  
 Եւ ոչ ոնիմք հանգստութիւն,  
 Այսպիսի կամք տարաշկուած  
 Եւ այսպէս կմք ի տարտարոս,  
 Որպէս զնաւ ի մէջ յայեաց,  
 Է սայ ամէն ի մեր մեղաց,  
 Որ բարկացար Հայոց ազգաց:

Ի Թվականիս հայկազան տաւմարիս ՌՄԳ ամին (1604) և փոքր Թվականին Հոռմայեցոց Մ. և ՂԲ. ամին, ի ժամանակիս, յորում Շահ Ապաս արքայն պարսից եկեալ պաշարեաց զՔարւէզ և կոտորեաց զաւրս տաճկաց, բան զի գնացեալ էին Ալի փաշէն և ամենայն զաւրս տաճկացն ի Քարւիզոյ ի Նախշուանայ, ի յԵրեւանայ ի վերայ Ղազի բէկին ի Սալմաստ և ի դառնալն նոցա զամենեսին սրայխոնոն արարեալ զնոսա և բազումք ի քրիստոնէիցն անդ կոտորեցին և առեալ զբազարն Գայէվրէժ և անցեալ գնաց էառ զՆախիջևան և անցեալ գնաց ի յԵրեւան և պաշարեաց զնա ամիսս Թ. և հարկի կացուցեալ էառ զբազարն: Բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ, այլ եկեսցուք ի Քարւէզ և ասասցուք փոքր ի շատէ զնեղութիւն և զշարշարանս քրիստոնէից ազգիս, թէ զինչ եղև ընդ մեզ: Քանզի ել հրաման արքայէն թէ ով որ յաւժարեսցի բնակիլ աստի՛ կացցէ, և ով որ ոչ յաւժարեսցի՝ երթիցեն իւրաքանչիւր յիւրեանց: Յայնժամ բազումք ի հայոց և տաճկաց յուղի անկեալ գնացին ի ճանապարհ զաւուրս Բ. իսկ անաւրէն պարոնայք քուրդ ազգին զամենեսին զնոսա զայրսն սպանեցին և զկանաչսն և զտղայսն գերի արարին և զայն տեսեալ ճեղճ և ողորմեալ ազգս Հայոց յահ և յերկիւղի կայաք ի տուէ և ի գիշերի լային հանապազ, հայրք ի վերայ զաւակաց իւրանց միշտ և հանապազ վտարանդեալ կային թէ զինչ լինիցիմք: Յայնժամ ողորմած և մարդայսէր Աստուածն որ ոչ կամի զմահ մեղաւորին, արկեալ գութ ի սիրտ արքային՝ ետուր հրաման հայոց թէ հայք ազատք են. բայց երթալոյ ումեք հրաման չկայ, թող որ կացցեն աստի մինչև ի գարունն և յորժամ ի մարտ ամիսն մտանիցին՝ ամենեքեան ելեալ գնացեն ի Շաւր քաղաքն, որ է Ասպայան: Յայնժամ տառապեալ ազգս հայոց զայն լուեալ ուրախացար յուրախութիւն մեծ և փառս տուեալ Աստուծոյ արհնեցար զարարիչն մեր և յորժամ եղև գարուն եղ հրաման ի յարբայէն, զի զազգս հայոց ի թիւ բերցեն և արարին զհամարք, իմացան՝ ԳՃՌ. անձինք էին և տրին նաֆաղայ և բերին ուղտք և այլ տաւարք թագաւորական և վեր առեալ զազգս հայոց բերին ի Ասպայան. բայց ազգն պարսից ոչ սիրեն զազգս մեր: Այժմ այսպէս կմք և զապագայն Աստուծոյ միայն է գիտել:

Այժմ ասասցուք թէ ինչ եղև առ ազգս հայոց, զի ել հրաման յարբայէն, զի երթիցեն և գերեցեն զտունս հայոց և գնացեալ գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզրուան, զԱղջայղալէն, զԱլաշկերտ, զՔալաթու, զԵնուս, զՄալազկերտ, զՏիբլիս, զՏումանիս, զԶլղր, զԱրտայխան, զԿոլայ, զՇաքի, զՇուան, զԱմախի, զԲանակ, զՓառկերտ, զՅուխտիք, զՄամուլան, զՔանիսուն, զՍեպեր, զՔէրջան, զԿամախ, զՎան, զԱրենշ, զԱրծկէ, զԲերկրի, զՈստան, Զա-

Երշատ, զԵրեւան, զՆախշուան, զՋուղայ, զԱղբակ, զՍալմաստ, զՔարւէզ, [զ]Գանջայ մինչեւ ի Դամուրղափու: Եւ այլ բազում գեաւղ եւ բաղաք, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել, զի ի Դարէվրէժու մինչեւ ի Քէոզորոյապալիս, որ Արզում կոչեն, անմարդայրնակ արարին եւ Երեւանայ մինչեւ ի Քարւէզ ԿՏ. գերի արարին, թող զայլան եւ զոմանս սրայխոխոն արարին, զոմանս սովալչուկ զոմանս գետայհեղձ եւ զոմանս բրբայհեղձ եղեն, զոր ոչ կարեմք ի թիւ բերել եւ համարել: Այլ Աստուածն որ ստեղծեալ է, նայ բովանդակէ զնոսա: Զի զամենայն աշխարհն հայոց աւերեցին եւ գերեցուցանելով, այրելով եւ սպանանելով եւ զայն տեսաք խաւարեալ աշաւք մերովք եւ խոր խոցի սիրտ մեր եւ դալարին աղիքն մեր, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց ճար շունիմք քան զՔրիստոս, փառք բիրապատիկ նմայ, գոհութիւն յաւիտեանս ամէն:

Արդ գրեցաւ եւ նկարեցաւ եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ զսքանչելայգործ Աւետարանս ի Ռ. եւ ԿԳ. (1614) թուին հայկազ[ե]ան տաւարին եւ հոովմայեցուց փոքր թվին ԳՃԲ. ամին ի յաշխարհս պարսից ի յերկիրս Գանդմանայ, որ է ի հուրմն Ասպայանայ, ի գեաւղս Քարաք, ի դուռն Սուրբ Աստուածածնին, ձեռամբ Զաքարիայ իրիցոյ վանեցոյ:

Արդ ցանկացող եղև սուրբ Աւետարանիս հաւատարիմ եւ աստուածայսէր կինն Շաղոսկի եւ ստացաւ զանանց մեծութիւն եւ զանատիկ փարթամութիւն ի հալալ արդեանց իւրոց, ետ նկարել եւ երանգ երանգ գունով զարդարել զսուրբ Աւետարանս հաւատարիմ կինն Շահոսկի յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոց՝ հարն Բանանդուտին եւ մարն Փաշաշանին եւ իւր կողակցինն Միրզին եւ որդւոյն Կիրակոսին եւ միւս որդւոյն Սարգսին, եւ միւսոյն Աւաթին եւ զստերացն Դաւաթին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն: Դարձեալ յիշեցէք զառաջ յիշեցեալսն ի Քրիստոս զՇահոսկինն եւ զեղբարքն զՊապիկն եւ զՄկրտիչն եւ զՄիրզէն եւ զիւր ամենայն արեան մերձաւորսն առհասարակ, զորս յիշեցաք եւ որք մնացին յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ամէն: Այլ եւ յիշեցէք ի մարբափայլ յաղաւթս ձեր զանպիտան գծողս եւ զծնաւդքն իմ զՏէր Յովաննէսն եւ զՈւլա խաթուն եւ զկողակիցն իմ զՄահմուտ խաթունն եւ զքեռինն իմ Զարիշանն եւ զաշակերտն իմ զՄելիֆոնն եւ զհոգեւոր հայրն իմ զՏէր Յակոբն զուսուցող գրիս եւ արուեստիս: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուածն որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացն եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի ի միւս անգամ զալստեանն իւրում. ամէն: Հայր մեր որ յերկինս ես:

85ա. Յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ Աւետարանիս զհաւատարիմ կին զՇաղոսկինն եւ զկողակիցն իւր զՄիրզէն եւ զտղայրն իւր զԿիրակոսն, զՍարգիսն եւ զԱւաթն եւ զզուստրն զԴաւաթարն ու զամենայն արեան մերձաւորսն, յիշեցէք եւ զՇաղոսկու եղբարքն զՊապիկն, զՄկրտիչն, զՄիրզէն եւ զննչեցեալսրն առհասարակ, որք յիշեցաք եւ որք մնացին եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ զալստեանն. ամէն: Գրեցաւ Ռ. եւ ԿԳ թիւն եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

121ա. Գրեցաւ, նկարեցաւ եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ սքանչելայգործ Աւետարանս ձեռամբ Զաք[արի]այ անարժան վանեցոյ իրիցոյ ի յաշխարհս պարսից ի յերկիրս Գանդմանայ, որ է ի հուրմն Ասպայանայ ի գեաւղս Քարաք, ի դուռն սուրբ Աստուածածնին, ՌԿԳ թվին:

## 129ա. (տարբեր գրով)

Զեոքս զնայ տեղն երեւայ,  
 Մարմինս փտեայ փոշի դառնայ,  
 Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,  
 Քէպէտ խոշոր է գիր սորայ,  
 Այլ զիրբնթերցող գիտենայ,  
 Յերբ բանաս ընթեռնուս զսայ,  
 Մի բերան զգծողս յիշեայ,  
 Քէ զանունն անգէտիս խնդրես, նայ,  
 Զարարայ է բեզ ծառայ:  
 Ով ինձ ասէ մի ողորմի,  
 Յիսուս Փրկիչն իւրն ողորմեայ  
 Եւ պարգեւէ զանանց բարին,  
 Որ յախտեան երթայ մնայ, ամէն.

Հայր մեր (ապա բնագրի գրով)՝ «Յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր զհաւատարիմ կինն զՇաղոս[կ]ին եւ զԾնաւորն իւր զԲաճանդաւուն եւ զՓաշաշանն եւ զայրն իւր զՄիրզէն եւ զորդիբն զԿիրակոսն, զՍարգիսն, եւ զԱւաֆն, զդուստրն զԴաւլարն եւ զեղբարբն զՊապիկն, զՄկրտիչն, զՄիրզէնն եւ զամենայն ննչեցեալսն առհասարակ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանկամ գալստեանն: Ամէն: Հայր մեր, որ յերկինս ես...:

200ա. Յիշեցէք ի Քրիստոս զհաւատարիմ կին զՇաղոսկենն, որ ստացաւ զսուրբ Աւետարանս յիշատակ իւր եւ ծնողացն Բաճանդաւուն եւ Փաշաշանին եւ կողակցին Միրզին եւ զաւակացն Կիրակոսին, Սարգսին, Աւաֆին, դստերն Դաւլ[ւ]արին եւ Շաղոս[կ]ու եղբարց Պապիկին եւ Մկրտիչն, Միրզին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն. գրեցաւ ի Ռ եւ ԿԳ թվին ձեռամբ Զաֆարայ Վանեցոյ Երիցոյ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանկամ գալստեանն, ամէն:

355բ. (նախ՝ ծածկագիր, ապա տարբեր գրով): Գրեցաւ նկարեցաւ, կազմեցաւ սուրբ եւ հրաշափառ եւ հրաշաղարղ եւ հրաշալի Աւետարանս ի ՌԿԳ թվին հայկազեան տաւմարին եւ հոովմայեցոց փոքր թվականին ՅԲ. ամին եւ մեծ թվին ՌԳՃԿԶ ամին ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ թագաւոր մի ի պարսից եղեայ[լ] Շահ Արաս անուն եւ զաշխարհս հայոց աւերեաց եւ աչրելով աւերելով գերայցոյցանելով, այսպէս եմք ի տառապանս եւ զապագայիցն Աստուծոյ միայն է գիտել:

Զեոքս զնայ, տեղն երեւայ,  
 Մարմինս փտեայ փոշի դառնայ,  
 Սայ յիշատակ առ ձեզ մնայ,  
 Քէպէտ խոշոր է գիր սորայ,  
 Այլ զիրբնթերցող գիտենայ  
 Երբ որ բանաս կարգաս զսայ,  
 Մի բերան զգծողս յիշեայ:

360ա. Յիշեցէք զՄիրզի ծնաւորն զհայրն Բէկաղէն եւ զմայր Խազրէվարդն եւ զՏէր Խաշատուրն, զՏէր Մելիփսէքն, Բարսեղն, Ամիրն, Ընթատակէսն, Ամիրջանն, Ամիրբէկի ծնաւորն, պապն Ղուզիկն, հայր Վիթապաուր, Ամիրբէկին կողակիցն Աղասուրբանն, դստերբն Թանկխարունն, Եղիսարէքն, Անրառամբն,



Կարիանէն, Քրիստոսատուրն, Միրումն, Ուլուբաբէն, Ամիրբէկի բուրն Եղապետն, զՍալարն, զԿիրակոսն, [զ]Ուրբուրեկն, զՋալն, զՅակոբջան, զՍարգիսն, զՈւլէն, զԽորամշան, զԽավաղեղն, զՋանդուլի:

### Հետագայի

#### ա

130ա. թիւն 1852 փետրվարի 25. Սանգիբարանցի Տէր Կարապետա Յօնանին հանդիպեցայ ի սոյն Աւետարանողս և ցանկացեալ եմ աստ ունենալ զանունս իմ մնալ ի յիշատակ: Ով եղբայ[ր]ք իմ, զայս կարդալով մեղաւորիս միտ բերելով միով բանիւ զիս յիշելով լիցիք յիշմանն արժան գոլով:

#### բ

Ճբ. Սոյն ս. Զօրատր Աւետարանիս վերջին ստացողք Թովմա և Սարգիս Կարապետեան և իրենց որդիք Դհարմիրգա Թովմասի և Շահմիրգա, Ներսէս և Վաղարշակ Տ. Կարապետյաններ 1916 թ. Փերիայի գիւղերից թալանած հայերից պարսիկ անունով Միրզական բախտիարցուց ստացան մեծ արժեքով, որ իրենց անվանք սեփականութեան գանձ ու պատիւ շահեցին բոլոր հայ շրջանում: Եւ ամենայն հսկողութեամբ ու մեծ երկիւղով ու յարգի պահում իրենց յատուկ սենեակում և ամեն տեղերից հայ ուխտաւորներ ուխտի են գալիս ու իրենց փապակն առնում:

Եւ ահա այսպէս մօտ երեսուն տարի ծառայել ու պահել ս. Աւետարանը մինչև ս. ներգաղթին դէպի մայր հայրենիք 1947 թ., ուր և յիշեալներս մեր քնտանիքով սերտ սիրով ու մեծ գերդաստանում գնացինք Հայաստան:

Թող ամէն մի կարգացող ունկնդրի ու մեզ յիշի ամէն:

Թովմաս և Սարգիս Կարապետեան

#### գ

Ճա. Շահարասեան գաղթի բերած հայերս Պարսկաստան 1605 թ. մեր նախնիք ապրեցին պանդուխտ հալածեալ վիճակում: Թէկուզ հայրենիքի վառ կարօտով մեռան ու թաղեցին օտար հորիզոնում, բայց իրենց հայրենակէզ ս. աւանդը մեզ սովբեցրին, թէ շմոռանաք հայ որդիներ ձեր մայր հայրենիք ու կգայ աւետեաց մի օր ներգաղթը դէպի մայր երկիր: Ահա անցնելով որդից որդի մինչև օրս, մինչև արժանացանք, թէև նորա երազեցին, ափսոս շտեսան ս. ներգաղթը:

Իսկ 1945 թ. հոկ. հնչեց մայր հայրենի հրաւերն իւր պանդուխտ զաւակներին: Օհ թէ ինչ անպատում ուրախ առիթ տեց նժդէ՛՛՛ սրտերիս ու 1946 մեծն Ստալինեան կարգերի շնորհիւ ու հայ բաղիզարների\* անդուլ գործունեութեամբ բացեց ս. ներգաղթի ճամպան: Նախ սկսեց Գափլայ ու Բուրվարի շրջանից: Նոյն թիւ օգոստոս ամսին մեկնեց առաջին կարաւանը. Զառնա, Գուրջի, Բաղ-

\* Հավանաբար նկատի ունեն այն պատվիրակներին, որոնք Հայաստանից Իրան էին գնացել ներգաղթը կազմակերպելու համար:

Վօլդի, Չաղալ, Մարգիան, Ռոկնարաղ, Փրչողան, Ղաթաթ և Տի մաս էլ Բուրվար, Քունսուր, Չարբաղ, Ջանխոշ, Բուրֆ, Անավշ, Շավրավա, Փարհա և Չարթալ, Օրթաշիման:

Իսկ 1947 թ. նորից սկսեց կարաւանը, թէև բոլոր հայրիքադաձ (հայրենարադձ) հայերն նախօրոք ծախել ու պատրաստել էին: Մի տարի անգործ մնալուց չետոյ վերսկսեց (...), նախ (...) Արարիֆ, Մուղանակ, Կուրան, Սանգսֆիղ, [Ղարա]Բիարիզ, Ֆարաջարաղ (...) ուրախութիւնով մեկնեցին մայր հայրենիք (...). այս մեր ճանապարհորդութիւն և Չեղ ապագայի (...):

## դ

13ա. Սոյն ս. Զօրաւոր Աւետարան ներգաղթի պատճառի, որ շահողուց Բուրարուց մնացեալ 6 գիւղն դէպի մայր հայրենիք ներգաղթելու, բուրարուց չէջին Թովմաս և Սարգիս Կարապետեանք. Թովմասն դէպի Քեազազ գաւառն Արասարաղ գիւղն բնակեց մինչև մէկ տարի՝ 1947 մայիս 22-ին, Արասարաղից շեց Թեհրան 1949 մարտ 22-ին: Նաև Սարգիսն շեց դէպ Ջափլաղ[ի] Ջառնայ գիւղն 1947 օգոստոս 6-ին և Ջառնուց շեց Թեհրան 48-ի ապրիլի 6-ին: Մեծ տառապանքով և շարշարելով գրադեցին իրենց ապրուստին, որ իրենց նախկին ապրուստն գիւղատնտեսութիւն բոլորովին ձեռքից ելած. այդ շարշարանքին դիմեցին (= դիմացան):

## ե

5բ. (Այրված...) [ըն]տանիքը շահողուցով հայրենիք գնալու (...) Թեհրանում միշտ ծառայելու (...) ի չիշատակ Թովմաս և (...) իր (...) [Շահ]միրզէ 1961 թ. (...) ապրիլի 14:

## զ

201ա. 1961 ապրիլի 14:

Թովմաս և Սարգիս Կարապետյաններ աւանդ դրան Սուրբ Դրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Թեհրան շումարիլէ թաղամասում, բայց դժբախտաբար անգղուշութեան պատճառով վառեց: Շահմիրզա Սարգսի Կարապետեան, Ներսէս Սարգսի Կարապետեան, Վաղարշակ Սարգսի Կարապետեան, Դարմիրզա Թովմասի Կարապետեան, Կարապետ Արմենակի Կարապետեան:

## ը

1968 ապրիլի 29.

Սուրբ Զոռաւար Աւետարանք բախտ վիճակեց հայրենիք վերադառնա իր սուրբ (...) դա մեր հանձնական պարտքն է հայր[ե]ն[ի]քին:

Մանոր. Չեռագիրը կոչվում է «Ս. Զորավոր Ավետարան»:

1949 թ. Թեհրանում տեսել և նկարագրել է Վիեննայի Մխիթարյան միաբանութեան անդամ Հ. Համազասպ Ոսկյանը: Նկարագրութեանը և գրչի հիշատակարանն ու հիշատակագրութեանները բազմաթիւ սխալներով տպագրվել են «Հանդէս ամսօրեայում», 1953, էջ 97—102:

Զաքարիա գրիչը իր սույն հիշատակարանը նախապես գրել է 1611 թ.

ընդօրինակած Ավետարանում, որ ներկայումս պահվում է Մաշտոցյան Մատենադարանում (№ 5345): Տպագրված է «Յուդայի ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, պրակ Ա, Քիֆլիս, 1915, էջ 839—842, ինչպես նաև «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ», կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 410—414:

Սույն նկարագրությունը կատարվել է 1976 թ. օգոստոսի 29-ին:

## 8

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ ԱՍԱՏԵԱԼ «ԵՐԱՏ ՀԱՍԱՐԱԿԱՅ»

(Մարսել (Ֆրանսիա), Հայկազ Մարտիրոսյան)

Քարածեռ անապատ

ՌՃԼԵ = 1686

էջ՝ 412: Գրիչ՝ Արանն արեղա: Ստացող՝ Առաքել Ետհանցի: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 17,5 × 22: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 27: Մանրանկարչություն— սկզբնաթերթ՝ գլխազարդ, ծաղկազիր լուսանցազարդեր: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ: Վիճակ՝ լավ:

Մանր. Ձեռագրի վերջին ստացող Հ. Մարտիրոսյանը խոստացավ գալ Երևան և մատչանք անձամբ նվիրել Մատենադարանին: Նա իր խոստումը կատարեց 1983 թ. սեպտեմբերի 9-ին: Ձեռագիրը գրանցված է 10905 թվահամարի ներքո:

Սույն նկարագրությունը կատարվել է 1982 թ. մայիսի 26-ին Մարսելում:

## Հ ի շ ա տ ա կ ար ա ն

## Գրչի

էջ 408. Փառք... Որ էտ կարողութիւն մեղապարտ և անարժան գրչիս Արսէն արեղիա, հասանեալ արտ հողեոր և աստուածաքնար ամենալի սեղանոյս և ծաղկերանճ և անուշահոտ բուրաստանիս, ի թրիսն հայոց ՌՃԼԵ (1686) ի կաթողիկոսութեան տեանն Եղիայգար բարունապետին և առաջնորդութեան մերոյ Աւետիս վարդապետին և Զ (Ե) անձ կրանաւորացըս, որ կամք ի յայս Քարածեռ անապատիս, որ կոչի Կարմիր վանք և սպասաւորեմք Սուրբ Կարապետու և աստուածընկալ Սուրբ Նշանիս, ամէն:

Յիշատակ է սուրբ գիրքս ի սուրբ ետհանցի Առաքելին և հօրն Աւատանին և մօրն Հերիֆին և կողակցին իւրոյ Աննային և եղբարցն Վարդապետին, Սաեփանոսին և Պետրոսին և իւր որդոյն Պարոնին, Արգիմանին և դստերն Լուսնեկան: Եւ Առաքել հրամանաւն Աստուծոյ և սուրբ հայրապետաց կանոնաւն Գ(3) անգամ զի յայտնի եղև բանն Աստուծոյ զի առաւ կին և յետոյ սղջմամբ և հառաչմամբ և արտասուութեամբ հայցէր բահանայից թողութիւն և սրբտալի փափագմամբ խնդրէր սուրբ հաղորդութիւն, զի հալալ արդեանցն ետու և էտ գրել և եղ յիշատակ ի դուռն Սուրբ Յոհաննու, զի վարձս ի յԱստուծոյ առցէ, ամէն:

Ով որ ազգ և ազինք կամ որդիք յանդգնին կամ աւժտեն կամ գրաւական դնեն կամ զյիշատակարանս կտրեն, սրբեն և բերեն, կտրի իւր յոյսն արքա-

յութեան, սրբի և քերի աղօթքն և ողորմութիւն ի վերջին ատուրն ահեղ առաջի ատենին Քրիստոսի, զպատիժն Կայենին կրեսցէ և զմասն ընդ Յուդային առցէ և ընդ խաչհանողացն դասեսցէ, ամէն: Դարձեալ յիշեսցիք ի մաքրափայլ աղօթս ձեր զեղկելի մեղապարտ և անարժան, սուտանուն Աստուծոց զձուք զրշակս և զուք յիշեալ լիցիչիք առաջի ատենին Քրիստոսի Ամէն: Հայր մեր որ յերկինս:

## 9

## ՄԱՍՈՒՆՔ ԱԻԵՏԱՐԱՆԻ

(Արենի գյուղ (Եղեգնաձորի շրջան), Պավել Մամիկոնի Ղազարյան)

ժէ դար

Քերք՝ 83: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 21,2×15,3: Գրութիւն՝ Երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչութիւն՝ ծաղկագիր և թռչնագիր լուսանցազարդեր: Գլխատառերը՝ թռչնագիր: Վիճակ՝ անմխիթար, թերթահան, անկազմ, բազմաթիւ թերթեր պակասում են, թերթերը խառն:

Մանր. Զեռագրի տեր Պավել Ղազարյանը պատմում է, որ շուրջ 400 (°) տարի այս մատյանը եղել է իրենց գերդաստանի սեփականութիւնը: 1912 թ. Ավետարանը բռնի կերպով տարվել է Բոնակոթ և այնտեղ էլ մաս-մաս է արվել: Պ. Ղազարյանի մեծ մոր թախանձանքներով մի մասը ետ է տրվել սկզբնական տիրոջը:

Սույն նկարագրութիւնը կատարվել է 1983 թ. օգոստոսի 26-ին:

## 10

## ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ԲԱՆՔ ՉԱՓԱԻ

(Փարիզ, Սամվելյաններ)

ժէ դար

Քերք՝ 328: Գրիչ՝ խասպեկ դպիր: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 9×12: Գրութիւն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 20: Մանրանկարչութիւն՝ ճակատազարդեր՝ 1ա, 101ա, 139ա, 182ա, 234բ, 296ա, լուսանցազարդեր՝ բուսական: Կազմ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ: Պահպանակ՝ 2÷2, մազաղաթ: Վիճակ՝ շատ վատ, ցեցակեր:

Մանր. Զեռագիրս նախկինում պատկանել է Հրանտ Սամվելյանին: 1982 թ. մայիսի 25-ին Փարիզում Սամվելյանի դուստրը՝ Ալիս Ասլանյանը և որդին՝ Սամվելյանը տողերիս գրողի միջոցով մատյանը նվիրեցին Մատենադարանին. գրանցվել է 10867 թվահամարի ներքո:

## Բովանդակութիւն

1. 1ա—100ա. Յիսուս որդի հօր միածին և ճառագայթ կերպարանին...
2. 101ա—138բ. Բան հաւատոյ ոտանաւոր տաղիւ շափոյ—նոստովանիմ Աստուած ըզհայր...
3. 139ա—180բ. Շարադրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս

Հայկազեան սեռի և Արշակունեացն զարմի ի սկզբանցն մինչև ի վախճան.—  
Պարտապան է հար որդի...

4. 181բ—234ա. Ողբ Եղեսիոյ—Ողբացէք եկեղեցիք հարսունք վերին առա-  
գաստի...

5. 234բ—252բ. Բարձրացուցէք բզտէր Աստուած մեր միաբան...

6. 253ա—260բ. Յաղագս յերկնի[ց] և զարթուց նորա...

7. 260բ—263ա. Ի խնդրոյ անուան նախագիծ տառից տանց—Միշտ էիդ  
անեղ բնութիւն բնաւորեցան...

8. 263ա. Նորոգող հնութեան մարդկան...

9. 263բ—267բ. Բան խրատու ուսումնականց մանկանց ի դիմաց այրու-  
բենից տառից—Այբն առաջին գրեզ, տրղայ...

10. 267բ—271բ. Բան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարանաբար  
ի դիմաց հայկական տառից—Այբբն անըսկիզբն ասէ Աստուած...

11. 271բ—279ա. Բան ներտառական ի խրատոյ ոգոց համայնից ի դի-  
մաց մերոյն տառից—Այբն Աստուծոյ գրեզ մերձակայ...

12. 279բ—281ա. Յիշատակարան Առակացն Սողոմոնի արքայի ըստ տա-  
ռից այրուրենից—Աստուածեղէն հոգւովն ի սմա...

13. 281ա—283ա. Անդրադարձութիւն տառից յիշատակարանաց—Քաղցրա-  
գունիս այս բաղձանօք...

14. 283ա—285ա. Վերստին յաւելուած ըստ անուան ոգոցին և ըստ անուան  
գծոցին նախագիծք տառիս—Սա մարգարէ աստուածաբան...

15. 285ա—287ա. Քուղթ մխիթարական տեանն ներսէսի կաթողիկոսի  
հայոց առ ոմն իշխան յարևելեան վասն որդւոյ իւրոյ տարածամ մեռելոյ—  
Անտես է յոյսն աստուածային ըստ առաքելոյ...

16. 287ա—298ա. Նայեաց զոր ետ քեզ թագնաբար...

17. 288ա—290ա. Բան մաղթանաց—Աստուած անեղ անհասական...

18. 290ա—295բ. Մաղթանք առ հրեշտակապետսն Գաբրիէլ և Միքայէլ և  
յամենայն զօրս յերկնաւորաց—Արդ պաղատիմք առ հոգեղէնսդ...

19. 295բ—320բ. Տեանն ներսեսի կամբրոնացւոյ ասացեալ—Շարժեալ  
ստիպէ հարկ տէրունի...

## Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ճ ն ե ր

### Գ ր շ ի

ա. 71ա.

Յունայնութեամբ զանկեալ [յանձին]

[...] յիշման կատարեսցին,

Կենաց բաշխօք միշտ զանթերին,

Ըզմեզ [յ]իշեն [ա]ն ի բարին Ամէն

բ. 180բ. Միահամուռ՝ տուք Պարտապանէն մինչև աստ Պլ պիտի, բայց  
Պիլ կայ թէ պակաս է՝ ի գաղափարս է. մի՛ մեղադրեր ով ծրագրաւդ:

գ. 352բ. Ով եղկելի ետապէկ զբոյր,

Անձն անարժան գործով զազիր,

Զուծիս արհեստ այլ ի նանիր,

Միշտ հիմնարկես զանունդ ի կիր:

## Հ Ե Խ Ա Գ Ա Յ Ի

ա. 1ա. (Ճակատազարդի մեջ) Պողոս Ղ. Համամճեան (20-րդ դար)  
բ. 320բ. (բնագրի վերջում) Պողոս Ղ. Համամճեան:

11

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

(Արթիկ քաղաք, Ազար Կիրակոսի Գաբրիելյան)

ԺԹ դար

Նյութ՝ թուղթ: Մեծուրիւն՝ 9×11,5: Դրութիւն՝ միաստիւն: Գիր՝ շղագիր: Տող՝ 15: Կազմ՝ մուշամբա: Վիճակ՝ քայքայված, սկզբից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած, էջերի գասավորութիւնը խառը և որոշ թերթեր գլխիվայր կազմված:

Մանր. Չեռագիրը Արթիկ է բերված Ղարսից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Մույն նկարագրութիւնը կատարվել է 1983 թ. հունիսի 25-ին:

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԱՃՂ 1983—1984 թթ.

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուները վերջին երկու տարում աճել են 125 միավորով և 1984 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփում են 16175 ձեռագիր: Այսպես.

Հավաքածուներ	Ա.ա 31. 12 1982 թ.	Ա.ա 31. 12 1984 թ.	Աճը եր- կու տա- րում	Որից		
				Գնված	Նվեր ստացած	Փոխանց- ված
Հայերեն ձեռագրեր	16895	16927	32	10	21	1
Հայերեն նոր ձեռագրեր	248	262	14	—	14	—
Հայերեն հմայիլներ	387	395	8	3	5	—
Հայերեն պատասխիկներ	2031	2039	8	—	8	—
Արարատա ձեռագրեր	2054	2092	38	1	36	1
Արարատա հմայիլներ	36	36	—	—	—	—
Արարատա պատասխիկներ	115	124	9	—	8	1
Այլալեզու ձեռագրեր	169	185	16	1	14	1
Այլալեզու պատասխիկներ	116	115	—	—	—	—
<b>Ընդամենը</b>	<b>16050</b>	<b>16175</b>	<b>125</b>	<b>15</b>	<b>106</b>	<b>4</b>

Որպես շնորհակալություն և երախտագիտության արտահայտություն, ստորև, այսբնական կարգով, ներկայացնում ենք 1983—1984 թթ. ընթացքում Մաշտոցի անվան Մատենադարանին ձեռագրեր նվիրաբերած անձանց, հաստատությունների և նրանց նվիրած ձեռագրերի անունները (Մատենադարանում ձեռագրերի ստացած համարներով հանդերձ):

- Այվազյան Անդրանիկ վրդ., Հալեպ, 1983 թ.—1. Մեկնութիւն Ղուրանի, ԺԷ դ., Արարատա ձեռ. № 2056:
- Արարյան Սարգիս և Նորա, Հալեպ, 1984 թ.—1. Հմայիլ, 1787 թ., Հայ. հմայիլ № 394:
- Բաղայան Արմեն, Երևան, 1983 թ.—1. Հմայիլ, 1720 թ., № 10904:
- Բանուշյան Արշակ, ՀՍՍՀ Արովյան ԲՈՒՄ, 1984 թ.—1. Աւետարան, ԺԳ դ., Հայ պտուկ. № 2039, 2. Պատմութիւն Այրի և Ֆաթիմայի մասին, ԺԸ դ., Պարսկ. պտուկ. № 36, 3. Կրոնական, ԺԹ դ., թուրք. պտուկ. № 20, 4. Ղուրան, ԺԸ—ԺԹ դդ., Արար. պտուկ. № 63, 5. Ղուրան, ԺԸ—ԺԹ դդ., Արար. պտուկ. № 64, 6. Ղուրան, ԺԹ դ., Արար. պտուկ. № 65, 7. Ղուրան, ԺԹ դ., Արար. պտուկ. № 66, 8. Շարիաթի օրենք, ԺԸ դ., Արար. պտուկ. № 67, 9. Քերականութիւն, ԺԹ դ., Արար. պտուկ. № 68:
- Բասմաշյան Հովհաննէս, Հալեպ, 1984 թ.—1. Բանաստեղծական բառարան, Ի դ., Արարատա ձեռ. № 2079, 2. Գրացանկ (կազմող՝ Գեորգ Հովհաննէս Մազլումյան), ԺԹ դ., Արարատա ձեռ. № 2080, 3. Պատմութիւն Յովսէփայ Գեղեցկիի և Բանք իմաստնոց, ԺԸ—ԺԹ դդ., Արարատա ձեռ. № 2081, 4. Վասն Քէոզորայ կայսրուհուն Բիզանդիոյ, 1872 թ., Արարատա ձեռ. № 2082, 5. Ռահիբ ուլ Լուրնանի, Բանաստեղծութիւններ, ԺԸ դ., Արարատա ձեռ. № 2083, 6. Աղօթք (հմայութիւն), 1845 թ., Արարատա ձեռ. № 2084:
- Բերանով Վախրանգ, Ախալցխա, 1983 թ.—1. Երգարան և 3. Կարենեանցի «Շուշանիկ Վարդենիս», Ի դ. սկիզբ, Հայ. նոր ձեռ. № 249:
- Գամփեւոյան Գեորգ, Հալեպ, 1984 թ.—1. Ախտարք-Ռամգիրք, ԺԸ դ., № 10927, 2. Գուշա-

- կուսիներ, Ի դ., Հայ. նոր ձեռ. № 251, 3. ժամագիրք (ասորերեն և ասորատառ արաբերեն), ժԹ-Ի դդ., Այլալեզու ձեռ. № 179, 4. Կանոն մկրտութեան (ասորատառ արաբերեն), Ի դ., Այլալեզու ձեռ. № 130, 5. Կանոն մկրտութեան (ասորատառ արաբերեն), Ի դ., Այլալեզու ձեռ. № 131, 6. Խորհրդատեար (ասորատառ արաբերեն), 1929 թ., Այլալեզու ձեռ. № 182, 7. Փողովածու երգերի և բանաստեղծութիւնների (ասորատառ արաբերեն), Ի դ., Այլալեզու ձեռ. № 183, 8. Եփրեմի Ասորոյ Կցուրդք (ասորերեն), Ի դ., Այլալեզու ձեռ. № 184, 9. Երգարան (ասորատառ արաբերեն), ժԹ-Ի դդ., Այլալեզու ձեռ. № 185:
8. Քեռոզյան Դանիել ավագ ֆնյ., Լաթաֆիա (Սիրիա), 1984 թ.—1. Բժշկարան, 1370 թ., № 10925:
9. Քեռոզյան Տիգրան, Կանիւբ, 1983 թ.—1. Երազահան, Ի դ., Հայ. նոր ձեռ. № 250, 2. Բաւարան արաբերէն-հայերէն, Ի դ., Հայ. նոր ձեռ. № 251, 3. Հանրի կրթա, Բիդիաս և լուսնական քանդակագործութիւնը և դարու մէջ, 1910—1911 թթ., Հայ. նոր ձեռ. № 252:
10. Պյակչյան Հակոբ Բնյ., էջմիածին, 1984 թ.—1. Յովսէփ վարժապետ Արաբկիբցի, Չափարեւականք, 1834 թ., № 10924, 2. Լէլի (գրամա 5 գործ.), ժԹ դ., Հայ. նոր ձեռ. № 255:
11. Պեմիւրեան Արամ, Բեյրութ, 1984 թ.—1. Վեցհազարեակ, 1799 թ., № 10919:
12. Էլրակյան Վանիկ, Ախալցխա, 1983 թ.—1. Յայամատրք, ժԶ դ., № 10897, 2. Գրիգորի Տաթևացոյ Գիրք հարցմանց, ժԾ դ., Հայ. պատկ. № 2034:
13. Քավրիգի հայոց առաջնորդարան (Աւմեն Հախնազարյանի ձեռամբ), 1984 թ.—1. նոր կտակարան, 1644 թ., № 10921, 2. Հմայիլ, ժԼ-ժԹ դդ., № 10922, 3. Արաբերէնի բացատրական բառարան, 1642 թ., Արաբատառ ձեռ. № 2071, 4. Բահա ուղ դին Մուհամմեդ Ամիլ, Աղոթքներ, 1630 թ., Արաբատառ ձեռ. № 2072, 5. Շարհ-ի Շամսիլէ (Տրամարանութիւն), 1328 թ., Արաբատառ ձեռ. № 2073, 6. նոր ուղ Մուստարաշիդին (Աստուածարանութիւն), 1313 թ., Արաբատառ ձեռ. № 2074:
14. Քովմայան Էղվաթ, Կ. Պալիս, 1983 թ.—1. Տաղարան, ժԷ-ժԸ դդ., № 10907:
15. Քուրայան Հաւարյան, Բեյրութ, 1983 թ.—1. Ասորերէն-արաբերէն բառարան, ժԶ-ժԷ դդ., Այլալեզու ձեռ. № 170, 2. Ընթերցումը Ի Ս. Գրոց, (ասորատառ արաբերեն), ժԷ-ժԸ դդ., Այլալեզու ձեռ. № 173, 3. Մեկնութիւն Ղուրանի, ժԸ դ., Արաբատառ ձեռ. № 2069:
16. Կաւապետյան Անուշավան (Արզուման), ՀՍՍՀ Արբիկի շրջ. Կուսակերտ գյուղ, 1984 թ.—1. Հմայիլ (մասն), ժԸ դ., Հայ. պատկ. № 2038:
17. Հախնազարյան Աւմեն—տե՛ս Քավրիգի հայոց առաջնորդարան:
18. Հակոբյան Էղվաթ, Կանիւբ, 1983 թ.—1. Բժշկարան, 1787 թ., № 10912, 2. Ախտարք, ժԸ դ., № 10913:
19. Հակոբյան Հակոբ, Հալեպ, 1984 թ.—1. Կանոն պսակ Օրհնելոյ (ասորերեն և ասորատառ արաբերեն), 1935 թ., Այլալեզու ձեռ. № 174, 2. Կանոն մկրտութեան (ասորատառ արաբերեն), ժԹ դ., Այլալեզու ձեռ. № 175, 3. Փողովածու (ասորատառ արաբերեն), ժԹ դ., Այլալեզու ձեռ. № 176, 4. Սուլէյման եպոս Ուահայի, Գիրք մեղուի (ասորատառ արաբերեն), 1823 թ., Այլալեզու ձեռ. № 177, 5. Երգարան (ասորատառ ասորերեն, արաբերեն, թուրքերեն), 1911 թ., Այլալեզու ձեռ. № 178:
20. Հաւարյանյան Գեիգու, Եւեան, 1983 թ.—1. Աւետարան ըստ Մատթէոսի, ժԷ-ժԸ դդ., Հայ. պատկ. № 2033:
21. Ճեպենյան Ռոբեր, Հալեպ, 1984 թ.—1. Հմայիլ, 1748 թ., Հայ. հմայիլ № 395:
22. Մադայան Արշակ, Եւեան, 1984 թ.—1. Հայ կամատրի օրագիր, 1914—1917 թթ., Հայ. նոր ձեռ. № 253:
23. Մայան Պետրոս ֆնյ., էջմիածին, 1983 թ.—1. Հմայիլ, 1720 թ., Հայ. հմայիլ № 383:
24. Մազարյան Մահով, Փռովիդեն, 1983 թ.—1. Աւետարան (Օխուի), ժԾ դ., № 10908:
25. Մաւթրոսյան Հայկազ, Մաւսիլ, 1983 թ.—1. Փողովածու, 1686 թ., № 10905:
26. Մելիոնյան Արամայիս, Եւեան, 1984 թ.—1. Հմայիլ, 1831 թ., Հայ. հմայիլ № 390:
27. Մինասյան Լիզա, Եւեան, 1984 թ.—1. Յիշատակագրութիւնը և գրչափորձք, ժԸ դ., Հայ. պատկ. № 2037:
28. Մինասյան Միհրան, Հալեպ, 1984 թ.—1. Ալի Բազդուվի, Քիթաբ ուլ Ֆիթհ (Աստուածարանութիւն), 1701 թ., Արաբատառ ձեռ. № 2091:
29. Միւրայան Պետրոս Ժ. վ., Հալեպ, 1984 թ.—1. Պրակդի Դիադոխոսի Շաղապք աստուածարանականք, ժԸ դ., № 10926:



30. Պարտույան Ռուբեն, Հայկ, 1984 թ.—1. Աղօթագիրք (բրիտանական), 1867 թ., Արարատառ ձև. № 2092:
31. Ջելալյան Հակոբ, Արևմ, 1984 թ.—1. Մանրանկար, ժ՛ղ. զ., Հայ. պատկ. № 2035, 2. Աղօթք, ժ՛ղ. զ., Հայ. պատկ. № 2036:
32. Սարգսյան Վարուժան, Կամասիտ, 1983—1984 թթ.—1. Ալլի և Մեջնուն, 1846 թ., Արարատառ ձև. № 2058, 2. Կրօնական (շիաական), ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2059, 3. Շարիաթ, 1714 թ., Արարատառ ձև. № 2060, 4. Շարիաթ (ժառանգական իրավունք), 1583 թ., Արարատառ ձև. № 2061, 5. Ժողովածու, 1698 թ., Արարատառ ձև. № 2062, 6. Կրօնական (Ղամա-ն նուֆուս), 1813 թ., Արարատառ ձև. № 2063, 7. Արարեբնի բերանանութիւն, ժ՛ղ-ժ՛ղ զզ., Արարատառ ձև. № 2064, 8. Կրօնական (Դալաիլ ուլ Կելիմաթ). ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2065, 9. Արու Յազուր Յուսիֆ, Քերականութիւն, 1552 թ., Արարատառ ձև. № 2066, 10. Երգարան (Բէյազ), 1860 թ., Արարատառ ձև. № 2067, 11. Աղօթագիրք, ժ՛ղ-ժ՛ղ զզ., Արարատառ ձև. № 2068, 12. Օրինակը նամակաց Պաղատասար Սալաթեանի, 1926, 1935—1938 թթ., Հայ. նոր ձև. № 257, 13. Օրինակը նամակաց Պաղատասար Սալաթեանի, 1926—1929 թթ., Հայ. նոր ձև. № 258, 14. Տեար բնօրինակութեան (նամակաց) Զեյթունի Հայրենակցական միութեան կեդրոնական վարչութեան, 1929—1932 թթ., Հայ. նոր ձև. № 259, 15. Տեար օրակարգի Զեյթունի Հայրենակցական միութեան կեդրոնական վարչութեան, 1929 թ., Հայ. նոր ձև. № 260, 16. Վասն մարգարէից և սրբոց, ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2085, 17. Հարցմունք և պատասխանիք վասն կրօնի, ժ՛ղ-Ի զզ., Արարատառ ձև. № 2086, 18. Աստուածաբանութիւն, ժ՛ղ-ժ՛ղ զզ., Արարատառ ձև. № 2087, 19. Դրական բնութանի (մասն), ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2088, 20. Արու Հանիֆա, Քիթաբ ու Մունազիր (Օրէնսգիտութիւն), 1594 թ., Արարատառ ձև. № 2089, 21. Քերականութիւն, ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2090:
33. Սաղարեւյան Սեպուհ, Ալալցիսա, 1984 թ.—1. Պատմութիւն Ախալցխայի Կարապետեան և Եղիսարէլեան դպրոցաց, 1896 թ., Հայ. նոր ձև. № 255:
34. Սարգսյան Աշոտ, Երևան, 1984 թ.—1. Պողոս Հովան, Անցած գնացած դեպքեր և դեմքեր, 1930-ական թթ., Հայ. նոր ձև. № 254:
35. Սերոբյան Սարգիս, Կ. Պոլիս, 1983 թ.—1. Հմայիլ, 1709 թ., Հայ. հմայիլ № 389:
36. Սերոբյան Վաղարշակ, Կ. Պոլիս, 1983 թ.—1. Շարակնոց, ժ՛ղ. զ., № 10906:
37. Սյուլահյան Կոսի, Հայկ, 1984 թ.—1. Ընդարձակ Հայկական երգարան, Ի զ. 30-ական թթ., Հայ. նոր ձև. № 262:
38. Սուրենյան Ռուբեն, Վիեննա, 1983 թ.—1. Յայամարտք, ժ՛ղ. զ., Հայ. պատկ. № 2032:
39. Փարանջյան Օննիկ, Արևմ, 1984 թ.—1. Պարզատուժար, 1665 թ., № 10923:
40. Փիլավնյան Խորեն, Հայկ, 1984 թ.—1. Մուհամմեդ Բին Սէյիդ, Մուֆթաի Ուղղաղայիլ (Արհեստավորական եղբայրութիւնների մասին), ժ՛ղ. զ., Արարատառ ձև. № 2077, 2. Ժողովածու, 1874 թ., Արարատառ ձև. № 2078:
41. Փիլավնյան Տիգրան, Հայկ, 1984 թ.—1. Հաշիա (Հարցմունք և պատասխանիք), 1853 թ., Արարատառ ձև. № 2076:
42. Քյուրբչյան Սարգիս, Լեհոն, 1984 թ.—1. Մաշտոց ձեռագ, ժ՛ն. զ., № 10917, 2. Մաշտոց ձեռագ, ժ՛ղ. զ., № 10918:
43. Անունն անհայտ. Սփյուտֆանայության ԷԼԵՄԵՆՏԱՐԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՈՑՈՎ, 1984 թ.—1. Մուհամմեդ իբն Ահմադ Ան Ռուճի, Նիհայաթ Ուլ-Մուհաջ իլա Շարհ-ուլ Մունհաջ (Շարիաթ), 1717 թ., Արարատառ ձև. № 2075:

3. 2. ՎԱՐԳԱՆՅԱՆ

Գլխավոր ավանդապան

## ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

Մաշտոցի անվան Մատենադարանում 1983—1984 թթ. ընթացքում տեղի են ունեցել հետևյալ գիտական նստաշրջանները.

Ա. Մաշտոցի անվան Մատենադարանի XIX գիտական նստաշրջանը: Նիստեր տեղի են ունեցել 1983 թ. դեկտեմբերի 8—9-ին հետևյալ ծրագրով.

1. Բացման խոսք (Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Արևշատյան):
2. XVIII դարի հայ գեղարվեստական գրականության լեզվի ընդհանուր պատկերը (զեկ.՝ բանասիրական գիտ. զոկտոր Ե. Նազարյան):
3. Լուսավորչի ավանդության մի արձագանք միջնադարյան Յրանսիայում (զեկ.՝ բանասիրական գիտ. զոկտոր Գ. Արզարյան):
4. «Հոռոմեական ոճի» արտահայտությունը հայ միջնադարյան գրականության մեջ (զեկ.՝ պատմական գիտ. թեկնածու Մ. Գարբինյան):
5. Դիտողություններ «Մենդոց գրքի» տարբերակների վերաբերյալ (զեկ.՝ բանասիրական գիտ. թեկնածու Ա. Զեյրունյան):
6. Հովհան Մանգակունու ճառերի ոճական առանձնահատկությունները (զեկ.՝ կրտսեր գիտ. աշխատակից Լ. Ստեփանյան):
7. Դվինը «Քաղակիրների պատմությունն ու գովարանությունը» երկում (զեկ.՝ իրավաբանական գիտ. թեկնածու Ե. Քոչոսյան):
8. Վարդան Արևելցու թարգմանությունները (զեկ.՝ բանասիրական գիտ. թեկնածու Փ. Անրարյան):
9. Գլածորի համալսարանի հիմնադրման տեղի և ժամանակի հարցի շուրջ (զեկ.՝ պատմական գիտ. թեկնածու Ա. Մաքևոսյան):
10. Սոֆիայի Կիրիլ-Մեթոդի գրադարանի Աբարատյան երկրի 1724—1736 թթ. օսմանյան նվաճումների շրջանին վերաբերող վավերագրերը (զեկ.՝ պատմական գիտ. զոկտոր, պրոֆեսոր Հ. Փափազյան):
11. Մատենադարանի 1689 թ. լեհերեն հրովարտակը և նրա պատմական արժեքը (զեկ.՝ պատմական գիտ. զոկտոր Վ. Գրիգորյան):
12. Նոր տվյալներ Դանիշմանների իշխանության մասին (զեկ.՝ պատմական գիտ. թեկնածու Է. Բաղդասարյան):
13. Հայոց «Պատճեն տոմարին» և արարական «Զիշերը» (զեկ.՝ կրտսեր գիտ. աշխատակից Զ. Էյնարյան):
14. Միջնադարյան արձակի արտացոլումը հայկական մանրանկարներում (զեկ.՝ արվեստագիտության թեկնածու Ա. Գևորգյան):
15. Խաչքարային արվեստի ձևավորման ակունքները (զեկ.՝ կրտսեր գիտ. աշխատակից Ա. Սահակյան):
16. Ղևոնդ Տայանը և հայ հոգևոր երաժշտության Վենետիկի դպրոցը (զեկ.՝ կրտսեր գիտ. աշխատակից Ա. Վարդումյան):
17. Ներսես Մեծը և նրա վերաբերությունը կցուրդների շարքին (զեկ.՝ արվեստագիտության զոկտոր Ն. Քանմիզյան):

\* \* \*

Բ. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված Գլածորի համալսարանի հիմնադրման 700-ամյակին: Նիստեր տեղի են ունեցել Երևանի համալսարանի դահլիճում հոկտեմբերի 16-ին հետևյալ ծրագրով.

1. Բացման խոսք (զեկ.՝ համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյան):
2. Գլածորի համալսարանը և միջնադարյան Հայաստանի հոգևոր մշակույթը (զեկ.՝ Մատենադարանի զիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթ. անդամ Ս. Ս. Արևշատյան):

3. Գլաձորի համալսարանի 700-ամյակը (գեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիրքեղանի, ակադ. Բ. Ն. Առաքելյան):
4. Հանալուարանական կրթությունը միջնադարյան Հայաստանում և Ռուսաստանի ու Եվրոպայի համալսարանների հայ ուսանողները (գեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյան):
5. Գլաձորի սան Ստեփանոս Երրեկյանը (գեկ.՝ պատմ. գիտ. գրկատր, պրոֆ. Ս. Տ. Մելիք-Բախչյան):
6. Գլաձորի Հնագիտական պեղումները (գեկ.՝ զոցենտ Ի. Գ. Ղարիբջանյան):
7. Գլաձորի համալսարանի դերը հայ երաժշտության դարգացման գործում (գեկ.՝ արվեստագիտության գրկատր Ն. Կ. Քանձիրյան):
8. Եսայի Նշեցու գեղագիտական հայացքները (գեկ.՝ բանասիր. գիտ. գրկատր Ա. Ն. Մրապյան):
9. Եսայի Նշեցին և միաբարական շարժումը Կիլիկյան Հայաստանում (գեկ.՝ պատմ. գիտ. թեկնածու Յ. Հ. Վարդանյան):
10. Հայկական մանրանկարչության եղեգնաձորի գոյրոցը (գեկ.՝ արվեստագիտության թեկնածու Ա. Բ. Գևորգյան):

### ՑԱՆԿ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (1982—1984 թթ.)

1. Հ. Հ. Հախոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982, տպարանակ 4000, 178 էջ + 70 նկ.:
2. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, բնական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983, տպարանակ 2000, ԽԸ + 383 էջ:
3. Источники по истории высших школ средневековой Армении (XII—XV вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, предисловие и редакция С. С. Аревшатяна, Ереван, Издательство «Айастан», 1983, тираж 1500, 111 с.
4. Հայկական մանրանկարչություն. Գիմանիա (մանրանկարչական 16 բացիկ), կազմող Ա. Բ. Գևորգյան, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, տպարանակ 20000:
5. Հայկական մանրանկարչություն. Վասպուրական (մանրանկարչական 16 բացիկ), կազմող Հ. Հ. Հախոբյան, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, տպարանակ 20000:
6. Հայկական մանրանկարչություն. Գլաձոր (մանրանկարչական 16 բացիկ), կազմող Է. Կորյունյան, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, տպարանակ 20000:
7. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Սեփանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, ներածություն Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, տպարանակ 1000, ԾԴ + 1470 էջ:
8. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ՝ ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, տպարանակ 1000, 988 էջ:
9. Հովհաննես Տեր-Գալպոյան, Զուգայեցու Հաշվառումարը, («Տնտեսական պատմության վավերագրեր», մատենաշար, գիրք Ա), աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, տպարանակ 1000, 425 էջ:
10. Գիվան հայոց պաամարյան, նոր շարժ, գիրք Ա. Ղուկաս Կարենցի, հատոր Ա (1780—1785 թթ.), աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, տպարանակ 1000, 596 էջ:
11. Բանբեր Մատենադարանի 14, Երևան, 1984, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, տպարանակ 1000, 298 էջ:
12. Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, перевод с древнеармянского, предисловие и комментарии Ш. В. Смбатяна, Ереван, Издательство АН АрмССР, 1984, тираж 5000, 257 с.
13. Armenian Miniatures of the 13th and 14th centuries from the Matenadaran collection Yerevan, by Emma Korkhmazian, Irina Drampian, Gravarid Hakopian, Leningrad, Aurora Art Publishers, 1984, 40 p. + 164 tables.

14. Ս. Ս. Արեշատյան, Ա. Ս. Մարևոսյան, Գլաձորի համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1984, տպարանակ 5000, 58 էջ:

15. С. С. Аревшатян, А. С. Матевосян, Гладзорский университет—центр просвещения средневековой Армении, Ереван, Издательство «Айастан», 1984, тираж 3000, 65 с.

16. Քարսեղ Կեսաբազի, Յաղագս վեցաբնույթ արարչութեան, աշխատասիրությամբ կիճ Մարագյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, տպարանակ 1000, ԽԲ+379 էջ:

17. Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն («Հայ մշակույթ» գիտահանրամատչելի մատենաշար, 3), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1984, տպարանակ 10000, 59 էջ:

18. Л. Тер-Петросян, Древнеармянская переводная литература («Армянская культура», научно-популярная серия, 3), Ереван, Издательство «Советакан грох», 1984, тираж 3000, 51 с.

19. L. Ter-Petrossian, La littérature arménienne ancienne de traduction („Culture arménienne“ serie de livres de vulgarisation, 3), Erevan, Maison d'Édition „Sovetakan grogh“, 1984, 2000 ex., 48 p.

20 Armenian Miniatures of the 13th and 14th centuries from the Matenadaran collection (մատենադարանի 13-րդից, կազմող է. Կորխմազյան), Leningrad, Aurora Art Publishers, 1984, 76000 ex.

21. Քարսու Տարօնազի («Հայկական մատենադարչություն» գրքուկների մատենաշար հայերեն, ռուսերեն և անգլերեն առաջարանով. մատենաշարի գլխավոր խմբագիր Բ. Չուգասոզյան), կազմող է. Կորխմազյան, «Էրեբունի» հրատարակչություն, Ֆինլանդիա, 1984:

22. Ավագ (նույն մատենաշարով), կազմող է. Չարսրյան:

23. Մերուն (նույն մատենաշարով), կազմող է. Հակոբյան:

24. Գրիգոր (նույն մատենաշարով), կազմող է. Չուգասոզյան:

25. Սարգիս Պիձակ (նույն մատենաշարով), կազմող է. Ղազարյան:

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

### Հ Ո Գ Վ Ա Մ Ն Ե Ր

Ս. Արևշատյան, Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտի գործունեության 25-ամյա արդյունքները . . . . .	5
Կ. Արզարյան, Անանիա Շիրակացու «Փամանակական կանոնը» կամ «Քրոնիկոնը» . . . . .	21
Ն. Բահմիզյան, Հայկական ութ-ձայնի դանձարանային հատվածի մասին . . . . .	44
Փ. Անթաղյան, Հայ մեկնարանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ . . . . .	60
Լ. Տեր-Պետրոսյան, «Գրիգոր Լուսավորչի վարդապետության» ասորական աղբյուրները . . . . .	95
Ա. Հակոբյան, Մովսես Կաղանկատվացու «Ազվանից պատմության» ձեռագրերը . . . . .	110
Լ. Զուգասզյան, «Մենդյան» թեման Քորոս Ռոսլինի արվեստում . . . . .	145
Ս. Մարարյան, Գրիգոր Ելաթեցու ձեռագրական ժառանգությունը . . . . .	173
Յ. Գալակեիշ, Ուկրաինայի հայերի միջնադարյան կնիքների մասին . . . . .	191
Ն. Գեորգյան, Բարահամանի նամականին Մատենադարանի արարատառ Ֆոնդում . . . . .	241
Ս. Մուրավյով, Ջգուշացիք, կեղծիք է . . . . .	250

### Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ո Ւ Մ Ն Ե Ր

Հ. Քյոսեյան, Նորահայտ նշխարներ Հովհան Ոսկերեքանի Սաղմոսաց մեկնությունից . . . . .	260
Հ. Փափազյան, Առֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի վանի էյակիթին վերաբերող օսմանյան զիվանական վավերագրերը . . . . .	274
Գ. Կարապետյան, Հովասափ Սերասաացու «Բժշկարան ընտրեալ տարրական մաթեմատիկ» բնագիտական երկը . . . . .	288

### Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Վ. Ներսիսյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Լանդոնի Վելթոմ ինստիտուտի գրադարանի . . . . .	317
Բ. Զուգասզյան, Յուզակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց . . . . .	339
ՏԵՂԵԿԱՏՈՒ . . . . .	353

# СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ

С. С. Аревшатын, 25-летние итоги деятельности Института древних рукописей им. Маштоца (к 25-летию реорганизации Матенадарана)	5
Г. В. Абгарян, Хроника, приписываемая Анании Ширакаци	21
Н. К. Тагмизян, О гандзаранном разделе армянского восьмигласия	44
П. П. Антабян, О теоретических основах армянской толковательной литературы	61
Л. А. Тер-Петросян, Сирийские источники «Учения Григория Просветителя»	95
А. А. Акопян, Списки «Истории Албании» Мовсеса Каланкатуаци	110
Л. Б. Чугасзян, Тема «Рождества» в искусстве Тороса Рослина	145
С. Т. Марабян, Рукописное наследие Григора Хлатеци	173
Я. Р. Дашкевич, К средневековой сфрагистике армян Украины	191
Н. Х. Геворгян, Эпистолярный Баракмана в собрании восточных рукописей Матенадарана	241
С. Н. Муравьев, Осторожно: фальшивка!	250

## ПУБЛИКАЦИИ

А. Кёсеян, Новонайденные фрагменты «Толкования Псалмов» Иоанна Златоуста	260
А. Д. Папазян, Османские архивные документы народной библиотеки Кирилла и Мефодия в Софии, относящиеся к Ванскому залету	274
Д. Карапетян, Естественнонаучный труд Овасапа Себастици «Отменный лечебник кардинальных влаг»	288

## БИБЛИОГРАФИЯ

В. Нерсисян, Армянские рукописи библиотеки лондонского Уеллком-Института	317
Б. Л. Чугасзян, Каталог армянских рукописей, хранящихся у частных лиц	339
Информация	353

## TABLE DES MATIERES

### ARTICLES

S. S. Arevchatian, Les resultats des 25 années de travail de l'Institut Machtotz des manuscrits anciens (A l'occasion du 25 <sup>e</sup> anniversaire de la réorganisation du Maténadaran) . . . . .	5
G. V. Abgarian, La Chronique attribuée à Anania Chirakatsi . . . . .	21
N. K. Tahmizian, La partie concernant le recueil „Gandzaran“ de l'oktoechos arménien . . . . .	44
P. P. Antabian, Les principes theoriques de la littérature exegetique arménienne . . . . .	60
L. H. Ter-Petrossian, Les sources syriaques de la „Catechese de Grégoire l'Illuminateur, . . . . .	95
A. H. Hacopian, Les copies manuscrites de „l'Histoire de l'Albanie“ de Movses Kalankatvatsi . . . . .	110
L. B. Tchoukaszian, La „Nativité“ dans l'oeuvre de Thoros Rosline . . . . .	145
S. T. Marabian, L'heritage manuscrit de Grigor Khlatetsi . . . . .	173
Y. R. Dachkevitch, Sur la sphragistique médiévale des Arméniens d'Ukraine . . . . .	191
N. K. Guevorkian, L'Epistolaire de Barahman du fonds persan du Maténadaran . . . . .	241
S. N. Muravjev, Attention, Falsification! (Sur une copie nouvellement découverte de l'alphabet des Albanais du Caucase) . . . . .	250

### PUBLICATIONS

H. Kiosseyan, Fragments nouvellement découverts du „Commentaire aux Psaulmes“ de Jean Chrysostome . . . . .	260
H. D. Papazian, Les documents d'archives Ottomans concernant l'ealet de Van de la Bibliothèque Cyrille et Méthode de Sofia . . . . .	274
D. Karapetian, L'oeuvre sur sciences naturelles „Traite de médecine sur les humeurs cardinales“ de Hovassap Sebastatzi . . . . .	288

### BIBLIOGRAPHIE

V. Nersessian, Les manuscrits arméniens du Wellcome-Institut de Londres . . . . .	317
B. L. Tchoukaszian, Catalogue des manuscrits arméniens conservés dans les collections privées . . . . .	339
INFORMATIONS . . . . .	353

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԻ

15

Հրատ. խմբագիր՝ Զ. Խ. Օրմանյան  
Նկարիչ՝ Լ. Ս. Սաղոյանի  
Տեխ. խմբագիր՝ Հ. Մ. Մանուչարյան  
Սրբագրիչ՝ Ա. Լ. Սահակյան

ИБ 1086

Հանձնված է շարվածքի 31. 10. 1985 թ.: Ստորագրված է տպագրության 28. 05. 1986 թ.:  
ՎՋ 09035: Չափեր 70×108<sup>1</sup>/<sub>16</sub>: Խուզք № 2: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպա-  
գրություն: Պայմ. 31,6 մամ., տպագր. 22,63 մամուլ: Ներկ. մամուլ 31,6: Հրատ.-հաշվարկ-  
26,5 մամուլ: Տպարանակ 1000: Հրատ. № 6673: Պատվեր № 1152: Գինը 4 ս. 25 կ.:  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:  
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:  
Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.